



ՀՀ գիտութեան, մշակութան և սպորտի նախարարության
Արեւելահայաստանի ինստիտուտ

ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼԷ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ

XI-XII

ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ • 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

MIDDLE EAST

HISTORY
POLITICS
CULTURE

XI-XII

YEREVAN – 2017

282999

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ


ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ

XI-XII

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2017



Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Խմբագրական խորհրդի նախագահ՝ Ղահրիյան Մ.

Աղամալյան Թ., Ղազարյան Ռ., Սարգսյան Գ.,
Մելքոնյան Զ., Փաշայան Ա.

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Կարախանյանի

Ժողովածուն ներառում է 2015-2016 թթ. Երևանում՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում կազմակերպված երիտասարդ արևելագետների XXXVI և XXXVII միջազգային գիտաժողովներին ներկայացված զեկուցումները:

Հեղինակներն անդրադառնում են Մերձավոր և Միջին Արևելքի, Կովկասի երկրների ու ժողովուրդների պատմության և բանասիրության, Հայոց ցեղասպանության մի շարք հիմնահարցերին:

Նախատեսված է արևելագետների, հայագետների, միջազգայնագետների, բանասերների, ասաիրանստների, բուհերի ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

*The book is recommended for publications by the Scientific Council
of the Institute of Oriental Studies, National Academy of Sciences, RA*

EDITORIAL BOARD

Chief Editor Ghahriyan M.

**Aghamalyan T., Ghazaryan R., Margaryan G.,
Melkonyan K., Pashayan A.**

Layout by: Karakhanyan N.

The book includes articles presented to the 36th and 37th International Conferences
of Young Orientalists (Yerevan, 2015-2016)

© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2017

ISSN 1829-0833

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԳԱԱ - Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային
ակադեմիա

ԱԻ - ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

ԳԿՄԿ - ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

ՀԱԻ - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՅԹԻ - ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ

ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ՀՊՍՀ - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան

ՄԳՀ - Մխիթար Գոշ համալսարան

ABBREVIATIONS

NAS RA - National Academy of Sciences, Republic of Armenia

IOS - Institute of Oriental Studies, NAS RA

ISEC - International Scientific Educational Center of NAS RA

IAE - Institute of Archaeology and Ethnography, NAS RA

AGMI - Armenian Genocide Museum-Institute, NAS RA

YSU - Yerevan State University

ASPU - Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

MGU - Mkhitar Gosh University

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԶԻԶՅԱՆ ԽԱՉԻԿ (ԱԻ)	
ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ՆՈՐ ԲԱՆԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	13
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ (ԱԻ)	
ՄԻԶԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԾՈՑԻ ՊԱ- ՏԵՐԱԶՄՈՒՄ (1990-91 թթ.)	27
ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ (ԱԻ)	
1973 թ. ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ՆԱՎԹԱՅԻՆ ԷՍԲԱՐԳՈՆ	37
ԴԱՎԻԹԱՎՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ԱԻ)	
ԱԴՐԲԵԶԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ԵՎ ԼՂՀ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ-ՔԱՅՔԱՅԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁ- ՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ	49
ԵՆԳՈՑԱՆ ՆԱՆԵ (ԳԿՄԿ)	
«ԳԱՂՏՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ»՝ ՈՐՊԵՍ ՆԵՈ-ԲԱԱՍՄԱԿԱՆՆԵՐԻ ԵՏՆԱԲԵՄ	55
ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ (ԱԻ)	
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԼԵՌՆԱ- ՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ (ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵ- ՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ)	64
ԽԱՉԱՏՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ՀՊՄՀ)	
ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ ПЛАНАХ ГЕР- МАНИИ В КОНЦЕ 19-ГО И В НАЧАЛЕ 20-ГО ВЕКА	69
ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐԱՐԱՏ (ԱԻ)	
ԱԼ ԿԱԻԴԱ. ՑԱՆՑԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ՄԻՋԱԶ- ԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ	79
ՀԱԿՈԲՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ (ԵՊՀ)	
ՄԱՐՈԿԿՈՑԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀԱՐԱՅԻ ՀԻՄՆԱ-	

ԽՆԴԻՎ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ	94
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՏԱՐՈՆ (ԵՊՀ)	
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (2010-2016 թթ.)	104
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԱՐԻԱՄ (ԵՊՀ)	
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՇԽԱՐՀԻԿԱՅՄԱՆ՝ ԱԲԴ ԱԼ-ՖԱԹԱՀ ԱՍ-ՍԻՍԻԻ ՓՈՐՁԵՐԸ	111
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱԻ)	
«ՄԻՋԱՆԿՅԱԼ» ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ. «ՔԱՐԱՔՈԼԻ» ԴԵՐԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ	123
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ (ՀԱԻ)	
ԱՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ «ՄԱՀՐԻԵՆ» ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	137
ՍԱՔՈՅԱՆ ՏԱՐՈՆ (ՄԳՀ)	
ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ	150
ՍՈՂՈՍՈՆՅԱՆ ՀԱՅԿ (ԱԻ)	
1945-1946 թթ. ԻՐԱՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ	156
ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՆԱ (ԵՊՀ)	
ԱՀՄԵԹ ԴԱՎՈՒԹՕՂԼՈՒԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՔ» ՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ	171
ՖԱՐԻԲԱ ՌՈՔՆԻ (ԵՊՀ)	
ՊԱՐՍԻՑ ԾՈՅԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳԾՈՎ ԱՌԿԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ	177

ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱԴԱՄՅԱՆ ՍՈՒՄԱՆՆԱ (ՀԱԻ)	
ՆՈՐԱՀԱՅՑ ՎԻՍԱԳՐԵՐԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՓԻՆ	190

ԱԶԻԶՅԱՆ ԱՆՆԱ (ՀԱԻ)	
ՊԱՐՈՒՅՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆ ՇՐՋԱՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ԶԱՐԴԱՍՈՏԻՎՆԵՐՈՒՄ	198
ԽԱՆՁԱԴՅԱՆ ՄԱՐԻԱՄ (ԱԻ)	
ԳՆԶԻԿ ԵՎ ԷՐԵՐԻՆ ԳՅՈՒՂԵՐԻ (ԲԻԹԼԻՍԻ ԵՎ ՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐ)	
ԿՈՐՍՎԱԾ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ	208
ՀԱԿՈԲՅԱՆ ՆԱՐԻՆԵ (ՀՊՄՀ)	
ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ	218
ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՀԱԳՆ (ԱԻ)	
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1724-1800 ԹԹ.	224
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ (ԳԿՄԿ)	
ԵԳԻՊՏԱ-ԽԵԹԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱՄՁԵՍ II-Ի ՕՐՈՔ	232

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳՅԱՆ ԱՆԺԵԼԱ (ԵՊՀ)	
ԿՐՈՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ Զ.Զ. ՍՈՐԻԵՐԻ «ԱՅԵՇԱՆ՝ ԿԱՐՍԻ ՀԱՐՃԸ» ՎԵՊՈՒՄ	237
ԿԱՐԱՊՈՂՈՍՅԱՆ ՍՈՆԱ (ԵՊՀ)	
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊՈԵՏԻԿ ԿԻՆՈՅԻ ՖԵՆՈՄԵՆԸ. ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՆՈՒՐԻ ԲԻԼԳԵ ԶԵՅԼԱՆԻ ՖԻԼՍՏԵՐՈՒՄ .	245
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՇՈՒՇԱՆ (ԵՊՀ)	
ՄՈՒԽԹԱՐ ԱՈՒԵԶՈՎԻ «ԵՆԼԻԿ ԵՎ ՔԵԲԵՔ» ԵՎ «ՔԱՐԱԳՅՈԶ» ՊԻԵՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	253
ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ (ԵՊՀ)	
15-16-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԶ	262
ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ (ԵՊՀ)	
ԿՆՈՋ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ՄԻՀՐԻ ՀԱԹՈՒՆԻ «HÂTEME-Ï RISÂLE» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ (15-16-ՐԴ ԴԱՐԵՐ) .	275

ՅԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼՈՒՍՏՅԱՆ ՌԵԳԻՆԱ (ՀՅԹԻ)	
ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶԴԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՓՈՐՁԸ	281
ՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ (ՀՅԹԻ)	
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԵԶ	298
ՊԵՏՈՒՆՑ ԱՐԵՆ (ԵՊՀ)	
ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶԴԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ 1915-1923 ԹԹ.	307
ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ (ՀՅԹԻ)	
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ	319
ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ (ՀՅԹԻ)	
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՌԱՅԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	330

CONTENTS

MODERN AND CONTEMPORARY HISTORY

AZIZYAN KHACHIK (IOS)	
THE MILITARY REFORMS OF MUHAMMAD ALI: THE FUNDAMENTS OF BUILDING A NEW ARMY	13
ARAKELYAN ANDRANIK (IOS)	
INTER-ARAB COOPERATION ISSUES DURING THE GULF WAR (1990-1991)	27
ARAKELYAN HERMINE (IOS)	
THE 1973 ARAB-ISRAELI WAR AND OIL EMBARGO	37

DAVIDAVYAN TIGRAN (IOS)	
DESTRUCTIVE INTELLIGENCE ACTIVITY BY THE SPECIAL SERVICES OF AZERBAIJAN VIA INTERNET AGAINST REPUBLIC OF ARMENIA AND NAGORNO KARABAKH	49
YENGOYAN NANE (IOS)	
"THE SECRET MILITARY COMMITTEE" AS THE BACKSTAGE OF NEO-BAATHISTS	55
ISRAYELYAN ARMEN (IOS)	
POSITION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN ON THE NAGORNO KARABAKH CONFLICT (DURING AND AFTER THE FOUR-DAY WAR)	64
KHACHATRYAN TIGRAN (ASPU)	
WESTERN ARMENIA IN THE MILITARY AND POLITICAL PLANS OF GERMANY IN THE LATE 19TH AND EARLY 20TH CENTURY	69
KOSTANIAN ARARAT (IOS)	
AL-QAEDA. THE THREAT OF NETWORK THINKING TO THE INTER- NATIONAL SECURITY	79
HAKOBYAN TATEVIK (YSU)	
MOROCCO'S POSITION ON THE ISSUE OF WESTERN SAHARA	94
HOVHANNISYAN TARON (YSU)	
TURKEY'S CONSTITUTIONAL AMENDMENTS IN THE CONTEXT OF LIMITATION OF ARMY'S ROLE IN POLITICAL PROCESSES (2010-2016) ..	104
MKHITARYAN MARIAM (YSU)	
ABD AL-FATAH AS-SISI'S ATTEMPTS FOR MODERNISING THE EGYPTIAN SOCIETY	111
PETROSYAN GEVORG (IOS)	
"INTERMEDIATE" INTELLIGENCE: THE IMPACT OF "KARAKOL" ON THE KEMALIST MOVEMENT AND ON THE EMERGENCE OF TURKISH INTELLIGENCE	123
SARGSYAN TIGRAN (IAE)	
MARITAL RELATIONSHIPS REGULATING "MAHR" IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN	137
SAKOYAN TARON (MGU)	
THE MOTIVES OF NAPOLEON BONAPARTE 'S EASTERN CAMPAIGN ...	150

SOGHOMONYAN HAYK (IOS)	
THE IRANIAN CRISIS IN 1945-1946 AND THE BRITISH ATTITUDE	156
SUKIASYAN SONA (YSU)	
THE USE OF AHMET DAVOTOGLU'S THEORY OF "STRATEGIC DEPTH" IN FOREIGN POLICY OF TURKEY	171

FARIBA ROKNI (YSU)	
CURRENT ACHIEVEMENTS REFERRING WOMEN'S INVOLVMENT IN ARAB MEMBER COUNTRIES OF PERSIAN GULF COOPERATION COUNCIL	177

ANCIENT AND MEDIEVAL HISTORY

ADAMYAN SUSANNA (IAE)	
NEW-FOUND EPIGRAPHS ON THE EASTERN SHORE OF LAKE SEVAN ..	190
AZIZYAN ANNA (IAE)	
SPIRAL AND CONCENTRIC CIRCLE AND THEIR TYPOLOGICAL PARTI- CULARITY IN THE MOTIFS OF DECORATION OF POTTERY KURA-ARAX CULTURE OF ARMENIA	198
KHANZADYAN MARIAM (IOS)	
ABOUT THE LOST CUNEIFORM INSCRIPTIONS ONCE ERECTED IN GNJIK (BITLIS VILAYET) AND ERERIN (VAN VILAYET) VILLAGES ...	208
HAKOBYAN NARINE (ASPU)	
THE ARABIC CONQUESTS IN THE NORTHERN INDIA. POLITICAL PRECONDITIONS	218
HAKOBYAN VAHAGN (IOS)	
DEMOGRAPHIC CHANGES IN YEREVAN KHANATE IN THE 1724-1800S ..	224
SARGSYAN ANZHELA (ISEC)	
EGYPTIAN-HITTITE MILITARY-POLITICAL RELATIONS IN THE REIGN OF RAMESSES II	232

PHILOLOGY

AVAGYAN ANZHELA (YSU)	
RELIGIOUS PERCEPTIONS IN "AYESHA, THE MAID OF KARS"	

BY J. J. MORIER	237
KARAPOGHOSYAN SONA (YSU)	
THE PHENOMENON OF TURKISH POETIC MOVIES: UNIVERSAL PROBLEMS IN FILMS BY NURI BILGE CEYLAN	245

KHACHATRYAN SHUSHAN (YSU)	
COMPARATIVE ANALYSIS OF «YELNIK AND KEBEK» AND «KARAGYOZ» BY MUKHTAR AUEZOV	253
MELKONYAN MARIAM (YSU)	
ABOUT THEMATIC AND GENRE PECULIARITIES OF OTTOMAN POETRY IN 15-16 CENTURIES	262
MELKONYAN MARIAM (YSU)	
THE REFLECTION OF THE STATUS OF WOMEN IN «HÂTEME-İ RİSÂLE» BY MİHRİ HATUN (15-16 CENTURIES)	275

GENOCIDE

GALUSTYAN REGINA (AGMI)	
THE EXPROPRIATION OF THE ARMENIAN PROPERTY AND THE ATTEMPT TO FORM TURKISH NATIONAL ECONOMY	281
NAJARYAN KRISTINE (AGMI)	
INDIVIDUAL STORIES RELAYED TO ARMENIAN GENOCIDE AND THEIR ROLE IN GENOCIDE KNOWLEDGE TRANSMISSION	298
PETUNTS AREN (YSU)	
THE EXPROPRIATION PROCESS OF ARMENIANS IN 1915-1923	307
POGHOSYAN NAREK (AGMI)	
THE ADOPTION OF THE CONVENTION ON THE PREVENTION AND PUNISHMENT OF THE CRIME OF GENOCIDE AND ARMENIAN GENOCIDE	319
POGHOSYAN NAREK (AGMI)	
THE ISSUE OF ARMENIAN GENOCIDE IN THE EARLY PERIOD OF THE ACTIVITY OF RAPHAEL LEMKIN	330

Ն Ո Ր Ե Վ Ն Ո Ր Ա Գ Ո Ւ Յ Ն
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱԶԻԶՅԱՆ ԽԱՉԻԿ
(ԱԻ)

ՄՈՒՀԱՄՄԱԴ ԱԼԻԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.
ՆՈՐ ԲԱՆԱԿԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՀԻՍՔԵՐԸ

Մուհամմադ Ալին, 1805 թ. իշխանության գալով Եգիպտոսում, ժառանգություն ստացավ մի երկիր՝ քայքայված տնտեսությամբ, կառավարման բարդ ու հետադիմական համակարգով, օսմանյան սուլթանների, նրանց տեղական պաշտոնյաների և մամլուքների կամայականությունների ու բռնությունների վրա խարսխված իշխանությամբ: Տրամաբանորեն մոտենալով իր իշխանության հիմքերի կառուցմանը և պատրաստելով կայուն հիմքեր հետագա սոցիալ-տնտեսական բարեփոխումների համար՝ Մուհամմադ Ալին իրավացիորեն առաջնային դեր հատկացրեց հուսալի բանակի կառուցման հիմնախնդրին:

Որպես առաջադեմ ղեկավար, նա հստակ գիտակցում էր, որ բանակը առաջին հերթին մարդիկ են և նրանց կառավարումը. հենց այս մոտեցումը նա դարձրեց հիմք իր հետագա ռազմական մարտավարության կառուցման համար: Բանակի հիմնովին վերափոխման նպատակով նա որդեգրեց միջազգային լավագույն փորձը, մասնավորապես՝ ֆրանսիական բանակի կառավարման մոտեցումները, ինչը մեծ հաշվով պայքար էր հին և արմատացած կարծրատիպերի դեմ:

Այսպես, 19-րդ դարում Մուհամմադ Ալիի կողմից հաջողությամբ իրականացված ռազմական բարեփոխումների կարևոր նախադրյալը հանդիսացավ ֆրանսիական բանակի ներխուժումը Եգիպտոս (1798-1801 թթ.): Չնայած այն բանին, որ ֆրանսիացիները վերջին հաշվով ջախջախիչ պարտություն կրեցին՝ ֆրանսիական ռազմարշավը ամբողջությամբ ցնցեց եգիպտական հասարակությանը և մասնավորապես՝ եգիպտական ռազմական կազմակերպությանը: Ֆրանսիացիների օրոք ի հայտ եկան սպառազինման նոր տեսակներ, մարտերը վարելու նոր ռազմավարություններ, զորքերը համախմբելու և ղեկավարելու նոր

սկզբունքներ և այլն, որոնց Մուհամմադ Ալին հետագայում լայնածավալ գործածություն տվեց սեփական բանակի կառուցման համար: Ֆրանսիական ռազմարշավը խզեց տեղական բնակչության կապը մամլուքների հետ, ապացուցեց նրանց ռազմական անկարողությունը եվրոպացիների դեմ պայքարում: Մամլուքյան ռազմական կազմակերպության վարկաբեկումը հանդիսացավ բարոյահոգեբանական կարևոր նախադրյալ Մուհամմադ Ալիի կողմից 19-րդ դարում ձեռնարկված արմատական ռազմական բարեփոխումների համար:

Առաջին հերթին ուշադրության է արժանի ֆրանսիացիների հովանավորությամբ ստեղծված և վարժեցված քրիստոնեական դպտիական գործախումբի գործունեությունը: Բանն այն էր, որ Եգիպտոսում Բոնապարտը իրական աջակցություն ստացավ միայն քրիստոնյաների՝ առաջին հերթին դպտիների կողմից՝ նրանց ռազմաքաղաքական առաջնորդ Յակուբ Խաննայի (Մուալլիմ Յակուբ) գլխավորությամբ¹:

1800 թ. մայիսի 29-ին Յակուբ Խաննան սկսեց դպտիական գործախումբի ձևավորումը, որը ֆրանսիական օկուպացիոն բանակի օժանդակ ստորաբաժանում էր, որտեղ հաշվվում էին ավելի քան 2000 դպտի զինվորներ: 1800 թ. հուլիսին ֆրանսիական բանակի գեներալ Կլեբերի դեմ մահափորձից և նրա վախճանից հետո Յակուբ Խաննան ֆրանսիացիներին առաջարկեց հայտարարել Եգիպտոսի անկախությունը, ինչը նրա գործախումբը կդարձներ անկախ պետության ազգային բանակ²: 1801թ. Յակուբ Խաննան արժանացավ ֆրանսիական օկուպացիոն բանակի բրիգադային գեներալի կոչմանը և հայտնի դարձավ գեներալ Յակուբ անունով:

1801-1805 թթ. ֆրանսիական զորքերի տարհանումից հետո Եգիպտոսը գտնվում էր օսմանյան, անգլիական և մամլուքյան ռազմական ստորաբաժանումների իշխանության ներքո, որոնք պայքար էին մղում իշխանության համար: Այս պայմաններում Մուհամմադ Ալին՝ օսմանյան բանակի ալբանական վարձկանների առաջնորդը, հանդիսացավ հակամարտող կողմերից անջատ այն մարմինը, ում ալբանացիների հետ մեկտեղ աջակցում էր թուրքական և մամլուքյան զորքերի մի մասը, ինչպես նաև իսլամական ազդեցիկ հոգևոր գործիչների խումբը և քաղաքային մեծամեծները: Ունենալով նման ազդեցիկ

¹ История национально-освободительной борьбы народов Африки в новое время, Руководитель издания Солодовников В. Г., Москва, 1976, с. 166.

² Նույն տեղում:

աջակցություն՝ նա 1805 թ. իրականացրեց ռազմական հեղաշրջում և եկավ իշխանության³:

Մուհամմադ Ալին Եգիպտոս եկավ օսմանյան բանակի ալբանական ջոկատի կազմում կրտսեր սպայի կոչումով: Սկսած 17-րդ դարի 2-րդ կեսից ալբանացիները օսմանյան բանակում կազմավորեցին ինքնուրույն զորախումբ և ծառայում էին ի հակակշիռ անվստահելի, ապստամբություններին հակված ենիչերներին⁴: 1801-1803 թթ. Մուհամմադ Ալին դեռ չէր խորհում ռազմական բարեփոխումների մասին, այլ իր համար ճանապարհ էր հարթում ալբանական զորախմբի հրամանատարի պաշտոնի համար, որը նա ստացավ 1803 թ. մայիսին⁵: 1803-1805 թթ. նա ձգտում էր ամրապնդել իր քաղաքական և ռազմական դիրքերը՝ դաշինք կնքելով մամլուքյան ազդեցիկ խմբավորումներից մեկի հետ, որը գլխավորում էր Օսման բեյ ալ-Բարդիսին: Մինչև ժամանակ նա ստացավ մուսուլմանական հոգևորականության աջակցությունը Օսմար Մակրամի գլխավորությամբ: Մուհամմադ Ալիի առաջ դրված էին հետևյալ խնդիրները. առաջին հերթին գալ իշխանության, երկրորդ՝ պահպանել այն: Վերոնշյալ 2 խնդիրներն էլ առաջնահերթ լուծվում էին բանակի միջոցով: Այդ ամբողջ ժամանակաշրջանում Մուհամմադ Ալիի հենարանը մնում էին ալբանական զորքերը և նրանց հետ կապված օսմանյան բանակի այլ ստորաբաժանումները:

1805 թ. հուլիսին սուլթան Սելիմ 3-րդը (1789-1808 թթ.) հանգամանքների ճնշման տակ ստիպված էր հաստատել Մուհամմադ Ալիին որպես Եգիպտոսի կառավարիչ՝ նրա տնօրինության տակ տալով այնտեղ տեղակայված օսմանյան բոլոր զորքերը⁶: Դրանից հետո իշխանության պահպանման պայքարում Մուհամմադ Ալիի գլխավոր քաղաքական հակառակորդներն են դառնում մամլուքները և անգլիացիները, որոնք միմյանց հետ կնքել էին ռազմական դաշինք: 1805-1815 թթ. Մուհամմադ Ալին շարունակում էր գործել եգիպտական ռազմական կազմակերպության ավանդական պատկերացումների ոգով: Ըստ դրանց եգիպտական բանակը կազմված էր մանր ստորաբաժանումներից, որոնք ունեին իրենց հրամանատարները, ուլքեր և վարձատրում

³ Marsot A. L. al-S., Egypt in the Reign of Muhammad Ali, Cambridge, 1984, p. 36-50.

⁴ Նշվ. աշխ., էջ 32:

⁵ Holt P., Egypt and the Fertile Crescent 1516-1922, A Political History, London, 1966, p. 176.

⁶ Նշվ. աշխ., էջ 77:

էին իրենց զինվորներին: Այդպիսի կազմակերպությունը չէր կարող ունենալ միասնական հրամանատարություն, խիստ կարգապահություն, նույնիսկ հաղորդակցման միասնական լեզու: Մադրիբցիները, ալբանները, բոսնիացիները, չերքեզները և ուրիշները ծառայում էին եգիպտական օսմանյան բանակում միասնական ազգային խմբերով՝ այն դարձնելով էթնիկապես տարասեռ⁷:

Չնայած նրան, որ 1807 թ. ավանդական բանակի օգնությամբ Մուհամմադ Ալին հասավ մի շարք ռազմական հաղթանակների մասլուքների և անգլիացիների նկատմամբ, նա բավարարված չէր զինուժի վիճակով: Նա իրավացիորեն զգուշանում էր խոռվություններից և ապստամբություններից, որոնցից մեկն էլ իրեն բերեց իշխանության: Կյանքը ցույց տվեց, որ այդ մտավախությունները իզուր չէին: 1807 թ. անգլիական ներխուժման ժամանակ Մուհամմադ Ալին ուշացրեց զորքերի ամենամայա աշխատավարձի վճարումը, ի պատասխան որի գումար պահանջող ռազմական ստորաբաժանումները շարվեցին նրա նստավայրի առաջ և նրա ուղղությամբ կրակ բացեցին⁸:

Հետագոտելով վերոնշյալ պատմական իրադարձությունները՝ կարող ենք հանգել այն եզրակացության, որ բանակի կառավարման ոչ կենտրոնացված մեխանիզմը թեև ապահովում էր լրացուցիչ զինվորական ուժի ներգրավում, ինչն իր իրական դերն ունեցավ մի շարք պայքարներում, սակայն այդ մեխանիզմը նաև շատ երերուն էր, քանի որ հիմնված չէր ազգային, կրոնական, սկզբունքային պայքարի շուրջ: Ջերծ լինելով միասնական գաղափարախոսությունից՝ բանակի առանձին միավորումներ, ելնելով իրենց անձնական շահերից, յուրաքանչյուր պահի պատրաստ էին դուրս գալ պայքարի այն ուժերի դեմ, ում հետ գտնվում էին ռազմական դաշինքի մեջ:

1815 թ. օգոստոսին Արաբիայի ռազմարշավի ընթացքում վահաբիների դեմ տարած առաջին հաղթանակներից հետո Մուհամմադ Ալին, ձգտելով թուլացնել իր կախումը զինվորական հրամանատարներից, փորձեց ստեղծել նոր տեսակի զորք: Դրա համար պաշտոնական առիթ հանդիսացան 1815 թ. Հիջազից եկած մի քանի հարյուր զինվորների կողմից Կահիրեում կատարված անկարգությունները: Քանի որ նրանց մեջ կային ալբանացիներ, ալբանական զորքը հրաժարվեց նրանց հնազանդեցնել, ինչը և Մուհամմադ Ալին դրդեց ստեղծել նոր,

7. عبد الرحمن الراغب، عصر محمد علي، القاهرة ١٩٥١، ص. ٢٧٢-٢٨٠.

8. أحمد حسين، موسوعة تاريخ مصر، الجزء الثالث، القاهرة ١٩٧٣، ص. ٩٣٠-٩٣٢.

կարգապահ գորաբանակ՝ «ան-նիզամ ալ-շադիդ»⁹: Այդ նպատակով նա իր ավագ որդի Իբրահիմ փաշային հրամայեց սկսել առաջին ջոկատի նոր զինվորների ուսուցումը կահիրյան Բուլակ արվարձանում: Ի պատասխան դրա ավբանական ջոկատների հրամանատարները, միավորվելով ալ-Ազհարի շեյխերի հետ, պահանջեցին դադարեցնել նոր զինվորների պատրաստումը: Մուհամմադ Ալին ստիպված էր հնազանդվել և փոխել իր հրամանը: Հատկանշական է, որ հոգևորականները բնութագրեցին նոր ստեղծվող գորամասերը՝ «ան-նիզամ ալ-շադիդ», որպես «անթույլատրելի նորամուծություն» («բիդայա»), որը տանում է դեպի «մոլորության», ինչն իր հերթին հավասար էր մահացու մեղքի և փակում էր դրախտի ճանապարհը: Այդպիսի լուրջ դիմադրությունը Մուհամմադ Ալիին թույլ չտվեց վճռական գործողություններ ձեռնարկել, և բանակի բարեփոխումը ստիպված հետաձգվեց¹⁰:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ 1815 թ. Մուհամմադ Ալիի մոտ ձևավորվել էր հստակ մտադրություն բանակի բարեփոխման համար, և նա ուներ այդ բարեփոխումների հայեցակարգը: Որպես խելացի քաղաքական գործիչ՝ Մուհամմադ Ալին հաշվի առավ թուրքական բարեփոխիչների՝ Սելիմ 3-ի և Մուստաֆա փաշա Բայրաքթարի տխուր փորձը, ովքեր սպանվեցին 1808 թ. գազազած ենիչերների ձեռքով: Նա հասկանում էր, որ ուժեղ, կանոնավոր բանակի ստեղծման համար անհրաժեշտ է նախ վերջ դնել ներքին հետադիմությանը՝ այս դեպքում մամլուքներին: Ահա թե ինչու Մուհամմադ Ալին նախահարձակ եղավ մամլուքների հարցում, և 1811 թ. չսպասելով, որ նրանք իրեն վերացնեն, Կահիրեի միջնաբերդում ինքը կոտորեց նրանց խուսափելով Սելիմ 3-ի ճակատագրից և իր դարաշրջանի ամենաառաջադեմ նմուշներով կառուցեց Եգիպտոսի նոր բանակը¹¹: Ավելացնենք, որ ստեղծելով նոր բանակ, Մուհամմադ Ալին ոչ միայն պետք է հաղթահարեր երկրի ներսի դիմադրությունը, այլև պետք է վերջ դներ կախվածությանը Օսմանյան կայսրությունից: Այդ պատճառով, ի տարբերություն Սելիմ 3-րդի, ստեղծելով նոր բանակ, Մուհամմադ Ալին հայտնվեց կրկնակի վտանգի առաջ՝ ձեռք բերելով ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամիներ: Ստեղծելով նոր բանակ՝ նա հնարավորություն ստացավ միաժամանակ պահպանել և՛ իշխանությունը, և՛ հասնել անկախության:

⁹ Marsot A. L. al-S., նշվ. աշխ., էջ 126:

¹⁰ علي محمد شلبي، المصريون و الجندية في القرن التاسع عشر، القاهرة ١٩٨٨، ص. ٢٠.

¹¹ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հատոր 2, Օսմանյան տիրապետության շրջան (1516-1918 թթ.), Երևան, 2004, էջ 179:

Եգիպտական ռազմական հեղինակավոր պատմաբան Օ. Թուսունի կարծիքով, Մուհամմադ Ալին ունենալով պատերազմի փորձ ֆրանսիացիների, անգլիացիների և նրանց օգնությամբ բարեփոխված ալ-Էլֆի բեյի զորամասերի դեմ, աստիճանաբար սկսեց գիտակցել եվրոպական ռազմական կազմակերպության առավելությունը՝ ավանդականի հետ համեմատած: Նրա համար ակնհայտ էր նաև կանոնավոր, ժամանակակից բանակի առավելությունները՝ համեմատած վարձու բանակի հետ: Այդ առավելությունները վերաբերում էին ոչ միայն մարտունակությանը, այլ նաև բանակի քաղաքական հուսալիությանը: Այդ պատճառով, նույնիսկ ամրապնդելով իր իշխանությունը, ետ մղելով մամլուքյան և անգլիական ներխուժումները (1807 թ.) և ոչնչացնելով մամլուքների վերնախավը (1811 թ.), Մուհամմադ Ալին չէր դադարում մտածել ոչնչացնելու այն վտանգը, որը թաքնված էր իր սեփական զորքերում¹²:

Այդ հնարավորությունը նրան տվեց Արաբիայի վահաբիների դեմ պատերազմը (1811-1819 թթ.), որը դարձավ առաջին ռազմարշավը իշխանության գլուխ հաստատվելուց և ներքին ընդդիմությանը ճնշելուց հետո: Հատկանշական է, որ Արաբիայում եգիպտական բանակը առանձին ջոկատների դժվար կառավարվող միավորում էր, որի կորիզը կազմում էր այբանական զորաբանակը¹³:

Պաշտոնապես պատերազմը սկսվեց օսմանյան սուլթանի հանձնարարությամբ: Սակայն սկսելով այն՝ Մուհամմադ Ալին հետապնդում էր սեփական նպատակները, որոնցից մեկը հանդիսանում էր Եգիպտոսից զինվորների զգալի քանակի հեռացումը, ովքեր նրա իշխանության գալուց հետո դարձել էին վտանգավոր քաղաքական ուժ: Հնարավոր է՝ դրանով է բացատրվում այդ ռազմարշավի արյունահեղությունը և երկարատևությունը, որի ընթացքում ոչնչացվում էին ոչ միայն արաբիացիները, այլ նաև նախկին եգիպտական ոչ կանոնավոր բանակի զինվորները¹⁴:

Մենք արդեն խոսել ենք այն մասին, որ Մուհամմադ Ալին նոր տիպի զորամիավորում (ան-նիզամ ալ-ջադիդ) ստեղծելու իր առաջին փորձը ձեռնարկեց 1815 թ., օգտագործելով արաբիական պատերազմը, որպես շեղող միջոց, սակայն այդ փորձը ավարտվեց անհաջողությամբ:

¹² الأمير عمر طوسون، صفحة من تاريخ مصر في عهد محمد علي، الجيش المصري السبوي ١٩٩٠، ص. ٣-٤. والبحري، القاهرة

¹³ Marsot A. L. al-S., նշվ. աշխ., էջ 126:

¹⁴ Луцкий В., Новая история арабских стран, Москва, 1965, с. 74-79.

Չորս տարի անց, որի ընթացքում եգիպտական բանակը շարունակում էր հյուծվել արաբիական պատերազմում, Մուհամմադ Ալին որոշեց ձեռնարկել ևս մեկ փորձ: 1819 թ. կողմնակի աչքերից հեռու, Վերին Եգիպտոսում նա սկսեց եգիպտական նոր կանոնավոր բանակի ստեղծման նախագծի իրականացումը¹⁵:

Մոտավորապես նույն ժամանակ Մուդանին սահմանամերձ Ֆաշոդում և Ասուանում կազմակերպվեցին ռազմական մարզման ճամբարներ: Ֆաշոդում գտնվող ճամբարի ցանկալի արդյունքներ չտալու պատճառով նախագծի ծանրության կենտրոնը տեղափոխվեց Ասուան, որտեղ ուսուցումը իրականացնում էին օտարազգի ռազմական մասնագետները¹⁶: Նրանց ղեկավարում էր ֆրանսիացի վտարանդի, գնդապետ Մևը (1788-1860 թթ.), իսկ իսլամ ընդունելուց հետո՝ Մուլեյման փաշա ալ-Ֆարանսաուին, ով իրավամբ համարվում է եգիպտական նոր բանակի ստեղծողը: Նոր զորքերի պատրաստման որակը ստուգելու համար Մուհամմադ Ալին նշանակեց իր ավագ որդի Իբրահիմ փաշային: Նոր բանակի ստեղծման ֆինանսավորումը կատարվում էր 1809-1815 թթ. իրականացված գյուղատնտեսական բարեփոխումների արդյունքում ստացված միջոցների հաշվին¹⁷:

Հատկանշական էր, որ թեկնածուներ ընտրելու հարցում, ովքեր պետք է սովորեին Ասուանի ուսուցման կենտրոնում, Մուհամմադ Ալին իր ընտրությունը կանգնեցրեց մամլուքների վրա, որոնց նա զրկել էր Եգիպտոսում ռազմական և տնտեսական իշխանությունից, սակայն պահպանել էր նրանց որպես պոտենցիալ ռազմական ուժ: Ըստ նրա նախագծի՝ մամլուքները պետք է կազմեին նոր զորքի կորիզը, ովքեր պետք է ուսանեին նոր ծրագրով և դառնային նոր բանակի սպաները: 1820 թ. գնդապետ Մևի հրամանատարությամբ Ասուան աղարկվեցին 400 (այլ տվյալներով 500) երիտասարդ մամլուքներ: Ավելի ուշ այդ թիվը հասավ մինչև 1000 մարդ: Նրանք անցան երեքամյա նախապատրաստումը և կազմեցին եգիպտական բարեփոխված բանակի սպայական կորպուսի կորիզը¹⁸:

Մուհամմադ Ալին դիտարկում էր նոր բանակը սուդանցիներով համալրելու հնարավորությունը, ովքեր ունեին զինվորական լավ հատ-

15. محمد فزاد شكري، عبد المقصور العناني، سيد محمد خليل، (السياسة الداخلية)، القاهرة ١٩٤٨، ص. ١٤٨-١٤٩. 15
بناء دولة مصر محمد علي

16. علي محمد شلبي، 20 էջ. աշխ., 20 էջ:

17. الأمير عمر طوسون، 10-15 էջ. աշխ., 10-15 էջ:

18. الأمير عمر طوسون، 3 էջ. աշխ., 3 էջ:

կանիշներ: Այդ գաղափարը հիմնականներից մեկն էր, որը նրան դրդեց նախաձեռնել Սուդանի գրավումը 1820-1822 թթ.: Այդ նվաճումից հետո մոտ 30 հազար սուդանցի տեղափոխվեցին Ասուան և այնտեղ անցան զինվորական ուսուցում օտարազգի հրահանգիչների ղեկավարությամբ¹⁹:

Ասուանում սուդանցիներից կազմվեցին 3 հետևակային բրիգադներ և ուղարկվեցին Մորեա մասնակցելու ռազմական գործողություններին: Մուհամմադ Ալին այդ ռազմարշավի ընթացքում եգիպտական բանակի գլուխ նշանակեց իր որդի Իբրահիմ փաշային, իսկ նրա օգնականը դարձավ գնդապետ Սևը²⁰:

Մուհամմադ Ալիի հույսերը, սուդանցիների հետ կապված, չարդարացան: Խիզախ, ճշտակատար և ընկալունակ լինելով հանդերձ՝ նրանք չկարողացան հարմարվել ծառայությանը Նեղոսի դելտայի, առավել ևս Արաբիայի և հատկապես՝ Հունաստանի կլիմայական պայմաններին, որտեղ նրանց ուղարկեցին 1824-1828 թթ. ռազմարշավի ժամանակ: Սուդանցիների վախճանը ցրտահարությունից և տիֆի համաճարակից կործանարար ազդեցություն ունեցավ եգիպտական բանակի մարտունակության վրա, և սուդանցիների զանգվածային հավաքագրումը զինվորական ծառայության համար դադարեցվեց²¹:

Ստամբուլը Մուհամմադ Ալիի ռազմական ուժի հզորացումից վախենալով, դադարեցրեց զինվորական համալրումներ ուղարկել Արաբիա, իսկ այնուհետև՝ Հունաստանում պատերազմող եգիպտական բանակ: Սուդանը ևս չտվեց անհրաժեշտ քանակությամբ ուժեղ զինվորներ, ինչի արդյունքում եգիպտական կառավարչի առաջնահերթ խնդիրը դարձավ բանակի նոր հայեցակարգի մշակումը, որը պետք է կազմվեր եգիպտացիներից: Եվրոպացի ռազմական մասնագետները, ովքեր հաջողությամբ իրականացրեցին մամլուքներից եգիպտական բանակի սպայական կորիզի նախապատրաստումը, ստեղծեցին սուդանցիներից կազմված զորամասեր, Մուհամմադ Ալիին առաջարկեցին եգիպտացի գյուղացիներից կազմված եգիպտական բանակի համալրման նոր մոտեցում, ովքեր պետք է ծառայության անցնեին զինվորական զորակոչի միջոցով: Աշխարհի շատ երկրներում սովորական այդ գաղափարը անսպասելի էր Եգիպտոսի համար, որտեղ ֆելլահները

¹⁹ Marsot A. L. al-S., նշվ. աշխ., էջ 126-127:

²⁰ Նշվ. աշխ., էջ 127-128:

²¹ علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 18:

ավելի քան 2 հազար տարի չգիտեին թե ինչ բան է զինվորական ծառայությունը: Կշռադատելով այդ առաջարկը և գալով այն եզրահանգմանը, որ այլ ելք չկա, Մուհամմադ Ալին 1822 թ. փետրվարի 27-ի հրամանով գորակոչի պարտավորություն մտցրեց, իր գորքերը համալրելով եգիպտական ֆելլահների հաշվին, որոնց բանակ էին գորակոչում ուժով²²:

Եգիպտացիները գորակոչը բանակ ընդունեցին թշնամաբար: Որոշ սլամաբաններ գորակոչի հետ էին կապում մի շարք գյուղացիական ընդվզումներ: Ապագա գորակոչիկների ծառայությունից խուսափելը և հարազատ վայրերից փախուստը զանգվածային բնույթ էր կրում²³:

Ֆրանսիական ռազմական խորհրդականներն առաջարկեցին Եգիպտոսում կիրառել բանակի հավաքագրման նույն ձևերը, որոնք գործում էին նապոլեոնական Ֆրանսիայում: Հավաքագրողները դրամական պարզն էին ստանում նույնիսկ ուժով բանակ գորակոչված ամեն մեկի համար: Զինվորական ծառայությունից խուսափելու համար խստագույն պատիժների էին ենթարկվում ոչ միայն իրենք՝ ծառայողները, այլ նաև վերջինների ընտանիքի անդամները: Զինվորական ծառայությունից խուսափելու նպատակով, գորակոչի ենթակա անձինք իրենց դիտմամբ խեղում էին (ամենից հաճախ կոտրում էին իրենց դիմացի ատամները, որպեսզի հնարավոր չլիներ կծել վառողի պարկուճները, կտրում էին ցուցամատի վերին մատոսկրը, որպեսզի հնարավոր չլիներ կրակել, կտրում էին ոտքի բութ մատը, որպեսզի հնարավոր չլիներ վազել): Այդ գործողությունները համատարած բնույթ ստանալուն պես սկսեցին հետապնդվել և պատժվել օրենքով: Գյուղերում գորակոչի համար պատասխանատու էին գյուղական շեյխերը՝ օմդաները: Հավաքագրումը ձախողելու կամ անբավարար քանակով գորակոչիկներ հավաքելու դեպքում օմդաները պատժվում էին: Բանակում նորակոչիկների ոչ բավարար քանակի դեպքում պետք է գնային օմդաների որդիները, եղբայրները կամ ազգականները. եթե այդպիսիները չէին լինում, ապա ինքը պետք է ծառայեր²⁴:

Մուհամմադ Ալիի օրոք բանակում ծառայելու ժամկետը շարքայինների և սպաների համար կարգավորված չէր: Մուհամմադ Ալին

²² علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 39:

²³ Marsot A. L. al-S., նշվ. աշխ., էջ 132:

²⁴ Marsot A. L. al-S., նշվ. աշխ., էջ 128-130:

բազմիցս մտցնում էր ծառայության ժամկետի սահմանափակում (սովորաբար նշվում էր 15 տարի ժամկետը), սակայն պատերազմների մշտական առկայության պարագայում այս ժամկետը չէր պահպանվում²⁵:

1824 թ. եգիպտական նոր զորքերի թիվը հաշվվում էր 24 հազար մարդ²⁶: Հետագայում այն շարունակում էր աճել, հասնելով 100 հազար մարդու և ավելի, ընդ որում եգիպտական բանակի թվաքանակի վերաբերյալ տարբեր հեղինակներ տարբեր, նույնիսկ կրկնակի անգամ մեծ թվեր են ներկայացնում²⁷, իսկ բանակի ծախսերը հաշվվում էին ընդհանուր բյուջեի ծախսերի մոտ կեսը²⁸:

Մուհամմադ Ալին մեծ ուշադրություն էր դարձնում նաև ռազմական նավատորմի կազմակերպմանը: Եթե սկզբում նավերը բացառապես արտադրվում էին Եվրոպայում, ապա հետագայում սկսեցին կառուցվել Ալեքսանդրիայի ծովային զինանոցում²⁹: Եգիպտացիները չունեին համապատասխան փորձ արդիական ռազմանավեր կառուցելու բնագավառում, ուստի սկզբնական շրջանում Ալեքսանդրիայի նավաշինական գործարանում հիմնականում աշխատում էին եվրոպական երկրներից բերված մասնագետները և բանվորները: Սակայն շատ չանցած, եգիպտացիներն այնպես հմտացան այդ գործում, որ նրանք ազատորեն փոխարինեցին եվրոպացիներին, որից աշխատանքները բնավ չտուժեցին³⁰:

1820-ական թթ. վերջից տեղի է ունենում բանակի զանգվածային եգիպտականացում: Մի քանի հարյուրամյակից հետո առաջին անգամ այն ձեռք է բերում ազգային բնույթ: Եգիպտացիներին բարձրագույն սպայական պաշտոններին առաջադրելու և համապատասխան կոչումներ շնորհելու հարցում ակտիվ կողմնակից էր Մուհամմադ Ալիի ավագ որդի Իբրահիմ փաշան: Իր հորը ուղղված նամակում նա գրում էր, որ զարմացած է, թե ինչու է Մուհամմադ Ալին դեմ եգիպտացիներին կապիտանից (յուզբաշի) բարձր սպայական կոչումներ շնորհելուն, քանի որ ինչքան բարձր լինի նրանց կոչումը, այնքան ավելի շատ նրանք կսիրեն իրենց կառավարչին: Իբրահիմ փաշան գրում է. «20 տարվա

²⁵ علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 145-147:

²⁶ محمد فؤاد شكري, նշվ. աշխ., էջ 153:

²⁷ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 182:

²⁸ علي محمد شلبي, նշվ. աշխ., էջ 43:

²⁹ Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003, էջ 26:

³⁰ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 181:

զինվորական ծառայության ընթացքում ես հասկացա, որ, եթե 1000 թուրքից հավատարիմ են 300-ը, ապա 1000 արաբ-եգիպտացիներից հավատարիմ են 700-ը³¹: Իբրահիմ փաշայի ջանքերով եգիպտական բանակում դրվեց եգիպտացիներից կազմված սպայական կորպուսի հիմքը, որից ժամանակի ընթացքում դուրս եկան եգիպտական ազգային-հայրենասիրական շարժման (1873-1882 թթ.) ականավոր առաջնորդներ, ովքեր համախմբվեցին գնդապետ Օրաֆի փաշայի շուրջը, իսկ ավելի հեռու ապագայում հանրապետական Եգիպտոսի բոլոր նախագահները:

Բանակի վերակառուցման հետ զուգընթաց Մուհամմադ Ալին իրականացրեց նրա ամբողջական վերազինումը այդ ժամանակվա համար արդիական զենքով: Դրա մի մասը գնվում էր արտասահմանից, բայց զգալի մասը սկսեց արտադրվել բուն Եգիպտոսում: Այդ նպատակով, ռազմական բարեփոխման հետ միաժամանակ առաջին քայլերը ձեռնարկվեցին երկրի ինդուստրացման համար. արտասահմանից ներմուծվող զինվորական հանդերձանքը փոխարինվեց եգիպտական արտադրության ապրանքներով: 1816 թ. սկսած գանձարանի գումարներով կառուցվեցին պետական գործարաններ, որոնց մի մասը տեղակայված էր անմիջապես Մուհամմադ Ալիի նստավայրի՝ Կահիրեի Միջնաբերդի սահմաններում: Չարգացավ նաև կաշվի և տեքստիլ արդյունաբերությունը, որը բանակը ապահովում էր զինվորական կոշիկներով և հանդերձանքով³¹:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Մուհամմադ Ալիի որոշումը՝ կազմակերպել ռազմական արտադրանքի արտադրությունը անմիջապես երկրի ներսում, ոչ միայն ապահովեց բանակի անկախությունն արտաքին մատակարարներից, այլ նաև ունեցավ էական սոցիալ-տնտեսական ազդեցություն. ռազմական արտադրությունը ստեղծեց նոր աշխատավայրեր, երկրի ներքին շրջանառությունում ավելացրեց փողի զանգվածը՝ ապահովելով տնտեսական դրական արդյունք:

Բանակի և նավատորմի արդիականացումը և դրա հետ կապված ինդուստրալացումը հանգեցրեցին մի շարք նորամուծությունների ներդրման անհրաժեշտության կրթության համակարգում: Երկրին անհրաժեշտ էին հայրենական որակյալ մասնագետներ, որոնց քանակը բավարար չէր նախատեսվող բարեփոխումների իրականացման հա-

³¹ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 184-185:

մար: Մուհամմադ Ալիի նախաձեռնությամբ պետական միջոցներով ստեղծվեցին բարձրաշխարհիկ հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններ եվրոպական օրինակով: 1844 թ. Եգիպտոսի կառավարության կողմից Փարիզում կազմակերպվեցին բարձրագույն զինվորական դասընթացներ (Մադրասա դարբիյա), քանի որ գանձարանի համար ավելի հեշտ և ձեռնտու էր ուսանողներին ուղարկել Փարիզ, քան Եգիպտոս հրավիրել որակյալ ֆրանսիացի մասնագետներ³²: Հատկանշական է, որ 1813-1848 թթ. ընթացքում արտասահմանում տարբեր մասնագիտություններ սովորեցին 339 ուսանողներ, որոնց մեծամասնությունը սովորում էր կամ զինվորական, կամ բանակի կարիքներին անհրաժեշտ մասնագիտություններ: Ընդհանրապես 1826-1882 թթ. եվրոպական երկրներում կրթություն ստացան 1000-ից ավել եգիպտացիներ, ընդ որում նրանց կեսից ավելին սովորում էր Ֆրանսիայում, 16%-ը՝ Անգլիայում և 23%-ը՝ այլ երկրներում³³: Կրթական բարեփոխումները հեղափոխական նշանակություն ունեին Եգիպտոսի ապագայի համար, եգիպտացիների համար մուտք բացելով, ծայրահեղ դեպքում տեսականորեն, կրթության բոլոր աստիճանների համար, ինչը իր հերթին նրանց հետագայում հնարավորություն էր տալիս զբաղեցնել պաշտոններ պետական համակարգում, այդ թվում՝ նաև բանակում, ինչը նախկինում անհասանելի էր:

Եգիպտոսի վերափոխման հսկայական ծրագիրը և մասնավորապես՝ բանակի բարեփոխումը, դրա վերագինումը և հանդերձավորումը պահանջում էր նշանակալի ֆինանսական միջոցներ: Ստանալով այդ միջոցները՝ Մուհամմադ Ալին ոչ միայն մնաց իշխանության գլխին, այլ նաև ձեռնամուխ եղավ «ան-նիզամ ալ-ջադիդ» նախագծի իրականացմանը, որը, փաստորեն, ուղղակիորեն հանգեցնում էր Եգիպտոսի հասարակական կյանքի բոլոր կողմերի, այդ թվում՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական և հոգևոր ոլորտների լայնածավալ արդիականացմանը:

Հայտնի փաստ է, որ յուրաքանչյուր երկրի կայուն զարգացման ապահովման համար առաջնային հիմնաքարը կայուն, հուսալի և ուժեղ բանակն է: Իր առջև գերնպատակ դնելով ստեղծել նմանատիպ բանակ՝ Մուհամմադ Ալին բախվեց մի շարք անհաջողությունների, որոնք,

³² Vatikiotis P., The History of Modern Egypt. From Muhammad Ali to Mubarak, 4th edition, London, 1991, p. 60-63.

³³ Черновская В., Формирование египетской интеллигенции в XIX - первой половине XX в., Москва, 1979, с. 28.

այնուամենայնիվ, երկրի ղեկավարի համար չդարձան ընկրկման պատճառ: Դրսևորելով կամային գերագույն հատկանիշներ՝ նա յուրաքանչյուր անաջողությունն ընդունեց որպես փորձ, որը խելացիորեն օգտագործեց իր հետագա ռազմավարական քայլերի կառուցման համար:

Մուհամմադ Ալիի օրոք քանակի համալրման և կառավարման մշակույթը ձևավորվեց եվրոպական, մասնավորապես՝ ֆրանսիական ռազմական ուժերի կառավարման մեթոդների և մոտեցումների հիման վրա: Սակայն առաջադեմ մոտեցումների կիրառումը այնքան հեշտ չիրականացավ, ինչպես ենթադրում էր Մուհամմադ Ալին: Բանակի վերակառուցման գործընթացում էական դեր ունեցավ եգիպտացիների դերի բարձրացումը, ովքեր բնականաբար առանձնանում էին իրենց անձնվիրությամբ և հավատարմությամբ: Բանակը բարձրակարգ մասնագետներով համալրելու նպատակով երկրի ղեկավարը նաև հատուկ ուշադրություն սկսեց դարձնել ռազմական կրթությանը՝ հրավիրելով օտարերկրյա մասնագետների, ինչպես նաև կազմակերպելով իր քաղաքացիների ռազմական ուսումը եվրոպայում: Այսպես Մուհամմադ Ալին ապահովում էր քանակի ոչ միայն ուժային, այլ նաև մտավոր զարգացումը:

Կարևորելով մարդկային գործոնի դերը քանակի կայացման հարցում՝ Մուհամմադ Ալին պակաս տեղ չէր հատկացնում նաև քանակի տեխնիկական վերագինմանը և արդիականացմանը, ինչի համար հսկայական միջոցներ էր տրամադրում երկրի բյուջեից:

Ընդհանուր առմամբ անհրաժեշտ է նշել, որ Մուհամմադ Ալիի դերը Եգիպտոսի քանակի զարգացման գործում անգնահատելի է և բացառիկ: Բանակի կառավարման մի շարք մեթոդներ և մոտեցումներ, որոնք միշտ չէ, որ հավանության էին արժանանում և հաջողությամբ պսակվում, այնուամենայնիվ, որակապես փոխեցին եգիպտական քանակի կառուցվածքը և թույլ տվեցին տևական ժամանակահատվածում ապահովել երկրի անվտանգությունը և համեմատական անկախությունը:

AZIZYAN KHACHIK
(IOS)

**THE MILITARY REFORMS OF MUHAMMAD ALI: THE FUNDAMENTS
OF BUILDING A NEW ARMY**

The article is about the military reforms of Muhammad Ali in Egypt during the first half of the 19th century. The main goal of the reforms was to ensure the safety and relative independence of the country. Despite the difficulties of adapting a new military system, the reform succeeded and also became a fundament for a radically new military system based on the European model. The article also discusses in detail the motives of the military reform initiated by Muhammad Ali and his actions to solve the problems arose during the realization process.

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
(ԱԻ)

ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԾՈՑԻ ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ (1990-91 ԹԹ.)

Սույն հոդվածը նպատակ ունի վերլուծել միջարաբական տարաձայնությունները Օոցի պատերազմի նախօրեին, ընթացքում և պատերազմի ավարտից հետո: Պատերազմի արդյունքում տարածաշրջանում հայտնվեցին միջազգային ուժեր Արևմտյան Եվրոպայից և ԱՄՆ-ից: Դա հետագայում նախադեպ հանդիսացավ ամերիկյան և եվրոպական ուժերի համար: Հոդվածը նպատակ ունի ի ցույց դնել արաբական երկրների թուլությունն ու տարաձայնությունները հասունացած հակամարտության կարգավորման գործընթացում:

1990 թ. աշնանը Մարոկկոյի արքա Հասանը հայտարարեց. «Իրաքի ներխուժումը Քուվեյթ, վերջինիս նվաճումն ու չհաջողված միավորումը ժամանակակից արաբական պատմությունում բաժանարար գիծ կլինեն ապագա տասնամյակների համար»¹:

1980-ականների վերջին Իրանից եկող սպառնալիքը համախմբեց Իրաքը, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Հորդանանը, Մարոկկոն և Օոցի արաբական պետությունները մեկ ճամբարում²: Մինչ այդ բավականին մեկուսացված վիճակում գտնվող Եգիպտոսը սկսեց վերականգնել իր դիրքերը³: Մինչև տասնամյակի վերջ բոլոր արաբական երկրները, բացառությամբ Լիբիայի, վերաբացեցին դեսպանատները Կահիրեում: Սակայն Լիբիան ևս փաստացի վերականգնել էր հարաբերությունները Եգիպտոսի հետ⁴:

1989 թ. երկու տարածաշրջանային խմբավորումներ ստեղծվեցին՝ Եգիպտոսից, Իրաքից, Հորդանանից և Հյուսիսային Եմենից կազմված Արաբական համագործակցության խորհուրդը և Հյուսիսային Աֆրիկայի հինգ արաբական երկրներից կազմված Արաբական Մադրեբի

¹ Maddy-Weitzman B., The Inter-Arab System and the Gulf War: Continuity and Change, The Carter Center, USA, 1991, p. 2

<https://www.cartercenter.org/documents/1223.pdf> (03/01/2017)

² Նույն տեղում, էջ 3:

³ Գազաթնակետը եղավ 1989 թ. Կասաբլանկայում անցկացված Արաբական խորհրդածողովը:

⁴ Maddy-Weitzman B., նշվ. աշխ., էջ 4:

(արևմուտքի) միությունը: 1981 թ. Պարսից ծոցի արաբական վեց պետություններից ստեղծված Ծոցի Համագործակցության խորհրդի հետ միասին՝ Արաբական պետությունների լիգայի անդամ 22 երկրներից 15-ն արդեն տարբեր տարածաշրջանային խմբավորումների մաս էին կազմում: Տարածաշրջանային խմբավորումների ստեղծումը նվազեցրեց Արաբական լիգայի դերը: Յուրաքանչյուր խմբավորում միավորեց ավելի սերտ հարաբերություններ և ընդհանուր շահեր ունեցող երկրների: Դրա արդյունքում առանձին խմբավորումների շահերը հաճախ սկսեցին վեր դասվել Արաբական լիգայի շահերից: Միայն Միրիան հեռու մնաց խմբավորումներին անդամակցելուց:

Ի պատասխան իրան-իրաքյան պատերազմում Միրիայի բռնած դիրքորոշման՝ Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը ամեն կերպ հովանավորում էր Լիբանանի հակասիրիական ուժերին: Սակայն Միրիան դուրս եկավ ճնշման տակից՝ ճկուն արտաքին քաղաքականություն իրականացնելով⁵: 1980-ականների վերջին Միրիան աստիճանաբար սկսեց Եգիպտոսի հետ մերձեցման քայլեր ձեռնարկել: 1988 թ. դեկտեմբերին, տասնամյա հակաեգիպտական քարոզչությունից հետո, Միրիայի նախագահ Հաֆեզ Ասադը հրապարակայնորեն հայտարարեց, թե ընդունում է Եգիպտոսի կարևորությունը արաբական բեմի վրա, և որ սիրիա-եգիպտական համագործակցությունը մշտապես համապատասխանել է արաբական աշխարհի ընդհանուր շահերին: 1989 թ. մայիսին Միրիան այլևս չէր ընդդիմանում Եգիպտոսի վերանդամակցությանն Արաբական լիգային:

1989 թ. դեկտեմբերի կեսերին վերականգնվեցին օդային թռիչքները Կահիրեի և Դամասկոսի միջև, իսկ երկու շաբաթ անց վերականգնվեցին նաև դիվանագիտական հարաբերությունները⁶:

Միրիայի հետ հարաբերությունների վերականգնումը նշանակալի ազդեցություն ունեցավ արաբական աշխարհում Եգիպտոսի դիրքի բարձրացման վրա:

1990 թ. մարտին Արաբական լիգայի խորհուրդը որոշում կայացրեց կազմակերպության նստավայրը Թունիսից ետ տեղափոխել Կահիրե⁷:

⁵ Նույն տեղում, էջ 5:

⁶ Կարապետյան Ռ., Միրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000 թթ.), Կահիրե, 2008, էջ 241:

⁷ Նույն տեղում:

Մինչև իրաքյան ներխուժումը Քուվեյթը Հորդանանը երկակի խաղ էր խաղում: Օգնելով 1989 թ. ստեղծել Արաբական համագործակցության խորհուրդը (որը միտված էր կարգավորելու աշխատանքի և կապիտալի շարժը անդամ պետությունների միջև)⁸ Հուսեյն թագավորը պարբերաբար արժարժում էր խորհրդին ռազմական ուղղվածություն տալու գաղափարը և միաժամանակ փորձում միջնորդի դեր խաղալ սիրիա-իրաքյան հարաբերությունների բարելավման գործընթացում⁹: Մակայն Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը ամեն կերպ ընդդիմանում էր Արաբական համագործակցության խորհրդում փոփոխություններ մտցնելու Հուսեյնի նախաձեռնություններին⁹:

1990 թ. մայիսի 28-30-ը Բաղդադում անցկացվեց համաարաբական գագաթնաժողով, որին ներկա չեղավ սիրիական (այդ թվում նաև լիբանանյան) պատվիրակությունը: Արևմուտքում աճող բողոքների պայմաններում գագաթնաժողովը ընդունեց բանաձև, որով ճանաչեց Իրաքի «իրավունքը զարգացնել գիտությունն ու տեխնոլոգիաները» և «պաշտպանվել բոլոր հնարավոր միջոցներով՝ իր դեմ ոտնձգություններից»¹⁰:

Այնուհետև՝ 1990 թ. հուլիսի 16-ին, Իրաքի արտաքին գործերի նախարար Թարիք Ազիզը երկար հուշագիր հղեց Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Չեյլի Քլիբիին, որում մեղադրեց Քուվեյթին և ԱՄԷ-ին Իրաքի դեմ համաձայնեցված հանցանքներ գործելու մեջ: Այդ մեղադրանքների շարքում էին նավթի պաշարների ավելացումը, իրան-իրաքյան պատերազմի ժամանակ Իրաքի կուտակած պարտքերը չեղարկելուց հրաժարվելը¹¹, Քուվեյթին պատկանող Օոցի կղզիներից Իրաքին օգտվելու իրավունք չտրամադրելը և այլն: Նմանատիպ մեղադրանքներ հնչեցրեց նաև անձամբ Սադդամ Հուսեյնը Սաուդյան Արաբիայի, Քուվեյթի ու ԱՄԷ-ի դեմ: Ըստ Սադդամի՝ իրան-իրաքյան պատերազմից հետո նշված երկրները նպատակային ձևով ավելացրին նավթի արդյունահանումը, ինչի հետևանքով համաշխարհային շուկա-

⁸ Ryan C., Jordan and the rise and fall of the Arab Cooperation Council, Middle East Journal, 1998, pp. 386-401, Baram A., Baathi Iraq and Hashemite Jordan: from hostility to alignment, Middle East Journal, 1991, pp. 51-70.

⁹ Maddy-Weitzman B., նշվ. աշխ., էջ 7:

¹⁰ Նույն տեղում, էջ 8:

¹¹ Մեկնաբանվում էր, թե Իրանի դեմ պատերազմը ձեռնադրու է եղել նաև Օոցի արաբական երկրներին:

յում ընկավ նավթի գինը, իսկ Իրաքը հայտնվեց տնտեսական ճգնաժամի շեմին:

Օոցի ճգնաժամի լուծման համար միջնորդի դեր ստանձնեցին Մուբարաքը, Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդը, Հորդանանի թագավոր Հուսեյնը և Արաբական լիգայի Գլխավոր քարտուղար Քլիֆին: Որոշվեց սաուդյան Ջիդդա քաղաքում քուվեյթ-իրաքյան երկկողմ հանդիպում կազմակերպել 1990 թ. հուլիսի 31-ին: Հանդիպումն արդյունք չտվեց: Իրաքյան պատվիրակությունը նախօրոք հայտարարեց, թե հանդիպումը խորհրդանշական բնույթ է կրում: Հետագայում պարզվեց, որ նույնիսկ եթե Քուվեյթը գնար բոլոր ցանկալի զիջումներին՝ պատերազմն անխուսափելի էր: Օոցի ճգնաժամի խաղաղ կարգավորման վերջին հույսը մարեց Ջիդդայում¹²:

Քուվեյթն օկուպացնելու նպատակներից էր նաև նրա նավահանգիստների նկատմամբ վերահսկողության հաստատումը: Իրաքը Պարսից ծոց էլք ուներ միայն Շաթթ ալ-Արաբով, որի նկատմամբ տարածքային նկրտումներ ուներ նաև Իրանը¹³:

1990 թ. օգոստոսի 2-ին Իրաքը ներխուժեց Քուվեյթ և գրավեց այն: Իրաք-իրանյան հյուծիչ պատերազմից հետո թուլացած Սադդամը որոշեց իր երկիրը ներքաշել մի այնպիսի արկածախնդրության մեջ, որը ճակատագրական հետևանքներ ունեցավ Իրաքի համար¹⁴:

Ներխուժման նույն օրը արաբական երկրներից միայն Մարոկկոն և Ալժիրը հարց բարձրացրեցին օկուպացման վերաբերյալ: Մյուս արաբական երկրները նախընտրեցին դեռևս սպասել և ուսումնասիրել իրավիճակը:

Քուվեյթի դեմ հարձակումից ժամեր անց ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց թիվ 660 բանաձևը, որը դատապարտեց ներխուժումը և պահանջեց զորքերի շուտափույթ դուրսբերում¹⁵:

Օգոստոսի 3-ին Արաբական պետությունների լիգան ևս բանաձև ընդունեց, որով պահանջեց կոնֆլիկտը լուծել Լիգայի սահմաններում և հորդորեց մյուս պետություններին գերծ մնալ միջամտությունից: 20 ներկա երկրներից 6-ը՝ Իրաքը, Եմենը, Հորդանանը, ՊԱԿ-ը, Սուդանն ու Մավրիտանիան (Լիբիան չմասնակցեց), հավանության չարժանաց-

¹² Maddy-Weitzman B., նշվ. աշխ., էջ 10:

¹³ Kelly J., Arabia, The Gulf and The West. London. 1980, pp. 276-277.

¹⁴ Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 240:

¹⁵ Report of the Security Council, 16 June 1990-15 June 1991, New York. United Nations. 1993. p 30.

րեցին քանաձևը¹⁶: Հորդանանն ու Եմենի Արաբական Հանրապետությունը դեմ արտահայտվեցին ցանկացած ոչ-արաբական պետության ռազմական միջամտությանը:

Մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 10-ին, Մուքարաբի նախաձեռնությամբ Կահիրեում տեղի ունեցավ Արաբական լիգայի արտակարգ գագաթնաժողով: 1976 թ. հետո առաջին անգամ Եգիպտոսի, Սիրիայի և Սաուդյան Արաբիայի տեսակետերը համընկան: Առաջարկվեց Քուվեյթ-Իրաք սահման ուղարկել արաբական խաղաղարար ուժեր, ինչպես 1961 թ. քուվեյթ-իրաքյան ճգնաժամի դեպքում¹⁷: ՊԱԿ առաջնորդ Յասեր Արաֆաթը, Լիբիայի նախագահ Կադդաֆին և Եմենի նախագահ Ալի Աբդալլահ Սալիհը փորձեցին շեղել ուղղությունը և հասնել նրան, որ Բաղդադ ուղարկվի արաբական պատվիրակություն՝ Սադդամ Հուսեյնի հետ քանակցելու նպատակով: Չայների մեծամասնությամբ ընդունվեց Արաբական լիգայի թիվ 195 քանաձևը, որը «դատապարտեց Իրաքի կողմից զինված ուժերի կենտրոնացումը Սաուդյան Արաբիայի սահմանին» և «սպառնալիքը» Ծոցի Համագործակցության խորհրդի երկրներին, ինչպես նաև ընդունեց Սաուդյան Արաբիայի «պաշտպանվելու օրինական իրավունքը» և «արտաքին ուժերից աջակցություն ստանալու կոչը»¹⁸: 195 քանաձևին կողմ քվեարկեցին Եգիպտոսը, Սիրիան, Լիբանանը, Մարոկկոն, ԾՀԽ վեց անդամները, Սոմալին ու Ջիբութին: Դեմ քվեարկեցին Իրաքը, Լիբիան և ՊԱԿ-ը: Վերջինս հաջորդ օրն իսկ փոխեց իր դիրքորոշումը՝ քվեարկելով ձեռնպահ: Եմենն ու Ալժիրը ևս քվեարկեցին ձեռնպահ, իսկ Հորդանանը, Սուդանն ու Մավրիտանիան քվեարկեցին կողմ, սակայն վերապահումներով: Թունիսն իր դիրքորոշումը հայտնեց քվեարկությանը չմասնակցելով:

Սաուդյան Արաբիա զինված ուժեր սկսեցին ժամանել օգոստոսի 11-ից: Զինված ուժեր ժամանեցին Եգիպտոսից, Սիրիայից, Մարոկկոյից և այլն:

Հետագայում՝ պատերազմի ընթացքում իրենց ցուցաբերած դիրքորոշումից ամենից շատ տուժեցին Հորդանանն ու նոր միավորված Եմենը: Վերջիններս փորձում էին առավելագույն աջակցություն ցուցաբերել Արաբական համագործակցության խորհրդում իրենց դաշնակից

¹⁶ Maddy-Weitzman B., նշվ. աշխ., էջ 7:

¹⁷ Նույն տեղում, էջ 9:

¹⁸ Նույն տեղում:

Իրաքին, ինչի արդյունքում պատերազմի ավարտից հետո քաղաքական մեկուսացման դատապարտվեցին:

Հորդանանի թագավոր Հուսեյնն ամեն կերպ փորձում էր ստեղծել այնպիսի իրավիճակ, որի շնորհիվ Սադդամը կլքեր Քուվեյթը՝ պահպանելով դեմքը: Եթե դա հաջողվեր, ապա Սադդամը կհայտարարեր գաղափարական հաղթանակ և էլ ավելի կամրապնդեր իր դիրքերը¹⁹: Հորդանանի արտաքին քաղաքականությունը հիմնականում կապված էր իր աշխարհագրական դիրքից և հարևաններից յուրաքանչյուրի հետ ունեցած վատ հարաբերություններից: Այն տնտեսապես, քաղաքականապես և ռազմական առումով բացահայտորեն ավելի թույլ էր իր բոլոր հարևաններից, հենց դա էլ հիմք հանդիսացավ արտաքին քաղաքականությունում ավելի շատ ճկունություն ցուցաբերելու համար:

Ինչպես նշում է Բասսալ Սալուխը՝ «Հուսեյն թագավորի օրոք Հորդանանի արտաքին քաղաքականությունը հիմնականում միտված էր վարչակարգի պահպանմանն ու գոյատևմանը»: Հուսեյնը հրաժարվեց միանալ հակաիրաքյան դաշինքին, սակայն հրաժարվեց նաև գորք ուղարկել ի պաշտպանություն Իրաքի: Նա դեմ արտահայտվեց և՛ Իրաքի կողմից Քուվեյթ ներխուժմանը, և՛ որևէ արտաքին միջամտությանը՝ բացառությամբ արաբական երկրների²⁰:

Ծոցի 1990-1991 թթ. պատերազմում Հորդանանի թագավոր Հուսեյնի որդեգրած դիրքորոշման դրդապատճառներից մեկն էլ այն էր, որ Սադդամ Հուսեյնի տապալումից հետո Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը իր հայացքը կարող էր ուղղել դեպի Ամման²¹:

Հորդանանի ցուցաբերած դիրքորոշումը ի վերջո չբավարարեց կողմերից ոչ մեկին: Պատերազմից հետո ԱՄՆ-ը, ՄԹ-ն և Ծոցի արաբական միապետությունները ոչ միայն դադարեցրին ներդրումներն ու նավթային մատակարարումները Հորդանան, այլև արտաքսեցին հարյուր հազարավոր հորդանանցի և պաղեստինցի աշխատավորների²²:

¹⁹ Kirdar N., Saving Iraq. Rebuilding a broken nation, London, 2009, p. 67.

Bregman, Ahron, El-Tahri and Jihan, The fifty years of war: Israel and Arabs, 1998, p. 203.

²⁰ Ryan C., նշվ. աշխ., էջ 45, Salloukh B., State Strenght, Permeability, and Foreign Policy Behavior: Jordan in Theoretical Perspective, Arab Studies Quarterly, Vol. 18, No.2 (Spring 1996), pp. 37-65.

²¹ Drysdale A., Hinnebusch R., Syria and the Middle East Peace Process, New York, 1991, p. 72.

²² Ryan C., Jordan's changing relations, Middle East Insight, 2000, pp. 83-87.

ՊԱԿ-ի դիրքորոշումը կապված էր այն հանգամանքի հետ, որ Արաֆաթը, ձախողվելով Լիբանանում և ապա Թունիսում, վերջին չորս տարվա ընթացքում սկսել էր հաստատվել Բաղդադում: Իրան կողմ էր արտահայտվում Սադդամ Հուսեյնը:

Կա մեկ այլ կարծիք ՊԱԿ-ի դիրքորոշման վերաբերյալ: 1980-ականների վերջին և 90-ականների սկզբին Պաղեստինում տեղի ունեցան անհանգստություններ և բախումներ: Պաղեստինյան ակտիվիստները պահանջեցին, որ ՊԱԿ-ը մշակի քաղաքական ծրագիր՝ անկախության համար պայքարը ուղղորդելու համար: Ի պատասխան՝ Պաղեստինի Ազգային խորհուրդը²³ 1988 թ. նոյեմբերին ճանաչեց Իսրայել պետությունը և հռչակեց անկախ Պաղեստին պետություն՝ Արևմտյան ափում և Գազայի հատվածում: Սակայն իսրայելական ղեկավարությունը հայտարարեց, որ դա ոչինչ չի փոխում, և իրենք ՊԱԿ-ը դեռևս համարում են ահաբեկչական կազմակերպություն, որի հետ երբևէ չեն բանակցելու: ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից ՊԱԿ-ի նախաձեռնության անտեսման արդյունքում էլ, ըստ մի շարք հեղինակների, վերջինս դեմ հանդես եկավ 1991 թ. Իրաքի դեմ ԱՄՆ-ի գործողություններին: 1991 թ. Օոցի պատերազմից հետո ՊԱԿ-ը դիվանագիտական մեկուսացման դատապարտվեց: Քուվեյթը և Սաուդյան Արաբիան կասեցրին ֆինանսական օգնությունը ՊԱԿ-ին, և վերջինս հայտնվեց ճգնաժամի շեմին²⁴:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ, մի շարք հեղինակների համաձայն, պատերազմի ողջ ընթացքում Սադդամ Հուսեյնը համոզված էր, որ արաբ ժողովուրդը ամբողջությամբ աջակցում է իրեն, իսկ Պաղեստինի արաբները նույնիսկ զգում են մոտալուտ հաղթանակի համը²⁵:

Պատերազմն ավարտվեց կռալիցիոն ուժերի հաղթանակով և Քուվեյթի ազատագրմամբ՝ 1991 թ. փետրվարի 28-ի զինադադարով: Սադդամ Հուսեյնը շարունակեց մնալ իշխանության: Խարխուլվեցին միջարաբական հարաբերությունները: Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդը պատերազմի թե՛ ընթացքում, թե՛ դրանից հետո Սադդամ Հուսեյնին մեղադրում էր «անշնորհակալ» լինելու մեջ: Համաձայն նրա՝ Իրաքը չպետք է նման քայլի դիմեր իրան-իրաքյան պատերազմում

²³ ՊԱԿ ղեկավար մարմինը:

²⁴ Beinin J., Hajjar L., Palestine, Israel and the Arab-Israeli conflict. Middle East research and information project. North Carolina. 2014. http://web.stanford.edu/group/sper/images/Palestine-Israel_Primer_MERIP.pdf (26/12/2016).

²⁵ Примаков Е., Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами, Москва, 2016г., с. 332.

Սաուդյան Արաբիայից ու Քուվեյթից ստացած աջակցությունից հետո: Նույնպիսի մեղադրանքներ հնչեցին նաև Քուվեյթի շեյխ Ջաֆեր ա-Սաբահի կողմից²⁶:

Ի պատասխան ՊԱԿ-ի դիրքորոշման՝ պատերազմի ընթացքում և պատերազմից հետո Քուվեյթից տեղի ունեցավ պաղեստինցիների արտոստ: Պատերազմից հետո Քուվեյթի կառավարությունը արտաքսեց 200,000 պաղեստինցիների²⁷: Նմանատիպ վերաբերմունքի արժանացան նաև Սաուդյան Արաբիայում աշխատող եմենցի աշխատավորները, որոնք արտաքսվեցին Օոցի պատերազմում Եմենի բռնած դիրքորոշման արդյունքում:

Չնայած կռալիցիայի անդամ լինելուն՝ Սիրիան մինչև վերջ շարունակեց առաջնային համարել իր պետական շահերը: Պարսից ծոցի ճգնաժամը ոչ միայն տնտեսական օգուտներ բերեց Դամասկոսին, այլև սեփական դիրքերը միջազգային ասպարեզում բարելավելու հնարավորություն ընձեռեց: Միայն նավթի գների կտրուկ աճը պատերազմի ընթացքում Սիրիային մոտ 200 մլն ԱՄՆ դոլարի եկամուտ ապահովեցին: Իսկ պատերազմից հետո տարբեր ծավալի ֆինանսական ներդրումներ կատարվեցին Եվրոպական Միությունից՝ 200 մլն դոլար, Ճապոնիայից՝ 500 մլն դոլար (վարկի ձևով) և այլն: Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից և ԱՄԷ-ից ստացվեց շուրջ 2 մլրդ ԱՄՆ դոլար²⁸: Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի հետ միավորումն ընդդեմ Իրաքի վերջ դրեց Սիրիայի մեկուսացմանը արաբական աշխարհում և միջազգային ասպարեզում: Մյուս կողմից Ասադը, դաշնակցելով Օոցի արաբական երկրների հետ, Սիրիայի համար ձեռք բերեց ֆինանսաապես կայուն նավթային պետությունների աջակցությունը²⁹:

Ճգնաժամը նաև հնարավորություն ընձեռեց Հաֆեզ Ասադին իրականացնել 15 տարիների ընթացքում իր հետապնդած նպատակը՝ կառավարել Լիբանանը: Երբ Օոցի ճգնաժամը շեղեց միջազգային հանրության ուշադրությունը՝ 1990 թ. հոկտեմբերի 13-ին երեք ժամվա ընթացքում Ասադն իրեն ենթարկեց Բեյրութը և երկրի հիմնական մասը, բացառությամբ հարավում գտնվող Իսրայելի հետ սահմանամերձ «անվտանգության գոտու»³⁰:

²⁶ Примаков Е., նշվ. աշխ., էջ 325:

²⁷ Հինականում Հորդանանի քաղաքացի:

²⁸ Drysdale A., Hinnebusch R., նշվ. աշխ., էջ 59:

²⁹ Նույն տեղում, էջ 92:

³⁰ Bregman A., El-Tahri J., նշվ. աշխ., pp. 242-243:

Հետպատերազմյան շրջանում միջարաբական հակասություններն այնքան խորացան, որ Հորդանանը կարողացավ վերականգնել հարաբերությունները Քատարի հետ միայն 1994 թ., իսկ Սաուդյան Արաբիայի հետ՝ 1995 թ.: Մինչ հարաբերությունների վերականգնումը Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդը մեկ անգամ նույնիսկ հրաժարվեց հանդիպել ուխտագնացության նպատակով իր երկրում գտնվող Հուսեյն թագավորի հետ: 1991 թ. ի վեր առաջին անգամ սաուդյան և հորդանանյան միապետերի միջև երես առ երես հանդիպում տեղի ունեցավ միայն 1996 թ.³¹:

Արաբական երկրները և Արաբական պետությունների լիգան չկարողացան կարգավորել Իրաքի ու Քուվեյթի միջև գոյություն ունեցող հակասությունները, ինչը հանգեցրեց պատերազմի: Նրանք չկարողացան ինքնուրույն կարգավորել իրավիճակը, ինչը հանգեցրեց հակամարտության միջազգայնացմանը՝ ստեղծելով շատ վտանգավոր նախադեպ ասլազայի համար:

ARAKELYAN ANDRANIK

(IOS)

INTER-ARAB COOPERATION ISSUES DURING THE GULF WAR (1990-1991)

The article presents the cooperation problems of one of the most complicated conflicts in 20th century – The Gulf war /or the First Gulf war/. On August 3, 1990 Iraq invaded Kuwait and occupied it. Within hours of the invasion, on 3 August, the Arab League passed a resolution, which called for a solution to the conflict within the League, and warned against outside intervention. Iraq and Libya opposed a resolution for Iraq to withdraw from Kuwait. The PLO opposed it as well. The Arab states of Yemen and Jordan – a Western ally which bordered Iraq and relied on the country for economic support – opposed military intervention from non-Arab states. The Arab state of Sudan aligned itself with Saddam. The Arab states failed in solving the conflict inside the League, so it went out of the Arab world and proved the absence of unity among the Arab states.

On November 29, 1990, the Security Council passed the resolution 678

³¹ Ryan C., նշվ. աշխ., էջ 54:

which gave Iraq time until 15 January 1991 to withdraw from Kuwait and empowered states to use "all necessary means" to force Iraq out of Kuwait after the deadline. Iraq posed a significant threat to Saudi Arabia because its army was within easy striking distance of Saudi oil fields. Iraq had a number of grievances with Saudi Arabia and UAE as they had lent Iraq some 26 billion dollars during its war with Iran. They backed Iraq in that war, as they feared the influence of Shia Iran's Islamic Revolution on their own Shia minorities. But after the war Saddam felt he shouldn't have to repay the loans due to the help he had given those countries by fighting Iran.

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀԵՐՄՈՒՆԵ
(ԱԻ)

1973 թ. ԱՐԱՔԱ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ
ՆԱՎԹԱՅԻՆ ԷՍԲԱՐԳՈՆ

Էներգետիկ ռեսուրսներով, մասնավորապես նավթով հարուստ Մերձավոր Արևելքի արաբական երկրները մշտապես եղել են գերտերությունների ուշադրության կենտրոնում: Մինչև նավթի հանքավայրերի հայտնաբերումը տարածաշրջանն Արևմուտքի համար մեծ կարևորություն էր ներկայացնում աշխարհաքաղաքականության տեսանկյունից, իսկ էներգետիկ ռեսուրսների պաշարների հայտնաբերումից հետո դրա նշանակությունն էլ ավելի մեծացավ:

Եվրոպական տերությունների միջև արաբական երկրների մանդատների բաժանումից հետո Մերձավոր Արևելքի արաբական պետություններում արևմտյան ընկերությունները սկսեցին իրականացնել նավթի հետախուզում, արդյունահանում և արտահանում: Այդ ամենը կատարվում էր կոնցեսիոն պայմանագրերի համաձայն, որոնք կնքվում էին անհավասար պայմաններով, և ընդհուպ 70-ական թվականների սկիզբը կոնցեսիոն համակարգը շարունակում էր մնալ Մերձավոր Արևելքում մոնոպոլիաների գործունեության հիմքը: Օտարերկրյա նավթային կոնցեսիաների ազգայնացման գործընթացը գործնականորեն ավարտվեց միայն 1979-1980 թվականներին:

Արդեն 20-րդ դարի 50-ական թվականներին, երբ ազգայնացման համար պայքարը նոր էր սկսվել, արաբները, հասկանալով Արևմուտքի կախվածությունը իրենց նավթային մատակարարումներից, մի քանի անգամ փորձեցին օգտագործել այդ հանգամանքը իրենց քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար:

Առաջին նման փորձը եղավ Սուեզյան ճգնաժամի ժամանակ, ապա 1967 և 1973 թվականների արաբա-իսրայելական պատերազմների ժամանակ, սակայն Արևմուտքի համար լուրջ խնդիրներ առաջացրեց հատկապես 1973 թ. հոկտեմբերյան պատերազմի ժամանակ կիրառած արաբական էմբարգոն:

Արագ և համոզիչ հաղթանակ տանելով 1967 թ. պատերազմում՝ Իսրայելը վստահ էր, որ մոտակա տասնամյակներում արաբները չեն համարձակվի հարձակվել իրենց վրա: Սուեզի ջրանցքի երկայնքով իսրայելցիները կառուցել էին հզոր ամրություններ, որոնք կոչվում էին

«Բար-Լևի գիծ»¹: Գոլանի բարձունքներում նույնպես ստեղծվել էր պաշտպանական սահմանագիծ՝ 75 կմ երկարությամբ: Դրա հիմքը կազմում էին բարձունքներում տեղակայված հենակետերը, որոնք իրենց մեջ ներառում էին հողի մեջ թաղված տանկեր²: Իսրայելցիները պատրաստվում էին պաշտպանական պատերազմի և՛ սիրիական, և՛ սուեզյան ուղղություններով, իսկ թերակղզու նախորդ մարտերում մոտոմեքենայավորված զորամասի ունեցած հաջողությունը հանգեցրեց տանկերի նշանակության գերազնահատմանը և հետևակի ու հրետանու թերագնահատմանը: Դա էլ իսրայելցիների համար ունեցավ իր բացասական հետևանքները:

Իսրայելի կողմից օկուպացված Սինայի թերակղզին ու Գոլանի բարձունքները հետ վերադարձնելու և տարածքային ամբողջականությունը վերականգնելու Եգիպտոսի ձգտումը, որն առաջացել էր դեռևս 1967 թ., առաջնային կարևորություն ձեռք բերեցին այն բանից հետո, երբ 1970 թ. սեպտեմբերի 28-ին նախագահ Գամալ Աբդել Նասերի մահից հետո Եգիպտոսում իշխանության եկավ Անվար Սադատը³: Հաշվի առնելով կատարած սխալները՝ եգիպտացիները հսկայական աշխատանք իրականացրեցին իրենց ռազմական հզորության ավելացման և ամրապնդման համար: Ռեանշի ձգտող արաբները նախապատրաստա-

¹ Իսրայելի ռազմական և պետական գործիչ, գեներալ-լեյտենանտ, Իսրայելի պաշտպանության բանակի Գլխավոր շտաբի ութերորդ պետ Խաիմ Բար-Լևի անունից, ով հաղիսանում էր այդ գծի մշակողը: Այդ ամբությունները բաղկացած էին պաշտպանության մի քանի գծերից՝ երեսունից հիսուն կիլոմետր խորությամբ: Առաջին գիծը անցնում էր ջրանցքի երկարությամբ և իր մեջ ներառում էր քսան մետրանոց հակատանկային պատվարը (մոտ 160 կմ երկարությամբ): Պատվարի ներսում գտնվում էր խողովակաշարը, որը ապահովում էր նավթի հոսքը ջրանցք: Ճգնաժամային իրավիճակում նախատեսվում էր այն բացել և հրդեհել: Պաշտպանության գծերի միջև անցնում էր ճանապարհ, որը վերահսկվում էր տանկերով և հետևակով: Այդ ճանապարհը նախատեսված էր ՀԻԿ-ի մարտկոցների տեղափոխման համար: Երկրորդ գծի հիմքը վաշտային հենակետերն էին, որոնք, ըստ հաշվարկների, կարող էին ինքնուրույն դիմանալ ավելի քան հինգ օր: Եվ, վերջապես, ջրանցքից երեսուն կիլոմետր հեռավորության վրա՝ պահեստազորում, գտնվում էին երեք զրահատանկային բրիգադները: «Բար-Լևի գծի» կառուցումը Իսրայելին արժեցել էր 300 մլն դոլար:

² Сулимов И., Октябрьская война 1973-го года, <http://topwar.ru/35491-oktyabrskaya-voyna-1973-go-goda.html>.

³ Яременко В., Судный день без победителей, <http://www.polit.ru/article/2008/10/08/war/>.

կան աշխատանքները սկսել էին դեռևս 1971 թ., երբ Ալեքսանդրիայից և Կահիրեից ոչ հեռու կառուցվել էին ուսումնական հատուկ կենտրոններ⁴:

Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորումը և արաբա-իսրայելական հակամարտության լուծումը Անվար Սադատին ամենից շատ հուզող հարցն էր նրա նախագահության առաջին օրվանից: Դա իր սրությունը չկորցրեց նրա կառավարման ողջ շրջանում: Սադատին պետք էր այնպիսի հաղթանակ, որին չէին կարողացել հասնել նրա երեք նախորդները՝ Ֆարուկ Առաջինը, գեներալ Նագիբը և Գամալ Աբդել Նասերը: Նա վստահ էր, որ միայն այդպես կարող է ձեռք բերել այնպիսի հեղինակություն, որին անգամ Նասերը կարող էր նախանձել: Մտածելով ռազմական գործողությունների մասին՝ նա իր առջև խնդիր չէր դնում հասնել լիիրավ հաղթանակի Իսրայելի նկատմամբ: Նա գիտակցում էր, որ Եգիպտոսը և ողջ արաբական աշխարհը դեռևս պատրաստ չէր դրան: Նրա նպատակն էր հասնել մի փոքր՝ սահմանափակ բնույթի հաղթանակի, որը կկապվեր նրա անվան հետ, կվերացներ Իսրայելի անպարտության առասպելը և կառաջացներ փոփոխություններ արաբների մտածելակերպում ու հոգեբանության մեջ: Նա հույս ուներ նաև, որ դա որոշոկի փոփոխություններ կարող է առաջացնել Իսրայելի և նրան պաշտպանող արևմտյան պետությունների, առաջին հերթին ԱՄՆ-ի քաղաքականության մեջ⁵:

1973 թ. հոկտեմբերի 6-ին Եգիպտոսի հարձակմամբ սկսվեց արաբա-իսրայելական չորրորդ պատերազմը կամ, ինչպես անվանում են, «Դատաստանի օրվա» պատերազմը⁶: Այս անգամ Եգիպտոսի հետ պատերազմի մեջ մտավ միայն Սիրիան, իսկ Հորդանանը ձեռնպահ մնաց:

⁴ Сулимов И., նշվ. աշխ., <http://topwar.ru/35491-oktyabrskaya-voyna-1973-god.html>.

⁵ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Հ.III, Երևան, 2006, էջ 298-299:

⁶ Հարձակման օրը արաբները պատահական չէին ընտրել: 1973 թ. այդ օրն էր նշվում հրեաների կրոնական ամենակարևոր տոնը՝ Յոմ Կիպուրը (եբր.՝ יום כיפור)՝ «Քավության օր» կամ «Դատաստանի օր»: Դրա ընթացքում հրեաները պետք է պաս պահեն և ապաշխարության աղոթքներ ասեն: Այդ օրը ավելի խիստ սահմանափակումներ են դրվում գործողությունների վրա, քան սովորական շաբաթ օրերին: (Աղբյուրը՝ Богданов К., "Война Судного дня": затре- щина, которая отрезвила элиты Израиля, <http://ria.ru/analytics/20131006/967823621.html>):

Եզիպտական զորքերը հաջողությամբ անցան Սուեզի ջրանցքը և, ձեռքելնվ իսրայելցիների կողմից կառուցված հզոր պաշտպանական «Բար-Լևի գիծը», գրավեցին Մինայի թերակղզու մի մասը: Ռազմական այս հաջողությունը մեծ ոգևորություն առաջացրեց արաբական աշխարհում և շփոթվածություն՝ Իսրայելում: Սակայն Եզիպտոսը չօգտագործեց իր ռազմավարական հաջողությունները զարգացնելու հնարավորությունը, և Սադաթի հրամանով եզիպտական զորքերի հարձակողական գործողությունները դադարեցվեցին: Դա կատարվել էր «սահմանափակ պատերազմի» վերաբերյալ Ա. Սադաթի պլանի համաձայն, որը ողբերգության վերածվեց հետագայում իսրայելական շրջափակման մեջ հայտնված եզիպտական զորաբանակի համար⁷:

Հարձակողական գործողությունների դադարեցումից շատ լավ օգտվեց Իսրայելը: Վերջինիս բանակը շատ շուտ ուշքի եկավ, վերակազմավորեց իր ուժերը և անցավ հակահարձակման եզիպտական, ապա նաև սիրիական ռազմաճակատներում և հասավ նոր հաջողությունների:

Հոկտեմբերի 9-12-ը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկեց ստեղծված իրադրությունը և 1973 թ. հոկտեմբերի 22-ին ընդունվեց №338 բանաձևը⁸: Ըստ այդ բանաձևի նախատեսվում էր՝

1. Կրակի անհապաղ դադարեցում,
2. ՄԱԿ-ի ԱԽ-ի 1967 թ. №242-րդ բանաձևի անհապաղ կատարում,
3. Բանակցությունների սկսում շահագրգիռ կողմերի միջև:

Սակայն Իսրայելը, խախտելով որոշումը, շարունակում էր հարձակումը: Այդ ընթացքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդունեց նաև №339 բանաձևը⁹ հոկտեմբերի 23-ին և №340-ը¹⁰՝ հոկտեմբերի 25-ին, որից հետո միայն կրակը դադարեցվեց:

Արդեն 1973 թ. դեկտեմբերի 21-ին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ ժնկում համաժողով գումարվեց, որի նպատակը Իսրայելի, Եզիպտոսի և Սիրիայի միջև զորքերի տարաբաժանումն էր: Համաժողովի ընթաց-

⁷ Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., Հ.III, էջ 300:

⁸ United Nations Security Council Resolution 338 (1973),

[http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/338\(1973\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/338(1973))

⁹ Ավելի մանրամասն տե՛ս United Nations Security Council Resolution 339 (1973),

[http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/339\(1973\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/339(1973))

¹⁰ Ավելի մանրամասն տե՛ս United Nations Security Council Resolution 340 (1973),

[http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/340\(1973\)](http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=S/RES/340(1973))

քում համաձայնությունն ձեռք բերվեց իսրայելական և եգիպտական զորքերի բաժանման և երկու կողմերի միջև բանակցությունները շարունակելու վերաբերյալ: 1974 թ. հունվարի 11-18-ը, Կահիրե-Սուեզ խճուղու 101-րդ կմ-ի վրա ստորագրվեց զորքերի տարաբաժանման վերաբերյալ իսրայելա-եգիպտական համաձայնագիրը: Իսրայելը հետքաշեց իր զորքերը Սուեզի ջրանցքից 32 կմ արևելք: Եգիպտոսը համաձայնվեց զգալիորեն նվազեցնել իր զինված ուժերն այդ շրջանում: Եգիպտական և իսրայելական զորքերի միջև ստեղծվելու էր բուֆերային գոտի՝ ՄԱԿ-ի ուժերի վերահսկողության տակ: Իսկ 1975 թ. սեպտեմբերի 4-ին Իսրայելի և Եգիպտոսի միջև կնքվեց նոր համաձայնագիր¹¹, որը լրացնում էր 1974 թ. համաձայնագրին¹²:

Միրիայի և Իսրայելի միջև կրակի դադարեցման մասին համաձայնագիր ստորագրվեց 1974 թ. մայիսի 31-ին¹³: Իսրայելը իր զորքերը դուրս բերեց 1973 թ. պատերազմի ընթացքում գրաված սիրիական բոլոր տարածքներից և 1967 թ. օկուպացված Գոլանի բարձրունքների մի մասից՝ ընդամենը 663 քառ.կմ¹⁴: Միրիային վերադարձվեց նաև Կունեյտրան, այն պայմանով որ այստեղ ստեղծվի ապառազմականացված գոտի և տեղակայվեն ՄԱԿ-ի զինված ուժեր:

Հենց 1973 թ. հոկտեմբերյան պատերազմի ժամանակ էր, որ արաբները նորից կիրառեցին նավթային էմբարգո: Այն նախատեսում էր ինչպես նավթի արդյունահանման, այնպես էլ արտահանման ծավալի կրճատում:

Նավթային շուկայի կայունությունը, որը տասնամյակների ընթացքում անասան էր, ցնցվեց 1971 թ. փետրվարին, երբ ՕՊԵԿ-ի և նավթարդյունահանող ընկերությունների միջև ձեռք բերված համաձայ-

¹¹ Սեպտեմբերի 4-ին Եգիպտոսը և Իսրայելը ստորագրեցին Մինայի համաձայնագիրը, որը նախատեսում էր իսրայելական զորքերի հետքաշում, Միլթա և Գիդի լեռնանցքների անցում Եգիպտոսին: Եգիպտոսը իրեն վերադարձրեց Մինայի 10%-ը: Իսրայելի ռազմական նավերը ստանում էին Սուեզի ջրանցքով ազատ երթևեկության իրավունք:

¹² Հովհաննիսյան Ա., ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան կոնֆլիկտի հանդեպ 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմից հետո և Լիբանանյան ճգնաժամի ժամանակաշրջանում, <http://middleorient.com/?p=1821>

¹³ Война "Судного дня" 1973 г.,

http://www.coldwar.ru/conflicts/middle_east/1973.php

¹⁴ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, Հ.IV, Երևան, 2007, էջ 520:

նության շրջանակներում Պարսից ծոցի երկրները հասան հում նավթի տեղեկատու գների բարձրացմանը 20%-ով: Սակայն շուկայի իրական ցնցումը տեղի ունեցավ 1973 թ. հոկտեմբերին:

1973 թ. հոկտեմբերին Վիեննայում բանակցություններ էին ընթանում ՕՊԵԿ-ի անդամ պետությունների և նավթային ընկերությունների միջև: Հոկտեմբերի 8-ին, չստանալով մոնոպոլիաներից դրական պատասխան, Պարսից ծոցի 6 պետությունները՝ Սաուդյան Արաբիան, Իրանը, Իրաքը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Քաթարը և Քուվեյթը, հոկտեմբերի 12-ին որոշում ընդունեցին միակողմանի կերպով սահմանել նավթի նոր տեղեկատու գները: Հոկտեմբերի 16-ին նրանք հայտարարեցին 70%-ով գների բարձրացման և դրանց ու փաստացի գործարքների գների միջև խիստ կախվածության մասին¹⁵:

Այդ նույն ընթացքում՝ հոկտեմբերի 13-ին, երբ ընթանում էր արաբա-իսրայելական պատերազմի յոթերորդ օրը, արաբական երկրների նավթի նախարարները հավաքվեցին Քուվեյթում: Նախարարների առջև դրված էր ոչ միայն արաբական բանակներին մարտի դաշտում աջակցելու, այլև «նավթային գենքը» կիրառելու հարցը: Հոկտեմբերի 17-ին ՕՊԵԿ-ի անդամ արաբական երկրների նավթային նախարարները որոշում կայացրեցին էմբարգո սահմանել և հայտարարեցին յուրաքանչյուր ամիս 5%-ով կրճատել նավթի արդյունահանումը այնքան ժամանակ, քանի դեռ իսրայելական զորքերը դուրս չեն բերվի գրավված արաբական տարածքներից¹⁶:

Այս երկու իրադարձություններն էլ տեղի ունեցան միևնույն ժամանակ, թեև նրանց միջև ոչ մի կապ չկար: Նավթի գների միակողմանի բարձրացումը բխում էր նավթարդյունահանող երկրների և խոշոր նավթային ընկերությունների միջև երկարատև և բարդ բանակցություններից, այն դեպքում, երբ էմբարգոն սահմանեցին, ինչպես նշում էր ՕՊԵԿ-ի գլխավոր քարտուղարը, միայն այն բանի համար, որ հրավիրեն Արևմուտքի մարդկանց ուշադրությունը Իսրայելի խնդրի վրա¹⁷:

Հոկտեմբերի 19-ին¹⁸ էմբարգոն սկսում է գործել: Սաուդյան Արա-

¹⁵ Андрасян Р., Казюков А., ОПЕК в мире нефти, Москва, 1978, с. 112.

¹⁶ Васильев А., Факелы Персидского залива, Москва, 1976, с. 103.

¹⁷ Лоран Э., Нефтяные магнаты: кто делает мировую политику, Москва, 2014, <http://allconspirology.org/books/Erik-Loran-Neftyanye-magnaty-kto-delaet-mirovuyu-politiku/3>.

¹⁸ Հոկտեմբերի 19-ին՝ այն ժամանակ, երբ Սաուդյան թագավորությունը որոշում է էմբարգո մտցնել, ԱՄՆ-ի նախագահ Ռիչարդ Նիքսոնը, հրապարա-

բիան՝ համաշխարհային նավթարդյունահանող երկրներից առաջինը, հայտարարում է 10%-ով իր արտադրանքի կրճատման և Միացյալ Նահանգներին ու Հոլանդիային իր բոլոր մատակարարումների դադարեցման մասին՝ Իսրայելին ցուցաբերած նրանց օգնության պատճառով:

«Եթե դուք թշնամաբար եք տրամադրված մեր դեմ, դուք նավթ չեք ստանա: Եթե դուք չեզոք դիրքում եք, դուք կստանաք այն, սակայն ոչ այն քանակով, ինչ նախկինում: Եթե դուք բարյացակամ եք տրամադրված մեր նկատմամբ, դուք կստանաք այնքան նավթ, որքան նախկինում», - այսպես էր Սաուդյան Արաբիայի նավթի նախարար շեյխ Յամանին ամփոփում բոյկոտի քաղաքականությունը¹⁹:

Հոկտեմբերի 20-22-ը արաբական երկրները մեկը մյուսի հետևից հայտարարեցին Իսրայելին զենք մատակարարող Միացյալ Նահանգներին, ապա նաև իսրայելամետ դիրքորոշում զբաղեցրած Հոլանդիային նավթի մատակարարումների դադարեցման մասին²⁰: Հեղուկ վառելիքի արդյունահանումը արաբական երկրներում կրճատվեց գրեթե մեկ երրորդով: Նրանք էմբարգո սահմանեցին նաև այն վերամշակող գործարաններին մատակարարվող հումքի վրա, որոնք սովորաբար նավթամթերք էին արտահանում ԱՄՆ կամ դրանք վաճառում էին ամերիկյան նավատորմին: Արաբական երկրների հետ չընդհարվելու համար Արևմտյան Եվրոպյան գործնականորեն դադարեցրեց նավթամթերքների արտահանումը ԱՄՆ, այդ թվում՝ նաև այն ապրանքների, որոնք պատրաստվում էին ոչ արաբական հումքից²¹:

1973 թ. նոյեմբերի 5-ին ՕԱՊԵԿ-ի անդամ տասը պետությունները որոշեցին դեկտեմբերին կրճատել նավթի արդյունահանումը 25%-ով սեպտեմբերի համեմատությամբ և 5%-ով նոյեմբերի համեմատությամբ: Արևմտյան Եվրոպայի արձագանքը չուշացավ: Արդեն նոյեմբերի 6-ի առավոտյան «իննյակի»²² երկրների կառավարությունները հանդես

կայնորեն հայտարարում է 2.2 մլրդ դոլարի չափով Իսրայելին ռազմական օգնություն տրամադրելու մասին:

¹⁹ Васильев А., նշվ. աշխ., էջ 104:

²⁰ Ընտրությունը կանգ առավ Հոլանդիայի վրա, հնարավոր է, նաև այն պատճառով, որ Ռոտտերդամի նավահանգիստը ընդունում էր նավթային բեռների խոշոր խմբաքանակ Մերձավոր Արևելքից: Այն, որ տանկերները այլևս չէին կառանավում հոլանդական նավահանգիստներում, թույլ տվեց մեծացնել ճնշումը Եվրոպայի վրա:

²¹ Поташов С., История кризисов: Первый мировой энергетический кризис 1973-74 годов, <http://www.profi-forex.org/journal/number17/page11.html>

²² Եվրոպական տնտեսական համագործակցության (1957-1993) երկրները:

եկան Մերձավոր Արևելքում դրության վերաբերյալ հայտարարություններով: Նրանք հաղեւ եկան Անվտանգության խորհրդի բանաձևի կատարման օգտին, որով նախատեսվում էր հակամարտության մասնակից կողմերի գորքերը վերադրաձևել այն դիրքերը, որոնք նրանք զբաղեցնում էին հոկտեմբերի 22-ին²³: «Իննյակը» նաև հայտարարեց Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22-ի որոշման կատարման անհրաժեշտության մասին՝ ներառյալ այդ թվականին օկուպացված արաբական տարածքների ազատումը²⁴:

Արդեն 1973 թ. դեկտեմբերին ՕՊԵԿ-ը միաձայն որոշմամբ միակողմանի կերպով կրկին բարձրացրեց նավթի տեղեկատու գինը՝ 1 բարելի դիմաց այն հասցնելով մինչև 11.28 դոլարի²⁵:

Թեև նավթի գների բարձրացումից և էմբարգոյի կիրառումից հետո ԱՄՆ-ի նախագահ Ռիչարդ Նիքսոնն էներգետուրսների օգտագործումը սահմանափակող խիստ միջոցներ մտցրեց, սակայն իրավիճակը փրկել չհաջողվեց: 70-ական թվականների նավթային ճգնաժամի գագաթնակետին բենզինի մեկ գալոնի գինը ԱՄՆ-ում բարձրացավ՝ 30 ցենտից հասնելով 1.2 դոլարի:

Wall Street-ի արձագանքը վայրկյանական էր: Նավթարդյունահանող ընկերությունների բաժնետոմսերը վեր բարձրացան, սակայն մյուս բոլոր բաժնետոմսերը 1973 թ. հոկտեմբերի 17-ից մինչև նոյեմբերի վերջ ընկած ժամանակահատվածում կորցրեցին միջինում 15%: Dow Jones-ի ինդեքսը²⁶ այդ նույն ընթացքում իջավ 962-ից մինչև 822-ի²⁷:

1974 թ. մարտին նավթային էմբարգոն հանվեց: Նավթարդյունահանող արաբական երկրները չստացան այն քաղաքական օգուտը, որն ակնկալում էին: Չնայած այս ամենին՝ նավթի գների բարձրացման

²³ Հիշեցնեք, որ հեկտեմբերի 22-ին Իսրայելը խախտել էր կրակի դադարեցման մասին Անվտանգության խորհրդի որոշումը, և որոշ հարձակողական գործողություններ էր իրականացրել Եգիպտոսում:

²⁴ Васильев А., նշվ. աշխ., էջ 107:

²⁵ Дребушевский А., Нефтяная политика организации стран экспортёров нефти (ОПЕК) в сфере ценообразования в 70-х гг. 20-ого века в освещении отечественного востоковедия, Омск, Омский научный вестник, № 2-76 / 2009, с. 39.

²⁶ Dow Jones-ը գոյություն ունեցող ամերիկյան շուկայական ինդեքսներից ամենահինն է: Այդ ինդեքսը ստեղծվել էր ամերիկյան արժեթղթերի շուկայի արդյունաբերական բաղկացուցչի զարգացմանը հետևելու համար:

²⁷ ОПЕК - Нефтяной кризис - Политика США,

<http://www.assessor.ru/forum/index.php?t=686>

պայմաններում, որը շարունակվում էր 70-ական թվականների նավթա-
յին ճգնաժամի ընթացքում, էմբարգոն ավելի բարդացրեց խոշոր երկր-
ների տնտեսությունների վիճակը:

20-րդ դարի 70-ական թվականներին ՕՊԵԿ-ը գործում էր էներ-
գահումքային ճգնաժամի օբյեկտիվ պայմաններում, որը դրսևորվում էր
ոչ միայն նավթի պակասի, այլև ողջ գնային համակարգի փոփոխմամբ:
Այն եզակի հնարավորություն տվեց նավթարդյունահանող երկրներին
ամրապնդել իրենց դիրքերը նավթային շուկայում: Պատահական չէ, որ
էներգետիկ ճգնաժամի սոցիալ-տնտեսական պատճառների մեջ Ե.
Պրիմակովը հատուկ տեղ էր հատկացնում նավթարդյունահանող զար-
գացող երկրների և նավթ սպառող զարգացած երկրների փոխհարա-
բերությունների համակարգին²⁸: Վ. Իսանը գտնում էր, որ օգտագոր-
ծելով նավթը որպես քաղաքական զենք՝ ՕՊԵԿ-ը կարողացավ լուծել մի
շարք խնդիրներ, որի համար այլ պայմաններում կպահանջվեր ավելի
շատ ժամանակ²⁹:

70-ական թվականների սկզբին արդեն հասունացել էին նավթի
գների բարձրացման պատճառները, քանի որ տնտեսականորեն չհիմ-
նավորված ցածր գները ձեռնտու չէին ոչ միայն ՕՊԵԿ-ի, այլև մոնո-
պոլիսների համար³⁰:

1973 թ. ճգնաժամի նախօրեին խոշոր մոնոպոլիաները բախվել
էին լուրջ ֆինանսական խնդիրների հետ, որոնք նրանք թաքցնում էին:
Դրանցից որոշները գտնվում էին սնանկացման եզրին: Նրանք
ներդրումներ էին կատարել ծրագրերի մեջ, որոնց վերջնական արժեքը
որոշ դեպքերում 5-10 անգամ գերազանցում էր սպասվելիք արժեքը:

Խոսքը գնում էր Ալյասկայում նավթամուղերի կառուցման մա-
սին, որոնք արժենալու էին ավելի քան 10 մլրդ դոլար, և Հյուսիսային
ծովի ափամերձ հատվածների, հսկայական նավթահանքերի մշակման
մասին, որոնք պահանջում էին հորատման նոր տեխնոլոգիաներ՝
ամենից թանկը նավթարդյունահաման պատմության մեջ: «Exxon»,
«Shell», «BP», «Phillips Petroleum» ընկերություններն առավել ան-
հանգստացած էին վճարումների ժամկետներով՝ նրանք չէին կարող

²⁸ Примаков Е., Восток после краха колониальной системы, Москва, 1982, с. 58.

²⁹ Исаев В., Арабские страны в международном разделении труда. Проблемы. Перспективы. 1961-1990, Москва, 1996, с. 152.

³⁰ Андреасян Р., Нефть и арабские страны в 1973 - 1983 гг: (Экономический и социальный анализ), Москва, 1990, с. 108.

դադարեցնել այդ շինարարությունները, որոնց արժեքը անընդհատ ավելանում էր³¹:

1973 թ. ՕՊԵԿ-ի կողմից սանձազերծված ճգնաժամը դառնում է նրանց փրկությունը: Նավթի գնի բարձրացումը անմիջապես դարձնում է այդ ծրագրերը ռացիոնալ և տնտեսապես կենսունակ:

Նավթային շուկայի որոշ ուսումնասիրողներ նույնիսկ կարծում են, որ նավթի գների բարձրացման վերաբերյալ որոշակի պայմանավորվածություն կար մոնոպոլիաների, զարգացած արդյունաբերություն ունեցող երկրների կառավարությունների և ՕՊԵԿ-ի անդամների միջև: Մոնոպոլիաները հետաքրքրված էին իրենց եկամուտների բարձրացմամբ, նրանք անհագստացած էին էներգետիկ անվտանգության խնդրով և դրա հետ կապված ցանկանում էին այլընտրանքային ռեսուրսների շուկաներ ներխուժման ճանապարհով նվազեցնել իրենց կախվածությունը Մերձավոր Արևելքից: Բացի այդ, մոնոպոլիաները հասկանում էին, որ նավթի գների բարձրացման իրենց սեփական նախաձեռնությունը կառաջացներ Արևմուտքի բացասական արձագանքը, այդ պատճառով գործում էին ետնաբեմում, հրահրելով ՕՊԵԿ-ին բարձրացնել գները՝ միևնույն ժամանակ փորձելով ղեկավարել նրա գործողությունները³²:

Այն բանից հետո, երբ ՕՊԵԿ-ը միակողմանի կերպով բարձրացրեց նավթի գները, կապիտալիստական շուկայում ձևավորվեց փոխհարաբերությունների նոր համակարգ՝ ներկայացված հին և նոր կարտելներով³³: Նոր կարտելը մոնոպոլացրեց նավթի արդյունահանման ոլորտը, իսկ հինը, նախկինի պես, իր ձեռքում էր պահում հումքի գնումն ու դրա հետ կապված հետագա ողջ գործընթացը՝ վերամշակում, տեղափոխում, սպառում: Արդյունքում ՕՊԵԿ-ը սահմանում էր նավթի գինը, իսկ մոնոպոլիաները հաստատում էին նավթամթերքների գները: Երկու կողմերն էլ հետաքրքրված էին իրենց ապրանքների գների բարձրացմամբ³⁴: Միացյալ նավթային ընկերությունները փորձում էին գերշահույթ ստանալ շահագործման միջոցով, իսկ ՕՊԵԿ-ը ձգտում էր ազատվել այդ շահագործումից:

Նավթի գների երկրորդ ցատկը և էներգետիկ ճգնաժամի երկրորդ

³¹ Лоран Э., նշվ. աշխ., <http://allconspirology.org/books/Erik-Loran-Neftyanyemagnaty-kto-delaet-mirovuyu-politiku/3>

³² Андреев Р., նշվ. աշխ., էջ 108-109:

³³ Հին կարտել՝ Միջազգային նավթային կարտել, նորը՝ ՕՊԵԿ:

³⁴ Андреев Р., նշվ. աշխ., էջ 101:

բոնկումը հրահրվեց հենց նավթային ընկերությունների և ԱՄՆ-ի կողմից: Իրանում հեղափոխությունից³⁵ հետո և, համապատասխանաբար, Իրանից նավթի մատակարարումների կրճատումից հետո Սաուդյան Արաբիան բարձրացրեց նավթի արդյունահանումը, սակայն մոնոպոլիաները արհեստականորեն նավթային դեֆիցիտ առաջացրին: 1979 թ. առաջինը նավթի գինը բարձրացրեց Բրիտանական ազգային նավթային ընկերությունը: Դրա հետևանքով Ռոտերդամի շուկայում միջևորդ ընկերությունները բարձրացրին նավթի գինը՝ մեկ բարելի դիմաց 13 դոլարից հասցնելով 37-ի: Ընդ որում ՕՊԵԿ-ի անդամներից մոնոպոլիաները նավթը ստանում էին վաճառքային պաշտոնական գներով, բայց Ռոտերդամում այն իրացնում էին երեք անգամ ավելի թանկ: Այդ պատճառով ՕՊԵԿ-ի անդամ երկրները ևս բարձրացրին գները³⁶:

Երբ 1979 թ. մարտին ժնկում կայացած ՕՊԵԿ-ի 53-րդ արտակարգ համաժողովը թույլատրեց մասնակիցներին ինքնուրույն սահմանել պաշտոնական գների ավելացումները, հաշվի առնելով դրությունը շուկայում, ապա հաստատվեց բազմազանային համակարգ: ՕՊԵԿ-ի անդամները չկարողացան պայմանավորվել գների համաձայնեցված քաղաքականության շուրջ: Արդյունքում նավթի շուկայում ստեղծվեց վտանգավոր իրավիճակ, երբ ՕՊԵԿ-ի յուրաքանչյուր երկիր իրականացնում էր սեփական գնային քաղաքականությունը: 80-ականների սկզբին ՕՊԵԿ-ի շրջանակներում սկսվեց չկառավարվող «գնային պատերազմ», որը սպառնում էր ոչ միայն կազմակերպության անդամների շահերին, այլև Արևմուտքի զարգացած երկրներին:

ՕՊԵԿ-ի խնդիրները 70-ական թվականներին կապված էին գնային ամբողջական հայեցակարգի և այդ ոլորտում միասնական փոխհամաձայնեցված քաղաքականության բացակայության հետ, որը պայմանավորված էր ՕՊԵԿ-ի ներսում հակասությունների առկայությամբ: Այդ կազմակերպությունն իր մեջ միավորում էր ի սկզբանե զարգացվածության տարբեր ուղղություններ ընտրած և տարբեր մակարդակներ ունեցող նավթարդյունահանող երկրներ, ինչն էլ դժվա-

³⁵ Իրանի իսլամական հեղափոխությունը (պարս. انقلاب اسلامی) 1978 թ. Հունվարից 1979 թ. ապրիլ ընկած ժամանակահատվածի դեպքերի շղթան է, որի արդյունքում երկրից հեռացավ շահ Մոհամմադ Ռեզա Փեհլևին, տապալվեց միապետությունը, և 1979 թ. ապրիլին Իրանը հռչակվեց Իսլամական Հանրապետություն՝ Այաթոլլա Խոմեյնու գլխավորությամբ:

³⁶ Дребушевский А., նշվ. աշխ., էջ 40:

րեցնում էր միասնական քաղաքականության մշակումը:

70-ական թվականներին Արևմուտքը ՕՊԵԿ-ին զիջեց նավթի արդյունահանման մոնոպոլիան, սակայն շարունակեց իր ձեռքում պահել համաշխարհային շուկայում նավթի իրացման վերահսկողությունը: Նրա նոր ռազմավարությունը կայանում էր նրանում, որ կարողանար պահպանել, եթե ոչ ուղղակի, ապա գոնե անուղղակի վերահսկողություն ՕՊԵԿ-ի նավթային ռեսուրսների և նավթային քաղաքականության նկատմամբ, որպեսզի ապահովի նավթի անընդհատ մատակարարում:

ARAKELYAN HERMINE

(IOS)

THE 1973 ARAB-ISRAELI WAR AND OIL EMBARGO

On October 6, 1973, with the attack of Egypt on Israel, the fourth Arab-Israeli War, also called Yom Kippur War, began. Despite the success of the Egyptian army, Egypt didn't use the opportunity to develop its strategic success, and due to the decision of Egyptian President Anwar Sadat, the attack operations were ceased.

During the 1973 Arab-Israeli War, Arabs used oil embargo again and the oil ministers of the OPEC member Arab countries decided to reduce oil production by 5% each month as long as Israeli troops would not be withdrawn from the occupied territories.

At the same time, on October 12, 1973, after ineffective negotiations with the oil companies, OPEC member countries unilaterally decided to set a new reference price for oil. On October 16 they announced about price increase by 70%.

These two events took place at the same time, though there was no connection between them. The unilateral increase in oil prices was a result of long and difficult negotiations between oil-producing countries and major oil companies. On the other hand, embargo was defined, as OPEC General Secretary noted, only in order to call people's attention from the West to the problem with Israel. After OPEC had unilaterally raised the oil prices, new relationship was formed in capitalist market represented as new and old cartels. In 70's West yielded oil production monopoly to OPEC, but continued to hold control over oil sales in the world market.

ԴԱՎԻԹԱՎՅԱՆ ՏԻԳՐԱՆ

(ԱԻ)

ԱՂԻՔԵԶԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅԱՆՅԻ ՄԻՋՈՑՈՎ ՀՀ ԵՎ ԼՂՀ ԴԵՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ-ՔԱՅՔԱՅԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՉ

Տեղեկատվական անվտանգության ապահովումը ժամանակակից աշխարհում պետությունների ու ազգերի գոյապահպանման և արդյունավետ կենսագործունեության ապահովման կարևորագույն երաշխիքներից է: Ներկայումս աշխարհում ընթացող զարգացումները գալիս են վկայելու տեղեկատվական պատերազմի կարևոր նշանակության մասին՝ այն դարձնելով արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Համացանցը հնարավորությունների և մարտահրավերների ունիվերսալ համակարգ է, որը մեր օրերում դարձել է քարոզչական և հակաքարոզչական աշխատանքների իրականացման, հետախուզական-քայքայիչ գործունեության ծավալման կարևորագույն միջոց: Հատկանշական է, որ այդ խնդրով դեռևս XX դարի վերջերից զբաղվում է ԱՄՆ-ի պաշտպանության ազգային ինստիտուտը, որի կողմից 1995 թ. հրատարակած «Ինչ է տեղեկատվական պատերազմը» աշխատության մեջ խոսվում է տեղեկատվական պատերազմների յոթ տարատեսակների մասին: Դրանք են.

1. հրամանատարական-կառավարչական,
2. հետախուզական,
3. հոգեբանական,
4. հակերային,
5. տնտեսական,
6. էլեկտրոնային,
7. կիբեռպատերազմ¹:

XXI դարի սկզբներին համացանցի լայնորեն տարածման պայմաններում աշխարհի առաջատար հատուկ ծառայություններն իրենց

¹ Դեմոյան Հ., Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին, http://www.noravank.am/upload/pdf/76_am.pdf

հետախուզական գործունեության մեջ սկսեցին լայնորեն կիրառել հենց համացանցը: Մասնավորապես, 2005 թ. ռուսաստանյան մամուլում եղան հրապարակումներ, որ բրիտանական հետախուզությունը սկսել է հավաքագրումներ իրականացնել համացանցի միջոցով²: Նման տիպի հավաքագրումները լայնորեն տարածված են հատկապես ծայրահեղականների շրջանում, որոնք հիմնականում հավաքագրում են մահապարտ-մարտիկների: Այսօր աշխարհի տարբեր ծայրերում նմանատիպ հավաքագրումներ իրականացվում են «Իսլամական պետության» կողմից: ՌԴ Ազգային հակաահաբեկչական կոմիտեի ներկայացուցիչ Անդրեյ Պրժեզդոմսկին հայտարարել է, որ համացանցն ահաբեկչական խմբավորումների անդամների հավաքագրման միջոց է դարձել³: Ամերիկյան հատուկ ծառայություններն ակտիվորեն գործում են Facebook, Twitter, MySpace, LinkedIn սոցիալական ցանցերում⁴: ԱՄՆ-Չինաստան «հետախուզական մրցավազքի» պայմաններում ներկայումս մեծ դերակատարում ունի ոչ միայն մարդը, այլ նաև համակարգիչը: Հաճախակի փոխադարձ ձերբակալություններ են տեղի ունենում ԱՄՆ-ում և Չինաստանում՝ միմյանց մեղադրելով սոցիալական ցանցերում հավաքագրումներ իրականացնելու մեջ: Հատուկ ծառայությունները արդեն վաղուց են համացանցն օգտագործում լրտեսության համար, բացի այդ շատ տարաբնույթ խմբավորումներ համացանցի միջոցով հավաքագրում են մարդկանց:

Արժարժվող թեմատիկան ուսումնասիրել են բավական թվով հետազոտողներ, որոնց թվում են ռուս հայտնի ծրագրավորող, հակավիրուսային անվտանգության մասնագետ, «Կասպերսկի լաբորատորիայի» հիմնադիր Եվգենի Կասպերսկին, ամերիկացի հայտնի համակարգչային մասնագետ Ջոել Մակնամարան: Վերջինիս հայտնի աշխատություններից են «Համակարգչային լրտեսության գաղտնիքները», «Համակարգիչներ և ծրագրեր», «Համակարգչային գրականություն» և այլն:

Ժամանակակից տեխնիկական զարգացած դարաշրջանում տեղեկատվություն ստանալն ու տարածելը բավական հեշտացել է: Եթե

² Бусицын А., Британская разведка теперь вербует через Интернет, <http://www.utro.ru/articles/2005/10/13/485702.shtml>

³ Համացանցը՝ ահաբեկիչների հավաքագրման միջոց, <http://operativ.am/?p=104104&l=am/>

hamacancy%D5%9D+ahabekichneri+havaqagrman+mijoc+

⁴ Ամերիկյան հատուկ ծառայությունները ակտիվորեն գործում են սոցիալական ցանցերում, <http://news.am/arm/news/16998.html>

ընդամենը տարիներ առաջ հատուկ մարտավարություն, հստակ և հատուկ գիտելիքներ էին հարկավոր հակառակորդի մասին կարևոր ու փակ տեղեկություններ հայթայթելու համար, ապա այսօր համացանցը հնարավորություն է տալիս նոր մեթոդներով ու ձևերով, անգամ վիրտուալ, իրականացնել ինչպես հավաքագրումներ, այնպես էլ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերում: Միայն «Վիկիլիքսի» հիմնադիր Ջուլիան Ասանժը, տարբեր գնահատականներով, բացահայտել է ԱՄՆ-ի պետդեպարտամենտի ավելի քան 250.000 գաղտնի փաստաթուղթ⁵: Ռուսաստանյան «Կասպերսկի» տեղեկատվական անվտանգության կազմակերպությունը պարզել է, որ եվրոպական այն երեք երկրների հյուրանոցներում, որտեղ «Միջուկային ծրագրի շուրջ» բարձր մակարդակի բանակցություններ են անցկացվել Իրանի հետ, համակարգչային ցանցում (ներառյալ WiFi կապը) ներդրված է եղել հետախուզական լրտեսող ծրագիր⁶:

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների դեմ այս տիպի տեղեկատվական պատերազմի են լծվել ներկայիս Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունները՝ փորձելով իրականացնել հետախուզական-քայքայիչ գործունեություն: Այն իրենից ներկայացնում է նախևառաջ հետախուզական բնույթի տեղեկատվության ձեռքբերումը հակառակորդ պետության արտաքին ու ներքին քաղաքականության, ռազմական ներուժի, տնտեսության, գիտատեխնիկական բնագավառի վերաբերյալ: Ինչպես փորձել ենք ցույց տալ սույն հոդվածում, ԱՀ հատուկ ծառայությունները, տիրապետելով հետախուզության ընդամենը պարզ ու հասարակ մեթոդներին, իրենց հետախուզական-քայքայիչ գործունեության համար որպես միջոց օգտագործում են հիմնականում համացանցը: Այս թեզը հավաստելու համար բերենք մի քանի օրինակներ:

ՀՀ ԱԱԾ կողմից բացահայտված առաջին դեպքը, որտեղ ԱՀ հատուկ ծառայությունների կողմից օգտագործվել է համացանցը, եղել է 2011 թ. հուլիսի 23-ին ձերբակալված Կարեն Մեհրաբյանի վերաբերյալ քրեական գործը⁷: Վերջինս, որպես տեղեկատվության փոխանցման մի-

⁵ Энгдаль Уильям Ф., Wikileaks - опасное злоупотребление доверием, <http://www.warandpeace.ru/ru/exclusive/view/53593/>

⁶ Իսրայելը լրտեսել է այն հյուրանոցների համակարգչային ցանցերը, որոնցում բանակցել են Իրանի հետ, <http://razm.info/65670>

⁷ ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայքէջ, <http://www.sns.am/index.php/am/news/173-23072011>;

ջոց, օգտագործում էր «agent.mail.ru» սոցիալական կայքը: Հատկանշական է, որ Կ.Մեիրաբյանը հավաքած տեղեկությունները ոչ թե փոխանցում էր այդ ծրագրով, այլ իր կողմից բացված էջում տեղադրում էր տեղեկատվությունը, արխիվացնում, իսկ «պատվիրատուն», այսինքն՝ Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցը, բացում էր նույն էջը և անարգել օգտագործում արխիվացված տեղեկությունը:

Հաջորդ քրեական գործը վերաբերում է Մանե Մովսիսյանին, ով հանդիսանալով ՀՀ ՊՆ գործառնատերից մեկի աշխատակից, համացանցի միջոցով ոչ միայն ռազմական բնույթի գաղտնի տեղեկություններ է փոխանցել պատվիրատուներին, այլև ներքաշվել համագործակցության մեջ⁸: Այսպես, ըստ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի, 2012 թ. հունվարի 8-ին Կապան քաղաքի 31-ամյա բնակչուհի Մանե Մովսիսյանը «odnoklassniki.ru» սոցիալական ցանցի միջոցով ծանոթանալով «Տիգրան Դերվիշյան» տվյալներով օգտատիրոջ հետ, նրան է փոխանցել իրեն հասանելի տեղեկությունները, որոնք կարող էին օգտագործվել Հայաստանի Հանրապետությունն ու ՀՀ Ջինված ուժերը վարկաբեկելու նպատակով: Ջորամասում աշխատելու ընթացքում Մ.Մովսիսյանը համացանցի միջոցով Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցներին է փոխանցել նաև ծառայության բերմամբ իրեն հայտնի դարձած տեղեկությունները, որոնք հանդիսացել են ռազմական բնագավառի պետական գաղտնիք⁹:

Նույն՝ 2012 թ. հուլիսին, կրկին «odnoklassniki.ru» սոցիալական ցանցի միջոցով ծանոթանալով Թուրքիայի Ստամբուլ քաղաքում բնակվող, սփյուռքահայ կազմակերպության անդամ ներկայացած ոմն Սամվել Ազատյանի հետ, ԼՂՀ քաղաքացիներ, ՊԲ պայմանագրային զինծառայող Ռաֆայել Ավագյանն ու «Արցախագագ» ընկերության հսկիչ Դավիթ Բարսեղյանը համագործակցել են ադրբեջանական հետախուզության աշխատակիցների հետ և համապատասխան գումարների ու նվերների դիմաց ԼՂՀ տարածքում հավաքել նրանց հետաքրքրող պետական գաղտնիք հանդիսացող բազմաբնույթ տեղեկություններ, լուսանկարներ, որոնց մի մասը «Skype» տեսաձայնագրի միջոցով փոխանցել են «պատվիրատուներին»:

Համացանցային գիտելիքի պակասի պատճառով այսօր սոցիալ-

⁸ Հայաստանի ԱԱԾ-ն լրտեսության համար ձերբակալել է կին զինծառայողի, <http://news.am/arm/news/159626.html>

⁹ https://www.youtube.com/watch?v=he_LoekPXjg

լական ցանցերի սովորական օգտատերը, որն ընկնում է օտարերկրյա հատուկ ծառայությունների տեսադաշտ և ակամա դառնում թիրախ, սկզբնական շրջանում չի էլ պատկերացնում, թե հնարավոր է իր գրուցակիցը հանդիսանում է հատուկ ծառայության աշխատակից, իսկ սովորական ու առօրյա թվացող խոսակցությունը կարող է վերաճել պետական դավաճանության: Այսպես, ադրբեջանական հետախուզության աշխատակիցը հայազգի օգտատիրոջ անուն-ազգանունով, ՀՀ ազգային հերոսների նկարներով զարդարված սոցիալական կայքով մուտք է գործում ՀՀ և ԼՂՀ տարբեր զորամասերի անվանումներով բացված ինտերնետային խմբերի մեջ կամ զինվորական համազգեստով պատկերված անձանց էջ և ժարգոնային հայերենով խոսակցություն սկսում փորձելով տեղեկություններ ստանալ ծառայության վայրի, դիրքերի, զենքերի, հրամանատարների մասին¹⁰:

Ու նմանատիպ բովանդակությամբ զրույց վարվում է բազմաթիվ օգտատերերի հետ, որոնց մի մասը, հասկանալով խոսքը ինչի մասին է, հետ է կանգնում, մի մասը, չհասկանալով, շարունակում է պատմել իր զորամասի վերաբերյալ ինչ հիշում է, մի փոքր հատվածն էլ, ովքեր պատրաստ են գումարի դիմաց վաճառել հայրենիքը, արդեն հասկանալով և ստանալով ֆինանսական մեծ աջակցության առաջարկ՝ ներքաշվում են պետական դավաճանության մեջ:

Վերոգրյալի հավաստիությունը փաստելու համար հղում կատարենք ՀՀ ԱԱԾ մամուլի տարածած հաղորդագրություններին, համաձայն որոնց, ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները «odnoklassniki.ru» սոցիալական ցանցում գրանցում են հայկական տվյալներով կեղծ էջեր, ներկայանում որպես ՀՀ կամ ԼՂՀ Ջինված ուժերի զինծառայողներ՝ փորձելով ՀՀ քաղաքացիների հետ նամակագրական կապեր հաստատելով կորզել տեղեկատվություն: Մասնավորապես, ՀՀ ԱԱԾ կողմից բացահայտվել են «odnoklassniki.ru» սոցիալական ցանցում ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից գործադրված հետևյալ հետախույզ-օգտատերերով կեղծ էջերը. «Seyran Dervishyan», «S Dr», «Tigran Dervishyan», «Seyran Derv», «S.S.», «Samvel Samvel», «U U», «Артем Арутюнов», «Albert Mnacakanyan», «A M», «Ruben Hayrapetyan», «(((((((RH)))))))))», «Gevorg Saroyan», «Alik Mesropyan», «Sergey Karapetyan»¹¹, «Hovik Margaryan», «Edgar Minasyan», «Rafik Tov-

¹⁰ https://www.youtube.com/watch?v=he_LoekPXjg

¹¹ ՀՀ ԱԱԾ-ն ադրբեջանցի հետախույզների է բացահայտել Odnoklassniki.ru

masyan», «Norik Barsegyan», «Norik Margaryan» և այլն¹²:

Համացանցի միջոցով ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից հետախուզական-քայքայիչ այլ գործունեության փորձեր ևս իրականացվում են: Մասնավորապես, ադրբեջանական հաքերները, հիմնականում ԱՀ կամ ՀՀ տոների, հիշատակի օրերի նախօրյակին փորձում են կոտրել ՀՀ պետական հիմնարկների, տարբեր գերատեսչությունների, մասնավոր ընկերությունների կամ ուղղակի հասարակ օգտատերերի կայքեր, սոցիալական էջեր¹³:

Բացի այդ, ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները կամ նրանց գործակալները, ցանկանալով հեղինակազրկել հայազգի այս կամ այն հասարակական-քաղաքական գործչին, կամ հայտնի քաղաքագետի, պատմաբանի, ով հեղինակություն է վայելում համաշխարհային գիտական ասպարեզում և զբաղվում է ադրբեջանական կեղծ քարոզչության բացահայտումներով, համացանցով վերջինիս վերաբերյալ տարածում են կեղծ տեղեկատվություն՝ նրան մեղադրելով ՀՀ հատուկ ծառայության մարմինների հետ համագործակցության և ՀՀ հատուկ ծառայությունների գործակալ լինելու մեջ:

DAVIDAVYAN TIGRAN

(IOS)

DESTRUCTIVE INTELLIGENCE ACTIVITY BY THE SPECIAL SERVICES OF AZERBAIJAN VIA INTERNET AGAINST REPUBLIC OF ARMENIA AND NAGORNO KARABAKH

Cyber spying or cyber espionage, today is used by intelligence services of almost all countries, especially by competitor countries or countries in conflict. Azerbaijani special services also make great efforts to carry out cyber espionage against Armenia and Nagorno-Karabakh, as Azerbaijani military and political leadership tries to resolve the Armenian-Azerbaijani conflict by use of force.

կայքի միջոցով, http://telecom.arka.am/am/news/internet/hetaxuycnerodnoklassniki_ru/

¹² ԱԱԾ-ն բացահայտել է «Օդնոկլասնիկի» կայքում գրանցված ադրբեջանական հատուկ ծառայությունների օգտատերերին, <http://mitk.am/2015/05/աաժ-ն-բացահայտել-է-օդնոկլասնիկի-կայքը/>

¹³ Մարտիրոսյան Ս., Կիբերընդհարումներ Հայաստանի և Ադրբեջանի միջև. իրավիճակի զարգացման դինամիկան, <http://theanalyticon.com/?p=4580>

«ԳԱՂՏՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ»՝ ՈՐՊԵՍ
ՆԵՈ-ԲԱԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԵՏՆԱԲԵՍ

Միրիայում Բաաս կուսակցության գաղափարախոսության հիմքը դրվել է դեռևս 1940թ. Միշել Աֆլակի¹ և Սալահ ադ-Դին ալ-Բիտարի² գաղափարների հիման վրա, որն իր շուրջը հավաքեց հավատարիմ ուսանողների մի փոքրիկ խումբ³, ինչպես նաև սահմանադրության դրույթների հիման վրա, որի առաջին էջին գրված է հետևյալ կարգախոսը. «Միացյալ արաբական ազգ հավիտենական առաքելությամբ: Արաբական Վերածննդի կուսակցություն, ազգային, ժողովրդական, հեղափոխական շարժում, որը ձգտում է հասնել արաբական միասնության, ազատության և սոցիալիզմի»: Բաասը (Արաբական Վերածննդի Սոցիալիստական կուսակցություն, կրճատ՝ Բաաս, որն արաբերենից թարգմանաբար նշանակում է «վերածնունդ») հռչակեց այն երեք հիմնական արժեքները՝ «սուրբ եռյակը»⁴, որի համար կուսակցությունը պայքարելու էր. սոցիալիզմ, միասնություն (խոսքը արաբական մեծ միասնության մասին էր, որը ենթադրում էր միասնական արաբական պետության ստեղծում, որի համար ապարդյուն պայքարել է Արաբական պետությունների լիգան⁵), և ազատություն:

¹ Միշել Աֆլակը ծնվել է 1910 թ. Դամասկոսում՝ քրիստոնյա ընտանիքում: 1928-1932 թթ. նա սովորել է Սորբոնում՝ հումանիտար ֆակուլտետում: Հայրենիք վերադառնալուց հետո նա աշխատել է միջնակարգ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ:

² Սալահ ադ-Դին ալ-Բիտարը ծնվել է 1912 թ. մուսուլմանական ազդեցիկ գործչի ընտանիքում: Նա ավարտել է Դամասկոսի մանկավարժական ուսումնարանը, ապա սովորել Սորբոնում: Միրիա վերադառնալուց հետո Ալ-Բիտարը որպես ֆիզիկայի ուսուցիչ է աշխատել նույն դպրոցում, որտեղ աշխատում էր նաև Միշել Աֆլակը:

³ Այս մասին առավել ամբողջական նկարագիր է տալիս Բաաս կուսակցության անդամ, ինչպես նաև 1965 թ. Փարիզում Միրիայի դեսպան Սամի ալ-Ջունդին իր «Ալ Բաաս» աշխատության մեջ:

سامي الجندي، البعث، دار النكار النشر، بيروت، ١٩٦٦.

⁴ Ben-Tzur A., The Neo-Ba'th Party of Syria, Journal of Contemporary History Vol. 3, No. 3, The Middle East (Jul., 1968), p. 161-181.

⁵ Примаков Е., Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вто-

Ըստ Բաասի, արաբական աշխարհի ազատագրումն անհնար է առանց Պաղեստինի ազատագրման: «Պաղեստինում սիոնիզմի դեմ պայքարի ակտիվացման անհրաժեշտության» մասին Բաասը նշեց իր հիմնադիր համագումարի փաստաթղթում:

Բաասն առաջին քաղաքական կազմակերպությունն էր արաբական աշխարհում, որն իր գաղափարաբանական ու արտաքին քաղաքական գործունեության առանցքում դրեց հակասիոնիզմն ու Իսրայելի դեմ պայքարի առաջնահերթությունը⁶:

Բաասականներն իրենց առաջին քաղաքական հաջողությունների համար պարտական են Միրիայի զինվորական ուժերին, որոնց հետ ունեցած մոտ հարաբերությունները թույլ տվեցին մասնակցություն ունենալ 1963թ. մարտի 8-ի հեղափոխությանը:

Բացի Բաասի հանդեպ ավանդական մոտեցումներից⁷ անհրաժեշտ է առաջ քաշել նա մի մոտեցում, որն անքակտելիորեն կապված է «ռազմական կոմիտեի» և դրա ստվերային գործունեության հետ: «Ռազմական կոմիտեն» ստեղծվել է մոտավորապես 1959 թ., երբ սիրիացի մի շարք սպաներ տեղափոխվեցին Եգիպտոս⁸: Դրա ստեղծման հիմքերը դրվել են այն գաղափարի վրա, որ Միրիայի և Եգիպտոսի միավորումը, որի պատասխանատվությունը ընկած էր Բիթարի, Աֆլակի և Հաուրանիի ուսերին, թուլացրել է Բաասի դիրքերը և կազմալուծել կուսակցությունը առանց որևէ արժեքավոր բան դրա դիմաց ստանալու: Իրենց իշխանության շարունակականության միակ երաշխիքը կուսակցության գաղափարախոսության ներարկումն էր հասարակության տարբեր շերտերի մեջ՝ հատկապես բանակում: Դրան հետևեց սպայական անձնակազմի վերածումը կուսակցական գաղափարախոսության «դեսպանների», որը նպատակ ուներ զինված ուժերը վերածել գաղափարական բանակի և դրա ճյուղերում ամրապնդել կուսակցության ազդեցությունը: Իհարկե, կային նաև դժվարություններ. Միրիային բնորոշ ցանկացած քաղաքական կազմակերպություն, նույնիսկ եթե նրա անդամները զինվորականներ են, հանդիսանում է երկփեղկ ժողովրդա-

рая половина XX- начало XXI века), Москва, 2012, с. 61-62.

⁶ Նույն տեղում, էջ 111:

⁷ Batatu H., Choueiri Y., Claessen E., George A., Mufti M., Moaddel M. և այլք գրել են Բաասի մասին՝ ներկայացնելով այն որպես սոցիալիստական, ազգայնական, սպայական և կամ ծայրահեղական կազմակերպություն:

⁸ Van Dam N., The Struggle for Power in Syria and the Ba'th Party (1958-1966), New York, 1973, p. 10:

վարական քաղաքական սուբյեկտ՝ այսինքն ունի որոշումների ընդունման և դրանք ուժի մեջ դնելու տարբեր քաղաքացիական և ռազմական ենթամարմիններ, ինչը գոնե տեսականորեն, հնարավորություն է տալիս ղեկավարների մի խումբը փոխարինել մյուսով, ինչպես նաև կուսակցության ներսում ստեղծում է զսպումների և հակակշիռների համակարգ: Մինչդեռ Բաասի՝ բանակում իրականացվող գործողությունների հիմնական նպատակն էր «վերնից» ամրապնդել «ռազմական կոմիտեի» իշխանությունը՝ փաստորեն գործի դնելով միակ և միացյալ փեդկի իշխանությունը: Կոմիտեի պարագլուխները հինգ ընկերներ էին, որոնցից երեքը ալավի էին՝ Մուհամադ Ումրան, Սալահ Ջադիդ և Հաֆեզ ալ-Ասադ¹⁰, և երկուսը՝ իսմաիլական Աբդ ալ-Քարիմ ալ-Ջունդի և Ահմադ ալ-Միր: Ավելի ուշ որոշ դրուզ¹¹ սպաներ նույնպես ներգրավվեցին կազմակերպության մեջ, բայց նրանք երբեք այդքան իշխանություն ձեռք չբերեցին, որքան հնգյակը: Կոմիտեն շուտով ընդունեց այն չորս կարևոր սկզբունքները, որոնք պիտի դառնային կազմակերպության գործողությունների ուղեգիծը.

- Բաաս կուսակցությունը Միրիայում է, հետևաբար կուսակցության կազմալուծումը այս երկրում նշանակում է կուսակցության առհասարակ կազմալուծում:
- Կուսակցությունը պիտի վերակառուցվի:

⁹ Ben-Tzur A., նշվ. աշխ., էջ 164:

¹⁰ Հաֆեզ իբն Մուլեյման ալ-Վահհաշը ծնվել է 1930 թ. հոկտեմբերի 6-ին Միրիայի Լաթաքիա մարզի Կարդահա գյուղում: 1946 թ. նա տեղափոխվեց Լաթաքիա, իսկ հաջորդ տարի անդամագրվեց Բաաս կուսակցության գաղտնի խմբակներից մեկին: Իր դպրոցում նա բացեց Բաասի ընդհատակյա միություն: 1952 թ. Հ. ալ-Ասադն ընդունվեց Հոմսի ռազմական ուսումնարանի ռազմաօդային ուժերի ակադեմիա, որտեղ ստացավ լեյտենանտի կոչում: ԱՄՀ կազմավորումից հետո շատ բաասական սպաներ տեղափոխվեցին Եգիպտոս: Նրանց թվում Հ. ալ-Ասադը ծառայությունը շարունակում է Կահիրեում, որտեղ հանդիպում է Սալահ Բիթարին, Մուհամադ Ումրանին և Սալահ Ջադիդին և ստեղծում է բաասական գաղտնի ռազմական կոմիտե: 1971 թ. տեղի ունեցավ Միրիայի պատմության մեջ առաջին համաժողովրդական ազատ, ուղղակի գաղտնի հանրաքվե, որը Հ. ալ-Ասադին, պաշտոնական տվյալներով 99,9% ձայներով, հաստատեց որպես երկրի նախագահ 7 տարի ժամկետով:

¹¹ Դրուզները արաբալեզու էթնոկրոնական խումբ են, որը հանդիսանում է իսլամիզմի ճյուղավորումներից մեկը: Դրուզները բնակվում են Լիբանանում, Միրիայում, Հորդանանում և Իսրայելում:

- Կուսակցության նոր անդամներին պիտի հնարավորություն տրվի հասնելու կուսակցության ղեկավարող ղիրքերին, իսկ կուսակցության այնպիսի ղեկավարները, ինչպիսիք են Աֆլակը, Հաուրանին և Բիթարը, պիտի հեռացվեն կուսակցության ղեկավարումից, քանի որ նրանք են պատասխանատու կուսակցության կազմաքանդման համար:
- Միրիա-եզիպտական միությունը խրախուսող վարչակազմի կողմնակիցների հետ համագործակցությունը բացառվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ հանգամանքները դա անհրաժեշտ են դարձնում¹²:

«Ռազմական կոմիտեի» նպատակն էր Բաաս կուսակցության օգտագործմամբ հասնել Միրիայի կառավարմանը մինչև կատեղծելին «սեփական» Բաաս կուսակցություն՝ «ռազմական կոմիտեի» նախընտրած մարդկանցով, որոնք կապահովեն քաղաքական զարգացումների իրենց ձեռնադրումը: Սա պարզորոշ կերպով բարձրաձայնել է Ահմադ ալ-Միրը 1965 թ. Միրիայի ռեզիոնալ համաժողովի ժամանակ՝ իր խոսքն ուղղելով Միշել Աֆլակին. «Ինչպե՞ս թե՛ մենք չենք հավատում կուսակցությանը: Հենց մենք ընտրություն կատարեցինք հոգուտ նրա, որպեսզի այն իրականացնի մեր ցանկությունը, և մենք մեր կազմակերպությամբ հանդերձ իրականացրինք հեղափոխությունը հոգուտ նրա»¹³:

Չնայած, որ «ռազմական կոմիտեն» ակնհայտորեն կողմ էր ԱՍՀ կազմալուծմանը, 1961 թ. իրադարձությունների ժամանակ նրանցից ոչ ոք էլույթ չունեցավ ի օգուտ կամ ընդդեմ ԱՍՀ կազմից դուրս գալու: Նրանք ամեն կերպ պահպանում էին գաղտնիությունը: ԱՍՀ կազմից դուրս գալուց հետո կոմիտեի անդամները սկսեցին քայլեր ձեռնարկել իշխանությունը գրավելու ուղղությամբ: Մերձող ընտրվեց գոյություն ունեցող վարչակարգին անջատողականության մեջ մեղադրելը: Սակայն որպես ապացույց այն բանի, որ հենց իրենք են անջատողականները, կարելի է նշել, որ Ջասեմ Ալվանի¹⁴ և այլ նասերականների հետ սերտ համագործակցությունը անմիջապես դադարեցվեց, երբ պարզ դարձավ, որ Ալվանը և նրա հետևորդները ցանկանում են հետ

¹² Van Dam N., նշվ. աշխ., էջ 10:

¹³ Umran M., My Experience in the Revolution, Beirut, 1970, p. 18-19.

¹⁴ Հատկապես ԱՍՀ ժամանակահատվածում սիրիական բանակի նշանավոր սպա Ջասեմ Ալվանը ծնվել է 1928 թ.: Նա ծառայել է Դամասկոսի մոտ գտնվող Կատանայի ռազմաբազայում:

բերել ԱՄՆ կարգավիճակը Միրիայում¹⁵:

Փաստորեն կուսակցության հետագա պատակտման իրական պատճառը թաքնված է ոչ միայն գաղափարախոսական պայքարի մեջ: Շատ ավելի կարևոր էր դրա ի սկզբանե բաժանումը քաղաքացիական՝ Միշել Աֆլակի գլխավորությամբ, և ռազմական՝ «ռազմական կոմիտեի», թևերի միջև: Իրական իշխանությունը գտնվում էր ռազմական թևի ձեռքում¹⁶: Միրիայի հետագա պատմությունը կապված պիտի լիներ այս թևերի միջև ընթացող պայքարի հետ: Նույնիսկ Բաասի նախկին ռազմական թևը ի գորու չգտնվեց պայքարել «ռազմական կոմիտեի» սպաների դեմ, և դրա պատճառներից մեկն այն էր, որ վերջիններս աներևակալիորեն լավ էին կազմակերպված: Նրանց գործողությունները չափազանց համաձայնեցված էին և բանիմաց ձևով մշակված: Կարծում ենք՝ «ռազմական կոմիտեի» հաջողության հաջորդ պատճառն այն էր, որ կոմիտեն կազմված էր գերազանցապես Միրիայի փոքրամասնություններից և օգտագործում էր «արյան կանչի» գործոնը իր գործողությունները հաջողությամբ պսակելու համար: Աֆլակն ու Բիթարը նրանց անվանում էին «քուրբիյեն»՝ ծայրամասայիններ: Ավելի ուշ՝ 1966 թ. փետրվարից հետո, կոմիտեի ալավի անդամները կազմակերպությունից դուրս թողեցին դրա իսմաիլական և դրուզ անդամներին՝ դրանով իսկ ապահովելով քաղաքական և ռազմական մեծամասնություն:

Այսպես՝ գերակա դիրք ստանալով բանակում և այլ կուսակցությունների շրջանում՝ «ռազմական կոմիտեն» այժմ սկսեց պայքարը Բաասի ներսում:

«Ռազմական կոմիտեն» մշտապես կարողանում էր ներկուսակցական վիճելի հարցերում ձայների մեծամասնության հասնել: Բանն այն է, որ նրանք յուրաքանչյուր քվեարկությունից առաջ ունենում էին ներքին քննարկում կոմիտեի անդամների կարծիքների բարձրաձայնմամբ: Նրանց ներքին քննարկման ժամանակ ի հայտ եկած տարաձայնությունները երբեք չէին արտահայտվում կուսակցությանը ներկայացնելու ժամանակ, և բոլորը քվեարկում էին կոմիտեի ներսում ընդհանուր հայտարարի եկած որոշման համաձայն:

¹⁵ Van Dam N., նշվ. աշխ., էջ 10:

¹⁶ Ղարիբջանյան Գ., Հաֆեզ ալ Ասադը և ուղղիչ շարժումը Միրիայում, Երևան, 2012, էջ 23:

Կուսակցության ներսում խնդիրները սկսվեցին 1964 թ., երբ Մուհամադ Ումրանը հարց բարձրացրեց Աբդ ալ-Նասերի հետ բանակցությունները վերսկսելու վերաբերյալ: Այս տեսակետը բուռն քննարկման առարկա դարձավ և խստորեն մերժվեց ալավի սպաների՝ հատկապես Սալահ Ջադիդի կողմից, և կոմիտեի ճնշող մեծամասնությունը անցավ Ջադիդի կողմը: Այժմ արդեն, երբ կոմիտեի նեսում եղած ճեղքը այլևս հնարավոր չէր անտեսել, Ումրանն անցավ քաղաքացիական թևը և այնտեղ բացահայտեց «գաղտնի ռազմական կոմիտեի» գոյության և դրա ծրագրերի մասին: Այս իրադարձություններից հետո կոմիտեն ստիպեց Ումրանին լքել Միրիան, և նրան կարգեցին Մադրիդում Միրիայի դեսպան:

Աբդ ալ-Քարիմ ալ-Ջունեյին մի անգամ այսպես բնութագրեց Սալահ Ջադիդին և Ամին ալ-Հաֆեզին¹⁷. «Սալահ Ջադիդը հրետանու հրամանատար է, ով երկար հետազոտում, գնահատում և հաշվարկում է հնարավորությունները, չափում հարվածի անկյունը և հետո միայն արձակում կրակոցը, իսկ Ամին ալ-Հաֆեզը հետևակային սպա է, և անվիրված է և քաջ, բայց նա բավարարվում է սուրը հանելով և «ուր են նրանք» բղավելով»¹⁸: Սալահ Ջադիդը միշտ եղել է կազմակերպության ուղեղը: Բոլոր ծրագրերի հեղինակային իրավունքը իրեն է պատկանում, մինչդեռ Ամին ալ-Հաֆեզը եղել է այն միավորը, որը պիտի իրականացներ կազմակերպության այստեղ՝ Սալահ Ջադիդի գաղափարները: Ջադիդը Հաֆեզին պատրաստել էր՝ որպես ապագա առաջնորդ, որը պիտի լիներ կուսակցության «տեսանելի» թևում և ծառայեր կոմիտեի շահերին: Սակայն Ամին ալ-Հաֆեզը միշտ չէր, որ ցանկություն ուներ ենթարկվելու և խոնարհ կերպով կատարելու թվացյալ «ճակատային» դերը: Այստեղից էլ եկան նրանց տարաձայնությունները, և Ումրանին հեռացնելուց հետո նրանք իրենց ջանքերն ուղղեցին միմյանց դեմ: Այն առավել սրվեց 1965 թ. սեպտեմբերի Կասաբլանկայում կայացած համաարաբական գագաթաժողովից հետո, որին Ջադիդը չմասնակցեց¹⁹: Սակայն նրա բացակայությունը չխանգարեց նրան ալ-Հաֆեզին մեղադրանք ներկայացնել Դամասկոս վերադառնալուց հետո Կասաբլանկայում արված «սխալ արտահայտությունների» և «Միրիան

¹⁷ Ամին ալ-Հաֆեզը իսլամի սուննի ճյուղի ներկայացուցիչն էր:

¹⁸ Van Dam N., նշվ. աշխ., էջ 14:

¹⁹ Ղարիբջանյան Գ., Միրիական ուղղիչ շարժման առաջացման որոշ պատճառների շուրջ, 2001, էջ 30:

Նասերին վաճառելու ցանկություն ունենալու՝ համար²⁰: Այժմ կոմիտեն սկսեց ալ-Հաֆեզի կողմնակիցներին աստիճանաբար տեղափոխել քանակի պակաս կարևոր պաշտոնների:

Քանի որ ալ-Հաֆեզը սուննի էր, իսկ Ջադիդը՝ ալավի, քանակում ադանդավորացում՝ կրոնական պատկանելության վրա հիմնված սեպարատիզմ սկսվեց: Այս իրադրությունում հատկապես դժվարացավ պաշտպանության նախարարի ընտրության հարցը, քանի որ հարկավոր էր գտնել այնպիսի մեկին, ով ընդունելի կլիներ քանակի թե՛ մեծամասնություն կազմող ալավի թևի, թե՛ սուննիներից, իսմաիլականներից և դրուզներից կազմված ընդդիմադիր թևի համար: Միակ հարմար թեկնածուն դուրս եկավ Մուհամադ Ումրանը, ով և ալավի էր, և միաժամանակ ո՛չ Ջադիդի կողմնակիցն էր, ո՛չ էլ ալ-Հաֆեզի, քանի որ նրանք միասին էին իրեն հեռացրել իր պաշտոնից: Սակայն այս միջոցը, որ կոչված էր միավորել քանակի ուժերը, 1965 թ. դեկտեմբերից հետո էլ ավելի խորացրեց տարաձայնությունները՝ քանակը բաժանելով երեք խմբավորումի՝ Ջադիդի կողմնակից ալավիներն ու դրուզները (60%), ալ-Հաֆեզի կողմնակից սուննիները (25-30%) և Ումրանի՝ քաղաքացիական թևի կողմնակից ալավիները (10-15%), որոնց միջև լարվածությունը հաճախ հանգեցնում էր անհնազանդությունների²¹:

Որպես այս ամենի արդյունք պայքարը իշխանության համար վերածվեց կրոնակաքաղաքական և գաղափարախոսական պատերազմի, որն առաջացավ դավանաբանական կրքերի բորբոքման և համայնքային մտածելակերպի առաջընթացման արդյունքում: Այս պատերազմում Հ. ալ-Ասադի գլխավորությամբ քաղաքական և ռազմական մեծամասնություն ստացած ալավիները սկզբնական շրջանում առաջնորդվում էին համաարաբական շահերով:

Քեմփ-Դևիդից առաջ և հետո Միրիան անդադար փորձում էր քանակցությունների նոր փուլ մեկնարկել միացյալ արաբական պատվիրակության, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ միջև, որպեսզի խափանի հետագա քանակցությունները Եգիպտոսի և Իսրայելի միջև, սակայն Դամասկոսին այս մանևրը չհաջողվեց, և ստորագրվեց Մինայ-2-ը: Սա և հանգեցրեց Եգիպտոսի և Միրիայի հարաբերությունների դադարեցմանը²²: Սակայն

²⁰ Van Dam N., նշվ. աշխ., էջ 16:

²¹ Pollack B., Arabs at War, 2002, p. 458.

²² Միրիան մեղադրեց Եգիպտոսին այն բանում, որ նա, անցնելով Բար Լևի գիծը, չառաջացավ և հետ կանգնեց պատերազմի նախնական պայմանավորվածությունից, ինչը պատերազմում պարտության պատճառ դարձավ:

մինչև Քեմփ-Ղեիդի վերջնական ստորագրումը 1979թ. Հ. ալ-Ասադը որդեգրեց «տակտիկական մերժման» քաղաքականություն՝ կարևորելով դիվանագիտական խուսանավման մեթոդը: Այս մեթոդի գրագետ կիրառման արդյունքում «Միրիան դարձել է Լիբանանի և արաբ-իսրայելական հարցերի բանալին: Չի կարելի վստահ ասել, որ Միրիան ի գործու է չեղյալ հայտարարել արաբ-իսրայելական հակամարտության մասին որևէ դրույթ, սակայն սա նաև այլևս երևակայություն չէ»²³: 1973 թ.-ի պատերազմից հետո Հ. ալ-Ասադը հասկացավ, որ բաասական գաղափարախոսությունը տապալվեց և չհանգեցրեց հաղթանակի: Դրան հետևած «Մուսուլման եղբայրների» դեմ պայքարում, լիբանանյան ճգնաժամում և ծոցի չգնաժամում ՄԱՀ նախագահը որոշեց ընթանալ նախապես ծրագրավորած և «ոազմական կոմիտեի» ընտրած ուղով՝ համաարաբական միասնությունը թողնել գուտ որպես արժեք, այլ ոչ թե նպատակ:

Կարծում ենք՝ ընդհանուր առմամբ Բ. ալ-Ասադը շարունակում է իր հոր քաղաքական ուղեգիծը, և այսպիսով՝ «ոազմական կոմիտեի» կոչվող գաղտնի կազմակերպությունը հետագայում մշտապես կանգնած է եղել կուսակցության ետնաբեմում, որի նպատակն էր Բաաս կուսակցության օգտագործմամբ հասնել Միրիայի կառավարմանը մինչև կատեղծեին սեփական Բաաս: Իսկ, այսպես կոչված, նեո-բաասականները «ոազմական կոմիտեի» հետևորդներն էին, որոնք ոչ թե քարեփոխեցին Բաասի իսկական սկզբնական գաղափարները, այլ հեղափոխեցին դրանք՝ ստեղծելով «ոազմական կոմիտեի» արժեքների վրա հիմնված սկզբունքորեն նոր և հակասական գաղափարների ամբողջություն:

YENGOYAN NANE

(IOS)

"THE SECRET MILITARY COMMITTEE" AS THE BACKSTAGE OF NEO-BAATHISTS

The Baath Party (The Arab Socialist Renaissance Party) was founded in 1940 on the grounds of Michael Aflaq's and Salah ad-Din al-Bitar's ideas. Having close relations with the armed forces of Syria they took part in the revolution on the 8th of March, in 1963. Its political activity was inextricably

²³ Danneels I., Syrian foreign Policy Between Rational Actor and Regime Legitimacy 1970-1994, Durham, 1994, p. 40.

linked to the "Secret Military Committee" and its underground activity. "Military Committee" was formed in around 1959, when a number of Syrian officers were moved to UAR²⁴. Although against this unity, they have always been pretending to yearn punishment for those responsible for the collapse of the UAR. After affirming their hegemony among other political forces, the Baath party began to "purify" their own cast. Thus, the split was caused not by the ideological clash. The real division was between civilian (Michael Aflaq) and military ("military committee") wings. The real power belonged to the military wing. The subsequent history would have been associated with the battle between these wings. Next confrontation was between the brain of the committee alawi Salah Jadid and a sunni Amin al-Hafez. This conflict led to a real historical clash between alawites and sunnis as social groups and serves ground for the future conflicts. This struggle for power turned into religious ideological war that which was won by the Alawi community who got the political and military majority.

²⁴ UAR was the United Arab Republic, a state formed by the union of the republics of Egypt and Syria in 1958.

ԻՍԴԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ
(ԱԻ)

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ
(ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ)

Իրանը, Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի հետ ունենալով ընդհանուր ցամաքային սահման, ԼՂ հակամարտության առաջին իսկ օրվանից առանձնահատուկ ուշադրություն է դարձրել իր հյուսիսային սահմաններում ընթացող զարգացումներին: Ինչպես հակամարտության կարգավորման գործում իրականացրած միջնորդական առաքելության ժամանակ, այնպես էլ 1994 թ. ստորագրված զինադադարից հետո ընկած ժամանակահատվածում Արցախի հարցում Իրանը վարել է հավասարակշռված քաղաքականություն: Վերջին երկու տասնամյակում Թեհրանի դիրքորոշումն էական փոփոխություն չի կրել, սակայն 2014-2016 թթ. Իրանը սկսեց հաճախակի ակնարկել նաև միջնորդական առաքելություն իրականացնելու մասին՝ հայտարարելով, որ հայկական և ադրբեջանական կողմերի համաձայնության դեպքում Թեհրանը կիրառարակի ԼՂ հակամարտության կարգավորման իր ծրագիրը¹:

Արցախյան հակամարտության նկատմամբ պաշտոնական Թեհրանը հավասարակշռված մոտեցում ցուցաբերեց նաև ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին, որն ինչ-որ չափով զսպող ազդեցություն ունեցավ Թուրքիայի և Ադրբեջանի գործողությունների վրա:

Մինչ Իրանի քաղաքական շրջանակները ստեղծված ճգնաժամային իրավիճակով պայմանավորված փորձում էին ճշգրտել իրենց դիրքորոշումն ու գնահատել իրավիճակը, Ադրբեջանի կողմից 2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը Լեռնային Ղարաբաղի դեմ իրականացրած ռազմական գործողություններին Իրանի ռազմական ղեկավարությունը քավականին արագ արձագանքեց:

Ինչպես փաստում է Իրանի իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) «Աշուրա» ստորաբաժանման հրամանատար, գեներալ Ղոլամ Ասգար Քարիմիանը, Արցախի և Ադրբեջանի միջև սկսված պատերազմի առաջին իսկ պահից, որպեսզի ռազմական

ایران در ارتباط با حل مناقشه قرمباغ کوهستانی طرحی دارد¹

(Իրանը ԼՂ հակամարտության կարգավորման վերաբերյալ մշակած ծրագիր ունի) <http://www.isna.ir/news/93092916781/>

գործողությունները չտեղափոխվեին Իրանի տարածք, ԻՀՊԿ-ի համապատասխան ստորաբաժանումները կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերն անմիջապես տեղակայվում են Արաքսի ափին²:

Ինչ վերաբերում է քաղաքական արձագանքին, ապա ռազմական գործողությունների թեժ շրջանում, երբ ակնհայտ դարձավ, որ Թուրքիան շարունակելու է բացահայտ աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին, Իրանի Մեջլիսի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով հանձնաժողովում Լեոնային Ղարաբաղի հակամարտության հարցով արտահերթ նիստ հրավիրվեց, որին մասնակցում էր ԻԻՀ ԱԳՆ Հարավային Կովկասի դեպարտամենտի գլխավոր քարտուղարը: Նիստի ավարտին ԻԻՀ ԱԳՆ գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ Իրանը ԼՂ հակամարտության հարցում որդեգրում է անկողմնակալ դիրքորոշում³:

Թեհրանի այդ դիրքորոշումը ներկայացնելու նպատակով Իրանի նախագահը⁴, արտաքին գործերի⁵, պաշտպանության և ՁՈւ աջակցման նախարարները⁶ առանձին հեռախոսազրույցներ ունեցան ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի իրենց գործընկերների հետ:

Պետք է նշել, որ ապրիլի 4-ին հարավային ճակատում Ադրբեջանի ՁՈւ ստորաբաժանումների ունեցած կորուստներից հետո ադրբեջանական կողմի նախաձեռնությամբ Իրանի պաշտպանական գերատեսչության ղեկավարը երկրորդ հեռախոսազրույցն ունեցավ Ադրբե-

2 در مناقشه قره باغ پاسداران انقلاب اسلامی کنار رود ارس مستقر شده بودند

(ԼՂ հակամարտության ընթացքում ԻՀՊԿ-ն տեղակայվել էր Արաքսի ափին)

<http://www.anaj.ir/trtNews/43587/AF/theme/trt/?id=43587>

3 بررسی مناقشه قرهباغ در جلسه امروز کمیسیون امنیت ملی

(ԼՂ հակամարտության հարցը քննարկվել է ԻԻՀ Մեջլիսի ազգային անվտանգության հանձնաժողովում) <http://mehrnews.com/news/3590512/>

4 رئیس جمهوری اسلامی ایران در گفت و گوی تلفنی با روسای جمهوری آذربایجان و ارمنستان، ضمن دعوت 4 طرفین به خویشتنداری، تاکید کرد

(Իրանի նախագահը Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում կողմերին զսպվածության կոչ է արել)

<http://president.ir/fa/92797>

5 ظریف خواهان حل مسالمت آمیز اختلافات ارمنستان و جمهوری آذربایجان شد

(Չարիֆն Ադրբեջանին ու Հայաստանին հորդորել է տարաձայնությունները հարթել խաղաղ ճանապարհով) <http://www.irna.ir/fa/News/82022674/>

6 ՀՀ պաշտպանության նախարարը հեռախոսազրույց է ունեցել Իրանի պաշտպանության և ՁՈւ աջակցման նախարարի հետ <http://www.mil.am/hy/news/3965>

ջանի պաշտպանության նախարարի հետ⁷:

Ուսումնասիրելով Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության հայտարարությունները՝ նկատում ենք, որ եթե քառօրյա պատերազմի սկզբին Իրանն իր գնահատականներում որոշակի զգուշավորություն ցուցաբերեց, ապա պատերազմի ակտիվ փուլում, երբ ռազմական գործողություններն արդեն ընթանում էին իր անմիջական սահմանին, Իրանի ՋՈւ ԳՇ պետի տեղակալ, գեներալ Սեյեդ Մասուդ Ջազայերին կրկին վերահաստատեց միջնորդական առաքելություն իրականացնելու Իրանի պատրաստակամությունը՝ համոզմունք հայտնելով, որ տարածաշրջանն այլևս նոր պատերազմի ռեսուրս չունի⁸:

Քառօրյա պատերազմի օրերին, եթե Իրանի ռազմաքաղաքական ղեկավարության հայտարարությունները հիմնականում անկողմնակալ էին, ապա Իրանի որոշ բարձրաստիճան հոգևորականներ, պատգամավորներ, մտավորականներ, փորձագետներ, լրագրողներ այդ օրերին Ադրբեջանի հակաշիայական քաղաքականությունը դատապարտելիս շահարկում էին Լեռնային Ղարաբաղի հարցը՝ հիմնավորելով հետևյալ պնդումը. «Եթե Ադրբեջանի իշխանությունները ճիշտ օգտագործեն իսլամական ուժերին, ապա նրանց միջոցով հնարավոր կլինի հասարակությանը միավորել և ազատագրել Լեռնային Ղարաբաղը»⁹:

Հետաքրքիր գուգադիպությամբ քառօրյա պատերազմը համընկավ Իրանի, Թուրքիայի ու Ադրբեջանի (*ապրիլի 5, Ռամսար*) և Իրանի, Ռուսաստանի ու Ադրբեջանի (*ապրիլի 7, Բաքու*) ԱԳ նախարարների եռակողմ հանդիպումներին, որոնք նախապատրաստվել էին ավելի վաղ, քան քառօրյա պատերազմը:

Արցախի դեմ պատերազմը սանձազերծելիս Բաքվում հավանաբար հաշվարկել էին, որ «Բլիցքրիզից» անմիջապես հետո տեղի էին ունենալու վերոնշյալ հանդիպումներն ու Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ երկրների նախագահների համա-

7 تماس تلفنی وزیر دفاع جمهوری آذربایجان با سردار دهقان

(Ադրբեջանի պաշտպանության նախարարը հեռախոսազրույց է ունեցել Հոսյեն Դեհդանի հետ) <http://www.dolat.ir/detail/276740>

8 سیاست ایران در مناقشه قره باغ برقراری صلح است

(ԼՂ հակամարտության հարցում Իրանի քաղաքականությունն ուղղված է խաղաղության հաստատմանը) <http://www.iribnews.ir/fa/news/1086956/>

9 آذربایجان می تواند پتانسیل مردمی مسلمانان در راستای آزادی قره باغ استفاده کند.

(Ադրբեջանը Ղարաբաղն ազատագրելու հարցում կարող է օգտվել մուսուլմանների հնարավորությունից) <http://anaj.ir/News/42431/>

ժողովը (ապրիլի 15, Ստամբուլ): Ըստ ամենայնի՝ Ադրբեջանը կանխատեսել էր, որ կարճատև պատերազմի հաջող ելքի դեպքում վերոնշյալ համաժողովների ժամանակ կատանա անհրաժեշտ դիվանագիտական աջակցություն:

Ինչ վերաբերում է քառօրյա պատերազմում արտաքին դերակատարների մասնակցությանը, ապա Իրանի հոգևոր առաջնորդի՝ միջազգային հարցերով գլխավոր խորհրդական Ալի Աքբար Վելայաթիի¹⁰ համոզմամբ՝ ռազմական գործողությունները հրահրվել են դրսից¹¹: Իսկ Իրանի նախագահ Հասան Ռոհանին Ստամբուլում տեղի ունեցած Իսլամական համագործակցության կազմակերպության գագաթնաժողովի շրջանակներում Իլհամ Ալիևի հետ հանդիպմանը տարածաշրջանային խնդիրների լուծման գործում բացառեց արտաքին ուժերի միջամտությունը¹²:

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Լեոնային Ղարաբաղի հակամարտության հարցում Իրանի պաշտոնական դիրքորոշումը մեծ հաշվով չփոխվեց. նկատվեցին որոշակի փոփոխություններ, մասնավորապես շրջանառության մեջ դրվեց «սահմանների անխախտելիության» մասին դրույթը:

Այս առնչությամբ ԻԻՀ նախագահը 2016 թ. օգոստոսի 7-ին Բաքվում Ի. Ալիևի հետ հանդիպմանը, անդրադառնալով արցախյան հիմնախնդրին, հայտարարել էր. «Իրանը մշտապես այն հաստատուն դիրքորոշումն է ունեցել, որ տարածաշրջանի երկրների՝ այդ թվում Ադրբեջանի տարածքային ամբողջականության ու սահմանների փոփոխություն չպետք է լինի»:

Պետությունների սահմանների անխախտելիության մասին Իրանի նախագահը խոսեց նաև ՄԱԿ-ի ԳԱ 71-րդ նստաշրջանում ունեցած ելույթում՝ ժողովուրդների ինքնիշխանության իրավունքն ու երկրների տարածքային ամբողջականության պահպանումը՝ տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման ճանապարհի համարելով դի-

¹⁰ Տե՛ս Բայբուրդյան Վ., Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 1998, 17, էջ 6-8:

¹¹ درگیری ها در قره باغ یک تحریک خارجی است¹¹

(Լեոնային Ղարաբաղում ռազմական գործողությունները հրահրեցին արտաքին ուժերը) <http://www.iribnews.ir/fa/news/1090641/>

¹² مشکلات منطقه ای باید از طریق گفتگو حل و فصل شود¹²

(Տարածաշրջանային խնդիրները պետք է լուծվեն երկխոսության ճանապարհով) <http://president.ir/fa/92924>

վանագիտությունն ու բացառելով ուժի կիրառումը¹³:

Հաշվի առնելով Իրանի տարածքային ամբողջականությանը սպառնացող մարտահրավերները՝ ԼՂ հակամարտության վերաբերյալ պաշտոնական Թեհրանի դիրքորոշումներում տարածքային ամբողջականության սկզբունքի վերաբերյալ որոշ դեպքերում առկա են ընդհանուր ձևակերպումներ, որը հակամարտող կողմերից յուրաքանչյուրին թույլ է տալիս յուրովի մեկնաբանել դրանք:

Եզրափակելով հոդվածը՝ նշենք, որ անկախ Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների ներկա մակարդակից՝ Իրանն Ադրբեջանին ու Թուրքիային շարունակում է դիտել որպես իր տարածքային ամբողջականությանը սպառնացող երկրներ, հետևաբար հատկապես քառօրյա պատերազմից հետո տարածաշրջանում առկա սահմանների փոփոխության անթույլատրելիության մասին Իրանի ռազմաքաղաքական դեկլարության պաշտոնական հայտարարություններն ուսումնասիրելիս կարելի է հանգել հետյալ եզրակացությանը՝ Լեռնային Ղարաբաղի ներկայիս կարգավիճակը համահունչ է Իրանի պետական շահերին, Իրանը դեմ է ստատուս քվոյի փոփոխմանը և Ադրբեջանի տարածքային ամբողջականության մասին դրույթը հիշատակելիս Իրանը ճանաչում է ԱՀ դե ֆակտո սահմանները:

ISRAYELYAN ARMEN

(IOS)

POSITION OF THE ISLAMIC REPUBLIC OF IRAN ON THE NAGORNO KARABAKH CONFLICT (DURING AND AFTER THE FOUR-DAY WAR)

The article is about Iran's official position on the resolution of the Nagorno Karabakh conflict during and after the four-day war in April.

During the peak of the military action, official Iran stated that it had neutral position on the Nagorno Karabakh conflict.

Studying the official statements of Iran's military and political authorities, we may come to the following conclusion: Nagorno-Karabakh Republic's current situation is based on Iran's interests, Iran opposes any changes in the status-quo and when speaking about the Azerbaijan's territorial integrity, Iran recognizes the country's de facto boundaries.

¹³«Իրան» օրաթերթ, թիվ 6318, 24 սեպտեմբերի 2016 թ.:

ХАЧАТРЯН ТИГРАН
(АГПУ)

ЗАПАДНАЯ АРМЕНИЯ В ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ ПЛАНАХ
ГЕРМАНИИ
В КОНЦЕ 19-ГО И В НАЧАЛЕ 20-ГО ВЕКА

Начиная с последней четверти 19-го века, германо-турецкое сотрудничество начало расширяться, благодаря чему Германия смогла завоевать военный и экономический потенциал на Ближнем Востоке. В противовес европейским державам, Германия делала акцент на взаимоотношения с Турцией, исключительно исходя из принципов сотрудничества и взаимопомощи. Такое внешнеполитическое поведение было позитивно воспринято Османским правительством, а благодаря двухстороннему военно-политическому и экономическому сотрудничеству, Германия и Турция достигли значимых результатов. Германия за 20 лет смогла завоевать прочную позицию в колониальной гонке с европейскими державами и заявила о своих амбициях в предстоящей войне за перераспределение мира. Османская империя с помощью Германии избежала окончательного коллапса и стала реорганизовывать свои ослабевшие военные силы после 1877-1878 гг. русско-турецкой войны. Стратегическое расположение Турции для Германии имело важное значение и этим, в основном, обуславливалась колоссальная инвестиция Германии в экономическую и военную сферы Турции. Опираясь на германскую помощь, Турция намеревалась ослабить уже укоренившееся военно-политическое влияние европейских держав. Начиная с 80-х годов 19-го века, Турция беспрепятственно принимала военных и экономических представителей Германии¹.

В 1880-1882 гг., по просьбе Абдула Гамида Второго, О. Бисмарк отправил в Стамбул военную делегацию². Спустя два года делегацию возглавил Кольмар фон дер Гольц, в результате чего ему удалось реорганизовать и перевооружить турецкую армию. Благодаря тринадцатилетней деятельности Гольца, в Турции значительным образом укоренились военно-политические и экономические позиции Германии.

Интервенция Германии на Ближний Восток в течение многих лет идеологически и теоретически подготавливалась германскими офицерами, дипломатами, экономистами, производителями, востоковедами, различными путешественниками и другими лицами, которые начиная с первой половины 19-го века, акцентировали свое внимание на стратегически важное географическое местонахождение Османской империи. В своих трудах,

¹ Moukthar-Pacha M., La Turquie, l'Allemagne et l'Europe, Paris 1924, p. 24-27.

² Holborn H. Deutschland und die Türkei 1878-1890, S. 26.

мемуарах, письмах, в отдельных произведениях, посвящённых Месопотамии и Ближнему Востоку, они тщательно описывали роль Турции, а в особенности стратегическое значение Ближнего Востока для Германии³. В данных трудах подчеркивалась важность и необходимость вмешательства Германии в борьбу с европейскими державами за наследие Османской империи.

После объединения Германии, интерес к Турции выходит за пределы теоретического мышления, и постепенно германское правительство сосредотачивает свое внимание на Османской империи и Ближнем Востоке, что становится неотъемлемой и составляющей частью внешней политики Германии. Для осуществления колониальной политики на Ближнем Востоке особенно подчеркивалась необходимость завоевания и эксплуатации местонахождений природных ресурсов, строительства железнодорожных путей, создавая тем самым связывающий узел между Турцией и Центральной Европой.

В ближневосточной политике Германии важную стратегическую, экономическую и политическую роль сыграла Армения. Начиная с последней четверти 19-го века, германские государственные деятели разработали специальную стратегию, суть которой состояла в том, что в грядущей войне против России Германия победит, и они создадут мощную Германскую империю. В этом плане Армении выделялось особое место.

Таким образом, истребление и переселение Западной Армении со стороны Османского правительства сопровождалось при непосредственном подстрекательстве и поддержке германских правящих кругов, которые подчеркивали роль Армении, особенно со стратегической точки зрения в качестве плацдарма для дальнейших военных действий. Для германо-турецкой стороны основной предпосылкой успеха в этой области было наличие не прорусского населения. Армяне, по данным немецких властей, считались прорусскими и являлись помехой для реализации будущих программ Германии. И поэтому не удивительно, что во время проводимых султанским правительством армянских избиений (погромов)⁴, немецкие

³ Liest F., *Schriften, Reden, Briefe (Werke)*, Bd. III, 2 Teil, S. 679, 952-955; Bd. V, S. 56, 499-500; Bd. VII, S. 186-189, 270, 275; Lassal F., *Nachgelassene Briefe und Schriften*, Bd. VI, Stuttgart-Berlin, 1925, S. 337; *Briefe von Ferdinand Lassale an Carl Rodbertus-Jagetzow*, Berlin, 1878, S. 56; W. Roscher. *Kolonien, Kolonialpolitik und Auswanderung*, 2 Aufl. Leipzig-Heidelberg, 1856, S. 357-364; Ross L., *Kleineasien und Deutschland*, Halle, 1850, S. V-XXVIII; Moltke H., *Gie Gesammelte Schriften*, Bd. II, Berlin 1892, S. 275-320.

⁴ В отечественной историографии доказано, что под государственным покровительством султанского правительства в Западной Армении в 90-ых годах 19-го века происходил первый этап армянского геноцида. См: Нерсисян М. Г.,

правлящие круги поддерживали султана Абдула Гамида Второго и перекладывали всю вину сложившейся ситуации на самих армян. Немецкий посол в Константинополе А. Заурма в беседе с Абдул Гамидом заявил, что «...подавление армянского восстания» считает его правом и обязанностью как суверена, и с этой точки зрения оправдывал пущенные в ход строгие меры⁵. Одновременно он хладнокровно доносил в Берлин о всех подробностях резни армян. «Всякий, кто принадлежит к этой нации, - писал Заурма, - будет непременно зарезан, независимо от того, где бы его не находили или не встречали. Всякий будет сбит с ног и растоптан, расстрелян и избит до тех пор, пока он не испустит последний дух»⁶.

В конце 19-го и в начале 20-го вв., как мы отметили выше, в Германии появилась многочисленная литература, в которой тщательно и детально демонстрировалась разработка планов колонизации Месопотамии и восточных регионов Османской империи. Эти идеологические подходы стали практическими действиями. Одним из главных действующих лиц реализации этих идей является П.Рорбах. Он перенес на практическую почву исследования немецких востоковедов и разработал общую концепцию по поводу Западной Армении и всего Кавказа (на этом мы остановимся более подробно).

«На Русском Кавказе, - заявил П.Рорбах, - 7 или 8 миллионов мусульман- братьев по крови туркам. Если бы Турция смогла продвинуть свое мусульманское население к северу, войти в союз с ними, то образовалось бы могучее общество из 14-15 миллионов человек, связанных единством расы и религии, и не считалось бы страшной силой сопротивления. Так как Армения препятствует осуществлению этого плана, то необходимо обновить население данного района, выгнав коренных жителей - армян. Месопотамия, по которой пройдет Багдадская железная дорога, населена редко. Это обстоятельство сказывается плохо на экономическом развитии дороги, и именно поэтому Германия стремится помочь беде. Для этого было бы достаточно поселить здесь армян из Армении, а на место последних позволить Оттоманскому правительству перевести мусульман из Фракии и России. Если бы они так и поступили, то Армения одним ударом была бы вырвана из рук России»⁷.

„Неопровержимые документы о геноциде Армян“. Ереван 2005 г. с. 14; Сафрастян Р., „Османская Империя: Генезис программы геноцида (1876-1920 гг.)“. Ереван, 2009 г., с. 33, 167-168.

⁵ «Die Grosse Politik Europäische Kabinete 1871-1914. Sammlung «der diplomatischen Akten des auswärtigen Amtes», Bildung, 12(1), Berlin 1924, dok. № 2904, S. 24.

⁶ Там же, dok. № 2903, S. 23.

⁷ „Кавказское слово“. 15,04,1916, № 84, с.3.

В ноябре 1913 г. на совещании общества «Deutsch-Asiatische Gesellschaft» Рорбах в связи с переселением армян в своем выступлении отметил: «Можно надеяться, что с водворением в крае (речь идет о Месопотамии) порядка и законности, некоторый прилив населения явится из других местностей малоазиатской Турции, как, например, из Армении, где жизнь и мирный труд останутся в прежних, менее выгодных и обеспеченных от всякого населения условиях»⁸. Этим Рорбах дал понять, что восстановление нормальных условий в Армении не в интересах немецких империалистов. Он проповедовал не только идею ликвидации армян из Западной Армении, но и был сторонником их прямого физического уничтожения. «Армения служит», - говорил Рорбах на том же совещании, - самым опасным и почти единственным очагом, в котором могут вспыхнуть серьезные внутренние беспорядки, впрочем, огонь пожара может перебросятся на другие, хотя и менее опасные на этом отношении, части Турецкой империи. Поэтому установление спокойствия в Армении в настоящее время должна стать одной из самых важных задач турецкого правительства. Это же, следовательно, является и нашей немецкой политикой... Уничтожение армян есть один из способов к водворению спокойствия в крае и его более прочного обеспечения за Турцией»⁹.

По поводу выступления Рорбаха, русский военный представитель в Германии А. Базаров сделал следующее заявление: «Из этих достаточно откровенных слов Рорбаха можно сделать вывод, что и для Германии установление спокойствия в Армении путем резни беспокойного армянского населения, является если не желательным, то, во всяком случае, непротиворечащим ее интересам способом умиротворения края, а армянские беглецы, спасшиеся от резни, являются весьма желательным для Германии элементом с целью увеличения чрезвычайно редкого населения на Месопотамии»¹⁰. Высказывания П.Рорбаха по армянскому вопросу отражались и в стремлениях правящих кругов Германии. Об этом свидетельствует, во-первых, то, что на совещании «Deutsch-Asiatische Gesellschaft» фельдмаршал фон Дер Гольц выразил Рорбаху благодарность «за освещение весьма важных и интересующих широкие круги немецкого общества вопросов»¹¹, во-вторых, сам Рорбах был официальным представителем немецкого министерства иностранных дел, занимая пост руководителя восточного от-

⁸ РГВИА, ф. 2000с., оп. 1, д. 973, л.110. Выступление П. Рорбаха было написано присутствовавшим на этом совещании русским военным агентом в Берлине Базаревым, и текст в качестве секретного донесения был отправлен в Петербург, в Генеральный штаб русской армии: см. РГВИА, ф. 2000с., оп.1, д. 973, л.110.

⁹ Там же.

¹⁰ Там же, л.115.

¹¹ Там же, л. 115.

дела. Материалы этого совещания широко распространились в немецкой и зарубежной прессах. Заместитель статс-секретаря иностранных дел Артур Цимерман уже в декабре 1913 г. заявил: «В сущности армяне не нужны Германии. Армения населена армянами, вредна ее интересам»¹². Немецкие правящие круги свои планы по поводу переселения армян из Западной Армении стали откровенно обсуждать уже накануне первой мировой войны. Выступая 23 ноября 1913г. на совещании «Deutsch-Asiatische Gesellschaft», Пауль Рорбах сказал: «В географическом отношении Армения представляет из себя естественную и почти непреступную крепость. С одной стороны, она граничит с Россией, с другой- господствует над всеми мировыми путями, соединяя богатейшие страны и моря с Европой. С потерей Армении, Турция перестанет существовать. Следовательно, без преувеличения можно сказать, что для современной Турции, даже обладание проливами, не должно бы привлекать к себе такого внимания»¹³. Два года спустя Пауль Рорбах опубликовал книгу «Война и германская политика»¹⁴, в которой говорилось о немецких планах и стратегической важности Армении. Предупредив немецкую политику о приближающейся войне и подчеркивая стратегическую важность Армении, П.Рорбах пишет: «Тот, кто завладеет Арменией, непосредственно будет господствовать как над восточной частью Малой Азии, так и над Месопотамией»¹⁵.

Далее он давал подробную военно-стратегическую оценку географического положения Западной Армении и отмечал ее значение с точки зрения завоевательных планов Германии. Об этом Рорбах пишет. «С военно-стратегической оценкой насчет Западной Армении, данной П. Рорбахом, были согласны фельдмаршал фон Дер Гольц и другие немецкие военные деятели»¹⁶.

Очистить Западную Армению от армян, значило облегчить стратегическую задачу на турецко-российском фронте. Так, у немецких империалистов сформировался план переселения армян с армянского плоскогорья, план, который частично совпадал со стремлениями турецкого правительства. Политическая сторона плана переселения обуславливалась стремлением заселить граничащие с Россией владения турок мусульман, а неспокойное армянское население оторвать от собственных и родных земель и переселить как можно дальше от границы.

В феврале 1914 г., выступая на заседании немецко-турецкого комитета, фельдмаршал фон Дер Гольц сказал: «Чтобы спасти Турцию от но-

¹² Там же, л. 118.

¹³ РГ ВИА, ф. 2000, оп. 1, д. 973, л. 110.

¹⁴ Рорбах П. „Война и германская политика“. Москва, 1915г.

¹⁵ Там же с.62.

¹⁶ РГ ВИА, ф. 2000с, оп. 1, д. 973, л. 115.

вого бедствия, необходимо полумиллионное армянское население раз и навсегда удалить из прилегающих к русской границе Ванской, Битлисской и Эрзрумской областей и от русско-турецкой границы перебросить на юг, в сторону Алеппо и Месопотамии, а арабов- на русско-турецкую границу»¹⁷.

Из вышеизложенного вполне понятно, что идеологическая картина немецких востоковедов начала реализовываться уже в начале 20 века.

В планы немецких военно-политических деятелей входили и армяне Киликии. Именно здесь пересекались магистрали Багдадской железной дороги, ведущей из Анатолии в Месопотамию и Сирию. В связи с этим немцы прилагали максимум энергии, чтобы подчинить Киликию своему военно-политическому, экономическому влиянию. Им удалось перекупить у французов существующую железнодорожную линию Мерсина-Тарас-Адана, которая имела выход к Средиземному морю. Они непрерывно хлопотали о получении новых концессий в этом районе.

С конца 19-го в. представители генерального штаба немецкой армии начали развивать усиленную деятельность в Западной Армении. Они начали с насаждения миссионерских организаций, призванных открыто или тайно осуществлять их политические, экономические и военно-стратегические цели. Поэтому, в августе-сентябре 1913 г. немецким правительством в Эрзруме было открыто специальное консульство, которое должно было заниматься исключительно топографическими исследованиями Западной Армении¹⁸. Во главе нового консульства был назначен известный военный деятель Эдгар Андерс, который уже успел зарекомендовать себя как профессиональный военный деятель в России, Персии и Константинополе. О его деятельности в Западной Армении, русский посол в Константинополе Гирс написал: «За последнее время немецкое правительство прилагает все силы для возможного развития и усиления своего влияния в Оттоманской империи, в особенности, в ее малоазиатских провинциях. Из донесений нашего генерального консула в Эрзруме можно было понять о деятельности немецкого консула Г. Андерса в Эрзрумском вилаете. Будучи назначенным на этом посту, он приобрел авторитет среди местных властей и населения, который особое внимание уделял армянской пропаганде, в особенности в школах»¹⁹.

Одновременно с его назначением в Эрзруме, Андерсу его правительством было поручено обратить особое внимание на отношение армянского населения в Турции к России, стараться привлечь расположение этого населения к Германии, а затем, в случае войны Турции с Россией, при

¹⁷ Там же.

¹⁸ НАА, ф.113, оп.1 (ч. 5), д. 154, л. 5.

¹⁹ „Сборник дипломатических договоров. Реформы в Армении“. Петроград 1915г., с. 122.

помощи того же населения поднять восстание на Кавказе²⁰. Андерс и его помощники вели антирусскую пропаганду не только среди армян, но и среди турок. Посетив 28 сентября 1913 г. вместе с полковником генерального штаба Турции Али Риза-беем казарму 21 кавалерского полка, Андерс обратился к офицерам с речью, в которой указал, что главными врагами турок являются русские²¹. Об этих действиях немцев русское консульство в Эрзруме в ноябре 1913 г. сообщает следующее: «Вообще следует заметить, что до последнего времени армяне относились к немцам с большим предупреждением, чем к американцам или французам, никто не верит в беспристрастие немцев. Всем ясно, что именно они больше других заинтересованы ни в благотворительности армян, а преследуют в Армении исключительно военно-политические цели»²². В другом сообщении, датированном тем же годом, отмечалось: «Армяне действительно не любят немцев, а Бисмарка, по традиции, считают своим злым гением. Упорные старания Германии повернуть в свою сторону симпатии армян, пока не принесли должных результатов»²³.

Русофобия немецких правящих кругов была тесно связана с их военно-стратегической деятельностью. В этом отношении особую работу проводили немецкие офицеры, служившие в турецких частях, дислоцированных на территории Западной Армении. Важно отметить, что с 90-х гг. 19-го века немецкая военщина начала вплотную интересоваться Западной Арменией. В 1888-1889 гг. в военном министерстве Турции были рассмотрены предложения немецкой военной миссии, а во главе с фон Дер Гольцем был также рассмотрен план организации резервной кавалерии, новые планы мобилизации, правила организации объездных частей, проект закона о гарнизонной службе и крепостях. В состав этих резервных кавалерий впервые вошли курдские полки, которые уже начали играть большую роль в жизни турецкой армии. Они создавались с согласия султана и немецких офицеров²⁴.

Большая ответственность за резню и депортацию западных армян падает на военщину кайзеровской Германии. И не только потому, что части, посланные Верховным военным руководством на резню и высылку армян, находились в немецких руках, но и потому, что сами немецкие военные принимали участие в этом. В начале турецкой мобилизации немецкие инструкторы прибыли в Эрзрум. Первым результатом их деятель-

²⁰ Это донесение было получено в генеральном штабе русской армии со стороны русской военной разведки в Эрзруме. См. РГ ВИА, ф. 2000с, оп. 1, д. 991, л. 572.

²¹ Там же.

²² Там же, д. 991, л. 497-498.

²³ Там же, л. 499.

²⁴ ГАРФ, ф. 892, о. 1, д. 19, л.3.

ности явилось удаление солдат-армян из турецких частей²⁵ с последующим назначением их в рабочие батальоны с целью расстрела.

Подобные факты показывают, что даже подготовка к резне проходила не без участия немцев. После начала резни, избиения и высылки армян, во многих местах производилась пропаганда против армян под непосредственным руководством немецких офицеров, которые возглавляли турецкие войска при героической Ванской самообороне²⁶. Они же непосредственно командовали турецкой артиллерией, стрелявшей по защитникам Вана²⁷ и Шапин-Гарайсара²⁸. Во главе турецких частей, заседавших на Зейтун, стояли немецкие офицеры²⁹. В Трапезунде, наряду с местными турками, организаторами резни были немецкие офицеры Штанге и бывший немецкий консул в Тифлисе Шуленбург³⁰. Немцы участвовали в резне армян в Кемахе³¹. Турецкой артиллерией, стрелявшей по армянским кварталам г. Урфы, командовал немец граф Вольф фон Вальфскель³².

В Эрзруме активную роль в избиении армян сыграли Андерс, Шнопер и другие немцы³³, где офицеры Шенги и Карл Верт захватили в плен учениц старших классов армянских учебных заведений и изнасиловали их³⁴. Немецкие офицеры с довольным видом делали зарисовки и фотографировали картины резни. Очевидец, наблюдавший за подобной картиной действий немецких офицеров, озаглавил свой рассказ: «Армяне-умирают, а немцы-радуются»³⁵.

Можно привести много фактов об участии немецких военных в резне армян, но ограничимся этим и укажем, что начальниками штабов многих турецких частей и соединений, подразделения которых принимали участие в резне и депортации армян, были немецкие офицеры. Так, начальником штаба 3-й турецкой армии был генерал Бронсарт фон Шеллендорф, которого затем сменил майор Гузе, их помощником был майор Фельдман, а начальником штаба 31-й и 32-й пехотных дивизий был майор Ланге³⁶ и т. д.

²⁵ НАА, ф. 57, оп. 1, д. 632, л. 1-2.

²⁶ См. «Кочнак» (на армянском языке). 23 октября, 1915, № 43, с. 935 (показания американца Эрнста Яро).

²⁷ Там же, с. 241-244.

²⁸ См. Анри Барби. «В стране ужаса», Тифлис, 1919, с. 24.

²⁹ См. «Кочнак». 7 августа, 1915, № 32, с. 672.

³⁰ См. «Армянский вестник». 1916, № 33, с. 23.

³¹ Там же, № 8, с. 8.

³² «Schweizerische Orient-mission». 1917, № 4, S. 2-3.

³³ См. Анри Барби, там же, с. 17.

³⁴ См. «Армянский вестник». № 8, с. 8.

³⁵ НАА, ф. 57, оп. 1, д. 620, л. 13.

³⁶ Г. Корсун «Первая мировая война на кавказском фронте». М., 1946, с. 32, 34, 50.

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

(ՀՊՄՀ)

ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՊԼԱՆՆԵՐՈՒՄ 19-ԸՂ ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ ԵՎ 20-ԸՂ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Գերմանիայի միավորումից հետո գերմանական կառավարության արտաքին քաղաքականության վեկտորներից մեկը դարձավ Մերձավոր Արևելքը, որտեղ առանձին ուշադրություն էր դարձվում Օսմանյան կայսրության նկատմամբ: Հարկ է ընդգծել, որ Գերմանիայի մերձավորարևելյան քաղաքականության մեջ հատուկ առանձնահատկությամբ կարևորվում էր Արևմտյան Հայաստանի ռազմավարական, տնտեսական և քաղաքական դերն ու նշանակությունը: 19-րդ դարի վերջին քառորդից ի վեր գերմանական կառավարության առանձին գործիչներ մշակել են գաղտնի ռազմավարություն, որի էությունը Ռուսաստանի դեմ պատերազմում հաղթանակի հասնելն էր, և այս քաղաքականության մեջ Արևմտյան Հայաստանը կենտրոնական դեր ուներ:

Առկա փաստերը ուսումնասիրելիս պարզվում է, որ արևմտահայության կոտորածի կազմակերպման հարցում գերմանական ռազմական մասնագետները ևս ունեն իրենց մեղքի բաժինը: Հողվածում աղբյուրների ընձեռած տվյալների հիման վերապացուցվում է, որ արևմտահայության տեղահանման և կոտորածի կազմակերպման հարցում գործուն մասնակցություն են ունեցել գերմանական ռազմական մասնագետները և կառավարության որոշ գործիչներ:

KHACHATRYAN TIGRAN (ASPU)

WESTERN ARMENIA IN THE MILITARY AND POLITICAL PLANS OF GERMANY IN THE LATE 19TH AND EARLY 20TH CENTURY

After the unification of Germany, the attention of the German government to the Ottoman Empire and the Middle East is becoming an essential and integral part of the foreign policy of the German government. In Middle East policy of Germany with the special feature highlights the strategic, economic and political role of Armenia. Since the last quarter of the 19th century, German government figures have developed a special strategy, the essence of which was the

impending war against Russia to achieve victory. In this regard, Armenia was allocated a special place. The greatest responsibility for the massacre and deportation of Western Armenians fell on the military specialists of Germany. It was not only because the supreme military leadership organized massacres and expulsion of the Armenians, but also they took an active part in this. At the beginning of the Turkish mobilization German instructors arrived in Erzurum (Karin). The first result of their work was the the removal of Armenian soldiers from the Turkish part, followed by collection of them for the convenience of shooting in working battalions.

ԿՈՍՏԱՆՑԱՆ ԱՐԱՐԱՏ
(ԱԻ)

ԱԼ ԿԱԻԴԱ. ՑԱՆՑԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ

Ներածություն

Իսլամական արմատական գաղափարաբանությունը և դրանից մակածված բռնության մշակույթը հայտնվել են ոչ միայն քաղաքական գործիչների և ոլորտի փորձագետների, այլև միջազգային ասպարեզ կոչված հսկա լսարանի ուշադրության կիզակետում: Ուշագրավ է, որ «համաշխարհային արմատական իսլամական շարժումները» ավելի հասկանալի և տրամաբանական են դառնում, երբ դիտարկվում են ոչ թե որպես դասական ահաբեկչության արդյունք, այլ երբ ուշադրություն ենք դարձնում բռնության ետևում սքողված գաղափարաբանությանը: Սպառնալիքի հիմքերի առնչությամբ կա երկու հիմնական մոտեցում: Առաջինն Ալ-Կաիդան ընկալում է որպես դասական ահաբեկչական կազմակերպություն, որը բռնություն և սպանություններ է սփռում խաղաղ բնակչության շրջանում, իսկ երկրորդը շեշտում է կառույցի գաղափարական վտանգը և դրա տարածումը ոչ միայն արաբական, այլև ամբողջ իսլամական աշխարհում, ինչպես նաև Արևմուտքի մուսուլման բնակչության շրջանում: Ինչևէ, չնայած Ալ-Կաիդան ահաբեկչական խմբավորումների շարքում արդեն գտել է իր հաստատուն տեղը և որպես պատասխան ռազմավարություն որդեգրել է բռնությունը՝ արաբական աշխարհիկ համակարգերի և համաշխարհային անվտանգության համար դրա սպառնալիքն առավելապես գալիս է կառույցի գաղափարաբանությունից և այնպիսի ձեռնարկումներից, ինչպիսիք են ցանցային կառույցների ստեղծումն ու արմատականության տարածումը՝ միտված իսլամադավան աշխարհը մեկ հովանու ներքո միավորելուն և կառավարելուն:

Սույն աշխատության առաջին մասում քննության կառնենք Ալ-Կաիդայի համապատասխանությունն ահաբեկչության դասական սահմանումներին: Քաղաքական փիլիսոփա Մայքլ Ուոլզերը (Michael Walzer), արմատականների կողմից տարվող ահաբեկչությունը մեկնաբանում է որպես թշնամու դեմ պայքարի մեթոդ, որում եթե թշնամին որոշարկված է, զոհի կերպարը ևս ընդհանրացվում է: Ասել կուզի՝ ահաբեկչությունը բռնություն չէ որպես այդպիսին, այլ մարտավարու-

թյուն¹: Փաստարկելու համար ես կմեջբերեմ՝ ա. Իսլամական մեկ այլ արմատական կազմակերպության՝ Համասի դեպքը, որի գործողություններն ու բռնությունը տեղային են, կենտրոնացած ընդդեմ մեկ թշնամու, ուստի դրա արմատական աշխարհընկալումը չի դիտվում որպես սպառնալիք միջազգային կարգի համար. սակայն Ալ-Կաիդայի դեպքում սպառնալիքը ոչ միայն հարձակումն ու բռնությունն է, այլև ներկայիս մուսուլման երկրների և Արևմուտքի դեմ վեր հանող իսլամական վտանգի ահագնացման վախը: Օրինակ՝ Դեյվիդ Քիլքալենը (David Kilcullen) հասուկ շեշտում է Ալ-Կաիդայի տեղականից համաշխարհային կառույցի վերածվելու լրջությունը և դրա հետևանքները համաշխարհային ահաբեկչության և դրա դեմ պայքարի խնդիրներում²: Ակնարկի երկրորդ մասը կենտրոնանում է Ալ-Կաիդայի կողմից մերձակա և հեռակա թշնամու դեմ արմատական ջիհադ հայտարարելու տրամաբանական բացատրության, ինչպես նաև սեփական տարածքում (Արաբական թերակղզի) և միջազգային ասպարեզում (Արևմուտք) արմատականության տարածման վրա, ինչը ցույց է տալիս, որ Ալ-Կաիդայի հիմնարար սպառնալիքը գալիս է ոչ միայն նշված թիրախին ուղղված ահաբեկչական հարձակումից, այլ կառույցի գաղափարաբանությունից:

Բռնություն, թե՛ գաղափարաբանություն

Մասնագետների շրջանում ահաբեկչությունն ավանդաբար ընկալվում է որպես անհատների խմբի հարձակում անմեղ մարդկանց վրա: Օրինակ՝ Ուիլիամ Սեֆայրը (William Safire) այն նկարագրում է որպես «...վախի միջոցով հետապնդում, հանրության ահաբեկում փոքր խմբավորման կողմից՝ որպես զենք գործածելով անմեղ մարդկանց սպանության հանդեպ հասարակական հակակրանքը»³: Նմանապես, Օքսֆորդյան բառարանում տվյալ հասկացության բուն իմաստը ներկայացված է որպես «...կյանքի համար վտանգավոր գործողություն(ներ)՝ իրականացված կազմակերպված և քաղաքականապես շահագրգիռ ինքնակոչ խմբավորումների կողմից»⁴: Այսպիսով՝ իրականացվող

¹ Walzer M., *Arguing about War*, New Haven & London, 2004, pp. 131-133.

² Kilcullen D., *The Accidental guerrilla*, Carlton North, Victoria, Australia, 2009, p.12.

³ Safire W., *Safire's Political Dictionary*, New York, 1968, p. 719.

⁴ *The Concise Oxford Dictionary of Politics*, Ed Iain McLean and Alistair McMillan, Oxford, 2009. Oxford Reference Online,

քոնությունները մեկնաբանելիս շեշտվում են միայն վերոբերյալ հանգամանքները: Նման բացատրությունը ուշադրությունն ըստ էության կենտրոնացնում է Ալ-Կաիդայի իրականացրած ոմբահարումների և դրանց հետևանքով առաջ եկած մարդկային կորուստների վրա, ինչպիսիք են 2001 թ. Առևտրի համաշխարհային կենտրոնի պայթեցումն ու Պենտագոնի վրա կատարված հարձակումը՝ 2996 զոհով, կամ Մադրիդում (Իսպանիա) 10 ումբի և 4 գնացքի պայթեցումները՝ 191 զոհով ու բազմահազար վիրավորներով⁵: Ինչևէ, Ալ-Կաիդայի նման իսլամական խմբավորման համար իրականությունն ավելին է, քան այս կամ այն կառավարության կամ մարդկանց խմբի դեմ գուտ սադրանքը: Դա ունի հետևյալ պատճառները:

1. Ուղղերի մեկնաբանության համաձայն, քաղաքացիականներն անմեղ չեն համարվում, այլ դիտարկվում են որպես պայքարի մասնակից: Բին Լադենը, օրինակ, ԱՄՆ-ի կառավարությանն ու ժողովրդին ընդհանրական թշնամի հայտարարելու պատճառը բացատրում է նրանով, որ ԱՄՆ-ի քաղաքացին հարկ է վճարում, իսկ ամերիկյան զինվորը, լինելով քաղաքացի, ներկայացնում է սեփական կառավարությունը⁶: Այլ կերպ ասած՝ Ալ-Կաիդան իր հակառակորդի ամբողջ բնակչությունը դիտում է որպես թշնամի և հարձակման ենթակա օբյեկտ: Ավելին, ըստ Բարաք Մենդելսոնի՝ «Ալ-Կաիդայի գաղափարաբանությունը ոչ միայն մարտահրավեր է որոշ երկրների ինքնիշխանությանը, այլև թիրախավորում է նույնիսկ իսլամական երկրների որոշ դրույթներ և հաստատություններ: Ալ-Կաիդան մերժում է պետությունների իրավունքը այլ պետությունները ճանաչելու հարցում, հատկապես երբ խոսքը մուսուլմանական տարածքի մասին է»⁷: Այսպիսով՝ Ալ-Կաիդան ոչ թե ահաբեկիչների մի խումբ է, որը հարձակումներ է գործում անմեղ մարդկանց դեմ, այլ վերպետական կազմակերպություն, որի ջանքերն ուղղված են Իսլամական խալիֆաթի հիմնադրմանը:

Ալ-Կաիդայի գաղափարական սպառնալիքի աղբյուրը Արևմուտքի դեմ զինված ջիհադ սկսելու կոչն է հենց, որը Սայիդ Կուտբի (Sayyid

<http://www.oxfordreference.com/views/ENTRY.html?subview=Main&entry=t86.e137>

3

⁵ Major Terrorist Acts Suspected of or Inspired by al-Qaeda, Infoplease, May 17, 2010, <http://www.infoplease.com/ipa/A0884893.html>.

⁶ Lawrence B., Messages to the World, London-New York, 2005, p. 165.

⁷ Mandelsohn B., Sovereignty under attack: the international society meets the Al Qaeda network, Review of International Studies, 2005, p. 23.

Չորեքշաբթի քաղված գաղափարական կադապարների հենքի վրա քայլեր է կատարում մուսուլման բնակչությունը ոտքի հանելու⁸ և միջազգային բնույթի համաշխարհային ապստամբություն սկսելու ուղղությամբ⁹: Այսպիսով՝ Ալ-Կաիդայի ռազմավարությունը բաղկացած է մի քանի կետերից՝ ապրել և գործել արմատական իսլամի սկզբունքներով, տապալել արաբական այն կառավարությունները, որոնք Ալ-Կաիդան չի համարում իսլամական, արտաքսել «Արեւմուտքի գործակալներին» և «անհավատներին», և իսլամական այլ խմբավորումների օժանդակությամբ հիմնադրել համաշխարհային Իսլամական խալիֆատ¹⁰: Շարունակելով միտքը՝ նշենք, որ իսլամական մեկ այլ արմատական շարժման՝ Համասի փորձը քննելիս պարզ է դառնում, որ վերջինիս վտանգը դրա գաղափարաբանությունը չէ՝ այն ուղղված չէ աշխարհակարգի փոփոխությանը, քանի որ Համասի ուշադրությունը կենտրոնանում է հրեական պետության և սիոնիզմի վրա, իսկ կազմակերպությունն ինքը իսլամի անունից կոչվում է հանուն Պաղեստինի ազատագրման և իսլամական պետության հիմնադրման¹¹: Այսպիսով՝ Ալ-Կաիդան ոչ թե պարզ ահաբեկչական խմբավորում է, այլ սեփական գաղափարախոսությամբ զինված արմատական իսլամական կազմակերպություն, որը կոչ է անում աշխարհի բոլոր մուսուլմաններին միավորվելու իր հովանու ներքո:

2. Չնայած լրագրող Ջեյսոն Բըրքը (Jason Burke) Ալ-Կաիդան դիտարկում է որպես աֆղանական պատերազմի ընթացքում «անհավատների» դեմ պայքարող մարտիկների խումբ և համարում, որ այն ընդամենը Խորհրդային Միության դեմ իսլամի անունից մարտնչող սովորական պարտիզանական կազմավորում է, որը չունի¹² կազմակերպական բջիջներ և կոմունիկացիոն ցանց՝ իրական սպառնալիքը արմատական իսլամի հիմնումն էր և արաբական մուսուլմանական

⁸ Mipt Terrorism Knowledge Base, "Armenian secret army for the liberation of Armenia", September 30, 2007, <http://web.archive.org/web/20071115020146/http://www.tkb.org/Group.jsp?groupID=258>. Bashar al Assad., cited in Jeffrey Haynes, "Al Qaeda: Ideology and action", Critical review of International Social and Political Philosophy, 2010, p.13.

⁹ Burke J., Al-Qaeda, New York, 2003-2004, p. 13.

¹⁰ Haynes J., Al Qaeda: Ideology and action, Critical review of International Social and Political Philosophy, 2010, p. 7.

¹¹ Post J. M., Mind of the Terrorist, USA, 2007, p.176.

¹² Burke J., al-Qaeda, New York, 2003-2004, p. 6.

պետությունների հետ նրա խորքային բանավեճը այնպիսի հարցերի շուրջ, թե, օրինակ, ինչ հիմքի վրա պետք է կառուցվի իսլամական աշխարհը, և ով է արժանի այն կառավարելու: Ինչպես նշում է Ռոհան Գունատանան (Rohan Gunaratna), «Ալ-Կաիդան համաշխարհային նկրտումներով ջիհադական կազմակերպություն է: Իր առաջնային մանդատը պահպանելով՝ դրա գերագույն նպատակը ամբողջ աշխարհի իսլամական շարժումներին և մուսուլման գանգվածներին ոգեշնչելն ու հրահրելն էր հարձակվելու իսլամն ու մուսուլմաններին վտանգի ենթարկողների վրա»¹³: Ի հավելումն նշենք, որ Բին Լադենը սաուդյան վարչակարգին մեղադրում է հակաիսլամականության մեջ՝ ԱՄՆ-ի ու արևմտյան այլ երկրների հետ առնչություններ ունենալու պատճառաբանությամբ¹⁴: Ջեֆրի Հեյնզը (Jeffrey Haynes) իր հերթին բացահայտում է էրիտրեայում, Սոմալիում, Եգիպտոսում, Պակիստանում և Սաուդյան Արաբիայում 1990-ականներից ի վեր Ալ-Կաիդայի ունեցած առնչությունները և նշում այդ կազմակերպության՝ որպես արմատական իսլամական կառույցի մասին ընկալման ձևավորման մասին¹⁵: Ռոյթերզի մեջբերումը, օրինակ, ունի հետևյալ տեսքը. «Սաուդյան Արաբիայի կողմից Ալ-Կաիդայի հետ կապված 113 մարտիկի, այդ թվում՝ մահապարտահաբեկիչների 2 խմբի ձերբակալությունը ցույց է տալիս, որ աշխարհի թիվ մեկ նավթարդյունաբերող երկրում ջիհադիզմի սպառնալիքը չի վերացել...»¹⁶: Ալ-Կաիդայի վտանգը հիմնականում բարձր տեխնոլոգիաների և ինտերնետի միջոցով դրա գաղափարաբանության տարածման մեջ է: Աբդ ալ-Բարի Ատուանը (Abdel Bari Atwan) հատուկ մատնանշում է ինտերնետի կարևորությունն Ալ-Կաիդայի ռազմավարության մեջ և ջիհադական 4,500 կայքերի գոյությունը, որոնք միավորում

¹³ Gunaratna R., *Ideology in Terrorism and counter Terrorism: Lessons from combating Al Qaeda and Al Jamaah Al Islamiyah in Southeast Asia*, International Relations and Security Network, 2005, <http://www.isn.ethz.ch/isn/Digital-Library/Publications/Detail/?ots591=0C54E3B3-1E9C-BE1E-2C24-A6A8C7060233&lng=en&id=44015>.

¹⁴ Interview with bin Laden, conducted by Peter Arnett of the CNN, March 1997. Cited in Mendelsohn B., *Sovereignty under attack: the international society meets the Al Qaeda network*, *Review of International Studies*, 2005, p. 58.

¹⁵ Haynes J., *AL Qaeda: Ideology and action*, *Critical review of International Social and Political Philosophy*, 2010, p. 182.

¹⁶ Souhail K., *Saudi sweep shows al Qaeda threat hasn't disappeared*, Reuters, March 29, 2010, <http://www.reuters.com/article/idUSTRE62S3L120100329>.

են գաղափարապես մոտ մարդկանց և պրոպագանդում հավատացյալներին միանալու ջիհադին և ազատագրելու մուսուլմանադավան ազգը «անհավատներից»¹⁷: Ուստի, սպառնալիքը ոչ միայն ահաբեկչական կառույցի հարուցած բռնությունն է, այլ դրա գաղափարաբանությունը, որը մուսուլմանների շրջանում արմատական տրամադրություններ է տարածում:

Ինչ վերաբերում է բուն սպառնալիքին, ապա պետք է նշել, որ Ալ-Կաիդան ինտերնետն օգտագործում է ոչ միայն իր տեսակետները տարածելու համար, այլև ակտիվ աշխատանքներ է տանում տարբեր վայրերում: Վտանգի կորիզը սա է, քանի որ խնդիրը ոչ միայն նրա կողմից ֆինանսավորվող մարտիկներն են, այլ գաղափարական վտանգի ահագնացումը: Ինչպես գրում է Ռոհան Գունատատնան՝ «ներկայումս Ալ-Կաիդայի իրական ուժն իր կողմից վարժեցված, ֆինանսավորված, զինված և ամենակարևորը՝ գաղափարապես մշակված տարաբնույթ խմբավորումներն են: Ալ-Կաիդայի ցանցը (Ալ-Կաիդայի խմբավորումներ+համագործակից կազմակերպություններ) և գաղափարապես դուստր բջիջները կազմում են Ալ-Կաիդա կոչեցյալ շարժումը»¹⁸: Այդ իսկ պատճառով էլ Քիլքալենը հակաահաբեկչականից ավելի ևս կարևորում է հակաապստամբական գործողությունները, որովհետև Ալ-Կաիդան հանրության շրջանում մեծ աճ է գրանցել, և դրա գաղափարախոսությունն ուժեղ է: Լրագրողը, սակայն, նշում է նաև տարածաշրջանին տիրանալու հարցում Ալ-Կաիդայի անարդյունավետությունը:

Իսլամական աշխարհը՝ արմատականության թիրախ

Ակնարկի այս հատվածում ես կփորձեմ ընդդիմախոսել արմատավորված այն պատկերացմանը, թե Ալ-Կաիդայի գործողությունները լոկ ուղղված են Արաբական թերակղզում օտարերկրյա ներկայության դեմ, և իբր այն ոչ մի նպատակ չունի զրավելու մուսուլմանական աշխարհին ու փոխելու դրա պետական-հասարակական կացութաձևը¹⁹:

¹⁷ Atwan Abdel Bari, Al-Qaida, London, United Kingdom, pp. 4-7.

¹⁸ Gunaratna R., Ideology in Terrorism and counter Terrorism: Lessons from combating Al Qaeda and Al Jamaah Al Islamiyah in Southeast Asia, International Relations and Security Network, 2005, <http://www.isn.ethz.ch/isn/Digital-Library/Publications/Detail/?ots591=0C54E3B3-1E9C-BE1E-2C24-A6A8C7060233&lng=en&id=44015>

¹⁹ Hegghammer T., Terrorist Recruitment and Radicalization in Saudi Arabia, 2006, p. 41, http://www.mepc.org/journal_vol13/Hegghammer.pdf.

Անգամ եթե դա այդպես է, Ալ-Կաիդայի պասիվ գոյությունն անգամ չի նշանակում, թե սպառնալիքն ուղղված է միայն օտարերկրյա սուբյեկտներին: Մուսուլմանական աշխարհում և արաբական երկրներում արմատականների ու գործող կառավարությունների բախումն ակներև է: Իրական սպառնալիքն ուղղված է քաղաքական և կրոնական գործող կառուցվածքին՝ որպես Ռուման միավորելու խոչընդոտների²⁰: Չնայած Ալ-Կաիդան Արաբական թերակղզու տարածքում մի շարք հարձակումներ է հեղինակել ընդդեմ ամերիկյան և արևմտյան երկրների քաղաքացիների, մեկնաբանել է իր թշնամանքը տարածաշրջանում արևմտյան ազդեցության առկայությամբ և անընդունելի համարել Սաուդյան Արաբիայի հարստության բռնագավթումն Ամերիկայի կողմից և այլն, այնուամենայնիվ Ալ-Կաիդայի իրական վտանգը ներկայիս վարչակարգերի հանդեպ դրա ներհակ կեցվածքն է: Ինչպես նշում են Քուինթան Վիկտորովիցը (Quintan Wiktorowicz) և Ջոն Բալնթերը (John Kalnter), «ջիհադիստները մեղադրում են սաուդյաններին և իսլամական աշխարհի մնացյալ վարչակարգերին իսլամին անհարիր վարքուբարքի մեջ, նրանց համարելով ուրացողներ, և նրանց հեռացնելու համար ջիհադի կոչ են անում»²¹: Ալ-Կաիդան ահաբեկում է սաուդյան կառավարությանը՝ պահանջելով հեռանալ երկրից²²: Նմանապես, իսլամական աշխարհի կառավարման վերաբերյալ գաղափարախոսության և մոտեցումների տարբերությունների պատճառով Ալ-Կաիդայի արմատականները հակասության մեջ էին սաուդյան վարչակարգի հետ՝ ընդդիմանալով նրան և պատրաստակամություն հայտնելով փոխելու իսլամի ընկալումն Արաբական թերակղզում²³: Ավելին, Բին Լադենը սաուդյան վարչակարգին մեղադրում է իսլամի խնդիրների նկատմամբ ամերիկյան արտաքին քաղաքականության դրույթները նույնությամբ վերարտադրելու և Պաղեստինում ու Իրաքում մուսուլմանների իրավունքները պաշտպանել չկարողանալու մեջ²⁴: Արդյունքում Ալ-Կաի-

²⁰ Kilcullen D., *The accidental Guerrilla*, Carlton North, Victoria, Australia, 2009, p. 16.

²¹ Wiktorowicz Q., Kaltner J., *Killing in the name of Islam: AL Qaeda's Justification for September 11*, Middle East Policy, 2003, 2, p. 4.

²² Chaliand G., Blin A., *The History of Terrorism*, Berkeley, CA, United States, 2007, p. 224.

²³ Post Jerrold M., *The mind of the terrorist*, New York, 2007, p. 197.

²⁴ bin Laden interview, "The Saudi Regime," 1996, cited in Lawrence Bruce messages to the world, London, New York, 2005, p. 36.

դան ինտերնետի միջոցով պատերազմ է հայտարարում վարչակարգին և, քարոզչության օգնությամբ, պայքարը տեղափոխում գաղափարական դաշտ²⁵: Միրիայի նախագահի բառերով՝ «...Ալ-Կաիդայի ծայրահեղական գաղափարախոսությունը շարունակ աճող աջակցություն է ձեռք բերում ...սուննի մուսուլման աշխարհում ...և ընդլայնում իր ցանցն աջակիցների նոր սերնդի շրջանում»²⁶: Այսպիսով՝ վերոբերյալ մտքերն ու մեջբերումները պարզորոշ վկայում են մուսուլմանների միջև բախման ահագնացման և Ալ-Կաիդայի գաղափարաբանությունից առաջացած սպառնալիքի մասին:

Ի հավելումս՝ արժե նշել այն քայլերը, որոնք ձեռնարկվել և ուղղվել են ընդդեմ արմատական Ալ-Կաիդայի սպառնալիքի, ինչն ակնհայտ է դարձնում արմատականների գաղափարական վտանգի ծավալման նկատմամբ գիտնականների և փորձագետների մտահոգությունը: Օրինակ, Հորդանանի Աբդուլլահ II թագավորը հանդիպում է կազմակերպել իսլամիստ գիտնականների հետ և կոչ արել նրանց դատապարտել արմատական շարժումների պարտադրած գաղափարաբանությունը²⁷: Ավելին, Դեյվիդ Քիլքալենը մեզ ի ցույց է դնում Ալ-Կաիդայի մասին այն մտահոգումը, որ այն ոչ թե ավանդական ահաբեկչական շարժում է, այլ համաշխարհային ապստամբություն, որը մուսուլմանական աշխարհին կոչ է անում միավորվելու և ձևավորելու խալիֆաթ²⁸: Այս իսկ պատճառով էլ Ալ-Կաիդայի դեմ պայքարում հեղինակը հակաահաբեկչականից ավելի կարևոր է համարում հակաապստամբական գործողությունները²⁹: Մաուդյան իշխանությունները ձեռնարկել են հակաարմատականացման արշավ, որը միտված է հասարակությունը կրթելուն և ազգաբնակչությունն արմատական գաղափարաբանությունից պաշտպանելուն³⁰: Այսպիսով, չնայած սույն

²⁵ Atwan Abdel Bari, Al-Qaida, Berkely, California, United States, 2007, p. 138.

²⁶ Basher al Assad, cited in Jeffrey Haynes, Al Qaeda: Ideology and action, Critical review of International Social and Political Philosophy, 2010, p. 16.

²⁷ Amman Message: http://ammanmessage.com/index.php?option=com_content&task=view&id=13&Itemid=27. Cited in David Kilcullen, The accidental Guerrilla, Carlton North, Victoria, 2009, p. 15.

²⁸ Նույն տեղում, էջ 28-29:

²⁹ Նույն տեղում, էջ 12-13:

³⁰ Boucek Ch., The Sakinah Campaign and Internet Counter Radicalization in Saudi Arabia, 2008, CTC Sentinel, p. 1. <http://oai.dtic.mil/oai/oai?verb=getRecord&metadataPrefix=html&identifier=ADA493785>

ակնարկի նպատակն Ալ-Կաիդայի վտանգները ցուցադրելն է՝ կառույցին հաղթելու վերաբերյալ գիտնականների և փորձագետների արտահայտած մտքերն օգնում են սպառնալիքի ակունքները տեղորոշել նրա գաղափարաբանության մեջ, այլ ոչ միայն իրագործած բռնություններում:

Իր գաղափարները տարածելու գործում Ալ-Կաիդայի կարողությունները վտանգի են ենթարկում միջազգային իրավակարգը, քանի որ դա բարդացնում է աշխարհով մեկ համագործակցող արմատական շարժումների դեմ քայլերի ձեռնարկումը: Ինչպես նշում է Ռոհան Գունատանան, չնայած Ամերիկայի Իրաք ներխուժումից հետո Ալ-Կաիդան մասամբ անարդյունավետ էր գործում, Համաշխարհային Ջիհադը (Global Jihad) շարունակում է դեռևս վտանգավոր մնալ և պահպանել է իր կապերը տարածաշրջանային ու համաշխարհային բջիջների հետ³¹: Իսկապես, Ալ-Կաիդայի կապը հարավարևելասիական արմատական ահաբեկչական շարժման՝ Ջեմա'ա Իսլամիայի («Իսլամական միաբանություն») հետ հենվում է մուսուլմանական աշխարհը մեկ իսլամական միության մեջ միավորելու գաղափարախոսության վրա, իսկ երկու կազմակերպությունների ղեկավարների ջերմ հարաբերությունները ցույց են տալիս ահաբեկչական նման խմբավորումներում գաղափարախոսության ազդեցիկության խորությունը³²: Ալ-Կաիդայի և Ջեմա'ա Իսլամիայի նմանօրինակ փոխադարձ աշխարհընկալումը հանգեցրել է դրանց ներգրավվածությանն այնպիսի ահաբեկչական գործողություններում, ինչպիսին է ինքնաթիռի առևանգումը Բանգկոկում³³: Այսպիսիով՝ վերոնշյալ քայլերը պարզորոշ ցույց են տալիս արմատական գաղափարաբանության կարևորությունը և դրա պարունակած վտանգները միջազգային իրավակարգի համար այն մեծ ազդեցության առումով, որ կարող է ունենալ տարբեր տարածաշրջաններում գործող կազմակերպությունների միավորումը:

Արևմուտքը՝ արմատականության թիրախ

Վերջին տարիներին արևմտյան երկրներում ահաբեկչական

³¹ Gunaratna R., *Ideology in Terrorism and counter Terrorism: Lessons from combating Al Qaeda and Al Jamaah Al Islamiyah in Southeast Asia*, International Relations and Security Network, 2005, <http://www.isn.ethz.ch/isn/Digital-Library/Publications/Detail/?ots591=0C54E3B3-1E9C-BE1E-2C24-A6A8C7060233&lng=en&id=44015>.

³² Նույն տեղում, էջ 20:

³³ Նույն տեղում, էջ 23:

հարձակումներ տեղի ունեցան, որոնցում ուշադրություն գրավեց գերազանցապես բնության գործոնը: Համարվեց, որ դա Ալ-Կաիդայի ուղերձն է արևմտյան երկրներին՝ հեռանալու Աֆղանստանից և իսլամական մյուս պետություններից³⁴: Ինչևէ, ավելի մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ արևմտյան ճակատում Ալ-Կաիդայի հարուցած սպառնալիքն ավելին է, քան արմատական ահաբեկչության վրա ուշադրություն սևեռելու փորձը: Նպատակը երկշերտ է: Առաջինը՝ արթնացնել մուսուլմանադավան սփյուռքն ու ներգրավել այն «խաչակիրների» դեմ ուղղված «միացյալ խալիֆաթ» կոչեցյալ նախագծում: Երկրորդը՝ ցուցադրել արևմտյան մշակույթի հանդեպ ունեցած ատելությունն ու այն համոզմունքը, թե Ալ-Կաիդան ունակ է հաղթելու ամենահզոր տերությանը: Այստեղից հետևում է, որ վտանգը ոչ միայն ահաբեկչական հարձակումներն են, այլև Եվրոպայի մուսուլման բնակչությունն արմատականացնելու՝ որոշ խմբավորումների ջանքերը, ինչն իր հերթին անկարգություններ կառաջացնի այդ մարդկանց բնակության վայրերում³⁵: Ալ-Կաիդայի գաղափարաբանությունը համահունչ է Մեմյուել Հանթինգթոնի (Samuel Huntington's) այն եզրակացությանը, ըստ որի արմատական իսլամը միջազգային իրավակարգի գլխին կախված հաջորդ սպառնալիքն է³⁶: Չմոռանանք նաև Մայիդ Կուտբի այն պնդումը, որ իսլամն ու Արևմուտքը չեն կարող միմյանց հարմարվել և խաղաղ գոյատևել³⁷:

Մուսուլման բնակչությունը թիրախի տակ առնելիս արմատական իսլամիստների ռազմավարությունը բացառիկ մեթոդներ է ձեռնարկում՝ օգտագործելով մզկիթներ, ինտերնետ, տարաբնույթ միավորումներ ու հանձնակատար գիտնականների, որոնք արմատական գաղափարների տարածմամբ ձևավորում են ծայրահեղականություն և թշնամանք³⁸: Ավելին, Ալ-Կաիդան մեծ կշիռ ու փորձառություն ունի

³⁴ BBC News, "Threat video in Spain flat rubble, 2004," <http://news.bbc.co.uk/2/hi/europe/3613775.stm>. and BBC NEWS, "Al-Qaeda claims London bombings, 2005," http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/4262392.stm.

³⁵ Farmer B., Understanding radical Islam, New York, 2007, p. 185.

³⁶ Samuel Huntington, cited in Jeffrey Haynes, AL Qaeda: Ideology and action, Critical review of International Social and Political Philosophy, 2010, p. 185.

³⁷ Farmer Brian., նշվ. աշխ., էջ 86:

³⁸ Kilcullen D., The accidental Guerrilla, Carlton North, Victoria, Australia, 2009, p. 245. And Mitchell D. Silber and Arvin Bhatt, "Radicalization in the West: The homegrown Threat, 2007," New York Police Department,

մարդկանց մեջ արմատական գաղափարներ սերմանելու գործում և քարոզում է միանալ «անհավատների» ու նրանց դաշնակիցների դեմ պայքարին³⁹: Օրինակ՝ մադրիդյան պայթեցումների ետևում կանգնած է իսլամական մշակույթի կենտրոնը, հայտնի որպես «Սզկիթ 30», որն արմատական գաղափարներ է տարածում և հանցագործությունների կազմակերպման գործում համախոհ մարդկանց միավորելու մեծ կարողություն ունի⁴⁰: Նմանապես, Լոնդոնի Բիսթոնի մզկիթում (Beeston's Mosque) և մերձակա համայնքում արմատականները հաջողացրել են գետտո ստեղծել, որում շիհադը խոսակցությունների հիմնական նյութն է⁴¹: Ավելին, ԱՄՆ-ում իսլամական-արմատական բարեգործական կազմակերպությունները վեր են ածվում ահազնացող սպանալիքի տարածելով արմատական մտածողների գրվածքները, կազմակերպելով հավաքներ և երիտասարդ սերնդին արմատական հայացքներ քարոզող դասընթացներ և այլն⁴²:

Ուստի, անկախ նրանից, այդ տեսլականը հաջողություն ունի, թե ոչ, վերոնշյալ օրինակներից պարզ է դառնում, որ իրական սպանալիքը գալիս է գաղափարախոսությունից և նրանցից, ովքեր քարոզում են արմատական ուսմունք և ապրելակերպ: Որպես հետևանք՝ արևմտյան երկրների մուսուլման բնակչությունը սկսել է ավելի ակտիվորեն առաջ քաշել պատշաճ պայմաններում իսլամով կենցաղավարելու իր իրավունքները և եվրոպական իշխանություններից պահանջում է բացել իգական դպրոցներ, անասուններին մորթել համաձայն ծիսակարգի, պայքարում է գլխաշորով ծածկվելու սովորույթի պահպանման համար և այսպես շարունակ⁴³, ինչը հանգեցնում է Եվրոպայում արմատականության աճին, ինչն էլ Ալ-Կաիդայի՝ հակա-ահաբեկչության դեմ պայքարի մարտավարության ամենակարևոր

<http://scholar.google.com.au/scholar?hl=en&safe=off&q=radicalization%20of%20west&um=1&ie=UTF-8&sa=N&tab=ws>.

³⁹ Kilcullen D., *The accidental Guerrilla*, Carlton North, Victoria, 2009, p. 246.

⁴⁰ Silber Mitchell D., Bhatt Arvin, *Radicalization in the West: The homegrown Threat*, 2007, New York Police Department,

<http://scholar.google.com.au/scholar?hl=en&safe=off&q=radicalization%20of%20west&um=1&ie=UTF-8&sa=N&tab=ws>.

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում:

⁴³ Farmer B., *Understanding radical Islam*, New York, 2007, p. 186.

տարրերից է⁴⁴: Այսպիսով՝ արմատականներից եկող սպառնալիքի կորիզը աշխարհի տարբեր մասերում արմատական իսլամական ինքնության ձևավորումն է, այլ ոչ թե ինչ-ինչ թիրախներին ուղղված հարձակումները:

Հարկ է մատնանշել նաև եվրոպական պետությունների նախաձեռնած հակաարմատականացման ջանքերը, ինչը ցույց է տալիս, որ այդ երկրներում գիտակցում են հանրության ներսում ակտիվ գործող արմատական խմբավորումների հարուցած վտանգը: Օրինակ, Նիդեռլանդների իշխանությունները վտանգ են տեսնում ոչ միայն երկրի անվտանգության առումով, այլև նրանում, որ արմատականները ձգտում են հավաքագրել մուսուլման բնակչությանը, ինչը կարող է հանգեցնել լուրջ խնդիրների⁴⁵: Ըստ Դեյվիդ Քիլքալենի՝ արմատականության անարգել աճին նպաստող մեկ այլ գործոն է Ալ-Կաիդայի դեմ հակահաբեկչական պայքարի անարդյունավետությունը, քանի որ այդ կազմակերպությունն իր գաղափարախոսության միջոցով ներթափանցում է ակտիվ քաղաքականություն վարող բնիկ ցեղերի շրջանակ: Սա նշանակում է, որ Ալ-Կաիդան ոչ թե դասական ահաբեկչական խմբավորում է կամ անջատողական շարժում, այլ համաշխարհային ընդգրկման արմատական կազմակերպություն՝ սեփական գաղափարաբանությամբ և աշխարհի տարբեր կողմերում ունեցած աջակիցներով: Ուստի, նման կազմակերպության հետ գործ ունենալիս իշխանությունները պետք է առաջին հերթին մարտահրավեր նետեն դրա գաղափարաբանությանը և հանրությանը տեղյակ պահեն արմատականների որդեգրած միջոցների վնասակար և անթույլատրելի բնույթի մասին⁴⁶:

Երկրորդ խնդիրն Ալ-Կաիդայի թշնամական տրամադրվածությունն է ԱՄՆ-ի հանդեպ, որովհետև արմատական իսլամիստական գաղափարաբանությունն անհամատեղելի է արևմտյան մշակույթի հետ և Արևմուտքին համարում է հակառակորդ⁴⁷: Դրա պատճառով էլ ստեղծված հակամարտության ներկայնակում արմատական գաղափարաբանության առաջնահերթությունը մտածել է տալիս, որ Ալ-

⁴⁴ Նույն տեղում, էջ 226:

⁴⁵ Vision L., A preliminary Assessment of Counter-Radicalization in the Netherlands, 2008, CTC Sentinel, 12. <http://oai.dtic.mil/oai/oai?verb=getRecord&metadataPrefix=html&identifier=ADA493785>

⁴⁶ Kilcullen D., The accidental Guerrilla, Carlton North, Victoria, Australia, 2009, p. 265.

⁴⁷ Farmer B., նշվ. աշխ., էջ 86:

Կախիդան ոչ թե մի ահաբեկչական շարժում է, որը պայքարի է բռնվել ԱՄՆ-ի հետ մուսուլմանական հողերի ազատագրման համար, ինչպես կարծում է Ջեյսոն Բըրքը Ալ-Կախիդայի մասին՝ իբրև թե այն հեռու է գաղափարականությունից և քաղաքակրթությունների բախման ձևակերպումից, իսկ տարվող պայքարը զուտ քաղաքական է՝ պայմանավորված Արաբական թերակղզում օտարերկրյա ազդեցության առկայությամբ⁴⁸, այլ իրականում որովհետև ԱՄՆ-ը Արևմուտքի առաջատար երկիրն է, իսկ Ալ-Կախիդան կառուցում է մի գաղափարախոսություն, որը հակադրվում է հենց արևմտյան արժեքներին, դառնում դրանց թշնամին, ուստիև պայքարը ոչ թե տարածքային է կամ միտված թշնամուն վնասելուն, այլ գաղափարական⁴⁹: Իսկապես, ինչպես Բին Լադենն է ասում՝ «...ճակատամարտը Ալ-Կախիդա կազմակերպության և խաչակիրների միջև չէ, այլ մուսուլմանների իսլամի ժողովրդի և համաշխարհային խաչակիրների»⁵⁰: Ավելացնենք, որ Բուշի վարչակարգի կողմից ահաբեկչության խնդիրն ամբողջ իսլամի վրա առհասարակ ընդհանրացնելու քաղաքականությունը, մուսուլմանական ու արաբական երկրների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու անկարողությունը և իսլամը որպես թշնամի դիտարկելը⁵¹ առավել ևս ընդգծեցին այն, որ բախումը քաղաքակրթական է, իսկ սպառնալիքը գալիս է գաղափարաբանությունից, քանի որ արմատական իսլամը կոչ է անում թշնամուն փնտրել ի դեմս միջազգային իրավակարգի:

Եզրակացություն

Սույն աշխատությունը ցույց է տալիս, որ Ալ-Կախիդայի հարուցած սպառնալիքը զուտ բռնությունը չէ, այլ իսլամի բոլորովին նոր ընկալում հաստատելուն միտված գաղափարաբանությունը և վերջինս կյանքի կոչելու պատրաստականությունը: Շարադրանքի ընթացքում այլ ահաբեկչական կառույցների՝ արմատական իսլամիստական Համաս-ի համեմատությամբ բացահայտվեց Ալ-Կախիդայի առաջ քաշած արմատական իսլամիստական գաղափարաբանության բնույթը: Առաջինը, ծա-

⁴⁸ Burke J., նշվ. աշխ., էջ 21-23:

⁴⁹ Huntington S., *The Clash Of Civilizations and the Remaking of World Order*, New York, 1996, p. 212; and Haynes J., *AL Qaeda: Ideology and action*, *Critical review of International Social and Political Philosophy*, 2010, p.6.

⁵⁰ Lawrence B., *Messages to the world*, London, New York, 2005, p. 108.

⁵¹ Kellner D., *September 11 and Terror war: The Bush Legacy and the Risks of Unilateralism*, Lanham Maryland, United States, 2002, pp. 21-24.

գած լինելով հանդերձ միևնույն իսլամիստական արմատից, կենտրոնանում է Մերձավոր Արևելքում սիռնիզմի և Իսրայել պետության դեմ պայքարի վրա: Իսկ ինչ վերաբերում է Ալ-Կաիդային, այս հոդվածում ցույց տրվեց դրա գաղափարաբանության բացառիկությունը և այն քողարկված ուղերձը, որն առաջ է քաշվել ընդդեմ Արևմուտքի՝ ընդհանրապես, և մուսուլմանական կառավարությունների՝ մասնավորապես: Հակառակ ոմանց կարծիքի, թե իբր Ալ-Կաիդան ցանցեր և ազդեցիկ հնարավորություններ չունի և կենտրոնացած է բացառապես օտարերկրյա բանակների դեմ պայքարի վրա՝ շարադրանքի ընթացքում շեշտվեց Ալ-Կաիդայի գաղափարական վտանգը՝ ցույց տալով արմատական հեղինակների գրվածքները տարածելու և երիտասարդներին դրանցով կրթելու ու մուսուլմանական միության գաղափարին մասնակից դարձնելու համար ցանցեր ու տեխնոլոգիաներ գործածող մարտավարության կարևորությունը:

Աշխատության հաջորդ մասում ընդգծվեց միջազգային ասպարեզում արմատական իսլամի ի հայտ գալու փաստը, որի թիրախը հատկապես Մաուդյան Արաբիայի իշխող արքայատոհմն է, որը մեղադրվում է իսլամական ուսմունքին իրենց ցանկալի ձևով չհետևելու և, ինչն ամենից կարևորն է, շատերի կարծիքով իսլամի ամենամեծ թշնամու՝ ԱՄՆ-ի հետ առնչություն ունենալու մեջ: Դա իր հերթին նշանակում է, որ Ալ-Կաիդան սպառնալիք է ոչ միայն Մաուդյան Արաբիայում բնակվող ամերիկացիների կյանքին և անվտանգությանը, այլև անգամ իշխող արքայատոհմին, քանի որ վերջնանպատակն արմատականացված բնույթի Խալիֆաթի ստեղծումն է: Ավելին, Արևմուտքին հասցեագրված սպառնալիքը ոչ միայն բռնություն ու դաժանություն գործելն է և թշնամուն կործանել փորձելը, այլ նաև գործող ցանցերի և կազմակերպական բջիջների միջոցով արևմտյան երկրներում մուսուլման բնակչությանը ոտքի հանելու ձգտումն ու միասնական առաքելության մասին կոչը, ինչը կարող է լրջորեն ազդել իսլամական սփյուռքում արմատականության ահագնացման վրա: Հետևաբար՝ իրական վտանգն Արևմուտքում արմատականության գաղափարախոսության ի հայտ գալն է Ալ-Կաիդայի գործուն մասնակցությամբ: Այս իմաստով, Արևմուտքի համար Ալ-Կաիդայի սպառնալիքն այն է, որ նշմարվում է արևմտյան արժեքների և իսլամական աշխարհի միջև բախում առաջացնելու հստակ նպատակ: Սա է միջազգային անվտանգությանը նետված մարտահրավերը:

AL-QAEDA. THE THREAT OF NETWORK THINKING TO THE
INTERNATIONAL SECURITY

The purpose of this essay is to reveal the uniqueness of Al-Qaeda where it can be seen from different angles. Some put the stress only on as it is a classical terror organization that tries to create horror in Secular Arab states and a message to the West of its existence. The other notion, which I believe is more accurate, puts the stress on Al-Qaeda's philosophical ideology that the main issue is not related with terror per se, but a request to the Muslim World to restore Islamic Caliphate under Wahhabi understanding, taking into account, that Osama bin Laden, the founder of Al Qaeda, had been raised in Saudi Arabia, and his lecturers at the Islamic school were mainly advocates of Wahhabi-Salafi variant of Islam. It is worth mentioning that Al Qaeda uses high technology and has strong secrecy in recruiting members from all around the world. Moreover, they have secret members in most Arab countries who does not want to live under secular system and want to challenge the secular governments in all ways to return to the puritanical Islamic living which had been during the Prophet Muhammad. Interestingly, Al Qaeda set two kinds of enemies and tried to target both, "The near enemy" and "The far enemy". Near enemy understanding represents the Arab governments that have secular system and are in constant enmity towards Islamic groups (Syria, Egypt), and the far enemy is considered to be Western world (USA, Israel). Unfortunately, the American officials did not take al Qaeda seriously and they were capable of monitoring them against any terror operations. Things changed only after the "Sep 11" incident and as we know G.W. Bush declared war on terror. Islamic radicalism has the tendency to grow, as we have seen in Arab world after the so called "Arab spring". Secular governments must educate their illiterate people not to join these populist groups in order to keep countries safe.

ՀԱԿՈՒՅՑԱՆ ՏԱԹԵՎԻԿ

(ԵՊՀ)

ՄԱՐՈՎԿՆՑԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՍԱՀԱՐԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արևմտյան Սահարայի հիմնախնդրի էության, էվոյուցիայի և միջազգային հարաբերություններում ունեցած դերի ուսումնասիրությունը վկայում է այն փաստը, որ տվյալ հիմնախնդիրը Մադրիդի տարածաշրջանի ամենաբարդ և հակասական խնդիրներից մեկն է, որն առաջացել է նեո-գաղութատիրության կողմից Աֆրիկա մայրցամաքի բաժանման արդյունքում և բացասական ազդեցություն է ունենում ինչպես տարածաշրջանի, այնպես էլ միջազգային հարաբերությունների վրա: Ուստի, ուսումնասիրվող տարածաշրջանային հակամարտության արմատները գնում են դեպի գաղութային դարաշրջան, երբ գաղութային երկրները (Իսպանիա, Ֆրանսիա) կամայականորեն սահմանեցին տարածաշրջանի սահմանները՝ հաշվի չառնելով տեղի բնակչության՝ այդ թվում նաև սահարացիների կամքը¹:

Հակամարտությունը, սկիզբ առնելով 1970-ականներին, իր մեջ ներգրավել է տարածաշրջանային մի քանի դերակատարների՝ Մարոկկոյին, ՊՕԼԻՍԱՐԻՕ-ին², Ալժիրին և Մավրիտանիային, որոնցից յուրաքանչյուրը վարում է սեփական շահերին համապատասխան քաղաքականություն և խնդրի կարգավորման հարցում ունի միանգամայն տարբեր տեսակետ:

Արևմտյան Սահարայի խնդիրը մինչ օրս մնում է չկարգավորված, իսկ Սահարայի ժողովուրդը հնարավորություն չունի իրագործելու իր ազգային ինքնորոշման իրավունքը: Այս խնդրի շուրջ բախվում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ոչ տարածաշրջանային մի շարք երկրների շահեր, ինչն էլ դժվարեցնում է դրա կարգավորումն ու լարվածություն ստեղծում միջազգային հարաբերություններում:

¹ Huth Paul K.; Allee Todd L., The Democratic Peace and Territorial Conflict in the Twentieth Century, Cambridge University Press, Cambridge, UK, 2002, p. 225.

² ՊՕԼԻՍԱՐԻՕ-ն (Սեզիետ Ալ-Համրայի և Ռիօ-դե-Օրոյի ազատագրման Ազգային Ճակատի իսպաներեն տարբերակի առաջին տառերի հապավումն է Frente Popular de Liberación de Saguía el Hamra y Río de Oro) Արևմտյան Սահարայի հակամարտության մեջ ներգրավված կողմերից մեկն էր, որը ներկայացնում էր Սահարայի ժողովրդի շահերը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների պաշտոնական փաստաթղթերում, ՁԼՄ-ում այս տարածաշրջանային հակամարտության հետ կապված կարելի է հանդիպել երկու հասկացողության, որոնք մեկնաբանման կարիք ունեն: Դրանցից մեկը որպես աշխարհագրական տարածք ընկալվող, Իսպանիայի նախկին գաղութ Արևմտյան Սահարան է, որը Մադրիդյան համաձայնագրից հետո օկուպացվեց Մավրիտանիայի և Մարոկկոյի կողմից: Այս տարածքը հակամարտության պատճառ էր Մարոկկոյի թագավորության և Սահարայի ժողովրդի միջև, որի շահերը ներկայացվում էր ՊՕԼԻՍԱՐԻՕ-ի կողմից³: Աշխարհագրորեն հյուսիսում այն սահմանակցում է Մարոկկոյին, հարավ-արևելքում՝ Մավրիտանիային, հյուսիս-արևելքում՝ Ալժիրին, իսկ արևմտյան ափը ողողվում է Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Տարածքը՝ 284 հազար կմ² է⁴: Երկրորդ հասկացողությունը՝ սահարական «աքսորված» կառավարությունն է Ալժիրի տարածքում, որտեղ կենտրոնացած են սահարացի փախստականները⁵:

Այսպիսի շփոթություններից խուսափելու համար անհրաժեշտ է հակիրճ անդրադառնալ այս երկու հասկացողությունների մեկնաբանմանը.

Նախ՝ Արևմտյան Սահարայի ժողովուրդ ասելով հասկանում ենք այն մարդկանց, որոնք օկուպացված պայմաններում ապրում են մարոկկոյական ինքնավարության շրջանակներում և երազում անկախության մասին, իսկ ալժիրյան ճամբարներում հաստատված սահարացի փախստականների երազանքը հայրենի օջախ վերադառնալն է:

Արևմտյան Սահարայի հակամարտության ապակայունացնող ազդեցությունը Մադրիդի տարածաշրջանի, ինչպես նաև միջկառավարական հարաբերությունների վրա ստիպեց հակամարտող կողմերին 1980-ական թվականների սկզբին՝ ՄԱԿ-ի և ԱՄԿ-ի հովանու ներքո

³ Zunes S., Mundy J., Western Sahara: War, Nationalism, and Conflict Irresolution, New York: Syracuse University Press, 2010, p. 104.

⁴ حميد فرحان محمد الزاوي، الدول الافريقية ومشكلة الصحراء الغربية، مكتبة أسامة بن ١٩٨٧، صفحة ٨٥. زيد، حلب،

⁵ Ավելի քան 100 հազար սահարացիներ ապրում են Թինդուֆի ճամբարներում, որոնց գոյատևմանը նպաստում է միջազգային օգնությունը. առաջին հերթին ՄԱԿ-ի փախստականների հարցով զերագույն հանձնաժողովի, Պարենի համաշխարհային ծրագրերի և Կարմիր Խաչի միջազգային հանձնաժողովի կողմից հատկացվող օգնությունը: St u San Martín P., Western Sahara: The Refugee Nation, Cardiff: University of Wales Press, 2011, p. 155.

խնդրի խաղաղ քաղաքական կարգավորման ուղիներ որոնել: Արևմտյան Սահարա-Մարոկկո երկխոսությունը մի կողմից հակամարտող կողմերի՝ պատերազմի անհեռանկարային լինելու մասին գաղափարի ընդունման, իսկ մյուս կողմից՝ միջազգային հանրության միջամտության արդյունք էր, որը կոչ էր անում նրանց ՄԱԿ-ի և ԱՄԿ-ի հովանուներքո նստել խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ⁶: Այս երկխոսությունը կարևոր փորձ էր հակամարտող կողմերի համար ընդհանուր եզրեր գտնել մի շարք վիճելի հարցերի շուրջ, հեռանալ հին կարծրատիպերից և նորովի մոտեցումներ առաջադրել երկարատև փակուղուց դուրս գալու համար: Այնուամենայնիվ, չնայած միջազգային հանրության (ի դեմս ՄԱԿ-ի), ինչպես նաև տարածաշրջանային տարբեր կազմակերպությունների (ԱՄԿ-ի և ԱՊԼ) կողմից Արևմտյան Սահարայի խնդրի կարգավորմանն ուղղված հանդիպումներին, խորհրդակցություններին ու բանակցություններին՝ ճգնաժամը վերացնել չի հաջողվում: Եվ այս խնդրի հետ կապված մի շարք տարածայնությունների պատճառով է, որ Մարոկկոն, որպես բողոքի նշան Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետության՝ Աֆրիկյան միասնության կազմակերպությանը (ԱՄԿ) անդամակցելուն, 1984 թ. դուրս եկավ այդ կազմակերպության կազմից և մինչ օրս չի վերականգնել իր անդամակցությունը⁷:

Նման բարդ և խճճված խնդրի վերլուծության համար անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես տնտեսական, աշխարհաքաղաքական, ռազմական, գաղափարական գործոնները, այնպես էլ տարածաշրջանային և ոչ տարածաշրջանային ուժերի՝ այդ թվում ՄԱԿ-ի, ԱՊԼ-ի, ԱՄԿ-ի դիրքորոշումները տվյալ խնդրի վերաբերյալ: Սահարայի պե-

⁶ Sola-Martin A., *The United Nations Mission for the Referendum in Western Sahara*, London: Edwin Mellen Pr., 2006, p. 102.

⁷ 1982 թ. փետրվարի 22-ին Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետությունը մտավ Աֆրիկյան միասնության կազմակերպության կազմի մեջ (ներկայումս այս կազմակերպության տեղը զբաղեցրել է Աֆրիկյան միությունը): Մարոկկոն այդպես էլ չվերականգնեց իր անդամակցությունը, իսկ Սահարայի Արաբական Դեմոկրատական Հանրապետությունը (ՄԱԴՀ) պահպանեց իր անդամակցությունը նաև նոր միությանը: Տե՛ս The Council of Ministers of the Organization of African Unity Meeting in its Thirty eighth Ordinary Session in Addis Ababa, Ethiopia, from 22 to 28 February, 1982.

<http://www.au.int/en/content/addis-ababa-22-28-february-1982-council-ministers-organization-african-unity-meeting-in-its-thirty-eight-ordinary-session>

տականության հարցի լուծման նման համապարփակ մոտեցումը իրենից ենթադրում է հակամարտող կողմերի՝ ՊՕԼԻՍԱԼԻՕ-ի, Մարոկկոյի, ինչպես նաև ՄԱԿ-ի, ԱՄԿ-ի, համաշխարհային գերտերությունների աջակցությամբ դիտորդ երկրների՝ Ալժիրի և Մավրիտանիայի միասնական ջանքերի գործադրումը⁸:

Միջազգային ասպարեզում Արևմտյան Սահարայի տարածքի շուրջ հակամարտությունն ընդգրկում է երկու մակարդակ՝ տարածաշրջանային, որը շոշափում է առաջին հերթին հակամարտող կողմերի՝ Մարոկկոյի, ՊՕԼԻՍԱԼԻՕ-ի, Ալժիրի և Մավրիտանիայի միջև հարաբերությունները և գլոբալ, որն էլ արտահայտում է ԱՄՆ-ի, Ռուսաստանի Դաշնության, Եվրամիության և ԱՊԼ-ի շահագրգիռ անդամ երկրների շահերը⁹:

Ուսումնասիրելով հակամարտող հիմնական կողմերից մեկի՝ Մարոկկոյի դիրքորոշումը, կարևոր է առանձնացնել հետևյալ կետերը.

Նախ, հակամարտության պատմության ողջ ընթացքում Մարոկկոն կտրականապես հերքում էր Սահարայի ժողովրդի ինքնորոշման իրավունքի կիրառումը և պնդում, որ ինքն ունի պատմական, մշակութային և տնտեսական բոլոր հիմքերը հավակնելու Արևմտյան Սահարայի տարածքին: Այսպես, 1956 թ. անկախություն ձեռք բերելուց հետո Մարոկկոն իր իրավունքները ներկայացրեց այդ տարածքի նկատմամբ¹⁰: Ըստ Մարոկկոյի՝ «գաղութային համակարգի ոչնչացումը» Արևմտյան Սահարայի համար նշանակում էր ոչ թե հանրաքվեի միջոցով ամրագրված տարածքային ամբողջականություն, այլ ուղղակիորեն միացում մայր հայրենիքին՝ Մարոկկոյին¹¹:

Հաագայի միջազգային դատարանի վճռից հետո՝ 1975 թ. հոկտեմբերի 20-ին, Մարոկկոյի թագավոր Հասան II-ը հայտարարեց Արևմտյան Սահարայի տարածքի նկատմամբ իր իրավունքների օրինական լինելու

⁸ Zoubir Yahia H., Stalemate in Western Sahara: Ending International Legality, Middle East Policy. Vol. XIV, No. 4, Winter 2007, p. 160.

⁹ محمود حداد. الصحراء الغربية بين مشكلة الانضمام والانفصال، مركز دراسات الوحدة العربية، صفحة ١١٥. بيروت، ١٩٨٧.

¹⁰ Подгорнова Н., Проблема Западной Сахары в политике Марокко, Институт Ближнего Востока, Москва, 1978. с. 132.

¹¹ Von Hippel K., The Non-Interventionary Norm Prevails: an Analysis of the Western Sahara, The Journal of Modern African Studies, Issue No. 33, Vol.1, 1995, p. 68.

մասին¹²: Մինչդեռ դատարանը իր գեկույցում նշել էր, որ որևէ պատմական նախադրյալ չկար, որը թույլ կտար ենթադրել, թե եղել է մի ժամանակ, երբ Արևմտյան Սահարայի տարածքը Մավրիտանիայի և Մարոկկոյի տարածքի մի մասն է կազմել¹³:

Հետագայում, արդեն 1975 թ. նոյեմբերին կնքված «Մադրիդյան համաձայնագրով» Իսպանիան, ստանալով Արևմտյան Սահարային և Մարոկկոյին պատկանող ջրերում ձկնորսության քվոտայի ընդլայնում և պահպանելով Մարոկկոյի սահմանային քաղաքների՝ Սեուտայի և Մելիլայի վրա իր վերահսկողությունը, հրաժարվում է Արևմտյան Սահարայից: Այդ համաձայնագրով Արևմտյան Սահարայի ժամանակավոր ղեկավարման կազմի մեջ մտան Մարոկկոն և Մավրիտանիան: Դրությունը զգալիորեն բարդացավ, քանզի Մարոկկոն իր բանակային ստորաբաժանումները տեղակայեց Սահարայի հյուսիսային շրջաններում՝ Էլ-Այուն, Սմարա քաղաքներում, իսկ Մավրիտանիան՝ հարավային շրջաններում՝ Գյուրեա քաղաքում¹⁴:

ՊՕԼԻՍԱՐԻՕ-ն հանդես եկավ Արևմտյան Սահարայի բաժանման դեմ և ակտիվ զինված գործողություններ ծավալեց Մարոկկոյի և Մավրիտանիայի զորքերի դեմ¹⁵: Սկսված ազգային-ազատագրական պայքարը վտանգավոր էր դառնում Մարոկկոյի համար, քանզի վերջինս չէր կարող դիմակայել հնարավոր ֆինանսական դժվարություններին: Ուստի, 1984 թ. օգոստոսին Հասան II-ը Արևմտյան Սահարայի հարցում ռազմական աջակցություն ստանալու նպատակով դաշինք կնքեց Լիբիայի հետ: Այն արաբա-աֆրիկյան բնույթ ուներ, քանի որ դրա մեջ կարող էր մտնել ցանկացած արաբական կամ աֆրիկյան երկիր¹⁶: Դաշինքի կնքմամբ Մարոկկոյի թագավորը ոչ միայն տարածաշրջանային նպատակներ էր հետապնդում (հակադրվել Ալժիրին և չեզոքացնել Լիբիային), այլև ներքաղաքական (դաշինքի կնքմամբ նա կչեզոքացներ Տրիպոլիի կողմից ընդդիմությանը տրամադրվող աջակցությունը): Համաձայն դաշինքի Լիբիան դադարեց օժանդակել

¹² Cooper Daniel R., Morocco & the Conflict in Western Sahara, Nova Science Publishers, New York, 2013, p. 261.

¹³ Նույն տեղում, էջ 272:

¹⁴ Наумкин В.В., Новейшая история арабских стран Африки (1917-1987), Москва, Наука. Главная редакция восточной литературы, 1990, с. 416.

¹⁵ صلاح الدين حافظ، حرب البوليساريو، دار الوحدة، بيروت، 1981، صفحة 281.

¹⁶ Joseph R., State, Conflict, and Democracy in Africa, Boulder, CO.: Lynne Rienner Publishers, 1999, p. 123.

ՊՕԼԻՍԱՐԻՕ-ին¹⁷: Սակայն այս համաձայնությունը տևեց երկու տարի. Մարոկկոյի և Լիբիայի միջև դիվանագիտական հարաբերությունները խզվեցին 1986 թ., որի հիմնական պատճառը Հասան II-ի և Իսրայելի վարչապետի հանդիպումն էր, որը Կադդաֆին համարեց դավաճանություն¹⁸:

Երկրորդ երբ անդրադարձ է կատարվում Մարոկկոյի թագավորության դիրքորոշմանը, չի կարելի անտեսել այն փաստը, թե ինչպես է Մարոկկոն վերաբերվում իր հակառակորդ ՊՕԼԻՍԱՐԻՕ-ին: Ինչպես հայտնի է, ՄԱԿ-ը բազմիցս փորձել է հակամարտող կողմերին՝ Մարոկկոյի և ՊՕԼԻՍԱՐԻՕ-ի ներկայացուցիչներին, նստեցնել խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ: Սակայն նման բանակցությունների անցկացման հիմնական խոչընդոտն այն է, որ կողմերից մեկը (տվյալ դեպքում ՊՕԼԻՍԱՐԻՕ-ի ճակատը) իրեն ներկայացնում է որպես ազատագրական շարժում, իսկ մյուս կողմը (տվյալ դեպքում Մարոկկոն) ընկալում է Ազգային ճակատին ոչ թե որպես ազատագրական շարժում, այլ՝ ահաբեկչական, անջատողական կազմակերպություն¹⁹: Այս փաստը դժվարացնում է բանակցությունների անցկացման գործընթացը, քանի որ միջազգային իրավունքի տեսանկյունից ահաբեկչական կազմակերպությունների հետ անմիջական բանակցությունների անցկացումը չի կարող օրինական համարվել:

Երրորդ գործոնը, որն անհրաժեշտ է հաշվի առնել Մարոկկոյի դիրքորոշման ուսումնասիրման շրջանակներում, այն պայմանների հաստատակամությունն է, որոնք պնդում է մարոկկոյական կողմը: Մարոկկոն միշտ էլ առաջ է քաշել խնդրի լուծման երկու տարբերակ: Առաջին տարբերակը ենթադրում է Արևմտյան Սահարայի միավորում Մարոկկոյի թագավորությանը՝ այն պայմանով, որ Սահարային կտրվի լիակատար ինքնավարություն, իսկ խնդրի լուծման երկրորդ տարբերակը ենթադրում է առանց որևէ լրացուցիչ պայմանների Մարոկկոյի կողմից Արևմտյան Սահարայի տարածքի յուրացում²⁰:

Եվ վերջապես վերջին, ոչ պակաս կարևոր գործոնը Արևմտյան

¹⁷ Joseph R., նշվ. աշխ., էջ 127:

¹⁸ محمد عايد الجابري، وحدة المغرب العربي، مركز دراسات الوحدة العربية، بيروت، ١٩٨٧، صفحة ٢١.

¹⁹ Pazzanita Anthony G., Morocco versus Polisario: A Political Interpretation, The Journal of Modern African Studies, Vol. 32, No. 2, 1994, pp. 265-266.

²⁰ Висенс Е., Западная Сахара: Преданная независимость. Сборник исследований и документов по современной истории Сахарской Арабской Демократической Республики, М.: REGNUM, 2007, с. 18.

Սահարայում բնական և հանքային պաշարների առկայությունն է, որն էլ արժևորում է այս տարածքի կարևորությունը միջազգային ասպարեզում: Արևմտյան Սահարայի օկուպացված տարածքը հարուստ է ֆոսֆատի, երկաթի, ուրանի, տիտանի (որոշ տեղեկությունների համաձայն՝ նաև նավթի) և ձկան պաշարներով²¹: Ուստի Մարոկկոյի Սահարայի տարածքը իրեն միավորելու ձգտման հիմնական գործոնները, պատմական փաստարկներից բացի, բնական ռեսուրսներն ու տնտեսական հնարավորություններն են: Այսօր մարոկկոյացիներն ակտիվորեն տնօրինում են Ատլանտյան ափի՝ իրենց կողմից վերահսկվող տարածքը, այսպես կոչված՝ «օգտակար եռանկյունին», որն ընկած է Էլ-Այունի, Սմարայի և Բու-Կրաայի միջև, որոնք հարուստ են ֆոսֆատի հանքերով: Մարոկկոյի ֆոսֆատի խոշոր ներկրողներն են ԱՄՆ-ն, Ավստրալիան, Մեքսիկան և Նոր Զելանդիան²²: Մարոկկոյում տարեկան արտադրվում է 30 միլիոն տոննա ֆոսֆատ, որից 3 միլիոն տոննան՝ Բու-Կրաա՝ երրորդ ամենամեծ հանքավայրում²³:

Իհարկե, տարածաշրջանի բնական հարստությունները միակ գործոնը չեն այդ տարածքի համար մղվող պայքարում: Սակայն նավթային գործոնը վերջին տարիներին Արևմտյան Սահարայի խնդրի կարգավորմանը խոչընդոտող կենտրոնական հարցերից է: Երկու կողմերն էլ՝ ՊՕԼԻՍԱԼԻՕ-ն և Մարոկկոն, համոզված են, որ իրավասու են տնօրինելու տարածաշրջանային նավթային պաշարները, ուստի շոայլորեն արտոնագրեր են տալիս արևմտյան մի շարք նավթային ընկերություններին, ինչպիսիք են EnCore Oil, Comet Petroleum, TGS-Nowep, Kerr-McGee ընկերությունները²⁴: Ֆրանսիական «Total Fina Elf» և ամերիկյան «Kerr-McGee» նավթային ընկերությունները 2001 թ. համաձայնագիր ստորագրեցին Մարոկկոյի հետ՝ Սահարայի ծովափնյա հատվածում նավթային ռեսուրսների ուսումնասիրման և մշակման վերա-

²¹ Haugen Hans M., The Right to Self-Determination and Natural Resources: The Case of Western Sahara, Vol. 3, No.1, Law, Environment and Development Journal, 2007, p. 79.

²² Pinto Leite P., Olsson C., The Western Sahara conflict: the role of natural resources in decolonization, Current African Issues, No. 33. Uppsala, Sweden: The Nordic Africa Institute, 2006, p. 30.

²³ Haugen Hans M., նշվ. աշխ., էջ 80:

²⁴ Shelley T., Endgame in the Western Sahara: What Future for Africa's Last Colony, Zed Books, London, 2004, p. 63.

բերյալ²⁵: Իրենց հերթին ՄԱԴՀ-ի ղեկավարները նույնպես չեն հապաղում. 2002 թ. պայմանագիր կնքեցին բրիտանա-ավստրիական «Fusion Oil» ընկերության հետ²⁶: Իսկ արդեն 2006 թ. սկզբներին, ըստ Europe Press-ի գործակալության տվյալների՝ ՄԱԴՀ-ը ճակատի կողմից վերահսկվող տարածքի նավթային ռեսուրսների ուսումնասիրման և մշակման համար զիջումներ տրամադրելու մրցույթ է անցկացրել: Ինչպես նաև կան տվյալներ, որ ՊՕԼԻՍԱՆԻՕ-ի հետ բանակցում են արդեն 6 բրիտանական նավթային ընկերություններ²⁷:

Այսպիսով, Մարոկկոն մինչ օրս կտրականապես մերժում է Արևմտյան Սահարայի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Եվ ամենամեծ զիջումն այն է, որ այսօր պաշտոնական Ռաբատը պատրաստ է սահարացիներին տալ լիարժեք ինքնավարություն իր թագավորության ներքո²⁸: Մակայն լայն ինքնավարության կամ տարածքի բաժանման մասին խոսակցությունները, որոնք թույլ կտային սահարացիներին ստեղծելու իրենց պետությունը Արևմտյան Սահարայի հարավային շրջաններում, անիրատեսական են՝ մի շարք պատճառներով պայմանավորված: Նախ՝ սահարացիները կտրականապես դեմ են ապրելու Մարոկկոյի իշխանության ներքո. լինի դա ֆեդերացիայի, կոնֆեդերացիայի կամ էլ «ընդլայնված ինքնավարության» տեսքով: Բացի այդ, եթե մի պահ հայացք գցենք այս հարցի վրա միջազգային իրավունքի տեսանկյունից, ապա կտեսնենք, որ Արևմտյան Սահարայի հարավային շրջանները վերադարձվել էին ՊՕԼԻՍԱՆԻՕ-ին Մավրիտանիայի հետ խաղաղության համաձայնագրի կնքումից և այդ շրջաններից մավրիտանական զորքերի դուրս գալուց հետո²⁹: Հետևաբար, այդ շրջանները

²⁵ Նույն տեղում, էջ 65:

²⁶ Jordi Vaquer i Fanes, The European Union and Western Sahara, European Foreign Affairs Review, Vol. 9, No. 1, 2004, p. 93.

²⁷ راغب السرجاني. الصحراء الغربية، المغرب أم البوليساريو، مجلة العلوم الاجتماعية، المغرب، ٢٠٠٩/٠٥/٢٨، صفحة ١٨.

²⁸ International Crisis Group. Western Sahara: Out of the Impasse. Middle East/North Africa, Report 66 (June 11,2007). Brussels: ICG, p. 10.

[http://www.crisisgroup.org/~media/Files/Middle%20East%20North%20Africa/North%20Africa/Western%20Sahara/66_western_sahara_out_of_the_impasse.pdf](http://www.crisisgroup.org/~/media/Files/Middle%20East%20North%20Africa/North%20Africa/Western%20Sahara/66_western_sahara_out_of_the_impasse.pdf)

²⁹ 1979 թ. օգոստոսի 5-ին Մավրիտանիայի և ՊՕԼԻՍԱՆԻՕ-ի միջև կնքվեց պայմանագիր, որով Մավրիտանիան իր կողմից օկուպացված տարածքը հանձնեց ՊՕԼԻՍԱՆԻՕ-ին և պաշտոնապես հայտարարեց, որ Արևմտյան Սահարայի նկատմամբ տարածքային կամ որևէ այլ պահանջ չունի: Արդյունքում, 1984 թ. փետրվարի 27-ին Մավրիտանիան պաշտոնապես ճանաչեց ՄԱԴՀ-ը:

Մարոկկոյի կողմից չեն կարող առևտրի առարկա հանդիսանալ, քանի որ դրանք միջազգային համաձայնագրերի հիման վրա պատկանում են սահարացիներին:

Փաստորեն, մոտ մի քանի տասնամյակ է, ինչ Արևմտյան Սահարայի հիմնահարցը գոյություն ունի, իսկ ՄԱԴԶ-ը դասվում է չճանաչված պետությունների շարքին: Չնայած հակամարտող հիմնական կողմերի միջև բանակցություններն ընդհատված են, այնուամենայնիվ, սխալ կլինի ենթադրել, թե հակամարտությունը վերջնական փակուղի է մտել: Միաժամանակ, հարկ է նշել, որ Արևմտյան Սահարայի խնդիրը լուրջ մարտահրավեր է մադրիբյան միասնությանը, քանի որ տարածաշրջանի պետությունները տարբեր դիրքորոշումներ ունեն տվյալ խնդրի նկատմամբ. եթե Մարոկկոն ՊՕԼԻՍԱՐԻՕ-ին դիտում է որպես անջատողական կազմակերպություն, ապա Ալժիրն այն համարում է ազատագրական շարժում: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարոկկոն և Ալժիրը համարվում են տվյալ տարածաշրջանի առանցքային երկրները, ապա մադրիբյան միասնության վերաբերյալ ցանկացած բանակցություն՝ առանց Սահարայի խնդրի արդարացի կարգավորման, կկորցնի իր իմաստային արժեքը:

HAKOBYAN TATEVIK

(YSU)

MOROCCO'S POSITION ON THE ISSUE OF WESTERN SAHARA

The Western Sahara is one of the few areas of the world officially recognized by the United Nations as being non-self-governing. Since the beginning of the conflict, a great number of states and organizations such as Spain, Morocco, Mauritania, Algeria, Polisario, the Organization of African Union, the United Nations, France, the United States, Saudi Arabia and the Soviet Union have all, in some way, been involved in the conflict. However, since Spain's withdrawal from the territory in 1975, Western Sahara has been home to a seemingly interminable conflict in which Morocco has laid claim to the territory once known as the Spanish Sahara.

St' u Rothchild D., *Managing Ethnic Conflict in Africa Pressures and Incentives for Cooperation*, Brookings Institution, Washington, DC, 1997, p. 125.

Western Sahara is rich by titanium, vanadium, iron, phosphates. Minerals and fishing are two primary reasons for Morocco's claims in Western Sahara.

Morocco's claims on the territory rely on the fact that the Western Sahara is part of the Greater Maghreb. The Moroccan monarchy claims that historical economic, religious, and military ties between the Moroccan sultan and the Saharawi tribal councils prove that Morocco has always exercised authority over the Western Sahara.

Morocco's position is that any kind of independence is unacceptable, as this would undermine the territorial integrity of the Moroccan state. Morocco believes that the nationalism of the Saharawi people has been exaggerated, and that the conflict springs more from historic Algerian-Moroccan rivalry and the generous support Algeria has provided the Polisario Front than from any legitimate Saharawi desire for freedom or independence.

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԱԿԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (2010-2016 ԹԹ.)

Թուրքիայի քաղաքական կյանքում բանակն ավանդաբար վճռորոշ դեր է խաղացել: Բանակ-քաղաքացիական իշխանություն հարաբերությունները բնութագրող տեսությունները և Թուրքիայում իրականացված ռազմական հեղաշրջումներն ու դրանց հետևանքները ցույց են տալիս, որ Թուրքիայի Հանրապետության պարագայում այդ հարաբերությունները հիմնականում կարելի է բաժանել երկու մեծ փուլի, որոնցից մեկը մյուսի տրամաբանական շարունակությունն է.

1. Երբ բանակը ստանձնել է իշխանական գաղափարախոսությունն առաջ տանելու հենասյան դերը՝ լինելով սերտաձած քեմալական համակարգին,
2. Բանակը միջամտել է պետական-քաղաքական գործընթացներին՝ հանդես գալով նույն քեմալական համակարգի պահպանման դիրքերից:

2-րդ կետն առավելապես բնութագրում է Թուրքիայում 1960 թ. ռազմական հեղաշրջմանը հաջորդած շրջանը, ընդհուպ մինչև 2000-ական թթ. առաջին տասնամյակն ընկած ժամանակահատվածը¹: Ըստ թուրք միջազգայնագետ Յափրաք Գյուրսոյի՝ մասնավորապես հենց սահմանադրությամբ բանակին հատկացված լիազորություններն էին թույլ տալիս միջամտել քաղաքացիական իշխանությունների քայլերին, թելադրել իրենց կանոնները²: Իրավիճակը սկսում է փոխվել 1999 թ. Հելսինկիի գագաթնաժողովում Թուրքիային Եվրամիության անդամակցության «թեկնածու» երկրի կարգավիճակ տալուց հետո: Սրան հաջորդում են Եվրամիության պահանջով իրականացված մի շարք

¹ Այդ ընթացքում մի քանի անգամ փոփոխվել է 1924 թ. ընդունված առաջին սահմանադրությունը: 1961 և 1983 թթ. ընդունված սահմանադրությամբ լայն իրավունքներ էին հատկացվել բանակին: Հատկապես վերջինն ընդունված է անվանել «ռազմականացված» սահմանադրություն:

² Yaprak G., "Türkiye'de Sivil-Asker İlişkilerinin Dönüşümünün Sebepleri", Uluslararası İlişkiler, Cilt 11, Sayı 43 (Güz 2014), p. 157-180.

սահմանադրական փոփոխություններ³: Բյուլենթ էջնիթի կոալիցիոն կառավարության օրոք մեկնարկած փոփոխությունները շարունակում է կյանքի կոչել 2002 թ.-ից Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (այսուհետ՝ ԱԶԿ): Նշվածների մեջ կարևոր տեղ ունեն բանակի իրավասությունների սահմանափակմանն ուղղված քայլերը: Դրանցից թերևս ամենակարևորը Թուրքիայի «Ազգային անվտանգության խորհրդում» զինվորականների ներկայացվածության կրճատումը և քաղաքացիական մեծամասնության սահմանումն էր⁴: Պակաս հանգուցային չէր նաև պետականվտանգության դատարանների վերացումը, որտեղ մինչև 1999 թ. ներկայացված էր նաև բանակը⁵: Սույն շրջանի սահմանադրական և օրենսդրական փոփոխությունները կարելի է բաժանել երկու փուլի, որոնցից մեկը մյուսի անմիջական շարունակությունն է.

- 1999-2010 թթ. փոփոխությունները հիմնականում ուղղված էին քաղաքացիական կյանքում բանակի դերի սահմանափակմանը,
- 2010 թ. սահմանադրական և հետագա տարիների օրենսդրական փոփոխություններն արդեն ուղղված էին բանակի վրա քաղաքացիական և քաղաքական վերահսկման մեխանիզմների սահմանմանը

1999-2004 թթ. փոփոխությունները բանակին զրկել էին մի շարք արտոնություններից, սակայն 2007 թ. նախագահական ընտրություններին ուղեկցած միջադեպերը ցույց տվեցին, որ Թուրքիայի զինված ուժերի (այսուհետ՝ ԶՈւ) հրամանատարությունը դեռևս

³ 2003 Regular Report on Turkey's progress towards accession. p.19, ԵՄ պաշտոնական կայք. http://ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2003/rr_tk_final_en.pdf (Հասանելի է՝ 13.11.2016):

⁴ Տե՛ս Հովսեփյան Լ., Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդն արդի բարեփոխումների համատեքստում, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, N 4, Ռ.Սաֆրաստյանի խմբ., Երևան, 2006, էջ 114-123:

⁵ Թուրքիայի պետականվտանգության դատարանները նախատեսված էին «տարածքային և ազգային ամբողջականության, ժողովրդավարական կարգերի, սահմանադրությամբ որոշակիացված պետության դեմ գործողությունների, արտաքին և ներքին քաղաքականության դեմ անմիջական օրինախախտումների դեմ պայքարելու համար»: Türkiye Cumhuriyeti Anayasasının Bazı Maddelerinde Değişiklik Yapılması Hakkında kanun. 22.5.2004, Sayı 25469.

<https://anayasa.tbmm.gov.tr/docs/1982/1982-9/9-degisiklik.pdf> (Հասանելի է՝ 13.11.2016):

հարաբերականորեն ինքնուրույն էր և կարող էր միջամտել քաղաքական գործընթացներին: ԱԶԿ-ի քաղաքականությունն իր տրամաբանական շարունակությունը գտավ 2010 թ. սահմանադրական փոփոխություններում⁶: Բանակին վերաբերող մասով փոփոխությունների հիմքում դրվեց երեք հիմնական կետ՝

- Սեպտեմբերի 12-ի հեղաշրջման պատասխանատուների դատապարտմանը խոչընդոտող 15-րդ «Ժամանակավոր հոդվածը» հանվեց սահմանադրությունից⁷:
- Զինվորական դատարանների իրավասությունների շրջանակները նեղացվեցին. ոչ ռազմական, պետության անվտանգության, սահմանադրության դեմ հանցագործությունների համար զինվորականները պետք է դատվեն քաղաքացիական դատարաններում: Բացառությամբ պատերազմական իրադրության՝ ոչ զինվորական անձինք չեն կարող դատվել զինվորական դատարաններում: Զինվորականները կարող են Բարձրագույն ռազմական դատարանի որոշումները բողոքարկել քաղաքացիական դատարաններում:
- Թուրքիայի Բարձրագույն ռազմական խորհրդի (YAS, ԲՌԽ) վճիռները ենթակա են բողոքարկման՝ բացառությամբ զինվորականների պաշտոնը, կոչումը բարձրացնելու և հաստիքի բացակայության պատճառով թոշակի ուղարկելու վճիռները:

Մասնավորապես զինվորական դատարանների և ԲՌԽ իրավասությունների նեղացումը, մեր կարծիքով, ուղղված էր բանակի շարքերում իշխող կուսակցության գաղափարախոսությանը սատարող անձանց ներդրման դյուրացմանը: Նախկինում «հետադիմական իսլամին» հարելու մեղադրանքով զինվորականները դատվում էին ռազմական դատարաններում կամ պարզապես ԲՌԽ որոշմամբ ազատվում աշխատանքից՝ առանց որևէ տեղ բողոքարկելու իրավունքի: Նոր սահմանադրությամբ վերջիններս իրավունք են ստանում վճիռը

⁶ Türkiye Cumhuriyeti Anayasasının bazı maddelerinde değişiklik yapılması hakkında kanun, Kanun No. 5982, Kabul Tarihi: 7/5/2010, <http://www.anayasa.gen.tr/5982.htm> (Տեսանելի է՝ 15.11.2016):

⁷ Ընդամենը երկու տարի անց քրեական գործ է հարուցվում 1980 թ. ռազմական հեղաշրջման կազմակերպիչների նկատմամբ, ձերբակալվում են 1997 թ. հեղաշրջման մասնակից սպաներ: 12 Eylül iddianamesi kabul edildi, [http://www.cumhuriyet.com.tr/haber/diger/311736/12 Eylül iddianamesi kabul edildi.html](http://www.cumhuriyet.com.tr/haber/diger/311736/12_Eylul_iddianamesi_kabul_edildi.html) (Հասանելի է՝ 25.12.2016 թ.):

բողոքարկել քաղաքացիական դատարաններում, որոնք մեծամասամբ գտնվում են իսլամամետ իշխանությունների հսկողության ներքո:

Բանակի իրավասությունների կրճատումը միայն սահմանադրական փոփոխությամբ չի սահմանափակվում: Այս տեսանկյունից հանգուցային էր նաև 2013 թ. Թուրքիայի ՁՈւ ներքին ծառայության կանոնադրքում 35-րդ հոդվածի փոփոխությունը⁸: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա գործընթացները՝ սահմանադրական և օրենսդրական այլ փոփոխությունները նույնիսկ չկարողացան Թուրքիային հեռու պահել ռազմական հեղաշրջման փորձից:

Այսպես՝ 2016 թ. հուլիսի 15-ին Թուրքիայի ՁՈւ հրամկազմի և ստորաբաժանումների մի մասը փորձեցին նոր ռազմական հեղաշրջման միջոցով տապալել ԱԶԿ կառավարությունը: Թեև բանակն ամբողջությամբ չներգրավվեց, սակայն հիմնական իրականացնողները բանակային ստորաբաժանումներ և հրամկազմի ներկայացուցիչներ էին: Արդեն 2016 թ. դեկտեմբերին իշխող կուսակցությունն առաջ քաշեց սահմանադրական փոփոխությունների նոր փաթեթ⁹, որի 18 կետերը այդ երկրի խորհրդարանում ընդունվեցին 2017 թ. հունվարին, իսկ ապրիլին պետք է դրվեն հանրաքվեի: Նոր փաթեթով բանակին վերաբերող փոփոխությունները¹⁰ հիմնականում հետևյալն են՝

⁸ TSK İç Hizmet Kanunu'nun 35. maddesi değişti, Cnn Türk, 13.07.2013, <http://www.cnnturk.com/2013/turkiye/07/13/tsk.ic.hizmet.kanununun.35.maddesi.degist/715269.0/>: Այս հոդվածով Թուրքիայի ՁՈւ-ն իրավունք էր ստանում խառնվել քաղաքացիական կառավարման գործընթացներին՝ «եթե սահմանադրական կարգին վտանգ է սպառնում»: Սա բանակին թույլ էր տալիս իրավական հիմքեր ստեղծել ռազմական հեղաշրջումներ իրականացնելու համար:

⁹ Թուրքիայի սահմանադրական փոփոխությունների նախնական նախագիծը: խորհրդարանական քննարկումների արդյունքում 21 հոդվածից քվեարկության դրվել է 18-ը: 5-րդ, 14 և 15-րդ հոդվածները հանվել են նախագծից: <http://www2.tbmm.gov.tr/d26/2/2-1504.pdf>:

¹⁰ Սահմանադրական փոփոխության փաթեթի նախնական տարբերակով նաև սահմանվում էր, որ «Թուրքիայի նախագահը ՁՈւ գերագույն զլխավոր հրամանատարն է»: Այս կետում հանվել էր «ԹԱՄԺ անունից» հատվածը, սակայն քննարկումների ընթացքում այդ դրույթը մնում է անփոփոխ: Սա կարող ենք նաև ետքայլ համարել, քանի որ նախագահն այնուամենայնիվ որոշակի առումով պետք է պատասխանատու լինի նաև խորհրդարանի առջև: Anayasa değişikliği teklifi 18 maddeye düşürüldü, <http://t24.com.tr/haber/anayasa-degisikligi-teklifi-18-maddeye-dusuruldu,380048> (Հասանելի է՝ 01.02.2017 թ):

- Չինվորական դատական համակարգի վերացում¹¹ (բացառությամբ պատերազմական իրադրության)
- Բարձրագույն ռազմական խորհրդի բոլոր որոշումները կարող են քննարկվել քաղաքացիական դատարաններում,
- Հանվում է արտակարգ իրավիճակների դեպքում հայտարարվող ժամանակավոր իշխանության այն տեսակը, որը զինվորականներին տեղերում թույլ էր տալիս նաև քաղաքական իշխանության լծակները ստանալ (sikiyönetim):

Նախորդ փոփոխությամբ ԱԶԿ-ն արդեն սահմանափակել էր զինվորական դատարանների իրավասությունները, սակայն 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձը ցույց տվեց, որ այդ դատարանների շարքերում ևս կային իշխող վարչակարգին դեմ շրջանակներ¹²: ԲՌԽ-ի հիմնական որոշումները մինչ այս էլ հնարավոր էր բողոքարկել քաղաքացիական դատարաններում, բացառությամբ հիմնականում հաստիքի բացակայության պատճառով թոշակի ուղարկելու վճիռները: Ըստ էության այս երկու կետով փոփոխություններն էլ բխում են բանակի ինքնավարության վերացման շարունակական քաղաքականությունից¹³:

Անդրադառնալով նշված կետերին՝ հայտնի թուրք իրավագետ Ա. Ուլուսոյը նշում է, որ անկասկած սա ավելի շատ քաղաքական որոշում է: Ըստ նրա՝ Թուրքիայի իշխանությունները չեն ցանկանում, որպեսզի նման «զգայուն» պայմաններում երկրի որևէ հատվածում իշխանությունն անցնի զինվորականներին¹⁴: Այս տեսանկյունից առանցքային է համարվում «արտակարգ դրությանը» վերաբերող կետում կատարված փոփոխությունը: Եթե սահմանադրական փոփոխություններն ընդուն-

¹¹ Այս մասին Թուրքիայի վարչապետը հայտնել էր անմիջապես հեղաշրջման փորձից հետո: https://www.youtube.com/watch?time_continue=2351&v=cuTuLdikiK8 (Հասանելի է՝ 02.02.2017 թ.):

¹² 2016 թ. հոկտեմբերի 29-ի դրությամբ հեռացվել և ձերբակալվել է 109 զինվորական դատավոր և դատախազ: Türk Silahlı Kuvvetleri Personel Kanunu ile Bazı Kanunlarda Değişiklik Kanunu. Թուրքիայի պաշտոնական տեղեկատու, 29.10.2016 թ.:

¹³ Էրդողանը պատրաստվում է դառնալ Թուրքիայի միանձնյա ղեկավար՝ հսկողության տակ վերցնելով նաև ՋՈւ-ն, <http://razm.info/93447> (հասանելի է՝ 01.02.2017 թ.):

¹⁴ Ulusoy A.D., Aralık 2016 Anayasa Teklifi Neler Getiriyor, Neler Götürüyor? <http://www.anayasa.gen.tr/ulusoy-anayasa-degisikligi.pdf>: (Հասանելի է՝ 01.02.2017 թ.):

վեն՝ Թուրքիայում քաղաքացիական պատերազմի, պատերազմական իրադրության և այլ արտակարգ իրավիճակների դեպքում կարող է հայտարարվել միայն «արտակարգ դրություն» (OHAL): Այդ պարագայում իշխանությունն ամբողջությամբ մնում է քաղաքացիականների ձեռքում, իշխող վարչակարգի իրավասություններն անհամեմատելիորեն ավելանում են: Այստեղ կարևոր է, որ գործող սահմանադրության համաձայն 2015-16 թթ. Թուրքիայի տարբեր նահանգներում «Քրդստանի աշխատավորական կուսակցության» (PKK) դեմ ռազմական գործողությունների շրջանակներում սահմանվել էր հենց «ռազմական դրություն» տարբերակը: Նշված պայմաններում Թուրքիայի բանակը այդ տեղերում ստանում է օրենքով սահմանված մի շարք արտոնություններ, հիմնում է «արտակարգ կառավարման դատարաններ»¹⁵:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ իր կառավարման ընթացքում աստիճանաբար փոփոխելով սահմանադրության և օրենսդրական այն կետերը, որոնք լայն իրավասություններ են տալիս զինուժին, ԱԶԿ-ն կարողանում է սահմանափակել բանակի դերը Թուրքիայի քաղաքական կյանքում: Թեև 2016 թ. հեղաշրջման փորձը ցույց տվեց, որ բանակն ամբողջովին չէր անցնել իշխանության վերահսկողությանը, սակայն նախադրյալներ են ստեղծվել ԱԶԿ գաղափարակիցներին բանակ ներդնելու համար: Սա ավելի ակնառու կերպով շարունակվում է ռազմական հեղաշրջման փորձին հաջորդած շրջանում, երբ բանակի նկատմամբ մեծանում է քաղաքական վերահսկողությունը: Առկա գործընթացները թույլ են տալիս խոսել բանակ-իշխանություն գաղափարախոսական և արժեհամակարգային սերտաճման նախադրյալների ստեղծման մասին: Հաշվի առնելով Թուրքիայի իշխանությունների անկանխատեսելի, ագրեսիվ ներքին և արտաքին քաղաքականությունը նման սերտաճումը կարող է որոշակի ռիսկեր առաջացնել նաև տարածաշրջանի կայունության տեսանկյունից:

¹⁵ Sıkıyönetim kanunu, 15/5/1971 թ., <http://www.mevzuat.gov.tr/MevzuatMetin/1.5.1402.pdf> (Հասանելի է՝ 01.02.2017 թ.):

HOVHANNISYAN TARON

(YSU)

**TURKEY'S CONSTITUTIONAL AMENDMENTS IN THE CONTEXT OF
LIMITATION OF ARMY'S ROLE IN POLITICAL PROCESSES (2010-2016)**

The article discusses the constitutional amendments in Turkey in the context of limitation of Turkey's armed forces' role in the civic life implemented by Justice and Development Party (AKP) during its second stage of power. In this period some of the privileges of Turkey's army have already been eliminated, but the military forces were still sacred.

The main purpose of the work is to present the methods and measures that were used by the Government to put army under control of civil power, and outcomes of it. This article clarifies that if the amendments made by AKP until 2010 were related to the limitation of army's influence in the civil power, after 2010 with the constitutional amendment Turkey's authorities aim to decrease "self-satisfaction" and reshape ideological basis in the army by discreditation.

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՇԽԱՐՀԻԿԱՑՄԱՆ՝ ԱԲԴ ԱԼ-ՖԱԹԱԶ ԱՍ-ՄԻՍԻԻ
ՓՈՐՁԵՐԸ

2014 հունիսի 8-ին Եգիպտոսի նախագահ ընտրվեց Աբդ ալ-Ֆաթահ աւ-Միսին, ով իր նախագահության հենց սկզբից աչքի ընկավ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության նկատմամբ վարած խիստ քաղաքականությամբ և աստիճանաբար սկսեց քայլեր ձեռնարկել երկրում մի շարք կրոնական և հասարակական փոփոխությունների իրականացման համար:

Այս հոդվածում ներկայացվում և վերլուծվում են աւ-Միսիի կատարած փոփոխությունների փորձերը և եգիպտական հասարակության արձագանքը դրանց:

Աւ-Միսիի «իսլամական հեղափոխությունն» ու հավատի դիլեման

Նախագահ աւ-Միսին իր նպատակների մասին առաջին անգամ հայտարարեց ալ-Ազհարի¹ իր հայտնի ելույթի ժամանակ²:

2015 թ. հունվարի 1-ին Եգիպտոսի ներկայիս նախագահ Աբդ ալ-Ֆաթահ աւ-Միսին Ազհարի համալսարանում հանդես եկավ աղմկահարույց ելույթով, որով նա ալ-Ազհարի շեյխերին և կրոնական գործիչներին ասում էր, որ ժամանակն է եկել բարեփոխելու իսլամը: Իր ելույթում աւ-Միսին գովաբանում էր իսլամը և կենտրոնանում «fikr»³ (արաբ. թրգմ.՝ միտք) կոչվող գաղափարի վրա, որը կոնկրետ այդ համատեքստում ուներ «սխալ գաղափարներ» իմաստը: Նա քննադատում էր, որ սխալ գաղափարները սրբացվել են, իսկ հոգևոր գործիչները չեն քննադատում այդ երևույթը:

¹ Մզկիթ և ուսումնական հաստատություն Կահիրեում, որի ուսուցման հիմնական առարկաները ֆիկհն է, արաբերեն լեզուն և գրականությունը, դուրանագիտությունը և հադիսագիտությունը (St' u Ислам. Энциклопедический словарь. Москва: «Наука», Главная редакция восточной литературы, 1991, с. 15-16), (Այստիևտ՝ Ислам. Энциклопедический словарь).

² St' u Kalmia al-ra'yis 'abd al-Fatāh al-Sīsi bi-munāsaba zikra al-mawulid al-nabawī al-sharīf bi-alazhar" <http://tv.egyup.com/index.php?video=29282>

³ Տառադարձման այբուբենն ըստ IJMES-ի (International Journal of Middle East Studies):

Իր ելույթում աւ-Միսին մասնավորապէս նշում էր. «Աներկա-կայելի է, որ սխալ գաղափարները, որոնք մենք սրբացնում ենք, պետք է ամբողջ ումման⁴ դարձնեն մտահոգության, վտանգի, սպանության աղբյուր: Մենք հասել ենք այն կետին, որ մուսուլմանները հակադրվել են ամբողջ աշխարհին: Արդյոք երևակայելի է, որ 1.6 մլրդ մուսուլման ուզում է սպանել աշխարհի մնացած բնակչությանը որպէսզի մուսուլմանները բարգավաճեն: Սա հնարավոր չէ»⁵: Ելույթի ընթացքում նա անդրադարձավ ալ-Ազհարի կրոնական դասի ներկայացուցիչներին՝ ասելով, որ ամբողջ աշխարհը սպասում է նրանց խոսքին, քանի որ իսլամական աշխարհը մասնատվում է և կործանվում: «Մենք կարիք ունենք կրոնական հեղափոխության», - իր խոսքը եզարափակեց աւ-Միսին⁶:

Պետք է նշել, որ իր ելույթից հետո աւ-Միսին մասնակցեց հունվարի 1-ին Կահիրէի եկեղեցիներից մեկում անցկացվող Նոր տարվա ժամերգությանը՝ այդպիսով դառնալով Եգիպտոսի առաջին նախագահը, որ մասնակցել էր նման արարողությանը⁷:

Աւ-Միսիի այս հայտարարությունը բողոքի մեծ ալիք բարձրացրեց իսլամական աշխարհում: Թուրքիայում գտնվող «Մուսուլման եղբայրների»⁸ Ռաբիա հեռուստաալիքով հեռարձակվող հաղորդում-

⁴ Մեղինայում Մուհամմադ մարգարէի կողմից հիմնվեց ումման՝ մուսուլման հավատացյալների համայնքը: Ումման կրոնական համայնք է, որի վերաբերյալ պատկերացումները ժամանակի ընթացքում փոփոխությունների են ենթարկվել. եթէ Մուհամմադ մարգարէի կյանքի վերջին տարիներին, ումմա ասելով, հասկանում էին Արաբական թերակղզու մուսուլմաններին, ապա արաբական նվաճումները հանգեցրեցին այս հասկացության իմաստի ընդլայնմանը՝ ներառելով նաև նվաճված երկրների բնակիչներին: Պանիսլամիզմի առաջացումն ու զարգացումը հանգեցրեց «ումմա իսլամիյա»-ի ձևավորմանը: (Տե՛ս Ислам. Энциклопедический словарь, с. 241-242):

⁵ Տե՛ս Kalmia al-ra'yis 'abd al-Fatāh al-Sisi bi-munāsaba zikra al-mawulid al-nabawī al-sharīf bi-alazhar <http://tv.egyup.com/index.php?video=29282>, Մուտք 15.04.2015:

⁶ Նույն տեղում:

⁷ Տե՛ս Pipes D., Is Sisi Islam's long -awaited reformer

<http://www.danielpipes.org/15430/sisi-islam-reform>, Մուտք 15.04.2015:

⁸ «Մուսուլման եղբայրների» կազմակերպությունը հիմնադրվեց 1928 թ. արմատական գաղափարներ կրող կրոնագետ Հասան ալ-Բաննայի կողմից: Այն իր ցանցը տարածեց ոչ միայն Եգիպտոսում, այլ նաև դրանից դուրս: Եգիպտոսի պատմության նոր փուլում նրանք հաճախ էին դառնում իշխանության թիրախը, քանի որ իրենց գործունեությամբ անընդհատ պայքար էին/են մղում երկրում

ներից մեկի ժամանակ եզիպտացի կրոնաիրավագետ շեյխ Սալամա Աբդ ալ-Կավին հանդես եկավ հայտարարությամբ, որում ասվում էր. «Յանկացած մեկը, ով կապանի եզիպտոսի նախագահ Միսիին և նրան աջակցող լրագրողներին, մեծ գործ արած կլինի»⁹: Իսկ «Միսր ալ'ան» հեռուստատեսությամբ եզիպտացի քարոզիչ Վազդի Ղունեինը հայտարարեց «Ով բերի այս շներից մեկի գլուխը, կարժանանա Ալլահի գոհունակությանը»¹⁰:

Հեղափոխություն բառը նրանց կողմից հասկացվեց ուղիղ իմաստով, և շատերը այն կապում էին իսլամի հետ և աս-Միսիին մեղադրում իսլամը փոխել ցանկանալու մեջ: Ստեղծված «թյուրընկալումը» հարթելու համար աս-Միսիի ելույթից օրեր անց ելույթով հանդես եկավ Իսլամական հետազոտական կենտրոնի գլխավոր քարտուղար Մուհի ադ-Դին Աֆիֆին, ով հայտարարեց, որ աս-Միսին մտադրություն չունեի փոխելու տեքստերը, ինչը նա, իմ կարծիքով, հստակորեն մի քանի անգամ ընդգծել էր իր ելույթում¹¹:

Քարտուղարը մեկնաբանել էր հետևյալ կերպ. «Նախագահը նկատի ուներ, որ մենք պետք է ժամանակակից մոտեցում ցուցաբերենք կրոնական տեքստերը կարդալիս»¹²:

Ըստ Աֆիֆիի՝ ալ-Ազհարը արդեն ամիսներ է, ինչ աշխատում է նմանատիպ ծրագրի վրա, որը նպատակ ունի մոդեռնիզացնելու հավատը: Հանձնաժողովը ուսումնասիրում էր դպրոցներում և համալսարաններում տարածված դասագրքերը հանելու համար այն դրույթները, որոնք տեղ չունեն ժամանակակից կյանքում: Տեքստերը, որոնք պարունակում էին հատվածներ ստրկության մասին կամ հատվածներ,

պահպանողական իսլամական իշխանության հաստատման համար: Այս նպատակին նրանք հասան 2013 թ., երբ Հուսնի Մուբարաքին գահընկեց անելուց հետո իշխանության նրանք եկան՝ Մուհամմադ Մուբսիի ղեկավարությամբ, սակայն այս իշխանությունը երկար չտևեց, և նախագահի պաշտոնը զբաղեցրեց եզիպտոսի ներկայիս նախագահ Աբդ ալ-Ֆաթահ աս-Միսին:

⁹ St' u Calls to kill Al-Sisi and Egyptian Journalists on Turkey-based Muslim Brotherhood TV Channels

<https://www.youtube.com/watch?v=8JizS7nTVnI>, Մուսր 15.04.2015

¹⁰ St' u Sisi's religious revolution gets underway,

<http://counterjihadreport.com/category/abdel-fattah-al-sisi/>, Մուսր 15.04.2015:

¹¹ Նույն տեղում:

¹² St' u From Egypt's ... ambitious call for reform in Islam

<http://www.ynetnews.com/articles/0,7340,L-4612771,00.html>, Մուսր 15.04.2015:

որտեղ, օրինակ, գրված էր հրաժարվել քրիստոնյաներին և հրեաներին բարևելուց, պետք է գործածությունից դուրս հանվեին¹³:

Նույն տարվա հունվարի 22-ին Դավոսում կայացած Համաշխարհային տնտեսական ֆորումի ժամանակ Աբդ ալ Ֆաթահ աւ-Սիսին իր ելույթում ևս մեկ անգամ անդրադարձավ ահաբեկչության դեմ պայքարի և իսլամի նորացման անհրաժեշտությանը: Նա նշեց. «Իսլամի հանդուրժողականության մասին տեսությունները միշտ չէ, որ ընկալելի են եղել աշխարհի համար վերջին 20-30 տարիների ընթացքում: Ահասարստո ահաբեկչական հարձակումները և դրանից բխող մուսուլմանների աղետալի պատկերը մեզ ստիպեցին լուրջ հայացք գցել կրոնական խոսույթի վրա՝ արմատախիլ անելու այն մտքերը, որոնք բերում էին ծայրահեղականության և ագրեսիայի»¹⁴:

Վերոնշյալը հստակորեն ցույց է տալիս, որ թեև իսլամական պահպանողականների ընդդիմությանը և մեղադրանքներին, դեռևս իր նախագահության հենց սկզբից Աբդ ալ-Ֆաթահ աւ-Սիսին իր առաջ հստակ նպատակ էր դրել կրոնական համատեքստում քայլ առ քայլ փոփոխություններ կատարել:

Փոփոխությունները կրթական գործընթացներում

Աւ-Սիսի ալ-Ազհարի ելույթին հաջորդեց 2015 թ. մարտի 4-ին Ուսումնական ծրագրի զագացման կոմիտեի կազմումը, որի գործառույթը ուսումնական ծրագրերի և դասագրքերի վերանայելն ու ագրեսիա հարուցող տեքստերը հանելն է: Մարտի 18-ին Եգիպտոսի կրթության նախարար Մոհեբ Ալ-Ռիֆահին որոշում կայացրեց դադարեցնել որոշ դասընթացների դասավանդումը, իսկ արաբերենի դասագրքերից հանվեցին Սալահ ադ-Դինին¹⁵ վերաբերող հատվածները: Վերջինս խաչակրաց արշավանքների ժամանակ ջիհադի¹⁶ գաղափարը կենդանաց-

¹³ Նույն տեղում:

¹⁴ St' u Egyptian President Sisi Calls for Reform of Islam

<http://jcpa.org/article/sisi-calls-for-reform-of-islam/>, Մուտք 15.04.2015:

¹⁵ Սալահ ադ-Դին Յուսուֆ իբն Այյուբը (1138-1193) Եգիպտոսի և Սիրիայի առաջին սուլթանն էր, Այյուբյան դինաստիայի հիմանդիրը: Վերջինս ներկայացել է որպես սուննիական իսլամի պաշտպան և իր ողջ կառավարման ընթացքում պայքար է մղել խաչակիրների և շիաների դեմ, որը մեկնաբանել է որպես ջիհադ:

¹⁶ Հավատի համար մղվող պայքար: Սկզբնապես ջիհադի անվան տակ հասկացվում էր պայքար իսլամի տարածման և պահպանման համար: (St' u Ислам. Энциклопедический словарь, с. 66-67):

նողն էր, այդ իսկ պատճառով թերևս որոշվեց հանել նրա անունը՝ մեղմելու համար քրիստոնյա-մուսուլման հարաբերությունները: Այս ամենը չսահմանափակվեցին միայն դպրոցներով և ընգրկեցին նաև բարձրագույն ուսումնական հաստատությունները, ընդհուպ մինչը ալ-Ազհարի համալսարանը, որտեղ արգելվեցին այնպիսի ֆաթվաների և հադիսների ուսուցանումը, ինչպիսին, օրինակ, մարգարեի հետևյալ հադիսը. «Ինձ հրամայված էր կովել մարդկանց հետ այնքան մինչև նրանք չվկայեին, որ չկա այլ Աստված բացի Ալլահից»¹⁷: Այս փոփոխությունների դեմ հանդես եկան պահպանողական սալաֆիների¹⁸ և ան-Նուռ կուսակցությունները, որոնք աս-Սիսիին մեղադրում էին պատմությունը խեղաթյուրելու մեջ: Ավելին՝ նախագահի առաջարկով 2015 թ. հոկտեմբերից դպրոցներում ուսուցանվելու են հատուկ առարկաներ, որոնց նպատակը «կրոնական հանդուրժողականության քարոզումն» է¹⁹:

Այս կրթական ռեֆորմները ըստ էության սերտորեն կապված են կրոնական ընկալումների հետ, և աս-Սիսիի նպատակն է դեռևս դպրոցից արմատախիլ անել կրոնական անհանդուրժողականությունը:

Փակվում են մզկիթները, արգելվում՝ գրքերը

Կրթական ռեֆորմներից բացի աս-Սիսիին իրականացրեց դեռևս 2013 թ. սեպտեմբերին Կրոնական ռեսուրսների նախարարության ընդունած՝ 80 քառակուսի մետրից փոքր տարածք ունեցող մզկիթները փակելու որոշումը²⁰: Արդյունքում փետրվար ամսին փակվեցին շուրջ 27 հազար մզկիթ, ինչը մեծ զայրույթ առաջացրեց հատկապես ան-Նուռ

¹⁷ Տե՛ս Տահիի al-Būkhāri "Kitāb al-jihād"

http://library.islamweb.net/newlibrary/display_book.php?idfrom=5060&idto=5619&bk_no=52&ID=17 Մուտք 15.04.2015:

¹⁸ Մուսուլման կրոնական գործիչների ընդհանուր անվանում, որոնք իսլամի պատմության տարբեր ժամանակահատվածներում կոչ էին անում կենտրոնական վաղ իսլամական հասարակության կյանքի ուղու և հավատի վրա (Տե՛ս Ислам. Энциклопедический словарь, с. 204):

¹⁹ Տե՛ս Egypt strikes Islamic texts from schools, angering <http://www.al-monitor.com/pulse/originals/2015/04/egypt-ministry-education-remove-islamic-texts-violence.html#ixzz3XaHRfgVv>, Մուտք 15.07.2015:

²⁰ Տե՛ս Egypt closes 27,000 places of worship <http://www.al-monitor.com/pulse/originals/2015/03/egypt-endowments-decision-close-worship-places.html#>, Մուտք 10.04.2015:

կուսակցության մոտ: Վերջիններս անընդունելի էին համարում առանց ավելի մեծ տարածքներ տրամադրելու այդքան մզկիթների փակումը պատճառաբանելով, որ եղածներն էլ բավական չեն, և հավատացյալները հատկապես ուրբաթ օրվա խուտբաների²¹ ժամանակ ստիպված են լինում դրսում աղոթել²²:

Կրոնական ուսումնական հաստատություններում արգելվեցին նաև Իբն Թայմիյայի, Մուհամմադ Իբն Աբդ ալ-Վահաբի և այլ ծայրահեղ կրոնական գաղափարներ քարոզող հեղինակների աշխատություններ: Այդ ընթացքում Կահիրեի, Ալեքսանդրիայի և Գիզայի մզկիթներից հավաքվեցին 7000-ից ավել գրքեր²³:

Պատահական չէր, որ հենց այս հեղինակների աշխատությունները արգելվեցին: Իբն Թայմիյայն, ով ամենապահպանողական կրոնաիրավական դպրոցի՝ հանբալիականի ներկայացուցիչն էր, իր գործունեությունը ծավալել է մոնղոլական արշավանքների թնհուրոհում, և նրա աշխատությունները կրոնական անհանդուրժողականություն կրող վառ օրինակներ են²⁴: Իբն Թայմիյայի այս գիծը շարունակողը եղավ 18-րդ դարում Արաբական թերակղզու տարածքում գործող Իբն Աբդ ալ-Վահաբը, ով իր գաղափարների հիմքը գտնում էր հենց իբն Թայմիյայի ստեղծագործություններում և փորձում էր «իսլամը մաքրել ու վերադարձնել իր նախնական անաղարտ տեսքին»²⁵:

²¹ Քարոզ, խատիբի ելույթը: Իսլամական ավանդույթի մեջ խուտբան առաջացել է դեռ Մուհամմադ մարգարեի ժամանակներից: (Տե՛ս Ислам. Энциклопедический словарь, с. 285-286):

²² Տե՛ս Egyptian government closes 27,000 mosques in move to fight terrorism <http://www.thegatewaypundit.com/2015/03/egyptian-el-sisi-government-closes-27000-mosques-in-move-to-fight-terrorism/>, Մուտք 15.06.2015:

²³ Արգելված հեղինակների ցանկը տե՛ս Egypt to remove books of ibn Taymiyyah, ibn Baz and ibn Uthaymeen from all mosques, <http://www.doamuslims.org/?p=3861>, Մուտք 15.08.2015:

²⁴ Հանբալիական կրոնաիրավական դպրոցի և իբն Թայմիյայի մասին առավել մանրամասն տե՛ս Abdul Hakim I Al-Matroudi, The Hanbali School of Law and Ibn Taymiyyah: Conflict or Conciliation (Culture and Civilization in the Middle East), Routledge; 1 edition, 2006.

²⁵ Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահաբի մասին առավել մանրամասն տե՛ս Natana J. Delong-Bas, Wahhabi Islam: From Revival and Reform to Global Jihad, I.B.Tauris, 2007.

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հստակ երևում է, որ աս-Միսին արգելում էր սալաֆիական գաղափարախոսների գրքերը՝ դրանով իսկ ձգտելով արմատախիլ անել ծայրահեղականությունը:

Հագուստի «հարցը»

Փոփոխությունների ալիքը սակայն այսքանով չդադարեց: Այն աստիճանաբար տարածվեց նաև առավել կենցաղային տիրույթ, ինչպիսին հանդերձանքն է:

Մուսուլմանական երկրներում մարդու հանդերձանքը կարող է արտացոլել նրա սոցիալական, մշակութային, կրոնական և քաղաքական հայացքները: Դարեր շարունակ մուսուլմանները հիմնականում կրել են երկար և լայն հագուստ: Կանայք ավանդաբար կրում են երկար և լայն զգեստ՝ աբայա և գլխաշոր՝ հիջաբ, իսկ տղամարդիկ դիշդաշա՝ երկար սպիտակ հանդերձ: Վերջինը տարածված է հատկապես Մոցի արաբական երկրներում: Եզիպտոսում կանանց մեծամասնությունը կրում է ավանդական հիջաբը, տարածված է նաև հագուստի մեկ այլ տեսակը՝ նիկաբը, որը հիմնականում կրում են ավելի պահպանողական հայացքի տեր կանայք:

Փաստորեն փոփոխությունների այս ալիքը կամաց-կամաց սկսում է մտնել կյանքի բոլոր ոլորտները: 2015 թ. մայիս ամսին Եզիպտոսում մեծ աղմուկ բարձրացրեց շեյխ Ջայեդ թաղամասի ռեստորաններից մեկում պատահած միջադեպը, երբ ռեստորանի աշխատակիցը արգելել էր սաուդցի տղամարդուն մտնել ռեստորան, քանի որ վերջինս կրում էր ավանդական սաուդական երկար սպիտակ շոր՝ դիշդաշա: Միջադեպը տեսանկարահանվել և տեղադրվել էր «ՅուԹուբ» կայքում²⁶: Միջադեպին անմիջապես արձագանքել էր Եզիպտոսի զբոսաշրջության նախարար Խալեդ Աբբաս Ռամին, ով անձամբ հանդիպել և ներողություն է խնդրել սաուդցի զբոսաշրջիկից, իսկ ռեստորանը մեկ ամսով փակվել էր²⁷: «Ալ-Վատան» թերթին տված իր հարցազրույցում նախարարը նշել էր, որ իրենք դեմ են ցանկացած տեսակի խտրականության՝ լինի դա կրոնական, ռասայական, թե հագուստի հետ կապված, և կառավարությունը անհապաղ քայլեր կձեռնարկի փակելու ցանկացած հաստատություն, որը կդիմի նման խտրականության²⁸:

²⁶ St' u Ighlāq al-ma' am fi miṣr mana' dukhūl usra sa'ūdiya bisabab al-thaub
<http://www.alriyadh.com/1048940>, Մուտք 12.10.2015:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

Կատարվածից հետո շատ եզիպտացի կանայք սոցիալական ցանցերում սկսեցին ակտիվորեն կիսվել իրենց հետ կատարված խտրականության դեպքերի մասին տեղեկություններով: Ըստ նրանց Կահիրեում և Հուրգադայում մի շարք ժամանցի վայրեր արգելում են կանաց մուտքը գլխաշորով կամ ավանդական աբայայով²⁹, իսկ որոշ հյուրանոցներ էլ թույլ չեն տալիս իսլամական փակ լողազգեստ կրող կանանց լողալ հյուրանոցի լողավազանում: Բողոքների ֆոնին բավական աղմկահարույց էր Եզիպտոսի կանանց ազգային միավորման կազմակերպության ղեկավար Մերվաթ Թալավիի հայտարարությունը, որ բոլոր այն հաստատությունները, որ արգելում են հիջաբով կանանց ներս մտնել, իրականում գործում են օրենքի շրջանակներում: Վերջինս նշել էր, որ նման կերպ մի շարք լողափեր նախատեսված են միայն կանանց համար, և տղամարդկանց մուտքն արգելվում է: Նրա հաղորդմամբ եզիպտական օրենքը նման հարցեր չի կարգավորում, և մասնավոր հիմնարկներն իրավունք ունեն կիրառելու իրենց սեփական հազուստի կանոնները³⁰: Պետք է նշել, որ եզիպտացիները, ի տարբերություն, օրինակ, Սաուդյան Արաբիայի, որտեղ ավանդական գլխաշորը՝ հիջաբը և աբայան պարտադիր են, ավելի հանդուրժողականորեն են մոտենում հազուստին վերաբերող հարցերին: Այստեղ չկան որևէ սահմանափակումներ և հազուստի ընտրությունը թողնվում է անհատի հայեցողությանը:

Այս հայտարարությունը բողոքի ալիք բարձրացրեց եզիպտացիների շրջանակներում, ովքեր Մերվաթ Թալավիին մեղադրում էին որ վերջինս չի կարողանում տարբերակել կրոնական խտրականության և հազուստի ընտրության միջև:

Հազուստի թեման այսքանով չսահմանափակվեց: 2015 թ. օգոստոս ամսին եզիպտական հեռուստաընկերություններից մեկին տված իր հարցազրույցի ժամանակ Եզիպտոսի կրթության և գիտության նախարար Մոհեբ ալ-Ռեիֆահին հայտարարեց, որ նոր ուսումնական տարուց սկսած բոլոր այն աշակերտուհիները, ովքեր չեն հասել սեռական հասունացման տարիքին, կարգելվեն կրել հիջաբ: Վերջինիս խոս-

²⁹ Ավանդական իսլամական թիկնոցանման կանացի զգեստ, որ կրում են մուսուլման կանայք:

³⁰ She u Hijab - wearing woman say they are being "turned away" at Egyptian resorts <http://english.alarabiya.net/en/perspective/features/2015/07/27/Hijab-wearing-women-say-are-being-turned-away-at-Egyptian-resorts.html>, Մուսոբ 15.10.2015:

քերով ոչ Ղուրանում և ոչ էլ Սուննայում³¹ չի ասվում հիջաբ կրել հասունության տարիքը դեռևս չլրացած աղջիկներին³²:

Դպրոցներում հագուկապի մասին խոսակցությունն սկսվել էր այն քանից հետո, երբ Շարկիյայի նահանգապետը անակնկալ այցելություն էր կատարել տեղի դպրոցները և պարզել, թե ինչ հագուստով են ուսուցիչները և դպրոցի տնօրենը գնում աշխատանքի: Նրանք կրելիս են եղել ազգային գալաբիյա³³ կոչվող հագուստը: Այս փաստը խիստ անհանգստացրել էր կրթության և գիտության նախարարին, ով նույնիսկ առաջարկել էր հագուստ տրամադրել ուսուցիչներին, քանի որ նրանք մեծ դեր են խաղում գալիք սերնդի գիտակցության ձևավորման հարցում և պետք է ներկայանալի տեսքով ներկայանան աշխատանքի:

Հարցազրույցը կրկին բողոքի ալիք բարձրացրեց եգիպտացիների շրջանում, և մի քանի օր անց Եգիպտոսի կրթության և գիտության նախարարության խոսնակը «Ալ-աիրամ» օրաթերթին տրված հարցազրույցում հայտարարեց, որ նախարարը ընդամենը արտահայտել էր իր անձնական կարծիքը, և ցանկացողները կարող են ազատորեն հիջաբ կրել³⁴:

Օգոստոսի 18-ին Կահիրեում տեղի ունեցած Մուսուլմանական ֆորումի ժամանակ հեղինակավոր մի շարք կրոնաիրավագետներ կոչ արեցին ֆաթվաներ արձակելուց առաջ չափավորություն ցուցաբերել այսպիսով փորձելով հակազդել այն ծայրահեղ ֆաթվաներին, որոնք կրոնական անհանդուրժողականություն և ջիհադի կոչեր էին անում: Խորհուրդ տրվեց հեռուստաընկերություններին հրավիրել միայն փորձառու մուֆթիների³⁵ իսկ մուֆթիների ինստիտուտը հեռու պահել

³¹ Կյանքի ուղի, որը սահմանված է որպես նորմա մուսուլմանների համար հիմնված Մուհամմադ մարգարեի գործելակերպի, ուսուցումների և Ղուրանի մեկնաբանությունների վրա: (St' u Ислам. Энциклопедический словарь., с. 214):

³² St' u Wazīru alta'lim; hijāb al-atfāl mamnū' fi al-madāris wa lam aqsid ihāna al-mu'alimīn

<http://www.youm7.com/story/2015/8/> Մուսուլ 10.10.2015:

³³ Եգիպտական սովանդական երկար հանդերձանք նախատեսված տղամարդկանց համար: Լայն տարածում ունի հատկապես գյուղական շրջաններում:

³⁴ St' u Egypt Ministry Spokesperson Denies Child Hijab Ban Despite Education Minister`s Comments

<http://egyptianstreets.com/2015/08/16/egypt-bans-children-from-wearing-the-islamic-headscarf-at-school/>, Մուսուլ 10.10.2015:

³⁵ Շարիաթի գիտակ, ով բացատրում է դրա հիմնադրույթները և ընդունում որոշում վիճելի հարցերի դեպքում հատուկ եզրահանգման ֆաթվայի տեսքով

կուսակցական քաղաքականությունից: Այդ նպատակով առաջարկվեց նախապատրաստական դասընթացներ և կուրսեր անցկացնել մուֆթիների համար³⁶:

Շարունակելով հագուստի թեման՝ անհրաժեշտ է նշել Կահիրեի համալսարանի ընդունած մի որոշման մասին, համաձայն, որով նիկաֆ³⁷ կրող կանանց արգելվում է դասավանդել համալսարանում: Որոշման հեղինակը համալսարանի ղեկավար Գաֆեր Նասերն է: Որոշումից զայրացած՝ համալսարանի 77 կին աշխատակիցներ որոշել են դատական գործ հարուցել, նրանց թվում կան նաև կանայք, ովքեր նիկաֆ չեն կրում, բայց այնուամենայնիվ դեմ են նման որոշմանը:

Գաֆեր Նասերի խոսքով՝ այդ որոշումը դրական կազդի ուսուցման գործընթացի վրա: Վերջինիս խոսքով՝ իր գործողություններն օրենքի շրջանակներում են և համաձայնեցված են մյուս ֆակուլտետների ղեկանների հետ³⁸:

Նմանատիպ մի արգելք էլ սահմանել է Եգիպտոսի գերագույն ընտրական հանձնաժողովը, համաձայն որի՝ նիկաֆ կրող կանայք կկարողանան քվեարկել միայն դեմքը բացելու դեպքում: Խուսափելու համար ընտրակեղծքիներից, ինչպես նաև միևնույն ժամանակ չվիրավորելով կանանց կրոնական զգացմուքները, յուրաքանչյուր ընտրական հանձնաժողովում կլինի կին տեսուչ, ով կթույլատրի նիկաֆ կրող կանաց քվեարկել միայն դեմքը տեսնելուց և անձը հաստատելուց հետո³⁹:

Եզրակացություն

Վերլուծելով աս-Միսիի կատարած քայլերը՝ կարելի է եզրակացնել, որ դրանք նպատակ ունեն ոչ միայն նորացնել և «հեղափոխել» իսլամը, այլև արտացոլում էին վերջինիս անհանդուրժողական վերաբերմունքը «Մուսուլման եղբայրների» նկատմամբ, ովքեր նախկին

(Տե՛ս Ислам. Энциклопедический словарь, с. 177:

³⁶ Տե՛ս Muslim forum in Egypt urges moderation in issuing fatwas

http://www.yourmiddleeast.com/news/muslim-forum-in-egypt-urges-moderation-in-issuing-fatwas_34340, Մուսուր 14.10.2015:

³⁷ Իսլամական ավանդական կանացի հանդերձանք, որը ծածկում է կնոջ դեմքը, բաց թողնելով միայն աչքերը:

³⁸ Տե՛ս Jami'a al-qāhira tamna'u almunaqabāt min al-tadrīs

<http://www.wataninet.com/%D8%A3>, Մուսուր 10.10.2015:

³⁹ Տե՛ս Al-lajna al-'uliyā lilintikhabāt; man'a al-munaqabāt min al-idā' biaswātihuna

<http://www.twseila.com/?p=73628>, Մուսուր 10.10.2015:

նախագահ Մուհամմադ Մուրսիի⁴⁰ իշխանազրկումից հետո անընդհատ բողոքի ցույցեր էին կազմակերպում իշխանությունը ետ վերադարձնելու համար: Եզիպտացի մի շարք փորձագետներ իսլամի բարեփոխումն ալ-Ազհարի համալսարանի անձնակազմի կողմից անհրապան են համարում, ովքեր պնդում են, որ հենց ալ-Ազհարն է ժողովրդի մեջ գցում արմատականության սերմերը: Չնայած այս ամենին՝ ալ-Ազհարը միշտ էլ հայտնի է եղել կառավարամետ որոշումներով:

Ինչպես նշում է Վաշինգտոնի Բրուքինգս ինստիտուտի փորձագետ Հ. Ա. Հեյերը, «եթե ալ-Ազհարի շեյխերը խոսեն արմատականության դեմ, ազրեսիվ մեկնաբանություններին հարող ոչ մեկ չի ազդվի դրանից: Նրանք կասեն. «Դու պետության դաշնակիցն ես»⁴¹:

Իսլամի բարեփոխումների անցկացման համար այլ տարբերակներ են անհրաժեշտ: «Ցանկացած կրոնական նորարարություն կլինի ալ-Ազհարի դեմ, քանի որ այն պահպանողականության ամրոցն է համակարգի մեջ», - ասում է կրոնական վերլուծաբան Ամր Էզզը: Նա շարունակում է նշելով. «Կրոնի հեղինակությունը ժամանակակից կյանքի վրա և օրենքը՝ սրանք են այն ոլորտները, որ կարիք ունեն վերանայման: Այն, ինչի պակասը մենք ունենք, մեկից ավելի կրոնական դիսկուրս ունենալու ազատությունն է, ինչը կհարստացնի քննարկումը»⁴²:

Աս-Միսիի կատարած քայլերից կարելի է եզրակացնել, որ վերջինս հստակ քայլերով գնում է կրոնի հեղափոխության և ադապտացման ճանապարհով: Դրա մասին են վկայում մզկիթների փակումը, ուսումնական ծրագրերի փոփոխությունները, հագուստի որոշ տեսակների արգելումը և այլն: Այս ամենը նպատակ ունի արմատախիլ անել եզիպտական հասարակության մեջ տարածված և հատկապես հետհեղափոխական Եզիպտոսում ակտիվացած պահպանողականության դրսևորումները:

Թե որքանով դա նրան կհաջողվի, առայժմ դժվար է ասել, քանի որ եզիպտական հասարակությունը բավական բազմաշերտ է և տարբեր

⁴⁰ Մուհամմադ Մուրսին (2012 հունիսի 30-2013 հուլիսի 3) Եզիպտոսի նախկին նախագահն էր: Պաշտոնանկ արվեց 2013 հուլիսի 3-ին տեղի ունեցած ռազմական հեղաշրջման արդյունքում, որը ղեկավարում էր այդ ժամանակ դեռևս պաշտպանության նախարար Աբդ ալ-Ֆաթահ սս-Միսիին:

⁴¹ St' u From Egypt's leader an ambitious call for reform in Islam
<http://www.ynetnews.com/articles/0,7340,L-4612771,00.html>, Մուսր 15.04.2015:

⁴² Նույն տեղում:

կերպ է արձագանքում տեղի ունեցող փոփոխություններին: Սակայն մի քան հստակ է. այս քայլերը իրենց հետքը կթողնեն եգիպտական հասարակության վրա և կարող են հիմք հանդիսանալ առավել լայնամասշտաբ փոփոխությունների համար:

MKHITARYAN MARIAM

(YSU)

ABD AL-FATAH AS-SISI'S ATTEMPTS
FOR MODERNISING THE EGYPTIAN SOCIETY

The main idea of this article is to show the steps that Abd al-Fatah as-Sisi takes in order to modernise and change the Egyptian society. The history showed that after the Egyptian revolution of 2011 the most organised and active power was in the hand of the organisation called Muslim Brotherhood whose representative Muhammad Morsi managed to become president from 30 June 2012 to 3 July 2013. The vast majority of Egyptian society, who did not like his ruling and was afraid of radicalisation, made a revolution in lead by Defence Minister Abd al-Fatah as-Sisi, who later on in June 2014 became president. Immediately after becoming president he initiated steps that were aimed to neutralise the power of Brotherhood and prevent the process of radicalisation inside the society.

The article describes the three major fields as-Sisi started from for reaching his goals.

First one is the educational sector that is considered to be one of the main ways of spreading the radical ideology. The curriculum of schools was revised, books of radical writers were prohibited and subjects, that promoted religious solidarity, were included in the curriculum. Second, around 27 thousand places of worship of less than 80 square meters were closed. This step intended to protect young people from militancy and extremism. Third, the government banned niqab-wearing women from voting and lecturing. This caused a wave of discontent in the country.

It's hard to say whether as-Sisi will succeed, but the fact that these steps will leave a trace on the further development of the Egyptian society is obvious.

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

(ԱԻ)

«ՄԻՋԱՆԿՅԱԼ» ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅՈՒՆ. «ՔԱՐԱՔՈԼԻ» ԴԵՐԸ ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵՋ

Մարդկության քաղաքական պատմության ողջ ընթացքում հետախուզությունը, տեղեկության և տվյալների հավաքագրումը տարբեր ռազմաքաղաքական կազմավորումների, պետությունների գործունեության և անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներից է: Տարատեսակ հետախուզական կառույցներն ապահովում են ինչպես տեղեկատվության հավաքագրում տվյալ պետության տարածքում կամ էլ տարածքից դուրս, այլ տարատեսակ գործառույթներ են իրականացնում, որոնց նպատակն է և՛ տվյալ պետության/ուժի անվտանգությունն ու պաշտպանությունը, և՛ այլ պետություններում խնդիրների կատարումը՝ տեղեկության հավաքագրումից մինչև տարատիպ գործողություններ:

Ճշգրիտ և կարևոր տեղեկատվության ու տվյալների ստացումը մեծագույն նշանակություն ունի հետագա վերլուծությունների, եզրահանգումների ու գործողությունների համար և վճռորոշ է պետության հիմնական գործառույթների իրականացման հարցում:

Համեմատաբար նոր գիտակարգերի թվում տեղ զբաղեցնող հետախուզագիտության տեսաբաններից Լոք Ջոնսոնը նշում է, որ «հետախուզության հիմնական նպատակը տեղեկության տրամադրումն է որոշում կայացնողներին, ինչը կարող է օգնել նրանց հստակեցնել որոշումների տարբերակները»¹:

Օսմանյան պետության ստեղծման և կայացման առաջին փուլերից հետախուզական գործունեությունը մեծ դերակատարում է ունեցել, որը ժամանակի ընթացքում մշտական փոփոխությունների է ենթարկվել՝ համապատասխանեցվելով տվյալ ժամանակի պահանջներին: Օսմանյան կայսրության ռազմականացված բնույթը նախատեսում էր օսմանյան զինված ուժերին կից կազմակերպված և հաջող գործող

¹ Johnson L. K., The Oxford Handbook of National Security Intelligence, Oxford University Press, 2010, p. 5.

հետախուզություն, որն իրենից ներկայացնում էր ռազմականացված և հիմնականում ռազմական խնդիրների լուծմանը ծառայող մարմին կամ ցանց:

Թուրքիայի Հանրապետությունում հետախուզական կառույցների ստեղծումը, զարգացումը և ներկա գործունեությունը ճիշտ գնահատելու ու ուսումնասիրելու համար կարևոր է օսմանյան փորձի բազմակողմանի հետազոտումը: Թուրքիայի Հանրապետության հոչակմանը հաջորդած տասնամյակներին ստեղծված կազմակերպություններն ու ավելի ուշ դրանց հաջորդած կառույցների գործունեությունը, կառուցվածքը, մտածելակերպն ու ռազմավարությունն ուսումնասիրելու համար հատկապես կարևոր են օսմանյան վերջին շրջանում «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարների ստեղծած գաղտնի կազմակերպությունները, որոնք նորանկախ Թուրքիայի Հանրապետության հետախուզական համակարգի համար նախատիպային բնույթ ունեին ինչպես կառուցվածքի, այնպես էլ կադրերի տեսանկյունից:

1918-1923 թվականներին թուրքական գաղտնի կազմակերպությունների գործունեության համար յուրահաստուկ պայմաններ ստեղծվեցին, քանի որ նրանք սկսեցին գործել գոյությունը գրեթե դադարեցրած կայսրությունում առկա պայմաններում, ընդ որում, հիմնականում սպասարկելով այդ շրջանում պաշտոնական ճանաչում չունեցող ռազմաքաղաքական ուժի (քեմալական շարժման) շահերը: Սա հետախուզական գործառույթներ իրականացնող թուրքական գաղտնի կազմակերպությունների համար անցումային փուլ էր՝ մինևույն ժամանակ նմանատիպ կազմակերպությունների ինստիտուցիոնալ զարգացման գործընթացի սկիզբ և նոր ու կարևոր փորձ: Այս ընթացքում ստեղծված գաղտնի խմբերը ոչ այնքան դասական հետախուզական կազմակերպություններ էին, որքան, ինչպես թուրքական պատմագրությունն է ներկայացնում, «դիմադրության կազմակերպություններ»²:

Այս հատուկ կազմակերպությունները մի շարք գործառույթների հետ իրականացնում էին նաև հետախուզական բնույթի գործողություններ, ինչն էլ մեզ համար հիմք է հանդիսանում դիտարկելու դրանց որպես հետախուզական կառույցներ և քննելու այդ տեսանկյունից:

² Թուրքական պատմագիտությունում հաճախ կիրառվում է «դիմադրության գաղտնի խմբեր» (թուրք. Gizli direniş örgütü) ձևակերպումը, իսկ Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության (MIT) պաշտոնական պատմագրությունը դրանք համարում է «հետախուզական կառույցներ»:

Օսմանյան և թուրքական արխիվներում բավական քիչ են 1918-1923 թվականներին գործած գաղտնի կազմակերպությունների գործունեության վերաբերյալ տեղեկությունները: Մինևույն ժամանակ, գրեթե չեն հանդիպում մանրամասն և արժանահավատ հուշագրություններ այս կազմակերպությունների անդամների կողմից, ինչը կարող էր լրացուցիչ աղբյուր հանդիսանալ հետազոտության համար: Այնուամենայնիվ, 1990-ական թվականների առաջին կեսին Թուրքիայում մի շարք հետազոտողներ, ուսումնասիրելով Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի արխիվում (*ATASE*), Թուրքիայի վարչապետի ապարատին կից օսմանյան արխիվում (*Başbakanlık Osmanlı Arşivi*) և Թուրքիայի Ազգային անվտանգության ծառայության հատուկ արխիվում (*MIT Özel Arşivi*) պահվող փաստաթղթերը, հեղինակել են աշխատություններ, որոնք կարևոր հիմք են հանդիսանում թեման ուսումնասիրելու համար³: Վերլուծական տեսանկյունից արժևորվում է Էրիկ Յան Ջյուրխերի աշխատանքը⁴, որտեղ մեծ ուշադրություն է հատկացված կառույցների քաղաքական գործունեությանը: Այս ուսումնասիրության համար օգտագործվել են նաև այլ թուրք հետազոտողների աշխատանքները, որոնք հիմնականում լույս են տեսել 2000-ական թվականներին⁵: Բացի այդ, Թուրքիայում թեմայի վերաբերյալ պաշտոնական մոտեցումը հասկանալու համար կարևոր աղբյուր է ծառայում Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության հեղինակած «Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության պատմությունը» գիրքը⁶: Հայ հեղինակներից Արսեն Ավագյանի աշխատանքները կարևոր են թուրքական անվտանգության համակարգի էթնիկ պատկանելիությունն ու գաղափարախոսական նրբությունները հասկանալու համար:

Պատմական ակնարկ

Երիտթուրքերի կառավարման շրջանից անմիջապես առաջ Օսմանյան կայսրությունում գործում էին հետախուզական բնույթի գոր-

³ Tevetoglu F., Milli Mücadele Yıllarındaki Kuruluşlar, TTK, Ankara, 1991; Pehlivanlı H., Kurtuluş Savaşı İstihbaratında Askeri Polis Teşkilatı, Ankara, 1992; Tetik A., Teşkilat-1 Mahsusa (Umur-1 Şarkıyye Dairesi) Tarihi Cilt 1: 1914-1916, İstanbul, 2014.

⁴ Zürcher E. J., "Milli Mücadele'de İttihatçılık", İletişim Yayınları, İstanbul, 2011.

⁵ Özkan T., "Milli İstihbarat Teşkilatı Mit'in Gizli Tarihi", İstanbul, 2003; Demirel E., "Teşkilat-1 Mahsusa'dan Günümüze Gizli Servisler", İstanbul, 2002.

⁶ İter E., "MIT Tarihçesi", Ankara, 2012.

ծառույթներ իրականացնող կազմակերպություններ, որոնցից էր, օրինակ, Աբդուլհամիդ Երկրորդ սուլթանի գլխավորությամբ գործող «Յըլդըզ» (թուրք. *Yıldız*) հասուկ կազմակերպությունը⁷, որն Օսմանյան կայսրությունից մեզ հայտնի առավել կազմակերպված կառույցներից էր: «Յըլդըզը» անմիջականորեն ենթարկվում էր սուլթանին և հանդիսանում էր ոչ միայն պետական կարիքների համար տեղեկություն հավաքագրող կառույց, այլ անմիջականորեն սպասարկում էր Աբդուլհամիդ Երկրորդ սուլթանի քաղաքական և անձնական շահերը ու, ըստ վերջինիս ցուցումների, իրականացնում էր նաև քաղաքական բռնաճնշումներ և ահաբեկչություն: Այն օգտագործվել էր նաև 19-րդ դարի վերջում Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածների կազմակերպման և իրագործման համար:

«Յըլդըզին» փոխարինման եկած «Հասուկ կազմակերպության»⁸ հիմնադիրն է համարվում Օսմանյան կայսրության ռազմական գործերի նախարար, երիտթուրք գործիչ Էնվեր փաշան: Օսմանյան կայսրությունում կազմակերպված, արդյունավետ, ժամանակի պահանջներին համապատասխան ներքին և արտաքին հետախուզության գրեթե բացակայությունն իրեն զգացնել էր տալիս Բալկանյան պատերազմների ընթացքում, ինչն էլ ստիպեց երիտթուրքական կառավարությանը ստեղծել նման մի կազմակերպություն, որը տասնամյակներ շարունակ հիմք էր ծառայելու հանրապետական Թուրքիայի հետախուզական կառույցների համար:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսում կնքվեց զինադադար Օսմանյան կայսրության և պատերազմում հաղթանակ տարած Անտանտի պետությունների միջև, ինչի արդյունքում «Միություն և առաջադիմություն» կուսակցությունից ձևավորված կառավարությունը հրաժարական տվեց, և նրա անդամները, այդ թվում՝ Էնվեր և Թալեաթ փաշաները, Թուրքիայից փախուստի դիմեցին⁹: Պաշտոնապես իր գոյությունը դադարեցրեց նաև «Հասուկ կազմակերպությունը», որը գործում էր երիտթուրքական կառավարության վերահսկողության ներքո: Թեև պաշտոնապես այս կառույցն այլևս գոյություն չունեի, սակայն նրա անդամները շարունակում էին հետախուզական բնույթի գործունեությունը՝ հետագայում ստեղծելով նոր խմբեր և կազմակերպություններ,

⁷ İter E., նշվ. աշխ., B1.

⁸ «Հասուկ կազմակերպությունն» հայտնի է նաև իր թուրքերեն անվան տառադարձումով՝ «Թեշքիլաթ-ը Մահսուսա» (թուրք. *Teşkilât-ı Mahsusa*):

⁹ Maurice F. B., "The Armistice of 1918", London, 1943, p. 50.

ակտիվ գործելով կայսրության տարբեր հատվածներում: Հետագա տարիներին դրանց զգալի մասը ծառայում էր 1919 թվականին սկիզբ առած քեմալական շարժման շահերին՝ պայքարելով Անտանտի ուժերի և սուլթանական կառավարության դեմ:

«Քարաքոլի» ստեղծումն ու գործունեությունը

Երիտթուրքական կառավարության հրաժարականի հետ պաշտոնապես գործունեությունը դադարեցրած «Հատուկ կազմակերպությունը» հաջորդեց «Քարաքոլ» (թուրք. *Karakol*) կազմակերպությունը¹⁰, որի հրամանատարությունն ու հիմնական ուժերը տեղակայված էին Անտանտի ուժերի կողմից վերահսկվող Ստամբուլում, ինչպես նաև Փոքր Ասիայի տարբեր կարևոր կետերում¹¹:

«Քարաքոլի» վերաբերյալ աղբյուրներ են պահպանված Թուրքիայի գինված ուժերի գլխավոր շտաբի արխիվում (ATASE)¹² և Թուրքիայի Ազգային անվտանգության ծառայության հատուկ արխիվում (MIT Özel Arşivi)¹³: Այնուամենայնիվ, կազմակերպության ղեկավարների գրչին պատկանող արժեքավոր հուշագրություններ գրեթե չկան, ինչը կարող էր «Քարաքոլի» հետազոտությունն ավելի համապարփակ և բազմակողմանի դարձնել:

«Քարաքոլը» ստեղծվել է 1918 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Թալեաթ և Էնվեր փաշաների կարգադրությամբ, որպեսզի գաղտնի պայմաններում իրականացնեն երիտթուրք ղեկավարների միջև կապի և տեղեկությունների փոխանակման գործընթացը¹⁴: Թուրք հետազոտողների մի մասը «Քարաքոլի» հիմնադրման ժամկետ է ընդունում 1919 թվականի փետրվարի 5-ը, երբ Ստամբուլի Սուլթանահմեթ թաղամասում գաղտնի հանդիպում են ունեցել կազմակերպության հիմնադիր անդամները¹⁵: Թեև 1919 թվականի փետրվարի 5-ին կազ-

¹⁰ Ամբողջական անվանումն է Karakol Cemiyeti, որը բառացի թարգմանվում է «Ոստիկանական համայնք»:

¹¹ Aydın N., Osmanlı İmparatorluğu'nda İstihbarat. Parola Yayınları, 2015, ss. 247-258.

¹² TSK, Genelkurmay Askerî Tarih Ve Stratejik Etüt (ATASE) Daire Başkanlığı Yayın Kataloğu, վերջին մուտք՝ 25.06.2016, <http://www.tsk.tr/Content/pdf/yayinlar/genelkurmay-atase-daire-baskanligi-yayin-katalogu1.pdf>.

¹³ İlter E., նշվ. աշխ., հավելված 13:

¹⁴ Giray M., "İstanbul'un işgalinde Gizli Bir Teşkilat, Karakol Cemiyeti", Yakın Tarihimiz, 1962, s. 345.

¹⁵ Demirel E., նշվ. աշխ., էջ 182-183:

մակերպված ժողովը մեծ կարևորություն և նշանակություն ուներ, սակայն կազմակերպության գործունեությունն ու կազմավորումը սկսել էր մինչ երիտթուրք ղեկավարների փախուստը Գերմանիա:

«Քարաքուլի» ղեկավարներն էին գնդապետ Քարա Վասըֆը, Քարա Քեմալը, պաշտոնաթող մայոր Բահա Սաիդը, գնդապետ Գալթալը Շևքեթը, որոնք բոլորը երիտթուրքական շարժման ակտիվ և ազդեցիկ գործիչներից էին¹⁶: Երիտթուրքական գաղտնի կազմակերպությանն անդամակցում էին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի անդամներ, «Հատուկ կազմակերպության» նախկին ներկայացուցիչներ, ինչպիսիք էին՝ Արիֆ բեյը, Չերքեզ Ռեշիթը, գնդապետ Օմեր Լյուրֆին, գնդապետ Արիֆ Հիքմեթը, Ահմեթ Հիլմի բեյը, մայոր Նաիմ Ջևաթը, փաստաբան Ռեֆիք Իսմայիլը, փոխգնդապետ Էդիփ Սերվեթ թյորը և այլոք¹⁷: Քարա Քեմալը «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ էր, Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրության պարենի հարցերով նախարարը: Քարա Քեմալը Հայոց ցեղասպանության իրազորման ակտիվ մասնակիցներից էր և 1919 թվականի Ստամբուլի ռազմական արտակարգ աստիճաններում հայերի կոտորածների կազմակերպման մեղադրյալներից¹⁸: Քարա Քեմալը հայտնի էր նաև Թալեաթ փաշայի հետ սերտ հարաբերություններով¹⁹: Ընդհանրապես, կազմակերպության մեջ մեծ թիվ էին կազմում 1915-1918 թվականներին հայերի, հույների և այլ էթնիկ/կրոնական փոքրամասնությունների կոտորածներին մասնակցած «Հատուկ կազմակերպության» անդամները, որոնց թվում էին Դայը Մեսութը, Քարա Արսլանը, Իփսիզ Ռեջեփը, Յահյա Քափթանն ու այլոք²⁰: Բացի այդ, այս կառույցների էթնիկական քննությունը ցույց է տալիս մեծ թվով չերքեզների առկայությունը, որը ինչպես այդ տարիներին, այնպես էլ մեր օրերում թուրքական անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչներից է:

¹⁶ İter E., նշվ. աշխ., էջ 3:

¹⁷ Demirel E., նշվ. աշխ., էջ 183:

¹⁸ Անումյան Մ., «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամների դատավարությունը (1919 թ. ապրիլ-մայիս ամիսներ) Ստամբուլի ռազմական արտակարգ աստիճանում», Թուրքագիտական պորտալ, 2013, վերջին մուտքը՝ 11.06.2016 թ., <http://allturkey.am/1094>.

¹⁹ Zürcher E. J., "Milli Mücadele'de İttihatçılık", İletişim Yayınları, İstanbul, 2011.

²⁰ Նույն տեղում:

Կազմակերպության կենտրոնակայանը Ստամբուլում էր, թեև այն գործում էր կայսրության գրեթե ողջ տարածքում: Բացի կենտրոնական մարմնից, կառույցն ուներ նաև «թաղամասային ճյուղեր», որոնք գործում էին Ստամբուլի Բեշիքթաշ, Բաքըրքյոյ, Սկյուտար շրջաններում: Ձենքի և զինամթերքի տեղափոխությամբ զբաղվում էր ռազմական մատակարարման բաժինը՝ Ալի Ռեզա բեյի գլխավորությամբ²¹: Կառույցի գործակալները գործում էին ոչ միայն Ստամբուլի տարածքում, այլ նաև Փոքր Ասիայի տարբեր հատվածներում, հատկապես, Իզմիրում (Չմյուռնիայում):

Կառուցվածքային տեսանկյունից «Քարաքոլը» բաղկացած էր երեք հիմնական բաժիններից՝ մամուլ, քարոզչություն և հետախուզություն (լրտեսական/գործակալական գործունեություն): Այս բաժիններն ունեին իրենց պատասխանատուներն ու ենթակառուցվածքները: Կազմակերպությունն առանձնակի կարևորում էր մամուլի հետ աշխատանքը, իսկ այս ուղղությունը ղեկավարում էր Ալի Ռեզա բեյը: «Քարաքոլի» ազդեցության տակ էր Ստամբուլում լույս տեսնող «Իլերի» թերթը²²: Քարոզչական բաժնի ղեկավարն օսմանյան բանակի սպա Քեմալեթթին Սամի բեյն էր²³, որի խնդիրն էր քարոզչական գործունեություն իրականացնել ոչ միայն օսմանյան պետության սահմաններում, այլ նաև հետաքրքրություն ներկայացնող եվրոպական երկրներում: Բուն հետախուզական գործունեության համար պատասխանատուն օսմանյան բանակի շտաբային փոխգնդապետ Էդիփ Սերվեթ բեյն էր: Վերջինիս ղեկավարած բաժնի գործակալները ներդրված էին նաև մի շարք օտարերկրյա դեսպանատներում²⁴:

«Քարաքոլի» առաջնային խնդիրներից էր նաև երիտթուրք ղեկավարների պաշտպանությունը հայկական կառույցների գործողություններից²⁵: «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավար շրջանակները հաշվի էին առնում Հայոց ցեղասպանության հետևանքով հայերի շրջանում վրիժառուական գործողությունների հնա-

²¹ Demirel E., նշվ. աշխ., էջ 188:

²² Özkan T., "MIT'in gizli tarihi", İstanbul, 2003, s. 102.

²³ 1920 թվականից Քեմալեթթին Սամի բեյը քեմալական բանակի Կովկասյան ճակատի հրամանատարական կազմում է ընդգրկվել, իսկ Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո նշանակվել է Գերմանիայում Թուրքիայի դեսպան, իսկ նրա ընտանիքը հետագայում վերցրել է Գյոթթեն ազգանունը:

²⁴ Özkan T., նշվ. աշխ., էջ 103:

²⁵ Mumcu U., "Gazi Paşa'ya Suikast", Ankara, 1999, ss. 95-96.

րավորությունը և դրանից բխող լուրջ սպառնալիքը սեփական անվտանգության համար: «Քարաքոլը» կոչված էր լուծելու այս խնդիրը պաշտպանելու երիտթուրք ղեկավարների անհատական անվտանգությունը:

Սկզբնական շրջանում «Քարաքոլի» հիմնական խնդիրներից էր պայքարը բրիտանական հետախուզության դեմ, որն ակտիվորեն գործում էր Անտանտի ուժերի կողմից վերահսկվող Ստամբուլում և իր թիրախում էր պահում նման կառույցներին²⁶:

Իր գոյության սկզբնական շրջանի առաջնային այս խնդիրներից զատ, ամիսներ անց կազմակերպությունն ակտիվորեն ներգրավվեց քեմալական շարժմանը: 1919 թվականի մայիսին սկիզբ առած քեմալական շարժումը սպառազինության և զինվորական անձնակազմի մեծ պահանջարկ ուներ, ինչն էլ փորձում էր լուծել Ստամբուլում գործող գաղտնի կազմակերպությունների միջոցով, որոնցից առաջինն էլ «Քարաքոլն» էր:

«Քարաքոլն» իր գործունեության ընթացքում հաջողել է քեմալական զորքերին նշանակալի չափով սպառազինություն մատակարարել և զինվորական անձնակազմ տեղափոխել: Թուրք հետազոտող Նեջդեթ Էքինջիի տվյալներով՝ «Քարաքոլի» գործունեության արդյունքում Ստամբուլի զինապահեստներից զգալի քանակությամբ զենքեր, այդ թվում՝ ինքնաձիգեր (56 000 միավոր), գնդացիներ (320 միավոր), հրացաններ (1500 միավոր), մեծ քանակությամբ փամփուշտներ և հրետանու արկեր, զինվորական հանդերձանք է տեղափոխվել Փոքր Ասիա՝ քեմալական շարժման ակտիվ օջախներ²⁷: Մեկ այլ թուրք հետազոտող Էմին Դեմիրելի հաղորդած տեղեկություններով՝ կազմակերպությունը քեմալական շարժմանը մասնակցելու համար շարժման կենտրոններ օսմանյան բանակի 2 000 սպա է տեղափոխել²⁸: Կազմակերպության հաջողված քայլերից էր նաև 1920 թվականի հունվարի 20-ի գործողությունը, որի արդյունքում Գալիպոլիում Ֆրանսիայի վերահսկողության տակ գտնվող զինապահեստից «Քարաքոլը» կարողացավ հափշտակել շուրջ 8500 միավոր հրացան, 33 միավոր գնդացի, մեծաքանակ զինամթերք, որոնք էլ հաջողությամբ փոխանցեց քեմալական շարժման կենտրոններին²⁹:

²⁶ Ekinci N., նշվ. աշխ., էջ 167:

²⁷ Ekinci N., նշվ. աշխ., էջ 170:

²⁸ Demirel E., նշվ. աշխ., էջ 189:

²⁹ Zürcher E. J., նշվ. աշխ.:

Բացի սպառազինության և անձնակազմի տեղափոխությունը, «Քարաքոլի» կողմից քեմալական ղեկավարությանը շարունակաբար տեղեկություններ են հաղորդվել, որոնք առնչվում էին Ստամբուլի կառավարությանը, բրիտանական ուժերի գործունեությանը և հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաներին: «Քարաքոլի» կարևոր գործողություններից էր Օսմանյան կայսրության մեծ վեզիր Դամադ Ֆերիթ փաշայի շրջապատում սեփական գործակալի ներդրումը, ինչը հնարավորություն էր տալիս հավաստի տեղեկատվության տիրապետել:

Բացի այս, «Քարաքոլը» փորձում էր կապեր հաստատել արտաքին աշխարհում հնարավոր դաշնակիցների հետ: Կազմակերպությունը պոտենցիալ դաշնակից էր տեսնում բոլշևիկներին, ինչի վկայությունն էր վերջիններիս հետ կապեր ստեղծելու համար օսմանյան մեջլիսի նախկին պատգամավոր Ֆուաթ Սաբիթի հետ մեկտեղ «Քարաքոլի» անդամներ Յուսուֆ Չիյայի և Բահա Սաիդի 1919 թվականի սեպտեմբերին ուղևորությունը Հյուսիսային Կովկաս³⁰: Բանակցությունների արդյունքում կազմակերպությունը կարողանում է ֆինանսական աջակցություն ստանալ բոլշևիկյան գաղտնի կազմակերպություններից³¹: «Քարաքոլի» և բոլշևիկյան կառույցների միջև համագործակցությանն աջակցում էին Ռուսաստանում հաստատված երիտթուրք գործիչները, սակայն այս համագործակցությունը, ինչպես կտեսնենք ստորև, դժգոհություն էր առաջ բերում քեմալական շարժումը ղեկավարող Մուսթաֆա Քեմալի մոտ:

Կայսրության ներսում ևս «Քարաքոլը» փորձում էր համագործակցել տարատիպ խմբերի, անհատների և կազմակերպությունների հետ: Թուրք հետազոտողներ էմին Դեմիրելն ու Թունջայ Օզքանն իրենց աշխատանքներում նշում են բեքթաշիների կրոնադավանական կառույցների հետ «Քարաքոլի» համագործակցության մասին^{32, 33}: Ակտիվ կապեր էին հաստատված օսմանյան բանակի սպաների հետ, որոնց մի մասին էլ «Քարաքոլը» տեղափոխում էր քեմալական շարժման կենտրոններ:

³⁰ Tansu S. N., "İki Devrin Perde Arkası, Anlatan: Hüsamettin Ertürk", İstanbul, 1957, s. 217.

³¹ Demirel E., նշվ. աշխ., էջ 188:

³² Նույն տեղում:

³³ Özkan T., նշվ. աշխ., էջ 100:

Հանդիսանալով քեմալական շարժման վաղ շրջանի կարևոր դերակատարում ունեցած ուժերի՝ «Քարաքոլի» թեման ակտիվորեն քննարկվում է 1919 թվականի սեպտեմբերի 4-11-ին անցկացված Սեֆաստիայի (Սվազի) կոնգրեսի ժամանակ: Համաժողովին մասնակցում է Ստամբուլից Սեֆաստիա ժամանած «Քարաքոլի» պատվիրակությունը՝ Քարա Վասըֆ Բեյի գլխավորությամբ³⁴:

Քեմալական շարժմանն աջակցելու հետ մեկտեղ՝ «Քարաքոլն» աստիճանաբար հայտնվում է շարժումը գլխավորող Մուսթաֆա Քեմալի համար ոչ ցանկալի տարրերի խմբում: Քեմալը փորձում էր վերացնել «Քարաքոլից» եկող հնարավոր վտանգը, որն արտահայտվում էր կազմակերպության ղեկավարների ինքնուրույն քաղաքականության և Քեմալին մրցակից երիտթուրք ղեկավարների հետ (այդ թվում կազմակերպության հիմնադիրներ Թալեթ և Էնվեր փաշաների) ունեցած հարաբերությունների տեսքով:

Իր հայտնի «Ճառի»՝ «Քարաքոլի» գործունեությանը վերաբերող հատվածում Մուսթաֆա Քեմալը նշում է, որ անմիջական կապ չի ունեցել կազմակերպության ստեղծման և գործունեության հետ, իսկ կառույցի ղեկավարներից Քարա Վասիֆ Բեյի հետ հանդիպել է Սեֆաստիայի կոնգրեսի ժամանակ³⁵: «Երբ Սեֆաստիայի կոնգրեսի ժամանակ Վասըֆ Բեյին հարցրի, թե [«Քարաքոլի»] գաղտնի կենտրոնը, գաղտնի հրամանատարություն և գաղտնի շտաբի պետը ովքեր են, ևս պատասխանեց. «Բոլորը դուք եք և ձեր ընկերները»: Սա ինձ ոտքից գլուխ զարմացրեց: Սա, իհարկե, տրամաբանությանը չէր ենթարկվում, քանի որ ոչ ոք ինձ մոտ նման կառույց ստեղծելու խոսք չէր բացել և այս գործն անելու համար ինձնից թույլտվություն չէր ստացել», -իր «Ճառում» նշել է Աթաթուրքը³⁶: Օգբանի աշխատանքում նշվում է, որ Մուսթաֆա Քեմալը տեղյակ էր, որ ստեղծվում է գաղտնի կազմակերպություն³⁷: Այլ աղբյուրներ ևս նշում են, որ Մուսթաֆա Քեմալը ոչ միայն իմացել է կառույցի գոյության մասին, այլ մինչ Փոքր Ասիա մեկնելը կապեր է պաշտպանել «Քարաքոլի» ղեկավարներից Քարա Քեմալի հետ³⁸:

³⁴ Demirel E., նշվ. աշխ., էջ 186:

³⁵ Atatürk M. K., "Nutuk", 2. Bölüm, Milli Kongreler ve Gelişen Olaylar, İstanbul.

³⁶ Նույն տեղում:

³⁷ Özkan T., նշվ. աշխ., էջ 91:

³⁸ Այս մասին մանրամասն տե՛ս Zürcher E. J., "Milli Mücadele'de İttihatçılık", İstanbul, 2011.

Մուսթաֆա Քեմալի հայտարարություններից, ինչպես և թուրքական պատմագրության վկայություններից կարելի է ենթադրել, որ թեև «Քարաքոլը» մեծապես ծառայել է քեմալական շարժման շահերին, սակայն Մուսթաֆա Քեմալի և կազմակերպության ղեկավարների միջև տարաձայնություններ և անհամաձայնություններ են եղել³⁹:

Միևնույն ժամանակ, կազմակերպությունը չեզոքացնելու համար կարևոր պատճառներից մեկն էլ «Քարաքոլի» ղեկավարների ինքնուրույն գործունեությունը Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունների հետ, ինչը դեմ էր Մուսթաֆա Քեմալի շահերին, որը փորձում էր վերահսկել բոլշևիկների հետ հարաբերությունները: Մուսթաֆա Քեմալը այս թեմալի առնչությամբ 1920 թվականի մարտի 3-ին 15-րդ կորպուսի հրամանատար Քյազըմին (Քարաբեքիրին) գաղտնի հեռագիր է ուղարկում, որտեղ իր դժգոհությունն է հայտնում «Քարաքոլի» ղեկավարներից Բահա Սաիթ Բեյի Բաքվում Կարմիր բանակի ներկայացուցիչների հետ հանդիպումների և բանակցությունների վերաբերյալ⁴⁰:

«Քարաքոլի» և Մուսթաֆա Քեմալի միջև լարվածություն է ստեղծում վերջինիս հավատարիմ հրամանատարներից Յահյա Քափթանի⁴¹ սպանությունը, որի կազմակերպման համար մեղադրվում են նաև «Քարաքոլի» անդամները⁴²:

Թուրքիայի մշակույթի նախարարության պաշտոնական կայքէջի թուրքական պատմությանը նվիրված բաժնում «Քարաքոլի» փակման պատճառ է նշված այն, որ «կազմակերպությունը սկսել էր խանգարել քեմալական շարժմանը, ինչի պատճառով էլ թուրքական խորհրդարանը որոշել էր փակել այն»⁴³: Ինչպես գրում է թուրք հետազոտող Մեսութ Այդընը, «Քարաքոլի» աշխատանքում ձախողումներ են ի հայտ գալիս նաև Ստամբուլից Փոքր Ասիա զինվորականներ տեղափոխելու գործընթացում, քանի որ մարդկային մեծ հոսքի պայմաններում Փոքր

³⁹ Toprak Z., "Mütareke Döneminde İstanbul", Dünden Bugüne İstanbul Ansiklopedisi, Cilt 6, Ankara, 1994, ss. 19-23; Demirel E., նշվ. աշխ., էջ 187:

⁴⁰ "Atatürk'ün Tamim, Telgraf ve Beyannameleri", Atatürk, Dil ve Tarih Yüksek Kurumu Atatürk Araştırma Merkezi, Ankara, 1991, ss. 243-244.

⁴¹ Երիտթուրք գործիչ Յահյա Քափթանը Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից և «Հատուկ ծառայության» անդամներից էր:

⁴² Özkan T., նշվ. աշխ., էջ 104:

⁴³ TC Kültür ve Turizm Bakanlığı, "Karakol Cemiyeti", վերջին մուտք՝ 11.03.2016, <http://ekitap.kulturturizm.gov.tr/TR,82590/karakol-cemiyeti.html>

Ասիա են անցնում նաև բրիտանական հետախուզության գործակալներ⁴⁴:

Թեև երիտթուրքական այս գաղտնի կառույցն իր գործունեության առաջին տարիներին նյութապես զգալի աջակցել էր Մուսթաֆա Քեմալի գլխավորած շարժմանը, սակայն հետագայում շարժման ղեկավարումը շարունակաբար իր ձեռքում կենտրոնացնող և այլ երիտթուրք ղեկավարների հետ մրցակցող Մուսթաֆա Քեմալի համար «Քարաքոլի» ղեկավարների ինքնուրույն քայլերը դառնում են վտանգավոր⁴⁵, և նա սկսում է կազմակերպությունից ազատվելու գործընթացը՝ հետագա տարիներին փորձելով իր անունն անմիջականորեն չկապել այս կառույցի գործունեության հետ⁴⁶:

Այսպիսով, երիտթուրքերի ստեղծած կառույցն իր գործունեության վերջին ամիսներին լուրջ խնդիրների է բախվում՝ մի կողմից՝ Մուսթաֆա Քեմալի հակազդեցությունը, մյուս կողմից՝ բրիտանական կողմի հետապնդումները: 1920 թվականի մարտի 16-ին Անտանտի ուժերին հաջողվում է ձերբակալել «Քարաքոլի» ղեկավարներին⁴⁷, որոնք արքայազնի են Մալթա: Սա մեծ հարված էր կազմակերպությանը, որը շուտով դադարեցնում է գործունեությունը, սակայն նրա կադրերի զգալի մասը հետագայում շարունակում են իրենց գործունեությունը նորաստեղծ գաղտնի խմբերի կազմում:

Վերջաբան

1918 թվականը պետք է համարել ոչ թե «Հատուկ ծառայության» գործունեության դադարի, այլ դրա փոխակերպման մեկնարկի տարեթիվ, որը շարունակվեց ոչ միայն մինչ Թուրքիայի Հանրապետության հռչակումը, այլ նաև դրան հաջորդած տասնամյակներին: Այս ընթացքում ստեղծված հետախուզական կառույցների, այդ թվում՝ «Քարաքոլի»

⁴⁴ Aydın M., "Milli Mücadele Döneminde İstanbul'da Faaliyette Bulunan Gizli Gruplar", Tarih Tarih, 26.06.2016, <https://www.tarihtarih.com/?Syf=26&Syz=353183>

⁴⁵ Հատկանշական է, որ 1926 թվականին Մուսթաֆա Քեմալի ղեմ մահափորձի նախապատրաստության համար մեղադրվողների մի զգալի մասը «Քարաքոլի» նախկին անդամներ էին:

⁴⁶ «Քարաքոլի» ղեկավարների անունները հետագայում ակտիվորեն կիրառվում է 1926 թվականի Մուսթաֆա Քեմալի ղեմ մահափորձի դատավարության ժամանակ: Մանրամասն տե՛ս Մ. Անումյան, «Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.)», Երևան, 2013:

⁴⁷ Ekinci N., նշվ. աշխ., էջ 170:

համար ընդհանուր էր այն, որ դրանք ստեղծվել էին «Հատուկ կազմակերպության» տեխնիկական ու կադրային հիմքի վրա և որոշակիորեն այդ կազմակերպության աշխատանքի շարունակությունն ու արդյունքն էին:

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ստեղծված հատուկ խմբերը ոչ պետական կազմակերպություններն էին, որոնց հիմնական նպատակը քեմալական շարժման կարիքների ու շահերի սպասարկումն էր և Անտանտի ուժերի ու օսմանյան դե յուրե կառավարության դեմ գործողությունները: Թուրքիայի անկախության համար շարժման ընթացքում «Քարաքուլի» հիմնական գործառույթը Ստամբուլից Փոքր Ասիա գենք-զինամթերքի և սպաների ու զինվորների տեղափոխումն էր, ինչպես նաև Անտանտի և սուլթանական կառավարության վերաբերյալ տեղեկությունների հայթայթումը:

«Քարաքուլի» վերահսկողությունը խնդիրներ էր առաջ բերում քեմալական վերնախավի շրջանում, ինչի հետևանքով նմանատիպ կազմակերպությունները հայտնվում էին կրկնակի կրակի տակ՝ մի կողմից Մուսթաֆա Քեմալի և նրա համախոհների քայլերը, մյուս կողմից՝ բրիտանական հետախուզության ու Ստամբուլի կառավարության գործողությունները, ինչպես և առկա էին անձնական շահերի և հետաքրքրությունների բախումներ և՛ կազմակերպությունների ներսում, և՛ ծավալված շարժման ընթացքում:

«Քարաքուլի» իրականացրած գործունեությունը Թուրքիայի անկախության համար շարժման կարևոր բաղադրիչներից էր և լուրջ դերակատարում ունեցավ շարժման հաջողության գործում՝ միևնույն ժամանակ կապող օղակ և փորձ հանդիսանալով «Հատուկ կազմակերպության» ու Թուրքիայի հանրապետական տարիներին ստեղծված հետախուզական կազմակերպությունների համար:

PETROSYAN GEVORG

(IOS)

“INTERMEDIATE” INTELLIGENCE: THE IMPACT OF “KARAKOL” ON
THE KEMALIST MOVEMENT AND ON THE EMERGENCE OF TURKISH
INTELLIGENCE

In this paper, focusing on “Karakol”, I discuss the emergence of the Turkish intelligence services in the “Intermediate period” between the Armistice of Mudros till the establishment of the Republic of Turkey in 1923.

I argue that the Secret Organization (*Teşkilât-ı Mahsusa*) of Ottoman Empire was both the structural and staff base for many small secret intelligence organizations which were in action during the following years after 1918.

In this paper, the focus is on the main activities of "Karakol", its structural and staff nuances, other features and characteristics. I discuss the importance of this organization in the Turkish War of Independence, its relation with Mustafa Kemal and other leaders.

This period is very important for understanding the security system of Turkey not only in the first half of 20th century, but following decades as well entering a long period of transformations and changes. The experience of "Karakol" and other secret organizations became crucial for the work of Turkish Intelligence during the early decades of Republican era.

ՄԱՐԳՍՅԱՆ ՏԻՉՐԱՆ

(ՀԱԻ)

ԱՍՈՒՍՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ «ՄԱՀՐԻԵՆ» ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մահրիեն (մեհրիե مهریه) ժամանակակից Իրանում ամուսնական հարաբերություններում դեռևս արդիական է և խիստ կարևոր դերակատարություն ունի:

Մահրիեն, լինելով Ղուրանով և իսլամական շարիաթով հաստատված նորմ, ոչ բոլոր իսլամադավան ժողովուրդների մոտ է լայն կիրառություն ունեցել: Որոշ իսլամադավան ժողովուրդների ամուսնական համակարգում մահրիեին զուգահեռ կամ նույնիսկ միայն, առաց մահրիեի, տարածված է/եր կալիմը: Վերջինս հայտնի էր և որոշ չափով դեռևս պահպանվել է քաղկիդների¹, դազախների², նոդայների³, թյուրքալեզու⁴ այլ ժողովուրդների մոտ:

Մահրիե (արաբերեն մահր) բառն ունի սեմական ծագում և, ըստ Հ.Աճառյանի, առաջացել է (mhr) արմատից, նշանակում է «մի կին գնել»⁵: Մահրիե՝ մեհրիե (مهریه) բառի պարսկերեն բացատրությունը, ըստ Դեհխոդայի բացատրական բառարանի, նշանակում է «Այն, ինչ կտա փեսան հարսին ամուսնության համար/դիմաց»⁶: Աշոտ Սուրբիասյանն իր «Հայոց լեզվի հոմանիշների բառարանում»⁷ գլխազնի

¹ Տե՛ս Башкирская свадьба. <http://www.bashculture.ru/archives/28>.

² Տե՛ս Дзуцев Х. В. Монография «Эволюция осетинской семьи и межсемейных отношений». <http://www.nocss.ru/projects/18/mon.php>.

³ Տե՛ս Гаджиева С.Ш. Очерки истории семьи и брака у ногайцев в XIX - нач. XX вв., Москва, 1979.

⁴ Տե՛ս Максуди Садри Арсал Тюркская история и право <http://xacitarxan.narod.ru/sma/p27.htm>.

⁵ Աճառեան Հր., Հայերէն արմատական բառարան, Երևան, 1926:

<http://www.nayiri.com/imaginedictionary/Browser.jsp?dictionaryId=7&query=%D5%B4%D5%A1%D5%B0%D6%80>.

⁶ Տե՛ս Դեհխոդայի բառարանի էլեկտրոնային տարբերակում:

<http://www.loghatnaameh.org/dehkhodasearchresult-fa.html?searchtype=3&word=2YXZh9ix24zZh%2bKAjw%3d%3d>.

⁷ Տե՛ս Սուրբիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1967:

հոմանիշ է նշում նաև փրկագինը և մահրը, սակայն հոդվածում ցույց ենք տալու, որ թե՛ «կալիմը», թե՛ հայ ազգագրագետների կողմից շրջանավոր գլխագինը չեն կարող համեմատվել մահրի կամ մահրիեի (մեհրիե) հետ:

Հայերի ավանդական մշակույթում տարածված գլխագինը (կաթնագինը), ծծագինը⁸, որը մեկնաբանվել է նաև որպես առ և տուր⁹, այսինքն՝ աղջկա (ապագա կնոջ, հարսի) համար վճարվող խորհրդանշական գին, այլ իմաստ ունի, քան իրանական մահրիեն: Ըստ Խ. Սամվելյանի՝ դեռևս հին Հայաստանում գոյություն է ունեցել գնամաք ամուսնություն, որի արդյունքում տղայի տոհմից աղջկա տոհմին փրկանք էին տալիս, որպեսզի ծածկվի-փոխհատուցվի աղջկա ընտանեկան համայնքի կողմից աղջկա հեռանալով պատճառվող վնասը¹⁰: Ղուրանով և իսլամական շարիաթով հաստատված և Իրանում դեռևս խիստ կարևորվող մահրիեն որևէ աղերս չունի «առևտրի», որևէ վնաս փոխհատուցելու և/կամ առհասարակ ամուսնացող և ընտանիքից/համայնքից հեռացող աղջկա ընտանիքի/համայնքի հետագա նյութական խնդիրների հետ:

Իրանը, ինչպես գիտենք, իսլամադավան երկիր է (99.39 % մահմեդական)¹¹, իսկ պետական կառուցվածքով այն այսօր համարվում է աշխարհի եզակի թեոկրատական երկրներից, հետևաբար այնտեղ քաղաքացիական օրենքներն ավելի շատ ազդված են կրոնական նորմերից: Ընտանիքին, ամուսնությանը, սեռերի փոխհարաբերություններին վերաբերող Քաղաքացիական օրենսգրքի հոդվածներն ուսումնասիրելով, ակհայտորեն տեսնում ենք, որ դրանք ամբողջովին հիմնված են գլխավորապես Շարիաթի, տեղական սովորույթների, և ամենագլխավորը՝ Ղուրանի վրա:

<http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=25&pageNumber=146>

⁸ Տե՛ս Լիսիցյան Ս., Չանգեզուրի հայերը, Հայկական ՄՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1969, էջ 188:

⁹ Տե՛ս Харатян З.В., Берущие и дающие (армянские обозначения брачной пары в фолькорно-этнографическом контексте), Историко-этнографические исследования по фольклору, сост. Петрухин В.Я., Москва, 1994, с. 257-266.

¹⁰ Տե՛ս Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, «Արմֆան»-ի հրատ., 3-րդ հատ., Երևան, 1941, էջ 111:

¹¹ Տե՛ս Statistical Center of Iran, 2011 General Census Selected Results, 2012, p. 26.

Հողվածում որպես սկզբնաղբյուր առանձնացրել ենք հատկապես մահմեդականների սուրբ գիրք Ղուրանը, որում համակարգված կերպով ներկայացվում է մահրիեի կիրառությունը, պայմանները:

Ղուրանում նշվում է, որ «կանայք սեփականություն չեն, և Ձեզ չի թույլատրվում ստանալ կանանց առանց իրենց ցանկության և մահրիեի: Նրանց հանդեպ արդարացի եղե՛ք և մի՛ պահանջեք, որ նրանք ձեզ հատկացնեն նախաամուսնական նվերի՝ մահրիեի մի մասը, որ դուք տվել եք, և այն սեփականության մի մասը, որ դուք եք նրանց նվիրել: Սակայն, եթե նրանք ինչ-որ ակնհայտ նողկալի արարք կամ մեղք են գործել, այդ դեպքում դուք կարող եք ներկայացնել ձեր պահանջները կամ հարաբերությունները խզելու դեպքում կարող եք վերցնել ձեր նվիրածի մի մասը¹²: Մահրիեն ձեզ վրա դրված ամուսնական պարտքն է: Մեղք չէ, եթե դուք համաձայնության գաք. կինը համաձայնվում է ավելի քիչ մահրիեի կամ տղամարդը համաձայնվում է ավելացնել այն»¹³: «Ամուսինը մահրիեի վրա իրավունք չունի: Եվ եթե կինը իր բարի կամքով զիջում է ամուսնուն մահրիեի մի մասը, ապա նա կարող է այն օգտագործել որպես ընտանիքի բարօրությանն ուղղված մաքուր գումար»¹⁴:

Իրանի տարածքում դարեր շարունակ գոյություն ունեցող մեհրիեն (^{۴۲۴}) մի գումար է, կամ՝ նյութական արժեք ունեցող իր, գույք, որն ամուսինը վճարում է կամ պարտավորվում է հետագայում վճարել իր կնոջը (այլ ոչ թե նրա ընտանիքին) սեռական հարաբերություններ ունենալու հիման վրա կամ, կարելի է ասել, նրա հետ սեռական հարաբերությունների իրավունքի համար: Միայն կինն է (և ոչ թե նրա ընտանիքը) լիազորված ստանալու իրեն հասանելիք մահրիեն: Սովորաբար մահրիեի մի մասը նախապես է վճարվում: Որոշ դեպքերում կինը լիազորված է հրաժարվել իր ամուսնու հետ սեռական հարաբերությունից մինչև մահրիեի մի մասի ստանալը¹⁵:

Մահրիեն կարող է լինել կամ չլինել տնտեսապես նշանակալի, բայց այն միշտ օրինական է ու միշտ կարևոր: Մահրիեն ոչ թե ինչ-որ բանի գին է, այլ ամուսնական բանաձևի և սեռական հարաբերությունների հետ միասին օրինական ամուսնական կապը հաստատող արարողակարգի մաս, կարելի է ասել՝ ամուսնական կապը հաստատող

¹² Տե՛ս Ղուրան 4:19:

¹³ Տե՛ս Ղուրան 4:24:

¹⁴ Տե՛ս Ղուրան 4:4:

¹⁵ Տե՛ս Civil Code of IRI, Art. 1085.

գործընթացի սկզբի գրավական: Իրանում բոլոր ամուսությունների համար հատուկ ամուսնական պայմանագիր է կնքվում, և մահրիեն պետք է ընդգրկվի և վավերացված լինի ամուսնական պայմանագրում: Առանց մահրիեի հիշատակման պայմանագիրն անվավեր է: Պայմանագիրն անվավեր չճանաչելու դեպքում մահրիեն հաշվարկվում է ըստ կնոջ հասարակական դիրքի և անհատական որակների (mahr al-mithal), որոնք նույնպես սովորական հատկանիշներ են մահրիեն պայմանագրի մեջ ընդգրկելու համար (mahr al-musamma)¹⁶: Կնոջ հասարակական դիրքի հաշվարկի հիմք հանդիսանում են նրա ծնողների (խնամակալների) նյութական հնարավորությունները, եկամուտը, կնոջ անձնական որակները՝ կրթությունը և այլն, միով բանիվ՝ կյանքի այն որակները, որ կինն ունի մինչև ամուսնանալը:

Մահրիեի չափը որոշվում է ապագա ամուսինների (ոչ թե նրանց ծնողների կամ խնամակալների) համաձայնությամբ և նշվում է ամուսնության բանաձևում. «Ես ամուսնանում եմ քեզ հետ, (գումարի չափն է նշվում)» կամ «Ես ամուսնանում եմ քեզ հետ՝ իմ գլխավոր, (որոշակի գումարով)»¹⁷: Եթե գումարը նշված չէ պայմանագրում, պայմանագիրը մնում է վավեր, իսկ գումարը որոշվում է փոխհամաձայնությամբ կամ օրենքներով:

Քանի որ մահրիեն, ներառված լինելով քաղաքացիական իրավունքի մեջ, կրոնի տեսանկյունից նույնպես համարվում է կարևոր հարց, թե՛ քաղաքացիական օրենսգրքի աշխարհիկ վերլուծաբանների, թե՛ Իրանում մեծ հեղինակություն ունեցող կրոնական առաջնորդների և տեսաբանների միջև մահրիեի մեկնաբանությունների հարցում որոշ բանավեճ կա:

Խնդրո առարկա է հատկապես մահրիեի չափը և նրա վճարման ընթացակարգը: Քանի որ մահրիեն ժամանակակից Իրանում ամուսնացող զույգերի համար կարևորագույն խնդիր է, այն անշուշտ նկատելիորեն ազդում է թե՛ նախաամուսնական, թե՛ ետամուսնական հարաբերությունների վրա: Իրանի որոշ հետազոտողների կարծիքով մահրիեի պատճառով, օրինակ, բարձրանում է ամուսնական տարիքը:

Մահրիեի չափի մեծության մասին Իրանի հոգևոր առաջնորդ Այյաթոլլա Սեյեդ Խամենեին կարծիք է հայտնել, որ չնայած մահրիեի

¹⁶ St' u Sen McGlin, Family Law in Iran, An essay prepared under the supervision of Leon Buskens for the paper on 'Islamic Family Law' at the University of Leiden, the Netherlands, in the 2000-2001 academic year. (Version 20), p. 49.

¹⁷ Նույն տեղում:

չափի մեծությունը փոխադարձ համաձայնությամբ է լինում, սակայն իսլամը կողմնակից է ցածր մահրիեի¹⁸: Այլաթուլա Միսթանին նույնպես գտնում է, որ շնայած բարձր մահրիեին գույգերի իրավունքն է, սակայն իր կարծիքով դա այդքան էլ ճիշտ չէ¹⁹: Նույն մտտեցումն ունի նաև Այլաթուլա Արդեբիլին: Նա գտնում է, որ իսլամի շարիաթի տեսանկյունից որևէ սահմանափակում չկա մահրիեի մեծության վերաբերյալ, սակայն կրոնի մեջ ընդունված է «որքան քիչ, այդքան լավ» սկզբունքը հղում անելով Մուհամմադ մարգարեին, ով ասել է, որ ամենահաջողված կանայք նրանք են, ում մահրիեին ցածր է²⁰:

Քննարկումը ներառում է նաև մահրիեին վճարելու ընթացակարգերը: Սովորաբար փոխադարձ համաձայնությամբ մի մասը տրվում է ամուսնանալու պահին, մյուս մասը՝ աստիճանաբար, համատեղ կյանքի ընթացքում: Կինը յուրաքանչյուր պահի կարող է պահանջել և ստանալ իրեն հասանելիք մահրիեին: Բնականաբար երբեմն, եթե ոչ հաճախ, համատեղ կյանքի ընթացքում միշտ չէ, որ մահրիեի մնացած մասը կնոջը տրվում է ըստ նրան անհրաժեշտ ժամանակի: Լինում են դեպքեր, երբ կանայք կամավոր հրաժարվում են իրենց մահրիեից, քանի որ հույս չունեն, թե երբևէ այն կստանան: Այդ պատճառով լայն տարածում է ստացել հետևյալ թևավոր խոսքը. «Ո՞վ է մահրիեին տվել և ո՞վ է ստացել» (چه کسی مهریه را داده و چه کسی گرفته), ինչը նշանակում է, որ պայմանագրով վավերացված մահրիեին կինը չի ստացել:

Այլաթուլա Մոքհանին գտնում է, որ իրականում մահրիեին ստանալը միայն կնոջ ցանկությամբ չի պայմանավորված, այլ պետք է սկզբից ծանրութեթև անել խնդիրը, ապա, եթե կինն ուժ ունի, համապատասխան ձևով կստանա²¹: Այլաթուլա Շիրազին վիճարկում է. «Ո՞վ է մահրիեին տվել և ո՞վ է ստացել» խոսքի իրավունքը, քանզի մահրիեին գրանցված է ամուսնական պայմանագրի մեջ, և ամուսինը մինչև վերջ պարտավոր է այն տալ²²:

¹⁸ St' u پاسخ مراجع تقلید درباره مهریه, <http://www.niksalehi.com/din-andishe/archives/190944.php>.

¹⁹ St' u پاسخ چند تن از آیات عظام به پرسش درباره مهریه, <http://www.humanrights-iran.ir/news-29515.aspx>.

²⁰ St' u پاسخ چند تن از آیات عظام به پرسش درباره مهریه, <http://www.humanrights-iran.ir/news-29515.aspx>.

²¹ St' u پاسخ مراجع تقلید درباره مهریه, <http://www.niksalehi.com/din-andishe/archives/190944.php>.

²² St' u مخالفت امام جمعه شیراز با مهریه کم, <http://ghanawehnews.persianblog.ir/post/25/>.

Երբեմն կնքվող ամուսական պայմանագրում մահրիեն նախապայման ունի: Օրինակ՝ մեկը սահմանում է ցածր մահրիե այնքան ժամանակ, մինչև կնոջից չպահանջվի թողնել իր ծննդավայրը, իսկ բարձր մահրիեի դեպքում կնոջից հետագայում կպահանջվի տեղափոխվել մեկ այլ բնակավայր:

Մահրիեի առաջացրած խնդիրների քննարկումները ժամանակակից Իրանում թափացել են նաև հանրային տիրույթ:

Հանրայնացման օրինակներից կարելի է համարել իրանական շատ ֆիլմեր, որտեղ պատկերավոր ներկայացվում են մահրիեի «սակարկման», պայմանավորվածության և հետագայում ներընտանեկան հարաբերություններում խաղացած դերակատարության խնդիրները: Այդպիսի ֆիլմերից մեկն է իրանական արտադրության «Հայրիշխանություն» (փեդար սալար) բազմասերիանոց ֆիլմը²³, որը հարուստ ազգագրական նյութ է պարունակում՝ ներկայացնելով 20-րդ դարի վերջին տասնամյակների թեհրանյան առօրյան, բարքերը, ընտանեկան հարաբերությունները: Ֆիլմում ներկայացված է նահապետական մի ընտանիքի պատմություն և նրա հետ անմիջական հորիզոնական ազգակցական կապ ունեցող այլ ընտանիքներ: Ընտանիքի գլուխ կանգնած է գերդաստանի հայրը՝ իր «անսասան» իշխանությամբ: Որպես մահրիե՝ նշվում է նաև «զրո կիլումետր վարած մեքենա», սակայն ամուսնությունից հետո նորահարսը հրաժարվում է ապրել ընտանիքի մյուս անդամների հետ միասին նույն ընդհանուր, բայց առանձնացված մուտքերով տանը: Ընտանիքի հայրը որոշում է զրկել նրան մահրիեի մաս կազմող մեքենայից, որը բախվում է հարսի բողոքին, քանզի մահրիեն պատկանում է միմիայն նրան, այն նշված է ամուսնական պայմանագրում, և միայն նա իրավունք ունի տնօրինել իրեն պատկանող գույքը:

Թեհրանում հրատարակվող «Համշահրի» օրաթերթը մահրիեի չափի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրության նպատակով 2010 թ. փետրվարի 9-ին (19 բահման, 1389 թ.) անցկացրել է հեռախոսային հարցում 600 հոգու շրջանակում, որոնցից 50%-ը եղել է կին, մյուս 50%-ը՝ տղամարդ: Հարցվածների 44%-ը կարծել է, որ մահրիեի մեծ չափը պատճառ չի կարող հանդիսանալ ամուսնության տա-

²³ St' u پدرا سالار Pedar Salar,

<https://www.youtube.com/watch?v=tLT2IFRGvpc&list=PLChTv0ceKRqoQjh1mDCV C0mKJn oVm7xA>.

րիքի բարձրացման համար: 97%-ը դեմ է եղել բարձր մահրիեի: 43%-ը համաձայն է բարձր մահրիեի՝ որպես երաշխիք հարատև ամուսնության: 61%-ը դեմ է բարձր մահրիեի, քանզի այն երջակության երաշխիք չի հանդիսանում: 59%-ը ոսկեդրամը (սեքքե) համարել է վճարման լավագույն միջոցը: 30%-ը համարում է, որ մահրիեի չափը պետք է համապատասխանի իրական հնարավորությանը: 71%-ը կարծում է, որ չպետք է մահրիեն վճարել հարսանիքի ժամանակ: 93%-ը կարծում է, որ բարձր մահրիեն հաջող ամուսնության երաշխիք չէ: 50%-ը կարծում է, որ բարձր մահրիեի պատճառը անվստահությունն է, իսկ 70%-ը դեմ է այն կարծիքին, թե «Ո՞վ է մահրիեն տվել և ո՞վ է վերցրել»²⁴:

Իրանի Իսլամական Հանրապետությունում գոյություն չունի ամուսնական պայմանագրի հստակ ձև: Այնտեղ կարող է ընդգրկվել ցանկացած կետ, որն իր բնույթով սուր հակասություններ չունի երկրում գործող կրոնական և քաղաքացիական օրենքների հետ: Հավանաբար դա է պատճառը, որ մինչ այսօր մահրիեի չափը սահմանափակող որևէ օրենք գոյություն չունի, թեև ժամանակ առ ժամանակ երկրի օրենսդիր մարմնում՝ մեջլիսում, քննարկվում է դրա չափը սահմանափակող օրենքների անհրաժեշտության հարցը: Պատճառն այն է, որ երիտասարդներն ամուսնական պայմանագիրը կնքելու ժամանակ խոստանում են մահրիեի մի չափ, որը հետագայում չեն կարողանում վճարել: Այժմ հատկապես Թեհրանում ընդունված է որպես մահրիե տալ ոսկեդրամ (սեքքե): Վերջին ժամանակներում հատկապես նորաձև է որպես մահրիե խոստանալ և կնքել հարսնացուի ծնվելու տարեթվին համապատասխանող ոսկեդրամ: Օրինակ՝ աղջիկը ծնվել է 1365 թ. (Հիջրայի տարեթվով) և տղան իբրև թե ի նշան իր սիրո՝ խոստանում է այդքան ոսկեդրամ: 1 ոսկեդրամի քաշը 8.8 գրամ է, այսինքն՝ տվյալ դեպքում ամբողջը կազմում է մոտ 12 կգ ոսկի:

Պետությունը ցանկանում է կարգավորել մահրիեի չափը, քանի որ այն տղամարդու կողմից չվճարվելու դեպքում նրան բանտարկություն է սպառնում: Վերջին տարիներին դատապարտվածների մեջ մեծ թիվ են կազմում մահրիեի և կանանց աջակցության համար չվճարելու պատճառով դատապարտված տղամարդիկ: Պետությունն այդ միջամտությունը ցանկանում է կատարել փոխզիջման ձևով, այսինքն՝ սահմանել մի չափ, որը պարտադիր պետք է վճարվի տղամարդու կողմից,

²⁴ Si' u نظرسنجی تلفنی از مردم تهران درباره مهریه مهریه <http://www.hamshahritraining.ir/news-3181.aspx>

իսկ դրանից ավել խոստացածը չվճարելու դեպքում քրեական պատասխանատվության չի ենթարկվի:

Մինչև իսլամական հեղափոխությունը կնքված ամուսնության պայմանագրերն այն ընտանիքների կողմից, ովքեր իրենց ժամանակակից էին համարում, նույնպես կարող էին նվազագույն ձևական մահրիե ունենալ, քանի որ մահրիեն համարվում էր հին սովորույթներից մնացած մաս: Սակայն մինչ իսլամական հեղափոխությունը ամուսնալուծության նկատմամբ ամուսնու միակողմանի, ինքնական իրավունքը սահմանափակ էր, և կանայք ավելի մեծ իրավունքներ ունեին, ուստի կիր պակաս էր վտանգված առանց նյութական միջոցների մնալու, ինչի հետևանքով կնոջ համար անվտանգությունն ապահովելու հարցում պակաս էր շեշտվում մահրիեի կիրառության անհրաժեշտությունը²⁵: 1979 թ. իսլամական հեղափոխությունից հետո, մինչ հեղափոխությունն առանց մահրիեի ամուսնացած ընտանիքների ամուսնալուծությունների դեպքում գովելի էր համարվում որպես մահրիե սահմանել ինչ-որ խորհրդանշական գումար կամ հաճախ՝ Ղուրան, քանի որ այդ ամուսնալուծությունների դեպքում կնոջ իրավունքը «չվճարված մահրիեի նկատմամբ» փաստացի արժեք չունի:

Եթե մահրիեն օրինապես վավերականացված չէ, այն ամուսնական պայմանագիրը անվավեր չի դարձնում²⁶: Զույգի առաջնային միտումը ամուսնանալն է, երեխաներ ունենալն ու մեծացնելը, իսկ մահրիեն երկրորդական հարց է: Միևնույն պատճառով ամուսնությունը վավեր է, եթե ոչ մի մահրիե չի սահմանվել: Եթե համաձայնեցված մահրիեն անվավեր է, բայց ամուսնական առաջին սեռական հարաբերությունը տեղի է ունեցել, կինը լիազորված է ստանալ «մահրիեի համարժեքը»: Եթե ամուսնական առաջին սեռական հարաբերությունը տեղի չի ունեցել և ամուսնալուծությամբ կամ կողմերից մեկի մահով ընդհատվել է, ոչ մի մահրիե չի վճարվում²⁷: Եթե պարզվի, որ համաձայնեցված առարկան գոյություն չունի (օրինակ՝ տունը այրվել է), կամ այն ունի այլ արժեք, քան կողմերը համաձայնեցրել են, ապա մահրիեն

²⁵ St' u Mir-Hosseini Z., *Marriage on trial: a study of Islamic family law: Iran and Morocco compared*. London [etc.], Tauris, 1993, p. 75.

²⁶ St' u Hassan E., *L'institution juridique du mahr (dot) en droit musulman durite chiite*, Thesis, Lausanne: Risold, 1933, p. 16.

²⁷ St' u Emamy H., *L'institution juridique du mahr (dot) en droit musulman durite chiite*, Thesis, Lausanne: Risold, 1933, p. 36, Civil Code of IRI, Art. 1088.

դրամապես հավասար է լինում այն արժեքին, ինչը նախապես համաձայնեցված է եղել:

ՔՕ Հոդված 1087-ը թույլ է տալիս այն հնարավորությունը, որ մահրիեն կարող է նշված չլինել պայմանագրի մեջ, և նույնիսկ պայմանագրում կարող է նշվել, որ ոչ մի մահրիե կարող է չլինել: Երկու դեպքում էլ կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են որոշել մահրիեի մասին ամուսնությունից հետո, բայց այդ համաձայնությունը պետք է լինի մինչև ամուսնական առաջին սեռական հարաբերությունը: Եթե նրանք այդպես չեն վարվում, և ամուսնական առաջին սեռական հարաբերությունը տեղի է ունեցել, կինն իրավունք ունի «մահրիեի համարժեքին»՝ համաձայն հոդված 1093-ի, կամ «խելամիտ մահրիեի»՝ համաձայն հոդված 1100-ի:

Նույնիսկ, եթե ամուսինը մահանա մինչ մահրիեն վճարելը, նրա թողած ժառանգությունից առաջինը վճարվում է կնոջ մահրիեն:

Վերը ասվեց, որ Իրանի ժամանակակից ընտանեկան հարաբերություններում մահրիեն ոչ միայն պահպանել է իր արդիականությունը, այլև իսլամական հեղափոխությունից հետո դարձել է ավելի կարևոր: Իսլամական հեղափոխությունից հետո տղամարդը փաստացի միակողմանի կարող է լուծել ամուսնությունը, ուստի ամուսնական պայմանագիրը քննարկելիս ամենամեծ ուշադրությունը դարձվում է մահրիեի չափի վրա. որքան մեծ է մահրիեն, այնքան կինն իրեն ավելի ապահով է զգում:

Չնայած կինը դառնում է մահրիեի սեփականատերը հարսանեկան արարողությունից անմիջապես հետո, նրա ունեցվածքի մի մասը հարաբերական է, իսկ մյուս կեսը ամուսնության առաջին սեռական հարաբերությունից է կախված: Եթե ամուսնությունը ավարտվում է ամուսնալուծությամբ՝ առանց առաջին սեռական հարաբերությունը տեղի ունենալու, կինը իրավունք ունի մահրիեի միայն կեսի վրա և պետք է վերադարձնի հավելյալ գումարը, որ նա ստացել է²⁸:

Կինն իրավունք ունի հրաժարվել առաջին սեռական հարաբերությունից և ամուսնական այլ պարտականություններից մինչև մահրիեն չվճարվի: Այնուամենայնիվ, նա մահրիեն վճարել ստիպելու համար այս իրավունքն օգտագործելու միայն մեկ հնարավորություն ունի, իսկ եթե առաջին սեռական հարաբերությունը տեղի ունեցած

²⁸ St' u Civil Code of IRI, Art. 1092.

լինի, նա հետագայում չի կարող մահրիեի վճարման համաձայնության չորոշված մասը հարկադրել իրեն տալ²⁹:

Գործող սովորույթի համաձայն՝ մահրիեն բաժանվում է մասերի, մի մասը վճարվում է անմիջապես, մի մասը՝ ժամանակի ընթացքում, և վերջինը վճարվում է, երբ ամուսնությունն ավարտվում է ամուսնալուծությամբ կամ մահով:

Դատելով չվճարված մահրիեի համար բանտերում գտնվող մարդկանց քանակությունից, իսկապես կարելի է հետևցնել, որ հատկապես քաղաքներում տղամարդիկ հաճախ իրենց իրական հնարավորություններից վեր խոստումներով են ամուսնանում: Մինչդեռ գյուղական միջավայրերում հետազոտություն անցկացրած Ֆրիդլը կարծում է, որ մահրիեն իր մեջ ներառում է իրական հաշիվներ և անհրաժեշտ իրեր, որոնք փաստացի հանձնվում են հարսանիքի ժամանակ³⁰: Սակայն նրա կարծիքը ոչ մասնագիտական է և պարզ չէ, թե ներառված ապրանքները անմիջապես վճարվող մահրիեն է, թե կաթնավճարը (շիր բահար): Ֆրիդլը գրում է, որ աղքատ գյուղացիների շրջանում կնոջ համար գովելի է «ներել» չվճարված հաշիվը, եթե նրա ամուսինը մահվան շեմին է, քանի որ հակառակ դեպքում այն կդառնա չվճարված պարտք և ամուսնու համար հոգևոր բեռ կլինի կյանքից հեռանալուց հետո: Եթե կինը չների մահրիեի պարտքը, ապա, ինչպես ասվեց, մահրիեն պետք է վճարվի հանգուցյալի ունեցվածքից:

Քաղաքացիական օրենսգիրքը նույնպես թույլ է տալիս մահրիեն բաժանել մասերի և վճարել ժամանակի ընթացքում³¹: Եթե պայմանագիրը չի ընդգծում գումարը և ժամանակը, անհետաձգելի վճարումը ընդունվում է, մինչդեռ Իմամ Խոմեյնին ասում է, որ կինը կարող է հրաժարվել սեռական հարաբերություններից, մինչև որ չստանա մահրիեն³²:

Մահրիեից բացի փեսացուի ընտանիքը հարսանիքի կամ ամուսնությունը նշող այլ արարողության դեպքում սովորաբար հարսնացուին

²⁹ St' u Civil Code of IRI, Art. 1085, 1086.

³⁰ St' u Friedl E., *Women of Deh Koh: lives in an Iranian village*, Washington [etc.], Smithsonian Institution Press, 1989, Friedl, Erika, *Children of Deh Koh: young life in an Iranian village*, Syracuse University Press (NY), 1997.

³¹ St' u Civil Code of IRI, Art. 1083

³² St' u Khomeini, Ayatollah Sayyed Ruhollah Mousavi. *A Clarification of Questions: an unabridged translation of Resaleh towzih al-masael*. Translated from the Persian by J. Borujerdi. Boulder, CO, Westview Press, 1984. 2420.

տալիս է մատանի, ոսկեղեն և հագուստ, մի գույգ հայելի և մոմակալներ: Վերջիններս օգտագործվում են արարողության ժամանակ որպես զարդարանքներ: Ոսկեղենը, հագուստը, ամուսնական մատանին, հայելին և մոմակալները սովորաբար չեն գրվում պայմանագրի մեջ և մահրիեի մաս չեն համարվում³³: Սա բխում է սովորությանից իրավունքից և քաղաքացիական օրենսգրքով չի կարգավորվում, ինչպես չի կարգավորվում նաև կաթնագինը:

Իրանում լայն տարածում ունեցող *ժամանակավոր ամուսնության* ժամանակ նույնպես կնքվում և հաստատվում է ամուսնական պայմանագիր, որի մեջ, ըստ իս, կարևոր երկու կետ է ընդգրկված. առաջին՝ ամուսնության ժամանակը, այսինքն թե որքան ժամանակ են գույգերը համարվում ամուսիններ, և երկրորդ՝ թե այդ ամուսնության դիմաց որքան գումար՝ մահրիե, պետք է տղամարդը վճարի կնոջը: Սակայն առկա է մի նրբություն. ըստ շարիաթի, մահրիեն ենթակա չէ պարտադիր վճարման, եթե կինը չի պահանջում, տղամարդը կարող է չվճարել, բայց երբ կինը պահանջի, ապա տղամարդը պարտավոր է այն վճարել ամբողջությամբ³⁴:

Ուշագրավ է, որ Ղուրանի դրույթներով կարգավորվող մահրիեի սովորույթը այսքան հետևողական և լայնորեն տարածված է հատկապես Իրանի Իսլամական Հանրապետությունում: Կարելի է ասել, որ Իրանում այն դարձել է նաև ժողովրդական սովորությանից իրավունքի նորմ և, ինչպես ասվեց, իսլամական հեղափոխությունից հետո ներառվել է քաղաքացիական օրենսգրքում: Սա կարևոր է թվում վավերացել, քանզի ֆունդամենտալ իսլամի երկրում այն զգալիորեն ապահովում է կնոջ նյութական որոշ անկախություն: Մրան հակառակ կնոջ ինքնուրույնությունը սահմանափակող իսլամադավան շատ ժողովուրդների մոտ ոչ միայն կնոջ նյութական անկախությանը նպաստող ամուսական որևէ իրական պարտավորություն չկա, այլև մինչ այժմ որոշ չափով պահպանվել են գլխագնի տարբեր տեսակներ, օրինակ՝ Կովկասում, Միջին Ասիայում, Աֆղանստանի փուշտուների մոտ և այլն: Գլխագինը վճարվում է հարսնացուի ընտանիքին, և ինքը՝ հարսնացուն կամ ապագա կինը, որևէ իրավուք չունի դրա նկատմամբ: Ավելին, գլխագինը

³³ St' u Mir-Hosseini, Z., Marriage on trial: a study of Islamic family law: Iran and Morocco compared. London [etc.], Tauris, 1993, p. 74.

³⁴ St' u <http://portal.anhar.ir/contentview.php?export=print&ID=15111> احكام عقد موقت،

փաստացի նվազեցնում է նորաստեղծ ընտանիքի նյութական հնարավորությունները:

Այսօր, Սաուդյան Արաբիայում ևս առկա է մահրիեի գաղափարը, որը հիմնականում գումարի տեսքով վճարվում է կնոջն ամուսնու կողմից, չնայած որոշ գույգեր հրաժարվում են մահրիեից՝ սահմանելով միայն որոշակի խորհրդանշական գումար՝ ամուսնական պայմանագիրը վավերացնելու համար անհրաժեշտ իրավական պահանջները բավարարելու նպատակով³⁵:

Իմ կողմից 2010-2012 թթ. ԻԻՀ մայրաքաղաք Թեհրանում անցկացված դաշտային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իզական սեռի ներկայացուցիչները ցանկանում են, որ մահրիեի համակարգը պահպանվի, իսկ տղամարդկանց գրեթե կեսը այն համարում է ավելորդ ծախս: Ուսումնասիրությունն անցկացվել է Թեհրանի տարբեր հատվածներում, սոցիալական տարբեր խավերի շրջանում:

Կրթություն ստացած և ֆինանսապես ապահով կանանց մեծ մասը ձգտում է ավելի ցածր մահրիեի, այն պայմանով, որ այն նախապես վճարվի, այլ ոչ թե հետագայում և կարևորություն են տալիս ամուսնական պայմանագրի մեջ իրենց համար ավելի կարևոր նոր կետերի ավելացմանը: Տարածում են ստանում պայմանագրի այն ձևերը, որոնցում կնոջ համար ապահովվում են կեցության, ինքնուրույնության և վաստակելու ավելի մեծ իրավունքներ ու հնարավորություններ: Մասնավորապես ներառվում են հետևյալ կետերը.

- աշխատանքի իրավունք,
- ուսման իրավունք,
- ազատ տեղաշարժման, այդ թվում նաև երկրից դուրս գալու իրավունք,
- համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույքի հանդեպ հավասար իրավունքներ,
- երեխաների հանդեպ, անկախ տարիքից հավասար դաստիարակման և պատկանելիության իրավունք,
- բազմակնության սահմանափակում, այսինքն՝ տղամարդն ամուսնական պայմանագրով պարտավորվում է այլ կին չունենալ և մինչև այդ պայմանագրի չեղյալ հայտարարվելը կամ

³⁵ St' u Cultural Homogeneity and Values. <http://countrystudies.us/saudi-arabia/21.htm>.

ամուսնալուծությունը իրավունք չունի այլ կնոջ հետ ամուսնանալ:

Ամուսնական պայմանագիրը ստորագրվում է նաև վկաների կողմից, վավերացվում է ամուսնության գրասենյակում և ամբողջովին դառնում է իրավական փաստաթուղթ: Ամուսնական պայմանագրում նոր կետերի ի հայտ գալը որոշակի ազատություն է տալիս կնոջը և մահրիեն որպես միակ երաշխիք, այս դեպքում կորցնում է իր նախկին դերակատարությունը:

Այսպիսով, իրանական իսլամական հասարակությունը Ղուրանի տված հնարավորությունների սահմաններում յուրովի լուծել է իրավագուրկ կնոջ նյութական ինքնուրույնության հարցը և ներկա փուլում այդ լուծումն ավելի ու ավելի է արդիականանում:

SARGSYAN TIGRAN

(IAE)

MARITAL RELATIONSHIPS REGULATING "MAHR"
IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN

Mahr (مهريه) is still modern and has very important role in marital relationships in Iran. Being a norm approved by Koran and Islamic Sharia, it had a wide application not for all the Islamic people.

Mahr, which has existed in the area of Iran for centuries, is an amount or a thing, property having a material value, which is paid or is obliged to be paid to the wife (and not to her family) by the husband in future on the basis of having sexual relations or as it may be said for the right of having sexual relations with her. Only woman (and not her family) is authorized to receive her due mahr.

The country tries to regulate the size of mahr, as in case of not being paid the husband is threatened to be imprisoned.

Within the limits of possibilities given by Koran, Iranian Islamic society has solved the issue of material independence of a woman deprived of rights and at present that solution is becoming more and more vital.

ՄԱՔՈՅԱՆ ՏԱՐՈՆ

(ՄԳՀ)

ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Ֆրանսիական Մեծ հեղափոխության ընթացքում միահեծանության (1789 թ.), ապա և միապետության տապալումը (1792 թ.), ինչպես նաև Ֆրանսիական Հանրապետության հռչակումը (1792 թ. սեպտեմբերի 22) թշնամաբար ընդունվեց Եվրոպայի ֆեոդալ-միապետական երկրների կողմից: Բացի այդ, երկրում տեղի ունեցած իրավական և սոցիալ-քաղաքական գլոբալ փոփոխությունները, մասնավորապես՝ 1789 թ. ընդունված «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը»՝ իր առաջադիմական սկզբունքներով, նույնպես անընդունելի էին Ֆրանսիայի հարևանների համար: Արդյունքում, 1792 թվականից Ֆրանսիայի դեմ սկսեցին ձևավորվել եվրոպական բացարձակ միապետությունների և Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական դաշինքները՝ հակաֆրանսիական խմբավորումները (1792-1815 թթ.): Սույն խմբավորումներն ունեին ագրեսիվ բնույթի ռազմաքաղաքական նպատակներ, որոնք նախատեսում էին ներխուժում Ֆրանսիա և հին հասարակական հարաբերությունների ու Բուրբոնների բացարձակ միապետության վերականգնում:

Պատերազմը սկսվեց 1792 թ. ապրիլին, երբ, ի պատասխան ավստրո-պրուսական հակաֆրանսիական դաշինքի կնքման (1792 թ. փետրվար), Օրենսդիր ժողովի ճնշմամբ Ֆրանսիայի թագավոր Լուի XVI (1774-1792 թթ.) պատերազմ հայտարարեց Ավստրիային (Հռոմեական Սրբազան կայսրություն):

Հարկ է նշել, որ, ի տարբերություն իր դաշնակիցների, Մեծ Բրիտանիան հետապնդում էր միանգամայն այլ նպատակներ: Բանն այն է, որ դարեր շարունակ Ֆրանսիան Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական և տնտեսական գլխավոր մրցակիցն էր, և անկախ Ֆրանսիայում առկա պետական կարգից ու սոցիալ-քաղաքական կառուցվածքից, Լոնդոնն ամեն կերպ ջանում էր ջախջախել իր ախոյանին:

Հենց Ֆրանսիայի ակտիվ և, որ ամենակարևորն է, արդյունավետ աջակցության շնորհիվ էր, որ բրիտանացիները 18-րդ դարի վերջում ստացան ևս մեկ հակառակորդ՝ ի դեմս նորաստեղծ ԱՄՆ-ի, ինչը լոնդոնյան իշխանությունների կողմից չէր մոռացվել:

Ֆրանսիայի դեմ սկիզբ առած ազդեցիվ պատերազմների ընթացքում բրիտանացիները զգալի ֆինանսական աջակցություն էին ցուցաբերում իրենց դաշնակից արքունիքներին: Այսպես՝ յուրաքանչյուր հարյուր հազար զինվորի դիմաց վերջիններս Լոնդոնից ստանում էին 1.250.000 ֆունտ ստերլինգ¹, ինչն այդ երկրների համար զգալի գումար էր:

Ֆրանսիայի համար աշխարհաքաղաքական այս դժվարին պայմաններում էլ ողջ ծավալով դրսևորվեց երիտասարդ և շնորհալի գեներալ Նապոլեոն Բոնապարտի (1769-1821 թթ.)՝ որպես ռազմական և պետական փայլուն գործչի բացառիկ տաղանդը: Հենց նրա գործուն մասնակցությամբ էր, որ 1797 թ. ջախջախվեց և կազմալուծվեց առաջին հակաֆրանսիական խմբավորումը (1792-1797 թթ.), սակայն դեռևս անսասան էր մնացել Մեծ Բրիտանիան: Ուստի բրիտանացիներին ևս հաշտություն պարտադրելու մեթոդների ընտրության կապակցությամբ 1797-1798 թթ. Փարիզում ընթանում էին բուռն քննարկումներ:

Մեծ Բրիտանիայի ջախջախումը Ֆրանսիայի համար ուներ առաջնային նշանակություն: Բոնապարտն ու Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Շ. Մ. Թալեյրանը Դիրեկտորիային առաջարկում էին բրիտանական շահերին հարված հասցնել Եգիպտոսում, որը սուկ ձևականորեն պատկանում էր Օսմանյան կայսրությանը և իր նպատավոր աշխարհագրական դիրքի շնորհիվ ուներ ստրատեգիական նշանակություն: Արշավանքի հաջող ելքը թույլ կտար իրական սպառնալիք ստեղծել Հնդկաստանում (հանդիսանում էր բրիտանական գաղութ) Մեծ Բրիտանիայի տնտեսական շահերի համար: Արդյունքում անգլիացիները կգրկվեին Ֆրանսիայի դեմ երկարատև պատերազմներ վարելու, ինչպես նաև իրենց դաշնակիցներին առատորեն ֆինանսավորելու հնարավորությունից: 1797 թ. օգոստոսին Դիրեկտորիային ուղղված իր նամակում Բոնապարտն արդեն պաշտոնապես դնում էր Եգիպտոսը գրավելու հարցը. «Հեռու չէ ժամանակը, երբ մենք կհասկանանք, որ Անգլիային իրապես ջախջախելու համար մեզ պետք է նվաճել Եգիպտոսը»²:

Հիշյալ ջանքերի արդյունքում 1798 թ. գարնանը Դիրեկտորիան ստորագրեց «Արևելյան» բանակի կազմավորման մասին հրամանը, որի հրամանատար նշանակվեց Բոնապարտը: Վերջինիս հատկացվում էր

¹ Троицкий Н. А., Александр I и Наполеон. Москва, 1994, с. 97.

² Մանֆրեդ Ա. Չ., Նապոլեոն Բոնապարտ, Երևան, 1975, էջ 207:

ընտրյալ ստորաբաժանումներից կազմված շուրջ 38 հազարանոց բանակ³:

Հատկանշական է, որ Բոնապարտի համար Արևելյան (եգիպտական) արշավանքն (1798-1801 թթ.) ուներ ոչ միայն ռազմաքաղաքական, այլ նաև՝ գիտական նշանակություն: Բացառապես Նապոլեոն Բոնապարտի շնորհիվ էր, որ արշավանքին տրվեց նաև գիտական բնույթ, ինչն ավելորդ անգամ վկայում է նրա բացառիկ և բազմակողմանի ընդունակություններով օժտված լինելու մասին⁴:

Արշավանքը մեկնարկեց Թուլոնի նավահանգստից 1798 թ. մայիսին, և բանակի հետ միասին Եգիպտոս ուղևորվեցին նաև մեծ թվով արվեստագետներ ու գիտնականներ, որոնց թվում էին նաև անվանի Դ. Վ. Դենտոնն ու Է. Ֆ. Ժոմարը⁵: Վերջիններիս առաքելությունը քաղաքակիրթ աշխարհին անհայտ մնացած եգիպտական հնամենի քաղաքակրթությանը վերաբերող տարրերի բացահայտումն ու լուսաբանումն էր: Արդյունքում 1802 թ. լույս տեսավ Դենտոնի «Ճանապարհորդություն Վերին և Ստորին Եգիպտոսում» աշխատությունը, որում հեղինակը ներկայացրել էր գիտարշավի պատմությունն ու արդյունքները: Այդ արդյունքների հիման վրա հետագա տարիների ընթացքում լույս տեսավ նաև «Եգիպտոսի նկարագրությունը» բազմահատոր աշխատությունը: 1798 թ. օգոստոսին գեներալ Բոնապարտի կողմից Կահիրեում հիմնվեց Եգիպտական ինստիտուտը, որի առաջին նախագահ նշանակվեց ֆրանսիացի մաթեմատիկոս Գասպար Մոնժը: Արևելյան արշավանքի ընթացքում էր, որ հայտնաբերվեց Ռոզեթյան արձանագրությունը, ինչի շնորհիվ էլ հետագայում եգիպտագիտության բնագավառում իր շլացուցիչ հաջողություններն արձանագրեց ֆրանսիացի գիտնական Ֆրանսուա Շամպոլյոնը⁶: 1801 թ. արձանագրությունը՝ որպես ավար, առգրավվեց բրիտանացիների կողմից, և ներկայումս այն

³ Ленц Т., Наполеон. М., 2008, с. 46, համեմատիր նաև՝ Cole J., Napoleon's Egypt: Invading the Middle East, New York, 2007, p. 8; Barthorp M., Napoleon's Egyptian Campaigns, London, 1978, p. 7-8.

⁴ Արշավանքի նապոլեոնյան հոգևոր-գաղափարական բովանդակության մասին տե՛ս Fulinska A., Ancient Topics in Napoleon's Proclamations to the Army, Classica Cracoviensia, XVI, 2013, pp. 30-43.

⁵ Наполеон - "Избранные произведения", Москва, 1956, с. 393, 617.

⁶ The Encyclopedia of the French Revolutionary and Napoleons Wars: a political, social, and military history, editor Gregory Fremont-Barnes, vol. III, R-Z, Santa Barbara-Denver-Oxford, 2006, pp. 827-828.

պահպանվում է Բրիտանական թանգարանում (Լոնդոն): Մինչդեռ բրիտանացիներին հանձնելուց առաջ ֆրանսիացիները բոլոր գտածոներից, այդ թվում՝ Ռոզեթյան քարից, հանել էին պատճեններ, որոնցից էլ հետագայում օգտվեց Շամպոլյոնը: Ուստի պետք է փաստել, որ եգիպտագիտության ստեղծման ակունքներում կանգնած է Նապոլեոն Բոնապարտը: Բոնապարտի սույն գիտական ձեռնարկումն ունեցավ փայլուն հաջողություններ, ինչը, սակայն, չի կարելի ասել Արևելյան արշավանքի ռազմաքաղաքական նպատակների մասին:

Հայանցիկ անդրադարձ կատարելով արշավանքի բուն ռազմական ընթացքին՝ պետք է փաստենք, որ, չնայած մամլուքների և օսմանյան գորքերի նկատմամբ ֆրանսիացիների տարած մի շարք փայլուն հաղթանակներին, այնուամենայնիվ, արշավանքի ստրատեգիական նպատակները չիրականացան, քանի որ 1798 թ. օգոստոսին բրիտանացիների կողմից Աբուքիրի (Եգիպտոս) մոտ հայտնաբերվել և ոչնչացվել էր ֆրանսիական գորքերին Եգիպտոս տեղափոխած նավատորմի զգալի մասը, ինչի արդյունքում վերջիններս հայտնվել էին ծուղակում:

Միննույն ժամանակ, ոչ առանց բրիտանական ֆինանսավորման, Եվրոպայում ձևավորվել էր երկրորդ հակաֆրանսիական խմբավորումը (1798-1801 թթ., Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Ավստրիա, Օսմանյան կայսրություն և Նեապոլիտանական թագավորություն), որի ծավալած ռազմական գործողությունների արդյունքում Ֆրանսիան հայտնվել էր ռուս-ավստրիական ուժերի ներխուժման իրական սպառնալիքի առաջ: Դիրեկտորիան հեղինակություն չէր վայելում, և Ֆրանսիայի հասարակական կարծիքը պահանջում էր Բոնապարտի շուտափույթ վերադարձը Եգիպտոսից, ինչը դիտվում էր որպես սուկալի պարտությունից խուսափելու միակ ելք⁷:

Ստեղծված իրավիճակը Բոնապարտին ստիպեց 1799 թ. օգոստոսին թողնել Եգիպտոսն ու «Արևելյան» բանակի հրամանատարի պաշտոնը (այն ստանձնեց գեներալ Ժ. Բ. Կլեբերը) և վերադառնալ Ֆրանսիա, ուր և նույն թվականի հոկտեմբերին ընդունվեց մեծ ցնծությամբ: Հարկ է նշել, որ 1798 թ.՝ Եգիպտոս մեկնելուց առաջ, Բոնապարտը իշխանությունների կողմից ստացել էր լայն լիազորություններ: Մասնավորապես, ի թիվս այլ լիազորությունների, վերջինս իրավունք

⁷ Тарле Е. В., Талейран, Москва, 1962, с. 60.

ուներ նաև «Արևելյան» բանակում կատարել նշանակումներ և իր նախընտրած պահին վերադառնալ Ֆրանսիա⁸:

Վերադառնալով Ֆրանսիա՝ Բոնապարտը Թալեյրանի և մի շարք պաշտոնյաների աջակցությամբ 1799 թ. նոյեմբերին վերջ դրեց Դիրեկտորիայի վարկաբեկված իշխանությանը և որպես երկրի «առաջին կոնսուլ» (փաստացի ղեկավար)՝ նույն թվականի դեկտեմբերին խաղաղության առաջարկով դիմեց Մեծ Բրիտանիային և Ավստրիային, սակայն ապարդյուն⁹:

Շուտով գրանցվեցին Ավստրիայի պարտությունները 1800 թ. ընթացքում, որոնց հետևեց հաշտության կնքումը 1801 թ. փետրվարին՝ արդեն վերջինիս խնդրանքով: Այս ընթացքում իր դաշնակիցների հետ ունեցած տարաձայնությունների պատճառով հակաֆրանսիական խմբավորման շարքերն էր լքել Ռուսաստանը, որի կայսր Պավել I-ի և առաջին կոնսուլի միջև ձևավորվել էին ջերմ հարաբերություններ (ինչը հարուցել էր Մեծ Բրիտանիայի անհանգստությունը): Ավելին՝ նախատեսվում էր ռուս-ֆրանսիական ռազմական արշավանք դեպի Հնդկաստան, որին, սակայն, վիճակված չէր իրականանալ, քանզի Բրիտանական ֆինանսավորմամբ իրականացված պալատական հեղաշրջման արդյունքում 1801թ. մարտին Պավել I-ը սպանվեց¹⁰: Մինչ այդ՝ 1800թ. դեկտեմբերին, անհաջող մահափորձ էր կատարվել Բոնապարտի դեմ, որում նույնպես լոնդոնյան իշխանություններն ունեցել էին էական դերակատարություն: Այնուամենայնիվ, երկրորդ հակաֆրանսիական խմբավորումը ևս պարտություն կրեց, և Մեծ Բրիտանիան կրկին մնաց առանց դաշնակիցների (ինչպես և 1797 թ.): Եվ նույնիսկ «Արևելյան» բանակի մնացորդների՝ Բրիտանացիներին անձնատուր լինելու հանգամանքը (1801 թ. օգոստոս) ի գորու չէր փոխել պատերազմի արդյունքների ընդհանուր պատկերը: Արդյունքում Մեծ Բրիտանիան ստիպված էր 1802թ. մարտին Ֆրանսիայի հետ կնքել Ամիենի հաշտության պայմանագիրը, ինչն, ըստ էության, ընդամենը ժամանակավոր դադար եղավ:

Այսպիսով՝ անհրաժեշտ է արձանագրել այն իրողությունը, որ վերը հիշատակված ռազմական գործողությունների ընթացքում Ֆրանսիային այդպես էլ չհաջողվեց սասանել Մեծ Բրիտանիայի ռազմական

⁸ Наполеон – “Избранные произведения”, с. 616.

⁹ Исдейл Ч. Дж., Наполеоновские войны. 1997, с. 28; Ленц Т., там же, 2008, с. 65.

¹⁰ Троицкий Н. А., Там же, с. 67, տե՛ս նաև՝ Тарле Е. В., Наполеон. М., 2011, с. 106.

և տնտեսական հզորությունը, ինչը վճռորոշ դեր ունեցավ հետագա պատմական գործընթացների ժամանակ¹¹:

SAKOYAN TARON
(MGU)
THE MOTIVES OF NAPOLEON BONAPARTE'S
EASTERN CAMPAIGN

The article is mostly about the tension in the international relations which prevailed in Europe in 90-s of the 18th century and about the main reasons of this strained situation. The motives of Napoleon Bonaparte's Eastern Campaign were analyzed, which had not only economic and political-military aims but scientific as well. At the end of the article the author draws conclusions of the Campaign and pays attention to the birth of Egyptology.

¹¹ Տես՝ Понасенков Е. Н., Сакоян Т. А., Характер и цели антифранцузских коалиций, «Մխիթար Գոշ», Գիտական հոդվածներ, 2015, 2(43), էջ 186-193, տե՛ս նաև՝ Понасенков Е. Н., Правда о войне 1812 года, Москва, 2004.

ՍՈՂՈՍՈՆՅԱՆ ՀԱՅԿ

(ԱԻ)

1945-1946 թթ.

ԻՐԱՆԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՍԸ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Իրանի ողջ տարածքը բռնազավթված մնաց դաշնակիցների՝ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ զինված ուժերի կողմից, որոնց միջև այդ ընթացքում պայքար սկսվեց իրանական նավթի համար:

1943 թ. վերջին և 1944 թ. սկզբին անգլո-հոլանդական Ռոյալ դատչ շելլ, ամերիկյան Մինքլեյր և Սթանդարթ օյլ ընկերություններն իրանական կառավարության հետ բանակցություններ սկսեցին Իրանի Բելուջիսթան նահանգում նավթային կոնցեսիա ձեռք բերելու համար¹: Տեսնելով այդ քայլը, Խորհրդային Միությունն իր հերթին 1944 թ. սեպտեմբերի 10-ին Թեհրան ուղարկեց կառավարական հանձնաժողով՝ ԽՍՀՄ արտաքին գործերի կոմիսարի տեղակալ Սերգեյ Քավթարաձեի գլխավորությամբ, ում հանձնարարված էր իրանական կառավարության հետ բանակցություններ սկսել Իրանի հյուսիսային շրջաններում նավթային կոնցեսիա ձեռք բերելու նպատակով²: Սակայն նավթի շուրջ բանակցությունները մեծ դժգոհություն առաջ բերեցին իրանական կառավարական շրջանակներում, և 1944 թ. դեկտեմբերի 2-ին մեջլիսի պատգամավոր Մոհամմադ Մոսադեղի առաջարկությամբ մեջլիսն օրենք ընդունեց, ըստ որի արգելվում էր նավթային կոնցեսիայի վերաբերյալ բանակցություններ վարել ցանկացած օտարերկրյա պետության կամ ընկերության հետ՝ մինչև պատերազմի ավարտը³:

Այնուհետև Խորհրդային Միության ղեկավարությունը սկսեց ակտիվ նախապատրաստություն տեսնել Իրանական Ադրբեջանում (Ատրպատական) և Քրդստանում անջատողական շարժումներ իրականացնելու ուղղությամբ: Այդ մտահղացման իրականացումը հանձնարարված էր Լավրենտի Բերիային, Վյաչեսլավ Մոլոտովին, ինչպես

¹ Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 639:

² احمد راسخی لنگرودی، موج نفت، تهران، ۱۳۸۶، ص. ۱۰۰

³ احمد راسخی لنگرودی، նշվ. աշխ., էջ 108

ևան Խորհրդային Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Միր Չաֆար Բադիրովին⁴:

Բրիտանական կառավարությունն իր հերթին մեծապես անհանգստացած էր պատերազմի ընթացքում Իրանում ԽՍՀՄ դիրքերի ամրապնդմամբ, քանի որ այն շարունակում էր Իրանը դիտարկել իբրև իր «ազդեցության գոտի» և կարելի է ասել անհամբեր սպասում էր պատերազմի ավարտից հետո Իրանի հյուսիսից խորհրդային զորքերի դուրսբերմանը:

1945 թ. մայիսի 3-ին Իրանի վարչապետ նշանակվեց Իբրահիմ Հաքիմին⁵, ով մայիսի 19-ին պաշտոնապես դիմեց Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ և ԽՍՀՄ կառավարություններին Իրանից դաշնակիցների զորքերի վաղաժամկետ դուրսբերման պահանջով՝ հիմնավորելով իր պահանջը Գերմանիայի հետ պատերազմի ավարտով: Համաձայն 1942 թ. հունվարի 29-ի Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Միության և Իրանի միջև կնքված եռակողմ համաձայնագրի՝ անգլո-խորհրդային զորքերը պետք է դուրս բերվեին Իրանից բոլոր ռազմական գործողությունների ավարտից հետո վեց ամսվա ընթացքում⁶:

Ստեղծված իրավիճակում բրիտանական կողմն անմիջապես պաշտպանեց Իրանի կառավարության դիրքորոշումը և Մոսկվայում իր դեսպան Արչիբալդ Բլարք Բերրի միջոցով նամակ ուղղեց ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմատ՝ առաջարկելով Իրանից դուրս բերել զորքերը վաղաժամկետ, սակայն խորհրդային կողմը չարձագանքեց դեսպանի նամակին⁷: ԽՍՀՄ կողմից պատասխան չեղավ նաև ԱՄՆ-ի դեսպան Էվերիլ Հարրիմանի նամակին, որում հաղորդվում էր, որ ամերիկյան հրամանատարությունն ավարտել է իր առաքելությունը

⁴ ԽՍՀՄ կենտկոմի կողմից Մ. Բադիրովին ուղարկված գաղտնի փաստաթղթերը՝ կապված Իրանի հյուսիսային շրջաններում անջատողական շարժումների հրահրման, ինչպես նաև այդ տարածքներում «Ադրբեջանի դեմոկրատական կուսակցություն» ստեղծելու վերաբերյալ տե՛ս New evidence on the Iran crisis 1945-46, From the Baku archives, Cold war international history project bulletin, Issue 12/13,

www.wilsoncenter.org/sites/default/files/CW/HPBulletin12_13_p4_0.pdf

⁵ Shwadran B., The Middle East, oil and the Great Powers, New York, 1955, p. 69.

⁶ Եռակողմ համաձայնագրի ամբողջ տեքստը տե՛ս Hamzavi Abdol Hossein, Persia and The Powers, London, 1946, p. 123.

⁷ Yegorova N., The Iran crisis of 1945-46: A view from the Russian archives, www.wilsoncenter.org/sites/default/files/Working%20Paper%20%2315.pdf

Պարսից ծոցում և անհրաժեշտություն է տեսնում կրճատել իր զինուժն Իրանում⁸: Միայն Պոտտոլամի կոնֆերանսի ժամանակ բրիտանական կողմին հաջողվեց Իոսիֆ Ստալինի «ուշադրությունը հրավիրել» Իրանից զորքերի դուրսբերման հարցի վրա: Կոնֆերանսի ժամանակ համաձայնություն ձեռք բերվեց դաշնակիցների զորքերը դուրս բերել միայն Թեհրանից, իսկ Իրանի մյուս տարածքներից զորքերի դուրսբերման հարցը որոշվեց քննարկել սեպտեմբերին Լոնդոնում կայանալիք արտաքին գործերի նախարարների հանդիպման ժամանակ⁹: Մինչ այդ ամերիկյան ղեկավարությունը հայտարարեց, որ ամերիկյան զորքերի հիմնական մասի դուրսբերումը կավարտվի մինչև նոյեմբերի 1-ը¹⁰:

1945 թ. սեպտեմբերի 6-ին Ջաֆար Փիշևարիի գլխավորությամբ Իրանական Ադրբեջանում ստեղծվեց Ադրբեջանի դեմոկրատական կուսակցությունը: Նոր կուսակցության հիմնական պահանջներից էր Իրանի կազմում Ադրբեջանի ինքնավարության տրամադրումը և տեղի թյուրքերեն լեզվի պաշտոնական կիրառումը¹¹:

1945 թ. սեպտեմբերի 19-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Էռնեստ Բեինը նամակով դիմեց ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Վ. Մոլոտովին, որում առաջարկում էր զորքերի հիմնական մասի դուրսբերումն ավարտել մինչև դեկտեմբերի կեսը՝ բացառությամբ հարավային և հյուսիսային շրջանների, իսկ ամբողջական դուրսբերումն ավարտել մինչև 1946 թ. մարտի 2-ը: Սակայն Մոլոտովն իր պատասխան նամակում մերժեց այդ առաջարկը՝ նշելով, որ զորքերի դուրսբերման հարցը կքննարկվի միայն նշված ժամկետին¹², և որ խորհրդային կառավարությունն անհրաժեշտ չի գտնում այդ հարցը քննարկել արտգործնախարարների հանդիպման ժամանակ¹³:

⁸ Նույն տեղում:

⁹ Թեհրան-Յալթա-Պոտտոլամ, Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1970, էջ 306:

¹⁰ George K., The Middle East 1945-1950, London, 1954, էջ 57:

¹¹ «Известия», 14. 09. 1945.

¹² Քանի որ Գերմանիայի դաշնակից Ճապոնիան կապիտուլյացիա ստորագրեց 1945 թ. սեպտեմբերի 2-ին, ապա ըստ պայմանագրի Իրանի տարածքից դաշնակից զորքերի դուրսբերման վերջնաժամկետ հանդիսացավ 1946 թ. մարտի 2-ը: St u Политика Англии на Ближнем и Среднем Востоке (1945-1965), Москва, 1966, с. 338.

¹³ Hamzavi A.H., նշվ. աշխ., էջ 123:

1945 թ. նոյեմբերի 16-ին արդեն ձևավորված Դեմոկրատական կուսակցությունն ապստամբություն բարձրացրեց իրանական կառավարության դեմ՝ պահանջելով Իրանական Աղբյուրանի տրամադրել ինքնավարություն¹⁴: Երեք օր անց Թեհրանը կառավարական գործեր ուղարկեց, որպեսզի ճնշի ապստամբությունը, սակայն ուղարկված զորքերը խորհրդային զորամիավորումների կողմից կանգնեցվեցին Ղազվինի շրջանում¹⁵:

Միևնույն ժամանակ Խորհրդային Միությունը նմանատիպ անջատողական շարժում կազմակերպեց նաև Իրանական Քրդստանում: Շարժման կենտրոն հանդիսացավ Մահաբադ քաղաքը, իսկ շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց տեղի քրդական ցեղերի հոգևոր առաջնորդ Ղազի Մոհամմադը¹⁶: Քրդերը գումարեցին Քրդստանի դեմոկրատական կուսակցության համագումար, որտեղ առաջ քաշեցին իրենց պահանջները՝ մասնավորապես քրդերենի պաշտոնական գործածում, ինչպես նաև Իրանի տարածքում քրդական ինքնավարության տրամադրում¹⁷: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ Իրանի արտաքին գործերի նախարարությունը նոտա հղեց Իրանում ԽՍՀՄ դեսպանատուն, որում խորհրդային կողմին մեղադրում էր Իրանական Քրդստանում տեղի ունեցող իրադարձություններին անմիջական աջակցություն ցուցաբերելու մեջ¹⁸:

Ըստ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բլրնզի՝ արտգործնախարարների մոսկովյան հանդիպման ժամանակ Իոսիֆ Ստալինն ակնարկեց, թե մինչև 1946 թ. մարտի 2-ը Իրանից խորհրդային զորքերի դուրսբերումը կախված է իրանական կառավարության հետագա քայլերից՝ հիմնավորելով, որ Բաքվի նավթահորերը շատ մոտ են գտնվում իրանական սահմանին և պետք է պահպանվեն Խորհրդային Միության դեմ Իրանի հնարավոր գործողություններից¹⁹՝ միաժամանակ վկայա-

¹⁴ Kirk G., նշվ. աշխ., էջ 59:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Roosevelt Archie, The Kurdish Republic of Mahabad, The Middle East journal, July, 1947, p. 253.

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Внешняя политика СССР, Сборник документов, Том 6, (сентябрь 1945г.-февраль 1947г.), с. 88.

¹⁹ Byrnes James F., Speaking frankly, New York, 1947, pp. 119-120.

կոչելով 1921 թ. խորհրդա-իրանական պայմանագիրը²⁰: Մոսկովյան հանդիպման ընթացքում էռնեստ Բևինն էլ իր հերթին առաջարկեց ստեղծել հանձնաժողով՝ բաղկացած ԱՄՆ, ԽՍՀՄ և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներից, որը պետք է զբաղվեր Իրանի խնդրով, սակայն այդ գաղափարը խորհրդային կողմը նույնպես մերժեց²¹: Նշենք, որ հատուկ հանձնաժողովի ստեղծման գաղափարը դժգոհություն առաջացրեց նաև հենց Իրանում, և մեջլիսը կրկին Մ. Մոսսադեղի առաջարկով դեմ արտահայտվեց այդ գաղափարին, չնայած վարչապետ Հաքիմին հակված էր հանձնաժողովի ստեղծմանը՝ պայմանով, որ իրանական կողմը նույնպես իր երկու ներկայացուցիչն ունենա հանձնաժողովում²²:

Այսպիսով արտգործնախարարների մոսկովյան հանդիպումը ոչ մի դրական քայլ չարձանագրեց Իրանի հարցում և չարդարացրեց իրանական կողմի սպասումները:

Իրանի խնդրում բրիտանական կողմի դիրքորոշումն արտացոլվում է նաև Իրանում Մեծ Բրիտանիայի դեսպան Ռիդեր Բուլլարդի²³ 1946 թ. հունվարի նամակում՝ հասցեագրված էռնեստ Բևինին, որում իր մտահոգությունն էր հայտնում այն հետևանքների մասին, որոնք կարող էին առաջանալ մինչև նույն թվականի մարտի 2-ը Խորհրդային Միության կողմից զորքերն Իրանից դուրս չբերելու դեպքում՝ մասնավորապես նշելով. «Ես մտավախություն ունեմ, որ Խորհրդային Միությունը հնարավոր է անտեսի 1942 թ. պայմանագիրը և մարտի 2-ի ժամկետի լրանալուց հետո էլ անորոշ ժամանակով մնա Իրանում այնքան, մինչև Իրանը վերջնականապես ենթարկի իրեն»²⁴:

Նամակը ենթադրել է տալիս, որ Մեծ Բրիտանիան պետք է վերադասավորեր իր ռազմավարությունը և մինչ այդ, քայլեր ձեռնարկեր՝ թույլ չտալու դեպքերի նման զարգացումը:

Նման տեսակետ էր հայտնում նաև Մոսկվայում բրիտանական գործերի հավատարմատար Ֆրենք Ռոբերթսը Մեծ Բրիտանիայի արտ-

²⁰ Ըստ 1921 թ. խորհրդա-իրանական պայմանագրի 6-րդ կետի Խորհրդային Միությունը կարող էր զորք մտցնել Իրան, եթե Իրանի տարածքն օգտագործվեր որպես պլացդարմ ԽՍՀՄ դեմ հարձակման համար: Պայմանագրի ամբողջ տեքստը տե՛ս Hamzavi A. H., նշվ. աշխ. էջ 70:

²¹ Hamzavi A. H., նշվ. աշխ., էջ 46:

²² احمد راسخی لنگرودی, նշվ. աշխ., էջ 113-115:

²³ Ռիդեր Բուլլարդն Իրանում Մեծ Բրիտանիայի դեսպանն էր 1944-1946 թթ.:

²⁴ Britain, the United Nations and the Iranian Crisis of 1946, Middle-East Journal of Scientific Research 18 (11), 2013, p. 1546.

գործնախարարությանն ուղղած իր նամակում՝ շեշտելով նաև քրիտանական հզորության և հեղինակության պահպանման անհրաժեշտության մասին: Ռոբերթսը գրում էր. «Եթե նույնիսկ Եվրոպայում և Հեռավոր Արևելքում Խորհրդային Միությունը կարող է սեփական անվտանգությունն ապահովել առանց վտանգելու քրիտանական, կամ նույնիսկ ամերիկյան շահերը, սակայն դժբախտաբար ԽՍՀՄ հարավային սահմանների դեպքում դա այլ խնդիր է, այստեղ ողջ Միջին Արևելքի անվտանգության և հեղինակության հարցն է սերտորեն միախառնված: Իրանում և Թուրքիայում Խորհրդային Միության նույնիսկ սահմանափակ հաջողությունները լուրջ հարված կհանդիսանա Բրիտանիայի համար ողջ Արաբական աշխարհում և Խորհրդային Միության ձգտումներին ցանկացած զիջում պետք է մանրակրկիտ քննարկել»²⁵:

Այսպիսով քրիտանական ղեկավարության բարձր շրջանակներում՝ մասնավորապես արտաքին գերատեսչությունում տիրում էր այն համընդհանուր կարծիքը, որ եթե Մեծ Բրիտանիան ցանկանում էր մնալ աշխարհի գերտերությունների շարքում, ապա Միջին Արևելքը պիտի լիներ միայն իր ազդեցության ոլորտում:

Միևնույն ժամանակ իրանական կառավարությունը՝ տեսնելով արտգործնախարարների հանդիպումների և բողոք-նոտաների տված զրո արդյունքը՝ որոշեց Իրանի հարցը բարձրացնել Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անվտանգության խորհրդում:

1946 թ. հունվարին իրանական պատվիրակության ղեկավար Հ. Թադիզադեն նամակով դիմեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարին՝ որում Խորհրդային Միությանը մեղադրում էր Իրանի ներքին գործերին միջամտելու մեջ և հույս հայտնում, որ Անվտանգության խորհուրդը կկարգավորի Իրանի հարցը²⁶: Սակայն խորհրդային պատվիրակության ղեկավար Ա. Վիշինսկին մերժեց իրանական կողմի բոլոր մեղադրանքները՝ միաժամանակ հայտարարելով նաև, որ տվյալ խնդիրը վերաբերում է միայն Իրանին և Խորհրդային Միությանը և իմաստ չունի, որ երկու վաղեմի հարևանների հարցը քննվի ՄԱԿ-ում²⁷:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Foreign Relations of the United States (այսուհետ՝ FRUS), 1946, The Near East and Africa, Volume 7, Doc. 224,

<https://history.state.gov/historicaldocuments/frus1946v07/d224>.

²⁷ FRUS, 1946, The Near East and Africa, Volume 7, Doc. 222.

Ծանոթանալով երկու կողմերի դիմում-բողոքներին՝ Անվտանգության խորհուրդը նույն թվականի հունվարի 30-ի իր որոշման մեջ հայտարարեց, որ երկու կողմերն էլ պատրաստակամություն են հայտնել լուծել խնդիրը միայն խաղաղ բանակցությունների միջոցով, որոնք սկսվելու են մոտ ապագայում, և որ միաժամանակ Անվտանգության խորհուրդն իրեն իրավունք է վերապահում ցանկացած ժամանակ տեղեկանալու և հարցում անելու բանակցությունների ընթացքի վերաբերյալ²⁸։

Այդ ընթացքում Իրանում Հաքիմիի կառավարությունը հրաժարական տվեց, և 1946 թ. հունվարի 26-ին իրանական մեջլիսը կրկին վարչապետի պաշտոնում ընտրեց Ահմեդ Ղավամ օս Սալթանեին*, ով բավականին մեծ փորձ ու հմտություն ունեցող քաղաքական գործիչ էր²⁹։

Կառավարության ղեկավարությունն ստանձնելուն պես՝ Ղավամն անմիջապես սկսեց զարմանալիորեն ջերմ տրամադրվածություն ցուցաբերել Խորհրդային Միության հանդեպ։ 1946 թ. փետրվարի 19-ին Իրանի նորընտիր վարչապետը մեծ պատվիրակությունով մեկնեց Մոսկվա³⁰՝ բանակցելու խորհրդային ղեկավարության հետ, և ինչպես Վ. Բայբուրդյանն է նշում.՝ «իր հետ տանելով իրանական դիվանագիտության ավանդական փափուկ բարձն³¹ ու իրանական նավթի գայթակղությունը»։

Այդ ընթացքում լրացավ պայմանագրով նշված մարտի 2-ի ժամկետը՝ սակայն պաշտոնական Մոսկվան կարծես թե չէր շտապում իր գորքերն ամբողջովին հանել Իրանից։

Մինչ այդ ամերիկյան հրամանատարությունն արդեն ավարտել էր Իրանից իր զինուժի դուրսբերումը հունվարի 1-ին, իսկ Իրանի և Իրաքի բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատարությունը փետրվարի 23-ին հայտարարել էր, որ իր զինուժից միայն 600 հոգի է

²⁸ U.N.S.C., Resolutions adopted and decisions taken by the Security Council, The Iranian question

http://repository.un.org/bitstream/handle/11176/88749/S_RES_2%281946%29-EN.pdf?sequence=2&isAllowed=y.

* Ահմեդ Ղավամն Իրանի վարչապետի պաշտոնը զբաղեցրել է հինգ անգամ, և սա նրա չորրորդ պաշտոնավարումն էր։

²⁹ Shwadran B., նշվ. աշխ., էջ 72։

³⁰ "Правда", 20.03.1946.

³¹ Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 645։

մնացել Իրանում՝ որոնք համապատասխանաբար դուրս կբերվեն պայմանագրով նշված ժամկետին³² :

Մարտի 1-ին Մոսկվայի ռադիոն հաղորդեց, որ Իրանի վարչապետին չորս օր առաջ Մոսկվայում տեղեկացվել է, որ մինչև մարտի 2-ը խորհրդային զորքերը դուրս կբերվեն միայն Իրանի հյուսիսարևելյան շրջաններից, որտեղ համեմատաբար իրավիճակը խաղաղ է, իսկ մյուս շրջաններում կշարունակեն մնալ այնքան, մինչև իրադրության կայունացումը³³:

Ըստ ԱՄՆ-ի նախագահ Հարրի Տրումենի՝ Մոսկվայի այդ քայլը նշանակում էր, որ այսուհետ Իրանը բանակցելու էր ԽՍՀՄ հետ ատրճանակը գլխին պահված³⁴:

Մոսկվայի նման քայլով կարծես թե արդարանում էր նաև Իրանում Մեծ Բրիտանիայի դեսպան Ռ. Բուլլարդի վերոնշյալ մտահոգությունները՝ կապված զորքերի դուրսբերման ժամանակացույցի հետ:

1946 թ. մարտի 5-ին Թավրիզում ԱՄՆ-ի փոխհյուպատոս Ռոբերտ Ռոսսոուն ԱՄՆ-ի պետքարտուղարին գրած իր գաղտնի զեկույցում տեղեկացնում էր, որ մարտի 3-4-ն ընկած ժամանակահատվածում խորհրդային 20 տանկեր և մեծ թվով բեռնատարներ դուրս գալով Թավրիզից՝ շարժվել են Թեհրանի ուղղությամբ, իսկ մի մասն էլ ընթացել դեպի Իրաքի սահմանը³⁵:

Հաջորդ օրը՝ մարտի 6-ին Մոսկվայում ԱՄՆ-ի հավատարմատար Ջորջ Քենանն իր կառավարության անունից նոտա հանձնեց խորհրդային ղեկավարությանը, որում նշված էր, որ եռակողմ համաձայնագրով նախատեսված ժամկետի լրանալուց հետո Իրանից զորքերը դուրս չբերելու խորհրդային կողմի որոշումը չի կարող ԱՄՆ-ի կառավարությանը որպես ՄԱԿ-ի անդամ՝ թողնել անտարբեր, և եթե մինչև մարտի 25-ը (Նյու Յորքում կայանալիք Անվտանգության խորհրդի նիստը) Մոսկվան դուրս չբերի իր զորքերն, ապա հենց ինքը

³² Kirk G., նշվ. աշխ., էջ 66:

³³ Նույն տեղում:

³⁴ Truman Harry S., Years of Trial and Hope 1946-1952, Vol. two, New York, 1956, p. 94.

³⁵ The Vice Consul at Tabriz (Rossow) to the Secretary of State, FRUS, 1946, Vol. 7, The Near East and Africa, Doc. 244.

(ԱՄՆ) հարցը կբարձրացնի ԱԽ-ում, եթե նույնիսկ Իրանը չանի այդ քայլը³⁶:

Նյու Յորքում կայացած Անվտանգության խորհրդի նիստի ժամանակ ԽՍՀՄ պատվիրակության ղեկավար Անդրեյ Գրումիկոն հայտարարեց, որ իմաստ չունի Իրանի խնդիրը ներառել ԱԽ օրակարգ, քանի որ Իրանի և ԽՍՀՄ միջև արդեն համաձայնություն է ձեռք բերվել, և հունվարի 30-ի ԱԽ կայացրած որոշումն արդեն տվել է իր դրական արդյունքը, սակայն ԱՄՆ-ի պատվիրակության ղեկավար Ջ. Բրնկն առարկեց, որ երկու կողմերի միջև համաձայնություն ձեռք չի բերվել, և 1942 թ. պայմանագրի խախտման պատճառով պետք է հարցը քննվի ԱԽ-ում³⁷:

Միաժամանակ բրիտանական արտաքին գերատեսչության շրջանակներում Անվտանգության խորհուրդը դիտարկվում էր զուտ Իրանում բրիտանական գերիշխանությունը պահպանելու միջոց, և ԱԽ-ում իրանական հարցի բարձրացումը հիանալի միջոց էր գրավելու նաև ԱՄՆ-ի ուշադրությունը, որն ըստ երևույթին հաջողվեց:

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի արևելյան բաժնի ղեկավար Ռ. Հոուին դեռ ԱԽ հունվարի նիստի ժամանակ ՄԱԿ-ում Մեծ Բրիտանիայի դեսպան Ալեքսանդր Կադոգանի հետ զրույցում՝ ողջունելով իրանական կառավարության որոշումը ԱԽ-ում բարձրացնելու վերաբերյալ, միաժամանակ նշում էր. «Ցանկալի է, որ հիմա Իրանի կառավարությունն իր խնդիրը ՄԱԿ-ում բարձրացնելով՝ Անվտանգության խորհրդի բոլոր անդամների մոտ տպավորություն ստեղծի, որ խնդիրն իրականում իրանա-խորհրդային բնույթ է կրում, այլ ոչ թե Միջին Արևելքում գերիշխանություն տարածելու ռուս-բրիտանական հերթական մրցակցությունն է»³⁸:

Հակառակ պարագայում ԱՄՆ-ը, որը ՄԱԿ-ի անդամ է, կարող էր հեռու մնալ իրանական խնդրից և որպեսզի իրական խորհրդա-բրիտանական խնդիրը մնար ստվերում՝ խորհուրդ էր տալիս, որ Մեծ Բրիտանիան հանդես չգա իրանական ճգնաժամն Անվտանգության խորհրդում կարգավորողի անմիջական նախաձեռնությամբ:

³⁶ Truman H. S., նշվ. աշխ., էջ 94-95: Ինչպես նաև Shwadrان B., նշվ. աշխ., էջ 72-73:

³⁷ United Nations Security Council discusses Iran, 1946

<https://www.youtube.com/watch?v=4pyKloTpGvY>

³⁸ Britain, the United Nations and the Iranian Crisis of 1946, Middle-East Journal of Scientific Research 18 (11), 2013, p. 1547.

1946 թ. ապրիլի 4-ին Անվտանգության խորհուրդը որոշում կայացրեց հետաձգել իրանական հարցի քննարկումը մինչև մայիսի 6-ը՝ հնաշվի առնելով խորհրդային կողմի այն հայտարարությունը, որ Իրանից խորհրդային զորքերի դուրսբերումն արդեն սկսված է և միաժամանակ բանակցություններ են ընթանում իրանական կառավարության հետ³⁹:

Նույն օրը թեհրանում Ա. Ղավամի և ԽՍՀՄ դեսպան Ի. Սադչիկովի միջև ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի՝ կողմերը համաձայնվում էին ստեղծել խորհրդա-իրանական նավթային ընկերություն՝ 50 տարի ժամկետով⁴⁰:

Միևնույն ժամանակ Ա. Ղավամը բանակցություններ սկսեց Ջ. Փիշևարիի հետ, որի արդյունքում ճանաչեց Ադրբեջանի կառավարությունը⁴¹, ինչպես նաև օրենք հրապարակեց պետական հողերը գյուղացիներին բաժանելու մասին: Դրա հետ մեկտեղ Իրանական Ադրբեջանի դպրոցներում թույլատրվում էր բացի պարսկերենից նաև տեղական թյուրքերենով դասավանդումը⁴²:

Այդ ընթացքում բրիտանական կողմը սկսեց շահարկել իր մշտական խաղաթուղթը՝ Իրանի հարավային ցեղերի գործոնը:

Դեռ 1946 թ. սկզբին մոտ 300 զիված արաբներ, Իրաքից անցնելով Իրանի սահմանը, զինված հարձակում գործեցին Խորենշահր քաղաքի վրա: Տեղեկությունների համաձայն՝ զինված արաբական խմբավորումները գլխավորում էին շեյխ Ջասեբն ու իր եղբայր Աբդուլա Ազիզը⁴³:

³⁹ U.N.S.C., Resolutions adopted and decisions taken by the Security Council in 1946, Resolution of 4 April 1946

http://repository.un.org/bitstream/handle/11176/88750/S_RES_3%281946%29-EN.pdf?sequence=2&isAllowed=y

⁴⁰ Համաձայնագրի տեքստը տե՛ս Внешняя политика СССР, Сборник документов, Том 6, (сентябрь 1945г.-февраль 1947г.), с. 274.

⁴¹ ۱۳۲۵، ۴، ۲۱، اطلاعات

⁴² ۱۳۲۵، ۱۹، ۴، اطلاعات

⁴³ "Правда", 23. 01. 1946. Նշված իրադարձությունը նշում է նաև Ջորջ Լենկ-գովսկին իր *Russia and the West in Iran* աշխատության 304 էջում՝ արաբների կողմից զինված հարձակումը վերագրելով բրիտանացիների հովանավորյալ Մոհամմերայի շեյխ Խազալին, սակայն իրականում հարձակումն իրականացրել էին նրա որդիները՝ Ջասեբն ու Աբդուլա Ազիզը, իսկ հայտնի շեյխ Խազալը մահացել էր դեռ 1936 թվականին և վարկածներից մեկի համաձայն սպանվել Ռեզա շահի հրամանով: Տե՛ս նաև՝ Cronin Stephanie, *Tribal politics in Iran: Rural conflicts and the new state 1921-1941*, New York, 2007.

Ըստ երևույթին դա հանդիսանում էր իբրև հակընդդեմ քայլ Իրանի հյուսիսում ԽՍՀՄ անջատողական քաղաքականությանը:

Թեհրանում նոր կառավարության ձևավորումից մեկ օր անց բրիտանական զորքերը Հնդկաստանից սկսեցին անցնել Իրաքի տարածք՝ Բասրա: Իրաքյան կառավարությունը, խուսափելով հնարավոր բարդություններից, հայտարարեց⁴⁴, թե այդ քայլը նախատեսված է 1930 թ. անգլո-իրաքյան պայմանագրով⁴⁵: Մի քանի օր անց Իրաքի անկախության կուսակցությունը պահանջեց, որ Խուզիսթանի նահանգը վերադարձվի Իրաքին՝ հիմնավորելով, որ այնտեղի բնակչության մեծամասնությունը արաբներ են: Միևնույն ժամանակ հարավային մի քանի ցեղապետեր սկսեցին բողոքներ հայտնել կառավարությանը՝ ի դեմս Թուդե կուսակցության «օր-օրի աճող ազդեցությանը»⁴⁶:

Ղավամը քննադատեց բրիտանական կառավարությանը Բասրայում զորքեր տեղակայելու վեաբերյալ՝ հիմնավորելով իր տեսակետը հնդկական կառավարության այն հայտարարությամբ, թե զորքերը կարող են օգտագործվել Իրանում բրիտանական շահերի պաշտպանության համար⁴⁷: Սակայն բրիտանական արտաքին գերատեսչությունը հայտարարեց, որ զորքերը նախատեսված են Իրաքում նավթարդյունաբերության օբյեկտների պաշտպանության համար⁴⁸:

Սեպտեմբերի սկզբին Սպահանում բախթիարական ապստամբություն սկսվեց կառավարությունը տապալելու նպատակով, իսկ նույն ամսի 23-ին ցեղային ապստամբություն սկսվեց նաև Ֆարսում: Ղաշղայի ցեղի առաջնորդ Նասեր խան Ղաշղայիի գլխավորությամբ ստեղծվեց ցեղային միություն՝ կազմված ղաշղայիներից, բախթիարներից, ինչպես նաև Ֆարսի և Խուզիսթանի ցեղերից: Նրանց պահանջն էր թուդեական նախարարներին հեռացնել կառավարությունից և իրենց տալ պառլամենտական արտոնություններ⁴⁹: Ապստամբների ուժերը

⁴⁴ Արված հայտարարությունը տե՛ս British forces for Basra, "The Advocate", 06. 08. 1946 <http://trove.nla.gov.au/ndp/del/article/69059684>.

⁴⁵ Պայմանագրի ամբողջ տեքստը տե՛ս Anglo-Iraqi treaty of 1930 https://en.wikisource.org/wiki/Anglo-Iraqi_Treaty.

⁴⁶ Lenczowski G., Russia and the West in Iran, 1918-1948, New York, 1949, p. 304:

⁴⁷ "Известия", 05.10.1946.

⁴⁸ Lenczowski G., նշվ. աշխ., էջ 305:

⁴⁹ Трубецкой В., Бахтиары (Оседло-кочевые племена Ирана), Москва, 1966, с. 97. Նշենք, որ արդյունքում 1947 թ. 15-րդ գումարման մեջլիսում Աշայեր կուսակցությունը, որը կազմված էր հարավային ցեղերի ներկայացուցիչներից՝

գրավեցին Բուշեիրը, Աբադեիրը, Քազերունը, Բանդար-Ամիրը և պաշարեցին Շիրազը: Խորհրդային մամուլն ու ռադիոն բացահայտ մեղադրում էին քրիտանական կառավարությանը ապստամբություն կազմակերպելու մեջ: Մեղադրանքներ էին հնչում հատկապես Անվազի գլխավոր հյուպատոս Ալեն Չարլզ Տրոտտի, Սպահանում գլխավոր հյուպատոս Ս. Ա. Կոլտի և ցեղային մասնագետ գեղապետ Հ. Ջ. Անդերվուդի հասցեին: Իրանական կառավարությունը հոկտեմբերի 1-ին պաշտոնապես պահանջեց, որ Տրոտտը պաշտոնից ազատվի⁵⁰: Մի օր առաջ Նասեր խանը ապստամբ ցեղերի անունից իրանական կառավարությանը 24 ժամվա վերջնագիր ներկայացրեց՝ պահանջելով կառավարությունից Ֆարսի ցեղերին տրամադրել ինքնավարություն: Իրանական կառավարությունը չընդունեց վերջնագիրը, սակայն մեղմեց իր դիրքորոշումը և երկու շաբաթ անց համաձայնություն ձեռք բերվեց Նասեր խանի և Շիրազի կայագործի պետ գեներալ Ջահեդիի միջև: Կառավարությունը ճանաչեց ցեղերի պահանջների մեծ մասը: Հոկտեմբերի 17-ին Ղավամը հրաժարական տվեց և անմիջապես նոր կառավարության ձևավորումից հետո իր կառավարության կազմից դուրս թողեց երեք թուղեական նախարարներին⁵¹:

Կարելի է ասել քրիտանական տեսանկյունից ցեղային շարժումը լիովին արդարացրեց իր նպատակը, քանի որ ապստամբության հետևանքով կանխվեց նաև Թուղեի ազդեցությունն Իրանի հարավում, որտեղ գտնվում էր Անգլո-իրանական նավթային ընկերությունը (ԱԻՆԸ): Միննույն ժամանակ այն նաև առիթ հանդիսացավ Ա. Ղավամի համար իր կառավարությունից դուրս թողնելու թուղեական երեք նախարարներին՝ «ստիպված» լինելով կատարել ցեղերի պահանջը:

Իրանից խորհրդային զորքերի դուրսբերումից հետո Ա. Ղավամը հայտարարագիր հրապարակեց, ըստ որի՝ մեջլիսի ընտրությունների ժամանակ կարգուկանոնի ապահովման նպատակով կառավարական զորքեր պետք է ուղարկվեին Իրանի բոլոր նահանգները: Այդ գաղափարը նույնիսկ 27-ին իր հերթին ողջունել էր Իրանում ԱՄՆ դեսպան Ջ. Ալլենը՝ նշելով, որ իրանական կառավարությունը լիակատար իրա-

համարվում էր հզոր կուսակցություններից մեկը և մեջլիսի 136 տեղից 35-ը տրվեց այդ կուսակցությունը: St u Roosevelt Kermit, Arabs, oil and history, New York, 1949, p. 199.

⁵⁰ "Известия", 05.10.1946.

⁵¹ "Известия", 22.10.1946.

վունք ունի ընտրությունների ժամանակ զինված ուժեր ուղարկել Իրանի բոլոր շրջանները⁵²:

Մամուլի տեղեկություններով դեկտեմբերի 9-ին իրանական կառավարությունը Ջենջանի և Իրանական Քրդստանի հատվածում էր կենտրոնացրել իր ժանդարմերիան և մեծ թվով զրահատեխնիկա⁵³: Դեկտեմբերի 10-ին Ա. Ղավամը հեռագիր ուղարկեց Իրանական Ադրբեջանի գեներալ-նահանգապետ Ջավիդին, որտեղ հայտնում էր, որ կառավարական զորքերը նույն օրը մտնելու են Միանե* և որ դիմադրություն ցուցաբերելու դեպքում զորքերին հրամայված է խստորեն ճնշել այն⁵⁴: Նույն օրն իրանական կառավարության զինուժը, ինչպես նաև ամերիկացի ռազմական խորհրդական՝ գեներալ Ն. Շվարցկոպֆի անմիջական հրամանատարությամբ գործող ժանդարմերիան, մեծաքանակ ռազմական տեխնիկայի ուղեկցությամբ մուտք գործեց Իրանական Ադրբեջան և դաժան հաշվեհարդար տեսավ Իրանական Ադրբեջանի «դեմոկրատների» հանդեպ⁵⁵:

1947 թ. հոկտեմբերի 22-ին Ա. Ղավամը, իրանական մեջլիսում հանդես գալով, նշեց, որ խորհրդա-իրանական նավթային համաձայնագիրը ստորագրվել է ճնշման արդյունքում և առաջարկեց մեջլիսի անդամներին չվավերացնել այն⁵⁶: Նույն օրն իրանական մեջլիսը ձայների բացարձակ մեծամասնությամբ հրաժարվեց վավերացնել խորհրդա-իրանական նավթային համաձայնագիրը⁵⁷:

Այսպիսով 1945-1946 թթ. իրանական ճգնաժամն իրականում Միջին Արևելքում գերիշխանության համար մղվող անզլո-խորհրդային մրցակցություն էր, որում ակտիվորեն ներքաշվեց ԱՄՆ-ը:

Այն հատկանշական էր նաև նրանով, որ ՄԱԿ-ի ստեղծումից ի վեր առաջին ճգնաժամն էր, որը բարձրացվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում:

⁵² Իսկանդարյան Գ., Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-1960 թվականներին, Երևան, 2011, էջ 40:

⁵³ «Известия», 13.12.1946.

* Քաղաք Իրանական Ադրբեջանի արևելյան մասում:

⁵⁴ «Известия», 19.12.1946.

⁵⁵ Международные отношения после Второй мировой войны, Том 1, (1945-1949гг.), Москва, 1962, с. 258.

⁵⁶ Իսկանդարյան Գ., նշվ. աշխ., էջ 41:

⁵⁷ Международные отношения после Второй мировой войны, Том 1, (1945-1949гг.), Москва, 1962, с. 259.

Մեծ Բրիտանիան, փորձելով քողարկել Անվտանգության խորհրդում այն հանգամանքը, որ դա տարածաշրջանում իր գերիշխանության խնդիրն էր, ամեն ինչ արեց, որ ԱՄՆ-ն նույնպես ներքաշվի խնդրում և հանդես գա որպես խնդրի լուծման նախաձեռնողի կարգավիճակում (որն իրականում բարձրացրեց հենց ԱՄՆ-ի վարկանիշն Իրանում), ինչպես նաև օգտագործելով իր համար ավանդական դարձած իրանական հարավային ցեղերի գործոնը՝ ընդհանուր առմամբ այդ շրջանում հասավ իր նպատակին՝ չեզոքացնելով Իրանի հարավում գտնվող ԱԻՆԸ-ին (հետագայում՝ Բրիթիշ փեթրոլյում) սպառնացող հնարավոր խորհրդային վտանգը:

Միևնույն ժամանակ չի կարող հիացնունք չառաջացնել Իրանի վարչապետ Ա. Ղավամի գործունեությունը, ով տվյալ ժամանակաշրջանի գերտերությունների միջև ճարպկորեն խուսանավելու, ճիշտ հաշվարկված քաղաքականության և դիվանագիտական ճկուն մտքի շնորհիվ կարողացավ ստեղծված դժվարին իրադրության պայմաններում պահպանել իր երկրի միասնականությունն ու տարածքային ամբողջականությունը:

Միևնույն ժամանակ Խորհրդային Միությունն իր կոշտ և չհաշվարկված քաղաքականության արդյունքում ավելի իջեցրեց իր վարկանիշն իրանական կառավարական բարձր շրջանակներում, և մինչ այդ եղած «կոմունիստական վտանգի» հանդեպ «վախն» Իրանում առավել ուժեղացավ:

Միսալ չի լինի ասել նաև, որ «սառը» պատերազմի առաջին մենամարտը Խորհրդային Միությունը տանուլ տվեց հենց Իրանում:

SOGHOMONYAN HAYK

(IOS)

THE IRANIAN CRISIS IN 1945-1946 AND THE BRITISH ATTITUDE

The article discusses the Iranian crisis and the British attitude to in the period from 1945-1946. The Iranian crisis was an Anglo-Soviet dispute over the Middle East and it was the first crisis referred to the Security Council of the United Nations (UN) for investigation. The world powers namely Great Britain, Soviet Union and United States were deeply involved in this crisis. It is contended that Great Britain regarded the UN not more than a political instrument to achieve its ultimate aim as a key player in international

politics. The Iranian issue was the first real test of the intentions of the former Soviet Union, which occurred in a region that had been of strategic and economic importance to the British since the 19th century. At the same time by British largely support, tribal rebellion broke out in south of Iran which was largely led by the Qashqaeis and which aimed at protesting communist Tudeh Party influence in the country and at gaining certain concessions from the central government. At last the "successful dissolution" of the rebellion in the south did provide an opportunity to the government to send the Iranian military forces into Iranian Azerbaijan (Atrupatakan), restoring the government's authority there. Evidently all these processes weakened the USSR influence in Iran.

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՍՈՆԱ
(ԵՊՀ)

ԱՀՄԵԹ ԴԱՎՈՒԹՕՂԼՈՒԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՔ» ՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԻՐԱՌՈՒՍԸ ԹՈՒՐԿԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՍ

Թուրքիայի այժմյան արտաքին քաղաքականության գաղափարախոսության հիմնական սկզբունքներն ու տեսությունները մշակել է Թուրքիայի նախկին արտգործնախարար և վարչապետ Ահմեթ Դավութօղլուն (2009-2014 թթ. ԱԳ նախարար, 2014-2016 թթ. վարչապետ)¹: Դավութօղլուն շատ հաճախ անվանում են Թուրքիայի արտաքին քաղաքականության «ճարտարապետ», «Թուրքիայի Հենրի Քիսինջեր»²³:

Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ Թուրքիայի նախկին վարչապետի հիմնական գաղափարները և դրույթները տեղ են գտել 2001 թ. հրատարակված «Ռազմավարական խորք» մենագրության մեջ: Նա նշում է, որ 20-րդ դարի վերջին համաշխարհային հարաբերությունների ամբողջ համակարգում տեղի են ունեցել խորքային փոփոխություններ, ինչի հետևանքով արտաքին քաղաքական նախկին տեսությունները և գաղափարախոսությունները արդեն անբավարար են: Դավութօղլուն միջազգային հարաբերությունների կառուցվածքը համեմատում է շախմատի հետ՝ գտնելով, որ ինչպես շախմատում, այնպես էլ համաշխարհային հարաբերություններում կան «խաղացողներ»: Նրանցից ոչ բոլորն են թագավոր, կան նաև այլ խաղացողներ, բայց նրանցից յուրաքանչյուրը «խաղի արդյունքը» փոխելու

¹ Prof. Dr. Ahmet Davutoğlu, մանրամասն տե՛ս Թուրքիայի ԱԳՆ կայքում, <http://www.mfa.gov.tr/ahmet-davutoglu.en.mfa> (Հասանելի է՝ 09.04.2016)

² Parris M., «Davutoğlu Türkiyenin Henry Kissingeri», Türkiye gazetesi, 29.10.2008 <http://www.turkiyegazetesi.com.tr/Genel/a391610.aspx> (Հասանելի է՝ 05.04.2016)

Դավութօղլուն «Թուրքիայի Հենրի Քիսինջեր» բնորոշում տվել է Անկարայում ԱՄՆ-ի դեսպան Մարկ Փերրիսը, հետագայում այլոց կողմից այն բազմիցս օգտագործվել է:

³ Հենրի Քիսինջերը ամերիկացի քաղաքագետ և դիվանագիտական գործիչ է, ով 1973-1977 թթ. զբաղեցրել ԱՄՆ-ի պետքարտուղարի պաշտոնը:

իր լծակներն ունի⁴, ըստ այդմ էլ նա առանձնացնում է պետությունների չորս տեսակ՝ գերտերություններ, մեծ տերություններ, տարածաշրջանային պետություններ և փոքր պետություններ:

Դավութոյուն առաջ է քաշում այն տեսակետը, որ քաղաքակրթական փոխակերպումների արդյունքում Թուրքիայի արտաքին քաղաքականությունը զրկվել է իր ռազմավարական խորքից, և անհրաժեշտ է գտնել ուղիներ այն վերականգնելու համար:

Ըստ նրա՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության թերացումների հիմքում ընկած են երկրի ներքին քաղաքական մշակույթի և արտաքին քաղաքականության միջև գոյություն ունեցող հակասությունները⁵: Ինքնության ճգնաժամը, որը առկա է թուրքական հասարակության մեջ, առաջացրել է հոգեբանական բարդույթ, որի հետևանքով արտաքին քաղաքականություն իրականացնողները երկրի սահմաններից այն կողմ բազմավեկտոր քաղաքականություն վարելուն պատրաստ չեն, ինչն էլ դարձել է ստրատեգիական տեսության թերությունների հիմնական պատճառը⁶: Այսպիսով, Թուրքիայի նախկին վարչապետը արտաքին քաղաքականության հաջողությունը ուղղակիորեն կապում է սեփական քաղաքակրթությանը վերադառնալու և ինքնության ճգնաժամը հաղթահարելու հետ:

Դավութոյուն, անդրադառնալով Թուրքիայի աշխարհագրական դիրքին, նշում է, որ համաաշխարհային հարաբերությունների համակարգում ազդեցիկ դիրք ձեռք բերելու համար Թուրքիան պետք է գործի դնի իր աշխարհաքաղաքական դիրքը⁷: Ըստ նրա՝ Թուրքիան միաժամանակ եվրոպական, ասիական, բալկանյան, կովկասյան, մերձավորարևելյան, միջերկրածովյան երկիր է և միշտ հաղիսացել է արևելքն արևմուտքին կապող «կամուրջ»⁸: Հետագայում ավելի զարգացնելով Թուրքիայի՝ կամուրջ հանդիսանալու գաղափարը՝ Դավութոյուն մերժում է այդ տեսությունը՝ փոխարինելով այն «կենտրոնական երկրի» գաղափարով, այսինքն Թուրքիան պետք է լիներ ոչ թե

⁴ Davutoğlu A., «Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu», 2003, İstanbul, Küre Yayınları, pp. 33-34.

⁵ Davutoğlu A., նշվ աշխ., էջ 57-58:

⁶ Նույն տեղում, էջ 59:

⁷ Նույն տեղում, էջ 118:

⁸ Նույն տեղում, էջ 262:

արժեքները փոխանցող երկիր, այլ և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում հավասարաչափ ազդեցություն ունեցող երկիր⁹:

Դավութօղլուն նշում է. «Կամուրջը միայն մեկ գործառույթ է իրականացնում. այն է՝ երկու կողմի միջև կապ ստեղծելն ու մի կողմի արժեքները մյուս կողմ տեղափոխելը: Մինչդեռ, մենք պետք է ձգտենք ներկայանալ Արևելքում որպես արևելյան ինքնությունից չփախչող, այդ ինքնության հետ առերեսվող երկիր, իսկ Եվրոպայում՝ որպես արևմտյան աշխարհայացք ունեցող երկիր, որը դեր կունենա Եվրոպայի ապագայում»¹⁰: Թուրքիան, ունենալով հատուկ ռազմավարական դիրք, վերահսկողություն և ազդեցություն ունի իր հարևանությամբ գտնվող տարածքների վրա, քանի որ գտնվում է միաժամանակ Ասիայում և Եվրոպայում, ինչպես նաև մոտ է Աֆրիկային: Հետևաբար, այդպիսի աշխարհագրական դիրք ունեցող երկիրը չի կարող վարել պասիվ քաղաքականություն¹¹:

Ըստ Դավութօղլուի՝ օսմանյան անցյալի անտեսումը կարևոր բացթողումների պատճառ է դարձել. մասնավորապես՝ նախկին Օսմանյան կայսրության տարածքներում ձևավորված պետություններին ուշադրությունից դուրս թողնելը հանգեցրել է փոխվստահության մթնոլորտի անկմանը: Այնուհետև առաջարկում է լուծել այդ խնդիրը երկու միմյանց գուգահեռ ուղիով. նախ՝ առաջնային համարել տարածաշրջանի անվտանգության և համագործակցության ոլորտում աշխատանքների իրագործումը, ապա՝ տնտեսական ու մշակութային կապերով տարածաշրջանի երկրները կապել Թուրքիային¹²:

Այսպիսով, կարելի է պնդել, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմքում ընկած է տարածաշրջանում և դրան հարակից տարածքներում իր ազդեցության մեծացման սկզբունքը, որի համար Թուրքիան օգտագործում է իր «մեղմ ուժի» լծակները՝ կամուրջ Արևելքի

⁹ Davutoğlu A., «Türkiye merkez ülke olmalı», Radikal, 26.02. 2004, <http://www.radikal.com.tr/haber.php?haberno=107581>, (Հասանելի է՝ 12.04.2016).

¹⁰ Zengin G., «Hoca: Türk Dış Politikası'nda Davutoğlu Etkisi», p. 92.

¹¹ Davutoglu A., «Turkey's Zero Problem Foreign Policy», Foreign Policy Magazine, 20 May 2010, <http://foreignpolicy.com/2010/05/20/turkeys-zero-problems-foreign-policy/> (Հասանելի է՝ 12.04.2016)

¹² Davutoğlu A., Stratejik Derinlik, p. 93.

ու Արևմուտքի միջև, աշխարհիկ պետություն, մուսուլման բնակչություն, կապիտալիստական տնտեսական ուժ¹³:

Աշխատության վերջում Դավութօղլուն նշում է, որ Թուրքիայի համար այսօր էլ հիմնական խնդիր է ձևավորել մի ստրատեգիական մտածողություն, որը կկարողանա երկրի արտաքին քաղաքականության մեջ լայն կերպով օգտագործել Օսմանյան կայսրության պատմական, մշակութային ժառանգությունը և Թուրքիայի աշխարհագրական առանձնահատկությունները՝ այդպիսով տարածաշրջանում ընդլայնել Թուրքիայի ազդեցությունը¹⁴: Այս առումով, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը երբեմն բնորոշվում է որպես «նեօսամնիստական»¹⁵:

Սակայն Թուրքիայի նախկին վարչապետ Ա. Դավութօղլուի համար անընդունելի է «նեօսամնիզմ» տերմինի կիրառումը ԱԶԿ-ի կառավարման շրջանում երկրի արտաքին քաղաքականության բնորոշման համար: Ըստ նրա՝ Թուրքիան, լինելով ժամանակակից պետություն, կարող է դիվանագիտական, տնտեսական, քաղաքական, մշակութային ակտիվ գործունեություն իրականացնել նախկինում Օսմանյան կայսրության մաս կազմած կամ էլ Թուրքիայի համար ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջանների երկրների հետ, քանի որ դա է պահանջում ժամանակակից դիվանագիտությունը¹⁶:

Ըստ Մարմարա համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտաշխատող Բեհյուլ Օզքանի՝ Դավութօղլուի որդեգրած արտաքին քաղաքականության գաղափարախոսության հեն-

¹³ Taspinar Ö., «Turkey's Middle East Policies Between Neo-Ottomanism and Kemalism», Carnegie Middle East Center Number 10 n September 2008, p. 3. http://carnegieendowment.org/files/cmec10_taspinar_final.pdf

¹⁴ Նույն տեղում, էջ 553:

¹⁵ Նշենք, որ Թուրքիայի արտաքին քաղաքականության գաղափարախոսության ձևավորման վրա իրենց ազդեցությունն են ունեցել Թուրքիայի նախկին նախագահ և վարչապետ Թուրգուօ Օզալը (1983-1989 թթ. վարչապետ, 1989-1993 թթ. նախագահ), նախկին ԱԳ նախարար (1997-2002 թթ.) Իսմայիլ Ջենը: Արտաքին քաղաքականության տեսության հիմքում ընկած են այս երկու գործիչների գաղափարները, որոնք մշակվել են Դավութօղլուի կողմից:

¹⁶ Davutoğlu A., «Yeni Osmanlılık tabiri kötü niyetli», Hurriyet 29.08.2011, <http://www.hurriyet.com.tr/neo-osmanli-yakistirmasi-kotu-niyetli-18601714> (Հասանելի՝ 13.04.2016).

քը ոչ թե «նեոսամսիզմ» է, ինչպես շատերը բնորոշում են, այլ «պանիսլամիզմ»¹⁷:

Թուրքիայի արտաքին քաղաքականության գաղափարախոսության վրա Դավութօղլուի ազդեցությունը չի սահմանափակվել միայն «Ռազմավարական խորք» աշխատությամբ: Հետագայում նա շրջանառության մեջ է դնում արտաքին քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ նոր մեթոդաբանական սկզբունքներն ու մոտեցումները, որոնք վերամշակվել և 2010 թ. հոդվածի տեսքով հրատարակվել են ամերիկյան հեղինակավոր «Foreign Policy» ամսագրում: Դավութօղլուի Թուրքիայի արտաքին քաղաքականության գործունեության 5 սկզբունքներն են.

- պետության ներսում անվտանգության և ժողովրդավարության միջև հավասարակշռության պահպանում,
- «զրո խնդիր հարևանների հետ»,
- պրոակտիվ ու կանխարգելիչ դիվանագիտություն,
- բազմակերտ արտաքին քաղաքականություն,
- ռիթմիկ դիվանագիտություն¹⁸:

Անդրադառնալով «Զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքին, նշենք, որ ըստ Դավութօղլուի, երբ Թուրքիան հասնի հարևանների հետ զրո խնդրի մակարդակի, ապա արտաքին քաղաքականությունում մանևրելու լայն հնարավորություն ձեռք կբերի¹⁹: Ըստ նրա՝ Թուրքիան իր արտաքին քաղաքականության հորիզոնները և ազդեցությունը ընդլայնելու համար նախ պետք է կարգավորի և ամրապնդի հարաբերությունները մերձակա ցամաքային ավազանի պետությունների հետ²⁰: Սակայն այս սկզբունքը, ըստ երևույթին, խոշոր հաշվով տվեց միայն որոշակի ժամանակավոր արդյունք, որի պատճառն այն է, որ Թուրքիան փորձում էր լուծել հարևան երկրների հետ խնդիրները իր ցանկություններին և շահերին համապատասխան, այդպիսով միտում ունենալով բարձրացնել տարածաշրջանում սեփական դերը և Թուրքիային տարածաշրջանային առումով ուժային կենտրոն դարձնել, որը

¹⁷ Özkan B., «Davutoğlu, Neo-Osmanlıci değil Pan-İslamist», Taraf Gazetesi, 23.08.2014, <http://arsiv.taraf.com.tr/haber-davutoglu-neo-osmanlici-degil-pan-islamist-162144/> (Հասանելի է՝ 14.04.2016).

¹⁸ Davutoglu A., «Turkey's Zero Problem Foreign Policy», Foreign Policy Magazine, 20 May 2010.

¹⁹ Zengin G., նշվ. աշխ., էջ 88:

²⁰ Davutoğlu A., Stratejik Derinlik, p. 119.

ենթադրում է ոչ թե «զրո խնդիրներ» հարևանների հետ, այլ «զրո բարիդրացիական հարաբերություններ» հարևանների հետ:

Այսպիսով, կարելի է նշել, որ, ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության մասին Ահմեթ Դավութօղլուի մշակած տեսլականի համաձայն, Թուրքիայի դերակատարումն աշխարհում ընկալում է առավելապես Օսմանյան կայսրության օրինակով, որը նախատեսում է կայսրության նախկին տարածքներում առաջնորդի դերակատարում: Մինևույն ժամանակ Դավութօղլուի տեսլականը հիմնվում է իսլամական էնտրոն աշխարհընկալման վրա՝ միաժամանակ լինելով նաև ազգայնական, պանթուրքիստական, գլոբալ ու արևմտյան:

SUKIASYAN SONA

(YSU)

THE USE OF AHMET DAVUTOGLU'S THEORY OF "STRATEGIC DEPTH"
IN FOREIGN POLICY OF TURKEY

Turkish foreign policy in the period of AKP government has been associated with the name of Ahmet Davutoğlu. As an academic, Davutoğlu has outlined his foreign policy doctrine in several writings, most important of which is his book "Strategic Depth." This article aims to outline Davutoğlu's foreign policy doctrine and its peculiarities.

In his book Davutoğlu elaborates on his strategic vision about Turkey. He argues that Turkey possesses "strategic depth" due to its history and geographic position and lists Turkey among a small group of countries which he calls "central powers". According to Davutoğlu's vision Turkey should not be content with a regional role in the Balkans or the Middle East, because it is not a regional but a central power, hence, it should aspire to play a leading role in several regions, which could award it global strategic significance.

ՃԱՂԻԲԱ ՌՈՔՆԻ

(ԵՊԷ)

ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՍ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՁԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԳԾՈՎ ԱՌԿԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Կանանց իրավունքների պաշտպանությունը գուտ գենդերային կամ բարոյական խնդիր չէ, այլ առավելապես քաղաքական և ռազմավարական: Կանանց հիմնախնդրի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի հստակ ընկալել և պատկերացնել սեփական պետություններ ստեղծելուց հետո ՊՄԱԵՀԽ երկրների¹ հասարակական-քաղաքական զարգացումներն ու դրանց ուղղվածությունը, այդ զարգացումներում կանանց մասնակցությունը, ինչը ոչ միայն մեծ չափով կնպաստի այդ երկրների տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը, կխթանի այդ զարգացման տեմպերը, այլև դրանով իսկ կամրապնդի այդ պետությունները, կոյուրացնի նրանց զարգացումը սահմանափակող դժվարությունների հաղթահարումը և համաշխարհային գործընթացներին նրանց ակտիվ մասնակցությունը: Այն, միաժամանակ, մեծապես կնպաստի երկրների ազգային, նաև տարածաշրջանային անվտանգության պահպանմանը: Առաջ քաշված դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ոչ միայն այդ երկրներում կանաց կարգավիճակի, այլև, ընդհանրապես, կանանց հիմնախնդրի ընկալման ու գնահատման համար:

Արևելքում գենդերային գաղափարախոսության էվոլյուցիայի համար կարևոր նշանակություն ունեցավ իսլամական ֆեմինիզմի զարգացումը, որի ներկայացուցիչները հետամուտ էին նաև ընտանիքից դուրս կնոջ ակտիվության բարձրացմանը՝ ոչ թե որպես տնտեսական

¹ Պարսից ծոցի երկրների համագործակցության խորհուրդը տարածաշրջանային կարևորագույն ռազմաքաղաքական կառույցներից մեկն է, որի կազմի մեջ են մտնում Պարսից ծոցի Արաբական թերակղզու վեց երկրները՝ Բահրեյնը, Քաթարը, Քուվեյթը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Օմանը և Սաուդյան Արաբիան: Կազմակերպության պաշտոնական անվանման մեջ «Պարսից» բառի փոխարեն օգտագործվում է «Արաբական» բառը՝ ըստ Ծոցի անվանման արաբների կողմից ընդունված տարբերակի (արաբ. الخلیج لدول التعاون العربي مجلس العربي)

փոփոխության կամ արևմտյան մշակութային մոդելի ընդօրինակման արդյունք, այլ իսլամական ժառանգությամբ սահմանված կարգի համաձայն:

Այս նպատակով, հարց էր դրվում ազատվել իսլամի դրույթների խեղաթյուրումներից և վերամեկնաբանել սրբազան տեքստերը, ինչպես, օրինակ, վերականգնել և ընդլայնել կանանց վարքագծի իսլամական պահանջների շրջանակները: Ֆեմինիստական շարժման շնորհիվ նաև որոշակիորեն փոփոխվեցին իսլամական աշխարհում ընդունված ընտանեկան օրենքները, և կանայք կարողացան ինքնուրույն որոշումներ կայացնել իրենց անձնական և տնտեսական ոլորտներում:

Կանանց և նրանց իրավունքների թեմայի վերաբերյալ արևմտյան փիլիսոփաների մոտեցումների վերլուծությունը հիմնավորում է այն իրողությունը, որ կնոջ և տղամարդու էության, ունակությունների և հնարավորությունների ոչ համարժեք ընկալումը և դրանից բխող իրավունքների անհավասարությունը բնորոշ չէ միայն արևելքին, ինչպես երբեմն փորձ է արվում ներկայացնել, այլ համամարդկային երևույթ է:

Արևելյան, մասնավորաբար, իսլամական փիլիսոփայության մեջ, անշուշտ, այդ տղամարդակենտրոն մոտեցումը և կնոջ՝ որպես թերաբժեք էակի, ընկալումը գերակա է:

Արաբական-իսլամական երկրներն ավանդականից նորին անցման շրջանում բախվեցին մի ամբողջ շարք հիմնահարցերի, որոնցից ամենակարևորը երկրների զարգացման գործընթացում կանանց մասնակցության դերի ու նշանակության չափն էր: Այս հարցի շուրջ քննարկումների ակտիվ մասնակիցներից էին վերջին հարյուրամյակի մուսլամանական մի շարք հայտնի մտավորականներ: Նրանց բոլորին նախ և առաջ բնորոշ է արևմտյան ավանդույթին դեմ դիրքորոշումը: Այսուհանդերձ, արաբական մշակույթում ի հայտ եկան նաև այնպիսի առաջադեմ մտածողներ, որոնք Արևմուտքի առաջադիմական մտքի կրողներ դարձան: Սա մեկ անգամ ևս ապացուցում է վերջին հարյուրամյակում արաբական աշխարհում կանանց թեմային տրվող կարևորությունը:

Ըստ տեսաբանների մեծ մասի գնահատականների, 20-րդ դ. արաբ կանանց սպասված ձեռքբերումներ բավարար չափով արդյունավետ չէր, և հին, ավանդական կապանքներից նրանց ազատագրման ուղղությամբ լուրջ անելիքներ կան:

Դիտարկելով ՊՕԱԵՀԽ երկրների զարգացման գործընթացներին կանանց մասնակցության հիմնահարցում հասարակական (սուբյեկ-

տիվ) սովորույթների դերը՝ ուսումնասիրողների մեծ մասն այդ մասնակցության տոկոսային ցածր հարաբերակցության ամենակարևոր պատճառներից է համարում դեռևս ամենավաղ տարիքից աղջիկների և տղաների դաստիարակության մեջ արմատավորված միանգամայն հակադիր արժեքային կատեգորիաների առկայությունը: Եթե տղաներն ընտանիքում և դպրոցում դաստիարակվում էին այն ոգով, որ հասարակական և քաղաքական ակտիվ գործչի դերը միայն իրենց է վերապահված, ապա աղջիկներին ներշնչվում էր, որ իրենք հասարակական և քաղաքական գործընթացներում որևէ դերակատարություն չեն կարող ունենալ և ապագայում իրենց կարող են տեսնել միայն որպես տնային տնտեսուհի և երեխաների դաստիարակ:

Այսպիսի կարծրատիպերի առկայությունը պատճառ է դառնում, որ իգական սեռի ներկայացուցիչներն սկսած վաղ տարիքից տառապեն թերարժեքության բարդությամբ և չհամարձակվեն ոտք դնել հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզ:

Կնոջը հասարակական-քաղաքական գործընթացներից ետ պահող մյուս գործոնը հասարակության մշակութային համակարգն է: Մասնավորաբար, կրոնի և քաղաքականության սերտ կապը լրջորեն ազդում է զարգացման գործընթացի և դրանում կանանց ունեցած մասնակցության վրա: Ուսումնասիրողների մոտ բավական տարածված է այն թյուր կարծիքը, որ արևելքի կնոջ իրավունքների սահմանափակությունը հիմնականում պայմանավորված է կրոնով՝ իսլամի պահպանողական դոգմաներով, ինչը հակված ենք համարել վերջիններիս կողմից Ղուրանի ոչ ճիշտ, տարաբնույթ, մեկանաբանությունների հետևանք:

ՊՄԱԵՀԽ պետությունների զարգացման հնարավորություններն ուսումնասիրող մասնագետներն առաջին պլանի վրա են դնում նրանցում կանանց իրավունքների սահմանափակությունը և այն պայմանավորող գործոնների՝ հնացած ավանդույթների, սովորույթների, կնոջ ունակությունների և հասարակության մեջ նրա դերի ընկալման կարծրատիպերի վերացման ուղղությամբ ջանքերի իրականացումը:

ՊՄԱԵՀԽ երկրներում կանանց մասնակցության ընդլայնումը

Մինչև 20-րդ դ. 70-ական թթ. կանայք գրեթե ներգրավված չէին քաղաքական և տնտեսական գործունեության մեջ: Կնոջ՝ որպես տղամարդու հետ հավասար իրավունքներ ունեցող անհատի, ընկալ-

ման սկիզբը դրվեց հենց այդ ժամանակներից սկսած: Կնոջ դերի բարձրացման ջատագովները ձգտում են ստեղծել առավել ընդգրկուն մոդել, որն իր արժանի տեղը կգրավի ժողովրդավարական հիմքերի վրա կառուցված կառավարման օղակներում: Օրեցօր ընդլայնվում է տարածաշրջանի երկրների կանանց պայքարը մարդու իրավունքների պահպանման, խտրականության վերացման և հասարակության մեջ իրենց արժանի տեղը զբաղեցնելու, ինչպես նաև երկրների զարգացման գործում իրենց ներուժը ներդնելու համար: Ակնհայտ է նաև միջազգային ճնշումների և ֆեմինիստական շարժումների անմիջական ազդեցությունը հետազոտվող տարածաշրջանի կանանց զբաղվածության և ընդհանրապես կարգավիճակի վրա:

Այդ երկրների կանայք, որ երկու տասնամյակ առաջ ընդհանրապես իրավագուրկ էին, աստիճանաբար ներգրավվում են հասարակական գործունեության մեջ և երբեմն մուտք են գործում մինչև վերջերս տղամարդկանց մենաշնորհը համարվող բնագավառներ: Հատկանշական է, որ Բահրեյնի, Քուվեյթի, ԱՄԷ-ի, Օմանի և Քաթարի իշխանությունները կանանց թույլ են տվել ծառայել ոստիկանական զորամասերում:

Երկրներում կանանց խնդիրներին անդրադառնալիս ոչ միայն անհրաժեշտ է հաշվի առնել այդ երկրների միջև առկա պատմամշակութային, պետական-քաղաքական տարբերությունները, այլև՝ նրանցից յուրաքանչյուրում կանանց ժողովրդագրական պատկերը, նրանց հիմնական տվյալները (բնակչության վայրը (քաղաք, գյուղ), կրթական մակարդակը, տարիքը, ընտանեկան վիճակը և այլն), ինչը հաճախ անտեսվում է:

Պետք է արձանագրել, որ ՊՄԱԵՀԽ երկրների բնակչության 48%-ը² կազմող կանանց արդյունավետ աշխատուժը դեռևս բավարարչափով չի օգտագործվում: Վերջին շրջանում, իրավամբ, երկրների զարգացածության մակարդակի ցուցանիշ է համարվում նաև բարձր պաշտոններում կանանց ներգրավվածության չափը: Խնդրին այս սկզբունքով մոտենալու դեպքում հարկադրված ենք արձանագրել, որ ՊՄԱԵՀԽ երկրների զարգացման գործընթացին կանանց դեռևս ոչ լիարժեք մասնակցությունը, փաստորեն, երկրներին զրկում է տարբեր

² Nourah Al Yousef, Status of Women in the Arab Gulf Countries, p. 5 [http://faculty.ksu.edu.sa/NourahAlyousef/Publications/Women%20in%20the%20Gulf.pdf]

բնագավառներում աշխատանքները կազմակերպելիս կանաչի յուրահատուկ մտածելաձևի ու տրամաբանության և դրանց համապատասխան արդյունավետ առաջարկներից օգտվելու, ինչպես նաև անմիջապես կանանց վերաբերող խնդիրներին ավելի ճիշտ լուծում տալու հնարավորությունից:

Խնդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանանց աշխատուժի ավելի լայն ներգրավումը սահմանափակող գործոն է նաև այն, որ հաճախ կրթություն ստացած կանայք իրենց երկրներում համապատասխան աշխատատեղեր չեն գտնում, և, այդպիսով, կապիտալ ներդրումը մնում է չիրացված:

ՊԾԱԵՀԽ երկրներում կանանց կրթության հնարավորությունների և այդ ասպարեզում էական ձեռքբերումների հարցը պետք է քննարկել այդ երկրների զարգացման ընթացքի, պետական համակարգի առանձնահատկությունների հաշվառմամբ, տարբեր բնագավառներում իրականացվող բարեփոխումների և կանանց նկատմամբ խտրականության վերացմանն ուղղված քաղաքականության ու համապատասխան գործնական նախաձեռնությունների համատեքստում:

Ընդունելով կանանց կրթության կարևորությունը՝ հարկ է նշել, որ այդ խնդրի կարգավորման հնարավորությունները, միջոցներն ու, բնականաբար, նաև արդյունքները մեծ չափով պայմանավորված են կանանց դասակարգային պատկանելությամբ, տարբեր դիրքորոշումների առկայությամբ և մի շարք այլ հանգամանքներով:

Կրթական համակարգի և դրանում կանանց լայն ներգրավման խնդիրն առանձնակի կարևորություն է ներկայացնում նաև իրենց հասարակությունների առաջադիմությամբ շահագրգռված ՊԾԱԵՀԽ երկրների համար և պատշաճ տեղ է զբաղեցնում դրանց զարգացման ծրագրերում: Վերջին տասնամյակներում այդ երկրների կառավարությունները խոշոր միջոցներ են տրամադրում կրթության համակարգի, հատկապես կանանց կրթության բարելավմանը, ինչն ապահովում է կանանց մասնակցությունը հասարակության զարգացման գործընթացին, և որի արդյունքներն ակնհայտ են:

Բերենք ՊԾԱԵՀԽ երկրներում այդ իրողությունը հաստատող տվյալներ:

ԱՄԷ-ի գիտատեխնիկական գործընթացներում կանանց զբաղվածությունը 1995 թ. կազմել է 23%: Ընդհանուր կրթական մակարդակում կանանց թիվը 1975-1995 թթ. տղամարդկանց թվի հետ համեմատած ավելացել է 32%-ով, իսկ բարձրագույն կրթության բնա-

գավառում՝ 45%-ով³: Վերջին տարիներին միայն Քաթարի համալսարանում ուսանողների և շրջանավարտների 80%-ը կանայք են կազմում⁴: Այս երկրները միջոցառումներ են մշակում նախնական և միջնակարգ կրթական մակարդակներում առկա ճեղքվածքը վերացնելու ուղղությամբ: ՊՄԱԵՀԽ գրեթե բոլոր երկրների սահմանադրություններն ընդգրկում են նախնական ուսուցման ապահովման վերաբերյալ կետեր:

Նկատի առնելով խնդրի կարևորությունը՝ առանձին-առանձին ուսումնասիրվել են ՊՄԱԵՀԽ երկրների կրթական համակարգում տիրող իրադրությունը և այն պայմանավորող գործոնները, և արդյունքում (չնայած վիճակագրական տվյալների աղությանը), կատարվել են հետևյալ եզրահանգումները:

Այս երկրներում սեռային խտրականության որոշակի տարրերի պահպանմամբ հանդերձ, իշխանությունների կողմից լուրջ քաղաքականություն է իրականացվում բոլոր մակարդակներում (տարրական, միջնակարգ, բարձրագույն) իգական սեռի կրթության ապահովման համար: Այսպիսի քաղաքականությունն, անշուշտ, տալիս է իր սպասված, երբեմն նույնիսկ սպասվածից բարձր արդյունքները: Հարցի քննարկումը մեզ թույլ է տվել նկատել, որ իգական սեռի ուսանողների թիվն այս երկրներում հիմնականում ավելի մեծ է: Կարծում ենք, որ այս իրողությունը պետք է բացատրել հետևյալ հանգամանքներով:

Որոշ երկրներում (օրինակ՝ ԱՄԷ-ում) արական սեռի ներկայացուցիչների մեծ մասն օգտվում է արտասահմանում ուսանելու իրենց ընձեռված հնարավորությունից, մինչդեռ կանայք այդպիսի արտոնությունից զուրկ են: Կարևոր հանգամանք է նաև այն, որ արական սեռի ներկայացուցիչները, որոնց վրա ավանդաբար դրված է եղել ընտանիքի պահանջմունքները բավարարելու պարտականությունը, ավելի շուտ են սկսում իրենց աշխատանքային գործունեությունը, ինչն, անշուշտ, խոչընդոտում է բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությանը:

Կարծում ենք, որ բարձրագույն կրթություն ստացող կանանց տոկոսային առավելությունը պայմանավորված է նաև հոգեբանական գործոնով: Տեսականորեն կատարելապես զրկված լինելով գիտելիքներ

³وضعیت زنان در امارات متحده عربی، گزارش سفارت ج ۱۱ در ابوضبی، 1380، ص 12

⁴ Nourah Al Yousef, Status of Women in the Arab Gulf Countries, p. 10 [http://faculty.ksu.edu.sa/NourahAlyousef/Publications/Women%20in%20the%20Gulf.pdf]

ձեռք բերելու, իրենց հոգևոր պահանջները բավարարելու և, այդպիսով, նաև կուտակված բարոյություններից ազատագրվելու և ինքնահաստատվելու տարրական հնարավորությունից, այս երկրների կանայք փորձել և փորձում են առավելագույն չափով օգտվել իրենց համար մատչելի դարձած այդ բարիքից և զանգվածաբար մուտք են գործում բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Արձանագրելով ՊՄԱԵՀԽ երկրներում կանանց կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացվող քաղաքականության արդյունքները, միաժամանակ հարկ է նշել, որ դրանք դեռևս բավարար չեն: Հիմնական պատճառը, թերևս, այն է, որ այդ երկրների հասարակական և մշակութային կյանքում (չնայած օրենքով ամրագրված տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը) մինչ այժմ առկա են սեռային խտրականության տարրեր, որոնց հաղթահարման հարցն այդ երկրներում այսօր էլ շարունակում է մնալ լուրջ հիմնախնդիր:

Տարբեր մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ստացած կանանց զգալի մասին չի հաջողվում իր գիտելիքներին համապատասխան աշխատանք գտնել: Եվ, վերջապես, այդ երկրներում կանայք հազվադեպ են նշանակվում բարձր պաշտոնների:

ՊՄԱԵՀԽ երկրների զարգացման գործընթացը, բնականաբար, դրական փոփոխություններ մտցրեց նաև այդ երկրների առողջապահության համակարգում, ինչը մեծ չափով նպաստեց ազգաբնակչության և, մասնավորաբար, կանանց առողջական վիճակի բարելավմանն ու կյանքի տևողության երկարացմանը: Ըստ Համաշխարհային բանկի հաշվարկների⁵, մեզ հետաքրքրող երկրներում կանանց միջին տարիքը հասնում է 70-ի, ինչն ակնառու ձեռքբերում է: Վիճակագրական տվյալները հաստատում են, որ այն շրջաններում, որտեղ առողջապահական մակարդակը գտնվում է բավարար հիմքերի վրա, կանայք մոտավորապես հինգ տարով տղամարդկանցից ավելի երկար են ապրում:

Այդ երկրներում կյանքի որակի փոփոխությանը զուգընթաց աճել է նաև կյանքի նկատմամբ հույսի և վստահության ցուցանիշը, ինչը պայմանավորվում է նորածինների մահացության նվազմամբ: 2001թ. նորածինների մահացության մոտավոր ցուցանիշը 1000-ից 44 էր

⁵ World Bank, Op.Cit., 17

(1960թ.՝ 1000-ից 164)⁶: Ծնելիության նվազման մյուս պատճառն այն է, որ այդ երկրներում աղջիկների ամուսնության տարիքը բարձրացել է, ինչն արտահայտվում է ուսումնական հաստատություններում սովորող աղջիկների ավելի մեծ թվով:

Կանանց արդի վիճակը ՊՄԱԵՀԽ երկրներում

ՊՄԱԵԽ երկրներում կանանց աշխատուժի օգտագործումը սկսվել է բավականին ցածր ցուցանիշներից, սակայն 1960-ական թթ. մինչև 2000-ական թթ. սկիզբը աճել է 50%-ով: Աճի այս տեմպերը, զարգացող այլ երկրների հետ համեմատած, բավականին արագացված են եղել⁷: Այսուհանդերձ, դեռևս առկա են տնտեսության մեջ կանանց ներգրավման ընդլայնումը խոչընդոտող մի շարք գործոններ՝ աշխատանք որոնելու համար ընտանիքի թույլտվության անհրաժեշտությունը, կանանց պասիվությունը, ինչպես նաև աշխատատեղերի բաշխման կենտրոնների սուբյեկտիվ վերաբերմունքը կանանց աշխատանքով ապահովելու հարցում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հատկապես վերջին տասնամյակներում ՊՄԱԵՀԽ երկրների ներքին կյանքի տարբեր ոլորտներում կանանց մասնակցությունն աննախադեպ չափերով ընդլայնվել է, ինչը, կարծում ենք, անմիջապես կապված է այդ երկրների զարգացման գործընթացի էվոյուցիայի, տարբեր բնագավառներում իրականացվող բարենորոգումների և, այդ համատեքստում կանանց իրավունքների պաշտպանության, նրանց նկատմամբ խտրականության, տարբեր խոչընդոտների ու սահմանափակումների վերացման հետ:

Ինչ վերաբերում է քաղաքական մասնակցությանը, որոշ ժամանակ առաջ այս երկրների սահմանադրություններով կանանց համար նախատեսված չէր նույնիսկ քաղաքացիական նվազագույն իրավունքը՝ մասնակցությունը ընտրություններին, և մինչ այժմ էլ այդ երկրներից շատերում կանայք զրկված են այդ իրավունքից: Կանայք բավարար չափով ներկայացված չեն քաղաքական և հասարակական բնագավառներում որոշումների կայացման բոլոր մակարդակներում: Ըստ

⁶ N. Chamlou, Gender and development in the Middle East and North Africa: Women in the public sphere (Orientation in Development), Washington D.C., 2004, p. 45

⁷ Same, p. 49

վիճակագրական տվյալների՝ կանանց ներգրավածությունն ազգային խորհրդարաններում 6%-ից պակաս է:

ՄԱԿ-ի մարդկության առաջընթացին վերաբերող գեկույցում վերջին մի քանի տարիներին շեշտվում է Արաբական աշխարհում կանանց քաղաքական, տնտեսական և հասարակական դիրքերի հզորացման անհրաժեշտությունը: Այդ ճնշումների հետևանքով 2005 թ. հիշյալ երկրներում կանանց քաղաքական մասնակցության մեջ նկատելի տեղաշարժեր են կատարվել:

Պետական և քաղաքական ոլորտներ կանանց ավելի լայն ներգրավումը, ինչին հետամուտ են ՊՄԱԵՀԽ երկրները, կմեծացնի կանանց դերակատարությունը երկրների ներքին և արտաքին քաղաքականության ռազմավարության մշակման և իրականացման գործում, ինչն, անկասկած, կարևոր նշանակություն կունենա միջազգային ասպարեզում այդ երկրների հեղինակության բարձրացման համար: Հատկանշական է, որ ՊՄԱԵՀԽ 1999 թ. հիմնադրված խորհրդակցական խորհրդի 40 անդամներից 5-ը կին է:

Պետական, քաղաքական և հասարակական ոլորտներ կանանց ներգրավման առումով էական հաջողությունների է հասել ԱՄԷ-ն, ինչին մեծ չափով նպաստել են երկրի տնտեսական լայն հնարավորությունները, կանանց կրթելու, նրանց իրավունքներն ընդլայնելու և նրանց դիրքերն ամրապնդելու ուղղությամբ պետության ջանքերը: Այս բնագավառում էական ձեռքբերումներ ունի նաև Քուվեյթը, որտեղ կանայք պատասխանատու գործունեություն են իրականացնում որպես նախարար, փոխնախարար, դեսպան, քաղաքական խորհրդատու և այլն: Կանանց իրավունքների ընդլայնման և նրանց ազատությունների տրամադրման ասպարեզում Քաթարի ամենակարևոր ձեռքբերումը, թերևս, 1999 թ. նորընտիր էմիրի հրամանով կանանց ընտրելու իրավունքի շնորհումն էր: Սաուդյան Արաբիայում ևս էական քայլեր կատարվեցին կանանց իրավունքների ապահովման ասպարեզում, ինչի լավագույն արտահայտությունը 2000 թ. արքայադուստր ալ Ջուհարա Ֆահդ իբն Մուհամմադի նշանակումն էր կրթության փոխնախարարի պաշտոնում⁸: 2000 թ. Բահրեյնի էմիրը խորհրդարանական 40 տեղերից 6-ը տրամադրեց կանանց, իսկ 2006 թ. նրանց թիվն ավելացավ ևս 10-ով: Սկսած 1991 թ. Օմանում կանանց ընտրություններին մասնակցելու իրավունք շնորհվեց: Այժմ կանայք զբաղեցնում են խորհրդա-

⁸ UNDP-POGAR: Programme on Governance in the Arab Region, Աղյուսակ 5:

րանի 83 տեղերից 2-ը: Իսկ մեծ թվով կանայք զբաղեցնում են նախարարի, փոխնախարարի, խորհրդականների, տարբեր բարձր աստիճանների ղեկավարների և այլ կարևոր պաշտոններ:

Անդրադառնալով ՊԾԱԵՀԽ երկրներում կանանց ներգրավվածության համար բարենպաստ պայմանների ու հեռանկարների ստեղծման գործում մոդեռնիզմի դերակատարությանը, ժամանակակից գիտության, տեխնիկայի, բարձր տեխնոլոգիաների և դրանցով պայմանավորված համապատասխան կենսակերպի ներմուծումն այդ երկրներ խթանեց նրանց տնտեսական զարգացումը, նրանց համար ստեղծեց նոր հնարավորություններ և մեծ չափով նպաստեց հասարակության շրջանում նոր մտածելակերպի ու կենսակերպի ձևավորմանը, որի արդյունքը եղավ նաև այս երկրների կանանց աստիճանական ձեռքագատումը կաշկանդող սովորույթներից, նրանց աշխարհայացքի ընդլայնումը, մասնակցության ու ներգրավվածության աճի աննախադեպ ցուցանիշները և, ընդհանրապես, նրանց առավել բարձր կարգավիճակը:

ՊԾԱԵՀԽ երկրների զարգացման մեջ կանանց մասնակցության գործում անժխտելիորեն կարևոր դեր ունեն նաև զանգվածային լրատվամիջոցները, այդ թվում արբանյակային ցանցի, հեռուստատեսության, մամուլի, ինտերնետի արագ տարածումը:

Չնայած ՊԾԱԵՀԽ երկրների վրա զլոբալացման ազդեցությունն անխուսափելի է, այսուհանդերձ, առանձին երկրներում, ինչպես առավել պահպանողական Սաուդյան Արաբիայում, այն հանդիպում է լուրջ դիմադրության: Այստեղ, օրինակ, կանայք զրկված են ավտոմեքենավարելու իրավունքից, քանի որ ստիպված են վարելիս հանել դեմքի քողը, ինչը հակասում է երկրի օրենքներին: Նոր տեխնոլոգիաներին տիրապետելը, հեռուստատեսային փակ օղակում աշխատելը ևս արգելված է:

Այսուհանդերձ, վերջին շրջանում նկատվում է այդ դիմադրության նվազման միտում, որի արտահայտություններից մեկն էլ կանանց իրավունքների ընդլայնումն է:

Հաղորդակցության համակարգում իրականացվող փոփոխություններն այդ երկրներին հնարավորություն տվին խուսափել հասարակական և քաղաքական բնույթի սահմանափակումներից:

Կանանց խմբիներին նվիրված բազմաթիվ միջազգային և տարածաշրջանային համաժողովների ընդունած որոշումները, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների առաջարկները և դրանց իրա-

կանացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը մեծ չափով պայմանավորեցին Արաբական աշխարհում, մասնավորաբար ՊՕԱԵՀԽ երկրներում, կանանց իրավունքների ընդարձակումը և նրանց մասնակցության աճը:

ՊՕԱԵՀԽ երկրներում շատ կանայք զբաղվում են նաև մանր ձեռնարկատիրությամբ:

Ինչպես այլ, այնպես էլ ՊՕԱԵՀԽ անդամ երկրներում կանանց հասարակական կազմակերպությունները կարևոր նշանակություն ունեն կանանց լիդերական կարողությունների բացահայտման ու զարգացման, ընդհանրապես նրանց դերի բարձրացման, քաղաքական ու հասարակական գործընթացներում, նաև պետական հիմնարկներում կանանց ներգրավվածության գործում:

Առանձին հեղինակներ ՊՕԱԵՀԽ երկրներում կանանց մասնակցությունը սահմանափակող գործոնների շարքում կարևոր են համարում անհատի ներքին անհատական մոտեցումը, որը նախ և առաջ պայմանավորված է անհատի մշակութային և արժեքային համակարգով և դրանով պայմանավորված հոգեբանական ու կենցաղային սոսանձնահատկություններով: Մեկ այլ մոտեցմամբ, չնայած կրթության տարածմանը, նյութական ու մտավոր բնագավառներում կանանց հասարակական մասնակցությունը դեռևս լիովին չի իրականացվում: Այս երևույթը կապված է հասարակության հայրիշխանական բնույթի հետ և ընդգրկում է ողջ աշխարհը⁹: Մեկ այլ տեսանկյունից, կանանց մասնակցության ամենամեծ խոչընդոտներն են համարվում կանանց ղեկավարման հանդեպ ավանդական մոտեցումները¹⁰: Իսկ մյուս մոտեցմամբ, հասարակության մեջ կանանց ոչ բավարար մասնակցության հիմնական գործոններից են տղամարդկանց նախապաշարմունքները¹¹: Նշված խոչընդոտների առկայությունը տղամարդկանց նաև հնարավորություն է տալիս տարբեր բնագավառներում բարձր պաշտոնները դարձնել իրենց մենաշնորհը¹²:

Այս տեսակետները հիմնականում հաստատել են նաև Բահրեյնի կանանց լայն շրջանում մեր անցկացրած հարցման արդյունքները, որոնք, չնայած ՊՕԱԵՀԽ անդամ երկրներում առկա տնտեսական,

⁹ Khoi L., Cultures et Society Education. Baheshti University, Cambridje 1996, p. 306.

¹⁰ 10 11 12
اضر غامی فر، مژگان، ارتقاي شغلي زنان به پستهای مدیریت و زارتخانه ها، فصلنامه منظر، پاییز 2002
اکفاش پور آذر، بررسی چند عامل موثر در کارایی زنان در ادارات، پایان نامه کارشناسی ارشد، دانشگاه تربیت مدرس، 1990، ص 204

¹² ابوت پاملا، والاس کلر، جامعه شناسی زنان، ترجمه منیژه نجم عراقی، تهران، 2001، ص 204

քաղաքական, մշակութային իրադրության և, համապատասխանաբար, խնդրի վերաբերյալ առկա տարբերություններին, այնուամենայնիվ, հնարավորություն է տալիս ավելի հստակեցնել կանանց մասնակցության վիճակը, այն սահմանափակող խոչընդոտները և այդ երկրներում կանանց իրավունքներն ու կարգավիճակն ընդհանրապես:

Հարցման մեջ ներգրավված էին ամենատարբեր մասնագիտություններ ունեցող և տարբեր բնագավառներում աշխատող կանայք:

Հարցաթերթիկները բաղկացած էին հինգ հարցից, որոնք վերաբերում էին կանանց մասնակցության հետ կապված գործոններին, այն է՝ հասարակական-մշակութային, անհատական, ընտանեկան, իրավական և կրթական, ինչպես նաև հասարակական մասնակցության նկատմամբ կանանց վերաբերմունքը:

Պատասխանները ցույց են տվել, որ հասարակական մասնակցության հանդեպ կանանց վերաբերմունքն ուղղակիորեն կապված է վերը նշված գործոնների՝ նրանց հասարակական դիրքի, կրթական մակարդակի, աշխատանքային փորձի, տարիքի և այլ առանձնահատկությունների հետ: Հարցման թեմաներից յուրաքանչյուրը և դրանց բովանդակությունը դասակարգվեցին ըստ հասարակական, մշակութային, ընտանեկան, անհատական և կրթական ոլորտների: Սկզբնական ուսումնասիրության արդյունքների հիման վրա կազմվեց հիմնական հարցաթերթիկը, որը պարունակում էր 48 պատասխան:

Պատասխանների վերլուծությունը, ինչպես և պետք էր սպասել, մեկ անգամ ևս հաստատեց, որ հասարակական մասնակցության հանդեպ կանանց վերաբերմունքը մեծ չափով պայմանավորված է նրանց հասարակական դիրքով, կրթությամբ, աշխատանքային փորձով, տարիքով, աշխատանքային օրենքներով և այլն:

Ելնելով հիշատակված հեղինակների տեսակետներից, ինչպես նաև մեր կողմից կատարված հետազոտության արդյունքներից՝ զարգացման մեջ կանանց մասնակցության խոչընդոտներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) բնածին (ենդոգեն) և 2) արհեստական (էկզոգեն) խոչընդոտներ:

Ամփոփելով ՊՄԱԵՀԽ երկրներում կանանց ներգրավման հարցում առկա ձեռքբերումները, պետք է նշենք, որ դրանք արդյունք էին այդ երկրների իշխանությունների կողմից տարբեր բնագավառների բարենորոգմանն ու երկրների զարգացմանը նպատակաուղղված քաղաքականության, որոնց իրականացմանը մեծապես նպաստեց նաև Արևմուտքի ուղղակի ազդեցությունը, արևմտյան մշակույթի՝ տարբեր

միջոցներով ներթափանցումը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից այդ երկրների դեմոկրատացման պահանջները: Այս ձեռքբերումներից կարևորներն են՝ 1) երկրների ներքին կյանքի տարբեր բնագավառներում կանանց մասնակցության ընդլայնումը, 2) կանանց քաղաքական ազատությունների և տղամարդկանց հետ հավասար իրավունքների տրամադրումը, 3) տարբեր մակարդակներում կանանց կրթության հնարավորության ապահովումը, 4) կանանց առողջապահական խնդիրների բարելավումը, 5) բարձր և պատասխանատու պաշտոններում կանանց ներգրավումը և նրանց մասնակցությունը երկրների համար կարևոր նշանակություն ունեցող օրենքների և միջոցառումների մշակմանը, 6) կանանց քաղաքական ակտիվության, նրանց կողմից հասարակական կազմակերպությունների հիմնման և գործունեության հնարավորության տրամադրումը:

FARIBA ROKNI

(YSU)

CURRENT ACHIEVEMENTS REFERRING WOMEN'S INVOLVEMENT IN
ARAB MEMBER COUNTRIES OF PERSIAN GULF COOPERATION
COUNCIL

Investigations about women's key issues give the possibility in perceiving more clearly and picturing out, the social-political developments and their directions and women's participation in those developments, after creating Own states of Persian Gulf cooperation member countries.

In Persian Gulf Cooperation Council countries current achievements of women's involvement issues were the result of reforms in various sectors and policy directed for the development of the countries implemented by the authorities of the latter, as well as the direct influence of the West, and penetration through various western cultural means and democratization demands for those countries by international organizations.

Հ Ի Ն Ե Վ Մ Ի Ջ Ն Ա Դ Ա Ը Յ Ա Ն
Պ Ա Տ Մ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

ԱԴԱՍՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ
(ՀԱԻ)

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՍԱԳՐԵՐԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՓԻՆ

Գեղարքունիքի մարզի ճամբարակի ենթաշրջանը թեև հարուստ չէ պատմաճարտարապետական հուշարձաններով, սակայն դրանք բոլոր ժամանակներում մնացել են մասնագետների ուսումնասիրությունից դուրս: XIX դարի հայ տեղագիրները (Հովհաննես Եպիս. Շահխաթունյանց, Սարգիս Ջալալյանց, Մեսրոպ արք. Սմբատյանց, Ղևոնդ Ալիշան, ազգագրագետ Երվանդ Լալայան) անդրադարձել են նախկին Նոր Բայազետ գավառի հուշարձաններին, սակայն շրջանցել են Սևանի արևելյան լճափնյա բնակավայրերը (նախկինում թուրքաբնակ՝ Դրախտիկ, Շորժա, Արտանիշ, Ջիլ): Դա պայմանավորված է եղել մի շարք հանգամանքներով. ինչպես նշում է տեղագիր Մեսրոպ Սմբատյանցը կային թուրքաբնակ գյուղեր, որոնք ճանապարհից հեռու և վտանգավոր էին, չկարողացան լինել այդ բնակավայրերում¹:

Վերոնշյալ բնակավայրերում ընդհանուր հաշվվում է մոտ 60 հուշարձան, որոնց մեծ մասը միջնադարյան կոթողներ են և հանրապետական նշանակության խաչքարեր: Սակավ են նաև վիմագրերը. Մեսրոպ արք. Սմբատյանցը այս տարածքներից գրառել է՝ երեք վիմագիր Շորժայից, իսկ Երվանդ Լալայանը՝ 4 վիմագիր՝ 3-ը արտագրելով նախորդ հրատարակչից: Դիվան հայ վիմագրության պրակում ներկայացվում է 9 վիմագիր, իսկ 2015-16 թթ. կատարած մեր ուսումնասիրությունների արդյունքում ընդօրինակվել է 5 վիմագիր (ընդհանուր 18 վիմագիր): Ուսումնասիրությունների հիմնական նպատակն էր գտնել նոր կոթողներ, համեմատել նախկինում հրատարակված վիմագրերը, ճշգրտել եղած կոթողների գտնվելու վայրը:

¹ Սմբատեանց Մ., Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ (այսուհետ՝ Տեղագիր Գեղարքունի), Վաղարշապատ, 1895, էջ 631:

ԴՄԱԽՏԻԿ բնակավայրը հիշատակվում է Սյունյաց նահանգի Սողոք գավառում Դրաքտիկ տարրերակով²: Գեղատեսիլ այս գյուղում XX դարի սկզբներին եղել է «հին եկեղեցու հիմնապատեր և մի քանի խաչարձաններ՝ առանց գրութեան»³: 1830-ական թթ. մինչև 1980-ական թթ. եղել է թուրքական բնակավայր և կոչվել է Թոխլուջա: Ներկայումս գյուղում կանգուն է 5 խաչքար, երկուսը՝ դպրոցամերձ տարածքում, երեքը՝ գյուղի հյուսիսային բլրի վրա: Մեր կողմից ընդօրինակվել է մեկ վիմագիր, որը փորագրված է խաչքարի (XIV-XVIդդ.) ստորին մասում: Վիմագրի վերջին բառը վնասվել է պատվանդանին ամրացնելու հետևանքով, 4 տող (նկ.1):

1. ԽԱՉ/Ս ԱՍԼԱՆԻ ՍՈՍԻ ՄԽԻԹԱՐ/Ա ԵՍ ԺՈՂՈ--ԵՑԻ

ՇՈՐԺԱՆ՝ Ս. Սմբատյանցը հիշատակում է Շորջայ, իսկ Ե. Լալայանը՝ Շորջալու կամ Նոր Քեթի, որը «թրքաբնակ մի աննշան գիւղ է, ուր նոյնպէս կայ մի աներ եկեղեցի»⁴: Բացի այդ ազգագրագետը նշում է, Սևանա լճի ափին կա նաև Շորժա կամ Նադեժդինո գյուղը⁵, որը երեք կողմից շրջապատված է բլուրներով: Գյուղի բնակիչները աղանդավորներ են՝ տեղափոխված 1851 թ. Սամարայից⁷: Ս. Սմբատյանցը հիշատակում է 3, իսկ Ե. Լալայանը՝ 4 վիմագիր (3-ը փոխառված նախորդ հրատարակչից), որոնք չկան Դիվանում⁸: Երեք վիմագիր էլ հրատարակել է վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը. ևս երկուսը գրառվել է մեր ուսումնասիրության ընթացքում, ընդհանուր՝ ինը վիմագիր:

Շորժան լեռնային բնակավայր է (1900 մ բարձր.), այն բնակելի է եղել դեռևս 2-1 հազ. Ք.Ա.: Միջնադարյան հուշարձաններից հայտնի է գյուղի եզրին բլրի գագաթին գտնվող կիսավեր XVII դարի մատուռը: Այն կառուցված է անմշակ քարից, ունի ուղղանկյուն հատակագիծ,

² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետ՝ ՀՀՇՏԲ), հատոր 2, Երևան, 1988, էջ 150:

³ Լալայեան Ե., Նոր Բայազեդի գաւառ կամ Գեղարքունիք, Ազգագրական հանդէս (այսուհետ՝ ԱՀ), գիրք 19, էջ 34:

⁴ ՀՀՇՏԲ, հատոր 4, Երևան 1998, էջ 151:

⁵ Լալայեան Ե, ԱՀ, էջ 19:

⁶ Լալայեան Ե, նշվ. աշխ., էջ 33:

⁷ Խոսքը Վերին և Ներքին Շորժա բնակավայրերի մասին է:

⁸ Դիվան հայ վիմագրության (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ IV, էջ 384:

տանիքը իջել է, միակ մուտքը արևմուտքից է: Տարածքից հայտնաբերված խեցեղենի բեկորները թվագրում են XIII-XVII դդ.⁹: Բլրի ստորոտին կանգուն է վերջին տարիներին վերանորոգված եկեղեցին, որի պատերի մեջ կան տասնյակ խաչքարեր: Հայտնի է, որ XIX դարի 60-ական թթ. եկեղեցին կիսաքանդ էր, «միայն որմունքն կիսով չափ կանգուն, որոյ մեջ կան խաչքարեր»¹⁰: Հարավային խորանի մոտ եղել են երեք արձանագիր խաչքար, որոնք այսօր տեղում չեն: Եկեղեցու բարեկարգ բակում կան խաչքարերի բեկորներ, որոնցից մեկն ունի մանրագիր և դժվարընթեռնելի արձանագրություն (9 տող), ընթեռնելի է խաչի վերին թևի գիրը (նկ. 2):

2. Ի ԹՎ/ԻՍ ՀԱՅՈՑ/ ՈՀԶ (1227):

Գյուղամիջում Սերգեյ Մարգարյանի տնամերձում կանգուն է XVI դ. խաչքար (86x42սմ)՝ արձանագրությամբ՝ 5 տող, (նկ. 3):

3. ԹՎ. ՋՂԹ (1550)/ ՄԲ ԽԱԴՉՍ ԲԱՐԴԵԽԱԻՄ ՎՈԴԳՈՅՆ / ՈՐՈՆԻՆ ՈՒԼ/ԽԱԹՈՒՆՄԱՍ/ ԻՆ:

Խաթուն թուրքերենից թարգմանվում է *տիկիլ*: Հայերենում գործածական է եղել Խաթուն արմատով իգական անձնանուններ¹¹, որոնք նույն նշանակությունն են ունեցել: *Խաթունամ* անձնանունը հանդիպում ենք XV դարից, նշանակում է ՄԵԾ ՄԱՅՐ: XIV դարից գործածվել է նաև *Ուլխաթուն* անձնանունը¹²:

ԱՐՏԱՆԻՇԸ գտնվում է համանուն ծոցի ափին, ծովի մակերևույթից 1975 մ բարձրության վրա: Գյուղը հայտնի է նաև Ադաթափա, Արդանիշ, Արտանիչ, Արտավունջ տարբերակներով: XIX դարի կեսերին այն հիշատակվում էր Օրդանիչ¹³ կամ Օրթանիչ¹⁴ տարբերակով: Եղել է թուրքաբնակ, ավելի վաղ բնակվել են հայերը: Արտանիշը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով. թերակղզու վրա է գտնվում հունադավան եկեղեցի՝ անմշակ քարից կառուցված, որն

⁹ Խեցեղենի թվագրման հարցում մեզ օգնել է ՀԱԻ միջնադարյան հնագիտության բաժնի գիտաշխատող Ա. Բաբաջանյանը:

¹⁰ Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 630:

¹¹ Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատոր Բ, Երևան 1944, էջ 447-451:

¹² Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատոր Դ, Երևան 1948, էջ 198:

¹³ Մ. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 631:

¹⁴ Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, Էջմիածին, 2014:

Ջիլ տանող ճանապարհի աջ հատվածում տեղադրված է խաչքար (XIII-XIV դդ.), որը բերվել է Դաշքեսանի շրջանի (ներկայիս՝ Ադրբեջան) Ղուշչի (Կուշչի, Խաչակապ) գյուղի Ս. Թարգմանչաց եկեղեցուց: Այս նշանավոր վանքն ըստ ավանդության հիմնադրել է Մեսրոպ Մաշտոցը: Այստեղ է գործել նաև Սահակ Պարթևը, նրանք թարգմանել են Աստվածաշունչը, որտեղից էլ առաջացել է Թարգմանչաց վանք անունը: Եկեղեցին վերակառուցվել է 989 թ., որից հետո դարձել է միջնադարյան գրչության հայտնի կենտրոն: XIX դարի վերջերին այն նորոգել է գանձակեցի մեծահարուստ Ներես Բեկ Աբրահամ Տեր-Ներսիսյանն իր միջոցներով: Այս իրադարձությունների մասին է վկայում Ղուշչիի բնակիչների կողմից Ջիլ գյուղ տեղափոխած եկեղեցու մետաղյա խաչի մակագրությունը (նկ. 6):

6. 450, 1029 և 1883:

Այսպիսով, մեր ուսումնասիրությունների ընթացքում ճամբարակի ենթաշրջանի չորս բնակավայրերից գրառվեց հինգ վիմագիր: Ժամանակն իր դաժան կնիքն է թողնում նյութական մշակույթի վրա, ուստի անհրաժեշտ է օր առաջ հավաքել ու պահպանել այն գոհարները, որոնք դարեր շարունակ արարել են մեր նախնիները:

Լիաժույս ենք նաև, որ ժամանակի ընթացքում հնագիտական ուսումնասիրությունները հնարավորություն կտան հայտնաբերել նոր կոթողներ և վիմագրեր, որոնց շնորհիվ էլ ավելի կհարստանա Գեղամա աշխարհի վիմագրագիտական ժառանգությունը:

ADAMYAN SUSANNA

(IAE)

NEW-FOUND EPIGRAPHS

ON THE EASTERN SHORE OF LAKE SEVAN

Gegharkunik region is rich in historical and architectural obelisks, which have been numerously studied by the experts. However, the monuments of sub-region Tchambarak were all times left out of study, including the settlements located at the North-Eastern shore of Lake Sevan (Drakhtik, Shorja, Artanish, Jil). Although the surveyors of the XIX century Hovhannes bishop Shahkhatunyants, Sargis Jalalyants, Mesrop archibishop Smbatyants, ethnographer Ervand Lalayan referred to the monuments of former Nor Bayazet province, but they bypassed the eastern littoral

settlements. It was caused by a number of factors like the settlements were inhabited by Muslims, the Armenian monuments were mainly small obelisks, the cold climate of the area. In this settlement there are preserved monuments even from the Bronze Age. Unfortunately during the time the medieval Armenian monuments got various application by Muslims and gradually dropped out of sight.

In 2015-2016 during our epigraphical researches there are studied not only the Christian monuments, but also are specified the locations of several medieval monuments, there are copied new epigraphs by filling the epigraphical heritage of the region.

From above mentioned four settlements of Eastern shore of lake Sevan there are in total known 18 epigraphs, including 3 epigraphs from Shorja which we got from Mesrop archbishop Smbatyants's studies, 4 other epigraphs are mentioned by Yervand Lalayan by copin the third one from Mesrop Smbatyants. And in the IV edition of "Divan of Armenian epigraphy (regions of Gegharkunik, Kamo, Martuni and Vardenis) there are published 9 epigraphs. We copied another 5 epigraphs, from which the oldest one refers to XIII century.



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6

ԱԶԻԶՅԱՆ ԱՆՆԱ

(ՀԱԻ)

ՊԱՐՈՒՅՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆ ՇՐՋԱՆԸ ԵՎ ՆՐԱՑ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ԶԱՐԴԱՍՈՏԻՎՆԵՐՈՒՄ

Պարույրը և համակենտրոն շրջանը վաղբրոնզեդարյան կուր-արաքսյան մշակույթում բավական հաճախ հանդիպող զարդաձևերից են

¹: Այս մոտիվները ավելի հաճախ հանդես են գալիս կուր-արաքսյան խեցեղենի երկրորդ փուլում և կատարված են մեծ մասամբ ռելիեֆ և ներձկման եղանակներով, բացառությամբ՝ զծազարդ կատարման եղանակի: Խեցանոթներին զարդարված լինելուց բացի, պարույրը հազվադեպ օրինակներով վկայված է մետաղե իրերում²: Այն, լինելով արխայիկ պատկեր, հայտնի է նաև վաղբրոնզեդարի ժամանակաշրջանի և նրան նախորդող այլ մշակույթներում³:

Պարույրն ու համակենտրոն շրջաններն իրենց պլաստիկ կատարման ոճով հանդես են գալիս ինչպես առանձին, այնպես էլ՝ այլ զարդաձևերի, մեծամասամբ՝ երկրաչափական մոտիվների հետ համադրված կոմպոզիցիոն պատկերներում: Ոճաբանորեն իրարից տարբեր լինելով հանդերձ՝ այս երկու զարդաձևերը խեցեգործների կողմից

¹ Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում պ.գ.դ. Ռ. Բաղայանին՝ Կառնուտի (աղ. II, նկ. 3), պ.գ.թ. Լ. Եզանյանին՝ Մեծ Մեպասարի (աղ. II, նկ. 4) և ԷՊԱԹ-ի տնօրեն Ա. Թադևոսյանին՝ Արագածի (աղ. II, նկ. 9) հնագիտական նյութերից օգտվելու թույլատվության համար:

² Խանզադյան Է., Էլառ-Դարանի, Երևան, Հ ՄՍՀ ԳԱ հրատ., 1979, էջ 44 և աղ. VIII; Т.С. Хачатрян, Древняя культура Ширака III-I тыс. до н. э. Ереван, ЕГУ, 1975, նկ.15-2; Шенгавит, Каталог археологических материалов из коллекций Музея истории Армении, Ереван, МИА, 2015, աղ. 69-662; Paléorient, Revue pluridisciplinaire de préhistoire et protohistoire de l'Asie du Sud-Ouest et de l'Asie central, CNRS ÉDITIONS, Paris, 2014, p. 61, նկ. 7, 8, 11-13:

³ Мелларт Дж., Древнейшие цивилизации Ближнего Востока, Москва. Наука, 1982, նկ. 42-а, նկ. 43-1; В.С. Титов, Неолит Греции, Москва, Наука, 1969, աղ. 14-1,2; Археология СССР, Энеолит СССР, Москва, Наука, 1982, նկ. 10 -12, աղ. LVIII -35,44,45, աղ. LXIII-20:

հմտորեն շաղկապվել են իրար՝ և տարածում են գտել տվյալ մշակույթի գրեթե բոլոր կենտրոններում:

Էլնելով պարույրի և համակենտրոն շրջանների խորհրդանշական առանձնահատկություններից՝ առանձնացրել ենք չորս կոմպոզիցիոն խումբ:

Որպես երկրաչափական մոտիվ

Երկրաչափական մոտեցումով կատարված պարույրները, ի տարբերություն մյուս ներքոնշյալ խմբերի, հազվադեպ են հանդիպում: Որպես կանոն, պատկերված են լինում մեծ մասամբ կավանդի վզին՝ եզրագոտիներում, հազվադեպ՝ իրանին (աղ. I, նկ. 1-6): Եզրագոտիներում պատկերված պարույրները երկրաչափական են, պատկերված են բացարձակապես գծագարդ կատարման եղանակով (աղ. I, նկ. 2⁴, 6⁵), իսկ իրանի վրա պատկերվածները՝ ռելիեֆ կամ ներճկման կատարումով (աղ. I, նկ. 1⁶, 3⁷, 4⁸, 5⁹): Եզրագոտիներում հանդիպող բազմազալար պարույրների երկրաչափական պատկերները թույլ են տալիս գուգահեռներ տանել նույն մշակույթի կավանդների իրանին հանդիպող նմանատիպ մոտիվների միջև: Օրինակ, կարասի իրանի բեկոր՝ ռելիեֆ ուղանկյունաձև պարույրով և կճուճներ՝ իրանի հատվածում զարդարված երկրաչափական էլեմենտներով (աղ. I, նկ. 1, 3, 4): Բազմազալար երկրաչափական պարույրները, մեանդրները, կետերը սովորաբար ռիթմիկ հաջորդաբար կրկնվելով ներկայացվում են զարդագոտիների մեջ ներառված: Ամենից հաճախ հանդիպող այս տիպի զարդագոտիները բնորոշ են կառնուտ-շենգավիթյան խմբին: Առավել հարուստ զանազանությամբ զարդարված անոթներ հայտնի են Շեն-

⁴ Խանգաղյան Է., Գառնի IV, Հնագիտական պեղումները Հայաստանում, N 12, Երևան, 1969, նկ. 87, գծ.19:

⁵ Շենգավիթ, Ս. Սարդարյան 1967-1969 թթ. պեղ., Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան, ինվ. N 1-427:

⁶ Շիրակավան, Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի 1977-1981թթ. պեղ., Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան, ինվ. N 266-198:

⁷ Խանգաղյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, 1967, Հ ՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 65, նկ.16:

⁸ Նույն տեղում, էջ 65, նկ.16:

⁹ Նույն տեղում, էջ 64, նկ.15:

գավիթ բնակավայրից¹⁰: Կավանոթների եզրագոտիներում տեղ գտած մեանդրաձև, պարույրաձև զարդամոտիվներն աղերսվում են վիշապօձի հետ՝ խորհրդանշելով անմահություն և որպես պտղի, կենաց ծառի պահապան¹¹:

Այս տիպի զարդագոտիներն իրենց բնույթով շատ նման են գործվացքի: Այստեղ տեղ գտած որոշ էլեմենտներ նույնությամբ արտացոլվում են հայ ազգագրական որոշ գործվացքներում՝ կարպետի և ասեղնագործության մեջ¹²:

Որպես բուսական մոտիվ

Պարույրի ընկալումը՝ որպես բուսական մոտիվի բաղկացուցիչ մաս, հանդիպում ենք Շրեշ-բլուրի, Մոխրաբլուրի, Շենգավիթի, Կառնուտի և մի շարք այլ հուշարձաններում¹³: Այս օրինակները իրենցից ներկայացնում են մեկ հիմքից վեր բարձրացող տերևներ, ցողուններ և հասկեր՝ հաճախ դեպի աջ և ձախ թեքված, որոնք ավարտվում են պարույրաձև ծայրերով (աղ. I, նկ. 7-10, 12): Նման կոմպոզիցիաները հիշեցնում են ծաղկի թուփ¹⁴, ցորենի հասկեր (աղ. I, նկ. 8) և այլ բուսական մոտիվներ: Նրանցում տեղ են գտել կենաց ծառ պատկերող օրինակները (աղ. I, նկ. 8-11), որոնք հանդիպում են ինչպես առանձին, այնպես էլ՝ զույգ թռչունների միջև պատկերված (աղ. I, նկ. 10¹⁵, 11¹⁶): Կենաց ծառ խորհրդանշող պատկերները գրեթե միշտ ներկայացված են մեկ հիմքից վեր խոյացող և անկյուն կազմող զույգ ժապավեններ, որոնք հաճախ ավարտվում են պարույրներով, նաև՝ զույգ թռչունները կենաց ծառի առջև. այս կոմպոզիցիաները շատ բնորոշ են կուր-արաքսյան մշակույ-

¹⁰ Шенгавит, Каталог... նշվ. աշխ.:

¹¹ Խանգաղյան Է., Գառնի IV, նշվ. աշխ., էջ 149:

¹² Azizyan A., հրատ. ընթ., Comparative Parallels in 19-20 centuries Rug and Early Bronze Age /Kura-Araks/ Pottery Ornamentation Motifs. Ministry of Culture of RA, Armenian Knot: Traditions of Carpet Weaving Art, International Conference 20-22 November, 2013 Yerevan.

¹³ Խանգաղյան Է., Շրեշ-բլուրի և Քյուլ-թափայի խեցեղենն ու նրա արվեստը, ՊԲՀ 1964/3, էջ 223, աղ. I-1,2,5,6:

¹⁴ Նույն տեղում, էջ 223:

¹⁵ Badalyan R., Avetisyan P., Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia /BAR International Series, 1697, Oxford, 2007, p.103, fig.1.

¹⁶ Демирханян А., К проблеме символики трехчастных композиций древней Армении, ИФЖ 1982/4, աղ.1, նկ.4:

թին, որտեղ պարույրի անկայությունը երբեմն կարևորագույն մասերից մեկն է դառնում խորհրդանշելով կենաց ծառի կամ բույսի կենսունակությունն ու աճը:

Որպես կենդանակերպ մոտիվ

Հետաքրքրական է նշել, որ կուր-արաքսյան խեցեղենի զարդարանման մեջ շատ հաճախ պատկերված են լինում երկրաչափական մոտիվներ՝ միաժամանակ համադրված գալարվող պարույրների ու համակենտրոն շրջանների հետ: Խեցանոթների մեծ մասամբ իրաններին (ավելի քիչ՝ ուսերին և վզին) պատկերված հորինվածքներում հանդիպող որոշ պարույրներ կենդանակերպ են: Այստեղ պարույրն իր սահուն, պլաստիկ ոճով ու կատարումով տարբերվում է զուգահեռ պատկերված մյուս զարդաձևերից, որոնք շատ ավելի երկրաչափական են: Խիստ տարբեր լինելով հանդերձ՝ խեցեգործ վարպետը շատ հմուտ արվեստագետի մակարդակով կարողացել է համադրել այս երկու՝ ոճաբանորեն իրարից խիստ տարբեր մոտիվները, որտեղ, երկրաչափական առանձին էլեմենտներից և եզրագուտիներից բացի, առկա են նաև երկրաչափական լուծում ստացած՝ եռանկյունաձև իրանով թռչնի պատկերներ՝ պարուրաձև պոչերով: Օրինակներ՝ իրանի մեջ ներառված (աղ. II, նկ. 1¹⁷) պարույրաձև պոչերով (աղ. I, նկ. 11¹⁸, աղ. II, նկ. 5¹⁹) մաս կազմող թռչուններ, գալարվող օձեր (աղ. II, նկ. 3²⁰, 4²¹) և խոյեր՝ շեշտված պարույրաձև եղջյուրներով (աղ. II, նկ. 2²², 6²³, 7²⁴):

Որոշ զարդամոտիվների ծագման հետ կապված՝ պետք է հաշվի առնել նրանց առնչությունը կենդանիների վարքի, բույսերի կառուցվածքի, բնականոն երևույթների և բնության տարերքների հետ:

¹⁷ Շենգավիթ, Ս. Սարդարյան 1967-1969թթ. պեղ., էրեբունի պատմահնավադիտական արգելոց-թանգարան, ինվ. N 1-400:

¹⁸ Демирханян А., ИФЖ 1982/4, նշվ. աշխ., աղ. 1, նկ. 4:

¹⁹ Sagona A., The Caucasian region in the Early Bronze Age//BAR International Series, 214, Oxford, 1984. աղ. 123, նկ. 259:

²⁰ Бадалян Р., Раннебронзовое поселение близ с. Карнут, ИФЖ 1984/1, նկ. 2-18:

²¹ Եզանյան Լ., Քուրաքարսյան մի կարասի զարդագուտու սիմվոլիկայի շուրջ, Գիտական աշխատություններ XV, 2012, էջ 37:

²² Sagona A., 1984, նշվ. աշխ., աղ. 120, նկ. 191:

²³ Куфтин Б.А., Урартский «колумбарий» у подошвы Арарата и Куро-аракский энеолит, Вестник Гос. Музея Грузии т. XIII В, Тбилиси, նկ. 55-2:

²⁴ Խանգաղյան Է., Գառնի IV, նշվ. աշխ., նկ. 73:

Կրկնօրինակելով բնության այս երևույթները՝ մարդը փորձել է ներդաշնակ լինել՝ առնչվելով և մաս կազմելով այդ աշխարհին²⁵: Օրինակ, գալարվող պարույրը՝ օձի փաթաթվելու նմանությամբ, պատկերվել է կուր-արաքսյան խեցեղենի վրա (աղ. II, նկ. 3): Ըստ Մ. Մինասյանի՝ «գետերի օձապտույտ հոսանքները ևս կարող էին թելադրել օձի և ջրի միջև եղած այս գուգորդությունները», նշում է Է. Վ. Խանգաղյանը²⁶: Տարբեր գործառույթներից բացի, վիշապ-օձը հայտնի է որպես պտղաբերության պաշտպան. «Այդ տեսակետից հետաքրքրական են տրիպոլյան էնեոլիթյան կանացի արձանիկները, որոնց փորին պատկերված գույգ օձերը (արտահայտված գույգ պարույրներով) հանդես են գալիս որպես արգանդի պտուղի պահապաններ: Վիշապ-օձերի նման դերը մեզ մոտ հավաստվում է ազգագրական որոշ տվյալներով: Օրինակ, վիշապ-գորգերը ճանաչվել են որպես տղաբերքի, մայրության օգնական», - նշում է Է. Վ. Խանգաղյանը²⁷: Պարույրաձև օձեր պատկերված են Միսիանի շրջանի Ուղտասար հնավայրի²⁸ և Գեղամա լեռների ժայռապատկերներում²⁹: Պարույրը նույնացվել է նաև հողմի պտույտի հետ, ըստ Անանիա Շիրակունիի՝ «Ժողովրդի մեջ հին ժամանակներից մինչև այսօր վիշապ նշանակում է պտուտահողմ կամ փոթորկալից ամպ», - նշում է Մ. Աբեղյանը³⁰: Գառնիից հայտնաբերված ռելիեֆ խոյազլուխ պատկերով խեցու բեկորը (աղ. II, նկ. 7) աղերսներ ունի խոյազլուխ կամ, ինչպես ընդունված է ասել, երկպարույր գլխիկով շքասեղների հետ, որոնք լայն տարածում են ունեցել Առաջավոր Ասիայում և կրել են պաշտամունքային պտղաբերության խորհուրդ³¹: Մ.թ.ա. III հազարամյակի կուր-արաքսյան խեցեղենի զարդապատկերներում թռչունը մեծ մասամբ գուգորդված է օձ-վիշապի հետ, որը պատկերվում է պարույրաձև ոլորվածքով (աղ. II, նկ. 15): Թռչուն-վիշապ համաձուլված պատկերները (աղ. I, նկ. 11, աղ. II, նկ. 1, 5.) խորհրդանշել են արևն ու

²⁵ Еремеев А., Происхождение искусства, теоретические очерки, изд. «Молодая гвардия», Москва 1970, էջ 184-185:

²⁶ Խանգաղյան Է., Գառնի IV, նշվ. աշխ., էջ 148:

²⁷ Նույն տեղում, էջ 148:

²⁸ Կարախանյան Գ., Սաֆյան Պ., Սյունիքի ժայռապատկերները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1970, էջ 257, 261:

²⁹ Մարտիրոսյան Հ., Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981, էջ 64, աղ. 80:

³⁰ Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Երևան, Հ ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 67:

³¹ Խանգաղյան Է., Գառնի IV, նշվ. աշխ., էջ 76-78:

լուսինը – շերմությունն ու ջուրը – իգականն ու արականը, կյանքի հարատևությունն ու պտղաբերությունը:

Որպես սոյառ մոտիվ

Եվս մեկ խորհրդանշական առանձնահատկություն պարույրը և համակենտրոն շրջանը որպես լուսնի ու արևի գաղափարախոսություն³²: Հետաքրքիր է նշել, որ կուր-արաքսյան մշակույթում նման սիմվոլների առկայությունը խեցեղենի կոմպոզիցիոն զարդամոտիվներում քիչ չեն հանդիպում (աղ. II, նկ. 8-16): Ըստ իս՝ նույն մշակույթին պատկանող այս կոմպոզիցիաները կարելի է տարբերակել և բաժանել երկու խմբի: Առաջին խմբին պատկանում են այն կոմպոզիցիաները (աղ. II, նկ. 8³³, 9³⁴, 11 և 14³⁵), որոնք մեծ մասամբ բաղկացած են լինում կլոր կամ օվալաձև ներճկված գույգ փոսիկներից՝ տեղադրված հորիզոնական գծի վրա, որոնց արանքում հաճախ առկա է լինում քառակուսի կամ ուղղանկյունաձև վերադիր ելուստ (աղ. II, նկ. 8 և 9): Հաջորդ խմբին են պատկանում (աղ. II, նկ. 13³⁶, 15³⁷, 16³⁸) այն կոմպոզիցիաները, որոնք նախորդից տարբերվում են՝ պահպանելով միայն առաջինի կառուցվածքը, զարգացնում են այն՝ փոխարինելով կլոր ներճկված փոսիկները պարույրներով, իսկ վերադիր ելուստների կոմպոզիցիոն կենտրոնը կամ առանցքը պահելով, այն ևս զարգացնելով՝ պատկերել են թռչուն, համակենտրոն շրջան կամ մեկ այլ ոճավորված էլեմենտ: Կոմպոզիցիաներից մեկում (աղ. II, նկ. 16) գույգ ժապավեններից անկյուն կազմող առանցքում, տեղադրված է համակենտրոն շրջանը, գլխավերևում՝ ճառագայթաձև գծերով և դրանով նմանվելով արևին: Տվյալ հորինվածքները, կենդանական և սոյառ համատեղ սպատկերները

³² Ханзадян Э., Раннебронзовое поселение близ с. Аревик, СА 1969/4, էջ 170; А. Демирханян, Северо-восток Еревана в эпоху Арташесидов, Ереван, изд. «Гитутюн», 2010, էջ 78-79:

³³ Սարգսյան Ս., Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, ԵՊՀ, «Միտր» հրատ., 1967, աղ. LXVI-3:

³⁴ Արագած, Ֆ.Մուրադյանի 2012թ. պեղ., Էջմիածնի պատմաազգագրական թանգարան, ինվ. N 5565.6:

³⁵ Ханзадян Э. В., СА 1969/4, նշվ. աշխ., նկ. 4-6, նկ. 5-1:

³⁶ Սարգսյան Ս., 1967, նշվ. աշխ., աղ. LXII-1:

³⁷ Հայացք բրոնզի դարից, գտածոներ Հայաստանի բրոնզեդարյան դամբարաններից, կատալոգ-ալբոմ, Երևան, ՀՊԹ, 2010, էջ 14:

³⁸ Խանգաղյան Է., ՊԲՀ 1964/3, նշվ. աշխ., աղ. II-1:

խորհրդանշել են լուսատուների շարժումը, նրանց ազդեցությունը բնության արգասաբերության վրա: Շատ հաճախ կենդանական պատկերները կրել են լուսատուների իմաստային սիմվոլիկ նշանակությունը³⁹:

Եզրակացություն

Պարույրի՝ որպես շարժում և ժամանակ ցույց տվող բնույթը կապվում է թե՛ ոլորապտույտ բույսերի աճի, թե՛ կենդանիների՝ օձի գալարվելու, օղակաձև փաթաթվելու, խոյի եղջուրների պարույրաձև աճի, թե՛ բնության երևույթների՝ հողմի պտույտի և լուսնի ծագման, շարժման փուլերի խորհրդանշների հետ: Պարույրի և համակենտրոն շրջանի կապը վերոհիշյալ մոտիվների հետ պահպանվում է նաև հաջորդ մշակութային շերտերում, ընդհուպ մինչև՝ ազգագրություն. դա վկայում է նրա սիմվոլիկ նշանակության հարատևության մասին:

AZIZYAN ANNA

(LAE)

SPIRAL AND CONCENTRIC CIRCLE AND THEIR TYPOLOGICAL PARTICULARITY IN THE MOTIFS OF DECORATION OF POTTERY KURA-ARAX CULTURE OF ARMENIA

The spiral and the concentric circles are one of the most commonly revealed ornamental forms in the Early Bronze Age of Kura-Arax culture. These motives are more common revealed in the second stage of Kura-Arax pottery and have been largely made with relief and method of pressing, exception the method of linear performance. Apart decorated on a pottery, the spiral is rarely tested in metal items. As an archaic image it is also known in the culture of the Early Bronze Age and in other predecessors cultures.




The spiral and concentric circles in their plastic-style are presented as individual as with other forms of decorations, mostly in composite images combined with geometric motives. Although stylistically different from each other, these two decorations are skillfully interconnected by ceramists and have been found in nearly all centers of the given culture.


Based on the symbolic peculiarities of the spiral and the concentric circles, we have identified four compositional groups.

³⁹ Խանգաղյան Է., Գառնի IV, նշվ. աշխ., էջ 149, 152:

Աղյուսակների ցուցակ

- I. նկ. 1. Շիրակավան, Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան, ինվ. N 266-198-7, (գծանկարը՝ հողվածի հեղինակի)
- նկ. 2, 6, 12. Շենգավիթ /նկ. 6. Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան, ինվ. N 1-427, (գծանկարը՝ հողվածի հեղինակի)
- նկ. 3, 4. Մաշտոցի բլուր
- նկ. 5. Շամլուղ
- նկ. 7, 9. Շրեշ-բլուր
- նկ. 8, 13. Սոխրաբլուր
- նկ. 10. Գեղարոտ
- նկ. 11. Շուլավերի
-
- II. նկ. 1, 15. Շենգավիթ (նկ. 1. Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան, ինվ. N 1-400), (գծանկարը՝ հողվածի հեղինակի)
- նկ. 2. Կարազ
- նկ. 3. Կառնուտ, Бадалян Р.1984, Раннебронзовое поселение близ с. Карнут, ИФЖ/1, (ինվ. N 2959-71 /գծանկարը՝ հողվածի հեղինակի)
- նկ. 4. Մեծ Մեպասար
- նկ. 5. Անի
- նկ. 6. Կիկեսի
- նկ. 7. Գառնի
- նկ. 8, 13. Էջմիածին
- նկ. 9. Արագած, Էջմիածնի պատմաազգագրական թանգարան ինվ. N 5565-6 (գծանկարը՝ հողվածի հեղինակի)
- նկ. 10. Հառիճ
- նկ. 12. Սոխրաբլուր
- նկ. 11, 14. Արևիկ
- նկ. 16. Շրեշ-բլուր





ԽԱՆՁԱԴՅԱՆ ՄԱՐԻԱՄ

(ԱԻ)

ԳՆԶԻԿ ԵՎ ԷՐԵՐԻՆ ԳՅՈՒՂԵՐԻ (ԲԻԹԼԻՍԻ ԵՎ ՎԱՆԻ ՎԻԼԱՅԵԹՆԵՐ) ԿՈՐՄՎԱԾ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1916 թվականին Հայ Հեղափոխական Դաշնակցությունը նախա-
ձեռնում է տեղեկությունների հավաքագրում Ցեղասպանությունից
հետո Անդրկովկասի տարբեր վայրերում իրենց ապաստանը գտած հայ
փախստականների շրջանում: Հարցադրումներից մեկը ներառել է
փախստականների հարազատ բնակավայրերի նախկին վիճակի
ճշգրտումներ, մասնավորապես բնակավայրում եղած եկեղեցիների,
վանքերի, դպրոցների, մշակութային հաստատությունների, կորած կամ
ոչնչացված հնությունների, հազվագյուտ իրերի, ձեռագրերի մասին
տեղեկությունների հավաքագրում: Ցեղասպանությունը վերապրած
մարդկանց այս վկայությունները ամփոփվեցին «Հայոց ցեղասպանու-
թյունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ:
Փաստաթղթերի ժողովածու» եռահատոր աշխատության մեջ¹: 2014
թվականին այս ժողովածուն թարգմանվեց նաև ռուսերեն և անգլերեն
լեզուներով: Ես մասնակցել եմ ռուսերենի թարգմանության աշխա-
տանքներին և թարգմանության ընթացքում վկայությունների մեջ հան-
դիպեցի մի քանի հիշարժան տեղեկությունների Բիթլիսի և Վանի վի-
լայեթների երկու գյուղերում՝ Գնձիկում և Էրերինում մինչև 1915 թվա-
կանը պահպանված սեպագիր արձանագրությունների մասին:

Առաջին վկայությունը Բիթլիսի վիլայեթի Սդերդ գավառի Շիր-
վանի գավառակի Գնձիկ գյուղի բնակիչ Բերիտ Ազոյանի վկայությունն
է (15 օգոստոս, 1916 թիվ)²:

Շիրվանի գավառակը վերոհիշյալ աշխատության մեջ տեղա-
դրվում է Բիթլիսի նահանգի հարավ և հարավարևելյան շրջաններում³
(Մեծ Հայքի Աղձնիք կամ Մոկք նահանգներում): «Հայաստանի և հա-

¹ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկա-
յություններ: Փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2012:

² Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկա-
յություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր Բ «Բիթլիսի նահանգ», Երևան,
2012, վկայություն № 76, էջ 117-118:

³ Նույն տեղում, էջ 4:

րակից շրջանների տեղանունների բառարանում՝ Շիրվանի գավառակը նույնացված է Մոկս նահանգի Արգաստվիտ գավառին⁴: Մակայն Շիրվանի գավառակը գտնվում է Արևելյան Տիգրիսի (Ջերմի) և Բաղադեշ և Տատիկ գետերի միջագետքում, Սղերդից դեպի հյուսիս-արևելք, ինչը համապատասխանում է Աղձնիք նահանգի Աղձն (Արզն) կամ Կեթիկ գավառներին, որոնց սահմանակից էին Մոկսի Իշայր և Միս Իշայր գավառները, բայց ոչ Արգաստվիտը, որը թե՛ Երեմյանը, թե՛ Բ.Հարությունյանը տեղադրում են Մոկքի Իշայր գավառից դեպի հարավ-արևելք ընկած հատվածում, Արևելյան Տիգրիսի ձախակողմյան վտակներից մեկի՝ ներկայիս Կերկանդիլ-սու գետակի ձորահովտում⁵: Սղերդի գավառի արևելյան հատվածը, ըստ վերոհիշյալ հեղինակների, համապատասխանում է պատմական Մոկքի Իշայր գավառին⁶ (ուշ շրջանում՝ Բիթլիսի գավառի Խիզանի գավառակին), և Արևելյան Տիգրիսից (Ջերմից) դեպի հարավ ընկած Արքայի գավառին (Մոկս Առանձնակին) Որբ գետի հովտում (ավելի ուշ՝ Սղերդի գավառի Բարվառի գավառակին)⁷: Ըստ երևույթին, տվյալ դեպքում պետք է բացառել նաև Կեթիկն ու Միս Իշայրը, քանի որ վկայության մեջ հիշատակվում է Բոհտան (իմա՝ Արևելյան Տիգրիս) գետը⁸, ինչից կարելի է ենթադրել, որ գյուղը գետից շատ հեռու չպետք է լիներ: Շիրվանի գավառի Արևելյան Տիգրիսի

⁴ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1998, հ. IV, էջ 135:

⁵ Տե՛ս Երեմյան Ա.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, 1963, էջ 39:

⁶ Երեմյան Ա.Տ., նշվ.աշխ., էջ 54: Հարությունյան Բ., «Մեծ Հայքի Մոկք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի», ՊԲՀ, 1990, № 1, էջ 48: Նույն կարծիքն է արտահայտված Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում, հ. IV, էջ 141:

⁷ Երեմյան Ա.Տ., նշվ.աշխ., էջ 71: Բ.Հարությունյան, նշվ.աշխ., էջ 45: Բ.Հարությունյանի «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի եւ այլ աղբիւների» քարտեզը համացանցում տեղադրված է հետևյալ հասցեում՝ http://hayk.org/am/files/Map_Arm/Map.htm:

⁸ Բերիտ Ազոյանը նշում է, որ «7 տարեկանէ վար տղաները և կիները գերի տարին և Բոհտանի գետին (Տիգրիս) մեջ խեղդեցին բոլորը», տե՛ս Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր Բ «Բիթլիսի նահանգ», Երևան, 2012, վկայություն № 76, էջ 118:

ափին գտնվելու մասին գրում է նաև Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը (Ա-Դո). «Շիրվանի գաւառը... ոտոգում է Արևելեան Տիգրիսի օրով»⁹:

Ամենայն հավանականությամբ, Գնձիկը պետք է փնտրել կամ Աղձնիքի Աղձն գավառում կամ Մոկքի Իշայր գավառում՝ Արևելյան Տիգրիսից հյուսիս ընկած հատվածներում:

Ցավոք, Գնձիկ գյուղի մասին որևէ լրացուցիչ տեղեկություն XIX դարի ուղեգրություններում¹⁰ չհաջողվեց գտնել:

Պատմելով գյուղի մասին (նշենք, որ 600 բնակչից կենդանի են մնում ընդամենը 20 մարդ՝ 6 տղամարդ և 12 կին և երեխա)՝ Բերիսո Ազոյանը մասնավորապես նշում է.

«Եկեղեցւոյ մէջ կային ձեռագիր Աւետարաններ, նաև հին ձեռագիր կոնդակ մը, որու վրայ նկարուած էր Ս. Կոյս Մարիամի պատկերը, զօր անգլիական հիւպատոս մը մի քանի տարի առաջ տարաւ: Եկեղեցւոյ մօտ, գերեզմանատան մէջ երկու արշին երկայնութեամբ և չորս թիզ լայնութեամբ քար մը կայ, որու երկու երեսներուն վրայ բնեռագիր արձանագրութիւններ կան... Պիթլիսի անգլիական հիւպատոսը 200 օսմ. լիրայի գնահատած է այդ քարը, բայց գիւղի քահանան՝ [Տէր] Գորգիզը, չէ համաձայնած տալու»¹¹:

Մեկ թուրքական արշինը (arşın (zira)) մոտ 75 սմ¹² էր կազմում, մեկ թուրքական թիզը կամ թզաչափը՝ 23 սմ¹³, հետևաբար, խոսքը գնում

⁹ Ա-Դո (Տեր-Մարտիրոսյան Հովհաննես), Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 153:

¹⁰ Միրախորեան Մանուէլ, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառու Արևելեան Տաճկաստանի: Մարզիսեան Ներսիս, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864: Ա-Դո (Տեր-Մարտիրոսյան Հովհաննես), Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912: Lynch H.F.B, Armenia, Travels and studies, vol. I, II, London, 1901 և այլն:

¹¹ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր Բ «Բիթլիսի նահանգ», Երևան, 2012, վկայություն № 76, էջ 117-118:

¹² Տարբեր երկրներում արշինի չափը տարբեր է եղել՝ տատանվելով 65,2–112 սմ սահմաններում: Ռուսական արշինը կազմում էր 71 սմ, թուրքականը՝ մոտ 75 սմ: Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. II, էջ 119:

¹³ Թզաչափը կամ թիզը հավասար է 0,233 մետրի, տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», Թուրքական աղբյուրներ մաս Գ, Էվլիյա Չելեբի (թարգմանություն, առաջաբան և ծանոթագրություններ Ա.Խ.Սաֆրաստյանի), էջ 317:

է մոտ 150 սմ երկարությամբ և 90 սմ լայնությամբ մի քարակոթողի մասին:

Դարասկզբի 1 օսմանյան լիրան ուներ 22,70 ֆրանկ ոսկիով արժեք¹⁴, հետևաբար, խոսքը գնում է մոտավորապես 4500 ոսկիով ֆրանկ¹⁵ արժողությամբ քարակոթողի մասին: Մոտավորապես նույն չափերի է Գյովելեքի (հայկական էրմանց կամ էրմանիս)¹⁶ Ռուսա III-ի քարակոթողը. բարձրությունը 133,5 սմ, լայնությունը՝ 76 սմ, տողերի քանակը՝ մոտ 34¹⁷: (Տե՛ս նկար 1)¹⁸:

Ցավոք սրտի, Գնձիկը հիշատակված չէ ո՛չ Գ. Մելիքիշվիլիի «Урартские клинообразные надписи», ո՛չ Ն. Հարությունյանի «Корпус урартских клинообразных надписей», ո՛չ էլ Ս. Սալվինիի «Corpus dei Testi Urartei» արձանագրությունների ժողովածուներում, և անհնար է նույնիսկ կոտակել, թե ինչ արձանագրության մասին է խոսքը:

Մենք փորձեցինք պարզել նաև անգլիացի այս հյուպատոսի անունը: Վկայության մեջ նշված է, որ Յեղասպանությունից մի քանի տարի առաջ հյուպատոսը գյուղից տարել է ձեռագիր կոնդակը¹⁹: Հայտնի է մի հյուպատոսի անուն, որը գործել է օսմանյան Թուրքիայում XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Դա Չարլզ Հեմփսոնն է, անգլիական փոխհյուպատոսը Մուշում (Charles S. Hampson, British Vice Consul at Muş (Bitlis province))²⁰: Սակայն, հասկանալի պատճառներով, նույնականացման այլ կովան չունենք:

Գնձիկի եկեղեցու քահանայի վերաբերյալ տեղեկություններ չգտանք նաև Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի կողմից Թուր-

¹⁴ Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր Բ «Բիրթիսի նահանգ», Երևան, 2012, էջ 351:

¹⁵ Կազմում է մոտ 27 հազար եվրոյի համարժեք գումար:

¹⁶ Գրեկյան Ե., Գյովելեքի ուրարտական արձանագրությունը, Պատմաքանա-սիրական հանդես, 2004, № 1(224), էջ 224, վերակազմությունը էջ 227:

¹⁷ Salvini M., Una stele di Rusa III Erimenahi dalla zona di Van, Studi Micenai ed Egeo-Anatolici (SMEA), Fascicolo XLIV/1 – 2002, էջ 115:

¹⁸ Աղբյուրը՝ Salvini M., նշվ. աշխ., էջ 118:

¹⁹ «Վշտապատում», Երևան, 2005, էջ 320:

²⁰ Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, New York, 2003, էջ 156:

քիայի արդարադատության և դավանանքների նախարարությանը ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակներում²¹:

Նշենք, որ Գնձիկ գյուղի մասին առհասարակ շատ քիչ նյութ է պահպանվել: Ողջ մնացածների ժառանգները վերջերս համացանցում մի լուսանկար հրապարակեցին, սակայն, ցավոք, ոչ գերեզմանոցը, ոչ Սուրբ Ստեփանոսի եկեղեցին այս լուսանկարում չեն երևում:

Հաջորդ վկայությունը դա Վանի վիլայեթի Վանի գավառակի Թիմարի գյուղախմբի էրերին գյուղի բնակիչ Վարդան Գալուստյանի վկայությունն է²²:

Էրերինը գտնվում էր Վանից 23-24 կմ դեպի հյուսիս-արևմուտք, էրերնա կոչվող լեռների արևմտյան հարթակի վրա, լճափին: Թիմարի գավառակը համապատասխանում է Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Տոսպ կամ Բոզունիք գավառներին: Էրերինը Ցեղասպանությունից առաջ ուներ մոտ 180 տուն հայ բնակիչ (մոտ 1000 հոգի), և, ինչպես նշում է Վարդան Գալուստյանը, նաև «*եկեղեցի մը և Յովհաննէս անունով դպրոց մը (գեղեցիկ շէնքով)*»²³: Եկեղեցին կոչվում էր Սուրբ Հովհաննէս (հիշատակվում է նաև որպես Սուրբ Ստեփանոս), իսկ գյուղից հարավ գտնվում էր էրերնա Սուրբ Սահակ Պարթև վանքը, որի նկարագրությունը տվել են Ներսես Սարգսյանը և Երվանդ Լալայանը²⁴: Վանքից, Լալայանի խոսքերով՝ «*Ժամ հեռու դեպի արեւելք գտնւում է մի ուրիշ վանքի հիմնապատ, որ այժմ յայտնի է Տէր Պետոյի վանք անունով եւ որի մոտ կայ մի սուրբ աղբիւր*»²⁵:

Իր վկայության մեջ Վարդան Գալուստյանը նշում է, որ «*եկեղեցույ բեմին տակ բնեռագիր արձանագրութիւն մը կար, բայց եկեղեցույ*

²¹ «Կոստանդնուպոլիսի Հայոց Պատրիարքի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրութեանը ներկայացուած հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակները և թաքրիքները (գեկոյցները) 1912-1913թթ., տպագրվել են Ա.Խ.Սաֆրաստյանի կողմից «Էջմիածին» ամսագրում 1965 թ. Ա-Ժ և 1966 թ. Բ, Գ, Զ-Է, Ը, Թ-Ժ համարներում:

²² Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում: Վերապրածների վկայություններ: Փաստաթղթերի ժողովածու: Հատոր Ա «Վանի նահանգ», Երևան, 2012, էջ 40:

²³ Այս եկեղեցու և դպրոցի մասին հիշատակություն կա նաև Գրիգոր Նազարյանի վկայության մեջ, տե՛ս «Վշտապատում», Երևան, 2005, էջ 22:

²⁴ Սարգիսեան Ներսիս, նշվ. աշխ., էջ 265: Լալայեան Ե., Վասպուրական. Նշանաւոր վանքեր, Ազգագրական հանդէս, № 21, էջ 99:

²⁵ Լալայեան Ե., նշվ. աշխ., էջ 99:

հրկիզումեն ետք փլատակներու տակ թողուած է»:

Ի տարբերություն Գնձիկի, երեքինը, որտեղ ժամանակին հայտնաբերվել է Մենուա արքայի սեպագիր արձանագրություններից մեկը, հիշատակված է ուրարտական արձանագրությունների ժողովածուներում թե՛ Մելիքիշվիլիի²⁶, թե՛ Սալվինիի²⁷, թե՛ Նիկոլայ Հարությունյանի մոտ²⁸: Հատկանշական է, որ բնակչության համար բացարձակ անհասկանալի սեպագիր արձանագրություններով քարաբեկորը գտնվել է բեմի տակ, բեմը՝ եկեղեցու առաջակողմի բարձր մասն է, որտեղից քարոզ են կարդում, կարելի է ասել՝ եկեղեցու գլխավոր, կենտրոնական հատվածներից մեկը: Եվ այս արձանագրությունը բնավ միակը չէ, որը գտնվել է եկեղեցում:

Այսպես, սեպագիր արձանագրություններ ժամանակին հայտնաբերվել են Վանի նահանգի այլ եկեղեցիներում նույնպես, ինչպես, օրինակ՝ Իշպուինի և Մենուա արքաների համատեղ արձանագրությունը Վանից հյուսիս ընկած Գյուսնենց գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցում²⁹, Վան քաղաքի Սուրբ Պողոս եկեղեցում³⁰, Սուրբ Պետրոս եկեղեցում³¹, Սուրբ Վարդան եկեղեցում³², երկու արձանագրություն Վանի Սուրբ Սահակ եկեղեցում, որոնցից մեկը խորանի տակ, մյուսը՝ գավիթում³³, Սուրբ Հովհաննես եկեղեցու ավերակներում³⁴ և այլն: Սայսը հիշատակում է Վանից մեկ մղոն դեպի հյուսիս ընկած Կալաջիկ գյուղի եկեղեցու խորանի մասին, որն արձանագրություններով

²⁶ Меликишвили Г., ВДИ, 1953, № 2, стр. 297:

²⁷ Salvini Mirjo, Corpus dei testi urartei, Volume I, Le iscrizioni su pietra e roccia, I testi, Roma, 2008, էջ 211: Այս հուշակոթողի մի մասը (այն սկզբնապես երկու մասից է բաղկացած եղել, մեկ կորել է) այժմ գտնվում է Վանի թանգարանում:

²⁸ Арутюнян Н., նշվ.աշխ., էջ 128:

²⁹ Арутюнян Н., նշվ.աշխ., էջ 34:

³⁰ Sayce A.H., Cuneiform inscriptions of Van, Journal of the Royal Asiatic society, էջ 550; Арутюнян Н., նշվ.աշխ., էջ 34, 248:

³¹ Layard A.H., Discoveries in the Ruins of Nineveh and Babylon, London, 1853, էջ 344; Saint-Martin M., նշվ.աշխ. էջ 188; Sayce A.H., 632; Арутюнян Н., նշվ.աշխ., էջ 31:

³² Арутюнян Н., նշվ.աշխ., էջ 128:

³³ Layard A.H., նշվ.աշխ. էջ 344; Sayce A.H., 623; Арутюнян Н., նշվ.աշխ., էջ 184:

³⁴ Saint-Martin M., Notice sur le voyage littéraire de M. Schulz en Orient, et sur les découvertes qu'il a faites récemment dans les ruines de la ville de Sémiramis en Arménie, Nouveau Journal Asiatique, September 1828, էջ 184; Layard A.H., նշվ.աշխ. էջ 344; Sayce A.H., նշվ.աշխ., էջ 450:

սալաքար էր³⁵, Շուշանց գյուղի վանքից հայտնաբերված արձանագրության մասին³⁶, Կողբանց գյուղի վանքի խորանի³⁷, Վարազա վանքի եկեղեցիներից մեկի խորանը³⁸, Սղոյա գյուղի եկեղեցուց հայտնաբերված արձանագրությունները³⁹ և այլն:

Եկեղեցիներում պահվող արձանագրությունների վրա, օրինակ՝ վերոհիշյալ Սուրբ Պողոս եկեղեցու և Սղոյա գյուղի եկեղեցու արձանագրությունների⁴⁰ (ինչպես նաև շատ այլ արձանագրությունների)⁴¹ վրա կարելի է նշմարել խաչեր: Ըստ երևույթին խաչը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես յուրօրինակ կնիք՝ սեպագիր արձանագրությունը պահպանելու համար: (Օրինակ՝ Խառակոնիսի արձանագրությունը (տե՛ս նկար 2)⁴²:

Լեյարդը, պատմելով Վանի եկեղեցիներից մեկում պահվող սեպագրերի մասին, նշում է, որ պատը պետք է սպիտակեցվեր, սակայն քահանան կարգադրել է սեպագրերի հատվածները մաքրել ծեփից՝ դրանք ուսումնասիրելու համար⁴³: Մովսիսյան Արտակը գրույցում նշեց, որ Աղթամարում անցկացված պեղումների ժամանակ վանքի խցերից մեկում հայտնաբերվել էին մի խումբ ուրարտական արտակարգ պահպանված արձանագրություններ: Միգուցե այդ նույն արձանագրությունների մասին է հիշատակում Հ.Լինչը 1892 թվականին կատարած իր ուղևորության նկարագրության մեջ. «Շենքին արեւելեան

³⁵ Sayce A.H., նշվ.աշխ. էջ 454:

³⁶ Saint-Martin M., նշվ.աշխ. էջ 186; Sayce A.H., p.499: Վանքերում և եկեղեցիներում հայտնաբերված այլ արձանագրությունների մասին տե՛ս նույն տեղում, էջ 500, 501, 504:

³⁷ Saint-Martin M., նշվ.աշխ. էջ 187; Sayce A.H., նշվ. աշխ., p. 509; Арутюнян Н., նշվ.աշխ., էջ 109:

³⁸ Saint-Martin M., նշվ.աշխ. էջ 187; էջ 1853; Sayce A.H., նշվ.աշխ. էջ 531:

³⁹ Saint-Martin M., նշվ.աշխ. էջ 186; Арутюнян Н., նշվ.աշխ., էջ 126, 134:

⁴⁰ Սուրբ Պողոս եկեղեցու արձանագրությունը, տե՛ս՝ Н.Арутюнян, նշվ.աշխ., էջ 30 (фото XII); Меликишвили Г.А, Урартские клинообразные надписи, Вестник древней истории, 1953, № 1, фото № 2, 306 և 307 էջերի միջև: Սղոյա գյուղի արձանագրությունը՝ Н.Арутюнян, նշվ.աշխ., էջ 134-135 (фотоLXVII)

⁴¹ Н.Арутюнян, նշվ.աշխ., էջ 98 (рис XLII), էջ 113 (фото LII), էջ 124-125 (фото LX, LXI), էջ 139 (фото LXV), էջ 312-318 (фото CXXXVI), Խորխորյան տարեգրության կրկնօրինակի վրա՝ Н.Арутюнян, նշվ.աշխ., фото LXXXV: Խառակոնիսի արձանագրությունը՝ տե՛ս Меликишвили Г.А, նշվ.աշխ., էջ 313-317:

⁴² Աղբյուրը՝ Меликишвили Г.А, նշվ.աշխ., фото № 2 314 և 315 էջերի միջև:

⁴³ Layard A.H., նշվ.աշխ. էջ 344:

կողմը կը գտնուի փոքր մատուռ մը, հիմա՝ աներակ... անա զմեզ առաջ-
նորդեցին փոքր և բռնափութած սենեակ մը: Հինգ փոքր դարակներ,
որոնք սենեակին միակ կողմը կը գրաւէին, վանականներուն մօտ
գտնուած բոլոր ձեռագիրները և գիրքերը կը պահէին... երկու քարեր,
որոնք բեւեռագիր արձանագրութիւններ ունին, այս սենեակին մէջ
պահուած են, ասոնցմէ մին բոլորածէն է՝⁴⁴:

1916 թվականին, երբ ռուսական զորքերի առաջխաղացման
հետևանքով հայ բնակչության մի մասը վերադարձավ իրենց հայրենի
գյուղերը, էրերինի բնակչության մի հատվածը նույնպես վերադարձել է
գյուղ: Արխիվում պահպանվել են տեղեկություններ նախկին երկհար-
կանի դպրոցի մնացորդ կազմող մի քանի սենյակներում ուսումնական
գործընթաց կազմակերպելու մասին⁴⁵, սակայն, ցավոք սրտի, ո՛չ
եկեղեցու, ո՛չ էլ առավել ևս սեպագիր արձանագրության մասին որևէ
այլ տեղեկություն չի պահպանվել:

Հավելենք, որ պատրաստվում ենք աշխատանքը շարունակել
արխիվներում, նախ պարզելու հնարավոր բոլոր տեղեկությունները այս
գյուղերի, և մանավանդ Գնձիկի Տեր Գորգիզի և այդ կորսված քարա-
կոթողի մասին: Միանգամայն հնարավոր է, որ XX դարի երկրորդ
կեսին Արևմտյան Հայաստանի տարածքում անցկացված պեղումների
արդյունքում այդ քարակոթողը տեղափոխվել է Վանի կամ Ստամբուլի
թանգարաններ, սակայն դա պարզել դեռ չհաջողվեց:

KHANZADYAN MARIAM

(IOS)

ABOUT THE LOST CUNEIFORM INSCRIPTIONS ONCE ERECTED IN GNJIK (BITLIS VILAYET) AND ERERIN (VAN VILAYET) VILLAGES

The article refers to the cuneiform inscriptions coming from the two
villages, Gnjik and Ererin in Bitlis and Van vilayets. One of them, the Ererin
inscription, was stored in the village's Armenian Church of St. John the

⁴⁴ Աղթամարում պահվող արձանագրությունների մասին տե՛ս Lynch H.F.B., Armenia, Travels and studies, vol. II, London, 1901, p. 134 (Թարգմանությունն ըստ Լինչ Հ.Ֆ.Պ., Հայաստան, ուղևորություններ և ուսումնասիրություններ, Բ հատոր. Տաճկահայաստան, Կ.Պոլիս, 1914, տպագրություն Յ.Ասատուրեան եւ որդիք):


⁴⁵ Սահակյան Ռ., Ուսումնական գործի կազմակերպումը Վանի նահանգում (1917 թ.) Բանբեր Հայաստանի արխիվների, 2011, № 1(117), էջ 20-21:

Baptist, and the other one, a quite large stone stella with cuneiform inscriptions, was placed in the Gnjik village cemetery.

Both were lost during the Armenian Genocide.



Fig. 2 - Parte superiore della stele di Rosa III, figlio di Erimena; faccia anteriore.



ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ.
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴԲՅԱԼՆԵՐ

Հնդկաստանի միջնադարյան պատմության համար կարևոր նշանակություն են ունեցել արաբական նվաճումները: Արաբների նվաճումներն ուղեկցվում էին իսլամի տարածմամբ, ուստի Հյուսիսային Հնդկաստանում ևս ներթափանցմանը զուգահեռ տարածվեց իսլամ: Մահմեդականության տարածումը, առանց այդ էլ բազում կրոնական ուսմունքներով ու հավատալիքներով հարուստ տարածաշրջան, ունեցավ կարևոր պատմական հետևանքներ:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել Հյուսիսային Հնդկաստանում արաբների իրականացրած նվաճումների նախադրյալները, առանձնահատկությունները և նպատակները: Անդրադարձ է կատարվում Հյուսիսային Հնդկաստանում ստեղծված քաղաքական իրադրությանը, որը դիտարկվում է կարևոր նախադրյալ արաբական նվաճումների ու իսլամի տարածման համար:

7-րդ դարում Արաբական թերակղզում ձևավորվեց կրոնական նոր գաղափարախոսություն՝ իսլամ, ինչի շուրջ միավորվեց թերակղզու բնակչությունը՝ ստեղծելով իր պետությունը՝ Արաբական իսլամաֆայությունը: Արաբները իրականացրեցին ակտիվ նվաճողական քաղաքականություն՝ հյուսիս, արևմուտք և արևելք ուղղություններով: Արևելքում նվաճելով մի շարք տարածքներ՝ նրանք հասան մինչև Չինաստան և Հնդկաստան¹:

Հնդկաստանի քաղաքական պատմության մեջ նոր էջ է բացվում 8-րդ դարի սկզբից՝ կապված արաբական արշավանքների և նրա մի մասի նվաճման հետ: Որոշ ուսումնասիրողներ, վկայակոչելով անտիկ հունա-հռոմեական աղբյուրները, ցույց են տալիս, որ հույները հնագույն ժամանակներից ծանոթ են եղել դեպի Հնդկաստան տանող ճովային ուղուն: Այս երկու տարածաշրջաններն իրար կապված են եղել նաև առևտրական ուղիներով²: Մեկ այլ ուսումնասիրող՝ հնդիկ պատմաբան Բ. Ն. Լունիյան, հիշատակելով Հին կտակարանը, նշում է, որ առևտրա-

¹ Большаков О., История Халифата. Том 2. Эпоха великих завоеваний, 633-656, Москва, 2002, с. 99-116.

² Бонгард-Левин Г. М., Бухарин М. Д., Вигасин А. А., Индия и античный мир, Москва, 2002, с. 7.

կան հարաբերություններ են գոյություն ունեցել Միրիայի ու Հնդկաստանի միջև դեռևս Ք. ա. 1400 թ.: Նա հնագիտական տվյալների հիման վրա նշում է, որ Ք. ա. 8-րդ դարում ծովային ճանապարհով առևտրական հարաբերություններ են հաստատվել Հնդկաստանի ու Միջագետքի, Արաբիայի, Եգիպտոսի միջև³: Հնդկական օվկիանոսի ավազանում միջնադարում շարունակվում էր ակտիվ առևտրային հարաբերություններ, արտահանվում էր ցորեն, բրինձ, գինի, աղ, մեղր, ոսկի, արծաթ, երկաթ և այլն⁴: Փաստորեն Հնդկաստանի հետ առևտրական ու տնտեսական բնույթի հարաբերությունները հաստատվել էին հնագույն ժամանակներից:

Արաբների՝ դեպի Հյուսիսային Հնդկաստանի արևմտյան շրջան (Մինդ), Արաբական ծովով առաջին անհաջող արշավանքից հետո⁵ 710 թ. նախապատրաստվում է նոր ցամաքային արշավանք Քերմանի կառավարիչ Մուհամմադ իբն ալ-Քասիմիի գլխավորությամբ: 711 թ. արաբական մոտ 6 հազարանոց զորախումբը ներխուժում է Մինդ: 712 թ. պաշարվում է նավահանգստային քաղաք Դեբալը, որը երկար կռիվներից հետո, ի վերջո, գրավվում է: Հարուստ քաղաքը թալանվում է, իսկ բնակչությունը՝ մատնվում գերության: Ապա հյուսիսում արաբները գրավում են Նիրուն (Հայդարաբադ): Մինդի կառավարիչ Դահիրը, մնալով միայնակ, ստիպված իր զորքով անրանում է Ռավար անրոցում: Մարտում Դահիրը զոհվում է, իսկ պաշտպանները՝ 15 հազար մարդ, մնալով առանց ղեկավարի, հանձնվում են. մի մասը սպանվում է, մեծ մասն էլ գերի է տարվում Սերձավոր Արնելը: Արաբները հասնում են մինչև Մուլտան: Նվաճված բոլոր տարածքները մտնում են Քերմանի կազմի մեջ: Հյուսիսային Հնդկաստանից բերված մեծաքանակ գերիներն օգտագործվում են տնտեսության մեջ, ինչը, թերևս, հանդիսանում է վերոնկարագրված արշավանքների հիմնական և կարևորագույն արդյունքներից⁶:

Հյուսիսային Հնդկաստանում արաբական նվաճումների համար կարևոր էին քաղաքական նախադրյալները, որոնց պայմաններում արաբները ոչ միայն նվաճեցին տարածաշրջանը, այլև ամրապնդեցին իսլամի դիրքերը: Հարկավոր է նշել, որ արաբական նվաճումների շրջանում Հյուսիսային Հնդկաստանը քաղաքականապես մասնատված

³ Луння Б. Н., История Индийской культуры, Москва 1960, с. 224.

⁴ Шумовский Т. А. Арабы и море, Москва 1964., с. 121.

⁵ Malkani K., The Sindh Story, Allied Publishers, 1984, p. 34.

⁶ Босворт К., Мусульманские династии, Москва, 1971, с. 30.

եր: Տվյալ շրջանում Հնդկաստանը բաժանված էր Հյուսիսային Հնդկաստանի, Դեկանի և Հարավային Հնդկաստանի: Սրանք գտնվում էին քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման տարբեր մակարդակներում և մշտապես պայքարի մեջ են եղել՝ գերակայության հասնելու համար: Հյուսիսային Հնդկաստանում ևս չկար միասնականություն: Այն բաժանված էր երեք շրջանի՝ Գանգեսի ստորին հոսանքը (Բիխարա, Բենգալիա), կենտրոնական հովիտը՝ Ջամնա-Գանգեսյան գետամիջյան տարածքները (Ուտտար -Պրադեշ) և արևմտյան՝ Ինդոսի հովիտը (Փենջաբ, Սինդ)⁷: Նշված տարածքներում տարբեր ժամանակաշրջաններում ձևավորվում են պետական կազմավորումներ, որոնք մշտապես պայքարում էին միմյանց դեմ: Այս շրջանում սուր պայքար էր ընթանում Հյուսիսի ու Դեկանի միջև: Այսպես՝ Գաուդայի (Բենգալիա) արքա Շաշանկիին (606-630/637թթ.) գրավեց Օրիսսի (Դեկան) մի մասը: Նրանից հետո էլ Ստիանեշվարայում իշխող Խարշավարդիսանան (Խարշա)՝ 616-646/647 թթ. կարողանում է իր իշխանությունն ամրապնդել Գանգեսի հովտում: Նա նվաճում է Բենգալիան, Օրիսսը, Մալվան և առաջ չի շարժվում, քանի որ 620 թ. Նարբադա գետի մոտ պարտություն է կրում Չոլակներից⁸:

Հյուսիսային Հնդկաստանի նկատմամբ հավակնություններ ունեին տարածաշրջանի մյուս պետությունները, որը ևս նպաստում էր քաղաքական մասնատվածությանը և հեշտացնում նվաճողների մուտքը: Այսպես, Խարշայի մահից հետո Հյուսիսային Հնդկաստանի զգալի մասը հայտնվում է Չինական Տան իշխանության ազդեցության ներքո⁹: Դեռևս 6-րդ դարից Հյուսիսային Հնդկաստան են ներթափանցում ռազմատենչ ցեղեր, որոնք հայտնի են սպիտակ հոներ անունով¹⁰: Նրանք իրենց զինվորներին անվանում էին ռաջպուտներ: Ռաջպուտներն իրենց հիմնական զբաղմունքն էին համարում կովելը, այդ իսկ պատճառով նրանց կլանները մշտապես պատերազմում էին միմյանց հետ և արշավում հնդկական իշխանություններ: Կանաուջից Բենարես ընկած տարածքների վրա Ռաջպուտները ժամանակի ընթացքում ստեղծում են իրենց ֆեոդալական իշխանությունները, որոնցից առավել հզորը

⁷ Алаев Л., Средневековая Индия, Санкт-Петербург 2003, с. 46.

⁸ Антонова К. А., Бонгард-Левин Г. М., Котовский Г. Г., История Индии, Москва, 1973, <http://historic.ru/books/item/f00/s00/z0000015/st020.shtml>

⁹ Сюань-цзан, Записки о Западных странах [эпохи] Великой Тан, Москва, 2012. с. 138.

¹⁰ Васильев Л. История Востока. Том 1, Москва, 1998, с. 192.

Գուշարա-Պրատիխարների իշխանությունն էր՝ Կանաուջ կենտրոնով:

Քաղաքական նախադրյալներից կարելի է համարել նաև Հնդկաստանում գոյություն ունեցող կաստայական համակարգը¹¹, որի վերին օղակները քաղաքականացված էին՝ համարվելով իշխող վերնախավ: Պատահական չէ, որ արտաքին ուժերի կողմից այս հանգամանքն օգտագործվել է նվաճումների իրականացման և իշխանության ամրապնդման համար: Օրինակ՝ հոների ներթափանցումը Հյուսիսային Հնդկաստան համընկնում է հասարակության կառուցվածքում տեղի ունեցող սոցիալական տեղաշարժերի հետ: Եկվորներն իրենց ներկայացնում էին որպես վեդայական քշատրի կաստայի ներկայացուցիչներ: Սկսվում է տեղի բնակչության հետ միախառման գործընթացը (ոազմապես եկվորներն ավելի ուժեղ էին և հանդես էին գալիս իշխողի դիրքերից): Այս գործընթացների արդյունքում ձևավորվում է հասարակության նոր խավ (կաստա)՝ ռաջպուտներ: Արաբների իշխանության ամրապնդման և իսլամի տարածման գործում ևս կարևոր դեր է խաղում կաստայական համակարգը: Իսլամը շատ արագ ընդունվում է քաղաքական և ռազմական վերնախավի՝ քշատրիների կողմից: Սրան նպաստում է նաև այն, որ Խալիֆայությունում պետական կառավարման բարձր պաշտոնները տրվում էին մուսուլմաններին, իսկ հնդիկ ավագանին չէր ցանկանում դուրս մնալ կառավարումից և գրկվել իր գրադեցրած դիրքերից:

Քաղաքական ևս մեկ կարևոր նախադրյալ կարող ենք համարել գաղափարական մասնատվածությունը: Քաղաքական տարբեր ուժեր իրենց իշխանության ամրապնդման համար օգտագործում էին տարբեր կրոնական ուսմունքներ, որոնցով հարուստ էր Հնդկաստանը: Խարշան պետության միասնականության ամրապնդման գաղափարական հիմք է ընտրում բուդդայականությունը, որն արաբական նվաճումների շրջանում արդեն զիջել էր իր դիրքերը և աստիճանաբար դուրս էր մղվում: Ռաջպուտներն էլ իրենց ծագումը կապելով առասպելական հերոսների՝ հատկապես Ռամայի անվան հետ, սկսում են առաջ քաշել դասական հինդուիզմը, որը մինչ այդ եկրորդական հիմքերի վրա էր դրված: Արաբներն էլ անմասն չեն մնում այս մոտեցումից, սկսում են իրականացնել իսլամականացման քաղաքականություն: Միաստվա-

¹¹ Դեռևս հնագույն ժամանակներից Հնդկաստանի հասարակությունը հստակորեն շերտավորված էր: Այն բաժանված էր չորս խավերի, որոնք անվանվում էին վառնա (հետագայում կաստա), դրանք էին բրահման, քշատրի, վայշի, շուդրա:

ծական իսլամը թույլ էր տալիս արագ միավորել և համախմբել հասարակության տարբեր խմբերի (Հնդկաստանում կաստաներին) և ստեղծել ումմա: Իսլամի տարածման համար կարևոր գործոն էր արաբների իրականացրած հարկային քաղաքականությունը: Խալիֆայությունում սահմանված էր հատուկ հարկատեսակ՝ ջիզիե, որը գանձվում էր ոչ մուսուլման բնակչությունից¹²: Ոչ մուսուլման հպատակն իսլամ ընդունելով ազատվում էր այս ծանր հարկից:

Որոշ պատմաբաններ արաբների հաջողությունների համար մեղադրում են Ռաջպուտների իշխանությանը, որ ժամանակին օգնություն ցույց չտվեց Մինդին¹³: Հնդիկ պատմաբան և քաղաքագետ Կ. Ռ. Մալկանին, մեջբերելով չինացի ճանապարհորդ Սյուն Ցզանի՝ (Հնդկաստանում ճանապարհորդել է 629-645թթ.)¹⁴ Մինդի մասին թողած հիշատակությունները, նշում է, որ Մինդի բնակչության հիմնական մասը խաղաղասեր բուդդայականներ ու առևտրականներ էին¹⁵, ուստի առաջ է քաշում այն տեսակետը, որ նրանք չեն կովել արաբների դեմ: Նա միաժամանակ ընդգծում է, որ հասարակության ներսում չկար միասնականություն ու համախմբվածություն¹⁶: Հնդիկ հայտնի քաղաքական գործիչ Ջավահարլալ Ներուն կարծիք է հայտնում, որ արաբների հետագա անհաջողությունները պայմանավորված էին նրանով, որ «Հնդկաստանը դեռևս ուժեղ էր, որպեսզի չկարողանար դիմադրել»¹⁷: Թերևս նա նկատի ուներ Ռաջպուտների իշխանությունը, որն այդ ժամանակ միավորված հզոր իշխանություն էր: Պատահական չէր, որ հասնելով Հարավային Փենջաբ՝ Ռաջպուտների իշխանության սահմանին, արաբներեն այլևս չառաջացան: Նման կարծիք է հայտնում նաև հայտնի ռուս արևելագետ Լ. Ս. Վասիլևը¹⁸:

Այսպիսով, 8-րդ դարում Հյուսիսային Հնդկաստանը ֆեոդալական կարգերին հատուկ չունեք մեկ միասնական պետականություն և մասնատված էր մանր իշխանությունների: Բնականոն պատերազմներն այս իշխանությունների միջև, բացի այդ արտաքին ուժերի (Դեկանից

¹² Аву Йусуф Йа'куБ Б. Ибрахим ал-Куфи Китае ал-Харадж (Мусульманское налогообложение). Санкт-Петербург, 2001.

¹³ Синха Н. К., Бензрджи А. Ч., История Индии, Москва, 1954. с. 117; Malkani K., The Sindh story, 1984, p. 38.

¹⁴ Сюань-цзан, նշվ. աշխ., էջ 4:

¹⁵ Նույն տեղում, էջ 312.

¹⁶ Malkani K., նշվ. աշխ., p. 38.

¹⁷ Неру Дж., Открытие Индии, Москва, 1955, с. 252.

¹⁸ Васильев Л., նշվ. աշխ., էջ 193:

Չոլակները, հյուսիս-արևմուտքից՝ ռաջպուտներ) անընդհատ ներխուժումները և պատերազմները Հյուսիսային Հնդկաստանում հանգեցնում են տարածաշրջանի թե՛ ռազմական, և թե՛ տնտեսական առավել թուլացմանը: Բացի քաղաքական մասնատվածությունից, Հյուսիսային Հնդկաստանում խորը հիմքեր ուներ նաև ավանդական հասարակական շերտավորվածությունը, որն արտահայտվում էր կաստաներով: Իր հերթին տարբեր կրոնական ուսմունքների առկայությունն իշխող վերնախավին թույլ էր տալիս այս հանգամանքն օգտագործել իրենց շահերի համար: Նման քաղաքական, հասարակական և կրոնագաղափարախոսական մասնատվածությունն առավելագույնս լավ կերպով օգտագործում են արաբները: Վերջիններս, գրավելով Հյուսիսային Հնդկաստանի մի մասը, սկսում են տեղում վարել իսլամականացման քաղաքականություն: Այս քաղաքականության իրականացումը հետագայում շարունակվում է քաղաքական այլ ուժերի՝ թյուրքերի, մոնղոլների կողմից՝ հանգեցնելով հինդու-իսլամական մշակույթի ձևավորմանը, ավելի ուշ՝ հնդկական երկու պետության առաջացման:

HAKOBYAN NARINE

(ASPU)

THE ARABIC CONQUESTS IN THE NORTHERN INDIA. POLITICAL
PRECONDITIONS

In this article we tried to represent the political preconditions which served as a basis for the dissemination of Islam and the conquests of the Arabs in Northern India. A reference is made to the political, social, economic, religious and ideological situations in North India.

In the 8th century in the Northern India did not exist one unified state typical to the feudal system and was fragmented into small authorities. Regular wars between the government and foreign forces and the constant intrusions to Northern India weakened the region militarily and economically. In addition, in the Northern India the segmentation of society had a profound social basis, which was reflected in castes. Arabs used this fragmentation for their benefits. Occupying northern part of India, they started to pursue a policy of Islamization in that place. Later the implementation of this policy continued by Turks and Mongols. As a result, a new "Hindu- Islamic" culture has been formed and a new caste called "Indian Muslim" Ummah. Nowadays Islam has a great role in the region.

ՀԱԿՈՒՅՑԱՆ ՎԱՀԱԳՆ

(ԱԻ)

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1724-1800 ԹԹ.

18-րդ դարում Հարավային Կովկասում պարբերաբար ռազմական գործողություններ էին ընթանում, ինչն իր ազդեցությունն ունեցավ տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի վրա. մասնավորապես տարբեր երկրամասերում տեղական բնակչությունը արտագաղթի պատճառով սկսեց փոքրամասնություն կազմել: Նման գործընթացները շրջանցեցին նաև Երևանի խանությանը: Երևանն այն ժամանակ հարուստ առևտրական քաղաք էր, և Երևանի անառիկ բերդն ու քաղաքի եկամտաբերությունը հրապուրում էր ոչ միայն գերտերություններին, այլ նաև տարբեր նվաճողների: Սույն աշխատությունում մենք կներկայացնենք այն հանգամանքները, որոնց հետևանքով Երևանի խանության հայությունը, որը 18-րդ դարի սկզբին կազմում էր խանության բնակչության մեծամասնությունը, արդեն դարավերջին զգալիորեն պակասեց:

Պատերազմական գործողությունների ազդեցությունը Երևանի խանության ժողովրդագրական պատկերի վրա 1720-1740-ականներին:

Քաղաքի հայ բնակչության թվականակի մասին մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերաբերյալ հիշատակումներից մեկն առկա է Աբրահամ Երևանցու մոտ՝ օսմանյան բանակին Երևանի հայ բնակչության ցուցաբերած դիմադրության նկարագրությունում: 1724 թ. Երևանը օսմանյան բանակի կողմից պաշարվելու ժամանակ քաղաքի դիմադրությունը լիովին կազմակերպեցին հայերը: Այդ ժամանակ օսմանյան բանակին դիմադրավելու համար Երևանի Ձորագյուղ թաղամասում հավաքվել էին 9443 ազգությամբ հայ սպառազեն տղամարդիկ¹⁹: Ըստ Աբրահամ Երևանցու՝ այդ ժամանակ քաղաքում հաշվվում էր նաև 28000 հայ²⁰: Այնուհետև օսմանյան բանակի կողմից Երևանը գրավելուց հետո թուրքական իշխանությունները հաշվառում են անցկացնում, որի

¹⁹ Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմաց, 1721-1736, Երևան, 1938, էջ 17:

²⁰ Կարապետյան Մ., Բնակչության էթնիկ կազմը և էթնիկ պրոցեսները Երևանում 1724-1800 թթ., ՊԲՀ, 1987, N 3, էջ 95:

նպատակը ճշգրիտ հարկահավաքության կազմակերպումն էր: Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի «Երևանի» ֆոնդում պահվող վավերագրերը վերաբերում են այդ ժամանակ օսմանյան իշխանությունների «Արարատյան երկրից» ստացվող եկամուտներին: Այդ վավերագրերից որոշները ուսումնասիրվել են Հակոբ Փափազյանի կողմից և կարևոր տեղեկություններ են հաղորդում մեզ հետաքրքրող թեմայի ուսումնասիրման համար²¹: Ըստ այդ փաստաթղթերի՝ թուրքական իշխանությունները 1725 թ. առաջին հաշվառումն իրականացնում են Կրբուլախի, Կարպիի, Գաննիի, Շարուրի, Սուրմալուի, Դարաչիչազի և Դարալագյազի շրջաններում: Ըստ այդ հաշվառման՝ այդ շրջաններում բաժանվել է 14317 ջիզյաի²² թեթիկ²³: Այսինքն Երևանի խանության ընդամենը մի քանի շրջաններում չափահաս հայերի թիվը կազմել է մոտ 14317: Երևանի խանությունում ժողովրդագրական գործընթացների վրա զգալի ազդեցություն ունեցան նաև թուրք-պարսկական պատերազմները, որոնց արդյունքում 1735 թ. Երևանը կրկին անցավ պարսկական տիրապետության ներքո: Պատերազմի ավարտից հետո Նադիր շահի վարած ներքին քաղաքականությունը էականորեն ազդեց Անդրկովկասի, այդ թվում նաև Երևանի խանության ժողովրդագրական պատկերի վրա: Նադիրը բռնի ներգաղթ էր կազմակերպում, նպատակ ունենալով տերության տարբեր հատվածներում թուլացնել իր նկատմամբ անբարենպաստ տրամադրված ուժերին: Նրա հրամանով Թիֆլիսից Խորասան բռնագաղթեցվեց 6000 ընտանիք²⁴, Մուղանում թագադրվելուց առաջ 300 հայ ընտանիք բռնագաղթեցվեց Երևանից²⁵: Հետագայում կաթողիկոս Ղազար Ջահկեցին ակտիվ քայլեր ձեռնարկեց Օսմանյան կայսրության տարածքից Երևանի խանություն հայ բնակչության գաղթեցնելու ուղղությամբ: Դրա մասին է վկայում Նադիր շահի

²¹ Փափազյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը: Պատմաբանասիրական հանդես, 1984, N 3:

²² Ջիզյաի հարկը գանձվում էր չափահաս քրիստոնյաներից:

²³ Փափազյան Հ., նշվ. աշխ., էջ 200:

²⁴ Lockhart L., Nadir shah, a critical study based Mainly upon contemporary sources, London 1938, p. 91.

²⁵ Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 99:

1741 թ. հրովարտակը, որով շահն արգելում էր կաթողիկոսի ցանքերով Արևելյան Հայաստան վերաբնակեցված հայերին անհանգստացնել²⁶:

Հայ բնակչությունից բացի Երևանի խանություն էին տեղափոխվում նաև այլ էթնիկ խմբեր: Մասնավորապես 1738 թ. մայիսի 1-ին Իրանում Ռուսաստանի դեսպան Ս. Սրապովը արտաքին գործերի հանձնաժողովին ուղղված զեկույցում հայտնում է, որ Թուրքիայից Երևանի խանության տարածք են տեղափոխվել 6000 ընտանիք արաբներ և քրդեր²⁷:

Նադիր շահի սպանությունից հետո Իրանում չկար ուժեղ կենտրոնական իշխանություն, և Երևանի խանությունն Անդրկովկասի այլ խանությունների նման կիսանկախ կարգավիճակ ձեռք բերեց: Երևանի խանությունը ենթարկվեց Իրանի գահի համար պայքարող տարբեր հավակնորդների հարձակմանը, և Երևանի խանությունում մի քանի տարվա ընթացքում իշխանության գլուխ եկան մի քանի խաներ²⁸ պայմանավորված վերոնշյալ պատերազմներով: Ի վերջո 1755 թ. Երևանի խանությունում իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց Հասան Ալի խանը, որից սկսած շուրջ կես դար Երևանի խանությունում իշխանությունը ժառանգաբար էր փոխանցվում: Հասան Ալի խանի իշխանության օրոք Երևանի խանությունը դարձավ վրաց Հերակլ 2-րդ թագավորի հարկատուն²⁹: Այս ժամանակաշրջանից սկսած Երևանի խանության ժողովրդագրական պատկերի վրա սկսեցին ազդեցություն ունենալ ինչպես միջֆեոդալական մարտերը, այնպես էլ խաների վարած ժողովրդագրական քաղաքականությունը:

Միջֆեոդալական մարտերի ազդեցությունը Երևանի խանության ժողովրդագրական պատկերի վրա 18-րդ դարի 2-րդ կեսին:

Դառնալով վրաց թագավորների հարկատուն՝ Երևանի խաներն ամեն կերպ փորձում էին թուլացնել նրանց ազդեցությունը Երևանում:

²⁶ Կոստիկյան Բ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը: Հրովարտակներ, պրակ չորրորդ, Երևան, 2008, էջ 53:

²⁷ Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, сборник документов. Т. III, Ереван, 1978, док. 77, с. 114.

²⁸ Երևանի խանությունում իշխանության գլուխ կանգնած անձանց սկզբնադրյուններում անվանում են տարբեր կոչումներով՝ բեկլարբեկ, խան, սարդար և այլն: Մեր հետազոտությունում մենք կօգտագործենք առավել տարածված «խան» անվանումը:

²⁹ Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 3, Երևան, 1955, էջ 138:

Երևանի խաները վրաց թագավորներին կանոնավոր կերպով հարկ չէին վճարում: Հասան-Ալի խանին հաջորդում է իր եղբայր Հուսեյն Ալի խանը: Վերջինս պարբերաբար փորձում էր խուսափել հարկատվությանից: Հայտնի են դեպքեր, երբ խանը, հարկը ժամանակին չվճարելով, Հերակլ 2-րդի կնոջը տարբեր չափի գումարներ՝ 400 թավրիզի թուման³⁰, 200 թավրիզի թուման է ուղարկում³¹: Հուսեյն Ալի խանը երբեմն գումարի փոխարեն ապրանք էր ուղարկում, մի դեպքում 1000 ձմերուկ³², մեկ այլ դեպքում 3020 ձմերուկ արդեն Հերակլ 2-րդի որդի Գեորգիին՝ միաժամանակ ներողամտություն խնդրելով կատարած գանգանքների համար և պատրաստակամություն հայտնելով կատարելու ցանկացած տիպի ծառայություն³³: Խանի հարկատվությունից խուսափելը երբեմն հանգեցնում էր Հերակլ 2-րդի կողմից պատժիչ արշավանքի իրականացմանը, որոնց միջոցով Հերակլ 2-րդը վերականգնում էր ազդեցությունը Երևանի խանությունում: Հերակլ 2-րդի այդ արշավանքները կատարվել են 1765 և 1779 թվականներին³⁴: Միմյան Երևանցին, նկարագրելով 1765 թ. արշավանքը, տեղեկություն է հայտնում նաև Երևան տեղափոխված քուրդ բնակչության մասին: Ըստ կաթողիկոսի՝ քրդերը, թշնամանալով Բայազետի և Կարսի փաշաների հետ, բնակություն են հաստատում Երևանում: Նրանց առաջնորդ Սուլեյմանի աղջիկը Երևանի Հուսեյն Ալի խանի կինն էր: Խանը քրդերին մի շարք գյուղեր էր նվիրել: Հերակլ 2-րդի այդ արշավանքն ուղղված էր նաև քրդերի դեմ, քանի որ նրանք Ղազախի գյուղերը ավերելուց և մարդկանց կոտորելուց սպանում են նաև նրանց առանցնորդ Ջաֆար յուզբաշու որդուն³⁵:

Երբ Հերակլ 2-րդը որոշում է առանց կովի վերադառնալ Վրաստան, ներելով Հուսեյն Ալի խանին, վերջինս Միմեոնին խնդրում է միջնորդել նաև իր աներոջ համար, որն արշավանքի պատճառով հեռացել

³⁰ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, արաբատառ ձեռագիր N 233, էջ 38բ:

³¹ Նույն տեղում, էջ 59ա:

³² Նույն տեղում, էջ 37բ:

³³ Նույն տեղում, էջ 36բ:

³⁴ Հերակլ 2-րդի 1765 թվականի արշավանքն արյունալի հետևանքներ չի ունենում: Միմեոն կաթողիկոսի միջնորդությամբ առանց մարտի Հերակլ 2-րդը համաձայնում է Երևանի խանության իրեն հարկատու վիճակը պահպանվելու պայմանով դադարեցնել արշավանքը: Տե՛ս Գ. Աղայանց, Դիվան հայոց պատմության, Գիրք, Միմեոն կաթողիկոսի հրշատակարան, 1767-1776 թթ. . Թիֆլիս, 1894, էջ 195:

³⁵ Նույն տեղում, էջ 195:

էր խանութունից: Միմեռնի միջնորդությամբ Հերակլ 2-րդը հաշտվում է նաև քրդերի հետ, որից հետո նրանք դառնում են Հերակլ 2-րդը հարկատուն³⁶: Քանի որ քրդերին մի քանի գյուղեր են պատկանել, նրանք Ղազախ արշավելու և գյուղեր թալանելու ներուժ են ունեցել և այնպիսի գործունե էղել, որ վրաց Հերակլ 2-րդ թագավորն արշավել է նրանց դեմ, ապա պետք է ենթադրել, որ Սուլեյմանի գլխավորությամբ Երևանի խանութունն տեղափոխված քրդերն այնքան էլ փոքրաթիվ չեն եղել և իրենց թվաքանակով ազդել են խանության ժողովրդագրական պատկերի վրա: Սակայն Երևանի խանութունում հայությունը շարունակում էր կազմել բնակչության մեծ մասը³⁷: 1769 թ հունիսի 14-ին Հերակլ 2-րդը, նկարագրելով Երևանը, գրում է, որ այն կարող է մինչև երկու հազար զինվոր դուրս բերել³⁸: Խանության հայ բնակչության համար վատ հետևանքներ ունեցավ Հերակլ 2-րդի 1779 թ. արշավանքը, որի պատճառը Հուսեյն Ալի խանի կողմից հարկ չվճարելն էր: Միմեռն Երևանցու միջնորդությունն այս անգամ չի օգնում. Հերակլ 2-րդը ցանկանում էր պատժել խանին: Սակայն, չկարողանալով գրավել Երևանի բերդը, դիմում է Միմեռն Երևանցուն, որպեսզի արշավանքի նախօրեին Երևանից դեպի Բայազետ հեռացած հայությունը կոչ անի վերադառնալ խոստանալով, որ նրանց վտանգ չի սպառնա: Սակայն հայության վերադարձից հետո, Հերակլ 2-րդը, Հուսեյն Ալի խանին տնտեսապես թուլացնելու նպատակով, ութ հայկական գյուղերի բնակչության բռնի գաղթեցնում է Արևելյան Վրաստան³⁹: Պետք է նկատել, որ Հերակլ 2-րդը, հայությունը բռնագաղթեցնելով Արևելյան Վրաստան, կարողացավ թուլացնել Հուսեյն Ալի խանին, քանի որ վերջինս Հերակլ 2-րդի արշավանքից հետո երկրում ստեղծված ծանր դրությունը փոխելու միջոցը տեսնում էր Վրաստան քշված հայ բնակչության վերադարձի և ամայացած գյուղերը նորից բնակեցնելու մեջ⁴⁰: Կարծում ենք սա ևս

³⁶ Նույն տեղում, էջ ԶԶԴ:

³⁷ Цагарели А., Грамоты и другие исторические документы 18 столетия, относящиеся к Грузии, т. 1, с 1768 по 1774, С. Петербургъ 1891, с. 434.

³⁸ Нерсисяна М., Армяно-русские отношения в 18 веке 1760-1800 гг., Сборник документов, т. 4, с. 94.

³⁹ Յիշատակարան, Ազգային արդեան պատմության համար, Յաղագս դիմելոյն Հերակլայի պատերազմ Երևան, և արտասահման ատնելոյ զքանի զեօղորեայն Հայոց յԱրարատու: Կռունկ հայոց աշխարհին, Տիփսիս, 1862, էջ 280:

⁴⁰ Թ.Հակոբյան, Երևանի պատմությունը (1500-1800թթ.), Երևան, 1971, էջ 121:

խոսուն փաստ է Երևանի խանությունում հայ բնակչության մեծամասնություն կազմելու մասին:

Քաղաքի բնակչության էթնիկ կազմի մասին տեղեկություն է հայտնում նաև ռուսական գործակալ Ռայնեգսը, ով, 1783 թ. փետրվարի 9-ին լինելով Երևանում, բերդի մասին գրում է. «վաթսուն լեռնականը բավական է խանին և բոլոր պարսիկներին Երևանից թշելու համար: Խանը ներսից պաշտպանված է հայերի կողմից: Քաղաքը լի է հայերով»⁴¹: Երևանից բնակչության մեծ չափով արտագաղթի համար պատճառ հանդիսացավ Աղա Մուհամմադ խանի 1795 թ. արշավանքը: Այդ ժամանակ Երևանի հայ և մահմեդական բնակչությունը զանգվածաբար փախչում էր դեպի Թիֆլիս՝ վստահ լինելով, որ Աղա Մուհամմադ խանը չի կարողանա նվաճել այն⁴²: Հայտնի չէ, թե 1795 թ. որքան հայ է լքել Երևանը, սակայն համաձայն աղբյուրների 1795-1827 թթ. Երևանից Վրաստան է արտագաղթել 20 000 հայ⁴³:

Պետք է նկատել, որ Երևանի խանության էթնիկ պատկերը փոփոխություն էր կրում նաև խաների վարած քաղաքականության հետևանքով: Չնայած հայերի տնտեսական գործունեության հաշվին խաները մեծ եկամուտներ էին ստանում, ամեն դեպքում խաների և շիա հոգևորականների կողմից պարբերաբար կազմակերպվում էր մուսուլման բնակչության բնակեցում Երևանում⁴⁴: Երևանի խաները տարբեր առիթներով իրենց զինվորների հետ հանգրվանում էին Էջմիածնում, օրեր շարունակ վանքի հաշվին ապրում, տարբեր պահանջներ ներկայացնում կաթողիկոսին և մեծ վնասներ հասցնում: Այս հանգամանքի մասին է վկայում Ազատ խանի հրովարտակներից մեկը՝ ուղղված Երևանի Խալիլ խանին (1752-1755թթ)⁴⁵: Ազատ խանի այդ հրամանագրի համար հիմք է հանդիսացել Էջմիածնի կաթողիկոսի գրած խնդրագիրը, որով հայտնում են, որ Խալիլ խանն իր զինվորներով «արդեն 12 օր է ինչ

⁴¹ Иоаннисян А., Россия и Армянское освободительное движение в 80-х годах 18 столетия, Ереван, 1947, с. 214.

⁴² Араратян А., Жизнь Артемия Араратского Уроженца селения вагаршапаты близь горы Арарата, С. Петербург 1813, с. 281.

⁴³ G. Bournoutian, The Politics of Demography: Misuse of Sources on the Armenian Population of Mountainous Karabakh, p. 103, Journal of the Society for Armenian Studies, vol.9, Zttps://umdearborn.edu/dept/armenian/sas/bour2.html

⁴⁴ Կարապետյան Մ., նշվ. աշխ., էջ 100-101:

⁴⁵ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1344:

վանքում է մնում և նրա զինվորների իխրաջաթն⁴⁶ ու սոյուրսաթը⁴⁷ նրան վճարում են»: Հետևաբար Ազատ խանը հրամայում է, որ էջմիածնի հոգևորականության նկատմամբ անօրինական պահանջներ չունենան⁴⁸:

Խաների վարած քաղաքականության արդյունքում տեղի էր ունենում ոչ միայն հայ բնակչության արտահոսք և մահմեդականների ներգաղթ Երևանում, այլ նաև դավանափոխություն: Դրան նպաստում էր Իրանում տարածված «Իմամ Ջաֆարի» օրենքը: Համաձայն այդ օրենքի մահացած քրիստոնյայի հարազատների մեջ մահմեդական լինելու դեպքում քրիստոնյա ազգականները զրկվում են ժառանգական իրավունքներից, և հանգուցյալի կարողությունը ժառանգելու համար առաջնահերթությունը տրվում է հանգուցյալի մահմեդական հարազատին⁴⁹: Այս օրենքը տնտեսական հիմք էր նախապատրաստում հայության մահմեդականություն ընդունելու համար:

Այսպիսով վերոնշյալ հանգամանքների և 18-րդ դարում ընթացող թուրք-իրանական, ապա Հարավային Կովկասի միջիշխանական ռազմական գործողությունների և Աղա Մուհամմադ խանի արշավանքի արդյունքում Երևանի խանությունում տեղի ունեցավ հայ բնակչության մեծ չափերի հասնող արտահոսք և մահմեդական բնակչության ներհոսք, ինչի արդյունքում դարավերջին արդեն էականորեն փոխվել էր խանության ժողովրդագրական պատկերը:

HAKOBYAN VAHAGN

(IOS)

DEMOGRAPHIC CHANGES IN YEREVAN KHANATE IN THE 1724-1800S

At the beginning of the 18th century Yerevan Khanate was mainly populated by local native people, the Armenians. Outlanders, mostly

⁴⁶ Իխրաջաթ էին կոչում այն ծախսերը, որոնք ռայաթները տարբեր առիթներով պետք է հատուցեին պետությանը կամ պետական պաշտոնյաններին: Տե՛ս Բ. Կոստիկյան, նշվ. աշխ., էջ 105:

⁴⁷ Ռայաթների կողմից բանակին մթերքով ապահովելը: Տե՛ս Բ. Կոստիկյան, նշվ. աշխ., էջ 110:

⁴⁸ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 1344:

⁴⁹ Փափագյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտականեր, պրակ երկրորդ, (1601-1650 թթ.), Երևան, 1959, վավ. 16, էջ 101 - 103:

Muslims, living with the Armenians in Yerevan Khanate composed only a small part of the population. In the South Caucasus the population living in Yerevan Khanate was taken captive by different conquerors or often emigrated from the territory of the khanate searching safety in other places in the result of regular military operations between both great powers such as the Ottoman Empire, Iran and Russia, and local government units such as the Muslim khanates, pashayutyuns (provinces), Armenian principalities, Georgian Kingdom.

According to contemporary sources, apart from emigration, immigration was taking place in Khanate, but immigrants were mostly Muslims, Kurds, Iranians and others. Only rare cases are known, when during the period we are interested in, a few Armenian families settled in Yerevan Khanate. Demographic changes of the 18th century were due to the religious and economic policy conducted by the rulers of the khanate, Muslim khans. As a result, the demographic picture in Yerevan Khanate underwent a great change already at the end of the century and the Armenians did not constitute the majority of the population anymore. These demographic changes are the result of both the Armenian population's emigration from Khanate and being captured, Muslim population's immigration to Khanate, and Yerevan khan's domestic policy.

ՄԱՐԳՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ
(ԳԿՄԿ)

ԵԳԻՊՏԱ-ԽԵԹԱԿԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱՄՁԵՍ II-Ի ՕՐՈՔ

Եգիպտա-խեթական փոխառնչությունները սկսվել են դեռևս Ք.ա. XV դարից¹, որոնց մասին առաջին սկզբնաղբյուրները եգիպտական բազմաթիվ արձանագրություններն են, ինչպես նաև խեթական թագավորների տարեգրությունները:

Խեթական պետության (Խաթթի) հիմնական հակառակորդը այդ շրջանում հզորացած Միտաննին էր: Խեթական Թուդխալիյա II (Ք.ա. մոտ 1460-1440 թթ.) թագավորը իր կառավարման ընթացքում նվաճում է գրեթե ողջ Փոքր Ասիա թերակղզին, հաղթում Միտաննիին, նվաճում Կիցցուվաստնան, որի հետ կնքված պայմանագրի համաձայն այս երկիրը դառնում է խեթերից կախյալ թագավորություն: Խեթերի հաջողությանը, ըստ էության, նպաստում են Եգիպտոսի փարավոն Թուրմոս III-ի (Ք.ա. 1479-1425 թթ.) արշավանքները Միտաննիի դեմ, որոնք հանգեցնում են վերջինիս թուլացմանը²: Խաթթիի համար իրավիճակը փոխվում է այն ժամանակ, երբ դինաստիական ամուսնությամբ ամրապնդվում են հարաբերությունները Միտաննիի և Եգիպտոսի միջև³: Միտաննիի արքա Արտադամա I-ի (Ք.ա. 1410-1400 թթ.) և եգիպտական XVIII հարստության ներկայացուցիչ Թուրմոս IV-ի (Ք.ա. 1397-1388 թթ.) միջև կնքվում է պայմանագիր՝ համաձայն որի Եգիպտոսը գերիշխանություն է ստանում Քադեշի, Ամնուրուի (Փյունիկիա), Ուգարիտի նկատմամբ⁴: Սա նշանակում էր, որ Խեթական պետության շահերը Միտաննիի հյուսիսում այսուհետ բախվելու էին ոչ միայն Միտաննիի, այլև Եգիպտոսի հետ:

Խեթական Սուպալիլուիլիումա I (Ք.ա. 1345-1322 թթ.) թագավորի օրոք խեթերը վերանվաճում են նախկինում Խաթթիին պատկանող փոքրասիական տիրույթները, Միտաննիի հյուսիսում ստեղծում ենթակա

¹ Freu J., *Suppiluliuma et la veuve du pharaon*, Paris, 2004, p. 24.

² Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. 1, Երևան, 2013, էջ 178:

³ Kitchen K.A., *Pharaoh Triumphant: The Life and Times of Ramesses II, King of Egypt*, Warminster, Mississauga, 1985, p. 10.

⁴ Bryce T., *The Kingdom of the Hittites*, New York, 2005, p. 145.

թագավորություններ՝ Հալեպ և Կարգամիս կենտրոններով⁵: Նրա օրոք սրվում են Խաթթիի հարաբերությունները Եգիպտոսի հետ, ինչը կապված էր Թուֆանհամոնի (Ք.ա. մոտ 1332-1323 թթ.) այրի Անխեստենամոնի հետ: Վերջինս, իր ամուսնու մահվանից հետո, խնդրում է խեթական թագավորին իր որդիներից մեկին ուղարկել Եգիպտոս՝ որպես իրեն ամուսին և փարավոն⁶: Սակայն, Եգիպտոսի սահմանների մոտ դավադրաբար սպանվում է Սուպպիլուիլիումայի որդի Ցանանցան, որին ի պատասխան խեթական զորքը թագաժառանգ Առնուվանդայի գլխավորությամբ, մտնում է Եգիպտոսի վերահսկողության տակ գտնվող Հարավային Սիրիա և խոշոր ավերածություններ իրականացնում⁷:

Եգիպտոսը XIX հարստության շրջանում Սեթի I-ից (Ք.ա. 1290-1279 թթ.) սկսած նպատակ է ունենում վերականգնել նախորդ տասնամյակներում Արևելամիջերկրածովյան ավազանում կորցրած իր գերիշխանությունը: Սեթի I-ը հարձակումներ է իրականացնում խեթերից կախյալ Ամուրրուի և Քադեշի դեմ⁸:

Ք.ա. 1279 թ. Եգիպտոսում գահ է բարձրանում Սեթի I-ի որդին՝ Հին Եգիպտոսի պատմության ամենահայտնի փարավոններից մեկը՝ Ռամզես II-ը (Ք.ա. 1279-1213 թթ.): Վերջինիս նպատակն է դառնում վերականգնել և ընդարձակել Եգիպտոսի առաջավորասիական տիրույթները⁹:

Այսպիսով՝ դարձյալ բախվում են երկու հզոր տերությունների՝ Եգիպտոսի և Խաթթիի շահերը: Այս անգամ արդեն եգիպտա-խեթական առճակատման կենտրոնում Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ն էր և խեթական թագավոր Սուվատալի II-ը (Ք.ա. մոտ 1295-1282 թթ.):

Իր իշխանության 4-րդ տարում Ռամզեսը նախաձեռնում է առաջին արշավանքը դեպի Առաջավոր Ասիա՝ նպատակ ունենալով իրեն ենթարկել Պաղեստինի և Փյունիկիայի առափնյա տարածքները¹⁰: Վերջինս բանակը բաժանում է չորս զորամասերի՝ դրանց տալով եգիպտական չորս աստվածների՝ Ամոնի, Ռայի, Պտախի և Սեթի

⁵ Bryce T., նշվ. աշխ., էջ 51:

⁶ Freu J., նշվ. աշխ., էջ 73:

⁷ Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. 1, էջ 181:

⁸ Kitchen K. A., նշվ. աշխ., էջ 25:

⁹ История древнего мира, Москва, 1983, с. 252.

¹⁰ Перепёлкин Ю. Я., История Древнего Египта, Санкт-Петербург, 2000, с. 327.

անունները: Ինքը՝ Ռամզեսը, գլխավորում է Ամոնի անունը կրող գորամասը¹¹:

Համաձայն եգիպտական արձանագրությունների Ռամզեսի գորքի թիվը հասնում էր 47500-ի: Խեթական Մուվատալլի II թագավորի գորքը անցնում էր 35000-ից: Խաթթիի արքային օգնական զորաջոկատներ են ուղարկում նաև Միտտանին, Արցավան, Լուկկան, Վիլուսան, Կիցցուվատնան, Կարգամիսը, Ուգարիտը և այլ երկրներ: Խեթական բանակը շարժվում է դեպի Սիրիայի Քադեշ քաղաք¹²:

Մուղակի մեջ գցելով եգիպտացիներին՝ Ք.ա. 1274 թ. Սիրիայի Քադեշ քաղաքի մոտ Մուվատալլին անսպասելի հարձակում է գործում եգիպտական Ռա աստծո անունը կրող գորամասի վրա: Վերջինիս անհաջողությունների մասին տեղեկանալով՝ Ռամզես II-ը շտապում է Քադեշ, բայց հայտնվում է խեթական 2500 մարտակառքերի շրջափակման մեջ: Նրան օգնության են հասնում եգիպտական մյուս գորամասերը: Ռամզեսը մեծ դժվարությամբ է փրկվում գերի ընկնելուց¹³:

Չնայած եգիպտական արձանագրություններում Ռամզեսի հաղթանակի մասին վկայություններին՝ իրականում տեղի ունեցած ճակատամարտում կողմերից և ոչ մեկը չի հաղթում: Արդյունքում խեթերը կրկին նվաճում են Ամմուրուն և պահպանում իրենց գերիշխանությունը Հյուսիսային և Կենտրոնական Սիրիայի նկատմամբ¹⁴:

Քադեշի ճակատամարտից հետո, սակայն, չեն ավարտվում եգիպտա-խեթական առճակատումները: Ռամզես II-ը մեկ տասնամյակից ավելի պայքարելուց հետո միայն կարողանում է խեթերին դուրս հանել Հարավային Սիրիայից, գրավել Քադեշն ու բազմաթիվ այլ քաղաքներ¹⁵:

Եգիպտա-խեթական փոխառնչությունների հաջորդ կարևոր փուլն սկսվում է Խաթթիի մեծ արքա Խաթթուսիլի III-ի (Ք.ա. մոտ 1265-1240 թթ.) գահ բարձրանալուց հետո: Վերջինս մինչ այդ գահից զրկել էր Մուվատալլիի որդուն՝ Մուրսիլի III-ին (Ուրիսի-Թեշուբ), որը այնուհետև արքայություն է եգիպտոս¹⁶:

¹¹ Kitchen K. A., նշվ. աշխ., էջ 53:

¹² Bryce T., նշվ. աշխ., էջ 235:

¹³ Freu J., նշվ. աշխ., էջ 145-146:

¹⁴ Հայաստանի հարակից երկրների պատմություն; հ. 1, էջ 183:

¹⁵ История древнего мира, с. 253:

¹⁶ История Древнего Востока, ч. 2, Москва, 1988, с. 151.

Իր կառավարման հենց սկզբում Խաթթուսիլի III-ը միտված էր բարելավելու հարաբերությունները ժամանակի մեկ այլ հզոր տերության՝ Ասորեստանի հետ, որը ևս տարածաշրջանում իր շահերն էր հետապնդում: Խաթթուսիլի III-ի արտաքին քաղաքականության մեջ կարևոր քայլ էր նաև Եգիպտոսի հետ հարաբերությունների կարգավորումը¹⁷:

Ք.ա. 1259 թ. Ռամզես II-ը և Խաթթուսիլի III-ը Սիրիայում՝ Եգիպտոսի և Խաթթիի ազդեցության գոտիների միջև ընկած սահմանամերձ հատվածում, կնքում են «հավերժական խաղաղության և բարեկամության պայմանագիր»: Պայմանագիրը կազմվել է աքքադերենով, որը թարգմանվել է նաև եգիպտերեն և արձանագրվել է Կառնակի տաճարի պատին:

Համաձայն պայմանագրի՝ կողմերը պարտավորվում էին.

- միմյանց միջև առաջացած տարածքային խնդիրները լուծել միայն խաղաղ բանակցությունների միջոցով,
- չաջակցել միմյանց հակառակորդներին,
- անհրաժեշտության դեպքում օգնել միմյանց երրորդ կողմի դեմ ռազմական գործողություններում¹⁸ (խոսքը վերաբերում է մասնավորապես Ասորեստանին):

Պայմանագիրն ամրապնդվում է Ռամզես II-ի և խեթական Խաթթուսիլի III-ի դստեր դինաստիական ամուսնությամբ: Վերջինս ընդունում է եգիպտական Սաատհորնեֆրուրա անունը¹⁹, և ի տարբերություն փարավոնների օտարազգի այլ կանանց, որոնք զբաղեցնում էին երկրորդական դիրք եգիպտական արքունիքում, դառնում է փարավոնի գլխավոր կինը:

Պայմանագրի կնքումից հետո եգիպտա-խեթական փոխառնչությունները կրում էին հիմնականում խաղաղ բնույթ: Երկու երկրների միջև սկսվում է ակտիվ դիվանագիտական նամակագրություն: Խաթթիի մայրաքաղաք Խաթթուսայի արխիվում պահպանվել են Ռամզես 2-րդի նամակները՝ ուղարկված Խաթթուսիլիին և նրա կնոջը՝ Պուդուսեպային²⁰:

¹⁷ Bryce T., նշվ. աշխ., էջ 277:

¹⁸ Kitchen K. A., նշվ. աշխ., էջ 76-77:

¹⁹ Cannuyer Ch., Le grand «mariage hittite» de Ramsès II et son empreint dans la mémoire égyptienne, Identité et altérité culturelles: Le cas des Hittites dans le Proche-Orient ancien, Bruxelles, 2010, p. 94.

²⁰ Bryce T., Letters of the Great Kings of the Ancient Near East: The Royal

Այսպիսով՝ միջազգային դիվանագիտության պատմության մեջ հաշտության պայմանագրի նախատիպ հանդիսացող այս փաստաթղթում հստակեցվում են երկու խոշոր տերությունների միջև տարածքային խնդիրները, ինչի արդյունքում Հյուսիսային Սիրիան և Հյուսիսային Փյունիկիան անցնում են Խեթական պետությանը, իսկ Հարավային Սիրիան, Հարավային Փյունիկիան և Պաղեստինը՝ Եգիպտոսին, ավարտվում են դեռևս Ք.ա. XV դարից ծավալվող եգիպտա-խեթական առճակատումները, ինչը նպաստում է Առաջավոր Ասիայում խաղաղության պահպանմանը:

SARGSYAN ANZHELA

(ISEC)

EGYPTIAN-HITTITE MILITARY-POLITICAL RELATIONS
IN THE REIGN OF RAMESSES II

This article is about the relations between Egyptian and Hittite states, which started in XV century BC. The king of Egyptian XVIII dynasty Thutmos IV and the king of Mitanni Artadama I signed an agreement and Egypt got hegemony over Kadesh, Ammuru (Phoenicia) and Ugarit. This agreement strained Hittite state's relations with Mitanni and Egypt.

The conflict between Egypt and Hittite states continued during the reign of the Egyptian XIX dynasty's representative Sety I, as well as after the latter's son, Ramesses II- era. It would be appropriate to take the battle of Kadesh as the culmination of the struggle between Egyptian Pharaoh Ramesses and the Hittite king Muwatalli II. The battle of Kadesh took place in 1274 BC where both parties didn't succeed. The battle was followed by so called "Contact of eternal peace and friendship" signed by Ramesses II and Hattusili III, 1259 BC. The treaty was reinforced by the dynastic marriage between Ramesses II and the princess of Hittite.

Thus, this document, which is a prototype of a peace treaty in the history of international diplomacy, helps to clarify the territorial conflicts between the two superpowers (Hatti, Egypt).

ԱՎԱԳՑԱՆ ԱՆԺԵԼԱ

(ԵՊԷ)

ԿՐՈՆԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ Զ.Զ. ՄՈՐԻԵՐԻ
 «ԱՅԵՇԱՆ՝ ԿԱՐՍԻ ՀԱՐՃԸ» ՎԵՊՈՒՄ

19-րդ դարը եվրոպական գրականության մեջ նշանավորվեց հուշագրային ժանրի աշխուժացումով, որը պայմանավորված էր տվյալ ժամանակաշրջանի պատմական-քաղաքական, հասարակական-տնտեսական ու գիտատեխնիկական նոր ձեռքբերումներով: Եվրոկենտրոն դարաշրջանում մեծ զարգացում էր ապրում գիտական օրիենտալիզմը, որը տասնյակ հետազոտողների ու ստեղծագործողների մղում էր դեպի Արևելք՝ նորովի պեղելու և բացահայտելու վերջինս:

19-րդ դարում դեպի Արևելք կատարած ճանապարհորդությունների շնորհիվ ծնվեցին հուշագրություններ, օրագրություններ, ճանապարհորդական գրքեր, որոնք գրական-գեղարվեստական արժեքից գատ պարունակում էին հանրագիտարանային տեղեկություններ արևելյան երկրների մասին: Այս առումով մեծ ներդրում ունի անգլիական օրիենտալիզմի գիտական դպրոցը, որի հայտնի ներկայացուցիչներից է անգլիացի հեղինակ և դիվանագետ Ջեյմս Ջուստինիան Մորիերը: Վերջինս, 1780 թ. ծնվելով Ջմյուռնիայում, իր կյանքի զգալի մասն անցակցրել է Արևելքում՝ զբաղեցնելով դիվանագիտական տարբեր պաշտոններ¹: Սակայն նա Արևելքում մեծ համբավ է ձեռք բերել ոչ միայն այնտեղ ունեցած իր դիվանագիտական գործունեության շնորհիվ, այլև ճանաչելի է դարձել Արևելքի մասին իր հայտնի գեղարվեստական ստեղծագործություններով, հուշագրություններով, որոնք միտված էին 19-րդ դարի Անգլիայի համար բացահայտելու Արևելքի,

¹ Krotkoff G., Haiji Baba, and the Moriers Author,- International Journal of Middle East Studies, Cambridge University Press, Vol. 19, No. 1 (Feb., 1987), p. 104.

մասնավորապես Իրանի, օսմանյան Թուրքիայի հասարակական-քաղաքական, մշակութային իրականությունը:

Մորիերի հասարակական և քաղաքական հայացքների ձևավորման վրա մեծ ազդեցություն է թողել արևելյան մշակույթը, որին հեղինակը ծանոթացել է ճանապարհորդությունների ժամանակ, ինչպես նաև արևելյան գրականություն ընթերցելիս: Մորիերը մեծ հետաքրքրությամբ է ընթերցել «Հազար ու մի գիշերվա» ֆրանսերեն թարգմանությունը՝ կատարված Անտուան Գալլանի կողմից (1704 թ.), ինչպես նաև արաբական ու պարսկական պոեզիան, որոնք ժամանակի պահանջով թարգմանվում էին անգլերեն²:

Քանի որ հեղինակը գտնվել է 18-րդ դարի նեոկլասիցիզմի և 19-րդ դարի ռոմանտիզմի սահմանում, նրա մոտ Արևելքի սկզբնական պատկերները նեոկլասիկ են, բայց հետագայում նա սկսում է զարգացնել ռոմանտիզմը՝ հիմնվելով Բայրոնի, Սքոթի, Մուրի աշխատությունների վրա: Մորիերի առաջին աշխատություններից է 1812 թ. լույս տեսած «Ճանապարհորդություն Պարսկաստանով, Հայաստանով և Փոքր Ասիայով մինչև Կ. Պոլիս 1808 և 1809 թվականներին» ստեղծագործությունը, որտեղ հեղինակը տալիս է իր ճանապարհորդության մանրամասն նկարագիրը: Նրա գրչին են պատկանում նաև մի քանի վեպեր, որոնցում հեղինակը շատ լավ ներկայացրել է Արևելքն ու այնտեղ բնակվող մարդկանց՝ իրենց բարքերով ու բնորոշ հատկանիշներով: Այդ վեպերն են՝ «Հաջի Բաբայի արկածներն Իսպահանում» (1824 թ.), «Հաջի Բաբան Անգլիայում» (1828 թ.), «Չոհրաբ պատանդը» (1832 թ.) և «Այեշան Կարսի հարձը» (1841 թ.)³:

«Այեշան Կարսի հարձը» վեպը՝ գրված 1841 թ., պատկանում է Մորիերի այն ստեղծագործությունների շարքին («Հաջի Բաբա», «Չոհրաբ պատանդ»), որոնք ներկայացնում են հերոսի ճանապարհորդությունները, որոնց ընթացքում վերջինս հանդիպում է տարբեր մշակույթների ներկայացուցիչների հետ⁴: Ստեղծագործությունը կառուցվում է Արևմուտքի և Արևելքի քաղաքակրթությունների զուգադրմամբ,

² Ayesha, The Maid of Kars, Author of "Zohrab", "Haiji Baba" &c,- By the The Quarterlu Review, Vol. LI, No. CII, March & June 1834, London, p. 481-493.

³ Bates W., The Maclise Portrait Gallery of Illustrious Literary Characters With Memoirs, London, 1898, pp. 157-158.

⁴ Исхакова Л. И., Имперский дискурс в формировании образа Востока в творчестве Джеймса Мориера (на примере романа "Аэша, девушка с Карса"), Филология и культура, 2013. Н. 2 (32), с. 115.

որի շնորհիվ բացահայտվում են սեփական և օտար մշակույթների առանձնահատկությունները, և ստեղծվում է օտարի ազգային նույնականության կերպարը: Բացի այդ՝ Սորիերը ոչ միայն ստեղծում է երկու քաղաքակրթությունների նկարագիրը, այլ նաև դիտարկում է դրանց փոխադարձ հաղորդակցման խնդիրները, ինչպես նաև հնարավորություն է տալիս ընթերցողին ներսից տեսնել 19-րդ դարի բազմամշակութային թուրքիան:

Մինչև վեպի ուսումնասիրմանն ու քննությանն անցնելը համառոտ ներկայացնենք նրա սյուժեն ու գործող հերոսներին, որպեսզի ընթերցողը ընդհանրական պատկերացում կազմի այդ երկի վերաբերյալ:

«Այեշան՝ Կարսի հարճը» վեպի գլխավոր հերոսը երիտասարդ անգլիացի լորդ Օսմոնդն է, ով Պարսկաստան կատարած երկարատև այցելությունից հետո վերադառնում է Անգլիա՝ անցնելով թուրքիայի տարածքով: Կարս մտնելուն պես տեղի է ունենում մի պատահար, որի պատճառով ժամանակավորապես հետաձգվում է նրա ճանապարհորդությունը: Այդ պատահարի ժամանակ անգլիացի լորդը հանդիպում է մի շատ գեղեցիկ աղջկա՝ Այեշային, և նրանք առաջին հայացքից սիրահարվում են միմյանց: Բայց, քանի որ Օսմոնդը քրիստոնյա էր, իսկ Այեշան՝ մուսուլման, նրանց սերը ընդունելի չէր ու անգամ արգելված էր մուսուլման կրոնավորների կողմից: Կարսում Օսմոնդը՝ անգլիացի լորդը, ում ուղեկցում էին հույն Ստասսիոն և մուսուլմանություն ընդունած Մուստաֆան, ապաստան է գտնում մի քրիստոնյա հայի՝ Պողոսի տանը: Այնտեղ էլ նա պարզում է, որ Այեշան Կարսի մեծ հարգանք վայելող մուսուլմաններից մեկի՝ Սուլեյման աղայի և նրա հույն կնոջ՝ Զաբետտայի դուստրն է: Սյուժեի զարգացմանը զուգահեռ աճում է Օսմոնդի խիզախությունը, ով ցանկանում է գրավել գեղեցիկ թրքուհու սիրտը: Այս ամենն առաջացնում է Կարսի իշխանությունների նախանձն ու դժգոհությունը, որն էլ պատճառ է դառնում վտանգավոր հետապնդումների և տարբեր արկածների: Կարսում բարձրաստիճան հոգևորականների հրամանով Օսմոնդը ձերբակալվում է և քիչ է մնում սպանվի, բայց կարողանում է փախչել բանտից՝ ընկնելով այս անգամ իր դաժանությամբ հայտնի քուրդ Քարա Բեյի ամրոցը: Անգլիացի լորդին ուսական բանակի օգնությամբ հաջողվում է ազատվել նաև Քարա Բեյի ճանկերից, բայց դրանով արկածները չեն ավարտվում: Հայտնվելով ազատության մեջ՝ Օսմոնդը մեկնում է Կ. Պոլիս, որպեսզի այնտեղից իր սիրելի Այեշայի հետ հեռանա Անգլիա: Սակայն այստեղ էլ

նա հայտնվում է մի շարք նոր վտանգավոր արկածների մեջ, մեղադրվում է մուսուլման կնոջ առևանգման համար, որի պատճառով բանտարկվում է Հոռոս կղզում: Բարեբախտաբար այս բոլոր փորձությունները վերջ ի վերջո ավարտվում են, և վեպը դրական հանգուցալուծում է առնում: Վերջում պարզվում է, որ Այեշան ոչ թե թրքուհի է, այլ մի նշանավոր անգլիացու աղջիկ, ում մանուկ հասակում գողացել էին քրիստոնյա ծնողներից, մահմեդականացրել և դաստիարակել որպես թրքուհի: Վեպի ավարտին Այեշան ընդունում է քրիստոնեություն և ամուսնանում Օսմոնի հետ:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ վեպում առկա են տարբեր էթնիկական խմբերի պատկանող հերոսներ: Բացի վերջիններիցս թուրքերից, պարսիկներից, հայերից ու հույներից, վեպում նկարագրվող գործողությունների զարգացմանը զուգահեռ ի հայտ են գալիս նաև այլ էթնիկ հերոսներ՝ ռուս զինվորականներ, վրացիներ, մի հրեա ասամնարույժ և այլք: Մորիերը շատ լավ, բազմակողմանիորեն կարողանում է ներկայացնել այդ տարբեր էթնիկ խմբերի փոխհարաբերությունները, միջմշակութային շփումները, կրոնական բախումները, նրանց զբաղեցրած դիրքն ու տեղը 19-րդ դարի Թուրքիայում: Բնական է, որ այսքան բազմազգ միջավայրում պետք է առաջանան մի շարք կրոնական խնդիրներ, անհանդուրժողականության դրսևորումներ, բախումներ: Կրոնական այդ խնդիրներն ուսումնասիրելու ու ներկայացնելու համար առանձնակի կարևորություն են ներկայացնում վիպական այն հերոսները, որոնք իրենց գործունեությամբ, պահվածքով հնարավորություն են տալիս բացահայտելու դավանանքով քրիստոնյա ու մուսուլման ժողովուրդների փոխհարաբերությունները՝ ցույց տալով, թե ինչպես է դավանանքի գործունը շատ հաճախ ազդում հերոսներից յուրաքանչյուրի սոցիալական կարգավիճակի ու ճակատագրի վրա:

Չնայած այն հանգամանքին, որ կրոնական թեմատիկան վառ արտահայտված չէ վեպում, այն ներկա է սյուժեի ամբողջ ընթացքում՝ կատարելով վեպի գործողությունները միմյանց փոխկապակցող շղթայի դեր: Վեպում տեղի ունեցող գործողությունները հենց սկզբից կառուցվում են քրիստոնեության ու մուսուլմանության բախման հիման վրա: Հեղինակը ցույց է տալիս, որ գլխավոր հերոսի՝ անգլիացի լորդ Օսմոնի արկածների հիմքում ընկած է հենց նույն կրոնական խնդիրը: Վերջինս հայտնվում է մի բարդ իրավիճկում՝ սիրահարվելով դավանանքով մուսուլման Այեշային, և քանի որ նրանց միությունը հնարավոր չէ տարբեր դավանանքների պատկանելու պատճառով, հերոսները ստիպ-

ված են լինում անցնել մի շարք փորձությունների միջով, որպեսզի հասնեն այդքան բաղձալի միությանը: Եվ հենց այստեղից էլ սկսվում են Օսմանյի խնդիրներն ու արկածները, որտեղ դավանանքը միշտ էլ ունենում է իր ուրույն դերը: Վեպի սյուժեի այս գլխավոր գործողությունների կողքին հեղինակը ներկայացնում է նաև տարբեր դրվագներ ու պատմություններ, որոնց հերոսները թուրքիայում բնակվող հասարակ մարդիկ են՝ առևտրականներ, արհեստավորներ, բժիշկներ, որոնց խնդիրներից շատերը նույնպես պայմանավորված են դավանանքով: Մի դրվագում հեղինակը ներկայացնում է, թե ինչպես է մի հայ առևտրական, ով դատարանում է հայտնվել թուրք խաբեբայի պատճառով, կորցնում իր ունեցվածքի մի մասը միայն այն պատճառով, որ դատարանում առավելություն են տալիս մուսուլմանություն դավանող թուրքին և անտեսում քրիստոնյա հային՝ հաշվի չառնելով վերջինիս իրավացի լինելը⁵:

Մի այլ դրվագում Մորիերը ցույց է տալիս, թե ինչպես է մուսուլման Մուստաֆան հրամաններ արձակում հայ Պողոսի տանը, և ինչպես են քրիստոնյա տանտերերը հնազանդորեն կատարում մուսուլման Մուստաֆայի հրամանները՝ չցանկանալով դրսևորել անհնազանդություն և վախենալով հետևանքներից: Ահա, թե ինչպես է հեղինակը ներկայացնում Մուստաֆայի վերաբերմունքը քրիստոնյա հայերի նկատմամբ. «Իսկական մուսուլման լինելով՝ նա, հայտնվելով քրիստոնյաների միջավայրում, նմանվում է աքլորի՝ հավերի մեջ: Նա իրեն շատ մեծամիտ և լկտի է պահում: Հայերի տանն իրեն զգում է այնպես, ինչպես իր սեփական տանը, հրամաններ է արձակում ու կարգադրություններ տալիս տանտիրոջը»⁶: Նույնպիսի վարքագիծ ունի նաև Կարսի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը՝ Սուլեյման աղան, ով «քրիստոնյաների հետ շների նման է վարվում»⁷:

Այսպիսի հատվածները վեպում քիչ չեն, և նրանցից բոլորում Մորիերը շատ լավ ներկայացրել է մուսուլմանների անհանդուրժողական վերաբերմունքը այլադավանների նկատմամբ:

Մորիերը վեպում առկա կրոնական խնդիրները ներկայացրել է նաև տարբեր դավանանքի պատկանող հերոսների համեմատության, զուգադրման ու հակադրման միջոցով: Դրա վառ դրսևորումն է վեպի

⁵ Morier J., Ayesha, the maid of Kars, Paris, 1834, pp. 323-333.

⁶ Նույն տեղում, էջ 61:

⁷ Նույն տեղում:

այն դրվագը, որտեղ հեղինակը, ցանկանալով արտահայտել քրիստոնյաների ու մուսուլմանների տարբերությունը, ներկայացնում է մուսուլմանների հավատն ու վստահությունը ճակատագրի նկատմամբ. «Տարբերությունը Օսմոնյի և մահմեդականների զգացմունքների միջև, որոնք միասին փրկվել էին նավաբեկությունից, էականորեն տարբեր էին: Օսմոնյը, ով զգում ու խոստովանում էր ճակատագրի մեծ դերը, որը բարեբախտաբար հատել էր նրա և վաղաժամ մահվան միջև, իր շնորհակալությունը արտահայտեց սրտից բխող աղոթքի միջոցով, իսկ մահմեդականները արձագանքեցին լուռ ու սառը համաձայնությամբ ճակատագրի նկատմամբ»⁸:

Հեղինակը, համեմատելով քրիստոնյա ու մուսուլման հերոսներին, արտահայտում է այն միտքը, որ անզլիացի լորդին (քրիստոնեության ներկայացուցչին) ավելի բնորոշ է կրոնական հանդուրժողականությունը. «Աստված պահպանի, որ ես արհամարհեմ ինչ-որ մեկին կամ համարձակվեմ վիրավորել այնպիսի սուրբ զգացմունքը, ինչպիսին կրոնն է: Մենք միևնույն Աստծո զավակները չենք»⁹: Մեր կարծիքով այս օրինակում դրսևորվում է հենց հեղինակի հանդուրժողական վերաբերմունքը կրոնի նկատմամբ: Նա չի ընդունում այն գաղափարը, որ մի կրոնը գերակա է համարվում մյուսից: Կրոնական վեճերի մեջ մեղավոր են ոչ թե կրոնական դավանաբանությունները, այլ դրանց անմիջական կրողները: Ըստ հեղինակի՝ սահմանափակությունն ու մոլեռանդությունը բնորոշ են անգրագետ, կոպիտ, մշակութային ցածր մակարդակով մարդկանց (Մուստաֆա, Մուլեյման աղա, Քարա բեյ):

Սակայն ինչքան էլ Մորիերը փորձում է հանդուրժողական վերաբերմունք ցուցաբերել կրոնների նկատմամբ, միևնույն է, նա իր նախապատվությունը տալիս է քրիստոնեությանը, ինչը երևում է վեպի մի քանի դրվագներից: Վեպի հերոսուհիներից մեկը՝ Այեշայի խորթ մայր Չաբբետան, ազգությամբ հույն կին է, ով ժամանակին եղել է քրիստոնյա, բայց Մուլեյման աղայի հետ ամուսնանալիս կրոնափոխ է եղել ու դարձել մուսուլման: Սյուժեի զարգացմանը զուգահեռ Չաբետտան բազմիցս ցանկություն է հայտնում վերադառնալ իր նախկին կրոնին, բայց իր այդ ցանկությունը իրականանում է միայն վեպի վերջում, երբ հերոսուհին մահվանից առաջ իր մոտ է կանչում քրիստոնյա հոգևորականի և կրոնափոխ լինում. «Նա իմ քույրն է, - ասաց հոգևոր-

⁸ Morier J., նշվ. աշխ., էջ 30-31:

⁹ Նույն տեղում, էջ 130:

բականք, - ես նրան գտել եմ մի շատ զարմանալի և տարօրինակ միջադեպի շնորհիվ: Նա անհետացել էր շատ տարիներ առաջ՝ հրաժարվելով իր կրոնից և ընդունելով մահմեդականություն: Խղճի խայթը թույլ չէր տվել նրան մահանալ այդպես, և նա կանչել էր ինձ՝ իր իրական կրոնի հոգևորականներից մեկին, որպեսզի մեղքերի թողություն խնդրի և վերադառնա իր կրոնին: Նա ցանկանում էր մահանալ դավանելով այն կրոնը, որը դավանել էր ծնվելուց ի վեր»¹⁰: Հետաքրքիր է, որ այդ հոգևորականը Չաբետտայի վաղուց կորցրած եղբայրն է, միգուցե, եղբորը գտնելու միջոցով հեղինակը ցանկացել է պարզև մատուցել քրիստոնեությունը վերընդունած Չաբետտային: Վեպի վերջում քրիստոնյա է դառնում նաև գլխավոր հերոսուհի Այեշան: Վերջինս, պարզելով, որ անգլիական ազնվական ընտանիքի դուստրն է, ում մանուկ հասակում գողացել ու կրոնափոխ են արել, վերընդունում է քրիստոնեությունն ու իր կյանքը շարունակում որպես քրիստոնյա:

Հեղինակի այսպիսի մոտեցումը քրիստոնեությանը պայմանավորված է եղել նաև ժամանակի ու Բրիտանական կայսրության պահանջներով: Ընդհանրապես Մորիերի վեպում կրոնական հարցերին անդրադառնալը որոշ չափով պայմանավորված է եղել նաև 19-րդ դարում քրիստոնյա միսիոներների ծավալած գործունեությամբ: Բրիտանական կայսրության էքսպանսիան հետապնդում էր ոչ միայն քաղաքական, տնտեսական, տարածքային, այլ նաև բարոյական նպատակներ՝ տարածելով կառավարման լիբերալ-ժողովրդավարական ձևը և լայնացնելով քրիստոնեության քարոզչության հնարավորությունները¹¹: Այս պնդման վառ օրինակ է վեպի այն դրվագը, որտեղ Օսմոնը փորձում է Մուստաֆային բացատրել քրիստոնեության պատգամներից մեկը. «Վարվիր դիմացինիդ հետ այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեն»: Սակայն անհավատ Մուստաֆան ոչ մի կերպ չի ընդունում այս գաղափարախոսությունը և պնդում է իրենը. «Ալլահն ավելի լավ գիտի: Ճակատագիրն այն է, ինչին մենք պետք է հավատանք և հետևենք»¹²:

Ահա այսպես է Մորիերը տեսել ու «Այեշան՝ Կարսի հարձը» վեպում պատկերել 19-րդ դարի օսմանյան Թուրքիան՝ կրոնական խնդիրներով, հակադրություններով, անհանդուրժողականության

¹⁰ Նույն տեղում, էջ 398-399:

¹¹ Исракова Л. И., նշվ. աշխ., էջ 116:

¹² Morier J., նշվ. աշխ., էջ 30-31:

ըրևորումներով ու բախումներով, որտեղ դավանանքի գործունը շատ հաճախ ազդում է հերոսներից շատերի սոցիալական կարգավիճակի ու ճակատագրի վրա:

AVAGYAN ANZHELA

(YSU)

RELIGIOUS PERCEPTIONS IN "AYESHA, THE MAID OF KARS"

BY J. J. MORIER

"Ayesha, The Maid of Kars", a novel written in 1841 by famous English writer, traveler and diplomat J.J. Morier, gives a clear picture of the domestic policy, the multicultural relationship and the religious problems of 19th century Ottoman Turkey. While writing the novel, the author concentrated on religious issues. In order to address those issues he gave particular importance to those characters, which allow to reveal the relationship between the Christians and the Muslims through certain behavior or activities. He presented how often religion affected the fate and the social status of each and every character.

ԿԱՐԱՊՈՂՈՍՅԱՆ ՍՈՆԱ
(ԵՊԷ)

ՔՈՒՐՔԱԿԱՆ ՊՈԵՏԻԿ ԿԻՆՈՅԻ ՖԵՆՈՄԵՆԸ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՈՒՄԸ ՆՈՒՐԻ ԲԻԼԳԵ ՋԵՅԼԱՆԻ
ՖԻԼՄԵՐՈՒՄ

20-րդ դարի երկրորդ կեսը շրջադարձային եղավ համաշխարհային կինոպատմության համար: Մի շարք երկրներում, ինչպիսիք էին Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիան, Իրանը, Չեխիան, Ճապոնիան, Ամերիկան, Բրազիլիան, սկիզբ առավ կինոյի «նոր ալիքը», ինչը բնութագրվում էր մի քանի հիմնական առանձնահատկություններով. Ռեժիսորները, որոնց մեծ մասը բավականին երիտասարդ էր, նոր մեթոդներ, նոր պատմություններ էին փորձում ներկայացնել հասարակությանը՝ պայքարելով ամրացած կարծրատիպերի դեմ, գլխավոր դերերում նկարահանում էին չճանաչված, երբեմն նաև դերասանական կրթություն չունեցող անձանց, ֆիլմերի նկարահանման համար օգտագործում էին սահմանափակ բյուջե, ընդ որում այս ֆիլմերը կոմերցիոն նպատակներ չէին հետապնդում, այլ նախատեսված էին հասարակության մի նեղ շրջանակի համար: Այս ֆիլմերը, որոնք հայտնի են որպես հեղինակային կամ արտհատուսային, կոչվում են նաև պոետիկ:

Հարկ է նշել, որ թուրք հայտնի կինոգետ Ասուման Սուները գրում է, որ թուրքական «նոր ալիք»-ի առաջին դրսևորումները նկատվի էին դեռևս 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո, երբ թուրք ռեժիսորները բացահայտորեն ենթարկվում էին իտալական նեոռեալիզմի ազդեցությանը, զուգահեռներ անցկացնելով Ադնան Մենդերեսի և Սուսուլինիի վարչակարգերի անկման միջև¹: Այս ֆիլմերը հիմնականում ունեին քաղաքական ձախակողմյան ուղղվածություն, խոսում էին հասարակությանն անհանգստացնող սոցիալական խնդիրների մասին: Ժամանակաշրջանի լավագույն ներկայացուցիչներից էին Հալիթ Ռեֆիղը, Մեթին Էրքսանը (վերջինիս «Չոր ամառ» («Susuz Yaz») ֆիլմը 1963 թ.

¹ Daldal A., The Impact of Neo-Realism in Turkish Intellectual Cinema: The Cases of Yılmaz Güney and Nuri Bilge Ceylan, Academic Journal of Interdisciplinary Studies, Vol. 2, No. 9, MCSER Publishing- Rome, Italy, October 2013, p. 184.

Բեռլինի կինոփառատոնում արժանացավ Ոսկե Արջի), Էրթեմ Գյորեչը, Դուլգու Սադրոզլուն:

Արդեն 1980 թ. հեղաշրջումը և սկիզբ առած լայնածավալ ճնշումները բացասական ազդեցություն ունեցան թուրքական կինոյի զարգացման վրա, չնայած 1982 թ. Յըլմազ Գյունեյի «Ճանապարհ» («Yol») ֆիլմը, որը կրում էր ժամանակին Թուրքիայում լայն տարածում ստացած բանտային թեմատիկայի ազդեցությունը, Կաննում գլխավոր մրցանակ ստացավ և դարձավ առաջին թուրքական ֆիլմը, որ համաշխարհային ճանաչում ձեռք բերեց: Այնուամենայնիվ, հաջորդող տասը տարիներին երկրում նկարահանվող ֆիլմերի քանակը կտրուկ նվազեց, ինչը վերաբերում էր անգամ «արձակ» կինոյին:

Համաձայն որոշ կինոքննադատների, թուրքական կինեմատոգրաֆի «նոր ալիքը» սկսել է 1990-ական թթ. և շարունակում է զարգանալ: Ալիքի ռեժիսորներից ուշադրության են արժանի Նուրի Բիլգե Ջեյլանը, Ջեքի Դեմիրքուզը, Մեմիհ Քափլանսոլուն, Յեշիմ Ուստաօղլուն, Ռեհա Էրդեմը, Դերվիշ Ջաիմը, որոնց ֆիլմերը ներկայացվել են մի շարք միջազգային նշանավոր կինոփառատոնների, ինչպիսիք են Կաննի, Բեռլինի, Վենետիկի, Տորոնտոյի փառատոները և ստացել տարբեր մրցանակներ: Մինչդեռ թուրքական նոր կինոյի առաջին նմուշն է համարվում Դերվիշ Ջաիմի «Մալտո դագաղում» («Tabutta rövasata», 1996) ֆիլմը, որը մի շարք նշանավոր մրցանակների է արժանացել թե՛ Թուրքիայում, և թե՛ երկրից դուրս:

Խոսելով թուրքական «նոր կինոյի» առանձնահատկությունների մասին՝ պետք է անդրադարձ կատարել դրան բնորոշ մի քանի կետերի: Նախ կան կոնկրետ ուղղություններ, թեմատիկաներ, որոնց շրջանակներում նկարահանվում են ֆիլմերը: Դրանցից է հայրենի արմատներին վերադառնալու թեմատիկան, որն իր համարժեքն ունի նաև գերմանական կինոպատմության մեջ և կոչվում է «Heimatfilme» (գերմաներենից թարգմանաբար՝ «Ծննդավայրի կինո»)²: Այս թեմատիկան կրող ֆիլմերը հիմնականում ներկայացնում են հերոսների, որոնք հեռացել են իրենց հայրենի գյուղից, գավառից, բայց այնուամենայնիվ ծննդավայրը կանչում է նրանց, և, ի վերջո, նրանք վերադառնում են: Այս ուղղությանն են պատկանում Նուրի Բիլգե Ջեյլանի վաղ ֆիլմերը՝ «Բոժոժ» («Koza», 1995), «Գյուղաքաղաք» («Kasaba», 1997), «Մայիսյան նեղություն»

² Kaim A., New Turkish Cinema – Some Remarks on the Homesickness of the Turkish Soul, CINEJ Cinema Journal, Special Issue: 1 (2011), University of Pittsburgh, p. 100.

(«Mayıs Sıkıntısı», 1999), «Հեռավորություն» («Uzak», 2002), Մեմիհ Կափ-լանտղուի եռագրությունը՝ «Չու», «Կաթ», «Մեղր» («Yumurta» (2007), «Süt» (2008), «Bal» (2010)) և այլն: Մեկ այլ տարածված ուղղություն է սոցիալական ռեալիզմը, որում հատուկ տեղ է առանձնացվում Թուրքիայի ազգային փոքրամասնությունների համար: Այս շարքում հարկ ենք համարում նշել Ռեհա Էրդեմի «Ջին» («Jin», 2013), Օրհան Էսքիբյոյի «Հորս ձայնը» («Babamın sesi», 2012) ֆիլմերը: Ֆիլմերի քաղաքական ուղղվածությունը, որը լայն տարածում է ստացել վերջին մի քանի տարիների ընթացքում, կարելի է ավելի լավ ընկալել Օրհան Էսքիբյոյի հարցազրույցը կարդալուց հետո: «Ես ցանկանում եմ ավելին ցույց տալ, քան մյուսները, ցույց տալ իրական Թուրքիան: Մեզ միշտ ասել են, որ Թուրքիան թշնամիներ ունի, բայց ի՞նչ թշնամի, ո՞վ է այդ թշնամին: Քայլ առ քայլ մենք նոր ոճեր ու նոր կարծիքներ կտեսնենք ֆիլմերում»³:

Թուրքական «նոր կինոյին» բնորոշ է նաև կնոջ լռությունը: Սու-ները թուրքական «նոր ալիքն» անվանում է տղամարդկային և շեշտում «կնոջ բացակայությունը» որպես հիմնական հատկանիշ⁴: Ընդ որում սա կապված չէ միայն կին ռեժիսորների բացակայությամբ, այլ արտա-հայտվում է ֆիլմերում կին հերոսների ընտրությամբ: Ուղղության ֆիլմերի մեծամասնության հերոսները տղամարդիկ են, ֆիլմը պատ-մում է տղամարդկանց խնդիրների, հոգու մասին, իսկ եթե որևէ ֆիլմում էլ կան կին հերոսներ, ապա նրանք կամ ինչ- ինչ պատճառներով լռում են, կամ տղամարդկանց դժբախտության պատճառն են դառնում: Այս-պիսինն է, օրինակ՝ Բիլգե Ջելլանի «Երեք կապիկներ» («Üç Maymun», 2008) ֆիլմը:

Թուրքական արտահուսային կինոյի ֆենոմենին բնորոշ են վի-զուալ պոեզիան, բնատեսարանների երկարատև կադրերը, դանդաղ տեղի ունեցող գործողությունները, կարճ երկխոսությունները, երբեմն դրանց բացակայությունը, իսկ այս ամենի հետևում արժարժվում են թուրք հասարակության սոցիալական խնդիրները:

Վերոնշյալ ռեժիսորների շարքում ուրույն տեղ է զբաղում Նուրի Բիլգե Ջելլանը: Ջելլանը ծնվել է 1959 թ. Ստամբուլում, բայց մանկու-թյունն անցկացրել է Ենիջեում, իսկ առաջին նկարահանման փորձը

³ Turkey's art house film-makers hope for further success, <http://www.bbc.com/news/world-europe-20174903>

⁴ Çakırlar C., Güçlü Ö., Gender, Family and Home(Land) in Contemporary Turkish Cinema: A Comparative Analysis of Films by Nuri Bilge Ceylan, Reha Erdem and Ümit Ünal, pdf, p. 168.

կատարել է բավականին ուշ: Նրա առաջին ֆիլմը՝ «Բոժոժ» («Koza», 1995) առաջին անգամ թուրքական կինոպատմության մեջ առաջադրվեց Կաննի փառատոնում որպես լավագույն կարճամետրաժ: «Հեռավորություն» («Uzak», 2002) և «Մի անգամ Անատոլիայում» («Bir Zamanlar Anadolu'da», 2011) ֆիլմերը Կաննում ստացել են Grand Prize, «Երեք կապիկներ» («Üç Maymun», 2008) ֆիլմի համար Բիլգե Ջեյլանը ճանաչվել է լավագույն ռեժիսոր Կաննում, իսկ «Չմեռային քունը» («Kış Uykusu», 2014) նույն փառատոնում արժանացել է Palme d'Or-ի («Ոսկե արմավենի»): Վերջինիս ֆիլմերը բարձր գնահատականների են արժանացել նաև այլ միջազգային փառատոներում, Ջեյլանը եղել է նաև Երևանում «Ոսկե ծիրան» 8-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակներում:

Հարկ ենք համարում ավելի մանրամասն անդրադարձ կատարել Ջեյլանի երկու ֆիլմերին՝ «Հեռավորության»-ը և «Չմեռային քուն»-ին:

«Հեռավորություն» ֆիլմը գյուղական եռագրության երրորդ և եզրափակիչ մասն է կազմում («Գյուղաքաղաք» 1997, «Մայիսյան նեղություն», 1999) և ունի ինքնակենսագրական բնույթ⁵ (գլխավոր հերոսի տան պատերին կախված են Բիլգե Ջեյլանի վաղ աշխատանքներն ու առաջին ֆիլմի պաստառը): Ֆիլմը պատմում է երկու զարմիկների մասին, որոնցից ավագը՝ Մահմուդը, լուսանկարիչ է, երկար տարիներ ապրում է Ստամբուլում, իսկ Յուսուֆը, ով ավելի երիտասարդ է, եկել է նրանց հայրենի գյուղից՝ աշխատանք գտնելու և ժամանակավորապես բնակվում է Մահմուդի տանը:

Հանձին Մահմուդի ռեժիսորը ցանկանում է ցույց տալ մի մարդու, ով կորցրել է իր իդեալները, այլևս ոչնչի չի հավատում և հեռու է վանում իրենից բոլոր նրանց, ովքեր իր կողքին են: Նա չի պատասխանում մոր և քրոջ զանգերին, առանց մտածելու վիրավորում է Յուսուֆին, չի ցանկանում ընդունել իր սխալները: Այն դրվագում, որտեղ Մահմուդը ակնարկում է, որ Յուսուֆն է գողացել իր արժաթյա ժամացույցը, քայց ընդամենը մեկ վայրկյան անց գտնում է այն տուփում, նա չի տեղեկացնում երիտասարդին, որ գտել է ժամացույցը, որպեսզի ստիպի նրան մտածել, թե զարմիկը չի վստահում իրեն: Վերջինս ցանկանում է ազատվել Յուսուֆից, քանի որ երիտասարդը հիշեցնում է նրան իր անցյալը, այն անցյալը, որ ինքը ցանկանում է մոռանալ: Մահմուդն

⁵ White R., Nuri Bilge Ceylan: An Introduction and Interview, Film Quarterly, Vol. 65, No. 2, University of California Press, Winter 2011, p. 64.

անգամ հրաժարվում է ծխել Յուսուֆի ծխախոտից, դա անվանելով աղբ, չնայած հավանաբար դա այն ծխախոտն է, որ նա ծխել է, երբ երիտասարդ է եղել: Եվ միայն ֆիլմի վերջին դրվագում, երբ արդեն Յուսուֆը հեռացել է, նա վերցնում է երիտասարդի թողած ծխախոտը՝ մի քանի րոպեով վերադառնալով անցյալ:

Մահմուդի իդեալների, կյանքի իմաստի կորստի մասին հասկանում ենք կարճատև գրույցների ժամանակ, երբ նա ասում է, որ լուսանկարչությունը մահացել է, իսկ մեկ այլ դրվագում, երբ նա որոշում է գյուղական հրաշալի տեսարան նկարել, միանգամից մտքափոխվում է քանի որ ըստ նրա, դա ոչ ոքի պետք չէ: Նույն գաղափարն է արտահայտում նաև Ջեյլանը, երբ փորձում է մեկնաբանել իր ֆիլմի ամենաաղմկահարույց տեսարանը, երբ Մահմուդը դիտում է Տարկովսկու «Ստալկեր» ֆիլմը, իսկ երբ գարմիկը գնում է քնելու, նա անջատում է Տարկովսկուն և միացնում ֆիլմ մեծահասակների համար: Նուրին ասում է, որ այս տեսարանի բանալին պետք է փնտրել նախորդ կադրում, երբ հերոսը գրուցում է իր ընկերների հետ: Ընկերներից մեկն հարցնում է, թե ո՞ր են անհետացել Մահմուդի իդեալները, չէ՞ որ նա երագում էր Տարկովսկու նման ֆիլմեր նկարել: Եվ նա, գալով տուն, միացնում է ֆիլմը, որպեսզի վերագտնի իր իդեալները, սակայն ի վերջո անջատում է, քանի որ առանց դրանց ավելի հեշտ է՝:

Ջեյլանի ֆիլմում հատուկ տեղ է հատկացված նաև Ստամբուլին: Ռեժիսորը, ով մասնագիտությամբ լուսանկարիչ է, ներկայացնում է քաղաքը իր ողջ գեղեցկությամբ, բայց միևնույն ժամանակ այն փորձում է համադրել գլխավոր հերոսի հոգեվիճակի հետ: Մահմուդի Ստամբուլը դատարկ է, մոխրագույն ու գորշ, իսկ անվերջ տեղացող ձյունն անգամ հանդիսատեսին է հասցնում հուսահատության եզրին: «Հեռավորություն»-ը նաև հարուստ է սիմվոլներով, օրինակ՝ դանդաղ ընկնող լուսամփոփը, գիշերային փոքրիկ լույսը, խոհանոցի մուկը, որին Մահմուդը ցանկանում է բռնել, բայց չի համարձակվում սպանել:

Ջեյլանի ֆիլմաշարում առանձնահատուկ տեղ ունի «Չմեռային քունը», որը հիմնված է չեխովյան երկու կարճ պատմվածքների վրա՝ «Լավ մարդիկ» և «Կինը»: Անձամբ ռեժիսորը ժխտում է, որ ֆիլմը պատմվածքների էկրանավորում է, սակայն շեշտում է, որ Չեխովի

⁶ Guardian interviews at the BFI, Nuri Bilge Ceylan,

<http://www.theguardian.com/film/2009/feb/06/nuri-bilge-ceylan-interview-transcript>

ստեղծագործություններն այնչափ լայն շրջանակներ են ընդգրկում, որ այուժետային գծերի համընկնումները զարմանալի չեն⁷:

Ֆիլմը պատմում է նախկինում թատրոնի դերասան, իսկ այժմ Կապադովկիայում հյուրանոցի տնօրեն Այդընի մասին, ով ապրում է իր երիտասարդ կնոջ՝ Նիհալի և ամուսնալուծված քրոջ՝ Նեջրայի հետ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի գլխավոր դերակատարի ընտրությունը, քանի որ Այդընին մարմնավորում է Հալուք Բիլգիները, ով երկար տարիներ խաղացել է լոնդոնյան առաջատար թատրոններում:

Ջեյլանը վարպետորեն ցույց է տալիս, թե ինչպես չասված խոսքերի և չբացահայտված զգացմունքների հետևանքով մարդիկ սկսում են իրար չհասկանալ, անհետանում են զգացմունքները: Սա է Նիհալի և Այդընի լարված հարաբերությունների գլխավոր պատճառը: Եթե «Հեռավորության» հերոսը՝ Մահմուդը, կորցրել էր իր բոլոր իդեալները, ապա Այդընին մնացել են միայն իդեալներ, կամ էլ դրանց անունները: «Դու օգտագործում ես քո վեհ գաղափարները, բարձր խոսքերը, երբ ցանկանում ես նվաստացնել մյուսներին, քո իդեալները քեզ ստիպում են ասել մարդկանց», - հերթական վեճերից մեկի ժամանակ ասում է Նիհալը: Այդընը իր ինքնամեծարմամբ, էգոիզմով, հպարտությամբ ու սին խոսքերով զբաղեցրել է ողջ տարածքը, և երբ Նիհալը փորձում է ինքնուրույն մի բան անել, Այդընը որոշում է այստեղ ևս միջամտել: Ամուսնու հպարտությունը թույլ չի տալիս ասել, որ ինքը այս ամենն անում է միայն Նիհալի կողքին լինելու համար, իսկ իր բոլոր զգացմունքները՝ սերը, քնքշանքը, խորագույն ցավը, թաքցնում է թատերական քմծիծաղի ետևում՝ այսպիսով էլ ավելի խորացնելով իրենց միջի անդունդը:

«Հեռավորության» և «Ձմեռային քուն»-ի միջև կան բազում նմանություններ: Երկու ֆիլմի գլխավոր հերոսներն էլ փորձում են պատասպարվել աշխարհից՝ Մահմուդն անտարբերության, իսկ Այդընը գեղեցիկ գաղափարների հետևում: Նրանց երկուսի հպարտությունը թույլ չի տալիս ներողություն խնդրել իրենց կանանցից և ասել, որ սիրում են, երկուսն էլ չեն ցանկանում պատասխանատվությունն իրենց վրա վերցնել՝ սկսած խոհանոցի մկանը սպանելուց («Հեռավորություն»),

⁷ Winter Sleep review – sharply observed tragicomedy,

<http://www.theguardian.com/film/2014/nov/20/winter-sleep-review-nuri-bilge-ceylan>

վերջացրած վարձը չվճարող կենվորներին տնից դուրս հանելով: Եթե վախենալով անցյալից, Մահմուդը միայնակ Յուսուֆի ծխախոտն է ծխում, ապա Այդընը, վախենալով Նիհալին բաց թողնելուց և միայնությունից, ազատ է արձակում նոր գնված վայրի նժույգին:

Տաղանդավոր Ջեյլանը ձմեռային քնի մթնոլորտը ավելի արտահայտիչ է դարձնում Կասպադովկիայի լեռների, ձյան, անմարդաբնակ լանդշաֆտների կադրերի միջոցով, իսկ պատկերների սառը գույները և Շուբերտի անմահ երաժշտությունը ստիպում են ավելի խորը ընկալել մարդկային հարաբերությունների բարդությունը, դրանց առաջացրած անտանելի ցավն ու կսկիծը, մարդկանց միջև առաջացող անդունդը:

Վերևում նշված բոլոր ռեժիսորներից Բիլգե Ջեյլանը, նախ և առաջ, տարբերվում է նրանով, որ երբեք չի անդրադառնում քաղաքական խնդիրներին, իսկ սոցիալական խնդիրները, որոնք մյուսների սցենարների հիմնաքարն են հանդիսանում, Ջեյլանի ֆիլմերում ծառայում են որպես ֆոն: Նուրին, ով միշտ շեշտում է, որ ինքը կրում է ճապոնացի ռեժիսոր Յասուջիրո Օձուի ազդեցությունը, մարդկային հարաբերությունների, նրանց զգացմունքների արտահայտմամբ ավելի նման է իտալական նեոռեալիզմի հանրահայտ ռեժիսոր Միքելանջելո Անտոնիոնիի ոճին, իսկ մյուս կողմից չեխոսլվյան ոգեշնչանքի օրինակները ֆիլմում բազմազան են: Մի անգամ, երբ Անտոնիոնիին հարցրին արդյո՞ք նրա ֆիլմերը մարդկային զգացմունքների ճգնաժամի մասին են, նա պատասխանեց. «Ո՛չ, դրանց բացակայության մասին են»: Մինչդեռ Չեխոսլվի հերոսները միշտ ուժ են գտնում իրենց մեջ թեկուզ վերջում ասել այն, ինչ իրենց այդքան երկար տանջել է: Ջեյլանի հերոսները գտնվում են այս երկու հսկաների կերտած կերպարների մեջտեղում, բայց զլորվում են դեպի անտարբերություն և դատարկության ճահճուտ: Այնուամենայնիվ, Ջեյլանի ֆիլմի վերնագիրը լավատեսության նշույլներ է պարունակում. ձմեռային քուն, որն ավարտվելու է, և մարդիկ վերգտնելու են իրենց իդեալները, զգացմունքները և սերը:

KARAPOGHOSYAN SONA

(YSU)

THE PHENOMENON OF TURKISH POETIC MOVIES:

UNIVERSAL PROBLEMS IN FILMS BY NURI BILGE CEYLAN

The second half of 20th century was turning point in history of world cinematography. There was a start of "New Wave" of cinema in countries

such as France, Italy, Germany, Iran, Japan, Czech Republic, America and Brazil. According to famous Turkish film critic Asuman Suner, first "new movies" in Turkish cinematography appeared after the military coup in 1960 and the directors were greatly influenced by Italian neo-realism. Meanwhile, other film critics argue that the start of Turkish New Cinematography should be referred to 1990s and as most influential directors of movement they mention Nuri Bilge Ceylan, Zeki Demirkuz, Semih Kaplanoğlu, Yeşim Ustaoglu, Reha Erdem, Derviş Zaim, whose films got different prizes in Cannes, Berlin, Venice and Toronto film festivals. Within the directors mentioned above, special attention should be paid to Nuri Bilge Ceylan. His first film «Cocoon» («Koza», 1995) was the first Turkish short movie to win in Cannes Festival. «Distance» («Uzak», 2002) and «Once upon a time in Anatolia» («Bir Zamanlar Anadolu'da», 2011) got Grand Prize in Cannes, as well. Ceylan's last movie «Winter sleep» («Kış Uykusu», 2014) won Palme d'Or during the Cannes festival.

ՄՈՒՆԹԱՐ ԱՌԻԵՋՈՎԻ «ԵՆԼԻԿ ԵՎ ՔԵԲԵՔ» ԵՎ «ՔԱՂԱԳՅՈԶ»
ՊԻԵՍՆԵՐԻ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մ. Աուեզովը (1897-1961 թթ.) դազախ գրականության ամենավառ ներկայացուցիչներից է, ում ստեղծագործական ուղին նշանավորվել է վերելքներով ու վայրէջքներով: Ինչպես հայտնի է, Աուեզովը դազախ գրականություն է բերում և զարգացման նոր աստիճանի է հասցնում արձակի մի քանի ժանրեր՝ պատմվածք, վիպակ, վեպ: Նա արդարացիորեն համարվում է նաև դազախ դրամատուրգիայի հայրը, նրա կողմից մշակված և 1917թ. «բեմադրված» «Ենլիկ և Քեբեք» ստեղծագործությունը համարվում է դազախական թատրոնի անդրանիկ ծնունդը¹: Ալմաթիում գործող Ղազախստանի ամենահին թատրոնն այսօր էլ կրում է Մուխթար Աուեզովի անունը:

Աուեզովը հեղինակել է մի շարք աշխատանքներ կապված դազախ դրամատուրգիայի պատմության, խնդիրների և մեթոդիկայի, գեղարվեստականության և ոճի մասին («Кызыл сұңкарлар» 1922, «Жалпы театр өнері мен казак театры» 1926, «Қазақстан мемлекеттік театры» 1928, «Казахская драматургия» 1933, «Жаксы пьеса-сапалы әдебиет белгісі» 1934, «Қазақстан көркем өнері» 1935, «Драматургияның заңы туралы кейбір ойлар» 1953)², ինչպես նաև երկու տասնյակից ավել պիեսներ, որոնք ինչպես ժողովրդական ստեղծագործությունների մշակված տարբերակներ են («Ենլիկ և Քեբեք», «Քարագյոզ», «Ղարա դըփչաղ Կորլանդը», «Խան Քենե»), այնպես էլ հեղինակային ստեղծագործություններ են³:

Աուեզովի մասնավորապես այս ստեղծագործությունների բազմակողմանի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն Աուեզով-

¹ История казахской литературы, I том, Академия Наук Казахской ССР, Алма-Ата, 1971, с. 432.

² Қазақ әдебиеттану ғылымының тарихы, I-том, Алматы 2008, 261.

³ Ժամանակակից դազախ գրականագետներն այս պիեսները համարում են սոցիալ-կենցաղային թեմատիկայով գրված ստեղծագործություն: Կիսելով նրանց մոտեցումը՝ մենք այս պիեսները համարում ենք սոցիալ-կենցաղային թեմատիկայով գրված ստեղծագործություններ, որտեղ առանցքային է ողբերգական սիրո թեման է: Այս մասին տե՛ս է. Ջրբաշյան, Գրականագիտության ներածություն, Երևան, 1996, էջ 75-77:

վի՛որպէս դրամատուրգի ստեղծագործական զարգացման տեսակետից, այլև հնարավորություն է հասկանալու առհասարակ դազախի դրամատուրգիայի զարգացման պատմությունն ու առանձնահատկությունները: Այս պիեսների քննությունը կարևորվում է նաև դազախական հարուստ ֆոլկլորի ուսումնասիրության տեսակետից, քանի որ նրանցում լավագույնս ներկայացվում են դազախ ժողովրդի կենցաղը և ավանդույթները:

Սույն հոդվածով մենք ուսումնասիրել ենք հեղինակի՝ սիրո թեմատիկայով գրված երկու՝ «Ենլիկ և Քեբեք» և «Քարագյոզ» պիեսների գլխավոր հերոսների ընդհանուր առանձնահատկությունները, վերլուծել կերպարներին վերաբերող հիմնական ընդհանրություններն ու տարբերությունները, ինչպէս նաև պիեսների ստեղծման պատմությունը և դրանց գեղարվեստական արժեքը:

Ընդհանրապէս, ողբերգական սիրո թեման դազախ ժողովրդի բանահյուսության ամենաառանցքային թեմաններից է: Եվ սա պատահական չէ. դազախ հասարակությունը դարեր շարունակ ապրել է զուտ ավանդույթներով և ամեն հարց, այդ թվում և ամուսնության հարցը, լուծվել է հենց սովորույթների ուժով: Արդյունքում իրականության մեջ անընդհատ հանդիպում էին երիտասարդներ, ովքեր բոլորն ունեին իրենց դժբախտ սիրո պատմությունը: Իսկ երգերի, պոեմների թեմա էին դառնում հենց այն երիտասարդները, ովքեր համարձակվում էին դեմ դուրս գալ պատրիարխիկ ավանդույթներին և հաճախ գերադասում էին պարզապէս մահանալ:

«Ենլիկ և Քեբեք» պիեսն առաջնաձիւնն էր ոչ միայն դազախական թատրոնի, այլև Աուեզովի ստեղծագործական կյանքի: Այս իմաստով կարևոր է հասկանալ հենց դրամատուրգիայի ժանրին դիմելու հեղինակի սուբյեկտիվ և օբյեկտիվ դրդապատճառները: Բանն այն է, որ մինչև այդ Աուեզովը փորձել էր իր ուժերը չափածոյի բնագավառում, սակայն որևէ հաջողության չէր հասել: Մյուս կողմից ռուսական մշակույթին արդեն ծանոթ Աուեզովը գրականության միջոցով փորձում էր դազախների շրջանում նոր հեղափոխական գաղափարները դարձնել հասանելի ավելի լայն ժողովրդական զանգվածներին, իսկ պիեսը դրա ամենահեշտ տարբերակն էր, որը կարելի էր նայել, լսել, հիշել և առանձնակի գրագիտություն չէր պահանջում: Սա է պատճառը, որ ոչ միայն Աուեզովը, այլ նաև նրա ժամանակակիցներից շատերը (Ս. Սեյֆուլին, Բ. Մայլին, Ա. Թոկմանբետով, Բ. Ուսպանով և այլք) ստեղծագործում էին հենց այս ժանրում, իսկ նրանց պիեսների հիմնական

առանձնահատկությունն անցյալի վերաբերյալ քննադատական մոտեցումն էր⁴:

Ինչպես արդեն նշվեց, դրամատուրգիայի ոլորտում Աուեզովի առաջին ստեղծագործությունը 1917թ. գրված «Ենլիկ և Քեբեք» պիեսն էր: Պիեսի առաջին և սկզբնական տարբերակը Աուեզովը մշակել էր 1917թ.՝ դեռևս 20 տարեկան հասակում: Հետագայում 40 տարվա մեջ նա հինգ անգամ փոփոխում է պիեսի սկզբնական տարբերակը, և 1952 թվականին այն վերջնական և ժամանակակից տեսքով բեմադրվում է Ղազախստանի ակադեմիական թատրոնում (1926թ.)⁵:

«Ենլիկ և Քեբեք» պիեսի անդրանիկ բեմադրման հետ կապված է մի հետաքրքիր պատմություն. «...Այս ժամանակ արդեն ղազախական տափաստանում ստեղծվել էին երիտասարդական ակումբներ: Աուլների երիտասարդները մասնակցում էին ակումբային կյանքին: Եվ պատահական չէ, որ ռուսական դպրոցում կրթություն ստացած Սուխթարը որոշում է յուրօրինակ նվեր անել ամուսնացողներին: Յոթ օրվա ընթացքում նա գրում է մի պիես, որի հիմքում ժողովրդական պատմությունն էր երկու սիրահարների՝ Ենլիկի և Քեբեքի մասին: Բայց աղջիկները հրաժարվում են խաղալ Ենլիկի կերպարը, և սիրահար աղջկա կերպարը ստիպված է լինում մարմնավորել յիգիթ Ահմեդը: Մասնակցող երիտասարդները գրել-կարդալ չգիտեին, որ իրենց դերերն անգիր անեին, և հեղինակը դառնում է նաև հուշարար: Թաքնվելով արկղի մեջ՝ նա հուշում էր «դերասաններին»: Բայց երիտասարդ աղջիկները, նկատելով թաքնված հուշարարին, սկսում են նրա խոսքերը փոփոխելով՝ շեղել բեմի վրա գտնվող երիտասարդներին: Արդյունքում «դերասանները» դիմում են իմպրովիզի՝ հորինելով համապատասխան այտրաններ:... Այս անսովոր դեպքի մասին գրեց նաև նահանգային թերթը»⁶: Իհարկե, պիեսի հետ կապված այս պատմությունը գուցե և չափազանցված է, սակայն սա վկայությունն է այն բանի, որ պիեսն առանցքային է ոչ միայն Աուեզովի ստեղծագործական կյանքի սկզբնական շրջանի, այլև ղազախական դրամատուրգիայի համար առհասարակ:

⁴ Шарипов А., Традиции и новаторство в казахской литературе, Алма-Ата, 1984, с. 19.

⁵ Лизунова Е., Дюсенбаев И., Мухтар Ауэзов к 60-летию, КазГосИзд Худ. Лит., Алма-Ата, 1952, с. 11.

⁶ Նույն տեղում, էջ 9:

«Ենլիկ և Քեբեք» պիեսի սյուժեի հիմքում 18-րդ դարի 80-ականներին Աուեգովի ծննդավայրում՝ Շընդըստաու կոչվող տարածքում, դազախների շրջանում երկու թշնամի թոբըկթը և նայման ցեղերի երիտասարդների ողբերգական սիրո պատմությունն է⁷: Երիտասարդների փոխադարձ սերը հանգեցնում է նրանց մահվան, որի պատճառը հետամնաց դազախական ավանդույթներն էին, քարացած մտածելակերպը և կղերաֆեոդալական հարաբերություններից բխող այլ երևույթները:

Պիեսի սկզբնական տարբերակում (գրված 1917 թ.) հեղինակի պիեսի առանցքը երկու սիրահարների դժբախտ սիրո պատկերումն էր, ինչը համադրված էր ժողովրդական ավանդույթների, դազախական աուլներին հատուկ պատկերների հետ, մինչդեռ վերջին մշակված տարբերակում հեղինակը փոխում է պիեսի շեշտադրումները. Հեղինակը սիրո մասնավոր դեպքը զարգացնում է՝ դարձնելով այն համամարդկային, համամարդկային ասվածի մեջ շեշտելով նաև ժողովրդի միասնության, աշխատող մարդկանց աշխարհայացքի փոփոխության և ի վերջո ապագա սերնդի երջանկության անհրաժեշտության մասին:

Գլխավոր հերոսուհին՝ առաջին Ենլիկը, խիզախ դազախուհիներից էր, ով, ընդդիմանալով ընդունված օրենքներին, համարձակություն է ունենում պարզապես փախչել թշնամի տոհմի ներկայացուցչի՝ սիրեցյալ Քեբեքի հետ: Պիեսում հեղինակը յուրաքանչյուր հերոսի տվել է որոշակի բնավորություն. առաջին արարում ընթերցողը տեսնում է իմաստուն Նիսան Աբիզին: Իրականում այս արարը ստեղծագործության նախերգանքն է. ըստ դրամատուրգ-հեղինակի՝ Աբիզը ինքը ժողովրդի ազնիվ ձգտումների մարմնավորումն է՝ օժտված դազախ ժողովրդին բնորոշ բոլոր գծերով: Ավելին, որոշ մասնագետներ համարում են, որ Աբիզի կեպարի միջոցով Աուեգովը ներկայացրել է իրեն և իր մտքերը⁸. գուցե կարելի է համաձայնել նման մոտեցման հետ, հատկապես հաշվի առնելով, որ պիեսը սկսվում և ավարտվում է Աբիզի խոսքերով, որոնք նաև չափազանց հոգեհարազատ էին հեղինակին:

Պիեսում ներկայացված բացասական կերպարներից ամենագլխավորը բատիր Եսենն է, ով նշանված էր Ենլիկի հետ: Նրա կերպարը բարդ է այնքանով, որ հեղինակը նրան օժտել ոչ միայն բացասական գծերով, այլ նաև խելացիությամբ և խիզախությամբ: Նա ազնիվ է իր

⁷ Кабдол З., Әуезов туралы, Алматы, 1997, 235 бет.

⁸ Նույն տեղում, էջ 237:

տեսակի և իր համոզումների մեջ ու անեախանձ ձևով է սիրում Քեբե-
քին: Այս հակասությունը դարձնում է Եսենի կերպարը հետաքրքիր,
համոզիչ ու կենսունակ:

Ամբողջ ողբերգության մեջ գործողությունների վրա ազդող միակ
կին կերպարը Ենլիկն է: Հենց նա է ողբերգության առանցքը՝ իր սիրով և
իր երազանքներով: Հատկանշական է, որ պիեսի գործողություններում
Ենլիկն ակտիվ մասնակցություն չի ունենում, չնայած որ պիեսի
գործողությունների ընթացքում նրա կերպարը ևս զարգանում է:

Այս ողբերգության մեջ Աուեգովի մյուս ձեռքբերումը Ժապալի
կերպարն է: Վերջինս ժողովրդի բարեսիրտ ու շիտակ գավակն է՝
ժողովրդին բնորոշ սուր հումորով, կենսուրախությամբ, պոետական
երևակայությամբ, որոնք այնքան հմտորեն է կարողացել ներկայացնել
դրամատուրգը:

Ստեղծագործության մեջ ժամանակի շունչը պահելու և պատկե-
րելու համար շատ են նաև ժամանակակից ֆեոդալների կերպարները՝
Քենգիրբայը, Քոբեյը, Եսպենբետը և այլք: Քենգիրբայը ներկայացվում է
որպես դաժան բայ, ով մինչև վերջ փորձում է ծուղակ լարել երի-
տասարդների դեմ և խոչընդոտել նրանց: Առաջին հայացքից նա թվում է
խեղճ այն առումով, որ ոչ ինքնակամ է կատարում նայման ցեղի ներ-
կայացուցիչների հրամանները և փորձում է փրկել իր ցեղակիցներին,
սակայն ծերուկ Աբիգի և Քեբեքի հետ առճակատումը բացահայտում է
նրա իրական էությունը: Որոշ հակասություններով է պատկերված
գործող անձերից բայ Քարամենդեն: Ստեղծագործությունը մինչև վերջ
չի բացահայտում նրա կերպարի իրական բնույթը, արդյոք նա իսկապես
ցավում էր իր ցեղակիցների համար, ովքեր կորցրել էին ապրուստի
բոլոր միջոցները, թե՛ նա չափազանց խորամանկ էր և պարզապես
ձևացնում էր՝ խորամանկորեն թաքցնելով իր վատ որակները:

«Ենլիկ և Քեբեք» պիեսի գեղարվեստականության մասին խոսելիս
նշենք, որ դրան նպաստել է հերոսների լեզուն: Յուրաքանչյուր հերոս
ունի խոսքի իր ուրույն ոճը՝ կախված այն բանից, թե հասարակության
որ շերտի ներկայացուցիչ է նա: Օրինակ՝ Եսենի խոսքը կարճ է ու
հստակ, կտրուկ, ինչպես նրա գործողություններն ու բնույթը, երազկոտ
ու սիրահար Քեբեքի խոսքը համեմված է սիրահար երիտասարդին բնո-
րոշ խոհափիլիսոփայական մտքերով, բայերի կերպարների մոտ խոսքը
կոշտ է ու դաժան, ինչպես ժողովրդի հանդեպ նրանց վերաբերմունքը և
այլն:

Ավելի ուշ գրված «Քարագյոգ» պիեսը (1929-1959 թթ.) ևս գրված է

ողբերգական սիրո թեմայով և նախորդի նման ենթարկվել է փոփոխությունների: Նշենք, որ առաջին անգամ բեմադրվելուց հետո «Քարագյոզ» պիեսն աղմուկ էր բարձրացրել. պատճառը պիեսի նախերգանքում ծերուկ Ասանի՝ դազախ ժողովրդի անցյալի ու ապագայի մասին մտորումներն էին՝ մի ձեռքին կոբիզ, մյուսում շվի բռնած: Ծերունու ձեռքի երաժշտական գործիքները հեղինակի կողմից ստեղծված սիմվոլներ էին. մեկը պատկերում էր դազախ ժողովրդի անցյալը, մյուսը՝ ապագան, որը կապված է ռուսական մշակույթի հետ: Սակայն այդ ժամանակ դեռ դազախ հասարակությունը պատրաստ չէր ընդունելու հեղինակի այս մոտեցումը, և երեք տարի անց Աուեզովը ստիպված է լինում փոփոխել պիեսի այս հատվածը. «Նորից անդրադառնալով այս ստեղծագործությանը՝ այն նոր տեսքի են բերել՝ շտկելով [դրանում առկա] նախկին անճշտություններն ու սխալները կապված [պիեսի] գաղափարականության և գեղարվեստականության հետ»:⁹ Ավելին, հետագայում ևս հեղինակը ստիպած եղավ մի քանի փոփոխություններ անել պիեսում, և ժամանակակից տեսքով պիեսն ավարտվեց ընդամենը 1959 թ.:

Չնայած այս երկու պիեսների թեմատիկ ընդհանրություններին, այնուամենայնիվ դրանցում գլխավոր հերոսների գործողություններն իրականանում են հակառակ տրամաբանությամբ: Այս պիեսի գլխավոր հերոսուհին երիտասարդ գեղեցկուհի Քարագյոզն է, ով նշանված է յիգիթ Նարշայի հետ, սակայն սիրում է իր տոհմակից ակին Սըռընին: Պիեսն ավարտվում է նրանով, որ երիտասարդ գեղեցկուհի Քարագյոզը խելագարվում է, իսկ սիրեցյալ Սըռընը դառնում է ավազակ: Հերոսների այսկերպ վախճանը պատճառաբանվում է դազախական ավանդույթներով: Հեղինակն առանձին չի մանրամասնում այդ ավանդույթներն ու սովորույթները, սակայն հերոսների խոսքերի և գործողությունների միջոցով ընթերցողն ունենում է այդ ավանդությունների ամբողջական պատկերը:

Անդրադառնալով «Քարագյոզ» պիեսի գեղարվեստականությանը՝ նշենք, որ այս առումով հեղինակը լավագույնս է պատկերել սիրեցյալների հոգեկան ապրումները. ասվածը վերաբերում է և՛ Քարագյոզի ու Սըռընի, և՛ Նարշայի՝ Քարագյոզի հանդեպ անպատասխան սիրո պատկերմանը: Պիեսի գեղարվեստականությանը մեծապես նպաստում է նաև սյուժեի կառուցվածքը. այն սկսվում է Քարագյոզի և նշանյալի հարսանեկան արարողությամբ՝ ավանդական երգերով, ծիսակատա-

⁹ Նույն տեղում, էջ 243-244:

բություններով և արարողակարգերով: Հարսանեկան արարողութիւնը ձգվում է սյուժեի ամբողջ ընթացքում՝ բացառությամբ վերջին հատվածի: Այս պիեսի մյուս առանձնահատկութիւնը, ի տարբերություն Եւստիոսի, ընդգծված բացասական կերպարների բացակայութիւնն է: Եթէ «Ենլիկ և Քեբեք»-ում տեսնում ենք ընդգծված բացասական կերպարներ, ապա սիրահարների դեմ պայքարող Քարագյոզի նշանյալ Նարշան բացասական կերպար չէ. նա ազնիվ ու անկեղծ մղումներով է սիրում ղազախուհուն, սակայն նույն համակերպվածությամբ էլ պատրաստ է համակերպվել չսիրված լինելու մտքի հետ: Պիեսի գեղարվեստականութեան ձեռքբերումը կարելի է համարել նաև այն, որ հեղինակին հաջողվել է գեղարվեստական լուծումներով ստեղծել այնպիսի վիճակ, որտեղ միակ բացասականը դիտվում է ղազախների շրջանում արմատացած հետամնաց ավանդույթներն ու սովորույթները:

Տարբերութիւններ նկատվում են նաև պիեսներում գործողութիւնների պատկերման ձևի և ոճի մեջ, ինչը կապված է սյուժեների առանձնահատկութիւնների հետ. եթէ «Ենլիկ և Քեբեք»-ում շեշտադրված են հերոսների անհատական գործողութիւնները, անձնական մտորումները, ապա «Քարագյոզ»-ում գերակշռում են ընդհանրացված ֆոլկլորային պատկերները, ժողովրդի կենցաղն ու առօրյան: Եվ պատահական չէ, որ պիեսում հերոսների գործողութիւնները, բացառությամբ վերջին արարի, ծավալվում են «բեշքյարթմա» և «ժետը ատա»¹⁰ սովորույթների շուրջ:

Տարբեր են նաև պիեսների ժամանակային ընկալումները. «Ենլիկ և Քեբեք»-ը ժամանակային առումով ավելի ընդգրկուն է. այն ներկայացնում է ինչպես սիրահարների հանդիպումը, այնպես էլ նրանց սիրո պատմութիւնը, ընդդէմ ցեղակիցների կռիվն ու փոքրիկի ծնունդը, մինչդէռ Քարագյոզի և Սըռընի ողբերգական սերը ներկայացված է ավելի փոքր ժամանակային ընդգրկմամբ:

Անդրադառնալով Քարագյոզի և Ենլիկի կերպարների հիմնական տարբերութիւններին, նշենք, որ ընդհանուր գաղափարական ասելիքունեցող պիեսներում միևնույն պայմաններում հերոսներն էականորեն տարբեր են վարվում: Եթէ Ենլիկը պայքարող ղազախուհու կերպար է, ով օժտված է ոչ միայն խելացիությամբ, խիզախությամբ, այլ նաև խո-

¹⁰ Սա մինչ օրս ղազախների շրջանում տարածված սովորույթ է, որի համաձայն՝ ազգակցական ամուսնութիւնները արգելված են երիտասարդների միջև այն դեպքում, եթէ նրանց միջև առնվազն յոթ սերունդ հեռավորութիւն չկա:

բամանկությանը ու որոշ դեպքերում նաև խարդախությանը, ապա Քարագյոզը նրա հակապատկերն է: Քարագյոզը պատրաստ է ընդունել բոլոր հարվածները լուր ու առանց պայքարի, քանի որ մանկուց արդեն համակերպվել է ճակատագրի հետ: Նույն համակերպվածությամբ և հնազանդությամբ էլ պատրաստ է դժբախտանալ Քարագյոզի սիրեցյալը՝ յիգիթ Սըռընը: Իհարկե, Աուեզովի համար գուցե ավելի հոգեհարազատ էին Ենլիկն ու Քեբեքը, ովքեր պայքարող երիտասարդության ներկայացուցիչներ էին, սակայն Քարագյոզի ողբերգական ավարտը մեկ այլ ճանապարհ էր Աուեզովի համար արտահայտելու սեփական վերաբերմունքը քարացած և հետամնաց երևույթների վերաբերյալ: Հեղինակի սուբյեկտիվ վերաբերմունքը հստակ երևում է պիեսի վերջին արարում, որտեղ Սըռընը սիրելի Քարագյոզի գերեզմանի մոտ տեսիլք է տեսնում, որում վերջինս հորդորում է նրան նոր կյանք սկսել և պայքարել հանուն նոր ապագայի: Ստեղծագործության ժողովրդական տարբերակում նման ավարտ չկա, և սա Աուեզովի կողմից արված ավելացում է՝ ընթերցողին սեփական խոսքը հասցնելու լավագույն տարբերակով:

Աուեզովի՝ ինչպես 20-ականների, այնպես էլ 30-ականների գրեթե բոլոր ստեղծագործություններում առկա են ժամանակի երիտասարդությունը ներկայացնող կերպարներ: Հեղինակը բոլոր ստեղծագործություններում էլ մեծ նշանակություն է տալիս նրանց և նկարագրում հասուն մանրամասնությամբ: Օրինակ՝ Բայանը, Ենլիկը, Քամալը, ովքեր ֆոլկլորային տրադիցիոն կերպարներ էին, սակայն նրանց հեղինակը պատկերում էր այլ երանգներով ևս, նկարագրում նրանց գործողությունները կյանքի ամենատարբեր պայմաններում: Առհասարակ, և ոչ միայն այս ստեղծագործություններում, Աուեզովը միշտ էլ երիտասարդներին դարձրել է առանցքային կերպարներ ու նրանց օժտել մեծամասամբ դրական գծերով:

Ամփոփելով, նշենք, որ գրական ուղին սկսելով դրամատուրգիայի ժանրով, Աուեզովը դառնում է նոր ձևավորվող դազախական թատրոնի հիմնասյուններից մեկը: Մշակելով ժողովրդի շրջանում տարածված ողբերգական սիրո պատմությունները՝ Աուեզովը ժողովրդին է վերադարձնում դրանք արդեն նոր շեշտադրումներով և գաղափարական ասելիքով: Թերևս սա է պատճառը, որ կյանքի ընթացքում հեղինակը բազմիցս ստիպված է եղել փոփոխություններ կատարել այս երկու ստեղծագործություններում: Ենլիկի և Քեբեքի, Քարագյոզի ու Սըռընի ողբերգական սիրո միջոցով Աուեզովը ջանում էր ներկայացնել

դազախական հետամնաց ավանդույթների հետևանքով երիտասարդ ճակատագրերի խեղման պատմությունը՝ կարծես դրանով կոչ անելով ժողովրդին սթափվելու և ընդունելու այն նոր գաղափարները, որոնք առկա էին ներթափանցում ռուսական մշակույթի ազդեցությամբ: Սա է պատճառը, որ հեղինակը սկզբունքային փոփոխության էր ենթարկել «Քարագյոզ»-ի ժողովրդական տարբերակի ավարտը: Առհասարակ, նման մոտեցումը, որը գրականության մեջ պատկերվում էր հնի ու նորի բախմամբ, որտեղ նորը մարմնավորում էին միմիայն դրական հերոսները, տարածված էր 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի դազախ գրականության մեջ, ինչն էլ արդյունք էր հասարակական փոփոխությունների և նոր հարաբերությունների անցման¹¹:

Այստեղ պետք է նշել նաև, որ թեև երկու պիեսներն ունեն ողբերգական ավարտ, սակայն «նոր աշխարհի» գաղափարների կրող գլխավոր հերոսները չեն պատկերվում հոգեպես ընկճված ու պարտված անհատներ. թեկուզ անգիտակցաբար, նրանք մահվան գնով դազախ հասարակություն էին բերում նորը, փոփոխվածը, այնպիսի գաղափարներ ու մոտեցումներ, որոնք, վստահ էր Աուեզովը, դառնալու էին դազախ ժողովրդի լուսավոր ապագայի հիմքը:

KHACHATRYAN SHUSHAN

(YSU)

COMPARATIVE ANALYSIS OF «YELNIK AND KEBEK» AND
«KARAGYOZ» BY MUKHTAR AUEZOV

Mukhtar Auezov is a 20th-century Kazakh writer, who is also considered to be the founder of Kazakh dramaturgy. The paper is a comparative analysis of his well-known «Yelnik and Kebek» and «Karagyozy» plays. It's known that in 1920-30's M. Auezov was under ideological pressure by the government, and he was forced to make several changes in these works. Taking into consideration the history of creating these plays and their further fate, we also research main features of characters, their similarities and differences, main aesthetic value of works in detail. We are sure that multilateral study of Mukhtar Auezov's works is one of the ways to re-understand and re-evaluate not only him as a writer, but also the history of Kazakh dramaturgy in general.

¹¹ История казахской литературы: Казахский фольклор (под ред. Н.С. Смирновой), том I, Алма-Ата, 1968, с. 80.

15-16-ԸՂ ԴԱՐԵՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ԵՎ
ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Սույն հոդվածը նպատակ ունի քննարկել Օսմանյան կայսրության քաղաքական, տնտեսական և մշակութային առավելագույն վերելքի շրջանում (15-16-րդ դարեր¹) գրականության մասնավորապես պոեզիայի թեմատիկ և ժանրային հիմնական առանձնահատկությունները: Հոդվածում փորձ է արվում ուսումնասիրվող ժամանակաշրջանում համաշխարհային գիտության և մշակույթի մեջ ձևավորված և զարգացած վերածննդի գաղափարների համատեքստում ներկայացնել օսմանյան գրականության զարգացման միտումները, բացահայտել պալատական պոեզիայի կողմից գրականություն ներմուծված ճգնաժամային երևույթները, որոնք պատճառ դարձան «տեխնիկական պոեզիայի» սկզբնավորման և տարածման համար:

Եվրոպացի արևելագետ Է. Ջ. Գիբբի կողմից որպես օսմանյան մշակույթի և մասնավորապես գրականության զարգացման առանձին փուլ է համարվում 1453-1600 թթ.²: Այս հարյուրամյակները գրականագիտության և պատմագրության մեջ մտել են օսմանյան գրականության «ոսկե շրջան» անունով³: Մեհմեդ 2-րդ Ֆաթիհ սուլթանի (1444-1446, 1451-1481թթ.)⁴ կողմից 1453 թ. պատմամշակութային հսկա ավանդույթներ ունեցող Կոստանդնուպոլսի գրավումով օսմանցիները ձեռք բերեցին մշակութային կարևոր կենտրոն՝ «ոսկե կամուրջ» արևմուտքի և արևելքի միջև⁵: Այն նոր էջ բացեց կայսրության գիտամշակութային

¹ Uzunçarşılı İ H., Osmanlı Tarihi, Cilt 2., İstanbulun Fethinden Kanuni Sultan Süleymanın Ölümüne Kadar, Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 1988., s. 474. Բայրուրյան Վ. Ա., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, ԵՊՀ, 2011թ., էջ 242:

² Gibb E. J., A history of Ottoman poetry, v. 2, London 1902, p. 5.

³ Гарбузова В. С., Поэты средневековой Турции, Л. 1963, с.110, ինչպես նաև Маштакова Е. И., Из истории сатиры и юмора в турецкой литературе, Москва, 1972, с. 83, ինչպես նաև Боролина И. В., Литература востока в средние века, часть 2, Москва, МГУ, 1970, с. 371.

⁴ Բայրուրյան Վ. Ա., նշվ. աշխ., էջ 685:

⁵ Боролина И. В., указ соч., с. 371.

կյանքի զարգացման համար: Այնուհանդերձ համաշխարհային մշակույթի զարգացման համատեքստում օսմանյան գրականության վերելքի միտումների վերաբերյալ ուսումնասիրությունները վկայում են, որ սուլթանությունում գրականության զարգացումն ուներ հարաբերական բնույթ: Նկատի առնենք այն, որ Գիբբի կողմից առանձնացված ժամանակաշրջանը համընկնում է Եվրոպայում Վերածննդի դարաշրջանի հետ: Ենթադրվում է, որ համաշխարհային գիտության և արվեստի մեջ տեղի ունեցող գործընթացներն իրենց ազդեցությունը պիտի ունենային նաև օսմանյան մշակույթի վրա: Սակայն այս ոլորտում կատարված ուսումնասիրություններն այլ բան են փաստում: Ինչպես նշում է Գիբբը «Ռենեսանսը, որ փոփոխություններ մտցրեց Արևմուտքի գիտական և բարոյական կյանքում, չհասավ Իսլամի ամբողջին: Արևելքը և Արևմուտքը, որ մինչ այդ ընթանում էին նույն ուղով, բաժանվեցին: Արևմուտքն անցավ աջ կողմ, իսկ Արևելքը շարունակեց գնալ հին ճանապարհով»⁶: Այս տեսակետը կիսում են նաև ռուսաստանյան արևելագետները: Մասնավորապես հայտնի թուրքագետ Ա. Կրիմսկին այս հարցի վերաբերյալ ասել է. «Եվրոպական Վերածննդի գաղափարները ոչ մի ազդեցություն չեն ունեցել օսմանյան գրականագիտական մտքի վրա: Այդ պատճառով էլ օսմանյան գրականության ոսկե դար գոյություն չունի»⁷: Հիրավի արևմուտքից անկախ արևելյան, մասնավորապես օսմանյան գրականության զարգացման մասին են վկայում իր բնույթով ֆեոդալական կայսրության ներսում հասարակության տարբեր շերտերի զարգացման անհամաչափությունը, ժողովրդի ու վերնախավի միջև առաջ եկած խորը անջրպետը, որի հետևանքներն արտահայտվեցին նաև կայսրության գիտամշակութային կյանքում:

16-րդ դարը թեև համարվում է կայսրության վերելքի շրջան, սակայն այն հանդիսանում է նաև այն ժամանակահատվածը, երբ ժողովրդի և օսմանյան վերնախավի միջև օտարացումն առավել խորացավ: Միայն լեզվի առումով նշենք, որ 16-րդ դարում օսմաներենն այնքան էր հեռացել իր թյուրքական հիմքից և ժողովրդախոսակցական լեզվից, որ հասարակ ժողովրդի համար ուղղակի անհասկանալի էր⁸:

⁶ Նույն տեղում:

⁷ Крымский А., История Турции и ее литературы, Труды по востоковедению, издаваемые Лазаревским Институтом Восточных языков, выпуск 29, № 1-й, т. 2, Москва, 1910, т. 2, с. 39.

⁸ Reşat F., Tarih Edebiyatı Osmanıyye, İstanbul, «Zarafet matbaası», University of Toronto library, v.1, 1961, s. 20.

Մասնավորապես 15-րդ դարում ստեղծված գրական ստեղծագործություններից երևում է, որ սոցիալական տարբերությունների պատճառով սկսում են ի հայտ գալ լեզվական տարբեր աստիճաններ: Հայտնի թուրք գրականագետ Ս. Շահաբեդդինն իր «Օսմանյան գրականության պատմություն» աշխատության մեջ, ներկայացնելով լեզվական տարբեր մակարդակների զարգացման պատմությունն ու պատճառները, նշում է, որ օսմանցիները սկզբում պարսկերենի, ապա արաբերենի միջոցով իրենց լեզուն մաքրեցին կոպիտ բառերից, գեղեցկացրին և հասցրին կատարելության⁹: Ինչպես հայտնի է, լեզվի զարգացման և տարածման կարևորագույն միջոցը գրականությունն է: Սակայն վերջինս ոչ միայն չլուծեց այս խնդիրը, այլ ավելի խորացրեց այն: Սա, թերևս պայմանավորված էր այն հանգամանքով, որ օսմանյան գրականության վրա մեծ էին օտար՝ մասնավորապես պարսկական, արաբական պոեզիայի, ազդեցությունները¹⁰: Սելջուկյան շրջանից սկսած, դեռևս գրականության ձևավորման վաղ փուլում պարսիկներից փոխառվեց վերջիններիս գրական փորձը, ավանդույթները, ուստի միանգամայն բնական է, որ օսմանյան և պարսիկ գրողների ստեղծագործություններում կան մի շարք նմանություններ¹¹: Մասնավորապես այս երկու ժողովուրդների պոեզիայում մենք հանդիպում ենք միևնույն հնչողությունը, զգացմունքայնությունը, խոսքի կառուցման ձևերն ու բանաստեղծական կառուցվածքը¹²: Այդ է պատճառը, որ գիտականները օսմանյան գրականությունը հաճախ համարում են զուտ պարսկական գրականության մի ճյուղը¹³: Օսմանյան գրականության վրա պարսկական պոեզիայի ազդեցությունը վերջնականապես ամրապնդեց սուֆի բանաստեղծ Ջամին (1414-1492թթ.)¹⁴:

Կարծիք կա, որ 15-րդ դարում օսմանյան պոեզիան կրել է նաև Չաղաթայական գրականության¹⁵՝ մասնավորապես Ալիշեր Նավոիի ազդեցությունը¹⁶: Օտար ազդեցությունները, ինչպես նաև օսմաներենի

⁹ Şahabeddin S., Tarih-I Edebiyatı Osmaniyeye, İstanbul, 1328 (1941), s. 8.

¹⁰ Solmaz S., Divan şiirinde kelime seçimini etkileyen faktörler, s.42
<http://www.turkiyat.selcuk.edu.tr/pdfdergi/s15/solmaz.pdf>

¹¹ Lane-Poole S., ibid, p. 302.

¹² Inalcık H. The Origins of Classical Ottoman Literature ..., pp. 5-75.

¹³ Крымский А., там же, т. 2, с. 41.

¹⁴ Крымский А., там же, т. 2, с. 41.

¹⁵ Köprülü M. F., Edebiyat Araştırmaları..., ss. 114-115.

¹⁶ Kramers J. H., The Encyclopedia of Islam, v. 8, Leiden, E. J. Brill, 1995, p. 211.

բարդությունը պատճառ դարձան, որ դիվանի գրականությունը, սկսած 15-րդ դարից, աստիճանաբար հետանա ժողովրդական մշակույթից և հասկանալի դառնա միայն վերնախավին: Այդ պատճառով 15-րդ դարը նաև համարվում է օսմանյան գրականության անցումային շրջան¹⁷:

Թե՛ օսմանյան, և թե՛ պարսկական գրականության մեջ այս շրջանում առավելապես զարգանում էին չափածո ժանրերը: Դիվանի գրականության պոեմները նշանավորվում են ծայրահեղ նրբագեղությամբ, պերճաշուք բառապաշարով և գեղեցիկ հարմունիայով: Բայց մյուս կողմից նրանք չափազանց արհեստական են, զգացմունքը հաճախ ծայրահեղացված է, մտքերը պարզ են, լեզուն աղավաղված է բազմաթիվ շքեղ արտահայտություններով: Հայտնի արևելագետ Ս. Լեյն-Փուլը նշում է, որ այս շրջանում գրված չափածո ստեղծագործությունների հիմնական թեման սերն էր իր հաճույքներով և տառապանքներով, ինչպես նաև գարնան հմայքների, սոխակի քաղցր երգի, ծաղիկների գեղեցկության և բնության այլ երևույթների նկարագրությունը, որն ուներ կրոնական միաստիցիզմի ենթատեքստ¹⁸:

Միաստիցիզմը (*սուֆիզմ*), մշտապես ուղեկցելով համաշխարհային կրոններին, հարմարվելով նրանց և տարափոխվելով, իսլամում, իբրև կրոնափիլիսոփայական աշխարհայացք, վերջնականապես ձևավորվել է 9-10-րդ դարերում¹⁹: Սուֆիզմն առանձնանում է գաղափարական բարդությամբ, քանի որ Արաբական Արևելքում ծայր առած այս ասկետիկ ուղղությունը, հակված լինելով դեպի օրթոդոքսալ իսլամը, ներառում է տարրեր այնպիսի փիլիսոփայական կատեգորիաներից, ինչպիսիք են նեոպլատոնիզմն ու գնոստիցիզմը²⁰: Այնուամենայնիվ, չնայած գաղափարաբանական դրսևորման տարբեր ձևերին, միաստիցիզմի հիմնական գաղափարը Աստծո հետ իրացիոնալ շփումն է՝ հոգու պայծառացման միջոցով: Միաստիցիզմը Արևելքն ու Արևմուտքը, իսլամա-

¹⁷ Batislam H. D., 15. Yüzyıl divan şiirinde halk kültürü, 123-124, http://www.isam.org.tr/documents/dosyalar/pdf/ler/osmanli_arastirmalari_dergisi/osmanl%C4%B1_sy26/2005_26_BATIISLAMHD.pdf

¹⁸ Lane-Poole S., Turkey, London, 1908, p. 302-303.

¹⁹ Бертельс Е. Э., Суфизм и суфийская литература, избранные труды, т. 3, Москва 1965, с. 39, ինչպես նաև Брагинский И., С., Из истории таджикской и персидской литератур, Москва, 1972, с. 432-433..

²⁰ Из старой турецкой поэзии, составление И. Боролиной, с. 262.

կան և քրիստոնեական աշխարհները մերձեցնող եզրերից է²¹: Սուֆիները, որոնք իրենց անվանում էին նաև ոհնդ և դերվիշ, թափառում էին միջնադարյան արևելյան քաղաքներում և ծայրամասերում, մասշտի ձևով տարածում իրենց գաղափարները²²: Սուֆիական գրականությունը սկզբնական շրջանում ոճական և ժանրային առումով ձևավորված չէր, ստեղծագործությունները գվրում էին պարզ, առանց վեհ խոսքերի, նույնիսկ շատ դեպքերում առանց հանգավորման: Նոր ժանրերի և տաղաչափական կանոնների փնտրտուքի ճանապարհին սուֆիները դիմեցին պարսկական ժողովրդական գրականության ավանդույթներին, ինչպես նաև ժանրեր փոխառեցին արաբական պոեզիայից: Մասնավորապես առաջին սուֆի շեյխերը արաբներից վերցրին գազելի ժանրը, որին սուֆիական գրականությունը նոր շունչ հաղորդեց: Իսկ պարսիկները ստեղծեցին մեսնևիի ժանրը, որը մինչ այդ ծանոթ չէր արաբներին²³: Աստիճանաբար սուֆիական պոեզիան ձեռք բերեց հատուկ ձև և ոճ: Այն շատ կաղապարված, «քարացած» բնույթ ունի, որը, որպես գրական կանոն պարտադրվում է ստեղծագործողին²⁴: Սուֆիներն իրենց ստեղծագործություններում օգտագործել են սիմվոլներ՝ այլաբանություն: Սուֆիական բնույթ ունեցող գրական ստեղծագործությունները հիմնականում գրվել են սիրո թեմատիկայի շրջանակներում: Դրանց գաղափարական առանցքը երկրային սիրո (*âşk-i macazi*) միջոցով երկնային, աստվածային և միակ ճշմարիտ սիրուն (*âşk-i hakiki*)²⁵ հասնելու մտայնությունն էր²⁶: Սուֆիական գրականության նպատակը չի եղել նոր ոճով գեղարվեստական կերպարներ կերտելը, այլ ձգտում է զուտ գեղարվեստական գործի միջոցով փոխանցել սուֆիական փիլիսոփայությունը²⁷:

15-16-րդ դարերում, աշխարհիկ պոեզիայի զարգացմանը զուգըն-

²¹ Կոզմոյան Ա., Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (10-16-րդ դարեր), Երևան, 1997, էջ 64:

²² Նույն տեղում, էջ 82:

²³ Նույն տեղում, էջ 64:

²⁴ Սաֆարյան Ալ., Գրիգոր Նարեկացու ու սուֆի բանաստեղծների ստեղծագործություններում ավանդական պատկերների «աղապտացման» մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, ՀՀ ԳԱԱ, 1993, թիվ 2, էջ 103:

²⁵ Рипка Ян, История персидской и таджикской литературы, Москва, 1970, с. 225.

²⁶ Levend A. S., İslâmî Edebiyatın Esasları ve Kaynakları, s. 167.

http://www.tdk.gov.tr/images/css/TDA/1971/1971_9_Levend.pdf

²⁷ Նույն տեղում, էջ 109:

թաց, օսմանյան գրականության վրա սուֆիական գաղափարախոսության ունեցած ազդեցությանը դիպուկ բնութագրում է տվել գրականագետ Ա. Կոզմոյանը. «Աշխարհիկ գրականությունը շարունակում էր իր բնականոն ընթացքը, սակայն սուֆիզմի ազդեցությունն այնքան մեծ էր, որ հաճախ այն հեղինակները, որոնք սուֆի չէին և չէին կիսում այդ գաղափարները, երբեմն տուրք էին տալիս այդ շատ մոդայիկ այլաբանական կաղապարներին և ոճին»²⁸: Դրա վառ օրինակ են հանդիսանում ժամանակի հայտնի բանաստեղծուհի Միհրի Հաթունի (1456-1514թթ)²⁹ ստեղծագործությունները: Վերջինս իր պոեզիայում գովերգելով աշխարհիկ սերը, հաճույքները, խոսելով սոցիալական անարդարությունների մասին, քննադատելով կրոնական սահմանափակումները, չի խուսափել սուֆիական սիմվոլիկայի կիրառումից, քանզի այն գազելներին տալիս էր յուրատեսակ շքեղություն՝ բարձրացնելով դրանց գեղարվեստական արժեքը.

gönlüm zevrağın aldı bugün bir gonce leb gül ruh/Yaşum deryāsına şaldı bugün bir gonce leb gül ruh - Նավակդ իմ այս սիրտն առավ այսօր մի կոկոն շրթունք, վարդ հոգի, Այսօր կյանքիս վիշտը բորբոքեց մի կոկոն շրթունք, վարդ հոգի..... *Belā-keş bülbülüm bildi figānumdan şafā buldı/ Yüzüme gül gibi güldi bugün bir gonce leb gül ruh* - Իմացավ, որ տանջվող սոխակ եմ, իմ վշտից հանգիստ գտավ, Դեմքիս ծիծաղեց վարդի նման այսօր մի կոկոն շրթունք, վարդ հոգի..... *Alup şirîn zebân ile elinden Mîhrinüñ varın/Ahâ geldüm didi yeldi bugün bir gonce leb gül ruh*³⁰. - Քաղցր լեզվով Միհրիի ձեռքից վերցնելով եղածը, Ահա շտապով եկա, ասաց, այսօր մի կոկոն շրթունք, վարդ հոգի:

Ավելի ուշ՝ 16-րդ դարում օսմանյան գրականության մեջ ի հայտ է գալիս անակրեոնյան ոճը, որը գովերգում էր սերն ու զինին՝ լի կրոնական սահմանափակման դեմ հեզնանքով³¹: Սա սկիզբ դրեց դիվանի գրականության մեջ խրախճանքների թեմատիկայի զարգացմանը, որի մեծագույն վարպետն է հանդիսանում այս շրջանի ամենահայտնի բանաստեղծ, «պոետների արքա» Մահմուդ Բաքին (1526-1600)³²:

²⁸ Կոզմոյան Ա., Պարսից պոեզիայի ընտրանի, Երևան, 2004, էջ 13:

²⁹ Tezkire-i Lâtifi, İstanbul, 1314 (1927), s. 319.

³⁰ Михри-Хатун. Диван, Критический текст и вступительная статья Е. И. Маштаковой, Москва, с. 99.

³¹ Սարգսյան Ա., Հ., 16-րդ դարի օսմանյան պոեզիայի զարգացման արանձնահատկությունները Բաքիի դիվանում, Սեղմագիր, էջ 13:

³² Բաքիի կյանքի և ստեղծագործությունների մասին առավել մանրամասն տե՛ս

Sâki zamân-I 'ayş-I mey-I hôş-güvârdur/ Bir kaç piyâle nûş idelüm nev-bahârdur/ Bûy-I nesim ü reng-I gül ü revnak-I bahâr/ Asâr-I fazl u rahmet-I Perverdigârdur / Gâfil geçürme fursatı kim bâg-I 'âlemün/ Gül devri gibi devleti nâ-pây-dârdur / Eyyâm-I zühd ü mevsim-i zerk u riyâ degül/ Hengâm-I 'ayş u 'işret ü geşt ü güzârdur/Մատուվակ, ժամանակն է կերուխումի համեղ զինին ընպելու./ Փարուն է արդեն, ե կ մի քանի գավ զինի ընպենք:/ Աստծո քարության, շնորհներից են./ Վաղորդյան քամու բույրը, վարդի գույնն ու գարնան գեղեցկությունը:/ Առիթը բաց մի թո՛ղ, քանի որ աշխարհի այգին՝ կյանքը./- Վարդի կյանքի պես անցողիկ է:/ Մին քարեպաշտության, ստի և երկերասանիության ժամանակը չէ./ Կերուխումի, զվարճանքի, աջ ու ձախ ման գալու ժամանակն է³³:

15-16-րդ դարերը նշանավորվեցին օսմանյան դիվանի (պալատական) գրականության ձևավորմամբ և զարգացմամբ: Դիվանի բանաստեղծները, բացի սիրային գործերից, ստեղծագործել են կրոնական թեմատիկայի շրջանակներում, կիրառելով կրոնական տերմիններ, մեջբերումներ անելով Ղուրանի տարբեր այաթներից: Դիվանի պոեզիայում հատկապես մեծ թիվ են կազմում սուլթանին, արքայազներին, վեզիրներին կամ իրենց այլ մեկենասներին նվիրված գովաբանական ներբողները: Գրական այս թեմատիկ ուղղությունը, համապատասխան ժանրային ձևերի ընդգրկումով, ծաղկում էր ապրում օսմանյան սուլթանների պալատում³⁴: Հիմնականում քասիդի ժանրի շրջանակներում դիվանի պոետները գովերգում էին օսմանյան բանակի հաղթանակ-

Սարգսյան Ա., Բաքիի ստեղծագործությունների ուսումնասիրության պատմությունից, «Իրան Նամե», արևելագիտական հանդես, Երևան, 2011, էջ 47-55, ինչպես նաև Սարգսյան Ա., 16-րդ դարի թուրք բանաստեղծ Բաքիի դիվանի լեզվի որոշ առանձնահատկությունների շուրջ, «Իրան Նամե», արևելագիտական հանդես, Երևան, 2011, էջ 87-90, Սարգսյան Ա., Խաչատրյան Լ., Ձիոթեմատիկան Բաքիի դիվանում, «Կանթեղ» Գիտական հոդվածների ժողովածու, 4(53), «Ասողիկ» հրատ., Երևան, 2012, էջ 40-46, Սարգսյան Ա., Մելիքյան Գ., Սաֆարյան Ա., Բաքիի՝ Երևանի Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-մատենադարանում պահվող №321 ձեռագիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2-3, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 2012, էջ 634-635:

³³ Ա. Սարգսյան, Խրախճանքների, վայելքների թեմատիկան Բաքիի դիվանում, «Արևելագիտության հարցեր» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), հ. 11, Երևան, 2016, էջ 123:

³⁴ Andrews W. G., Stepping Aside: Ottoman Literature in Modern Turkey, Journal of Turkish Literature, Bilkent University Center for Turkish Literature, Issue 1 (2004), Ankara, pp. 12-13. <http://faculty.washington.edu/walter/aside.pdf>

ները, հաշոդությունը, գեղի ուժը, սուլթանի առատաձեռնությունն ու գթասրտությունը³⁵: Հայտնի է Միհրի Հաթունի հետևյալ քասիդը, որը քանաստեղծուհին նվիրել է իր հովանավոր արքայազն Ահմեդին. *Bir cihângir zamân senine eyere vîrmez âmân/Himmetin tiğî eder dev-i Narimân dônûm/Yüzüne karşû cedâl eynemez Sâm ü Sevar/Rustam ü Zâl olamaz erlik ile sâna kırım*³⁶ - *Ո՛վ դու, քո ժամանակների աշխարհի տիրակալ, նա՛ որով գութ չունի մարդու հանդեպ/Քո թրի ուժը վախեցնում է Նարիմանի դեհին:/Քո դեմ չեն կարող կովել Սամն ու Սեվարը/Ռուստամն ու Ջալը չեն կարող համեմատվել քեզ հետ տղամարդկության մեջ:*

Օսմանյան պոեզիայում գրեթե բոլոր ժանրերն ու ժանրային ձևերը, համապատասխան թեմատիկ առանձնահատկությամբ փոխառվել են արաբա-պարսկական պոեզիայից³⁷՝ համապատասխանաբար յուրացնելով արաբա-պարսկական քանաստեղծական չափերը³⁸: Մասնավորապես քանաստեղծները սկսեցին կիրառել նոր քանաստեղծական չափ՝ արուզ, որը կառուցվում էր երկար և կարճ ձայնավորների միջոցով³⁹: Ինչպես նշում է արաբագետ Ս. Կարաբեկյանը՝ դրսից փոխառված տաղաչափական ձևերը կարող են չհամապատասխանել լեզվի հատկություններին⁴⁰: Քանի որ երկար և կարճ ձայնավորների համակարգը բացակայում է թուրքերենում, ուստի օսմանյան պոետները ստիպված էին օգտագործել արաբերեն և պարսկերեն բառեր: 16-րդ դարում արդեն օսմանյան ստեղծագործություններում բացակայում էին թուրքերեն բառերը, միայն որոշ հեղինակներ երբեմն օգտագործում էին առանձին բայեր: Օսմանյան հեղինակներն այս շրջանում սկսեցին շեշտը դնել ոչ թե բովանդակության, այլ օտար բառերի խճճման տարբեր հնարքների վրա: Օգտագործվում էին բարդ բառեր, կրոնական տերմիններ, որոնք ամբողջությամբ օտարաբանություններ էին: Սրանով սկիզբ դրվեց «տեխնիկական պոեզիային»: Սկսեցին գրվել ստեղծագործություններ, որոնք հիմնված էին բառախաղերի վրա, մասնավոր-

³⁵ Из старой турецкой поэзии, составление И. Боролиной, с. 267.

³⁶ Михри-Хатун. Диван, с. 14.

³⁷ Օսմանյան ժանրերի մասին առավել մանրամասն տե՛ս Eski Türk Edebiyatına Giriş, Üniversiteler için, Prof. DR. Mermer A., 6. Baskı, Ankara, 2010, ss. 75-151.

³⁸ Deo A., Kiparsky P., Poetries in Contact: Arabic, Persian, and Urdu, p.1. <http://www.stanford.edu/~kiparsky/Papers/tartu.pdf>

³⁹ Гарбузова В. С., там же, с. 112.

⁴⁰ Կարաբեկյան Ս., Արաբական տաղաչափության հիմունքներ, Երևան, «Զանգակ-97», 2002, էջ 3:

րապես գլուխկոտրուկներ, ժամանակագրություններ (*tarih*), հանելուկներ (*muamma*)⁴¹:

Օսմանյան չափածո ստեղծագործությունները բաղկացած էին երկտողերից (*beyt*), որոնցից յուրաքանչյուրն ունի միևնույն երկարությունն ունեցող երկու կիսատող (*misra*)⁴²: Առաջին բեյթը կոչվում է մաթլա, վերջին բեյթը՝ մաքթա: Երկրորդ բեյթը կոչվում է *hüsn-i matla*, իսկ նախավերջին բեյթը՝ *hüsn-i makta*: Փազելի ամենագեղեցիկ բեյթը կոչվում է *beytü'l gazel* կամ *şâh beyit*⁴³: Ժամանակագրությունները 2-3 բեյթից բաղկացած կարճ բանաստեղծություններ էին, որոնք հիմնականում օգտագործվել են պալատների, մզկիթների, դամբարանների և հուշարձանների կառուցման տարեթիվը և այլ հիմնական տեղեկություններ փոխանցելու համար:

Հանելուկները համարվում են «տեխնիկական պոեզիայի» բարձրակետը և, ինչպես նշում է խորհրդային թուրքագետ Փարբուզովան, դրանք որևէ կապ չունեն արվեստի հետ⁴⁴: Սակայն վերջիններս կռահելու համար անհրաժեշտ էր ունենալ հարուստ գիտելիքներ, լինել կրթված, այսինքն սրանք ևս չէին վերաբերում լայն հասարակությանը: «Տեխնիկական պոեզիայի» այս ձևերը ցույց են տալիս, որ 15-16-րդ դարերում թուրք գրականությունը ոչ թե զարգացում էր ապրում, այլ ճգնաժամ:

Արաբական գրականությունից պարսկականի միջոցով փոխառված ամենատարածված գրական ժանրերից մեկը *բասիդն* է: Վերջինս հիմնականում գրվել է կրոնական, որոշ դեպքերում սիրո թեմատիկայի շրջանակներում⁴⁵: Այն նաև հանդես է եկել որպես՝ նվիրված սուլթանի, որևէ հոգևորականի, պոետի, փիլիսոփայի, պալատական պաշտոնյայի, կամ պոետի մեկենասի գովերգմանը: Այն բաղկացած է նվազագույնը 30-50 բեյթից⁴⁶: Քասիդը ոճի փոփոխության հնարավորություններ է տվել, ինչպես նաև նպաստել է նոր ժանրերի ձևավորմանը: Այս ժանրը

⁴¹ Гарбузова В. С., там же, с. 113-114.

⁴² Gibb E. J., The poets and poetry of Turkey, London, 1901, p. 14.

⁴³ Altun M., Eski Türk Edebiyatından seçime gazeller, s. 1.

<http://www.dilbilimi.net/gazeller.pdf>

⁴⁴ Гарбузова В. С., там же, с. 115.

⁴⁵ Gibb E. J., The poets and poetry ..., p. 15.

⁴⁶ Брагинский И., Комиссаров Д., Персидская литература, краткий очерк, Москва, 1963, с. 19-20.

գարգանալով՝ ձեռք է բերել նոր տեխնիկական ձևեր և հնարքներ⁴⁷:

Քասիդին շատ նման է *գազելը*, միայն թե այն ավելի փոքր ծավալ ունի: Գազելը ընդգրկում է ոչ պակաս, քան 5 և ոչ ավել, քան 18 բեյթ: Գազելը, հիմնականում նվիրված լինելով սիրեցյալի գեղեցկության գովերգմանը, սիրային բնույթի ստեղծագործություն է: Գազելը կազմող բեյթերը սովորաբար իմաստային առումով իրար հետ կապ չունեն⁴⁸: Կարելի է ասել, որ այն ամենատարածված ժանրն է եղել օսմանյան գրականության մեջ: Գազելներ են գրել ինչպես սուֆի, այնպես էլ պալատական պոետները⁴⁹:

Օսմանյան գրականության մեջ մեծ տեղ ունի *մեսնեվին*, որը 15-րդ դարի 2-րդ կեսից դարձավ անկախ ժանր⁵⁰: Այն, ի տարբերություն գազելի և քասիդի, ավելի ծավալուն ստեղծագործություն է: Մեսնեվիները հիմնականում ունեցել են հերոսական, սիրային, կրոնական

⁴⁷ Бертельс Е. Э., Избранные труды. Избранные труды. История литературы и культуры Ирана, Москва, 1988, с. 444, ինչպես նաև Словарь литературоведческих терминов, Тимофеев Л. И., Тураев С. В., Москва, 1974, с. 121-122.

⁴⁸ Նույն տեղում, էջ 50, ինչպես նաև Stetkevych S. P., Early Islamic Poetry and Poetics (Introduction), pp. 15-21.

http://www.ashgate.com/pdf/SamplePages/Early_Islamic_Poetry_and_Poetics_Intro.pdf

⁴⁹ Գազելի մասին առավել մանրամասն տե՛ս Andrews W. G., Şiirin sesi, Toplumun Şarkısı, İstanbul, 2000, ss. 16-211, Брагинский И., С., там же, стр. 166-172, Bauer T., Neuwirth A., Ghazal as world literature: Transformations of a Literary Genre, pp. 9-31, http://www.uni-muenster.de/imperia/md/content/arabistikislam/publikationen/bauer/bauer_neuwirth_ghazal_as_world_literature_-_transformations_of_a_literary_genre.pdf, J. T. P. de Bruijn, The Transmissions of Early Persian Ghazals (with special reference to the Dīvān of Sanāʿī), pp. 27-31,

<http://www.islamicmanuscripts.info/reference/articles/Bruijn-1988-Transmission-MME3.PDF>, Pritchett F. W., «The Meaning of the Meaningless Verses»: Ghālib and His Commentators, pp. 1-19,

http://www.columbia.edu/itc/mealc/pritchett/00fwp/published/ghalib_commentary.pdf, Altun M., Eski Türk Edebiyatından Seçme Gazeller, Eski Türk Edebiyatı Ders Notları, ss. 1-13, <http://www.dilbilimi.net/gazeller.pdf>, Stetkevych S. P., ibid, pp. 21-22.

⁵⁰ Iz F., Islam and Turkish literature, Boğaziçi Üniversitesi, 1980-1981, p. 162. http://www.dlir.org/archive/archive/files/bogazici_1980-1981_vol-8-9_p157-172_2744f5e4c0.pdf

թեմաներ⁵¹: Այն սովորաբար ունի ռոմանտիկ կամ էպիկական այու-
ժեներ: Հայտնի Մեսնեվիներից են «*Լեյլի և Մեջնուն*», «*Յուսուֆ և
Չուլեյիա*», «*Վամիթ և Ազրա*», «*Խյուսրև և Շիրին*»: Մեսնեվիի մեծագույն
վարպետ է եղել Մելանա Ջելալեդդին Ռումին՝ իր «Մասնավի մա Անա-
վի» ստեղծագործությամբ⁵²:

Արևելյան, այդ թվում նաև օսմանյան դասական պոեզիայում կա-
րևոր տեղ է զբաղեցնում *ռուֆայու* ժանրը: Ռուֆային, բովանդակային
առումով լինելով բավականին բարդ և ընդգրկուն ժանր, չորս տողի
շրջանակում փոխանցում է մի ողջ կյանք, մարդկային մեծ տառապանք:
Ռուֆայիի մեծագույն վարպետը եղել է պարսիկ պոետ Օմար Խայամը⁵³:
Օսմանյան պոետներից ռուֆայիներ են գրել Ջ. Ռումին, Ֆազլին, Ֆու-
զուլին և այլք:

Օսմանյան պոեզիայում մեծ տարածում ունեին քառյակները՝
քրթաները (*kita* – մաս, հատված), որոնք ստեղծվել են ռուֆայու նմա-
նությամբ: Դրանք բաղկացած են հիմնականում 2 բեյթերից: Քրթան
քասիդից և գազելից տարբերվում է նրանով, որ այստեղ բեյթի երկու
կիսատողերը միմյանց հետ չեն հանգավորվում:

Գազելների և քասիդների կողքին հայտնի էին *նազիրեները*:
Մրանք գրվում էին որպես պատասխան՝ ուղղված մի գրողի ստեղծա-
գործությանը: Մեզ է հասել Միհրի Հաթունի նազիրեն՝ նվիրված պոետ
Նեջաթիի գազելներից մեկին⁵⁴: *Lık Mihri dâinün zanni budur/Bu sözi dir ol
ki kâmil usludur/Bir müennes yigdürür kim ehl da/Bin müzekkerden ki ol nâ-
ehl ola/Bir müennes yig ki zihni pâk ola/Bin müzekkerden ki bi-idrâk ola*⁵⁵-
*Ասում են, թե կինը բավական խելք չունի, Նրա ամեն մի խոսքը պետք է
ամբարտավան կարծել: Մակայն Միհրին գտնում է, և նրա կարծիքն է
այսպիսին, Որ հասուն միտք ունեցողն է այդպես ասում: Մի ար-
ժանավոր կինն ավելի լավ է, Քան հազար անարժան տղամարդ: Մի
լուսավորյալ կինն ավելի լավ է, Քան հազար խավարամիտ տղամարդ:*

Նեջաթին, ամբարտավան համարելով բանաստեղծուհու վար-

⁵¹ Брагинский И., Комиссаров Д., там же, с. 28-29.

⁵² Բայրուրդյան, նշվ. աշխ., էջ 685:

⁵³ Նույն տեղում, էջ 33-34, ինչպես նաև Словарь литературоведческих терминов, Тимофеев Л. И., Тураев С. В., Москва, 1974, с. 338.

⁵⁴ Hakverdioğlu M., Mihri Hâtun'un Necâti Bey'in şiirlerine nazîreleri, Turkish Studies, International Periodical For the Languages, Literature and History of Turkish or Turkic, v. 4/2, Winter, 2009, pp. 555-584.

⁵⁵ Նույն տեղում:

մունքը, արհամարհական պատասխան է տվել վերջինիս. Mihri Necâti şî'rine dersen nazirelik/Sen bir keda ü müflis o bir padişâhla⁵⁶ - 2է՛յ, Միհրի՛, Նեջաթիի բանաստեղծություններին նազիրե էս գրում/Միևչդետ նրա պես փառիշահի հետ համեմատած դու աղքատ և մութացկան էս:

Այսպիսով հարկ ենք համարում նշել, որ թեև դիտարկվող ժամանակահատվածում օսմանյան գրականության մեջ նկատվել են որոշակի դրական միտումներ, մասնավորապես ժամանակաշրջանին համապատասխան բավականաչափ զարգացվել են չափածո ժանրերը, դրանց շրջանակներում ստեղծվել են արևելյան գրական ժառանգության մեջ արժանի տեղ զբաղեցնող ստեղծագործություններ, այնուամենայնիվ չնայած համաշխարհային մշակույթում վերածննդի միտումների տարածմանն ու զարգացմանը, օսմանյան գրականության զարգացման այս փուլում առկա են մի շարք ճգնաժամային երևույթներ՝ կապված տեխնիկական պոեզիայի լայն տարածման և զարգացման հետ: Մասնավորապես նշենք, որ, պայմանավորված օտար ազդեցություններով, օսմանյան պոետներն ամեն կերպ կառչում էին օտարալեզու փոխառություններից: Քանի որ այդ շրջանում մեծ հռչակ էր վայելում պարսկական պոեզիան, ուստի, որպեսզի օսմանյան պոետները համարվեին «հանճարեղ», նրանք պիտի ստեղծագործեին պարսկական պոեզիայի գրական ավանդույթներին համապատասխան: Պոետներն օգտագործում էին արաբերեն և պարսկերեն բարդ բառեր, քերականական կառույցներ: Ստեղծագործության արտահայտած իմաստն ու գաղափարը մղվում էր երկրորդ պլան: Շատ դեպքերում բառային տարբեր հնարներն ու դրանց խճճումը անհասկանալի էին դարձնում ստեղծագործության իմաստը: Ըստ այդմ դիվանի գրականությունը հասու չէր հասարակական լայն շրջանակներին:

MELKONYAN MARIAM

(YSU)

ABOUT THEMATIC AND GENRE PECULIARITIES OF OTTOMAN
POETRY IN 15-16 CENTURIES

15-16th centuries are considered as a certain stage for development of Ottoman culture and particularly for literature. This stage was marked with

⁵⁶ Михри-Хатун. Диван, с. 42.

military, political, economical ascents for Ottoman Empire which has an influence on literature. Nevertheless, in the context of world culture development, the studies directed to rise of Ottoman literature show, that it had relative character in Sultanate. Although there were positive trends in Ottoman poetry, particularly verse genres were sufficiently developed, nevertheless, in spite of the formation and development trends of renascence in world culture, there are crisis phenomena in Ottoman poetry connected with widely spread of technical poetry.

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐԻԱՍ

(ԵՊԷ)

ԿՐՈՋ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՐՏԱԶԱՅՏՈՒՄԸ ՄԻՉԴԻ ՀԱԹՈՒՆԻ
«HÁTEME-I RISÁLE» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ (15-16-ԸԴ ԴԱՐԵՐ)

Օսմանյան կայսրության հիմքում ընկած էին իսլամական օրենքները, որն էլ ձևավորում էր հասարակական մտածելակերպը: Այս հանգամանքով էր պայմանավորված այն, որ հասարակական տարբեր ոլորտներում ներգրավված էին միայն տղամարդիկ, կանայք մեկուսացված էին հասարակությունից, քաղաքականությունից, մշակույթից և այլն: Սրա հիմնական պատճառն այն է, որ իսլամը սահմանափակում է կանանց իրավունքները: Կարելի է միայն նշել բազմակնությունը, չաղբա¹ կրելու պարտադրանքը, մզկիթում կանանց աղոթելու արգելքը և այլ օրենքներ, որոնք կարգավորված են շարիաթով²: Օսմանյան կայսրությունում «Կանանց հարցը», որը ձևակերպվել է արևելագետ Վ. Գորդլևսկու կողմից, «իսլամական հասարակության մեջ երբեք գոյություն չի ունեցել»³: Ինչպես գրում է թուրքագետ Ալ. Սաֆարյանը. «Իսլամը կանանց ծածկեց շարշաֆով (*çarşaf*) և փակեց նրանց մուտքը դեպի հասարակական կյանք: Մինչև Մահմուդ 2-րդի ռեֆորմները իսլամական հասարակությունը լռում էր կանանց հարցի մասին: Ընդունված չէր խոսել նրա (իմա՝ կնոջ) մասին, հարցեր տալ նրա առողջության մասին և այլն»⁴: Ըստ օսմանյան հասարակության՝ կնոջ տեղն ընտանիքում էր, որտեղ նա պետք զբաղվեր միայն կենցաղային գործերով և երեխաների դաստիարակությամբ:

Կանանց նկատմամբ տիրող ընդհանուր վերաբերմունքը, որպես առանձին թեմատիկա, իր արտահայտումն է գտել օսմանյան պոեզիա-

¹ Չարշաֆ (թուրք.) - կանանց համար պարտադիր իսլամական գլխաշոր (արարենն՝ հիջաբ, չաղբա):

² Кулиева Э. Р., Коран, Смысловой перевод и комментарии Э. Р. Кулиева - Москва, Умма, 2003, ինչպես նաև Mohammad Zafrulla Khan, Women in Islam, Islam International Publications Limited Islamabad, Sheephatch Lane, Tilford, Surrey, UK, 2008, pp. 1-33, <https://www.alislam.org/library/WOMANINISLAM.pdf>

³ Гордлевский В. А., «Женская доля», Избранные сочинения, т. 3, Москва, 1962, с. 16-17.

⁴ Safaryan Al., On The History of Turkish Feminism, "Iran and the Caucasus", Vol.11.1, Brill, Leiden-Boston, 2007, p. 141.

յում, որտեղ հանդիպում են կանանց նկատմամբ տիրող բացասական կարծիքներ արտահայտող ստեղծագործություններ: Այստեղ կանանց տրվում են հետևյալ բնորոշումները՝ Աստծո կողմից անիծված (*melune*), կարիճ (*akrep*), կարճ խելք ունեցող (*kısa aklı*), տխմար (*ahmak*), խորամանկ (*hilekâr*), վատ (*kötü*), վստահության անարժան (*itimada lâayık olmayan*), ստախոս (*yalancı*), անհավատարիմ (*vefasız*), տղամարդուն տանջող (*erkeğe cevr ve cefa eden*), սատանայի պարան (*şeytanın ipi*) և այլն⁵: Ուշագրավ են Ռասիհի հետևյալ տողերը, որտեղ պոետը կոչ է անում չհավատալ կնոջ խոսքերին.

Sakin aldanma avretin sözüne

Merd isen bakma onların yüzüne⁶

Զգու՛յշ, կնոջ խոսքերին մի՛ հավատա,

Եթե մարդ ես, նրանց երեսին մի՛ նայիր:

Կանանց հեռու էին պահում նաև գրականությունից: Սա է պատճառը, որ օսմանյան գրականության մեջ կին գրողները շատ փոքր թիվ են կազմում: Օսմանյան գրականության մեջ կանանց դերի մասին կարծիքները միանշանակ չեն, թեև ուսումնասիրողների մեծ մասն ընդունում է, որ կանայք բավականաչափ ազատ չէին, և նրանց մեծամասնությունը գրականություն մուտք գործելու իրավունք չունեին: Այնուամենայնիվ, ինչպես նշում է գրականագետ Ն. Ս. Բանարլըն, 15-րդ դարը նշանավորվեց Դիվանի գրականության մեջ տաղանդավոր կին բանաստեղծուհիների ի հայտ գալով⁷: Նրանց մեծ մասը հիմնականում ստեղծագործել է դիվանի գրականության՝ տղամարդ պոետների կողմից ստեղծված գրական ավանդույթների շրջանակներում և չի արտահայտել կանանց բնորոշ մտքեր և գաղափարներ: Այս բանաստեղծուհիներից բացառություն է կազմում 15-16-րդ դարերի հայտնի օսմանյան բանաստեղծուհի Միհրի Հաթունը⁸ (1456-1514 թթ.)՝ իսկական

⁵ Levend A. S., *Divan Edebiyatı: Kelimeler ve Remizler, Mazmunlar ve Mefhumlar*, 4. Basım, İstanbul, 1984, էջ 581-584:

⁶ Levend A. S., a. g. e., էջ 583:

⁷ Banarlı N. S., *Resimli Türk Edebiyatı Tarihi*, c. 1, s. 451.

⁸ Միհրի Հաթունի կյանքի և գրական գործունեության մասին առավել մանրամասն տե՛ս Tezkire-i Lâtifi, s. 319, Koprülü-M. F., *Yeni Osmanlı tarih-i edebiyatı*, İstanbul, Şirket mertebiye matbaası, 1332 (1914), s. 248, Михри-Хатун. Диван, Критический текст и вступительная статья Е. И. Маштаковой, Москва, с.

անունը Միհրուննիսա կամ Յահրուննիսա, ծնվել է Ամասիայում, որտեղ էլ անցկացրել է իր ողջ կյանքը: Նրա հայրը՝ Մեհմեդ Չելեբի բին Յահյան, քաղի էր, ստեղծագործում էր Բելայի ծածկանունով⁹: Վերջինիս օգնությամբ դուստրը կրթություն է ստացել: Հետագայում հոր կողմից ստանալով Միհրի գրական կեղծանունը՝ սկսել է ստեղծագործել: Մուտք գործելով գրականություն՝ դառնում է ժամանակի ամենահայտնի բանաստեղծուհիներից մեկը¹⁰: Նա Ամասիայում՝ արքայազնի պալատում, դարձել է արքայազն Ահմեդի գիտական, գրական շրջանակի անդամ¹¹: Ողջ կյանքում, մտածելով անձնական ազատության մասին, երբեք չի ամուսնացել:

Միհրին միակ կին գրողն է, ով անկեղծորեն արտահայտել է իր սիրային զգացմունքները¹² և պատասխանել է կին գրողներին ուղղված հասարակական քննադատություններին: Միհրի Հաթունի դիվանում կարելի է հանդիպել բազմաթիվ տողերի, որոնք իր ժամանակի համար առաջադեմ գաղափարներ են արտահայտում, սակայն առավել ուշագրավ է *«Hâteme-i Risâle»*-ում (*«Ռիսալեի ավարտ»*) ստեղծագործությունը: Խրատական բնույթի այս գործը սկսվում է Աստծուն ուղղված գովաբանական տողերով.

Hamdullah avn idûp rebb ül-enam
Bu tezarrunâme-i kıldım tamâm
Hamdullah variken aklım bilûm
*Bu îlahiyyâtı nazm ettin dilûm*¹⁴.

*Փա՛ որք եղ օգնությանդ համար, մարդկության Տե՛ր,
 Ամբողջովին այս խոնարհումն եմ անում:*

1-99, Cemici S., XV yüzyıl kadın şairlerinden Mihri Hatun, Toplumsal Tarih, Cilt 2., Sayı: 9, (Eylül, 1994), s. 13. <http://isamveri.org/pdfdkm/13/DKM131344.pdf>, Gibb E. J., The poets and poetry of Turkey, London, 1901, p. 216, Halid M. İlk kadın şâir Mihri, Hayat Mecmuası, c. 14, sayı 92, 30 Ağustos, 1928, ss. 277-278. <http://isamveri.org/pdfdkm/13/DKM131344.pdf>.

⁹ Tezkire-i Lâtifi, a. g. e., s. 319.

¹⁰ Banarlı N. S., a. g. e., s. 453, ինչպես նաև տե՛ս Koprülü M. F., a. g. e., s. 215.

¹¹ Tezkire-i Lâtifi, a. g. e., s. 318.

¹² Edebiyat Ansiklopedisi, Milliyet, 1991, s. 208.

¹³ Михри-Хатун. Диван, с. 53-55.

¹⁴ Նույն տեղում, էջ 53:

*Միտքս գիտի գովաբանության մասին,
Ինձ արժանացրել էս այս աստվածային շնորհին:*

Սակայն այս բեյթերին հաջորդող տողերը կարծես հակասում են Աստծուն խոնարհ լինելու գաղափարին: Աստծուն իր գոհունակությունն ու խոնարհումն արտահայտելուց հետո բանաստեղծուհին յուրատեսակ բողոք է հղում արարչին, որտեղ արտահայտում է իր անհամաձայնությունը վերջինիս ստեղծած անարդարության դեմ.

*Setr ede eksiklüğeyn her ne ki var
Etme cemmale aybeyn-i aşıkâr
İşidüp dâñ etmeye her bi haber
Mihrinin kalbini kılmaya keder
Lık Mihri dâinün zanni budur
Bu sözi dir ol ki kâmil usludur
Bir müennes yigdürür kim ehl da
Bin müzekkerden ki ol nâ-ehl ola
Bir müennes yig ki zihni pâk ola
Bin müzekkerden ki bi-idrâk ola¹⁵*

*Ինչ պակասություն էլ լինի, թաքցրու՛,
Մի բացահայտիր ակնառու թերությունները:
Ամեն անտեղյակի չարախոսությունը լսելով՝
Միհրիի սիրտը վիշտն է պատում:
Ասում են, թե կինը բավական խելք չունի,
Նրա ամեն մի խոսքը պետք է ամբարտավան կարծել:
Սակայն Միհրին գտնում է, և նրա կարծիքն է այսպիսին,
Որ հասուն միտք ունեցողն է այդպես ասում:
Մի արժանավոր կինն ավելի լավ է,
Քան հազար անարժան տղամարդ:
Մի լուսավորյալ կինն ավելի լավ է,
Քան հազար խավարամիտ տղամարդ:*

Ինչպես տեսնում ենք, այստեղ բարձրացվում է տղամարդ-կին անհավասարության խնդիրը: Կարող ենք ասել, որ «*Hâteme-i Risâle*»-ում

¹⁵ Նույն տեղում, էջ 55:

բանաստեղծուհին փորձում է խոսել նաև կնոջ բնական իրավունքների մասին, քանի որ այստեղ Միհրին փորձում է ասել, որ կինն իր խելքով և գաղափարներով ոչնչով չի գիշում տղամարդուն, հաճախ նույնիսկ գերազանցում է, ուստի նրան նույնպես պետք է ընդունել որպես մարդկային էակի, ով իրավունք ունի դրսևորելու իր արժանիքները, արտահայտելու իր գաղափարներն այնպես, ինչպես տղամարդիկ: Թեև «*Hâteme-i Risâle*»-ում արտահայտված գաղափարները գերիշխող չեն Միհրի Հաթունի ստեղծագործություններում, սակայն այս տողերը փաստում են այն մասին, որ օսմանյան գրականության մեջ կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված գաղափարների, որոնք թերևս ֆեմինիզմի վաղ դրսևորում են, կարելի է հանդիպել դեռևս 15-16-րդ դարերի պոեզիայում:

Իր ժամանակի համար չափազանց համարձակ այս տողերում երևում է, որ Միհրին համարձակվում է քննադատել հասարակության մեջ տղամարդկանց և կանանց անհավասար կարգավիճակը: Սա օսմանյան դիվանի գրականության մեջ հանդիպող առաջին դեպքն է: Ուշագրավ է այն փաստը, որ միջնադարյան իսլամական հասարակության մեջ նմանատիպ հարց է բարձրացվում կնոջ կողմից: Հենց այս պատճառով էլ Միհրիի ստեղծագործությունները հաճախ բնորոշվում են որպես ֆեմինիստական¹⁶: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Միհրիից հետո մինչև թանգիմաթի շրջան (19-րդ դարի կեսեր) ոչ մի բանաստեղծուհի նման հարց չի բարձրացրել: Թերևս դա է պատճառը, որ Միհրի Հաթունը օսմանյան կին գրողների շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում:

Այսպիսով, 15-16-րդ դարերում առհասարակ հնարավոր չէր բարձրացնել կանանց իրավունքներին վերաբերող հարցեր: Այնուամենայնիվ, օսմանյան գրականության մեջ փոքրաթիվ կին գրողների շարքում առանձնահատուկ տեղ զբաղեցնող Միհրի Հաթունը, իր «*Hâteme-i Risâle*» ստեղծագործության մեջ առաջին անգամ առաջ է քաշում այնպիսի խնդիրներ, որոնք վերաբերում են իսլամական հասարակության մեջ տղամարդ-կին անհավասարությանը, կնոջ իրավագուրկ վիճակին և նրա բնական իրավունքների պաշտպանությանը:

¹⁶ Նույն տեղում:

THE REFLECTION OF THE STATUS OF WOMEN IN WORK «HÂTEME-I
RISÂLE» BY MIHRI HATUN (15-16 CENTURIES)

In Ottoman Empire Islamic laws formed public way of thinking. Women were isolated from society, politics, culture and so on. The main reason was that Islam restricted the women rights.

The general attitude towards women has its manifestation in Ottoman poetry, where we can meet works expressing negative opinions about women.

In Ottoman Empire women were kept away from literature. This is the reason why there are no many women in Ottoman literature. Nevertheless, 15th century was marked by appearing of woman poet in Divan literature. Many of them mainly wrote in literal traditions established by man poets. The only exception was Mihri Hatun (1456-1514). You can meet numerous lines in her divan, which express progressive ideas not typical to that period and the most notable from her works is «*Hâtemei Risâle*».

We can say that in «*Hâtemei Risâle*» the poetess tries to speak about woman's natural rights as here Mihri wants to say that woman with her mind and opinions is not yield to man, often even surpasses, so she must also be considered as a human being who has right to express her virtues, to express her ideas like men. In these extremely brave lines, not typical to that period, appear that Mihri has the courage to criticize unequal status of men and women in society. This is the first case in Ottoman Divan literature.

Although ideas expressed in «*Hâtemei Risâle*» are no predominant in other works of Mihri Hatun, but these lines show that in Ottoman literature the ideas dedicated to the protection of women rights are the reflection of feminism, which we can meet till 15-16 centuries.

ԳԱԼՈՒՍՏՅԱՆ ՌԵԳԻՆԱ
(ՀՅԹԻ)

ՀԱՅԵՐԻ ՌԻՆԵՉԴԿՈՒՄԸ ԵՎ ԹՈՒՐԲԱԿԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՓՈՐՁԸ

Թուրք ազգի ստեղծումը պետության կողմից իրականացվող ծրագիր էր, քանի որ թուրքերի դեպքում «ազգի» կոնցեպցիան ծագել է պետությունից¹: Յուրաքանչյուր պետության ձևավորման համար անհրաժեշտ է միջին խավ՝ բուրժուազիա, որն էլ հիմք է դառնում պետության համար և շահագրգռված է պետական իշխանության շարունակականության ու ամրապնդման մեջ: Թուրքագետ Էրիկ Յան Ցյուրխերը նշում է, որ Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայի վաղ շրջանում արդյունաբերական և առևտրային բուրժուազիայի զարգացման մասին խոսելն անիմաստ է՝ առանց հայերի և հույների ցեղասպանության մասին խոսելու²:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը հետին պլան մղեց երկու քաղաքական ուղղությունները՝ օսմանիզմը և պանիսլամիզմը, որոնց դեպքում հայերը կկարողանային գոյատևել որպես Օսմանյան կայսրության առանձին համայնք և առաջ քաշեց թուրքական ազգայնականության մասին «քաղաքական միֆը»³: «Թուրքի» ստեղծումը բացառում էր քաղաքական և սոցիալական համակարգում բոլոր փոքրամասնությունների՝ հատկապես հայերի գոյությունը: Երիտթուրքերը արտահայտում էին նոր ձևավորվող թուրք առևտրային բուրժուազիայի, հողատերերի և թուրք բուրժուա-ազգայնական մտավորականության

¹ M. Hakan Yavuz, Islamic political identity in Turkey, Oxford University Press, New York, 2003, p. 9.

² Zürcher E., Turkey: A Modern History, I. B. Tauris, 2005, p. 4.

³ Melson R., Revolution and Genocide: the origins of the Armenian genocide and the Holocaust, The University of Chicago Press, Chicago and London, 1992, p 143.

շահերը, որոնց էլ իրենց հերթին, անհրաժեշտ էր նոր կառավարության իշխանությունը: Դա երկուստեք շահավետ դաշինք էր:

Նշենք, որ 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում ձևավորվում էր բուրժուական մտավորականության խավը, դրա հետ մեկտեղ ավելանում էր նաև բժիշկների, իրավաբանների, տեխնիկների, տարատեսակ ընկերությունների աշխատակիցների, գրողների, լրագրողների, պաշտոնյաների, սպաների թվաքանակը, ընդ որում ազատ մասնագիտությունների մեջ գերակշռում էին քրիստոնյաները, իսկ պաշտոնյաների և սպաների գերակշիռ մասը թուրքեր էին⁴: Քրիստոնյաները, հատկապես՝ հայերն ու հույներն էին ներգրավված գյուղատնտեսության, արդյունաբերության, առևտրի, ինչպես նաև մշակույթի ոլորտներում⁵: Նրանք զբաղվում էին նաև վաշխառությամբ, ինչից օգտվում էր սուլթանական կառավարությունը, որպեսզի հետամնաց մուսուլմաններին պարբերաբար հրահրի հույն և հայ բնակչության դեմ⁶: Ճիշտ է թուրքերի մի զգալի մասը 19-20-րդ դարերի սահմանագծում արդեն փորձում էր ինչ-որ նյութական արժեքներ ստեղծել, սակայն քրիստոնյաներն արտադրության ոլորտում մնում էին առաջատար: Սուլթանը և նոր ծագող թուրքական բուրժուազիան գիտակցում էին, որ կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց կուրվագծվի քրիստոնյա հպատակների գերազանցությունը, ինչն էլ կհանգեցնի վերջիններիս ապակենտրոն գործողություններին⁷: Այստեղից էլ առաջ էր գալիս ատելությունը և վախը քրիստոնյաների հանդեպ: Օսմանյան կայսրության կենտրոնաձիգ իշխանության խնդիրներից էր նաև այն, որ կայսրությունը ոչ միայն բազմէթնիկ էր, այլ նաև բազմակրոն, ընդ որում կրոնը ինքնին բաժանարար հանդիսանալուց բացի այս դեպքում կանխորոշում էր նաև աշխատանքային բաժանումը. մի կողմից աճող, հզորացող մուսուլմանական բյուրոկրատիա և զինվորականություն, մյուս կողմից՝ ժամանակակից առևտրաարդյունաբերական քրիստոնյա բուրժուազիա: Դեռևս 19-րդ դարի սկիզբին սուլթան-խալիֆը բացահայտեց, որ կրոնը՝

⁴ Новичев А. Д., Турция, краткая история, Москва, 1965, 114 с.

⁵ Տե՛ս Новичев А. Д., նշվ. աշխ., էջ 111:

⁶ Նույն տեղում, էջ 112:

⁷ Միմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի զաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 89:

իսլամը չէ այն գեները, որով կարելի է տնտեսական հատվածում գեր-
իշխողներին իրեն ենթարկել⁸:

Երիտթուրքերի նոր ձևավորվող ազգայնականությունը, որա
նաղղվածությունը լայնորեն քննարկվում էր երիտթուրքերի Կահիրեի
պաշտոնաթերթում («Թուրքը», Türk): Թերթը գրում էր, որ թուրքական
ազգային ինքնության կառուցման հիմքում ընկած է Օսմանյան կայս-
րությունը ժամանակակից պետության վերածելու անհրաժեշտությունը,
որի հիմքում կլինի թուրք ձեռնարկատերը: Թերթը ուրվագծում էր
Արևմուտքի կողմից ղեկավարվող հայ շահագործողի և վաշխառուի
կերպարը, որը կուտակել է իր կարողությունը թուրքի հաշվին⁹: Այն նաև
կոչ էր անում բոլորիս հարևան հայ առևտրականներին և արհեստա-
վորներին: Ի հայտ է գալիս «ազգային տնտեսության» (milli iktisat) գա-
ղափարը, որը սկզբնական շրջանում նպատակ ուներ հայ և հույն գոր-
ծարարներին փոխարինել թուրքերով կամ մուսուլմաններով, այնու-
հետև՝ ոչնչացնել նրանց¹⁰:

Սակայն Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող
շրջանում թուրքական բուրժուազիայի տեսակարար կշիռը դեռևս մեծ
չէր¹¹: Վերջինս դեռ նոր էր ասպարեզ իջնում՝ պայքարի մեջ մտնելով
կայսրության քրիստոնյա բուրժուազիայի դեմ, որն օգտագործելով ար-
տասահմանյան կապիտալը «իր ձեռքն էր գցել» տնտեսության հիմ-
նական լծակները¹²: 1908 թ. հեղաշրջումից հետո կայսրությունում սկսե-
ցին գործել երիտթուրք գաղափարախոսները, որոնք, հենվելով այդ և
գոյություն ունեցող այլ նախադրյալների վրա, ակտիվորեն մուսուլման
բնակչությանը գրգռում էին քրիստոնյաների դեմ: Երիտթուրքերի

⁸St' u Erik-Jan Zürcher, *The Ottoman Empire 1850-1922—Unavoidable Failure?*, էջ 8,
<http://www.transanatolie.com/english/turkey/turks/ottomans/ejz31.pdf>

⁹ Kévorkian R., *The Armenian Genocide: A Complete History*, I.B. Tauris, London-
New York, 2011, էջ 25:

¹⁰ Kévorkian R., նշվ. աշխ., էջ 25:

¹¹ Օսմանյան կայսրությունում ճշգրիտ վիճակագրություն չկար, բայց
առևտրականների ազգային պատկանելության վերաբերյալ որոշակի պատկե-
րացում է տալիս Ստամբուլի, Իզմիրի և Տրապիզոնի առևտրականների ցուցա-
կը: Այն թվագրված է 1911/12-ով: Այնտեղ կարելի է հաշվել ընդամենը 70
մուսուլմանական անուններ Կոստանդնուպոլսում (այդ թվում նրանց մեջ
կարող էին նաև լինել ոչ թուրքեր՝ արաբներ, չերքեզներ և այլն), իսկ առաջին
կարգի 40 առևտրականների մեջ՝ ընդամենը երկու թուրքական անուն (Миллер
А. Ф., *Очерки новейшей истории Турции*, М.-Л., 1948, с. 16).

¹² Միմոնյան Հր., նշվ. աշխ., էջ 33:

տնտեսական ազգայնականության ազդեցիկ գաղափարախոսներից էր Մեհմեդ Ջիա Գեոքալփը (1876-1924 թթ.): Նա պնդում էր, որ իդեալական տնտեսական համակարգը պետք է կանխի անհատների կողմից հասարակական ունեցվածքի յուրացումը, ինչի մեջ նա սովորաբար մեղադրում էր հայերին և հույներին¹³: Կապիտալիզմի հիմքը, ըստ նրա, պետք է լիներ պետության կողմից հովանավորվող «ազգային [թուրք] առևտրականը»¹⁴: Գեոքալփը իր հայտնի «Հայրենիք» (“Vatan”) քանաստեղծության մեջ պնդում է, որ թուրքի հայրենիքն է այն երկիրը, որտեղ շուկայում շրջանառվող փողը, նավաշինարանները, գործարանները, նավակները և գնացքները թուրքինն են¹⁵: Գեոքալփի նման Յուսուֆ Աքչուրան (1876-1935 թթ.) նույնպես կոչ էր անում ստեղծել «ազգային տնտեսություն» (millî iktisad), որը կապահովեր թուրքական ազգային պետությունը: Նա գրում էր. «Ժամանակակից պետությունների հիմքը բուրժուազիան է... Թուրքական ազգային վերածնունդը կարող է հարթակ լինել օսմանյան պետության մեջ թուրքական բուրժուազիայի համար: Եթե թուրքերն ի վիճակի չլինեն ձևավորելու կապիտալիստական բուրժուական դաս, լիովին պաշտոնյաներից և գյուղացիներից բաղկացած օսմանյան հասարակության համար՝ որպես ժամանակակից պետություն գոյություն ունենալը անհնարին կդառնա»¹⁶:

Քրիստոնյա գործարարների դեմ պայքարի նոր միջոց դարձավ բոյկոտը: Այն ոչ միայն որևէ տերության շահերին հարվածելու, կայսրության քրիստոնյա առևտրականներին վնաս հասցնելու, այլև նոր ի հայտ եկող թուրքական արտադրանքը խրախուսելու մի նոր ձև էր: Դեռևս Ավստրո-Հունգարիայի կողմից Բոսնիա և Հերցեգովինայի (1908 թ.) գրավումից հետո օսմանցիները բոյկոտեցին ավստրիական ապրանքները: Նույնը տեղի ունեցավ Տրիպոլիտանական (1911 թ.) պատերազմից հետո՝ իտալական ապրանքների հետ¹⁷: Միստեմատիկ կերպով բոյկոտի ենթարկվեցին նաև հունական ապրանքները: Հունական

¹³ Üngör U. and Polatel M., *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, Continuum, London, 2011, p. 31:

¹⁴ Gökalp Z., *Turkish Nationalism and Western Civilization*, Columbia University Press, New York, 1959, p. 72-73. «Կարելի է ասել, որ Գեոքալփի թուրքական ազգայնականության սահմանումը բացառում էր հայերին և հիմք էր դնում նրանց ոչնչացման համար» (Melson R., նշվ. աշխ., էջ 167):

¹⁵ Gökalp Z., *Vatan*, http://www.siir.gen.tr/siir/z/ziya_gokalp/vatan.htm

¹⁶ Üngör U. and Polatel M., նշվ. աշխ., էջ 32:

¹⁷ *Turkey: A Modern History*, էջ 104:

նավերին թույլ չէին տալիս կառանել կայսրության նավահանգիստներում, հունական ապրանքներն արգելված էին¹⁸: Բայց երիտթուրքերի այս քաղաքականության նոր դրսևորումը հայ ձեռնարկատերերի և նրանց արտադրանքի բոյկոտն էր՝ ապահովված միջոցառումների մի ամբողջական զինանոցով, որն իրենից ներկայացնում էր բանկային վարկերի մերժում և արտահանմամբ զբաղվողների վարչական հետապնդումներ: Արդեն 1913 թ. սկսած մուսուլման բնակչությանը խորհուրդ էր տրվում հովանավորել միմիայն թուրք առևտրականներին, քրիստոնյաների «այիդ ռապրանքները» գնելու փոխարեն¹⁹: Իրավիճակը սրվեց Բալկանյան պատերազմներից հետո (1912-1913 թթ.), որոնց արդյունքում կայսրությունը կորցրեց մոտ 60 հազ. քառ/կմ տարածք 4 մլն բնակչությամբ, ինչը նաև հսկայական տնտեսական հարված էր²⁰: Բալկանյան երկրների կորուստը երիտթուրքերն ընկալեցին որպես նախազգուշացում: Բալկաններում յուրաքանչյուր ժողովուրդ ուներ քիչ թե շատ կայացած ազգային բուրժուազիա, որն էլ ուղղորդում էր կայսրությունից տարանջատվելու և ազգային պետություն հիմնելու պայքարը: Գեորգալփը նշում է, որ քրիստոնյա ժողովուրդները անկախանում էին Օսմանյան կայսրությունից, որովհետև ունեին իրենց ազգային հաստատությունները՝ եկեղեցական կազմակերպությունները, դպրոցները, ընկերությունները, առևտրային կազմակերպությունները (օրինակ՝ Մակեդոնիայում), որոնք էլ իշխանության դեմ պայքարի կենտրոններ էին դառնում²¹: 1913-ից հետո երիտթուրքական կառավարությունը դեմ հանդիման կանգնեց Արևմտյան Հայաստանը կորցնելու

¹⁸ Տե՛ս Վարդանյան Գ., Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923 թթ.), Երևան, 2012, էջ 77: Woods Charles, The Danger Zone of Europe: Changes and problems in the Near East, London, 1911, էջ 46:

¹⁹ Kévorkian R., նշվ. աշխ., էջ 159:

²⁰ Turkey: A Modern History, էջ 108: Կայսրությունը զրկվում էր նաև զինծառայությունից ազատված և դրա համար հարկ վճարող քրիստոնյա հպատակներից՝ *bedel-i-askeri* (Киракосян Дж., Западная Армения в годы Первой Мировой войны, Ер., 1971, с. 33): Տնտեսական առումով հարվածը հասկանալու համար տեղին է Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուի նկատառումը. «Դարեր շարունակ թուրքերը պորտաբույծների նման ապրել են իրենց լծի ծանրության տակ կքած աշխատատեղեր մարդկանց հաշվին: Թուրքերը դաժան հարկեր էին դնում նրանց վրա՝ հասցնելով վերջիններիս ծայրաստիճան չքավորության, տնտեսական կործանման...» (Մորգենթաու Հ., Դեսպան Մորգենթաուի պատմությունը, Երևան, 2012, էջ 211):

²¹ Gokalp Z., նշվ. աշխ., էջ 92:

վախին: Հայկական բուժուական խավը ընկալվում էր որպես մահացու ախտյան և թիրախ դարձավ «ազգային տնտեսության» գաղափարը գովերգող ազգայնամուլների կողմից²²: «Թուրքիզմ և պանթուրքիզմի իդեալը» գրքի մեջ օսմանցի հրեա Թեքինալփը (Մոխա Կոհեն, 1883-1961 թթ.) գրում է, որ քանի դեռ թուրքերը թույլ են տալիս այլ ազգությունների մարդկանց «կլանել» իրենց առևտուրը, արդյունաբերությունը և երկրի ողջ տնտեսական ռեսուրսները, նախընտրում են ղեկավար պաշտոններ զբաղեցնելը առևտրի կամ որևէ այլ ազատ զբաղմունքից, այդքան ժամանակ նրանք կմնան թույլ, իսկ օտարները (հայերը և հույները)՝ Թուրքիայի տերեր²³:

Թուրքական բուժուական միջին դասակարգը կամրապնդեր նաև «Միություն և առաջադիմություն» կոմիտեի իշխանությունը: Այն կազմելու բարեպատեհ առիթ ստեղծում էր մոտեցող համաշխարհային պատերազմը, և երիտթուրքերը կարող էին ձեռնարկել ավելի կտրուկ միջոցներ: Նման առաջին քայլը 1914 թ. հունիսին ընդունված օրենքն էր, որը կոչ էր անում մարդկանց գնել միայն օսմանյան ապրանքներ, նույնիսկ, եթե դրանք թանկ էին մրցակից արտասահմանյան ապրանքներից 10%-ով²⁴: Դա նպատակ ուներ օժանդակել թուրքական արդյունաբերության զարգացմանը: Սակայն այդ ուղղությամբ ամենամեծ քայլը 1914 թ. հոկտեմբերի 1-ին կապիտուլյացիաների ռեժիմի վերացումն էր, որը դիտվում էր որպես Արևմուտքի կողմից պարտադրված չարիք: Կապիտուլյացիաների վերացմամբ իթթիհադական կենտրոնական կոմիտեն ամուր հիմքերի վրա դրեց տնտեսությունն «ազգայնացնելու» իր ծրագիրը²⁵: Կայսրության քրիստոնյա ձեռներեցների վիճակը համաշխարհային պատերազմի սանձազերծմամբ վատթարացավ: Կուսակցության շարքային անդամներից մեկը վկայում է ներքին գործերի նախարար Թալեաթի խոսքերը. «Նրանց [քրիստոնյաներին] թուրքերին կապելու հնարավորությունը կորած է: Այժմ նրանք բոլորը պայքարում են իրենց ռասայի, կրոնի, ազգության և տեսակի համար, և նրանք դա անում են

²² Միմնյան Հր., նշվ. աշխ., էջ 287:

²³ Tekin Alp, *The Turkish and Pan-Turkish Ideal*, liberty Press, London, England, p. 35.

²⁴ Turkey: *A Modern History*, էջ 126: Հրեաների Հոլոքոստից առաջ բոլկոսովեցիկ նաև հրեական ապրանքները, օրենքներով զգալիորեն կրճատվեցին նրանց քաղաքացիական իրավունքները (*The Boycott of Jewish Businesses*, <http://www.ushmm.org/outreach/en/article.php?ModuleId=10007693>):

²⁵ Turkey: *A Modern History*, էջ 125:

մեր հաշվին... տեսնենք: Եկեք անցնենք այս կամուրջը: Մինչև մենք հեռանանք, նրանք կհեռանան մեզնից»²⁶:

Տնտեսական գերակայության հաստատումը և քաղաքական թերարժեքությունը առաջ քաշեցին հայերի ունեցվածքի անօրինական լինելու թուրքական ընկալումը: Քրիստոնյաների «թուրքերի հաշվին ապրելը և հարստանալը» գաղափարական լուրջ հենք ուներ և պրոպագանդվում էր 1900-ականների սկզբից, սակայն թուրք բարձրաստիճան սպաշտոնյաների կողմից հնչեցվեց պատերազմի սկզբին: Թեկինալփը նշում է. «Թուրքիայի քրիստոնյա բնակչությունը հաստատորեն զարգանում էր, մասամբ՝ չափազանց հեշտությամբ տրված արտոնությունների, մասամբ՝ իրենց անձնական նախաձեռնությամբ, և նրանք երկրի իրական սեփականատերերին (թուրքերին) իրենց ժառանգությունից դուրս էին մղում ավելի ու ավելի»²⁷: Հայտնի է, որ ցեղասպանության ընթացքում ոճրագործը վարկաբեկում է գոհին՝ արդարանալու նպատակով²⁸: 1915 թ. օգոստոսին ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի և Թալեաթի հանդիպման ժամանակ ներքին գործերի նախարարը ներկայացնում է Հայկական հարցի վերաբերյալ պետական դիրքորոշումը. «Մեր վերաբերմունքը հայերի հանդեպ հիմնված է երեք հստակ հանգամանքների վրա. առաջին՝ նրանք հարստացել են թուրքերի հաշվին, երկրորդ՝ որոշել էին մեզ վերահսկողության տակ առնել և ստեղծել անկախ պետություն ... Ահա թե ինչու մենք եկանք անբեկանելի որոշման մինչ այս պատերազմի ավարտը պետք է անգորացնել նրանց»²⁹: Պաշ-

²⁶ Ungör U. and Polatel M., նշվ. աշխ., էջ 36:

²⁷ Tekin Alp, նշվ. աշխ., էջ 56:

²⁸ Լեո Կուպերը նշում է. «Հրեաները, նացիստների պատկերացմամբ, մարմնավորում էին և՛ կապիտալիզմը, և՛ դրա ոխերիմ հակառակորդ կոմունիզմը, նրանք խորհրդանշում էին դիվային ուժ և դավադիր թշնամություն, և, մինևույն ժամանակ, արհամարհելի թուլություն ու հիվանդագին այլասերում: Այստեղ արդեն գոյատևման վտանգ կար, ինչը կոչ էր անում դասակարգային պատերազմն անտեսող միասնության և զուգակցվում էր գոհի հեշտ խոցելիության հետ: Ի հավելումն, ձեռք էր բերվում նաև կյուրթական շահ՝ բռնագրավմամբ և թալանի մյուս տեսակներով» (Leo Kuper, Genocide: its Political Use in the Twentieth Century, New Haven and London, Yale University Press, 1981, p. 95):

²⁹ Մորգենթաու Հ., նշվ. աշխ., էջ 252: Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ և հետո տեղի ունեցած ցեղասպանություններն ունեին տարբեր հրահրիչ բաղադրիչներ: Քաղաքական ցեղասպանությունները, որոնց արդյունքում կառավարությունները որոշակի ծրագիր կամ դոկտրինա են իրականացնում, քիչ քանակ են կազմում դրանց մեջ: Դրանք են հայերի, հրեաների և Կամբոջայի

տոնական թուրքական դիրքորոշումը տեղ է գտել նաև այժմյան թուրքական պատմագրության մեջ, նույնիսկ Հայոց ցեղասպանության փաստն ընդունող պատմաբանների մոտ: Օրինակ՝ Թաներ Աքչամը գրում է. «Հնարավոր է քրիստոնյաները տեսականորեն դեմ չէին իրավահավասարությանը, բայց գործնականում նրանք նախընտրում էին վճարել փրկագին և ազատվել զինծառայությունից ու զբաղվել առևտրով, հողագործությամբ: Եթե ասվածին ավելացնենք, որ, օգտվելով մուսուլմանների բացակայությունից, որոնք ծառայում էին բանակում, քրիստոնյաները վերահսկողություն էին սահմանում գյուղատնտեսության և առևտրի վրա, դժվար չի լինի հասկանալ նրանց հանդեպ աճող թշնամանքի պատճառները»³⁰: Սակայն Աքչամը հենց ինքն է փաստում, որ արհեստականորեն ստեղծվում էր քրիստոնյայի որոշակի կարծրատիպ. բոլոր տեսական աշխատություններում, որոնք նվիրված էին իմպերիալիստական պետությունների կողմից Օսմանյան կայսրու-

ցեղասպանությունները (Helen Fain, Genocide and other state murders in the twentieth century, a lecture from October 24, 1995, <http://www.ushmm.org/confront-genocide/speakers-and-events/all-speakers-and-events/genocide-and-massmurder-in-the-twentieth-century-a-historicalperspective/genocide-and-other-state-murders-in-the-twentieth-century>): Այստեղից էլ գալիս է որոշակի նմանությունները, օրինակ՝ թիրախ խմբի տնտեսական դերի հետ կապված. 1937 թ. հունվարի 30-ին Ռայխստագում Հիտլերը իր ճառում նշում է. «Մենք հրաժարվում ենք թույլ տալ օտար ռասայի որևէ ազդեցությունը մեր քաղաքական, հոգևոր կամ մշակութային կյանքի վրա, կամ օտարի ցանկացած արտոնյալ դիրքը տնտեսական ոլորտում» (Maureen S. Hiebert, The Three “Switches” of Identity Construction in Genocide: The Nazi final Solution and the Cambodian Killing fields, Genocide Studies and Prevention, Volume 3, number 1, Spring, 2008, p. 14):

³⁰ Акчам Т., Турецкое национальное “Я” и Армянский вопрос, 1995, с. 44. Այս սխալ տեսակետին զիտական պատասխան է տալիս ռուս պատմաբան Դևիտրի Երեմենը: Նա նշում է, որ տնտեսության այն ճյուղերում, որտեղ ավելի շուտ կարող էր հասունանալ կապիտալիստական կարգը, ներգրավված էին մեծ մասամբ հույները, հայերը, սլավոնական ազգերի ներկայացուցիչները, այն դեպքում երբ թուրքերի համար արհեստներով և առևտրով զբաղվելը համարվում էր *անպատվաբեր* գործ: Թուրքին «հարիր» էր զինվորական, քաղաքացիական կամ հոգևոր պաշտոններ զբաղեցնելը: Վաշխատուները և բանկիրները նույնպես բացառապես ոչ մուսուլմաններ էին: Սրա վրա ազդել է նաև փողը տոկոսներով չտալու իսլամի դրույթը: Այլ կերպ ասած կապիտալի նախնական կուտակման այս տարբերակը փակ էր այն թուրքերի համար, որոնք իրենց ընտրությամբ խստորեն հետևում էին հավատքի դոգմաներին (Еремеев Д. Е., Этногенез турок, М., 1971, էջ 178-179):

թյունը գաղութի կամ կիսագաղութի վերածելուն, քրիստոնյա փոքրամասնությունները ներկայացված են որպես իմպերիալիզմի կոմպրադորներ³¹ կամ գործակալներ³²: Սոցիոլոգ Լեո Կուպերը նույնպես եշում է, որ գրականության մեջ հայերին անվանում էին «առևտրական ազգ» (mercantile race): Այդ պիտակավորումը հետագայում կտրվի նաև հրեաներին, և այլ գոհ ազգերի՝ որպես սպանության արդարացում³³: Հայ գործարար խավի կոմպրադորային բնույթը և Արևմուտքի լրտես լինելը գոհին վարկաբեկելու և հանցագործությունը արդարացնելու այդ նույն շարքից է, քանի որ հայերն իրենց դիրքը բարելավելու բնական մարդկային ցանկության սահմաններից դուրս չէին գործում³⁴: Առհասարակ, խումբը կարող է թիրախ ընտրվել ցեղասպան վերնախավի կողմից ոչ թե նրա համար, որ հրահրել է իր դեմ բռնություն, այլ այն բանի համար, որ նրա ոչնչացումը ընկալվում է որպես օգտակար միջոց, կամ դրա գոյությունը դիտվում է որպես քաղաքական որևէ ուղեգծի գործադրման խոչընդոտ³⁵, հայերի դեպքում՝ երիտթուրքերի կողմից ազգային պետություն կառուցելու:

Իթթիհադական ղեկավարները, ըստ էության, գիտակցում էին, որ Հայոց ցեղասպանության հետևանքով լուրջ տնտեսական անկում էր գրանցվելու երկրում, ուղղակի դա համարում էին ժամանակավոր և օգտակար հիմնվելիք ազգային պետության համար: Արդեն 1915 թ. սկզբին Օսմանյան կայսրությունում օտարերկրյա, հատկապես՝ պատերազմում նրա դաշնակից երկրների դիվանագիտական գործիչները, հենվելով թուրք պաշտոնյաների հետ զրույցների և իրենց շրջաններում իրականացվող գործողությունների վրա, փաստում են հայ ժողովրդի բռնագաղթի ու կոտորածի արդյունքում երկրի տնտեսության ճգնաժամային վիճակը: Սամսունի գերմանական փոխհյուպատոս Բուքհոֆը 1915 թ. հուլիսի 4-ին գեկուցում է դեսպան Վանգենհայմին. «Հայկական տարրի ոչնչացմամբ Անատոլիայում խախտվում է ողջ առևտուրը և անհնարին է դառնում երկար տարիներով երկրի տնտեսական զարգա-

³¹ Компраторская буржуазия, <http://dic.academic.ru/dic.nsf/politology/1423>

³² Акчам Т., նշվ. աշխ., էջ 48:

³³ Kuper L., նշվ. աշխ., էջ 117:

³⁴ Bloxham D., Genocide, The World Wars and the Unweaving of Europe, Vallentine Mitchell, London-Portland, 2008, p. 23.

³⁵ Kuper L., նշվ. աշխ., էջ 92; Kelman H., Violence without moral restraint: reflections on the dehumanization of victims and victimizers, Journal of Social Issues, Volume 29, Number 4, 1973, p. 32:

ցումը, քանի որ բոլոր առևտրականները, արտադրողներն ու արհեստավորները գրեթե բացառապես հայեր էին: Այս կետն էլ ես պարզաբանեցի նահանգապետին, ցավոք՝ ապարդյուն»³⁶: Ըստ փոխհյուպատոսի՝ իշխանության երկաթյա սկզբունքը ողջ երկրիը իսլամացնելն է՝ դրա համար կիրառելով բոլոր հնարավոր միջոցները: Գրեթե նույն բովանդակությունն ունի Հալեպում ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեքսոնի 1915 թ. օգոստոսի 3-ի հաղորդումը «...Քանի որ ներքին առևտրի 90%-ը գտնվում էր հայերի ձեռքում, արդյունքն այն է, որ երկիրը կանգնած է փլուզման եզրին: ...Տեղահանության ենթարկված տարածքներում, մի քանի բացառությամբ, չի մնացել ոչ մի քարտաշ, կոշկակար, կավագործ, դեղագործ, բժիշկ, իրավաբան կամ որևէ ծառայող կամ առևտրական. երկիրը փաստորեն կհայտնվի անօգնական վիճակում»³⁷: Արժեքավոր է Ալեքսանդրետի գերմանական փոխհյուպատոս Հերման Հոֆմանի 1915 թ. նոյեմբերի 8-ի զեկուցագիրը՝ իրավիճակը ճիշտ դիտանկյունից քննելու համար: Ներկայացնելով հայերի տեղահանության ծավալը, կոտորածները, դրանց մեթոդները, համակենտրոնացման ճամբարները, նա անդրադարձ է կատարում Օսմանյան կայսրության տնտեսության մեջ հայերի նշանակությանը³⁸: Նա հայտնում է, որ թուրքական վերնախավը չի հերքում այն մեծ տնտեսական վնասը, որն առաջացել է հայերի ոչնչացման և նրանց [«մտավոր և տնտեսապես հետամնաց»] մուսուլմաններով փոխարինելու դժվարության արդյունքում, բայց այն

³⁶ Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы Политархива МИД Кайзеровской Германии, отв. ред. В. А. Микаелян, Ер., 1995, с. 196. Գուստ Վ. (Հր.), Հայերի ցեղասպանությունը 1915-1916 (Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից), Երևան, 2008, էջ 249:

³⁷ Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), с. 393: Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջեսսի Ջեքսոնը Հենրի Մորգենթաուին, օգոստոսի 3, 1915 թ. (Ara Sarafian, United States official records on the Armenian Gneocide, Tadeon Press, England, p. 170).

³⁸ «Եթե յուրաքանչյուր հայ... միայն վաշխառու լիներ և ոչինչ ավելի, ապա, իհարկե, խոսք չէր լինի կայսրության համար այդպիսի վնասի մասին: Իրականում հարյուրհազարավոր աշխատունակ հայերը, որոնց ընդհանուր թիվը Թուրքիայի տարածքում գնահատվում է, ինչպես հայտնի է, 2 միլիոնից ավելի, ջանասեր և հմուտ արհեստավորներ, եռանդուն, ձգտող, նախաձեռնող հողագործներ են», Ալեքսանդրետի գերմանական փոխհյուպատոս Հոֆմանը Հալեպի հյուպատոս Ռյոսլերին, 1915 թ. նոյեմբերի 8 (Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), с. 292; Հայերի ցեղասպանությունը 1915-1916, էջ 484):

անհնար է համարում առավել խաղաղ և աստիճանական ճանապարհը, քանի որ խաղաղ մրցակցության ցանկացած տեսակի դեպքում տնտեսական շնորհ չունեցող թուրքերը տանուկ կտային³⁹: Տնտեսական գործոնի երկրորդական լինելը փաստում են հենց իրենք՝ երիտթուրքական եռապետության անդամները: Մորզենթաուի այն փաստարկին, որ երկրի տնտեսությունը կործանվում է, էնվերը պատասխանում է. «Այս պահին տնտեսական նկատառումներն էական չեն. ամենակարևորը հարթելն է»⁴⁰: 1915 թ. հայերի տեղահանությունն ու ոչնչացումը ո՛չ տնտեսական, ո՛չ ռազմական առումներով տրամաբանական չէր: Արևմտյան Հայաստանի հայ գյուղացիությունը ապահովում էր կայսրության գյուղատնտեսական արտադրանքի գերակշիռ մասը: Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լեսլի Դևիսը, 1915 թ. հունիսին դեսպանին նկարագրելով շրջանի հայերի տեղահանությունը, կարծիք է հայտնում, որ ողջ գործարար կյանքի վերացմամբ և միսիոներների հեռանալուց հետո առհասարակ հյուպատոսություններ պահելու անհրաժեշտություն չկա ոչ միայն Խարբերդում, Դիարբեքիում, այլև կայսրության մյուս շրջաններում⁴¹:

Հայտնի է, որ բոլոր ցեղասպանություններում գոյություն ունեն նյութական առավելություններ, որոնք ձեռք է բերում ոճրագործը զոհ խմբին ոչնչացնելու դեպքում. միջոցներ պատերազմի և այլ ծրագրերի համար, առևտրի մեջ մրցակցության վերացում, ոճրագործների և նրանց հետևորդների միջև ավարի բաշխում, թալան ամբոխի կողմից⁴²: Հայ ժողովրդի ցեղասպանության ընթացքում դա իրականացվում էր պետական մակարդակով: Ցեղասպանագետ և սոցիոլոգ Ուդուր Ումիթ

³⁹ Բենջամին Վալենտինոն նշում է, որ վերնախավը ցեղասպանություն է կատարում արմատական քաղաքական նպատակներ իրականացնելու համար: Որոշումը կայացվում է այն բանից հետո, երբ առաջնորդները եզրակացնում են, որ իրենց նպատակներին հասնելու այլ տարբերակներ՝ պակաս բոնի ճնշումները, անարդյունավետ և ոչ պրակտիկ են (Benjamin A. Valentino, *Final solutions: mass killing and genocide in the twentieth century*, Cornell University Press, Itaca and London, 2005, p. 3, 73.): «Իմ [Հոֆմանի] թուրք բարեկամները հուսով են, թե թուրք ժողովրդական տնտեսության մարմնին այս ծանր վիրահատությունը ի վերջո կհանգեցնի կայսրության առողջացմանը՝ մահմեդական-թուրքական իմաստով» (Հայերի ցեղասպանությունը 1915-1916, էջ 485; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), с. 285-295.):

⁴⁰ Մորզենթաու Հ., նշվ. աշխ., էջ 259:

⁴¹ United States official records on the Armenian Genocide, էջ 460:

⁴² Kuper L., նշվ. աշխ., էջ 43:

Ունգորը տալիս է հայկական ունեցվածքի բռնագրավման հետևյալ բաժանումը. ունեցվածք, որը հայտնվեց մասնավոր ձեռքերում և այն, որ մնաց պետության տնօրինության տակ⁴³: Վերջինս նույնպես բաժանվում է քաղաքացիականի և զինվորականի: Չինվորականը պայմանավորված էր գուտ պատերազմով, օրինակ՝ հայերին պատկանող որոշ շենքեր զինվորական հիվանդանոցների վերածվեցին: Այլ շինություններ վերածվեցին բանտերի, ոստիկանատների, հանդիսասրահների, դպրոցների և հիվանդանոցների: Թալեաթի հրամանով բանտերի վերածվեցին հայերի կողմից «լքված» որոշ մեծ չափի շինությունները: Հատուկ քննության արդյունքում ընտրվեց, օրինակ, Այնթափի հայկական եկեղեցին, որը որպես բանտ գործեց մինչև 1970-ականները: Իզմիրում ամենաքիչը երեք համայնքային շինություններ վերածվեցին ոստիկանատների⁴⁴:

Թաներ Աքչամը նույնպես նշում է, որ հայերի ունեցվածքի համատարած թալան է եղել, սակայն, ըստ նրա, իշխանությունները աշխատել են միջոցներ ձեռնարկել դրա դեմ. «հանձնաժողովներ են կազմել, դատարաններ հիմնել և դատել կողոպուտ իրականացնողներին, սակայն չեն կարողացել թալանի դեմն առնել»⁴⁵: Աքչամը սխալմամբ պնդում է, որ թալանը չի եղել պետական քաղաքականություն: Սակայն փաստ է, որ հայերի ունեցվածքի բռնագրավումը կազմակերպելու և կանոնակարգելու համար թուրքական կառավարությունն ընդունել է մի շարք օրենքներ⁴⁶: Ազգային տնտեսություն հիմնելու ծրագիրը 1915 թ.

⁴³ Üngör U. and Polatel M., նշվ. աշխ., էջ 78:

⁴⁴ Նույն տեղում, էջ 82-83:

⁴⁵ Թաներ Աքչամ, Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան, և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են, <http://akunq.net/am/?p=26815>

⁴⁶ Առաջինը 1915 թ. մայիսի 28-ի (հունիսի 10) Նախարարների խորհրդի հրամանգիրն էր՝ 34 հոդվածներով, որտեղ նշվում էր, որ հայերի թողած ունեցվածքը կբռնագրավվի պետության կողմից: Այն «օրինական կերպով» հայերից խլում էր իրենց նյութական վիճակը բարելավելու որևէ հնարավորությունը կամ սեփականությունը տնօրինելու իրավունքը: Հատուկ հոդվածով ստեղծվում էր մարմին «Լքյալ գույքի հանձնաժողովներ» (*Emval-ı Metruke Komisyonları*), որը պետք է տնօրիներ հայերի անշարժ գույքը, հողը: Այն «հիմնավորելով» հայերի տեղահանությունը, նաև հաստատում էր, որ իրենց ունեցվածքին համարժեք վճարը տեղահանվողներին հետագայում ետ կտրվի: Կեսարիայում օրենքը ներկայացվել է հանրությանը հունիսի 15-ին Տրապիզոնում՝ հունիսի 26-ին (*The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the*

դրվել էր երիտթուրքական կենտրոնական կոմիտեի անդամ, մատակարարման նախարար Կարա Քեմալի վերահսկողության տակ: Քեմալը պատասխանատու էր նաև «լքյալ գույքի» (emvali metrukes) հարցերով հանձնաժողովի աշխատանքի համար: 1916-1918 թթ. հայերից բնագրաված ակտիվներով երիտթուրքերի «աջակցությամբ» 80 ձեռնարկություն հիմնվեց⁴⁷: Իշխանությունները բաժանում էին հայկական ունեցվածքը թուրքական վերնախավին՝ ցեղասպանությանը աջակցելու դիմաց, այդպիսով ստեղծելով թուրքական բուրժուազիա⁴⁸: Հայերից բնագրավվելիք ունեցվածքը յուրատեսակ կաշառք հանդիսացավ ցեղասպանությանը մասնակցելու համար: Հանրապետական շրջանում հիմնված ձեռնարկությունների մեծ մասի հիմքում այդ կաշառք տրված հայկական կապիտալն էր:

Կողոպուտը իրականացվում էր ամենաբարձր խավից մինչև հասարակ մուսուլման բնակիչներ, ովքեր ոչ միայն տեղերում թալանում էին իշխանությունների կողմից «պահպանվող» հայերի տները և խանութները⁴⁹, այլև պետական մակարդակով պահանջում էին հայերի արտասահմանյան ակտիվները, ապահովագրական գումարները⁵⁰, որոնց միակ ժառանգորդ հռչակվում էր կառավարությունը: Թալանվում էին նույնիսկ դեպի անապատներ քշվող հայ տարագիրների քարա-

Balkans to Anatolia to the Caucasus. Providence/Oxford, Berghahn Books, 1995, p. 222, Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, նշվ. աշխ., էջ 69; կցված է Տրապիզոնի ամերիկյան հյուպատոս Օ. Հեյզերի Հ. Մորզենթաուին ուղղված զեկուցագրին, հունիսի 28, 1915 թ., United States official records on the Armenian Gneocide, էջ 134-135), ամենուր գրեթե նույն բովանդակությամբ, կոչ անելով հայերին տեղերում՝ կառավարության պատասխանատվության տակ, թողնել իրենց ունեցվածքը և չվաճառել ոչինչ, քանի որ դատական պատասխանատվության կենթարկվեն և՛ վաճառողը, և՛ գնորդը: Հայերի մշակութային և տնտեսական հարստության յուրացման գործիք էին նաև սեպտեմբերի 26-ի օրենքը, բաղկացած 11 հոդվածից և նոյեմբերի 8-ինը՝ 25 հոդվածից (Ümit Kurt, The Confiscation of Armenian Properties, <http://armenianweekly.com/2013/09/23>):

⁴⁷ Տե՛ս Kévorkian R., նշվ. աշխ., էջ 202:

⁴⁸ Տե՛ս Üngör U. and Polatel M., նշվ. աշխ., էջ 167:

⁴⁹ Հալեպի ամերիկյան հյուպատոս Ջ. Ջեքսոնը Հ. Մորզենթաուին, 16 հունիսի, 1916 թ. (United States official records on the Armenian Genocide, էջ 62):

⁵⁰ Մորզենթաու Հ., նշվ. աշխ., էջ 253:

վանները⁵¹: Վերջինի դեպքում թուրքական միտքը հասել էր իր գագաթնակետին՝ գումարի խուզարկության ավելի արդյունավետ մեթոդներ գտնելու ճանապարհին: Նշենք միայն, որ երբեմն այրվում էին հայերի դիակները՝ մարմնում թաքցված մետաղադրամները գտնելու համար⁵², իսկ նրանց հագուստը հանվում էր սպանությունից առաջ և վաճառվում շուկաներում կամ կառավարության կողմից կազմակերպված հասարակական աճուրդներում⁵³: Մեծ զանգվածների ներգրավվումը սպանության գործընթացի մեջ խթանելու համար օգտագործվում էին հետևյալ հնարքները՝ շարքային բնակչին փոխանցվում էր մեծ ու կարևոր գործողության մաս կազմելու զգացումը, ինչպես նաև ընձեռվում էր գոհերի բարիքներին տիրանալու հնարավորությունը: Հայերի ունեցվածքին տիրանալու ձգտումը և ցեղասպանությանն ուղեկցող հսկայական չափերի կողոպուտը դառնում էին հայ բնակչության ոչնչացման ռացիոնալացման հիմնական բաղադրիչներից⁵⁴: Մի խոսքով՝ գործում էր «թալանի հսկայական համակարգ»⁵⁵:

Տնտեսության վնասը հնարավոր չէ պատկերացնել, հայերի ցեղասպանությունը հանգեցրեց միջին խավի ոչնչացմանը, ամբողջ մասնագիտությունների վերացմանը⁵⁶: Ումիթ Կուրտը նշում է, որ այս հա-

⁵¹ Տե՛ս երիտթուրքերի 1919 թ. հունիսի 3-ի առաջին դատավարության մեղադրական եզրակացությունը (Փափազյան Ա., Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Երևան, 1988, էջ 109):

⁵² Հայերի ցեղասպանությունը 1915-1916, էջ 55:

⁵³ Խարբերդի ամերիկյան հյուպատոս Լ. Դեվիսը Հ. Մորգենթաուին, 30 դեկտեմբերի, 1915 թ. (United States official records on the Armenian Genocide, էջ 470):

⁵⁴ Մանուկյան Ս., Դաժանության ռացիոնալացումը Հայոց ցեղասպանության տարիներին, Ցեղասպանագիտական հանդես 2(1), 2014, էջ 104, 107:

⁵⁵ Ջ. Ջեքսոնի բնորոշումն է կառավարության կողմից շրջանի հայերի ունեցվածքի յուրացմանը (United States official records on the Armenian Genocide, էջ 207):

⁵⁶ Üngör U. and Polatel M., նշվ. աշխ., էջ 149: Հայ ժողովրդի կրած կորուստներն հսկայական են: 1919 թ. Փարիզի Վեհաժողովի հաշվարկներով հայերի վնասը կազմում էր 19 միլիարդ ֆրանկ: Թալանվել էր 66 քաղաքի և 2500 գյուղի հայ ու այլ քրիստոնյա ազգաբնակչությունը, կողոպտել ու քանդել ավելի քան 2000 եկեղեցի ու վանք, 1500 դպրոց և վարժարան (<http://armeniangenocidelosses.am/>, Արա Պապյան, Հայ ժողովրդի նյութական կորուստները Հայոց ցեղասպանության ժամանակ, <http://akunq.net/am/?p=29767>; կրած կորուստների հաշվարկները տե՛ս նաև Baghdjian Kevork, The Confiscation of Armenian Properties by the Turkish Government said to be Abandoned, Antelias, 2010, pp. 96-97):

մատարած թալանը ցույց է տալիս, որ մի խմբի (ինքնության) կործանման հետ միաժամանակ տեղի էր ունենում մեկ այլ խմբի (ինքնության) կառուցում, մեկի ունեցվածքի փոխանցմամբ մյուսին⁵⁷: Հայերի «լքյալ գույքը» հատկապես ֆինանսական միջոցները, օգտագործվեցին նաև 1919-1922 թթ. թուրքական «ազգային ազատագրական պատերազմի» ժամանակ:

«Ազգային տնտեսության» ծրագիրը, քանդելով կայսրության տնտեսական կյանքը, դրեց ազգությամբ թուրք արդյունաբերական խավի հիմքը, որը սկսեց գործել և իր իրավունքների մեջ մտավ արդեն հանրապետական շրջանում: Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո Ազգային մեծ ժողովը 1926 թ. օրենք ընդունեց, համաձայն որի թուրք այն սպաները, պաշտոնյաները և քաղաքական գործիչները, ովքեր մահապատժի էին ենթարկվել Հայոց ցեղասպանության մեջ իրենց մասնակցության համար կամ սպանվել էին հայ վրիժառուների կողմից, հռչակվեցին «ազգային հերոս» և որպես փոխհատուցում նրանց բաժին հանվեց հայերի «լքյալ գույքից»: 1928 թ. կայացվեց նաև հետևյալ որոշումը. մուհաշիրները՝ մուսուլման գաղթականները, որոնք օգտագործում էին հայկական գույքը՝ տները, հողամասերը, դաշտային կուլտուրաները և խանութները, ստացան դրանք սեփականաշնորհելու իրավունք⁵⁸:

Թուրքական ազգային պետությունը տնտեսական առումով հայերի ցեղասպանությունից օգուտ քաղեց մի քանի տարբերակով.

- Հայերի տնտեսական ոչնչացման միջոցով մրցակցության վերացում
- կապիտալի բաշխում նոր թուրքական բուրժուազիայի միջև
- թալանին և սպանությանը համատարած մասնակցության միջոցով «համախոհների» մի խմբի ստեղծում (թուրքական միջին բուրժուական խավ), որը դարձավ թուրքական պետության կորիզը:

Հայերի լիակատար կողոպուտը երիտթուրքերի՝ հայ ժողովրդի հայրենագրկման, ցեղասպան քաղաքականության բաղադրիչն էր: Այսպես՝ պարբերական ջարդերի (1896-1898, 1909, 1915-1923 թթ.) միջոցով մաքրել բուն հայկական Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի տարածք-

⁵⁷ Ümit Kurt, նշվ. աշխ.:

⁵⁸ Նույն տեղում:

ները, իսկ ֆինանսական միջոցները և ունեցվածքը բռնագրավելով փրկվածների համար վերացնել վերադառնալու ու վերահաստատվելու հնարավորությունը⁵⁹:

Հայ ժողովրդի ցեղասպանությունից հետո թուրք իշխանությունները պետական մակարդակով սկսեցին քանդել մշակութային ժառանգության նմուշները. եկեղեցիներ, դպրոցներ, կատարել անվանափոխություններ⁶⁰, ինչը ևս մեկ անգամ հաստատում է Հայոց ցեղասպանության կանխամտածված լինելը:

GALUSTYAN REGINA

(AGMI)

THE EXPROPRIATION OF THE ARMENIAN PROPERTY AND THE ATTEMPT TO FORM TURKISH NATIONAL ECONOMY

This article deals with the expropriation of the Armenian property as a tool for formation of Turkish bourgeoisie class. Each state needs a middle class – bourgeoisie for its formation. It becomes the basis for the state and is interested in continuation and strengthening of state authority. In Turkish case, separate discussion of the growth of an industrial and commercial bourgeoisie in the Ottoman Empire and the early republic is meaningless without reference to the disappearance of the Armenians and the Greeks. After their rise to power in 1908, the Young Turks introduced the political myth of Turkish nationalism and thus the project of construction of national economy and Turkish bourgeoisie were put on practical grounds. The concept

⁵⁹ Տրապիզոնի գերմանական հյուպատոս Բերգֆելդը 1915 թ. հուլիսի 9-ին գեկուցում է ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին, որ երիտթուրքական կոմիտեն տեղահանությունների միջոցով ցանկանում է լուծել Հայկական հարցը, քանի որ տեղահանվածներից միայն շատ քչերը կկարողանան վերդառնալ իրենց բնակավայրերը, բայց նույնիսկ այս դեպքում նրանք միջոցներ չեն ունենա կրկին հաստատվելու համար և մոտ ապագայում գերակշիռ տոկոսային հարաբերությամբ հայերով բնակեցված գավառներ երկրում այլևս չեն լինի (Հայերի ցեղասպանությունը 1915-1916, էջ 234):

⁶⁰ Հայերի կապը հողին ուղղակի մաքրվեց կամային գործողությամբ (act of will): Դա միայն ոչնչացման ահռելի չափը չէր, այլև այդ կամքի գործադրումը մաքրելու «անցանկալին», ոչնչացնելու հայերին Թուրքիայի սոցիալական և մշակութային համակարգից (Melson R., նշվ. աշխ., էջ 153):

of "national economy" (Turk. *milli iktisat*) emerged which initially was aimed at replacing Armenian or Greek businessmen with "Turks" and Muslims or, at the very least, to ruin the Armenians and Greeks. When the First World War broke out laws were adopted in the Ottoman Empire at the state level to boycott the Armenian manufacturers, then to seize their property. As a result, a huge system of plunder was put into motion. So this rough plan of nationalisation put the basis of Turkish industrial class and Turkish economy by destroying the Christian entrepreneurs and the whole economical life of the Empire.

ՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

(ՀՑԹԻ)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆՏՄԱՆ ՄԵԶ

Հայոց ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցումը նոր սերունդների համար ունի կարևոր նշանակություն: Անկախ գիտելիքի փոխանցման ձևից ցեղասպանության մասին կրթության մեջ միշտ էլ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել դրա գործառնության նշանակությանը: Մեծ հաշվով, ցեղասպանության թեմայի ուսուցումը կոչված է նախ և առաջ ցեղասպանության ենթարկված ժողովրդի, ապա նաև ամբողջ մարդկության հավաքական հիշողության պահպանմանը և փոխանցմանը: Ցեղասպանության ուսուցման (Genocide Education) մյուս կարևոր գործառնությունը նոր ցեղասպանությունները կանխարգելելուն ուղղված ազդեցությունն է: Այնուամենայնիվ, վերոնշյալ հիմնական գործառնությունների իրացմանը հասնելուն ուղղված միջոցները տարբեր են:

Այս հոդվածում դիտարկելու ենք Հայոց ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման մեջ առանձին պատմությունների դերն ու նշանակությունը: Այսինքն՝ փորձելու ենք հասկանալ, թե այս կամ այն «մասնավոր» պատմությունը ինչ դեր կարող է ունենալ թեմայի իրազեկման առումով և ինչ ազդեցություն կարող է ունենալ ցեղասպանության մասին կրթության գործառնությունների հաջող իրականացման մեջ: Մեր առջև դրված նպատակին հասնելու համար մենք օգտագործել ենք մի քանի պատմություններ, որոնք վերաբերում են այս կամ այն անձի փորձառությանը՝ ցեղասպանության տարիներին և դրանից հետո:

Ցեղասպանության մասին գիտելիքը

Հայ ժողովրդի բազմահազարամյա պատմության մեջ XX դարասկիզբը դարձավ թերևս ամենաողբերգականը. մի ամբողջ ժողովուրդ ոչնչացվեց իր պատմական հայրենիքում: Դրան հաջորդած հարյուրամյա պատմության ընթացքում այդ ողբերգության վերաբերյալ հիշողությունը դարձավ հայ ժողովրդի ազգային ինքնության ամենակարևոր

բաղադրիչներից մեկը¹: Սակայն դա տեղի ունեցավ միայն ու միայն այդ հիշողության պահպանման և փոխանցման շնորհիվ: Անշուշտ, ցեղասպանության մասին գիտելիքի, իսկ դրա արդյունքում նաև հիշողության փոխանցումը հետցեղասպանական շրջանի տարբեր փուլերում կատարվել է տարբեր միջոցներով: Տասնամյակներ շարունակ ցեղասպանության մասին գիտելիքը փոխանցվել է բանավոր պատմությունների, գեղարվեստական կինոնկարների, գրականության ու դասագրքային հիշատակումների միջոցով: Անկախ գիտելիքի փոխանցման ձևից՝ այդ փոխանցումը դարձել է պատմական հիշողության պահպանման կարևոր գրավական՝ այդպիսով լուծելով իր ֆունկցիոնալ առաջին խնդիրը:

Յեղասպանության մասին գիտելիքի փոխանցման առանցքային մյուս գործառույթը կանխարգելումն է: 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի² կարևորագույն առաքելությունը հետագա ցեղասպանությունները կանխարգելելն էր, սակայն ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ, որ կոնվենցիան բավարար չէ հետագա ցեղասպանությունները կանխելու համար, քանի որ XX դարի երկրորդ կեսին ևս տեղի ունեցան ցեղասպանություններ (Կամբոջա՝ 1975-1979, Ռուանդա՝ 1994, Բալկաններ՝ 1992-1995 և այլն): Ահա հենց այստեղ է երևում ցեղասպանության մասին գիտելիքի դերակատարությունը: Այս հարցում ձախողումների մի մասը ցեղասպանության մասին կրթության թերացման, իրազեկության ցածր մակարդակի, այլ խոսքերով՝ նախկին ցեղասպանություններն ու կոտորածները լավ չուսումնասիրելու, դրանք չպատժելու, դրանց սարսափների մասին չդասավանդելու, ժխտողականության դեմ չպայքարելու հետևանք էր:

Փաստորեն մենք տեսնում ենք, որ ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցումը ունի ուղղակի՝ կանխարգելիչ դեր:

Առանձին կամ մասնավոր պատմությունը՝ ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման միջոց

¹ Մարության Հ., Յեղասպանության հիշողությունն իբրև գործոն, տե՛ս http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2268

² Կոնվենցիայի ամբողջական տեքստ տե՛ս http://www.un.org/res/un%20Treaties/III_1.pdf

Տեղասպանության թեմայի՝ դպրոցներում ուսուցանումը կամ ամենատարբեր հարթակներում դրա մասին իրազեկումը հարաբերականորեն կարելի է բաժանել երկու մակարդակի: Առաջին մակարդակը՝ հիմնարար գիտելիքն է, այսինքն՝ Մեծ եղեռնին առնչվող ամենակարևոր հիմնական գիտելիքների փոխանցումը³: Այն կարող է լինել ամենամակերեսային գիտելիքներից մինչև նյութի բավական խորը մատուցում: Սակայն, անկախ դրա խորությունից՝ բովանդակային առումով այն, միննույն է, կոչված է ընդհանուր պատկերացում տալու Հայոց ցեղասպանության մասին, և միննույն է այդ մանրամասների մեծ մասը շատ արագ մոռացվում են: Օրինակ, դասագրքային նյութում աշակերտը հանդիպում է Հայկական հարցի ծագմանն առնչվող մի դրվագի, ինչպիսին է 1878 թ. Բեռլինի կոնգրեսի արդյունքում ստորագրված պայմանագրի 61-րդ հոդվածը⁴: Չնայած դրա կարևորությանը՝ փորձը և մեր անձնական հարցումները⁵ ցույց են տալիս, որ կոնկրետ տվյալ հոդվածի մասին տեղյակ են շատ քչերը: Մյուս կողմից էլ, առանց ցեղասպանության մասին հիմնարար գիտելիքների փոխանցման, ընդհանրապես դժվար է պատկերացնել ցեղասպանության մասին կրթությունը:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ցեղասպանության մասին գիտելիքի փոխանցման մեջ, օգնության է գալիս մեկ այլ միջոց ևս՝ առանձին պատմությունները: Ընդհանրապես Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությունը փաստում է, որ դրանք չափազանց շատ են: Առանձին պատմություններ ասելով՝ մենք նկատի ունենք ականատես-վերապրողների անձնական փորձառությունն ու դրանց մասին պատմությունները: Պետք է նշել, որ այդ առանձին պատմությունները մեզ են հասել ինչպես բանավոր պատմությունների, այնպես էլ լույս տեսած հարյուրավոր հուշագրությունների տեսքով:

Առաջին խումբը, ցեղասպանությունը վերապրողների բանավոր պատմություններն են: Այս ոլորտում Ռիչարդ Հովհաննիսյանի,

³ Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Հայոց ցեղասպանության ամենատարրական և կարևոր գիտելիքներին:

⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, «Հայաստան» 1972, էջ 128:

⁵ Այդ նպատակով հարցումներ ենք անցկացրել բնակչության տարիքային և կրթական տարբեր խմբեր ներկայացնող 20 անձի շրջանում, որոնցից միայն 3-ը կարողացան մեզ պատմել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի մասին:

Վերժինե Սվազյանի, Ջորջան ինստիտուտի՝ տասնամյակների ընթացքում կատարած վիթխարի աշխատանքի արդյունքում մենք ունենք ականատես-վերապրողների անձնական փորձառությանը վերաբերող հսկայական նյութ՝ ինչպես տեսանկարահանված⁶, այնպես էլ տպագիր⁷: Առանձնանում է նաև Ջեյմս Բրայսի բանավոր պատմությունների ժողովածուն⁸: Առկա են նաև վիթխարի քանակությամբ տպագրված հուշագրություններ⁹:

Չնայած մեծաքանակ նյութի առկայությանը՝ այնուամենայնիվ, այդ նյութերը և պատմությունները մեծ հաշվով անհայտ են մեզ: Այսինքն՝ առանձին ճակատագրերի պատմությունը մեզանում մնում է լայն շրջանների համար անհասանելի:

Բավական ուսանելի է այդ ոլորտում հրեական փորձը: Հոլոքոստի ականատես-վերապրողների վկայություններն ահռելի քանակություն են կազմում, սակայն գլխավորը ոչ թե դրանց քանակն է, այլ այդ պատմությունների օգտագործումը Հոլոքոստի իրազեկման և Հոլոքոստ-

⁶ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում պահվում է տասնյակ վերապրողների ձայնագրություններ և տեսագրություններ: Տե՛ս ՀՅԹԻ, Բ 4 (բ) Հուշապատումների տեսագրություններ:

⁷ Տե՛ս Սվազյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2011: Այս առումով շատ կարևոր է նաև Հայաստանի ազգային արխիվի կողմից 2012 թվականին հրատարակված եռհատորյակը: Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Վերապրածների վկայություններ, փաստթղթերի ժողովածուներ, հեղինակ և կազմող՝ Ամատունի Վիրաբյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012:

⁸ The Treatment of Armenians in the Ottoman Empire, Documents Presented to Viscount Grey of Fallodon, With a Preface by Viscount Bryce, London: H.M.S.O., 1916.

⁹ Պետք է ընդգծել այն փաստը, որ Հայոց ցեղասպանության մասին հուշագրություններ տպագրվել են տասնամյակներ շարունակ և անգամ մեր օրերում: Ուստի որպես օրինակ կառանձնացնենք Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից վերջին տարիներին տպագրված հետևյալ հուշագրությունները: Հովհաննես Կարապետյան (Օննիկ Յուսուֆ), «Վերածնված կյանք մը. երևակայական և իրական սարսափների արանքում», Երևան, ՀՅԹԻ, 2010, Սարգիս Թորոսյան, Դարդանելից մինչև Պաղեստին, Երևան, ՀՅԹԻ, 2013, Margaret Аджемян-Анерт, Стук в дверь, Ереван: Музей-институт Геноцида армян, 2012, Амбарцум Читчян На волоске от смерти», Ереван, Музей-институт Геноцида армян, 2012.

տի մասին պատմելու մեջ¹⁰: Այդ պատմությունները կարող են երբեմն ավելի ազդեցիկ լինել, քան թե մի քանի ակադեմիական հրատարակություն: Դրա լավագույն օրինակը կինոռեժիսոր Ռոման Պոլանսկու նկարահանած «Դաշնակահարը» ֆիլմն է (2002 թ.), որն արժանացավ Ամերիկյան կինոակադեմիայի բարձրագույն՝ «Օսկար» մրցանակին: Ֆիլմը հիմնված է լեհական հրեա դաշնակահար Վլադիսլավ Շպիլմանի հուշագրության վրա¹¹: Այն Հոլոքոստը վերապրած հրեա մարդու պատմություն է, որի ներկայացման գեղարվեստական բարձր մակարդակը ապահովեց Հոլոքոստի թեմայի մասին իրազեկմանը ֆիլմի միլիոնավոր դիտումներով:

Հայոց ցեղասպանության թեմայի իրազեկման մեջ տասնամյակներ շարունակ առանձին պատմությունները տեղ են գտել գեղարվեստական և փաստավավերագրական ամենատարբեր ֆիլմերում: «Չորի Միրոն», «Մայրիկ», «Արամ», «Արարատ», «Արտույտների ազարակ» և մի շարք այլ ֆիլմերում հրաշալի անդրադարձ է կատարվում Մեծ եղեռնին: Այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության տարիներին շարքային մարդու ողբերգության մասին պատմող օրինակները քիչ են:

Արշալույս և Մուշեղիկ: Ցեղասպանությունը մեկ հայի աչքով

Մեծ եղեռնի դեպքում առանձին պատմությունների կարևորությունը հասկանալու համար, մենք դիտարկում ենք ցեղասպանությունը վերապրած երկու երեխաների՝ Արշալույսի և Մուշեղիկի պատմությունները: Երկու երեխաներ, ովքեր փրկվել են ցեղասպանությունից, սակայն ամբողջ կյանքում կրել են դրա բոլոր սարսափները և ողբերգականությունը:

Մենք առանձնացրել ենք այս պատմությունները, քանի որ դրանք ներկայացված են Հայոց ցեղասպանության թանգարանի ցուցադրության մեջ և շատ լավ հնարավորություն է ստեղծվել ուսումնասիրելու իրենց թողած ազդեցությունը: Ովքե՞ր էին Մուշեղիկը¹² և Արշալույսը¹³:

¹⁰ Shoah Recourse Center, Films on the Holocaust

http://www.yadvashem.org/odot_pdf/Microsoft%20Word%20-%205849.pdf

¹¹ Szpilman W., The Pianist: The Extraordinary True Story of One Man's Survival in Warsaw 1939-1945, New York: Picador, 1999.

¹² Մուշեղիկ - Մուշեղիկը ծնվել է 1907/08 թվականին Վանի նահանգի Վանի գավառի Դիզա գյուղում, 13 հոգանոց ընտանիքում: Փրկվել են միայն ինքը և մայրը՝ Բեյազ Բաղայանը: Մուշեղիկի հայրը և նրա երեք հորեղբայրները

1914 թ. գորահավաքից հետո որպես ամելե-թարուրի (աշխատանքային գումար-տակի զինվորներ) սպանվեցին Բաշկալեի ճանապարհին:

1915 թ. գարնանը Խալիլ բեյի հրամանով Դիզա գյուղից թուրք զինվորական-ները հավաքում են 5-10 տարեկան տղա երեխաների և դաժանաբար սպանում գյուղի հարևանությամբ գտնվող աղբանոցում: Մուշեղիկի մայրն իր երկու որդիներին՝ Սմբատին և Մուշեղին, մահից փրկելու խնդրանքով դիմում է իրենց ընտանիքի վաղեմի ծանոթ թուրք պաշտոնյային (յուզբաշի): Նա համաձայնում է միջնորդել Խալիլ բեյին երեխաների փրկության համար՝ կրոնափոխության առաջարկն ընդունելու դիմաց: Այդ նույն ժամանակ մի քուրդ, լսելով Բեյազի որդու՝ Մուշեղիկի հայկական անունը, նրա ձեռքերը դաժանաբար գամում է փայտին:

1915 թ. Վանի տասնյակ հազարավոր հայ գաղթականների մեջ էին նաև մահից մազապուրծ Բեյազն իր երեք երեխաների՝ Սմբատի, Մուշեղի և Արեգ-նազի հետ: Գաղթի ճանապարհին՝ Սալմաստում, մեռնում է փոքրիկ Սմբատը: Բարվում ընտանիքը հաստատվելուց կարճ ժամանակ անց մեռնում է նաև Արեգնազանը:

Մեծ եղեռնի սարսափները՝ որպես չսպիացող վերքեր, ողջ կյանքում ուղեկցել են Մուշեղիկին՝ ամեն վայրկյան հիշեցնելով իր մանկության դժնի օրերն ու ապրած զարհուրելի պահերը: Մուշեղիկի կրած անմարդկային «պատժի» ապացույցները երևում են նույնիսկ դեպքից մեկ տարի անց արված լուսանկարում, որտեղ նա ի ցույց է դրել իր ձեռքերը՝ սպիացած վերքերով:

Այդ մասին տե՛ս *100 լուսանկարչական պատմություններ Հայոց ցեղասպանության մասին, Երևան, ՀՅԹԻ, 2014, էջ 95:*

¹³ *Արշալույս*- Արշալույս Մարտիկյանը (Ավրորա Մարդիգանյան) ծնվել է 1901 թ. հունվարի 12-ին Չմշկածագում: Արշալույսը 13 տարեկան էր, երբ պայթեց Առաջին համաշխարհային պատերազմը, և դեռատի աղջկա ու նրա ընտանիքի համար սկսվեց տառապանքներով ու ողբերգական իրադարձություններով լի մի շրջան: Չմշկածագի հայության բռնազաղթը սկսվեց 1915 թ. հունիսի 14-ին:

Բռնազաղթի ճանապարհին Արշալույսը կորցրեց իր ընտանիքի անդամներին ու ազգականներին, որոնց քարավանն ուղեկցող թուրք ժանդարմները սպանեցին իր աչքի առջև: Թուրք պաշտոնյաների և քուրդ ցեղապետերի կողմից տանջանքների ու բռնությունների ենթարկվելուց հետո Արշալույսը, Եփրատ գետը նետվելով, կարողացավ փախչել Քեմալ էֆենդու հարեմից, սակայն կրկին գերեվարվեց: Նա հայտնվեց քուրդ ստրկավաճառների ձեռքում, ովքեր լավ զին ստանալու ակնկալիքով նրան չսպանեցին և վաճառեցին 85 ցենտով: Նրան կրկին հաջողվեց փախչել: Քաղցից ու ծարավից հյուծված՝ երկու տարվա ընթացքում Արշալույսը ոտքով անցավ 600 կմ և երկար դեզրումներից հետո՝ 1917 թ. գարնանը, հասավ Էրզրում, որն արդեն գրավել էին ռուսական զորքերը: Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտեի միջոցներով Արշա-

լույսը հասավ Պետերբուրգ, իսկ 1917 թ. նոյեմբերին՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

Արշալույս Մարտիկյանի պատմությունը՝ «Երկու տարվա տանջանքներս իմ հոշոտված ու մարտիրոսված հայրենիքում» խորագրով, 14 գլուխներով տպագրվեց ամերիկյան հայտնի «The New York American» և «The Los Angeles Examiner» թերթերի՝ 1918 թ. օգոստոսի 18-ից նոյեմբերի 24-ը հրատարակված համարներում, որոնք ավելի ուշ՝ 1918 թ. դեկտեմբերին, ամփոփվեցին անգլերեն լույս տեսած «Հոշոտված Հայաստան» հուշագրության մեջ: 1919 թ. կեսերին Նյու Յորքում լույս տեսավ գրքի երկրորդ հրատարակությունը «Հոգիների աճուրդ» վերնագրով:

1918-1935 թթ. գիրքն ունեցավ շուրջ 30 հրատարակություն, թարգմանվեց իսպաներեն, հոլանդերեն, լեհերեն և այլ լեզուներով:

1918 թ. վերջին «Հայ-սիրիական նպաստամատույցի ամերիկյան կոմիտե»-ի պատվերով գրքի հիման վրա ամերիկյան «Սելիգ Պոլիսկոպ» ընկերությունը նկարահանեց «Հոշոտված Հայաստան» («Հոգիների աճուրդ») համր ֆիլմը, որի գլխավոր հերոսուհու դերը կատարեց հենց Արշալույս Մարտիկյանը: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ նա ստացավ նոր անուն-ազգանուն՝ Ավրորա Մարդիգանյան: Ֆիլմում նկարահանվեց նաև Օսմանյան կայսրությունում ԱՄՆ-ի նախկին դեսպան Հենրի Մորգենթաուն, ով մարմնավորեց իր իսկ կերպարը:

Ֆիլմի պրեմիերան տեղի ունեցավ Լոս Անջելեսի «Մաջեսթիկ» թատրոնում 1919 թ. հունվարի 19-ին, իսկ Նյու Յորքում՝ 1919 թ. փետրվարի 16-ին «Պլազա» հյուրանոցի նախասրահում: Ֆիլմի ցուցադրությունից ստացված հասույթը՝ շուրջ 30 մլն ամերիկյան դոլար, տրամադրվեց ցեղասպանությունը վերապրած և Մերձավոր Արևելքում ապաստան գտած 60,000 հայ որբերի կենսապահովմանը:

Ավրորայի հետագա կյանքն այնքան էլ լավ չդասավորվեց. 28 տարեկանում նա ամուսնացավ գաղթական հայ երիտասարդի Մարտին Հովանյանի հետ:

1931-ին ծնվեց նրանց միակ որդին՝ Մայքլ Սեդալ Հովանյանը: Մակայն Ավրորայի հետագա ընտանեկան կյանքն անհաջող դասավորվեց: Ամուսնու մահից հետո միակ որդին հեռացավ մորից: Ցեղասպանության տարիներին կրած զրկանքների ու ցնցումների պատճառով կյանքի վերջին տարիներին Ավրորան կորցրեց բանականությունը. նա երկար տարիներ ապրում էր միայնակ՝ թուրքերի կողմից հետապնդվելու վախով:

Կյանքի վերջին օրերն Ավրորան անցկացրեց Կալիֆոռնիայի «Արարատ հոում» ծերանոցում և մահացավ մենության մեջ 92 տարեկան հասակում 1994թ. փետրվարի 6-ին:

Այդ մասին տե՛ս Ավրորա Մարդիգանյան, «Հոշոտված Հայաստան», Մեծ եղենը վերապրած Ավրորա Մարդիգանյանի պատմությունը, Երևան, ՀՅԹԻ, 2015:

Նրանցից յուրաքանչյուրն ունի իր պատմությունը: Երկու հայ երեխայի ճակատագիր, որոնք ունեն շատ ընդհանրություններ և տարբերություններ: Երկուսն էլ ամբողջությամբ կամ մասամբ կորցրել են իրենց ընտանիքը, երկուսն էլ փրկվել են հրաշքով: Նրանցից մեկի պատմությունը դեռևս իր կենդանության օրոք իմացել է ամբողջ աշխարհը, իսկ մյուսի մասին՝ շատ քչերը: Այնուամենայնիվ, երկուսն էլ ներկայացնում են Մեծ եղեռնի սարսափներով անցած հայի պատմություն:

Պետք է նշել, որ Ցեղասպանության թանգարանի նոր ցուցադրության բացումից մինչև այսօր թանգարանում եղել են բազմահազար այցելուներ, և բոլոր այցելուների շրջանում այս երկու պատմությունները մեծ հետաքրքրություն են առաջացնում: Ավելին՝ Ավրորային նվիրված սրահում փոքրիկ ֆիլմի ցուցադրությունն իր մոտ է հավաքում այցելուների մեծ մասին: Այսպես, մեր դիտարկումների համաձայն 10 այցելուից 8-ը թանգարանում անցկացրած ժամանակի գրեթե 40 %-ն անցկացնում է Ավրորայի սրահում¹⁴: Դա պայմանավորված է ոչ միայն մեկ հայի ճակատագրի ներկայացման բարձր որակով, այլ նաև մեկ պատմության ունեցած ազդեցիկությամբ:

Նման իրողություն է առկա նաև Մուշեղիկին նվիրված հատվածում: Այստեղ արդեն մենք ականատես ենք լինում այն բանին, որ 10 այցելուներից 4-5-ը լուսանկարում է ցուցապատին պատկերված Մուշեղիկի լուսանկարը կամ էլ պարզապես ինքն է լուսանկարվում այդ նկարի կողքին¹⁵: Այսինքն այս պատմությունը ևս առանձնահատուկ ուշադրության է արժանանում այցելուների կողմից:

Հայոց ցեղասպանությունը վերապրած այս երկու երեխաների պատմությունները և այդ պատմությունների մատուցելը իրազեկում են ցեղասպանության սարսափների ու մեր կորուստների մասին: Բայց մյուս կողմից այս փոքրիկների պատմությունները խորհրդանշում են նաև հայ ժողովրդի վերածնունդը և ապրելու մեծ ուժը:

Անշուշտ այս դիտարկումը մենք կատարել ենք բացառապես թանգարանի՝ որպես ցեղասպանության մասին պատմող և կրթող հաստատության գործառույթների տեսանկյունից: Սակայն դա էլ բավարար

¹⁴ Հաշվվել և վերլուծվել են 2015 թ. մայիս 1-ից մինչև հունիսի 1-ը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ կատարված այցելությունները:

¹⁵ Ինչպես նախորդ դեպքում հաշվվել և վերլուծվել են 2015 թ. մայիս 1-ից և մինչև հունիսի 1-ը Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ կատարված այցելությունները:

է հասկանալու առանձին ճակատագրերի պատմությունների հան-
րայնացման կարևորությունը:

Այսինքն՝ ցեղասպանությունը վերապրած մեկ հայի անձնական
պատմությունը շատ հաճախ կարող է դառնալ Հայոց ցեղասպանության
ամբողջ պատմությունը ներկայացնելու լավագույն տարբերակներից
մեկը, եթե ոչ լավագույնը:

NAJARYAN KRISTINE

(AGMI)

INDIVIDUAL STORIES RELAYED TO ARMENIAN GENOCIDE
AND THEIR ROLE
IN GENOCIDE KNOWLEDGE TRANSMISSION

The importance of individual stories in terms of genocide knowledge transmission is discussed in this article. Namely, it views the functional significance of individual histories as an important gadget in memory transmission.

The article discusses and analyzes the importance of “telling the story of Armenian Genocide throughout an individual’s story”. The main conclusion is that the individual stories of genocide survivors are of exceptional importance, because they act as an effective mean in genocide knowledge transmission.

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶԴԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ 1915-1923 ԹԹ.

Առաջաբան

Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ Հայկական հարցը շարունակում է մնալ հիմնական առաջնահերթություններից մեկը: Նման պայմաններում շատ կարևոր է ուսումնասիրել պատմությունը, ինչպես նաև ակտիվորեն հետևել այժմյան Թուրքիայի Հանրապետության վարած քաղաքականությանը: Հայկական հարցի լուծման համատեքստում շատ կարևոր է հայ ժողովրդին թուրքերի կողմից հասցված նյութական վնասի փոխհատուցումը, ուստի պետք է մեծ ուշադրություն դարձնել հարցի այս կողմին ևս: Հոդվածիս նպատակն է փաստերի հիման վրա կառուցել 1915-1923 թթ. թուրքերի կողմից հայերի ունեզրկման գործընթացի առարկայական պատկերը: Մեծ եղեռնի հարյուրամյակի համատեքստում 1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի ունեզրկման գործընթացի ուսումնասիրությունն ունի ոչ միայն գիտաճանաչողական, այլև արդիական-քաղաքական կարևոր նշանակություն:

Պատմական այս փուլում կարևոր է Հայոց պահանջատիրության նյութական և ֆինանսական կողմի ամփոփումն ու ամբողջացումը: Նման ողբերգական անցյալի պարագայում, որը կապում է հայ և թուրք ժողովուրդներին, Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության հարաբերությունների քաղաքակիրթ եղանակով հանգուցալուծումը ենթադրում է Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչում, հայերին պատճառած բարոյական վնասի փոխհատուցում, հայերի ունեցվածքի վերադարձ գոհերի ժառանգներին: Այս երեք կետերը անբաժանելի և խիստ փոխկապակցված են, և թեկուզ սրանցից մեկի բացակայության կամ թերի բավարարման պարագայում հարցի լուծումը չի կարող լինել ամբողջական և վերջնական:

Պատմական անհերքելի ճշմարտություն է, որ թուրքերի կողմից ծրագրված և իրականացված հայասպանության քաղաքականության մեջ, ի թիվս այլ գործոնների (պետական քաղաքականություն, կրոնական ատելություն) մեծ ազդակ էր հանդիսանում տնտեսական գործոնը՝

հայերի հարստությանը տիրելու թուրքական ձգտումը: Հպատակ քրիստոնյա ժողովուրդներին կողոպտելը բնորոշ էր օսմանյան հասարակությանը առհասարակ, և այս հանգամանքը նպաստել է հայերի կոտորածների սանձազերծմանը:

Երիտթուրքական կուսակցության պարագլուխներն իրենց գաղտնի ժողովներում քննարկում էին հայերի ունեզրկումը կազմակերպելուն ուղղված քայլերն ու եղանակները: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Օսմանյան կայսրությունը սնանկության էր մատնված և կքած էր արտաքին ահռելի պարտքի տակ: Առաջին աշխարհամարտի նախօրեին Օսմանյան կայսրության արտաքին պարտքը հասնում էր 64 միլիոն ֆունտ սթեռլինգի, իսկ պատերազմի մեջ մտնելուց հետո դրան գումարվեցին նաև պատերազմական մեծագումար ծախսերը¹: 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմներից հետո այս ամենին գումարվել էր նաև թուրք գաղթականների բնակեցման հարցը: Տեղահանված հայերի տները թուրք վտարանդիներին հանձնելը համարվում էր հարցի լուծում: Օսմանյան վերնախավը որոշեց տիրանալ հայ ժողովրդի ունեցվածքին և ի հաշիվ դրա վճարել արտաքին պարտքը, հոգալ պատերազմական ծախսերը և օթևան տալ թուրք գաղթականությանը:

Այսպիսով հայ ազգաբնակչությանը գոյության միջոցներից նպատակաուղղված զրկելու խնդրով սկսեց զբաղվել թուրքական պետությունը: Այս գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ էր հայերի ունեցվածքը դարձնել տիրազուրկ: 1915 թ. հունիսի 1-ին երիտթուրքական իշխանությունները հրապարակեցին կառավարության կողմից 1915 թ. մայիսին 30-ին հաստատված «Տեղահանության օրենքը»: «Տեղահանության օրենքի» հրապարակումից հետո հունիսի 10-ին հրապարակվեց «Այլ վայրեր տեղափոխված հայերին պատկանող անշարժ գույքերի և հողատարածքների կառավարման ձևի մասին» կանոնադրությունը, ինչը ցուցումներ էր պարունակում «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի անշարժ և շարժական գույքի» հետ վարվելու վերաբերյալ: «Տեղահանության» ժամանակավոր օրենքը չնայած կառավարության կողմից հաստատվելուն, պառլամենտի կողմից չէր ընդունվել, ինչը սահմանադրության 36-րդ հոդվածի խախտում էր: Ըստ թուրքական պաշտո-

¹ Աստոյան Ա., Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ., Երևան, 2013, էջ 394-396:

նական պատմագրության վարկածի՝ խորհրդարանը համաձայնել է միայն 1915 թ. սեպտեմբերի 15-ին²:

1915 թ. սեպտեմբերի 26-ին իշխանություններն ընդունեցին «լուծարման» կամ «Լքյալ գույքերի մասին» 11 հոդվածից կազմված օրենքը, որի նպատակն էր իրավական հիմք տալ մինչ այդ պահը տեղահանված հայերի հեռագրերի, հրամանագրերի միջոցով կազմակերպված գույքի կողոպուտի գործողություններին³: Այսինքն՝ հայերի գույքերի կողոպուտից, վաճառքից և բաժանումից հետո էր միայն օրենքով սահմանվում և հեռագրերով քաղաքներին ու գյուղերին հրահանգվում կատարել հայերի լքյալ գույքերի ցուցակագրումը և դրանց ապահովության կազմակերպումը:

Հարկ է նշել, որ այս օրենքը նույնպես կիրարկվեց սահմանադրության 36-րդ հոդվածի խախտմամբ՝ առանց խորհրդարանի քննարկման: 1915 թ. սեպտեմբերի 15-ի օրենքի 8-րդ հոդվածի և 1915 թ. հոկտեմբերի 26-ին իշխանությունների կողմից ընդունված կանոնադրությամբ նախատեսվում էր ստեղծել լուծարման կամ լքյալ գույքերի հանձնաժողովներ՝ իրենց հանձնախմբերով, որոնք պետք է զբաղվեին այլ վայրեր տեղափոխված անձանց լքյալ գույքերի, պարտքերի և պահանջների օտարմամբ:

«Լքյալ գույքերի մասին» օրենքի և կանոնադրության առաջնային նպատակն էր զսպել զանգվածային թալանը և լցնել պետական գանձարանը, պետական պաշտոնյաների միջոցով ցուցակագրել և վերջնականապես յուրացնել հայերի ունեցվածքը՝ տները, հողերը, շենքերը, արտերը, դպրոցները, վարժարանները, եկեղեցիներն ու վանքերը: Այս օրենքին ու կանոնադրությանը հաջորդեցին կառավարության կողմից առաքված բազմաթիվ հեռագրեր, հրահանգներ, կարգադրություններ, շրջաբերականներ, որոնց կատարումը սկսվել էր դեռ պատերազմի նախօրյակին: Դրանցով կենտրոնական իշխանությունները տեղական իշխանություններին հրահանգում էին թույլ չտալ հայերին գույքերի վաճառքը, տեղահանվողներին իրավունք էր տրվել իրենց հետ վերցնել միայն մեկ կամ մի քանի օրվա սնունդ և վերջ: Հատկապես մեծ հսկո-

² Վարդան Լ., Հայկական Տասնհինգը և հայերու լքյալ գույքերը, Բեյրութ, 1970 էջ 45-48:

³ Emval-i Metruke Olayı Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi Nevzat Onaran, <http://www.insanokur.org/emval-i-metruke-olayi-osmanlida-ve-cumhuriyette-ermeni-ve-rum-mallarinin-turklestirilmesi-nevzat-onaran/> (հասանելի է 15.09.2016):

դություն էր սահմանվել թանկարժեք իրերի և զարդերի վրա, որոնց տանելը խստիվ արգելված էր:

Այսպիսով, հայերի կոտորածներն ուղեկցվեցին անշարժ և շարժական գույքի կողոպուտով, անհատական և հավաքական ունեցվածքի յուրացմամբ, ինչը ծրագրված էր պետության կողմից: Հարուստ կողոպուտի հեռանկարը համախոհների մեծ բանակի և ժողովրդական լայն զանգվածների համախմբեց երիտթուրքական իշխանությունների շուրջ: Ըստ գերմանացի պետական և քաղաքական գործիչ Շտրեզմանի՝ 1916 թ. հունվարի 26-ին կայացած հանդիպման ժամանակ Օս. Կայսրության ռազմական նախարար Էնվերն իրեն հայտնել է, որ արդեն մեկ ու կես միլիոն հայեր սպանված են, որից մոտ մեկ միլիոնի ունեցվածքը բռնագրավված է: Առաջին աշխարհամարտից հետո՝ 1918 թ. Հոկտեմբերի 30-ին, Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում Թուրքիայի՝ որպես պարտություն կրած կողմ և Դաշնակից պետությունների միջև կնքվեց զինադադարի պայմանագիր:

Ըստ Մուդրոսի զինադադարի առանձին կետերի՝ ազգային փոքրամասնություններին, որոնք պատերազմի շրջանում տեղահանվել էին կայսրության տարբեր շրջաններ, իրավունք էր տրվում վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը⁴: Օսմանյան խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 4-ի նիստը «Լքյալ գույքերի մասին» օրենքը չճանաչեց սահմանադրությունից դուրս և իրավական առումով անվավեր: Դրա հետ մեկտեղ կառավարության նոյեմբերի 1-ի հրամանագրով նախատեսվում էր հայերից բռնագրավված հողերի և գույքերի վերադարձն իրենց օրինական տերերին նրանց վերադարձի և պահանջ ներկայացնելու դեպքում:

Հակառակ այս հրամանագրի թուրքական իշխանությունների կողմից ընդունվում էին հավելյալ օրենքներ և կարգադրություններ, որոնց կիրարկումը անհնար էր դարձնում հայերի ունեցվածքի ետ վերադարձումը: Օրինակ՝ ներքին գործոց նախարարությունը Թալեաթ փաշայի գլխավորությամբ վերոհիշյալ հրամանագրին կցել էր մի կարգադրություն, ըստ որի, տարագիրներին իրենց ունեցվածքը և կալվածքներն անմիջապես կարող էին վերադարձվել, եթե նրանք անձնապես ներկայանային, իսկ այն դեպքերում, երբ տերը սպանված էր կամ մահացած կալվածքները և ունեցվածքը չէր կարող վերադարձվել նրա ո՛չ մերձավոր, ո՛չ հեռավոր ազգականներին: Վերոնշյալ կարգադրությանը

⁴ Վարդան Լ., նշվ. աշխ., էջ 78-81:

հաշտության ներքին գործերի նախարարության մեկ այլ կարգադրության համաձայն էլ մահացածների ժառանգները, իրենց ազգականի մահվան մասին վկայական ներկայացնելով, կարող էին ստանալ իրենց ժառանգությունը⁵:

Իշխանությունները քաջ գիտակցում էին, որ հայերը չեն կարող ձեռք բերել տարագրության ճանապարհին մահացած իրենց հարազատների մահվան վկայականները և տեր դառնալ իրենց ունեցվածքին: Այսպես, այս կանոնակարգությունները երկրով մեկ սահմանափակում էին հայերի ժառանգական իրավունքները: Արևմտյան Հայաստանի և կայսրության տարբեր շրջանների հայ ազգաբնակչության մեծ մասն այս շրջանում արդեն բնաջնջված էր, իսկ տարագրությունից վերադարձած սակավաթիվ խմբերը վախենում էին հանդես գալ իրենց ունեցվածքի վերադարձման պահանջով՝ մտածելով, որ դա կարող է գրգռիչ ազդեցություն ունենալ, և իրենք ավելի մեծ վնաս կրեն:

Հակառակ հայերի բռնագրավված գույքը վերադարձնելու և հատուցման հարցը լուծելու թուրքական իշխանությունների խոստումների շարունակվում էին զինադադարից հետո իրենց տները վերադարձող հայերի հալածանքները, ֆիզիկական բնաջնջման սպառնալիքը և կողոպուտը: 1919 թ. օգոստոսին թուրքական «Վաքըթ» թերթի գլխավոր խմբագրի հետ գրույցի ժամանակ Կ. Պոլսո Հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը տեղեկացրել է, որ հայ տարագիրների կալվածքները և գույքերը շարունակվում են բռնագրավվել ու վաճառվել, և հայերը չեն կարողանում ետ ստանալ իրենց ունեցվածքը:

Կառավարությունը ստեղծել էր հատուկ հանձնաժողովներ, որոնք զբաղվում էին հայերի ունեցվածքի վաճառքով, որն իրականացվում էր ամենացածր գներով, ինչը սովորաբար լինում է տիրոջ բնական մահից հետո, բայց այն տարբերությամբ սուկ, որ ստացված գումարները հանձնվում էին ոչ թե մահացածի ժառանգներին, այլ մուտք էին արվում թուրքական կառավարության գանձանակ⁶: 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սևրի հաշտության պայմանագիրը, որն անօրինական ճանաչեց 1915 թ. օսմանյան կառավարության կողմից ընդունված «Լքյալ գույքերի մասին» օրենքը: Սևրի հաշտության պայմանագրի 114-րդ հոդվածը վերաբերում էր հայերի լքյալ գույքերին⁷:

⁵ Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 402-404:

⁶ Աստոյան Ա., նշվ. աշխ., 406-409:

⁷ Բարսեղով Յ., Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Երևան, 1999, էջ 33-35:

Դաշնակից պետությունների ճնշման տակ Թուրքիայի սուլթանական կառավարությունը 1920 թ. հունվարի 8-ի որոշմամբ անվավեր համարեց «Լքյալ գույքերի մասին» օրենքի գործադրությունը և ընդունեց որոշումներ, ըստ որոնց 1915 թ. սեպտեմբերի 26-ի օրենքով և 1915 թ. նոյեմբերի 8-ի կանոնադրությամբ պետք էր տեղահանված անձանց պետական գանձարանի և վաքըֆների անուններով արձանագրված գույքերը, նախ, անմիջապես վերադարձնել սեփականատերերին, ապա նրանց անուններով արձանագրություն կատարել, ուղևորության պաշտոնագրով և անցագրերով մեկնողների գույքերը լքյալ չհամարել, ժառանգորդ չունեցողների և մահացածների գույքերի արժեքը հանձնել համայնքի կրոնապետերին՝ որբերին և աղքատներին բաժանելու համար: Այս որոշման շատ հողվածներում նշվում էր, որ տեղահանվածների գույքերը ապաստեփականացված են⁸:

Սույն որոշման հիման վրա ֆինանսների նախարարության լքյալ գույքերի հանձնաժողովի տնօրեն Շեքիպ բեյի գլխավորությամբ կազմվեց նոր հանձնաժողով, որը պետք է զբաղվեր հայերի կրած վնասի հատուցման հարցերով: Գավառներում գործող լքյալ գույքի հանձնաժողովներին հանձնարարված էր մանրամասն քննել հայերի ներկայացրած յուրաքանչյուր դիմում, որից հետո դրանք ևս մեկ անգամ պետք է քննվեին Պոլսում ստեղծված հանձնաժողովի կողմից և հայերին հատուցում տրվեր: Չնայած այս որոշմանը և դաշնակից պետությունների ճնշումներին, թուրքական իշխանությունները շարունակում էին քայլեր ձեռնարկել՝ խափանելու հայերի ունեցվածքի վերադարձը:

Համաձայն կառավարության 1920 թ. հունվարի 8-ի որոշման, այն գույքերը, որոնք հայերից բռնագրավվելուց հետո օգտագործվել էին հասարակական նպատակների համար, ետ չէին վերադարձվելու: Այսպիսով, համաձայն սույն որոշման, հայերին պատկանող հսկայական թվով շենքեր չվերադարձվեցին իրենց տերերին: 1919 թ. սկսեց զինվորական գործիչ Մուստաֆա Քեմալի վերելքը, որն ավելի ուշ պատմություն մտավ «Աթաթյուրք» («թուրքերի հայր») անվամբ: Քեմալն Անկարայում ձևավորեց նոր կառավարություն, որն էլ 1920 թ. ապրիլին նրան ընտրեց նախագահ:

⁸ Emval-i Metruke Olayı Osmanlı'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarının Türkleştirilmesi Nevzat Onaran, <http://www.insanokur.org/emval-i-metruke-olayi-osmanlida-ve-cumhuriyette-ermeni-ve-rum-mallarinin-turklestirilmesi-nevzat-onaran/> (հասանելի է 15.09.2016)

Այսպիսով ստեղծվեց 2 կառավարություն, մեկը՝ Կ. Պոլսում դաշնակից պետությունների հսկողության տակ, մյուսը՝ ազգայնական, որը համախմբված էր Մուստաֆա Քեմալի շուրջը: Քեմալականները, ընդհանուր առմամբ, շարունակեցին սուլթանական կառավարության հայաշինչ և հայահալած քաղաքականությունը: Նրանք նույնպես սկսեցին խանգարել պատերազմից հետո հայրենիք վերադառնալ և իրենց ունեցվածքին տեր կանգնել ցանկացող հայերին: 1920 թ. ապրիլի 23-ին իր աշխատանքներն սկսեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովը, որի կողմից ընդունված առաջին փաստաթղթերի շարքում էր Թուրքիայի տարածքում հայերի տեղաշարժը և նրանց հայրենիք վերադարձն արգելելու որոշումը: Ազգային մեծ ժողովի կողմից ընդունված 1921 թ. օգոստոսի 8-ի որոշման 6-րդ կետով երկրից հեռացածների պետական գանձանակին փոխանցած գույքերը բռնագրավվեց, և այդ գույքերի վաճառքից գոյացած գումարն օգտագործվեց բանակի կարիքների և զինվորականների ու պաշտոնյաների աշխատավարձը բարձրացնելու նպատակով:

Քեմալական ազգայնամոլական շարժումն իր ծրագիրը մշակել և հաստատել էր Կարինի և Սեբաստիայի համաժողովներում: Համաժողովներում քեմալականներն այնպես էին ներկայացնում իրավիճակը, իբր կայսրության քրիստոնյաները (այդ թվում հայերը), նրանց ունեցվածքը, պատիվն ու կյանքն այդ պահին գտնվում էր կատարյալ անվտանգության մեջ, համաձայն իսլամական կրոնի հիմունքների և ավանդույթների⁹: Այսպիսի պնդումը կեղծ էր և անհիմն, քանի որ Քեմալական կոչված ազգայնամոլական շարժման շրջանում Թուրքիայի ողջ տարածքում շարունակվում էր արևմտահայության բեկորների հալածանքի, ոչնչացման, նրանց ունեցվածքի կողոպուտի քաղաքականությունը: Երիտթուրքերի գործելակերպն ամբողջությամբ փոխանցվել էր քեմալականներին:

Հայերի տների խուզարկությունները, նրանց ունեցվածքի բռնագրավումը, վաճառքն ու կողոպուտը սովորական երևույթ էին: Դրա վառ ապացույցն է այն, որ 1922 թ. սեպտեմբերի առաջին օրերին Մուրանիայից 4 շոգենավով Կ. Պոլիս հասած հայ գաղթականները ենթարկվեցին ոստիկանների կողմից արվող խուզարկության և ձերբակալության: Հայ գաղթականների գույքը խուզարկվում էր որպես կողոպտված և բռնագրավվում: Ոստիկաններին հանձնարարված էր հայ ունևորնե-

⁹ Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 406-409:

րին որպես ջարդարարներ ձերբակալել: Ձերբակալվածներին ազատելու և Կ. Պոլիս գաղթականների մուտքի արտոնագրեր ստանալու համար Կ. Պոլսո շայոց պատրիարքությունը դիմեց տարբեր ասյանների, սակայն՝ ապարդյուն: Բացի պետության կողմից իրականացվող հալածանքներից և կողոպուտից, հայերի նկատմամբ հալածանքներ և կողոպուտ էին իրականացնում նաև զինված ավազակախմբերը, որոնց թիվն անընդհատ ավելանում էր: Գոյություն ունեին նաև կողոպուտի պաշտոնական ձևեր՝ հարկերի և տուրքերի տեսքով: Կառավարությունը հայերից տուրք էր պահանջում և դա այն պարագայում, երբ հայերը գտնվում էին թշվառ վիճակում և հազիվ էին հոգում օրվա հացը:

Այն տարագիրները, ովքեր վերադառնալով ավերակ էին գտել իրենց տները, ստիպված տեղավորվել էին իրենց չվերադարձած հայրենակիցների տներում: Իշխանությունները հայերի կրած վնասի փոխհատուցման փոխարեն ստիպում էին վարձ վճարել այդ տներում բնակվելու համար: Քեմալական կառավարությունը գավառներում, մասնավորապես հայերից և հույներից, սկսել էին պատերազմական շահատուրք անունը կրող 10-ից մինչև 2000-3000 ոսկուն համարժեք գումար գանձել: Այս տուրքը պահանջվում էր ամենայն խստությամբ¹⁰:

Գավառային իշխանություններն այն հայերից, որոնք վերադարձել էին իրենց տները, սկսել էին գանձել տասանորդի տուրքը: Նրանք ամեն ջանք գործադրում էին՝ հայկական գավառներում տեղավորելու թուրք վերաբնակներին, կազմակերպելու նրանց պարենավորումն ու ամեն կարգի խնամքը և հայերից գանձած տասանորդի հարկից գոյացած գումարները տրամադրելու նրանց: Մի խոսքով, իշխանությունները, ստեղծելով ծանր պայմաններ հայերի համար, մղում էին նրանց տեղահանվելու, հեռանալու երկրից: Արդեն 1922 թ. սեպտեմբերի 14-ին քեմալականները հայտնեցին, որ իրենք չեն ընդունում սուլթանական կառավարության կողմից ժամանակավոր օրենքի անվավերության մասին փաստաթուղթը, իսկ Լոզանի համաձայնագիրը կնքելուց անմիջապես առաջ՝ 1923 թ. ապրիլի 15-ին, Թուրքիայում օրենք ընդունվեց «Լքյալ ունեցվածքի» մասին, որով հայերի ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էր, անկախ նրանից, թե ինչ մոտիվներով ու ինչ հանգամանքներում էին նրանք թողել երկիրը¹¹: Ազգային փոքրամասնությունների մասին Լոզանի համաձայնագրի դրույթների կիրառումը

¹⁰ Վարդան Լ., նշվ. աշխ., էջ 59-62:

¹¹ Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 413:

թույլ շտալու և նույն պայմանագրի հոդվածների հիման վրա Ազգերի լիգայի միջամտության հնարավորությունը քաջառելու և պատակով Թուրքիայի քեմալական կառավարությունը վճռեց փախստական հայերին զրկել թուրքական քաղաքացիությունից¹²:

1923 թ. սեպտեմբերին Լոզանի պայմանագրի վավերացումից հետո, Թուրքիայում օրենք ընդունվեց, որով վերադառնալու իրավունքից զրկվում էին Կիլիկիայից և արևելյան վիլայեթներից «տարագրված» հայերը: Լքյալ գույքերի հանձնաժողովները տևական ժամանակ դիմումներ էին ստանում այն անձանցից, ովքեր 1922 թ. նոյեմբերի 4-ից առաջ, առանց կառավարությանը տեղյակ պահելու, մեկնել էին երկրից: Հանձնաժողովը, կասկածի տակ դնելով դիմողների սեփականության իրավունքները և քննության ենթարկելով երկրից երկար քաջակայելու ու հանկարծակի հայտնվելու պատճառները, տեղեկացնում է, որ 1922 թ. նոյեմբերի 4-ից հետո առանց թուրքական անձնագրի մտնողների ինչքերը կրոնագրավվեն:

1923 թ. հոկտեմբերի 29-ին Թուրքիայի Հանրապետության հոշակումից 4 ամիս անց՝ 1924 թ. մարտի 13-ին, պետականացվեց «Լքյալ գույքերի մասին» օրենքով քրիստոնյաների բռնագրավված կալվածքները, որոնք արդեն իսկ հափշտակված էին, շնորհվեցին մահմեդական բնակչությանը՝ որպես հատուցում քրիստոնյաների կողմից նրանց «պատճառված չարչարանքների» դիմաց: Անկարայի Ազգային մեծ ժողովը 1922 թ. սկսած մինչև 1926 թ. ընդունել է «Լքյալ գույքերի մասին» 9 օրենք: Ամեն անգամ փոփոխություն կատարելով նախորդ օրենքում Թուրքիայի օրենսդիր մարմինը ձգտում էր երկրում առկա իրավիճակին համապատասխանորեն «օրինականորեն» շարունակել հայ ժողովրդի ունեզրկման գործընթացը¹³:

Հայերից բռնագրավված գույքերից քեմալական իշխանությունները բաժանել են երիտթուրքերի կուսակցության այն ղեկավարների ընտանիքներին, ովքեր նույն քեմալական կառավարության օրոք 1919 թ. ապրիլ-հունիս ամիսներին, Ռազմական արտակարգ ատյանների կողմից ճանաչվել էին որպես Հայոց ցեղասպանության մեջ մեղավոր: 1926 թ. մայիսի 31-ին հրապարակված 882 օրենքով երիտթուրքական պարագլուխներ Թալեաթի, Ջեմալի, Բեհաեդդին Շաքիրի և երիտթուրքական այլ 12 պարագլուխների ընտանիքներին 20 հազար լիրա

¹² Բարսեղով Յ., նշվ. աշխ., էջ 34-38:

¹³ Վարդան Լ., նշվ. աշխ., էջ 80-83:

արժողության հայկական գույք է ընծայվել: Հայերից բռնագրավված գումարներից Մուստաֆա Քեմալը Հայոց ցեղասպանության մեղավորների ընտանիքներին նաև թոշակ է նշանակել և նրանց հատկացրել հայերից մնացած տները:

1919-1922 թթ. քեմալականների հաղթանակը Թուրքիայում աշխարհացրիվ արեց 1915 թ. ցեղասպանությունից փրկված հայ ժողովրդի բեկորներին իրենց բնակավայրերից: 1915 թ. եղեռնը վերապրած հարյուր հազարավոր հայեր վերադարձել էին իրենց նախկին բնակավայրերը: Այդ հայերի մեծ մասը 1922 թ. վերջին քեմալականների հալածանքներից մազապուրծ, կողոպտված և ունեզրկված, վերջնականապես լքեց պապենական օջախները և արտագաղթեց Խորհրդային Հայաստան, Հյուսիսային Կովկաս, Պարսկաստան, Սիրիա, Լիբանան, Բալկաններ, Ամերիկա և այլն: Քեմալականները հայերի սպանդ, հալածանքներ և կողոպուտ իրականացրեցին ոչ միայն Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և կայսրության տարբեր շրջաններում, այլ նաև Հայաստանի Հանրապետության տարածքում 1920 թ. Հայաստանի առաջին հանրապետության դեմ վարած պատերազմում: 1919 թ. Հայկական ազգային պատվիրակության նախաձեռնությամբ օտարերկրյա մասնագետներից հատուկ հանձնաժողով կազմվեց Օսմանյան կայսրությունում ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասի գնահատման համար¹⁴:

Հանձնաժողովը եկավ այն միաձայն եզրակացությանը, որ հայերից զավթված արժեքները 3 միլիարդ 750 միլիոն դոլար արժողություն ունեն: Այս թիվն ընդունեց նաև ամերիկյան կոնգրեսի հանձնաժողովը՝ Ջեյմս Ջերարդի գլխավորությամբ: Բնաջնջելով, բռնի տեղահանելով Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության տարբեր վայրերում ապրող հայերին՝ երիտթուրքական և քեմալական իշխանությունները տնտեսական ասպարեզից վերացրին նաև իրենց հզոր մրցակցին՝ հայ ազգաբնակչությանը:

Հայերի ունեցվածքի, հարստության հաշվին, անհատական և հավաքական անշարժ և շարժական գույքերի յուրացմամբ թուրքերն ստեղծեցին ազգային բուրժուազիա: Հայերի տնտեսության ոչնչացումը դարձավ թուրքական տնտեսության զարգացման հիմքը: Եվ, վեջապես, թուրքական ազգայնամոլական շարժումը, որի արդյունքում 1923 թ. հոկտեմբերի 29-ին ստեղծվեց Թուրքիայի Հանրապետությունը, նույն-

¹⁴ Աստոյան Ա., նշվ. աշխ., էջ 414-415:

պես հայկական ունեցվածքի հաշվին էր: Այս առումով տեղին է հիշել թուրք պատմաբան Թաներ Աքչամի հետևյալ բնութագրումը. «Հանրապետական Թուրքիան 1915-ի վրա է հիմնված»: Ժամանակակից Թուրքիայի Հանրապետությունը նույնիսկ 100 տարի անց ժխտում է, որ կատարել է մարդկության ամենածանր հանցագործությունը՝ Հայոց ցեղասպանությունը:

Վերջաբան

Ամփոփելով՝ հարկավոր է փաստել, մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կոտորելով, ունեզրկելով մի ողջ ժողովրդի, տիրելով դարերի տքնությամբ ու քրտինքով ստեղծած ունեցվածքին՝ թուրքական իշխանությունները կարողացան լուծել պետությանը և թուրքերի ազգային անվտանգությանը սպառնացող բազմաթիվ հարցեր: Ունեզրկելով հայերին՝ թուրքերը կարողացան լցնել պետական դատարկ գանձարանը, հոգալ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում առաջացած պատերազմական մեծագումար ծախսերը, ինչպես նաև վճարել արտաքին պարտքի զգալի մասը, որը պատերազմի նախօրյակին կազմում էր 64 միլիոն ֆունտ սթեռլինգ: Նաև այս հարցերի լուծմանն էր միտված երիտթուրքական պարագլուխների կողմից ծրագրված հայասպանության քաղաքականությունը:

Քեմալական իշխանությունները շարունակեցին երիտթուրքական կառավարության կողմից ծրագրված և իրականացված հայաջինջ քաղաքականությունը. հայ ժողովրդին կոտորելով և ունեզրկելով ստեղծեցին մի երկիր, որը մեզ հայտնի է որպես ժամանակակից Թուրքիայի Հանրապետություն:

Թուրքիայի Հանրապետությունը իր գոյության ողջ ընթացքում ոչ միայն չճանաչեց իր նախնիների կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը, այլև մինչ օրս չի խնայում ոչ մի միջոց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը փակելու ուղղությամբ: Հայոց ցեղասպանության ճանաչման, քաղաքական և նյութական պատասխանատվության հարցը փորձել է փակել ոչ միայն Թուրքիան: Այս հարցի շուրջ գործնական քայլեր են ձեռնարկել և շարունակում են ձեռնարկել որոշ եվրոպական երկրներ ևս, որոնք մեղավոր են Հայոց ցեղասպանության թողտվության (Անտանտի երկրներ) և նույնիսկ մասնակցության (Գերմանիա) մեջ:

Ցեղասպանության ժամանակ հայերից կողոպտված հարստությունը, որը պահվում էր ֆինանսների նախարարությունում, բազմիցս

օգնել է Թուրքիայի Հանրապետությանը դուրս գալ տնտեսական դժվարին իրավիճակներից: Թուրքիայի Հանրապետությունը ցեղասպանության ճանաչումից բացի նյութական պատասխանատվություն պետք է կրի, քանի որ հոչակվել և որպես պետություն կայացել է ի հաշիվ հայերի՝ հարյուրամյակներով ստեղծած հարստության կողոպուտի:

PETUNTS AREN
(YSU)

THE EXPROPERATION PROCESS OF ARMENINAS IN 1915-1923

In conclusion, it's important to state that by extorting and possessing the Armenians' property, the Turks were able to replenish the empty state treasury of Ottoman Empire, to cover the military expenses, incurred during the 1st World War, as well as to pay the significant part of Empire external debt, which was nearly 64 million Pounds Sterling before the war.

The Kemalist government continued the policy of extermination of Armenian population planned and executed by the Young Turks. By expropriating and exterminating Armenians, the Turks established a country that is now well known as the Republic of Modern Turkey.

The Republic of Turkey, throughout its existence, not only does not recognize the Armenian Genocide committed by its ancestors, but also spares no efforts and means to close the issue of International Recognition of the Armenian Genocide.

ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱԴԵԿ

(25թի)

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԴԱՏԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ

Հրեական ծագում ունեցող լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինը, ով ցեղասպանություն էգրույթի ստեղծողն է, կարևոր մասնակցություն է ունեցել է 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի կազմմանը: Լեմկինը նաև պայքարել է կոնվենցիայի վավերացման համար:

Հոդվածում փորձ է արվում ներկայացնել, թե ինչ ազդեցություն է ունեցել Հայոց ցեղասպանությունը Ռաֆայել Լեմկինի՝ Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի ընդունմանը միտված գործունեության մեջ:

1946 թ. հոկտեմբերին՝ Նյուրնբերգի դատավարությունից մի քանի օր հետո, Հնդկաստանը, Կուբան և Պանաման խնդրեցին ցեղասպանության հարցն ընդգրկել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին հանդիպման օրակարգում: Նրանք կոչ էին անում Գլխավոր ասամբլեային դատապարտել ցեղասպանության հանցագործությունը, նույնիսկ եթե դա կատարվում է խաղաղ պայմաններում¹:

1946 թ. դեկտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունում է թիվ 95 (1) բանաձևը, որով հաստատվում էին միջազգային իրավունքի այն սկզբունքները, որոնք ամրագրվել էին Նյուրնբերգի միջազգային դատարանի կանոնադրությամբ²: Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվում է նաև թիվ 96 բանաձևը, որի ընդունման համար նիստ էր հրավիրել ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը, կազմելու միջազգային պայմանագիր, որը կպարտադրի պետություններին կանխել և պատժել ցեղասպանության հանցագործությունը:

¹ Shelton D., Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, Macmillan Reference USA: 2005 Thomson Gale, vol. 1, p. 204.

² United Nations General Assembly Resolution 95 (1) of 11 December 1946, (<https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/033/47/IMG/NR003347.pdf>).

Բանաձևի համաձայն՝ Գլխավոր ասամբլեան հաստատում էր, որ ցեղասպանությունը միջազգային իրավական հանցագործություն է:

Բանաձևում նշվում էր. «Ցեղասպանությունն ամբողջ մարդկային խմբի գոյության իրավունքի ժխտումն է, քանի որ սպանությունը մարդկային էակների ապրելու իրավունքի ժխտումն է, ինչպես մարդկային խղճի գոյության ժխտումն է... և հակառակ է բարոյական օրենքներին և ՄԱԿ-ի ոգուն ու նպատակներին: Գլխավոր ասամբլեան հետևաբար պնդում է, որ ցեղասպանությունը ոճիր է միջազգային իրավունքի համաձայն... Անկախ այն բանից, թե հանցագործությունը կատարվել է կրոնական, ռասայական, քաղաքական կամ այլ հիմքերով, այն պատժելի է»³:

Գլխավոր ասամբլեայի որոշման ընդունումից հետո Լեմկինը տոնում էր պետության բացարձակ ինքնիշխանության հայեցակարգի նկատմամբ հաղթանակը. «Դարձնելով (ցեղասպանությունը) միջազգային մտահոգության խնդիր՝ բանաձևը հինավորապես փոխում է կառավարության պարտավորությունները իր քաղաքացիների նկատմամբ»⁴, - կարծում էր Լեմկինը: Իսկ 1947 թ. դեկտեմբերի 27-ին ռադիոհեռարձակման ժամանակ Լեմկինն արդեն նշում է. «ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ 1946 թ. դեկտեմբերի 11-ին ցեղասպանությունը, որը նշանակում է մարդկային ռասայական, կրոնական, ազգային, լեզվական, քաղաքական խմբերի ոչնչացում, հայտարարվեց որպես հանցագործություն միջազգային իրավունքի համաձայն և ՄԱԿ-ի անդամ պետությունների միջև պետք է ստորագրվի պայմանագիր «հանցագործությունների հանցագործությունը» պատժելու և կանխելու համար: Մարդկային պատմության մեջ առաջին անգամ մարդկային ամբողջ խմբերի գոյության իրավունքը դարձել է միջազգային մտահոգության առարկա»⁵:

³ United Nations General Assembly Resolution 96 of 11 December 1946, (<https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/033/47/IMG/NR003347.pdf>).

⁴ Bechky P., Lemkin's Situation: Toward a Rhetorical Understanding of Genocide, Journal Brooklyn Law Review, Brooklyn Law School vol. 77, issue 2, article 3, 2012. p. 581.

(<http://brooklynworks.brooklaw.edu/cgi/viewcontent.cgi?article=1160&context=blr>).

⁵ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 6, Folder 1, Draft of Broadcast on Genocide, December 23, 1947, p. 1. (Ռաֆայել Լեմկինի թողած արխիվային մեծաքանակ նյութերի մի մասը պահպանվում է

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Տրիգվե Լին խնդրեց Լեմկինին պատրաստել ցեղասպանության կոնվենցիայի նախագիծ: Նախագծի մշակումը Լեմկինի, ֆրանսիացի իրավաբան Դոնադյե դը Վաբրի և ռումինացի իրավական փորձագետ Վեսպասիան Պելլայի կողմից տեղի ունեցավ 1947 թ. ապրիլ-մայիս ամիսներին:

Լեմկինը տարբերակում էր «ֆիզիկական» ցեղասպանությունը (անձանց սպանությունը), «կենսաբանական» ցեղասպանությունը (ծնունդների կանխարգելումը) և մշակութային ցեղասպանությունը: Մինչդեռ Դոնադյե դը Վաբրը և Վեսպասիան Պելլան ընդունում էին, որ գոյություն ունի «ֆիզիկական» ցեղասպանություն և «կենսաբանական» ցեղասպանություն, նրանք կասկածամտությամբ էին վերաբերվում «մշակութային» ցեղասպանությանը և պնդում էին, որ այդ հարցը Գլխավոր ասամբլեայի որոշելիքն է⁶: Լեմկինը լոբբինգ արեց պայմանագիրը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Փարիզի նստաշրջանում, սակայն հանդիպեց խոչընդոտների: Զգալի առարկություններ եղան նախագծի՝ մշակութային ցեղասպանությանը վերաբերող հոդվածի վերաբերյալ⁷: Լեմկինը նախընտրեց կոնվենցիայի նախագծից դուրս թողնել քաղաքական խմբերի ցեղասպանության հարցը, քանի որ, ինչպես ինքն էր ասում՝ այն չունեի պահանջվող մշտականություն⁸:

Իր հարցազրույցներից մեկում, որը տեղի է ունեցել 1947 թ. հունիսի 12-ին, պրոֆեսոր Լեմկինը կարևորում է այն հանգամանքը, որ կոնվենցիայի ընդունման դեպքում յուրաքանչյուր պետություն ցեղասպանությունը պետք է համարի միջազգային հանցագործություն, որն իրագործողները պետք է պատժի ենթարկվեն. «Յուրաքանչյուր պետություն կարող է ընդունել ցեղասպանությունը որպես հանցագործություն քրեական իրավունքի համաձայն: Յուրաքանչյուր պետության դատա-

Նյու Յորքում գտնվող Ամերիկայի հրեական պատմական ընկերակցությունում (American Jewish Historical Society)՝ Ռ. Լեմկինի հավաքածուի տեսքով: Արխիվային նյութերը հիմնականում ամփոփված են 12 ձեռագրերի պահոցների մեջ: Նյութերի որոշ մասը մատչելի է նաև առցանց տարբերակով: Տե՛ս <http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

⁶ Cooper J., "Raphael Lemkin and the Struggle for the Genocide convention", New York: Palgrave MacMillan, 2008, p. 90.

⁷ Shelton D., Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, Macmillan Reference USA: Thomson Gale, vol. 2, 2005, p. 625.

⁸ Schabas W., Genocide in International Law: The Crimes of Crimes, Cambridge University Press, 2000, p. 53.

րաններն իրավունք կունենան ձերբակալելու և պատժելու ցեղասպանության իրագործման հարցում մեղավոր ցանկացած անձի, որտեղ էլ որ նա այդ պետության տարածքում հայտնաբերվի, եթե նույնիսկ հանցագործությունը կատարվել է արտասահմանում»⁹, - նշում է Լեմկինը, ապա որպես պատժի ենթակա ցեղասպանության օրինակ ներկայացնում Հայոց ցեղասպանության դեպքերը. «Օրինակի համար բերենք թուրքերի կողմից հայերի կոտորածների դեպքը, մի իրադարձություն, որը բոլորը հիշում են: Այն թուրքը, ով մասնակցել է ընդդեմ հայերի Հալեպում ցեղասպանության հանցագործությանը, կարող է հայտնվել Նյու Յորքում, Նյու Յորքի դատարանները կարող են իրավունք ունենալ պատժելու նման իրավախախտներին: Ավելին՝ ՄԱԿ-ի մարմինները և բնականաբար Անվտանգության խորհուրդը իրավունք կունենան միջամտելու ցանկացած կառավարության գործերին, որը կասկածվում է ցեղասպանության իրականացումը թույլ տալու մեջ: Միջազգային դատարանը կարող է մեղադրանք առաջադրել բարձրաստիճան օրինազանցներին՝ որպես կառավարության անդամների: Պետք է փոխհատուցում վճարվի զոհ դարձած խմբի փրկված անդամներին»¹⁰:

1947 թ. հունիսի 26-ին Լեմկինը և իր գործընկերները ներկայացրին «քարտուղարության նախագիծը» (Secretariat Draft) (ՄԱԿ-ի փաստաթուղթ E/447)՝ որպես ցեղասպանության կոնվենցիայի առաջին նախագիծ¹¹: «Քարտուղարության նախագիծը» լրամշակվեց Տնտեսական և սոցիալական խորհրդի *ad hoc* հանձնաժողովի կողմից, որում ներկայացված էին պետությունների ներկայացուցիչները: 1948 թ. գարնանը Տնտեսական և սոցիալական խորհուրդը սկսեց վերաձևակերպումներ անել Ցեղասպանության կոնվենցիայում և այդ խնդրի իրականացման համար հրավիրեց 7 պատվիրակություններից կազմված հանձնաժողով, Լեմկինը չընդգրկվեց հանձնաժողովի կազմում, քանի որ նա ոչ պաշտոնական պատվիրակ էր:

⁹ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 6, Folder 1, Transcript of interview of Raphael Lemkin, First draft of transcript, June 12, 1947, p. 1.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Secretariat Draft First Draft of the Genocide Convention, Prepared by the UN Secretariat, [May] 1947 [UN Doc. E/447],

(<http://www.preventgenocide.org/law/convention/drafts/>).

1948 թ. ՄԱԿ-ում իր կայրոցացած դասախոսությունում¹² Լեմկինը մատնանշում է ցեղասպանության ենթարկված ժողովուրդներին՝ այդ թվում՝ նաև հայերին: Հայոց ցեղասպանության իրողությունն առանցքային տեղ էր գրավում Լեմկինի հիշողությունում¹³:

Ի վերջո վերաձևակերպված նախագիծը 1948 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ներկայացվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային: Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի տեքստն ընդունվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին: Տվյալ կոնվենցիայի հիմնական նպատակն էր հաստատել այն փաստը, որ ցեղասպանությունը միջազգային իրավունքի համաձայն համարվում է հանցագործություն: Կոնվենցիայում տրվում էր ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված սահմանումը, որը ներառվեց շատ երկրների ազգային քրեական օրենսդրությունների մեջ:

Փաստաթղթի 2-րդ հոդվածում մասնավորապես նշվում է, որ ցեղասպանությունը նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ. (ա) այդ խմբի անդամների սպանությունը, (բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը, (գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, (դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը, (ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին¹⁴: Ընդ որում բավարար է վերը նշվածներից անգամ մեկ գործողության առկայությունը, և կարելի է պնդել ցեղասպանության իրագործման մասին:

¹² Տե՛ս Լեմկինի դասախոսության տեքստը առցանց՝
(<http://unesdoc.unesco.org/images/0022/002269/226985eo.pdf>).

¹³ Goodman H. A., The United States Should Remember Raphael Lemkin's Words and Formally Recognize the Armenian Genocide, The Huffingtonpost article, 04/13/2015, (http://www.huffingtonpost.com/h-a-goodman/the-united-states-should-2_b_7053052.html).

¹⁴ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա, 1948 թ. դեկտեմբերի 9
(http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf).

Հանցագործության սահմանման գործում կարևոր պահ էր առանձին խմբերի ոչնչացման մտադրության առկայությունը, որին Լեմկինն իր թղթերում առանձնակի կարևորություն է տալիս՝ փաստելով, որ և Հայոց ցեղասպանության, և հրեաների Հոլոքոստի իրագործման հիմքում ընկած է եղել հայերին և հրեաներին՝ որպես առանձին խմբերի ոչնչացնելու մտադրությունը. «Երկրորդ հողվածը խոսում է կոնկրետ մարդկային խմբին ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչնչացնելու մտադրության մասին՝ որպես այդպիսին: Բառերը ավելացվել են այն նպատակով, որ համապատասխանեցվեն այնպիսի իրավիճակները, երբ ոչ ամբողջ խումբն է ոչնչացվում: Օրինակի համար, հրեաների դեպքում ոչ բոլոր 16 մլն-անոց ամբողջ հրեական ցեղն էր (Հիտլերի - ՆՊ) վերահսկողության տակ: 6 մլն հրեաների ոչնչացումը նրա կողմից նշանակում է հրեա ազգի մասնակի ոչնչացում, և որը պետք է որակվի որպես ցեղասպանություն: 1,2 մլն հայեր ոչնչացվեցին: 1916 թ. նրանք ներկայացնում էին հայ ժողովրդի զգալի մասը, բայց ոչ ամբողջ հայ ժողովուրդը: Այս խոսքերը արդեն հաստատում են երկրորդ հողվածը (ցեղասպանության կոնվենցիայի) ցույց տալու համար, որ հանցագործները մտադիր են եղել ոչնչացնել խմբին: Ոչնչացումը նշանակում է այնպիսի գործողությունների իրականացում, որոնք հանգեցնում են խմբի վերացմանը: Հրեաները, հայերը, կաթոլիկները և բողոքականներն անցյալում ոչնչացվել են միայն այն պատճառով, որ նրանք տվյալ կրոնական և ազգային խմբերին էին պատկանում: Վերաբերմունքը անհատական հրեայի, հայի, կաթոլիկի կամ բողոքականի նկատմամբ ոչ էական է»¹⁵:

Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի դրույթների վերաբերյալ իր մեկ այլ վերլուծությունում Լեմկինը նշում է, թե քրեական իրավունքում մտադրությունն առաջնային նշանակություն ունի: Կոնվենցիայի երկրորդ հողվածը պահանջում է, որ մտադրությունը լինի կոնկրետ. «Բավարար չէ սպանել տարբեր կրոնի և ռասայի պատկանող մարդկանց, բայց այդ սպանությունները պետք է կատարվեն որպես մի ծրագրի մի մաս ոչնչացնելու տրված խմբերին: Օրինակ՝ այն թուրքերը, ովքեր մասնակցեցին 1,2 մլն հայերի բնաջնջմանը, նրանք մեղավոր են ցեղասպա-

¹⁵ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154., Box 6, Folder 2, The Truman Doctrine, the Marshall Plan, and the U.N. Action on Genocide, March 29, 1948, p. 1, 2.

նություն կատարելու հարցում, որովհետև նրանք գործել են հայ ազգին ոչնչացնելու մտադրությամբ»¹⁶, - գրում է Լեմկինը:

Նշենք, որ կոնվենցիայում տեղ գտած ցեղասպանության՝ որպես միջազգային հանցագործության բոլոր բաղադրիչները համընկնում են այն գործողությունների հետ, որոնք իրականացվել են օսմանյան իշխանությունների կողմից հայերի նկատմամբ: Այս իմաստով կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված ցեղասպանության իրագործման համար հիմք հանդիսացող նշված բոլոր 5 գործողություններն առկա էին Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ՝ այդ թվում նաև «երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին»: Լեմկինը ցեղասպանության հանցագործության բնույթի վերաբերյալ իր անտիպ հետազոտություններից մեկում, անդրադառնալով երեխաների բռնի փոխանցմանը, նշում է, թե մարդկային խմբի կենսաբանական շարունակականությունը խաթարելու ձևերից մեկն այդ խմբից երեխաներին հեռացնելն է: «Այս տեսակի ցեղասպանության բազմաթիվ դեպքեր են տեղի ունեցել պատմության ընթացքում... Թուրքական իշխանությունները վերցնում էին քրիստոնյա երեխաներին և փորձում նրանց կրթել Թուրքիայի գործառնություններում: Հետագայում այդ երեխաները դարձան թուրքական զինվորներ, ուղարկվեցին իրենց հայրենի հողերը որպես ռազմական վերահսկող գումարտակներ: Նրանց դաժանություններն իրենց սեփական ծնողների և նախկին համաքաղաքացիների նկատմամբ մեծ էր, քան թուրքերի կողմից ցուցաբերված դաժանությունը»¹⁷:

Հայոց ցեղասպանության դատապարտման խնդրի շուրջ Լեմկինի անհանգստությունը հանգեցրեց նրան, որ նա իր առջև հստակ նպատակ դրեց հասնել նրան, որ Թուրքիան լինի այն վավերացնող առաջին երկրներից: Լեմկինը գիտակցում էր, որ խոչընդոտների է հանդիպելու այս հարցում. «Իմ մտքում հասունացել էր համարձակ ծրագիր: Այն կայանում էր նրանում, որ Թուրքիան լինի կոնվենցիան առաջին 20 վավերացնողների թվում: Դա քավություն կլինի հայերի ցեղասպանության համար: Սակայն ինչպե՞ս հասնել դրան... Թուրքերը հպարտանում են իրենց հանրապետական կառավարման ձևով և առաջադեմ գաղափարներով, որոնք օգնեցին նրանց փոխել Օսմանյան կայսրության կառավարումը: Ցեղասպանության կոնվենցիան պետք է դրվի սոցիալա-

¹⁶ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 3, The Convention for the Prevention and Punishment of Genocide, p. 3.

¹⁷ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 2, Nature of genocide, p. 11, 12.

կան և միջազգային առաջընթացի շրջանակներում: Ես գիտեի, որ սակայն այս խոսակցության երկու կողմերը ստիպված են լինելու խուսափել մի առարկայի հիշատակումից, թեև այն միշտ կլինի նրանց գիտակցության մեջ՝ հայերը»¹⁸, - գրում է Լեմկինը:

Լեմկինը կոնվենցիայի ընդունման անհրաժեշտությունը կարևորում էր Հայոց ցեղասպանության օրինակով հանցագործների անպատիժ թողնելու հնարավորությունը բացառելու տեսանկյունից: Ըստ նրա՝ կոնվենցիայի բացակայությունն էր, որ թուրք ոճրագործները կարողացան խույս տալ պատժից, իսկ նրանց պատժելու գործը իրականացրին հայ երիտասարդ վրիժառուները:

Այս առթիվ նա իր անստիպ թղթերից մեկում գրում է. «Հայերը արդարադատությունը իրականացրին իրենց սեփական ձեռքերով և ահաբեկչական գործողություններով մահապատժի ենթարկեցին թուրք մեղավորներին: Սա հայ ուսանող Սողոմոն Թեհլերյանի դեպքն է, ով սպանեց թուրքական ներքին գործերի նախարար Թալեաթ Փաշային Բեռլինի փողոցում, ով ստորագրել էր մահացու տեղահանությունների հրամանները: Հայերի մյուս կոտորածների կազմակերպիչը, որոնք տեղի էին ունեցել Ադրբեջանում Առաջին համաշխարհային պատերազմից հետո, սպանվել է Կոստանդնուպոլսում մի հայի կողմից, ով կորցրել էր իր ընտանիքը ջարդերի ընթացքում¹⁹: Հետաքրքրական է նշել, որ մեղադրյալները երկու դատավարություններին վկայակոչում էին նույն պատճառները...

Դատարանները դատեցին նրանց և անմեղ հայտարարեցին: Ինչո՞ւ: Պաշտոնապես ասվում էր, որ ամբաստանյալները հիվանդ են կամ անհավասարակշիռ: Եթե այդ ժամանակ լինեք ցեղասպանության միջազգային կոնվենցիա, առաջին հերթին դատվելու էին հայ ժողովրդին կործանողները և ոչ թե երկու երիտասարդ հայրենասերները, ովքեր վրեժխնդիր են եղել իրենց ժողովրդի տառապանքների համար»²⁰:

¹⁸ Charny I., "Encyclopedia of Genocide", Institute on the Holocaust and Genocide, Jerusalem, Volume 1, 1999, p. 79.

¹⁹ Լեմկինը նկատի ունի վրիժառու Միսաք Թողլակյանին, ով 1921 թվականի հուլիսի 18-ին Կոստանդնուպոլսում սպանել է Բաքվի հազարավոր անմեղ հայերի ջարդերի կազմակերպիչ Ադրբեջանի ներքին գործերի նախկին նախարար Բեհբուք Ջիվանշիր Խանին: Անգլիական ռազմական դատարանը դատել է Թողլակյանին և արդարացրել որպես անմեղսունակ:

²⁰ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 3, Le Genocide (Social), undated, p. 4, 5.

Յեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիան ուժի մեջ մտավ 1951 թ. հունվարի 12-ին: Այս կապակցությամբ իր հայտարարության մեջ Լեմկինը չի կարողանում թաքցնել իր հուզմունքը՝ նշելով. «Սա հաղթանակի օր է մարդկության համար և ամենագեղեցիկ օրը իմ կյանքում: Երբ ես նայում եմ հետ՝ դեպի 1933 թ., երբ ես Մադրիդում տեղի ունեցած Ազգերի լիգայի քրեական իրավունքի խորհրդածողովին ներկայացնում էի օրենքի նախագիծ ընդդեմ կրոնական, ազգային և ռասայական խմբերի ոչնչացման, ես վախեցած էի այն ծանրության և խոչընդոտների քանակից, որոնք պետք է հաղթահարեի: Մարդասիրական խաչակրաց արշավանքի հոգևոր ուժը ավելի ուժեղ է, քան որևէ խոչընդոտ, այնպես որ անձինք և կառավարությունները պետք է խոնարհվեն այդ ուժի առաջ: Յեղասպանության դեմ արշավի հոգևոր ուժը վերջապես ճանաչվեց կառավարությունների կողմից և ստացավ դիվանագիտական կարգավիճակ»²¹:

Լեմկինը պայքարում էր, որ Յեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիան վավերացվի ԱՄՆ-ի կողմից՝ ներկայացնելով դրվագներ հրեական Հոլոքոստի և Հայոց ցեղասպանության իրագործման գործընթացից: Այսպես, նա Թելմա Ստիվենսին ուղղված նամակում, ով մեթոդիստ կանանց խորհրդում կամավոր էր, համոզում էր, որ համագործակցի իր հետ՝ պայքարելու կոնվենցիան սենատում անցկացնելու համար. «Այս կոնվենցիայի ընդունումը խղճի հարց է և ճանապարհ է ստուգելու մեր՝ չարի հետ ունեցած կապը: Ես գիտեմ, որ հուլիսին և օգոստոսին շատ շոգ է աշխատելու և պլանավորելու համար, բայց չպետք է մոռանալ, որ այս ամիս շոգը պակաս անտանելի է մեզ համար, քան Օսվենցիմի և Դախաուի վառարաններում, քան Հալեպի սպանիչ անապատային շոգին, որը պատճառ դարձավ հարյուր հազարավոր հայ քրիստոնյաների մարմինների այրման համար, ովքեր 1915 թ. ցեղասպանության զոհերն էին»²²:

Լեմկինը կարծում էր. «Եթե Ամերիկյան սենատը հավանություն տա Յեղասպանության կոնվենցիային, ապա մյուս ազգերը կհետևեն Ամերիկային: Բոլորն էլ լավ հիշում են, որ ավելի քան մեկ միլիոն

²¹ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 6, Folder 2, The Genocide Convention Goes into Force Today, January 12, 1951, p. 1.

²² Power S., A Problem from Hell: America and the Age of Genocide, New York: Basic Books, 2002, 1, p. 71.

հայերի ոչնչացումն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ անպատիժ է մնացել»²³: Որպես կոնվենցիան ԱՄՆ-ի սենատի կողմից ընդունելու անհրաժեշտ փաստարկ Լեմկինը կոչ էր անում սենատին հետևել Վիլսոնի օրինակին, ով հանդես էր գալիս հայերի օգտին, և վավերացնել կոնվենցիան. «Նախագահ Վիլսոնը դժվարությամբ պայքարում էր ավելի քան մեկ միլիոն հայերին ոչնչացումից փրկելու համար: Ֆրանկլին Ռուզվելտի ելույթը ընդդեմ հետապնդումների շատ հայտնի է: ԱՄՆ-ի սենատը, մենք հույս ունեք, հետևելով այս փայլուն օրինակներին կարող է հանդես գալ կոնվենցիայի անհապաղ վավերացման օգտին և դրանով պարզ մարդկային պարկեշտությունը վերածել միջազգային իրավունքի»²⁴:

Իր մահվանից մի քանի ամիս առաջ՝ 1959 թ., երբ արդեն ցեղասպանության կոնվենցիան վավերացվել էր 58 պետությունների կողմից, «Հայրենք» շաբաթաթերթում տպված իր հոդվածում Լեմկինը նշում է, թե Հայոց ցեղասպանության իրողությունը բացեց կոնվենցիայի ընդունման ճանապարհը. «Հայ տղամարդկանց, կանանց և երեխաների տանջանքները, ուլքեր խեղդվեցին Եփրատ գետում կամ սպանվեցին Դեր Զորի ճանապարհին, պատրաստեցին ՄԱԿ-ի կողմից ցեղասպանության կոնվենցիայի ընդունման ճանապարհը և բարոյապես հարկադրեցին Թուրքիային վավերացնել այն: Սա է պատճառը, որ ամբողջ աշխարհի հայերը հատկապես հետաքրքրված էին Ցեղասպանության կոնվենցիայով: Նրանք լցվում էին Փարիզում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի մշակող կոմիտեի սրահները, երբ ցեղասպանության կոնվենցիան քննարկվում էր: Հայ Լևոն Քեշիշյանը՝ ՄԱԿ-ի արաբական թերթի թղթակիցը, իր գրառումներով զգալիորեն օգնեց Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի վավերացումը ստանալու համար: Մեկ միլիոն հայեր մահացան, բայց գրվեց ժողովրդի սպանության դեմ ուղղված օրենք իրենց արյան թանաքով և իրենց տառապանքների ոգով»²⁵:

Փաստորեն կարող ենք արձանագրել, որ Լեմկինը Ցեղասպա-

²³ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 6, Folder 2, The Law on Genocide before the U.S.A. Senate, p. 1.

²⁴ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 2, On the Need for a Genocide Convention, p. 14.

²⁵ Lemkin R., Father of genocide Convention, Reviews Work Relating to Turkish Massacres Published in the Hairenik Weekly: January 1, 1959. (<http://asbarez.com/59792/lemkins-hairenik-weekly-article-50-years-later-a-powerful-reminder/>).

նության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի ստեղծման և ցեղասպանության հանցագործությունը կանխելու անհրաժեշտությունը պայմանավորում էր ցեղասպանության այնպիսի լայնածավալ գործողությունների անարգել իրականացման հետ, ինչպիսիք են հրեական Հոլոքոստը և Հայոց ցեղասպանության դեպքերը, երբ հանցագործների կողմից առկա էր հայերին և հրեաներին՝ որպես առանձին մարդկային խմբերի ոչնչացման մտադրությունը: Երա պայքարը կոնվենցիայի ստեղծման համար ի վերջո պսակվեց հաջողությամբ: Կոնվենցիան, որի նախագիծը կազմելու գործում մեծ դեր է ունեցել Ռաֆայել Լեմկինը, սահմանում էր ցեղասպանությունը որպես միջազգային հանցագործություն, իսկ կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված՝ ցեղասպանության իրագործման համար հիմք հանդիսացող բոլոր 5 գործողությունները առկա էին Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ, ինչը փաստում է այն մասին, որ կոնվենցիան կազմելիս ցեղասպանության դասական օրինակ է դիտարկվել հենց Հայոց ցեղասպանությունը:

POGHOSYAN NAREK

(AGMI)

RAPHAEL LEMKIN'S ACTIVITIES AIMED AT THE ADOPTION OF THE
CONVENTION ON THE PREVENTION AND PUNISHMENT OF THE
CRIME OF GENOCIDE AND ARMENIAN GENOCIDE

This article illustrates that Lemkin emphasized the need for the adoption of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide by the example of Armenian genocide to exclude the possibility of leaving criminals unpunished. According to him, the absence of a convention that allowed Turkish criminals to escape punishment, and their punishment was carried out by young Armenian avengers. Lemkin's struggle for the establishment of the Convention was finally crowned with success. The Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, that was adopted by the United Nations General Assembly on 9 December 1948 defines genocide as international crime. The 5 acts referred to in Article 2 of the Convention took place during the Armenian Genocide, which proves that Armenian Genocide is considered a classic example of Genocide during the compilation of the Genocide Convention.

ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
(ՀՏԹԻ)

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿՋԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը ներդրում ունի ինչպես միջազգային քրեական իրավունքի զարգացման, այնպես էլ ցեղասպանությունների դատապարտման և կանխարգելման գործում: Հայոց ցեղասպանության թեման առանձնահատուկ դեր է ունեցել նրա գիտական գործունեության մեջ:

Հետազոտության հիմնական խնդիրն է հիմնավորել, որ Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի գործունեության սկզբնական շրջանում և իրադարձությունների լուսաբանումն ունեն իրավական և պատմաքաղաքական կարևոր նշանակություն, քանի որ Հայոց ցեղասպանությունն առանձնակի ազդեցություն է ունեցել Ռաֆայել Լեմկին անհատի վրա՝ հանցագործության այս տեսակը օրենքի դաշտ բերելու գործում:

Ռաֆայել Լեմկինը, ով ծնվել է 1900 թ. հունիսի 24-ին Լեհաստանում՝ Բեզվոդնե քաղաքում՝ հրեա ֆերմերի ընտանիքում, իր մանկության և պատանեկության տարիներն անցկացրել է Լեհաստանի արևելքում գտնվող ֆերմայում՝ Վոլկովսկ փոքր քաղաքի մոտակայքում, որն այն ժամանակ ցարական Ռուսաստանի կազմում էր: 1913 թ.՝ 12 տարեկան հասակում, Լեմկինը, կարդալով լեհ գրող Հենրիկ Սենկևիչի «Յո՞ երթա» պատմավեպը, որը վերաբերում էր առաջին դարում Ներոն կայսեր կողմից քրիստոնեություն ընդունած մարդկանց կոտորածներին, զարհուրել է, որ Ներոն կայսրը կարող էր քրիստոնյաներին առյուծների կերակուր դարձնել, ապա իր մորը՝ Բելային, հարցրել, թե ինչպես կարող է կայսրը ուրախություն առաջացնել հանդիսատեսի խմբի մեջ¹:

«Իմ վաղ պատանեկության շրջանում ես կարդացի Հենրիկ Սենկևիչի «Յո՞ երթա» պատմավեպը, որը լի է վաղ քրիստոնյաների տառապանքների վերաբերյալ դրվագներով. հոռմեացիները փորձում էին

¹ Power S., A Problem from Hell: America and the Age of Genocide, New York, Basic Books, 2002, p. 20.

ոչնչացնել նրանց, որովհետև նրանք հավատում էին Քրիստոսին»². -
նշում է Ռ. Լեմկինը իր ինքնակենսագրականում:

Վաղ քրիստոնյաների տառապանքերի վերաբերյալ պատմու-
թյունը մտահոգում է պատանի Ռաֆայելին: Նա ցանկանում էր իմանալ,
թե սպանություն կատարողը որքանով է ազատված պատժից. «Երբ
մարդիկ այսօր մարդկանց են սպանում, նրանք բանտարկվելու են,
այնպես չէ»: Նրա մայրն առանց վարանելու պատասխանում էր. «Այո,
նրանք բանտ են ընկնելու»:

«Յո՛ւ երթասը» և դրա իմաստի վերաբերյալ քննարկումը մոր հետ
տպավորվել էր Լեմկինի հիշողության մեջ, և նա այդ մասին գրի է
առնում նաև իր կենսագրականում: Հետագայում Լեմկինը պատմում էր.
«Դա եղավ այն օրը, որ ես սկսեցի արշավը (ընդդեմ ցեղասպանության),
որովհետև ես սկսեցի փնտրել պատասխանը»³:

Լեմկինը սկսեց զբաղվել ընթերցանությամբ և նվիրվեց էթնիկ
խմբերի ոչնչացման ուսումնասիրությանը: «Ես տպավորվող պատանի
էի, հակված գերզգայունակության»⁴, - գրում է նա տարիներ հետո: Ծա-
նոթանալով Կարթագենի անկման, մոնղոլական արշավանքների,
Ֆրանսիական հուզենոտների թիրախավորման պատմություններին՝
նա մորը միշտ տանջում էր զանգվածային կոտորածների պատմական
դեպքերի մանրամասների մասին հարցերով:

Ռաֆայելին հուզող հիմնական հարցը դարձավ հետևյալը.
«Սպանել անպաշտպան մարդկանց միայն այն պատճառով, որ նրանք
տարբերվում են քեզանից՝ օրենք չկա»: Մոր պատասխանը բոլորովին
անբավարար էր. «Կան օրենքներ սպանության դեմ»⁵:

1906 թ. 70 հրեաներ սպանվել էին, 90-ը՝ մահացու վիրավորվել
Լեհաստանի Բելաստոկի շրջանում (այն ժամանակ ցարական Ռու-
սաստանի կազմում էր) տեղի ունեցած տեղական ջարդերում⁶: Լեմկինը
լսեց, որ ամբոխը բացել է զոհերի ստամոքսները՝ դրանք լցունելով

² From the Guest Editors: Raphael Lemkin: the "founder of the United Nation's Genocide Convention" as a historian of mass violence, *Journal of Genocide Research* (2005), 7(4), December, p. 447-448.

³ Korey W., "An Epitaph for Raphael Lemkin", *Jacob Blaustein Institute for the Advancement of Human Rights*, June 2001, p. 50.

⁴ Power S., նշվ. աշխ., էջ 20:

⁵ Korey W., նշվ. աշխ., էջ 6:

⁶ Ջարդերը հայտնի են «Բելաստոկի պոգրոմ» անունով, որի հիմնական մասնակիցները զինվորները և ոստիկաններն են եղել:

բարձի փետուրներով: Նա վախենում էր, որ այն միջը, թե հրեաները սպանում են քրիստոնյա տղաներին, կարող է հանգեցնել ավելի շատ սպանությունների:

Հաջորդ դրվագը, որը ցնցել էր Լեմկինին, Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանություններն էին: Դրա հետ կապված նա իր ինքնակենսագրականում գրում է. «1915 թ. գերմանացիներն օկուպացրին Վոլկովսկ քաղաքը և շրջակա տարածքը: Ես սկսեցի ավելի շատ պատմություն ուսումնասիրել, թե ինչպես են ազգային, կրոնական կամ ռասայական խմբերը ոչնչացվել: Ճշմարտությունն ի հայտ եկավ միայն պատերազմից հետո: Թուրքիայում ավելի քան 1.2 միլիոն մարդու մահվան դատապարտեցին առանց պատճառի և միայն նրա համար, որ քրիստոնյաներ էին⁷: Նրանց քշեցին իրենց տներից Եփրատ գետի երկայնքով, և հետո հանկարծ ուղեկցող ժանդարմները սկսեցին կրակել տեղահանվողների վրա: Միայն մի բուռ մարդիկ գոյատևեցին՝ թաքնվելով իրենց ընկերների մարմինների տակ: Թուրքերն ավելի ուշ մեղադրում էին անգեն հայերին, թե սկսել են կրակել»⁸:

Օսմանյան կայսրության կողմից հայերի զանգվածային սպանությունները Լեմկինի գիտակցության մեջ հետաքրքրություն առաջացրին հայերի ճակատագրի նկատմամբ: Ժամանակի ընթացքում նրա հետաքրքրությունը հայերի նկատմամբ ավելի էր աճում: Հնարավոր է, որ այս հարցում նրա վրա որոշակի ազդեցություն է ունեցել Առաջին համաշարհային պատերազմի ընթացքում ռուսական քարոզչությունը, որում հրապարակայնություն էր տրված հայերի խնդրին⁹:

Երբ Լեմկինն արդեն 21 տարեկան էր և լեզվաբանություն էր ուսումնասիրում Լվովի համալսարանում, պատահաբար տեղական թերթից իմանում է Սողոմոն Թեհլերյանի կողմից Բեռլինում Օսմանյան կայսրության ներքին գործերի նախկին նախարար Թալեաթ փաշայի սպանության մասին¹⁰: Լեմկինը սկսում է հետևել Թեհլերյանի դատավարությանը:

⁷ Charny I., Enciclopedia of Genocide, Institute on the Holocaust and Genocide, Volume 1, 1999, p. 79.

⁸ Ռ. Լեմկինի անտիպ ինքնակենսագրություն, Donna-Lee Frieze, "Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin", Yale 2013, p. 19.

⁹ Raphael Lemkin and the international debate on the punishment of war crimes (1919 – 1948), Daniel Mark Segesser and Myriam Gessler, Journal of Genocide Research (2005), 7(4), December, p. 454.

¹⁰ Korey W., նշվ., աշխ., էջ 7-8:

Այս առիթով նա իր՝ ինքնակենսագրականում գրում է. «Պատերազմից հետո 150 թուրք պատերազմական հանցագործներ ձերբակալվել էին և բրիտանական կատավարության կողմից ներկայվել Մալթա կղզի: Հայերը պատվիրակություն ուղարկեցին Փարիզի խաղաղության կոնֆերանս: Նրանք արդարություն էին պահանջում: Ապա ես մի օր կարդացի թերթերում, որ բոլոր թուրք հանցագործներն ազատ են արձակվելու: Ես ցնցվեցի: Մի ազգ սպանվեց, իսկ մեղավոր անձինք ազատ արձակվեցին: Ինչո՞ւ են մարդուն պատժում, երբ նա սպանում է մի այլ մարդու, մինչդեռ միլիոնավոր մարդկանց սպանությունն ավելի փոքր հանցագործություն է, քան անձի սպանությունը: Մալթայից ազատված թուրք հանցագործները ցրվեցին աշխարհով մեկ: Նրանցից ամենասարսափելին Թալեաթ փաշան էր, ով նույնացվում է հայ ժողովրդի ոչնչացման հետ: Թալեաթ փաշան ապաստան գտավ Բեռլինում: Մի օր նրան փողոցում կանգնեցրեց Թեհլերյան անունով մի հայ երիտասարդ: Թալեաթ փաշային ճանաչելուց հետո Թեհլերյանը սպանեց նրան: Նրա դատավարությունը դարձավ իրականում մի թուրքական ոճրագործի դատավարություն: Հայերի կողմից դատարան բերված բազմաթիվ վկաներ նկարագրեցին կոտորածների շարադետ տեսարանները: Այս դատավարության միջոցով աշխարհը վերջապես տեսավ Թուրքիայի ողբերգական դեպքերի իրական պատկերը: Այդ նույն աշխարհը, որը լուռ էր, երբ հայերը սպանվում էին և մտադիր էր թաքցնել թուրքական պատերազմական հանցագործների ազատ արձակման իրողությունը, այժմ պարտադրված էր լսելու սարսափելի ճշմարտությունը:

Բեռլինի դատարանն արդարացրեց Թեհլերյանին: Թեհլերյանը գործել էր հանուն մարդկության խղճի: Բայց կարո՞ղ է մի մարդն իրեն արդարություն բաշխողի դերում նշանակել»¹¹:

Հայոց ցեղասպանությունն իրագործած թուրք հանցագործների անպատիժ մնալու հանգամանքն անհանգստություն է առաջացնում Լեմկինի մոտ, և նա իր պրոֆեսորներից մեկի ուշադրությունը հրավիրում է այդ հարցի վրա: Նա հարցնում է, թե ինչու հայերը կոտորածների համար չձերբակալեցին Թալեաթին: Պրոֆեսորը պատասխանում է, որ գոյություն չունի օրենք, ըստ որի նա կարող էր ձերբակալվել: «Նկատի ունեցիր ֆերմերի դեպքը, ում պատկանում է հավերի մի խումբ,- ասում

¹¹ Ռ. Լեմկինի անտիպ ինքնակենսագրություն, Donna-Lee Frieze նշվ. աշխ. էջ 19-20:

է պրոֆեսորը,- նա սպանում է դրանց, և դա իր գործն է: Եթե դու միջամտես, դու ոտնձգություն ես կատարում»¹²:

Լեմկինն արձագանքում է. «Հայերը հավեր չեն»: Պրոֆեսորն անտեսում է Լեմկինի պատասխանը. նա ձգտում էր հիմնավորել իր փաստարկը. «Երբ դու միջամտում ես մի երկրի ներքին գործերին, դու ոտնահարում ես այդ երկրի ինքնիշխանությունը»: Դա ավանդական փաստարկ էր, որը կանխում և բացառում է միջազգային հանրության գործողությունը՝ ուղղված զսպելու զանգվածային սպանությունների մեջ մեղավոր ռեժիմներին, կամ նրանց, ովքեր ներգրավված են խոշտանգումների, ինչպես նաև մարդու իրավունքների կոպիտ խախտումների մեջ¹³:

«Հանցագործություն է Թեհլերյանի համար սպանել մի մարդու, բայց հանցագործություն չէ բռնակալի համար սպանել ավելի քան մեկ միլիոն մարդու,- կրկին հարցնում է Լեմկինը, - սա ամենահակասականն է»: Լեմկինը զարմացած էր, որ «ինքնիշխանության դրոշը» կարող է պաշտպանել մարդկանց, ովքեր փորձում են ոչնչացնել մի ամբողջ փոքրամասնության: «Սուվերենությունը,- վիճում էր Լեմկինը պրոֆեսորի հետ,- ենթադրում է անկախ արտաքին և ներքին քաղաքականության իրականացում, դպրոցների, ճանապարհների կառուցում... կարճ ասած՝ ցանկացած այնպիսի գործունեություն, որն ուղղված է ժողովրդի բարօրությանը: Սուվերենությունը չի կարող ընթանալ որպես միլիոնավոր անմեղ մարդկանց սպանելու իրավունք»¹⁴:

Պրոֆեսորը նշում է. «Դուք երիտասարդ եք ու հուզված... Եթե Դուք ինչ-որ բան իմանալիք միջազգային իրավունքից...»: Նա նախադասությունը չի ավարտում: Պրոֆեսորի այս խոսքն էլ հանդիսացավ Լեմկինի համար հիմնական հարցի կորիզը: Չի՞ կարող միջազգային իրավունքի նորմ ստեղծվել, որը կգործի զանգվածային սպանությունների համար: Այս հարցադրումը հանգեցրեց նրան, որ Լեմկինը որոշեց փոխել իր ուսումնասիրության ոլորտը, որի արդյունքում նա լեզվաբանությունից իր ուշադրությունը կենտրոնացրեց միջազգային իրավունքի ուսումնասիրության վրա¹⁵: Լեմկինը վստահ էր, որ եթե մի անհատը կարող է հրաման տալ սպանել միլիոնավոր մարդկանց, ապա

¹² Power S., նշվ. աշխ., էջ 17:

¹³ Korey W., նշվ. աշխ., էջ 8:

¹⁴ Power S., նշվ. աշխ., էջ 18-19:

¹⁵ Korey W., նշվ. աշխ., էջ 8:

մեկ անհատը նույնպես կարող է իշխանություն ունենալ կանխելու նմանատիպ բռնությունները:

Հետագայում Լեմկինը գրում է «Ես ավելի և ավելի էի նույնականացնում ինքս ինձ տանջվող գոհերի հետ, որոնց թիվն ինչքան ավելանում էր, այնքան էս շարունակում էի պատմության իմ ուսումնասիրությունը: Շուտով հետևեցին ժամանակակից ցեղասպանությունների օրինակները, ինչպիսին 1915 թ. հայերի ջարդերն էին: Ինձ համար պարզ դարձավ, որ ազգերի, կրոնական խմբերի և ռասաների բազմազանությունն անհրաժեշտ է քաղաքակրթության համար, որովհետև այդ խմբերից յուրաքանչյուրը առաքելություն ունի իրականացնելու և մշակութային առումով իր ներդրումն ունենալու... Ես որոշեցի դառնալ իրավաբան և աշխատել ցեղասպանությունն օրենքից դուրս հայտարարելու և ազգերի համագործակցության միջոցով այն կանխարգելելու համար»¹⁶:

Փաստորեն նա իր մտքի ուղղությունը լեզվաբանությունից փոխում է դեպի այն ոլորտի ուսումնասիրություն, ինչը նրան մտահոգում էր դեռևս մանկության տարիներից: Արդյունքում Լեմկինը տեղափոխվում է Լվովի իրավունքի դպրոց, որտեղ սկսում է փնտրել հնադարյան և ժամանակակից իրավական նորմերը՝ կոտորածներն արգելելու համար¹⁷: Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ողբերգական ճակատագիրը հաստատում է նրա այն տեսակետը, թե պետք է ստեղծել միջազգային օրենք, որպեսզի ազգային կամ կրոնական փոքրամասնությունների կանխամտածված ու համակարգված ոչնչացումը պետության կողմից դառնա պատժելի հանցագործություն¹⁸:

1949 թ. CBS հեռուստաընկերության հեռուստածրագրերից մեկին տված իր հարցազրույցում Ռաֆայել Լեմկինը նշում է. «Ես հետաքրքրվեցի ցեղասպանությամբ, որովհետև այն շատ անգամ տեղի ունեցավ, այն տեղի ունեցավ հայերի հետ, և դրանից հետո հայերը հետ անարդար վարվեցին Վերսալի կոնֆերանսում, քանի որ նրանց ցեղասպանության իրագործման մեջ մեղավոր հանցագործները չպատժվեցին»¹⁹: Այա անդրադառնալով հայերի կողմից վրեժխնդրությանը և

¹⁶ Charny I., նշվ. աշխ., էջ 79:

¹⁷ Power S., նշվ. աշխ., էջ 21:

¹⁸ Schaller D., From Lemkin to Clooney: The Development and State of Genocide Studies, Genocide Studies and Prevention: An International Journal, Volume 6, 2011, Issue 3, Article 6.

¹⁹ Sassounian H., Lemkin Discusses Armenian Genocide, Dec. 8, 2005,

Թալեաթ փաշայի սպանության գործին՝ Լեմկինն ասում է հետևյալը. «Որպես իրավաբան՝ ես մտածում էի, որ հանցագործությունը պետք է պատժվի ոչ թե զոհերի կողմից, այլ դատարանի կողմից, ազգային օրենքով»²⁰:

Լեմկինին մտահոգում էր այն հանգամանքը, որ ոչ մի միջազգային դատարան չունի իրավասություն այն հանցագործությունների նկատմամբ, որոնք կատարվել են ինքնիշխան պետությունների սահմանների ներսում: Այս ամենը Լեմկինը սխալ էր համարում, և նա սկսում է մտածել, թե ինչպես կարող է դա փոխել²¹:

Լեմկինը հետագայում բացատրում էր, որ օրենքը կարևոր դեր կարող է կատարել էթնիկական և կրոնական խմբերի զանգվածային սպանությունների և նրանց մշակույթի ոչնչացման դեմ պայքարելու համար. «Օրենքը տալիս է հասարակության վրա ազդեցության գործիք», - ասում էր նա՝ նշելով, որ «խորհրդարանները վերահսկվում են իրավաբանների կողմից»:

Նա ընկղմվեց իրավական ուսումնասիրությունների մեջ 6 տարի, սկզբից Լվովում, ապա Հայդելբերգի համալսարանում: Նրան հիասթափեցնում էր այն փաստը, որ ոչ մի տեղ չկարողացավ գտնել իրավական նորմեր ռասայական և կրոնական խմբերի սպանությունն արգելելու համար²²:

Լեմկինը ուսումնասիրեց ժամանակի եվրոպական քրեական իրավունքի զարգացման միտումները, մասնավորապես ֆաշիստական Իտալիայի և սովետական Ռուսաստանի օրենսդրությունն ու քրեական իրավունքի նորմերը, հրապարակեց մի շարք հոդվածներ տոտալիտար երկրների քրեական օրենսդրության վերաբերյալ: Իսկ 1926 թ. Լեմկինը լեհերեն թարգմանեց և հրապարակեց սովետական Ռուսաստանի քրեական օրենսգիրքը²³:

1929 թ. նա Վարշավայում դատախազ նշանակվեց և սկսեց աշխատել միջազգային օրենքի նախագծի վրա, որը պարտավորեցնելու էր

(http://www.armeniapedia.org/index.php?title=Lemkin_Discusses_Armenian_Genocide_In_Newly-Found_1949_CBS_Interview).

²⁰ Նույն տեղում:

²¹ Adam Strom & the Facing History and Ourselves Staff, "Totally unofficial: Raphael Lemkin And the Genocide Convention", 2007, p. 4.

²² Korey W., նշվ., աշխ., էջ 8:

²³ Bieńczyk-Missala A., Dębski S., Rafal Lemkin, a hero of humankind, Warsaw, 2010, p. 64.

պետությունների կառավարություններին կանգնեցնել էթնիկական, ազգային, կրոնական խմբերի թիրախավորված ոչնչացումը: Հենց այդ օրերն էր, որ Լեմկինը ներկայացրեց իր եվրոպացի (իրավունքի մասնագետ) կոլեգաներին 1933 թ. Մադրիդում գումարված քրեական իրավունքի հիմնահարցերին նվիրված 5-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ:

Մադրիդյան կոնֆերանսում Լեմկինն առաջին անգամ առաջարկեց ստեղծել բազմակողմ կոնվենցիա և մարդկային խմբերի ոչնչացումը որակել որպես միջազգային հանցագործություն²⁴: Կոնֆերանսի ժամանակ նա ներկայացնում է օրենքի նախագիծ, որն արգելում էր միմյանց հետ կապված երկու գործողություններ՝ «բարբարոսությունը» և «վանդալիզմը»: «Բարբարոսությունը» որակվում էր որպես «ազգային, ռասայական, կրոնական և սոցիալական խմբերի կանխամտածված ոչնչացում»: «Վանդալիզմը» նա սահմանում էր որպես «առանձին խմբերի հանճարի արտահայտությունը հանդիսացող արվեստի, մշակույթի գործերի ոչնչացումը»: Այդ երկու գործողությունները՝ խմբերի և նրանց մշակութային և ինտելեկտուալ կյանքի ոչնչացումը, պատժելի դարձնելը Լեմկինին զբաղեցնելու էր նաև առաջիկա երեք տասնամյակների ընթացքում²⁵:

Լեմկինն իր մադրիդյան զեկույցում ուշադրություն էր հրավիրում նաև Հիտլերի վերելքին և Օսմանյան կայսրությունում հայերի ջարդերին, մի հանցագործություն, որը եվրոպացիների մեծամասնությունը կամ անտեսում էր, կամ ներկայացնում որպես «արևելյան» երևույթ: Եթե այն մի անգամ տեղի ունեցավ, պնդում էր երիտասարդ իրավաբանը, այն կարող է տեղի ունենալ այստեղ (Եվրոպայում):

Լեմկինն առաջ էր քաշում արմատական առաջարկ: Նա պնդում էր, որ եթե միջազգային հանրությունը երբևէ հույս ունի կանխելու այնպիսի զանգվածային ջարդերը, ինչպիսին հայերի կոտորածներն էին, ապա աշխարհի պետությունները պետք է միավորվեն՝ կանխելու այդ փորձը: Այսպիսի նպատակ ունենալով մտքում՝ Լեմկինը նախապատրաստում էր օրենք, որը կարգելի ազգերի, ռասաների, կրոնական խմբերի ոչնչացումը: Ազգային, էթնիկական կամ կրոնական խմբերի ոչնչացման փորձը կդառնա միջազգային հանցագործություն, որը պետք

²⁴ Lemkin R., Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences Against the Law of Nations, Madrid (14 -20 October 1933), (<http://www.preventgenocide.org/lemkin/madrid1933-english.htm>).

²⁵ Power S., նշվ. աշխ., էջ 21-22:

է պատժի ամենուրեք, ինչպես ստրկությունը և ծովահենությունը: Պատժի սպառնալիքը, պնդում էր Լեմկինը, կբերի գործնական փոփոխությունների²⁶:

Ամփոփելով նշենք հետևյալ հիմնական եզրակացությունները

- Լեմկինը դեռ մանկուց հետաքրքրվել է տարատեսակ ջարդերի և ցեղասպանությունների պատմությամբ, սակայն միջազգային քրեական իրավունքով զբաղվելու և լեզվաբանությունը թողնելու համար նրա կյանքում խթան է հանդիսացել Հայոց ցեղասպանությունը՝ հատկապես թուրք հանցագործների անպատիժ մնալը, ինչը Լեմկինի մոտ առաջացրել է նմանատիպ հանցագործներին պատժելու մեխանիզմների ստեղծման անհրաժեշտության գիտակցում:

- Ռաֆայել Լեմկինը դեռևս իր գործունեության սկզբնական շրջանում՝ հենց Հայոց ցեղասպանության՝ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացված հանցագործության իրագործման ժամանակ, խոսում էր ժամանակի միջազգային իրավունքի անկատար լինելու մասին:

- Միջազգային քրեական իրավունքի հարցերին նվիրված Մադրիդի կոնֆերանսում Ռ. Լեմկինը ներկայացրել է իր գեկույցը՝ ելնելով Հայոց ցեղասպանության տրամաբանությունից, այսինքն՝ նա զգուշացնում էր, որ Հայոց ցեղասպանություն հանցագործության նկատմամբ անտարբերությունը և անպատժելիությունը կարող է հանգեցնել ցեղասպանություն հանցագործության կրկնությանը:

POGHOSYAN NAREK

(AGMI)

THE ISSUE OF ARMENIAN GENOCIDE IN THE EARLY PERIOD
OF THE ACTIVITY OF RAPHAEL LEMKIN

In this article we examine the issue how the topic of Armenian Genocide influenced on the early period of the activity of Raphael Lemkin. Particularly we emphasize the issue how Raphael Lemkin realizes the necessity of the mechanisms of punishing the Armenian Genocide perpetrators. In this article, which is also based on the biographical information about Raphael Lemkin, is showed that the factor of the Armenian Genocide was the main reason while examining international law by Raphael Lemkin.

²⁶ Նույն տեղում, էջ 19-20:

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄՇԱԿՈՒՅԹ

XI-XII

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Համակարգչային էջադրուճը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր N 791

Ստորագրված է տպագրության՝ 17.07.2017թ.:

Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, տպագր. 21.25 մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Սարշալ Բաղրամյան պող. 24:

11/11/11

W
103197

ISSN 1829-0833